ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012

ՀԱՏՈՐ VI

Սույն ընտրանին նվիրվում է ՀՀ վճռաբեկ դատարանի ստեղծման 15-ամյակին

Երևան
Փրինթինֆո
2013

ՀՏԴ 374.918(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)92
Հ 247

Հ 247 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի
քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի
(հունվար-դեկտեմբեր 2012). -Եր.: Փրինթինֆո, 2013.
Հատոր VI. –576 էջ:

Կազմող՝ Լիպարիտ Դրմեյան, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի
խորհրդական, իրավագիտության թեկնածու, ԵՊՀ դասախոս

Որոշումների դասակարգումները տրամադրվել են **ARMLAW** դատական ակտերի
որոնման համակարգի կողմից

ՀՏԴ 374.918(479.25)
ԳՄԴ67.99(2Հ)92

ISBN 978-9939-831-52-7

© Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարան, 2013
© Լիպարիտ Դրմեյան (բովանդակության համար)

german cooperation
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

«Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագիր

Programm "Rechts- und Justizreformberatung im Südkaukasus"

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն ԳԴՀ կառավարության տեսակետները

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի՛ ընթերցող,

Հերթական անգամ լույս է տեսնում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանին, որում ամփոփված են 2012 թվականին կայացված այն որոշումները և դրանց համառոտագրերը, որոնք ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու դատական միասնական պրակտիկա ձևավորելու հարցում:

Բազմիցս նշվել է, որ կանխատեսելի արդարադատության իրականացումն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը պետք է հետևի, որ ստորադաս դատական ատյանների դատական ակտերը լինեն ոչ միայն օրինական, այլ նաև իրավական, համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին և իրենց գործունեությամբ նպաստեն իրավունքի զարգացմանը: Այս կարևոր սկզբունքի ամրագրումն արդեն իսկ հսկայական քայլ է առաջ և թույլ կտա առաջիկայում օրենսդրորեն առավել հստակ ամրագրել այն երաշխիքները, որոնք կապահովեն դատական համակարգի միասնականությունը և բարձրագույն դատական ատյանի դերն այս հարցում: Օրենքի միատեսակ կիրառման համար կարևոր է այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի որոշումները մատչելի լինեն հասարակության համար, որի արդյունքում կբարձրանա նաև հասարակական վստահության մակարդակն արդարադատության նկատմամբ:

Եվ այսպես, ինչով կարևորվեց 2012 թվականը դատական պրակտիկայում:

Անցած տարին նշանավորվեց նախադեպային մի շարք որոշումների ընդունմամբ, որոնք նպաստեցին վիճահարույց բազմաթիվ իրավադրույթների միատեսակ մեկնաբանմանը: Քաղաքացիական գործերով հատկանշական են անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման իրավական կարգավորման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, որտեղ սահմանվեցին կոնկրետ կանոններ, ոչ միայն վնասի հատուցման հարցի լուծման, այլև հայցային վաղեմության, կոնկրետ արտահայտությունների որակման առնչությամբ: Համալիր կերպով մեկնաբանվեց այս հարցի հետ կապված գործող իրավակարգավորումը հատկապես խոսքի ազատության և պատվի, արժանապատվության ու գործարար համբավի պաշտպանությունը հավասարակշռելու անհրաժեշտության լույսի ներքո: Հատկանշական է, որ այս դիրքորոշումը նպաստեց դատական այնպիսի պրակտիկայի ձևավորմանը, որը առավելագույնս երաշխավորում է թե խոսքի ազատության իրական իրացումը և թե ոչ գույքային բարիքների պաշտպանությունը՝ այսպիսով զերծ պահելով չարաշահումներից, որոնք առկա էին մինչ այդ:

Հիշատակման է արժանի նաև փաստաբանի խելամիտ վարձատրության փոխհատուցման կանոնների վերաբերյալ որոշումը: Հաշվետու տարում ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձավ նաև բաց թողնված օգուտի տեսքով վնասի հատուցման ինստիտուտի մի շարք հիմնախնդիրների: Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումը՝ դատարանը համալիր մեկնաբանեց գործող իրավակարգավորումը

և սահմանեց բաց թողնված օգուտի տեսքով վնասի հաշվարկման, գանձման նոր կանոններ: Նշված որոշումը էապես կազդի դատական հետագա պրակտիկայի զարգացման վրա՝ապահովելով քննվող նմանատիպ գործերով իրավադրույթների միատեսակ մեկնաբանումը: Ուղղորդող նշանակություն ուներ նաև պայմանագրերի մեկնաբանման և պայմանագրերի իրավական դասակարգման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որն իր ամրագրումը ստացավ որոշումներից մեկում: Բազում հարցերի դատարանն անդրադարձել է նաև ընտանեկան, ժառանգման հարաբերությունների, աշխատողի պատճառած վնասը գործատուի կողմից հատուցելու, ինչպես նաև սպառողների իրավունքների վերաբերյալ քննված գործերով:

Վարչական գործերով կայացրած որոշումներից հատկանշական են հարկային օրենսդրությունում կիրառվող «հասույթ» եզրույթի բացահայտման վերաբերյալ որոշումը, օտարերկրացիների կողմից կացության կարգավիճակի ստացման վարույթի, քաղաքաշինական գործունեությունը լիցենզավորված անձանց ներգրավմամբ կատարելու վերաբերյալ որոշումները: Մի շարք որոշումներով դատարանը անդրադարձ է կատարել նաև վարչական դատավարությունում դատական ակտերի հիմնավորվածության, ապացույցների հետազոտման և գնահատման խնդիրներին: Հատկանշական է գործերից մեկով կայացված այն որոշումը, որտեղ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն հարցի շուրջ, որ պարտապանի գտնվելու վայրի անհայտ լինելը խոչընդոտ չէ հարկադիր կատարողի կողմից պարտապանի գույքի գտնվելու վայրի հայտնի լինելու դեպքում, այդ գույքի վրա բռնագանձում տարածելու համար: Կարևոր նշանակություն ունեն նաև վարչական վարույթների և վարչական պատասխանատվության իրավակարգավորման վերաբերյալ առանձին որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները: Վերջիններս վերաբերում են վարչական մարմինների կողմից միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ հավասար մոտեցում ցուցաբերելու խնդրին, վարչական ակտերի իրավաչափության և առանձին զանցակազմերով վարչական պատասխանատվության հարցերին:

Իհարկե, վերը թվարկված որոշումները ամբողջը չեն և առկա են նաև բազմաթիվ այլ գործեր, որոնցով կայացված որոշումներն ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու դատական պրակտիկայի ձևավորման համար: Դրանք առավել ամփոփ ձևով ներկայացված են սույն ընտրանում:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում ներառված է գրքի էլեկտրոնային տարբերակը: Էլեկտրոնային կրիչում առկա նորարարական լուծումները հնարավորություն են տալիս արագ և արդյունավետ ծանոթանալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատի նախագահ Ե. Հ. Խունդկարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Թիվ 6 Հունվար-դեկտեմբեր 2012

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը 1

Քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ 11

Սնանկություն 24

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ

Ընդհանուր սեփականություն 39

Ընդհանուր դրույթներ գրավի մասին 69

Գործարքներ 77

Հայցային վաղեմություն 88

Պարտավորությունների դադարումը 94

Պայմանագրերից ծագող պարտավարություններ

Ընդհանուր դրույթներ պայմանագրերի մասին 100

Վարձակալություն 114

Ապահովագրություն 129

Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ

Ընդհանուր դրույթներ վնասի հատուցման մասին 138

Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները 159

Ժառանգման իրավունք 214

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 228

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 241

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Դատավարության լեզուն 248

Քաղաքացիական գործերի առարկայական ընդդատությունը 255

Ապացույցներ և ապացուցում 264

Դատական ծախսեր 297

Վարույթն ընդհանուր իրավասության դատարանում
Հայցի հարուցումը 320
Գործի վարույթի կասեցումը և կարճումը 325
Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով 339
Վարույթը վերաքննիչ դատարանում 360
Դատական ակտերի հարկադիր կատարումը 379
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 385

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 395
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ 411
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 448
ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 457
ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 465
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ընդհանուր դրույթներ
Ապացույցներ և ապացուցում 475
Գործի քննությունը և լուծումը վարչական դատարանում
Գործի վարույթը կասեցնելը 480
Վարույթը վերաքննիչ դատարանում 486
Դատական ակտերի հարկադիր կատարումը 490

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

19.10.2012թ.

1. «Գոլդուեյ» ՍՊԸ v. «Վալտի Մոթորս» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԴԴ/0177/02/11 Էջ 1-10

Խնդիր. Բաց թողնված օգուտի ընդհանուր իրավական կարգավորման և բաց թողնված օգուտի հաշվարկման առանձնահատկությունները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ բաց թողնված օգուտի հատուցման կանոնները դատարանները պետք է կիրառեն ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթների պահպանմամբ:

ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Վերոնշյալ սահմանադրական իրավունքը ենթադրում է ոչ միայն պետության կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորության ընձեռում, այլև ձեռնարկատիրության և ձեռնարկատիրական գործունեության համար համապատասխան միջավայրի ձևավորում՝ այդ թվում գործարարությամբ զբաղվող անձանց համար խախտված իրավունքների վերականգնման երաշխիքների ստեղծում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործարարության ոլորտում բաց թողնված օգուտի որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել մի կարևոր առանձնահատկություն՝ գործարարական գործունեությունը անձի շահույթ ստանալուն ուղղված գործունեություն է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդված), ուստի գործարարության ոլորտում ողջամտորեն ենթադրվում է, որ անձի իրականացրած գործողությունները (պայմանագրերի կնքում, քաղաքացիական տարբեր իրավունքների ձեռքբերում) ուղղված են շահույթ ստանալուն: Այսինքն՝ գործարարության ոլորտում անձը պայմանագիր կնքելու, քաղաքացիական իրավահարաբերության մեջ մտնելու ժամանակ ակնկալում է ստանալ որոշակի օգուտ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, նշել է, որ «պահանջը» Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի իմաստով կարող է հասկացվել որպես «սեփականություն» այն դեպքում, եթե բավարար չափով հաստատված է, որ այն կարող է իրավաբանորեն իրականացվել *(տե՛ս՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 02.05.2002 թվականին Եվրոպական դատարանի վճիռը, կետ 40, Վարդուհի Հովսեփյանն ընդդեմ Ռիմա Կարապետյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԱՔԴ/1522/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը)*:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները նույնպես կարող են դիտարկվել Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Նման իրավիճակներում Եվրոպական դատարանը հիմք է ընդունել վնասի հատուցման վերաբերյալ ներպետական

կանոնները, որի հիման վրա վերջինս այն դիտարկել է որպես «ակտիվ», «գույք» և հետևաբար նաև «տիրապետում» 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Արդյունքում Եվրոպական դատարանը գտել է, որ դատական ակտի հիման վրա դիմողները կարող են ունենալ «օրինական սպասելիք», որ պատահարի արդյունքում վերջիններիս ներկայացրած պահանջը պետք է քննարկվի վնասի հատուցման ընդհանուր կանոններով *(տես՝ PRESSOS COMPANIA NAVIERA S.A և մյուսներն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, կետ 31)*:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հետ կապված հարաբերությունները պետք է դիտարկվեն ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո, վնասի հատուցման պահանջը կարող է համարվել «տիրապետում» Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, հետևաբար դրա նկատմամբ սահմանափակումները և հատուցման հարցերը պետք է քննարկման առարկա դառնան համաչափության սկզբունքի պահպանմամբ:

4.3. Բաց թողնված օգուտի որոշման ընդհանուր կանոնները.

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում հաստատել է, որ բաց թողնված օգուտի որոշման ժամանակ իրական մտադրությունը պետք է զուգորդվի իրական հնարավորության հետ: Դա բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ կետից, որի համաձայն՝ բաց թողնված օգուտը որոշելիս հաշվի են առնվում այն ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները:

Ընկերության իրական մտադրությունը կարող է հաստատվել ընկերության գործունեության բնույթի ուսումնասիրությամբ (օրինակ՝ կանոնադրություն և այլ փաստաթղթեր): Դրանք կարող են հաստատվել նաև համապատասխան պայմանագրային հարաբերությունների բնույթը բացահայտելով, ընկերության բիզնես ծրագրերն ուսումնասիրելով: Բացի այդ, այդպիսիք կարող են լինել ընկերության գործունեության շրջանակների կամ ծավալների ավելացման վերաբերյալ ապացույցներ (պահեստի պատրաստում, ապրանք արտադրելու համար սարքավորումների ձեռքբերում կամ ծավալի ավելացում): Այս ամենը հիմնավորում է ընկերության իրական մտադրությունը:

Ընկերության իրական հնարավորությունը կարող է հաստատվել օգուտ ստանալու վերաբերյալ համապատասխան իրական կամ ողջամտորեն հավանական ապացույցներով: Օրինակ կարող են լինել ընկերության շրջանառության վերաբերյալ տվյալները, որոնք ցույց են տալիս նմանատիպ ապրանքներից կամ ծառայություններից ընկերության ստացած հասույթը, որպիսիք կարող են արտացոլված լինել ընկերության հաշվապահական կամ այլ փաստաթղթերում կամ պետական տարբեր մարմինների (հարկային, մաքսային և այլն) տվյալներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունները տնտեսության մեջ գործարարական գործունեությամբ զբաղվում են ոչ միայնակ, այլ մյուս կազմակերպությունների հետ գործարարական հարաբերությունների միջոցով, ընկերության իրական շրջանառության վերաբերյալ ապացույցներ կարող են լինել ընկերության գործընկեր այլ կազմակերպությունների հետ առկա շրջանառության ծավալները հիմնավորող ապացույցները:

4.4. Բաց թողնված օգուտի հաշվարկման կանոնները.

Վճռաբեկ դատարանը գտել է, որ բաց թողնված օգուտի հաշվարկման ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն, որ բաց թողնված օգուտն այն եկամուտն է, որն այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր: Այսինքն՝ բաց թողնված օգուտը չի կարող նույնանալ կազմակերպության շրջանառության կամ հասույթի հետ:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանները բաց թողնված օգուտի հաշվարկման ժամանակ պետք է նվազեցնեն անհիրաժեշտ այն ծախսերը, որոնք վնաս կրած անձը կկատարեր վնասը չպատճառվելու դեպքում: Այդ ծախսերի մեջ կարող են ներառվել ապրանքի արտադրության, վաճառքի կամ ծառա-

յության մատուցման համար նյութերի, օգտագործվող հումքի արժեքը, ամորտիզացիոն ծախսերը, աշխատողներին վճարվող աշխատավարձը և այլն: Պետք է նվազեցվեն նաև այն հարկերը, որոնք անձը կվճարեր այդ ապրանքների կամ ծառայությունների համար: Արդյունքում պետք է մնա այն շահույթը, որը ձևավորվում է անհրաժեշտ ծախսերի նվազեցումից հետո: Բացի այդ, կախված ապրանքաշրջանառության կամ մատուցվող ծառայության առանձնահատկություններից՝ կարող են հաշվի առնվել սեզոնային փոփոխությունները, շուկայում տիրող վիճակը, պետության ֆինանսական քաղաքականության փոփոխությունները և այլն:

Եթե ընկերությունը պարտավորության խախտման հետևանքով փոխել է իր արտադրության կամ ծառայության որակը, ապա բաց թողնված օգուտը պետք է որոշվի նոր արտադրվող (առավել ցածրորակ կամ նոր որակի, որն առավել ցածր ինքնարժեք ունի) ապրանքի կամ մատուցվող ծառայության շահույթի և պարտավորությունը չխախտվելու դեպքում արտադրվող ապրանքի կամ մատուցվող ծառայության (առավել բարձրորակ կամ բարձր ինքնարժեք ունեցող) միջև շահույթի տարբերությունից:

Բացի այդ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն ժամանակահատվածին, որի համար պետք է հատուցվի բաց թողնված օգուտը: Եթե ապրանքը կամ ծառայությունը, որը պետք է տրամադրվեր ընկերությանը, սակայն չի տրամադրվել, և որի արդյունքում ընկերությունը օգուտ է բաց թողել, ունի օգտագործման որոշակի ժամկետ, ապա այդ ժամկետից ավել օգուտը չի կարող հատուցվել: Օրինակ, եթե ապրանքը մատակարարելու կամ ծառայությունը մատուցելու ժամկետ է նշված, սակայն չի կատարվել, ապա օգուտը պետք է հատուցվի այն ժամանակահատվածի համար, որը տուժող ընկերությունը պետք է օգտագործեր օգուտ ստանալու համար (ապրանքը պետք է վաճառեր, վերամշակեր և վաճառեր, կամ դրա հիման վրա այլ ծառայություն մատուցեր և այլն):

4.5. Պայմանագրային պարտավորություններում բաց թողնված օգուտի կանոնները.

Պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով բաց թողնված օգուտի փոխհատուցման համար հայցվորը պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք կհիմնավորեն.

* պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտումը.
* օգուտ ստանալու իրական մտադրությունը և հնարավորությունը.
* վերջիններիս պատճառահետևանքային կապը.
* վնասների չափը.
* պարտավորությունների խախտման, օգուտ ստանալու իրական մտադրության և հնարավորության և վնասի չափի միջև պատճառահետևանքային կապը.
* իրավունքը խախտված անձի կողմից ձեռնարկվող միջոցները, որոնք ուղղված են վնասի նվազեցմանը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ պայմանագրային հարաբերություններում վնասի հատուցման հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել, որ բաց թողնված օգուտի հատուցման արդյունքում պարտատիրոջ մոտ չպետք է առաջանա հարստացում, այսինքն՝ վնասների փոխհատուցման գումարի մեջ չեն կարող ընդգրկվել այնպիսի վնասներ, որոնք կողմն իրականում չի կրել: Այլ կերպ ասած՝ վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիաիրավական պատասխանատվության հետևանքով տուժողի գույքային դրությունը պետք է բարելավվի այն աստիճան, որում նա կգտնվեր, եթե վերջինիս իրավունքները չխախտվեին: Պայմանագրային պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կողմը չպետք է հատուցի այն վնասը, որը չի առաջացել կամ երբեք չէր կարող առաջանալ:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ նմանատիպ գործերի քննության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, որի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխա-

նատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված հոդվածը ցույց է տալիս, որ որոշակի դեպքերում գնորդը կարող է ողջամիտ միջոցներ ձեռնարկել վնասի նվազեցման համար: Բաց թողնված օգուտի դեպքում դա կարող է դրսևորվել նման օգուտ ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած ողջամիտ միջոցներով՝ այլ եղանակներով նման ապրանք կամ ծառայություն ստանալով և այլն: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված հարցի պարզումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից և չպետք է հանգեցնի բաց թողնված օգուտի հատուցման չափի անհարկի նվազեցման:

4.6.Վնասներ և տուժանք.

Վճռաբեկ դատարանը գտել է, որ պայմանագրային հարաբերություններում բաց թողնված օգուտի հատուցման վերաբերյալ դրույթների ամբողջական կիրառման նպատակով դատարանները պետք է հաշվի առնեն նաև պայմանագրով նախատեսված տուժանքը, ինչպես նաև տուժանքի և վնասների վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք, ապա վնասները հատուցվում են տուժանքով չծածկված մասով:

Օրենքով կամ պայմանագրով կարող են նախատեսվել դեպքեր, երբ՝

1) թույլատրվում է բռնագանձել միայն տուժանքը, սակայն ոչ վնասները.

2) վնասները կարող են բռնագանձվել լրիվ գումարով՝ չհաշված տուժանքը.

3) պարտատիրոջ ընտրությամբ կարող են բռնագանձվել կամ տուժանքը, կամ վնասները:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պայմանագրային հարաբերություններում կողմերը կարող են նախատեսել տուժանք վճարելու պարտավորություն: Տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը *(տես՝ «Թամամ» արտադրական կոոպերատիվն ընդդեմ «ԱՄ-ԿԱ» ՍՊԸ-ի՝ 22.533.430 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին թիվ 3-27 (ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ հատուցվող բաց թողնված օգուտի չափը որոշելիս դատարանները պետք է ուշադրություն դարձնեն պայմանագրով սահմանված տուժանքին, տուժանքի և վնասների հատուցման հարաբերակցության վերաբերյալ պայմանագրի դրույթներին, որից հետո որոշեն հատուցվող օգուտի վերջնական չափը:

4.7.Բաց թողնված օգուտի հաշվարկը և դատական հայեցողությունը.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ չնայած վնասի հաշվարկման վերաբերյալ վերոնշյալ կողմնորոշիչ վերլուծություններին, այնուամենայնիվ, վնասի հատուցման կոնկրետ չափը առանձին դեպքերում կարող է բավականաչափ հստակ չլինել կամ ողջամտության աստիճանի հավաստիությամբ չորոշվել: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նմանատիպ դեպքերում անձն ընդհանրապես չի կարող զրկվել բաց թողնված օգուտի հատուցման իրավունքից, քանի որ նման դիրքորոշումը կհակասի գործարարության էությանը, վերը նշված սահմանադրական և կոնվենցիոն դրույթներին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ նմանատիպ իրավիճակներում դատարանները հատուցվող օգուտի չափը որոշում են իրենց հայեցողությամբ: Նման կարգավորում

գործում է նաև միջազգային պրակտիկայում: Մասնավորապես, «Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների» 7.4.3 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե վնասի չափը չի կարող հաստատվել ողջամտության աստիճանի արժանահավատությամբ, դրա չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ կանոնը կարող է կիրառվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված բաց թողնված օգուտի չափի որոշման նկատմամբ, ընդ որում, դատական հայեցողությունը պետք է իրականացվի միայն վերոնշյալ իրավական դիրքորոշումների հիման վրա բաց թողնված օգուտի չափը որոշելու անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սկզբունքները, բարեխղճության, խելամտության և արդարացիության պահանջները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

19.10.2012 թ.

2. «Ջուլալ Ջրեր» արտադրական կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյան v. Կոոպերատիվի հիմադիր Կարմեն Բախշյանի, քաղ. գործ. թիվ ԱՎԴ3/0332/02/11 Էջ 11-17

<u>**Խնդիր.**</u> Արդյո՞ք կոոպերատիվի լուծարման՝ այդ թվում սնանկության եղանակով լուծարման հետ կապված ծախսերը ներառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված լրացուցիչ պատասխանատվության շրջանակներում:

<u>**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.**</u> Վճռաբեկ դատարանը վերահաստատել է *«Լուտոս» արտադրական կոոպերատիվի անվճարունակության գործով կառավարիչ Լևոն Պետրոսյանն ընդդեմ Կոոպերատիվի անդամներ Էդուարդ Ասատրյանի, Սվետլանա Խալաթյանի և Ռիմա Աղասարյանի, թիվ 3-1555(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշմամբ* արտահայտված իրավական դիրքորոշումն այն մասին, որ սահմանված ժամկետում (տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում) լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասները փակելու օրենքով սահմանված իրենց պարտավորությունը չկատարելը չի ազատում կոոպերատիվի անդամներին կոոպերատիվի պարտավորությունների համար օրենքով սահմանված պատասխանատվությունից: Այն պայմաններում, երբ սահմանված ժամկետում (տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում) լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասները փակելու օրենքով սահմանված իրենց պարտավորությունը չկատարելու հետևանքով անհնար է որոշել կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չմուծված մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված՝ լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասները փակելու Կոոպերատիվի անդամների պարտականությունը ներառում է մինչև Կոոպերատիվի անվճարունակ ճանաչվելը գոյացած բոլոր պարտավորությունները:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերոնշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, հավելել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի տրամաբանությունից բխում է, որ կոոպերատիվի անդամների՝ առաջացած վնասները լրացուցիչ վճարների միջոցով փակելու պարտավորությունը պետք է կապված լինի կոոպերատիվի գործունեության հետ, քանի որ այն վնասները, որոնք կոոպերատիվի անդամը պետք է փակի, որոշվում են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո, որը չի վերաբերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված լուծարման հաշվեկշռին: Նշված տրամաբանությամբ պետք է մեկնաբանվի նաև նշված հոդվածի դրույթն այն մասին, որ կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի **լրացուցիչ վճարի**

չմուծված մասի սահմաններում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ կոոպերատիվի անդամների լրացուցիչ պատասխանատվությունը սահմանափակվում է կոոպերատիվի գործունեության ընթացքում առաջացած վնասներով, իսկ կոոպերատիվի լուծարման՝ այդ թվում սնանկության եղանակով լուծարման հետ կապված ծախսերը չեն ներառվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված լրացուցիչ պատասխանատվության շրջանակներում:

3. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ v. Մարինե Բաղրամյանի, քաղ. գործ թիվ ԼԴ/0201/02/10, **Էջ 18-23**

Խնդիր. Արդյո՞ք իրավաբանական անձանց միջև երաշխավորության պայմանագրով ծագած պարտավորությունների կատարման վերաբերյալ կայացված վճիռը վերաբերում է այդ ընկերությունների մասնակիցների իրավունքներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ սույն գործով վեճը վերաբերում է երկու իրավաբանական անձանց միջև կնքված երաշխավորության պայմանագրով ծագած պարտավորություններին: Հետևաբար Ընկերությունը երաշխավորության պայմանագիրը կնքել է և այդ պայմանագրով ծագած հարաբերություններում հանդես է եկել որպես ինքնուրույն սուբյեկտ: Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն ազդում Ընկերության մասնակիցների իրավունքների և պարտականությունների վրա: Օրենսդրական նման կանոնակարգումից էլ բխում է, որ միայն Ընկերությունն է կրում երաշխավորության պայմանագրով սահմանված պարտավորությունը պատշաճ չկատարելու ռիսկը, որպես քաղաքացիաիրավական հարաբերության ինքնուրույն սուբյեկտ:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ երկու իրավաբանական անձանց միջև երաշխավորության պայմանագրով ծագած պարտավորությունների կատարման վերաբերյալ կայացված վճիռը որևէ կերպ չի վերաբերում Ընկերության մասնակցի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-13-րդ հոդվածներով սահմանված իրավունքներին և պարտականություններին, հետևաբար Ընկերության մասնակից Արամայիս Ղուկասյանին գործին մասնակից դարձնելու դատավարական պարտականություն Դատարանը չուներ:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

23.03.2012թ.

4. Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյան v. Գայանե և Ռուբեն Զուլումյանների, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2304/02/10 **Էջ 24-30**

Խնդիր. Արդյո՞ք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածը սահմանում է սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմք:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտի հիմնավորվածության ինդրին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը անդրադառնալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածում ամրագրված դրույթի՝ որպես սեփականության իրավունքի դադարման հիմքի գնահատման հարցին, հանգել է այն հետևության, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով, որի նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով: Այսինքն՝ նշված նորմը սահմանում է սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմք:

19.10.2012

5. Լիզա Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Համլետ Նաջարյան v. Լիզա Գրիգորյան և Սոնիկ Աթայան, քաղ. գործ թիվ ԵՔԴ/1165/02/08 **Էջ 31-38**

Խնդիր. Որո՞նք են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անշարժ գույքը հետ ստանալու նախապայմանները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը և դադարումը ենթակա է պետական գրանցման: Այսինքն՝ սեփականատեր ունեցող գույքը իր նախկին սեփականատիրոջը **վերադարձնելու** համար անհրաժեշտ է անվավեր ճանաչել իրավունքի փոխանցման վերաբերյալ պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը, իսկ վերոնշյալը կարող է իրականանալ միայն համապատասխան **անվավերության հիմքի** առկայության դեպքում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել նաև, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ այն նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով: Վերոնշյալ հոդվածով առանձնացվել են այնպիսի փոխանցումների տեսակներ, որոնք ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի մտադրության մասին:

Այսինքն՝ վերոնշյալ օրենքով սահմանվել են փոխանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների հետ ստանալու իրավունքը, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը վերոնշյալ փոխանցումների անվավերության հիմք չի նախատեսում:

Վերոնշյալից հետևում է, որ առկա է օրենսդրական բաց, քանի որ ստացվում է մի իրավիճակ, երբ օրենքով նախատեսվում է որոշակի փաստերի վրա հասնելու ուժով անշարժ գույքի վերաբերյալ կատարված փոխանցումները հետ ստանալու իրավունքը, սակայն այդ իրավունքի իրականացման մեխանիզմները բացակայում են:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ անշարժ գույքը հետ ստանալը դրա վերաբերյալ կնքված գործարքի անվավերության հետևանք է, հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անշարժ գույքը հետ ստանալու իրավունքը կարող է իրականացվել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ընդհանուր սեփականություն

23.03.2012թ.

6. Լուսինե Իսրաելյան v. Կարեն Խաչատրյան և Արմենուհի Մալխասյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3430/02/09 **Էջ 39-45**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու պայմաններին, կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը, հաշվի առնելով ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ծագման հիմքը՝ ամուսնական հարաբերությունները և օրենքով նախատեսված այլ

դեպքերը, ըստ էության ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի՝ գույքի տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը (տես՝ Անուշ Արտաշեսյանի հայցն ընդդեմ Արմենուհի Ստեփանյանի, ՀՀ Երևանի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, Լյուդվիկ Հովհաննիսյանի՝բնակարանի առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին գործով Վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի թիվ ԵԱՔԴ/0275/02/08 որոշումը, ինչպես նաև Հասմիկ Ղազարյանի ընդդեմ «Արցախբանկ» ՓԲԸ-ի, Սարգիս Թերզյանի, երրորդ անձ Խորեն Սարգսյանի՝ հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 27.12.2011 թվականի թիվ ԵԱՔԴ/1023/02/10 որոշումը):

Վճռաբեկ դատարանը նաև վերահաստատել է այն դիրքորոշումը, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորապես, գնորդի տեղեկացված լինելու փաստը: Նման պահանջը դատարանի կողմից կարող է բավարարվել միայն, եթե միաժամանակ առկա են երկու պայմաններ՝

1) համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայություն.

2) գործարքի մյուս կողմի՝ այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը (տես՝ ըստ Թագուշ Պետրոսյանի հայցի ընդդեմ Ժաննա Ղազարյանի՝ «Բիզնես կենտրոն» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 16.08.2004 թվականի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին և ըստ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ Ցոլակ Միլիտոսյանի հայցի ընդդեմ Թագուշ Պետրոսյանի և Ժաննա Ղազարյանի՝ «Բիզնես կենտրոն» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 16.08.2004 թվականի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-459 (ՏԴ) գործով Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը, ինչպես նաև Հասմիկ Ղազարյանի ընդդեմ «Արցախբանկ» ՓԲԸ-ի, Սարգիս Թերզյանի, երրորդ անձ Խորեն Սարգսյանի՝ հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 27.12.2011 թվականի թիվ ԵԱՔԴ/1023/02/10 որոշումը):

Բաց այդ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ նախադասության կարգավորումը, գտել է, որ միայն Կարեն Խաչատրյանի և Լուսինե Իսրաելյանի՝ ամուսիններ լինելու փաստի հաստատումը բավարար հիմք չէ ենթադրելու, որ Կարեն Խաչատրյանը համատեղ գույքը տնօրինելու լիազորություն չի ունեցել, քանի որ ընդհանուր սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը մնացած մասնակիցների պահանջով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

27.04.2012թ.

7. Սուսաննա Տարաևա v. Կարապետ Դոքմանյան և Լիանա Դոքմանյան, քաղ. գործ թիվ ԵԱՆԴ/1402/02/09 **Էջ 46-57**

Խնդիր. Ինչպես պետք է տրվի բաժանային սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ պայմանագիր կնքելու լիազորությունը:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետո պահանջելու հարցին՝ կրկնելով նախկին դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետը, նույն հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաժնային սեփականության իրավունքով, երբ սեփականության իրավունքում բաժինները որոշված են, մի քանի անձանց պատկանող գույքի տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը պետք է իրականացվի բոլոր մասնակիցների՝ սեփականատերերի կողմից: Առանձին մասնակցի կամ մասնակիցների կողմից գույքի տնօրինման գործարք կնքելու իրավունքը պայմանավորված է բոլոր սեփականատերերի համաձայնության առկայությամբ: Ի տարբերություն ընդհանուր համատեղ սեփականության, որտեղ բաժինները որոշված չեն, բաժնային սեփականության դեպքում սեփականատերերից յուրաքանչյուրը կարող է տնօրինել սեփականության իրավունքի իր բաժինը առանձին, անկախ մյուս սեփականատերերի համաձայնության առկայությունից: Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ բաժնային սեփականության մասնակիցների կողմից տրվող համաձայնությունը ենթադրում է գույքի, ներառյալ սեփականության իրավունքում իր բաժնի տնօրինմանը հավանություն տալու կամքի արտահայտություն և միաժամանակ մեկ կամ մի քանի սեփականատերերին գույքի տնօրինման պայմանագիր կնքելու լիազորության տրամադրում: Նման կերպ բաժնային սեփականության մասնակիցները ստեղծում են փոխադարձ իրավունքներ և արտականություններ: Հետևաբար բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ պայմանագիր կնքելու լիազորության տրամադրումը պետք է տրվի օրենքով սահմանված կարգով (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդված):

8. Իզաբելլա Թամանովա և Հեղինե Սիմոնյան v. Արա Հովհաննսիյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0389/02/11 **Էջ 58-63**

<u>Խնդիր.</u> Արդյոք բազմաբնակարան շենքի սեփականատերը իրավունքի խախտումը վերացնելու հայցով կարող է դիմել դատարան այն դեպքում, երբ սեփականատերերի ընդհանուր ժողովի կողմից վերջինիս իրավասությանը վերապահված հարցը որոշմամբ լուծում չի ստացել:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Օրենսդիրը նախատեսել է բազմաբնակարան շենքի կառավարման՝ այդ թվում ընդհանուր բաժնային սեփականության օգտագործման և տնօրինման առանձին կարգ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ կարգն ամենևին չի վերացնում բաժնային սեփականության մասնակիցների իրավունքները, այդ թվում դրանց պաշտպանության իրավունքը, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով: Հետևաբար բազմաբնակարան շենքի սեփականատերերի իրավունքների և դրանց իրականացման առանձնահատուկ կարգի (ընդհանուր ժողովի կողմից կառավարման հարցերի լուծում) միջև պետք է գտնվի ողջամիտ հավասարակշռվածություն՝ օրենսդրության տրամաբանությունը չխախտելու համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ հավասարակշռվածությունը դրսևորվում է հետևյալ կանոնի պահպանմամբ՝ քանի դեռ սեփականատերերի ընդհանուր ժողովի կողմից վերջինիս իրավասությանը վերապահված հարցը որոշմամբ լուծում չի ստացել, մյուս բաժնային սեփականության մասնակիցներն իրավունք ունեն պաշտպանելու ընդհանուր բաժնային սեփականության իրենց իրավունքի ցանկացած խախտում: Նշված դիրքորոշումը բխում է նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածից, որի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Այդպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով Իզաբելլա Թամանովան և Հեղինե Սիմոնյանն իրավունք ունեն դիմելու դատարան իրենց իրավունքների խախտումը վերացնելու պահանջով, իսկ սեփականատերերի ընդհանուր ժողովի իրավասությունը տվյալ դեպքում չի խախտվում, քանի որ վերջինս իրավունք ունի տվյալ հարցի վերաբերյալ կայացնել որոշում, և «Բազմաբնակարան շենքի կառավար-

ման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված՝ իր լիազորությունների սահմաններում և համապատասխան ձայների առկայությամբ ժողովի ընդունված որոշումը պարտադիր կլինի բազմաբնակարան շենքի շինությունների բոլոր սեփականատերերի համար, այդ թվում և նրանց, ովքեր անկախ պատճառներից չեն մասնակցել քվեարկությանը կամ դեմ են քվեարկել որոշմանը:

25.12.2012թ.

9. Աննա Սայադյան v. Արտեմ Սայադյան, քաղ. գործ թիվ ԵԴԴ/0676/02/08 **Էջ 64-68**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի կանոնակարգումների շրջանակում գույքի նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության ծագման խնդրին:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ամուսնության ընթացքում ձեռք բերված (վաստակած) գույքը, անկախ նրանից՝ որ ամուսինն է ձեռք բերել (վաստակել), ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել է երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույն է, հանդիսանում է ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը:

Ընդհանուր դրույթներ գրավի մասին

19.10.2012թ.

10. Արման Սադաթյան v. Անահիտ Գոհարյանի և Արփինե Քանքանյանի, քաղ. գործ թիվ ԵԷԴ/1167/02/10 **Էջ 69-76**

Խնդիր. Արդյո՞ք գրավի առարկան իրացնելիս գրավառուն կրում է գրավատուին լրացուցիչ ծանուցում ուղարկելու պարտականություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը որևէ նորմ չի պարունակում կրկնակի անգամ գրավատուին գրավի առարկայի իրացման վերաբերյալ ծանուցելու գրավառուի պարտավորության վերաբերյալ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ գրավառուի՝ գրավատուին ծանուցելու պարտականությունը կրում է մեկանգամյա բնույթ և հետագայում՝ բռնագանձման գործընթացի կասեցման պարագայում, լրացուցիչ բռնագանձման ծանուցում ուղարկելու պարտականություն նախատեսված չէ: Ինչ վերաբերում է աճուրդի մասին ծանուցմանը, ապա այն օրենքով սահմանված կարգով կատարվել է:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը գրավատուի և գրավառուի կողմից գրավի առարկայի իրացման այլ կարգ նախատեսված չլինելու դեպքում գրավառուին իրավունք է վերապահել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով: Ընդ որում, գրավի առարկան ողջամիտ գնով իրացնելու պահանջն անմիջականորեն վերաբերում է գրավի առարկան ուղղակի վաճառքի միջոցով իրացնելու դեպքին, իսկ հրապարակային սակարկությունների միջոցով գույքն իրացնելիս էական է այն հանգամանքը, որ գույքն աճուրդի դրվի այդ պահին շուկայում գործող ողջամիտ գնով: Հետևաբար հրապարակային սակարկությունների արդյունքում գրավի առարկայի գնի հնարավոր նվազումը և աճուրդի դրված գնից ցածր գնով իրացումը, սակարկություններն օրենքին համապատասխան անցկացվելու պայմաններում (աճուրդի անցկացման ընթացակարգի օրինականությունը սույն գործով չի վիճարկվում) չի կարող համարվել գրավի առարկայի ոչ ողջամիտ գնով իրացում:

ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

25.12.2012թ.

11. «Մովսիսյան» ՍՊԸ v. ՀՀ Արարատի մարզպետարան և Նորիկ Մալխասյան, քաղ. գործ թիվ ԱՎԴ1/0338/02/08 **Էջ 77-87**

Խնդիր. Ո՞վ կարող է հանդիսանալ շահագրգիռ անձ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իմաստով:

** Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև վերաքննիչ ատյանում գործն ըստ էության լուծող դատական ակտերը միանձնյա հրապարակելու խնդրին:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Անդրադառնալով այն հարցին, թե ով կարող է հանդիսանալ շահագրգիռ անձ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իմաստով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի մոտ շահագրգռվածությունը պետք է առկա լինի աճուրդի հանված լոտի նկատմամբ: Ընդ որում, շահագրգռված լինելը կարող է պայմանավորված լինել ինչպես լոտի նկատմամբ սուբյեկտիվ իրավունքներ ունենալու փաստով, այնպես էլ հնարավոր իրավունքներ ձեռք բերելու համար բավարար նախադրյալներ առկա լինելու փաստով: Վերջին դեպքում անհրաժեշտ է իրավաբանական այնպիսի փաստերի ամբողջություն, որոնք իրենց համակցությամբ կարող են բավարար լինել նպաստելու անձի մոտ ապագայում լոտի նկատմամբ իրավունքներ ծագելուն:

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

25.12.2012թ.

12. Սամվել Պողոսյան v. Թորոս Սակերյան, քաղ. գործ թիվ ԵԱՆԴ/0052/02/11 **Էջ 88-93**

Խնդիր. Ո՞րն է համարվում օրենքի պահանջներին համապատասխան հայցի հարուցում և, հետևաբար, հիմք հայցային վաղեմության ժամկետի ընդհատման համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցի հարուցման համար էական է համարում հայցադիմումում ներկայացնելը: Ընդ որում, օրենսդիրը հայցի հարուցման համար ներկայացնում է մի շարք պահանջներ, որոնց առկայության դեպքում այն համարվում է հարուցված: Այդ պահանջների չպահպանման դեպքում դատավորը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ կամ 92-րդ հոդվածների հիման վրա, համապատասխանաբար, մերժում է հայցադիմումի ընդունումը կամ վերադարձնում այն: Հետևաբար, եթե հայցադիմումը վերոնշյալ հոդվածների հիման վրա չի վերադարձվել կամ դրա ընդունումը չի մերժվել, ապա հայցը համարվում է օրենքով սահմանված կարգով հարուցված: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայցադիմումի ներկայացումը կարող է կատարվել ինչպես կապի կազմակերպությանը համապատասխան փաստաթուղթը հանձնելու, այնպես էլ անմիջականորեն դատարան հայցադիմումը մուտքագրելու ձևով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայցային վաղեմություն կիրառելու հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ անձի՝ օրենքով սահմանված ժամկետում դատարան դիմելու հանգամանքը պարզելու համար էական է, թե երբ է հայցադիմումը մուտք արվել դատարան, որը հնարավոր է պարզել դատարան ստացված փաստաթղթի վրա գրանցման դրոշմի, ինչպես նաև ստացման ամսաթվի ուսումնասիրությամբ: Այդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ օրենսդիրը հայցային վաղեմության ընդհատման համար էական է համարում *օրենքով սահմանված կարգով* և *ժամկետում* հայցադիմումի ներկայացումը դատարան:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

29.06.2012թ.

13. Հովհաննես Շահինյան և Սաթիկ Սեյրանյան v. Կարեն և Վազգեն Հարությունյաններ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2499/02/10 **Էջ 94-99**

Խնդիր. Արդյո՞ք պայմանագրի կողմերը կարող են նախատեսել պարտավորությունների դադարման այլ հիմքեր քան սահմանված է օրենքով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ դրույթի բովանդակության վերլուծությունից հետևում է, որ կողմերը, օգտվելով պայմանագրի ազատության սկզբունքից, կարող են չսահմանափակվել օրենքով նշված՝ պարտավորությունների դադարման հիմքերով և պայմանագրում նախատեսել օրենքով չսահմանված այլ հիմք:

Համադրելով վերոնշյալ դրույթը գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 03.12.2009 թվականի ստացականը կազմելուց հետո 09.12.2009 թվականին կնքված «Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի առուվաճառքի» թիվ 23 Ըթ 787226 պայմանագրի ուժով (13-րդ կետ) կողմերը դադարեցրել են բոլոր այն բանավոր կամ գրավոր պարտավորությունները կամ ներկայացումները, որոնք կողմերը կարող էին ընդունել կամ անել մինչև այդ պայմանագրի կնքումը, որպիսի փաստական հանգամանքն անտեսվել և չի գնահատվել Վերաքննիչ դատարանի կողմից:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ընդհանուր դրույթներ պայմանագրերի մասին

29.06.2012թ.

14. «Հայփոստ» ՓԲԸ v. «Վաչագան Հովհաննիսյան» ԱՁ-ի, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0720/02/10 **Էջ 100-106**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը պայմանագրերի իրավական դասակարգման համատեքստում անդրադարձել է օրենքով չնախատեսված պայմանագրի մեկնաբանությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման կամ պայմանագրերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որոշակի պայմանագրերի տարրերի առկայության բացահայտումը մի քանի փուլերից բաղկացած գործընթաց է, որն իրենից ներկայացնում է պայմանագրի մեկնաբանության բաղկացուցիչ մաս:

Մասնավորապես, պայմանագրի իրավաբանական դասակարգման համար պետք է՝

- պարզվեն տվյալ պայմանագրի պայմանները (առարկան, գինը, ձևը, կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակը),
- դրանք համադրվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրերի վերաբերյալ ընդհանուր և կոնկրետ պայմանագրի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հատուկ նորմերի հետ պայմանագրի տեսակը որոշելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման նկատմամբ կիրառելի են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիական իրավունքի նորմերի և պայմանագրի մեկնաբանության վերաբերյալ

հոդվածները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին: Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (տես «Կարատ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ՇԴ1/0303/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

19.10.2012թ.

15. Արմեն Տիշինյան v. Համլետ Խաչատրյան, քաղ. գործ թիվ ԵՇԴ/1103/02/11 **Էջ 107-113**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պայմանագրի փոփոխման կամ լուծման արտադատական կարգը չպահպանելու խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Պայմանագրի լուծման խնդրին Վճռաբեկ դատարանը անդրադարձել է *Արմեն Տիշինյանն ընդդեմ Համլետ Խաչատրյանի* գործով: Վճռաբեկ դատարանը մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետը արձանագրեց, որ պայմանագրի փոփոխումը և **լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ **պայմանագրով**: Ընդ որում, օրենսդիրը սույն դրույթով հնարավորություն է ընձեռել կողմին պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջ ներկայացնել դատարան միայն հետևյալ դեպքերից հետո՝

- պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց, կամ
- այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, կամ
- ժամկետի բացակայության դեպքում՝ առաջարկը ստանալուց հետո երեսնօրյա ժամկետում:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ 04.04.2011 թվականի տարաժամկետ առուվաճառքի պայմանագրի 3.4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև **լուծումը կատարվում է կողմերի համաձայնությամբ**՝ նոտարական վավերացմամբ, իսկ 3.5-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կապակցությամբ **ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով,** համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ համապատասխան դատարանի քննությանը:

Տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու կարգը չպահպանելու դեպքը, այսինքն՝ Արմեն Տիշինյանը պայմանագիրը լուծելու սույն հայցային պահանջը ներկայացրել է դատարան պայմանագրի լուծման վերաբերյալ Համլետ Խաչատրյանին առաջարկ չկատարելու պայմաններում:

Բացի այդ, 04.04.2011 թվականի տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով արդեն իսկ կողմերը նախատեսել են պայմանագրի բոլոր լրացումների և փոփոխությունների, **լուծման կատարում կողմերի համաձայնությամբ**՝ նոտարական վավերացմամբ, ինչպես նաև **պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի լուծում բանակցությունների միջոցով, և միայն համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծման հանձնումը դատարանի քննությանը**:

Վարձակալություն

23.03.2012թ.

16. Երևանի քաղաքապետ v. «Թրու Ֆրենդս» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0688/02/10 **Էջ 114-119**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դատական ակտի հիմնավորվածության հարցի համատեքստում անդրադարձել է այն խնդրին, թե արդյոք ստորգետնյա անցումների մուտքի և ելքի աստիճանների վրա գտնվող օդային տարածությունը, որտեղ պետք է կառուցվեն հարթակներ, կարող է հանդիսանալ վարձակալության պայմանագրի առարկա:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է. ի թիվս այլոց քաղաքացիական իրավունքների օբյեկտ է նաև հողամասի սահմաններում գտնվող վերգետնյա տարածքը, որի նկատմամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հնարավոր է ազատորեն գործարք կնքել: Վերոգրյալ դիրքորոշումը համադրելով գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ 05.05.2003 թվականի վարձակալության պայմանագրի առարկա է հանդիսացել Երևան քաղաքի Աբովյան և Մոսկովյան փողոցների հատման մասում ստորգետնյա անցման երկու մուտքերի և ելքերի աստիճանահարթակների վերնամասում 90 քմ մակերեսով տարածքը, այսինքն՝ Երևանի քաղաքապետարանին պատկանող հողամասի սահմաններում գտնվող վերգետնյա տարածքը, որի նկատմամբ վարձակալության իրավունքը ստացել է պետական գրանցում: Հետևաբար, անկախ Քաղաքապետի 21.02.2002 թվականի թիվ 268 որոշմամբ նշված հարթակները կառուցելու հանգամանքից, նշված տարածքը կարող էր դառնալ վարձակալության առարկա:

19.10.2012թ.

17. «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ v. «Արգինա» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԼԴ/0175/02/11 **Էջ 120-128**

Խնդիր. Արդյո՞ք վարձատուն իրավունք ունի պահանջել, իսկ ենթավարձակալը պարտավոր է կնքել գույքի վարձակալության պայմանագիր միայն նախկինում կնքված ենթավարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան:

** Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ շենքի կամ շինության սեփականատերը միաժամանակ դրանով զբաղեցված հողամասի սեփականատերը չէ, վերջինս անկախ հողամասի սեփականատիրոջ համաձայնությունից, օրենքի ուժով դրա նկատմամբ ձեռք է բերում օգտագործման իրավունք:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. *«Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ն ընդդեմ «Արգինա» ՍՊԸ-ի* գործով Վճռաբեկ դատարանը անդրադարձ է կատարել վարձակալության պայմանագրից բխող որոշ հարցերի: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պայմանագրի ազատության սկզբունքն իր մեջ ներառում է նաև պայմանագիր կնքելու կամ չկնքելու ազատությունը, որը գույքի սեփականատիրոջ դեպքում լրացնում է վերջինիս՝ իր հայեցողությամբ գույքը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու սահմանադրական իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ քաղաքացիական օրենսդրության ցանկացած սկզբունքից բացառություն նախատեսվելու կամ բացառություն նախատեսող օրենսդրության մեկնաբանության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, **այլոց իրավունքների և ազատությունների**, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ պայմանագրի ազատության սկզբունքից բացառությունը

1. պետք է նախատեսված լինի օրենքով

2. անհրաժեշտ լինի պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, **այլոց իրավունքների և ազատությունների**, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի, 620-րդ հոդվածի 1-ին կետի և նույն հոդվածի 2-րդ կետի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ վարձակալությունը և ենթավարձակալությունը միմյանց հետ սերտորեն կապված քաղաքացիաիրավական պայմանագրեր են և ենթավարձակալությունը ոչ մի պարագայում չի կարող գոյություն ունենալ վարձակալության պայմանագրից անկախ՝ որպես ինքնուրույն պայմանագրի տեսակ, ուստի, լինելով վարձակալության պայմանագրից ածանցյալ պայմանագիր՝ ենթավարձակալությունը չի կարող կնքվել վարձակալության պայմանագիրը գերազանցող ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների տրամաբանական վերլուծությունից հետևում է, որ վարձակալության պայմանագրով այլ պայման նախատեսված չլինելու պարագայում վարձակալության պայմանագրի վաղաժամկետ դադարումը միաժամանակ հանգեցնում է դրան համապատասխան կնքված ենթավարձակալության պայմանագրի դադարման: Ընդ որում, օրենսդիրը հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթավարձակալության պայմանագիրը կարող է կնքվել միայն վարձատուի համաձայնությամբ, ողղակիորեն սահմանել է վարձատուի իրավունքը վարձակալության պայմանագրի վաղաժամկետ դադարելու դեպքում ենթավարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան ենթավարձակալի օգտագործման տակ գտնվող գույքի վերաբերյալ վերջինիս հետ կնքելու վարձակալության պայմանագիր, այսինքն՝ տվյալ պարագայում օրենսդիրը, հաշվի առնելով վարձատուի իրավունքը և միաժամանակ ապահովելով երաշխիք ենթավարձակալի շահերի պաշտպանության համար, վարձատուին իրավունք է վերապահում պահանջել կնքելու գույքի վարձակալության պայմանագիր **միայն նախկինում կնքված ենթավարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան**, որն իր հերթին ենթավարձակալի համար ուղղակիորեն ստեղծում է պարտականություն՝ վարձատուի կողմից նախկին պայմաններով պայմանագիր կնքելու առաջարկ ստանալու դեպքում այն կնքելու վարձատուի հետ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ օրենքը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդված) բացառություն է նախատեսում պայմանագրի ազատության սկզբունքից՝ հիմք ընդունելով վարձատուի և ենթավարձակալի շահերի համակողմանի պաշտպանության անհրաժեշտությունը: Հետևաբար վարձատուն իրավունք ունի պահանջել, իսկ ենթավարձակալը պարտավոր է կնքել գույքի վարձակալության պայմանագիր միայն նախկինում կնքված ենթավարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան:

Ապահովագրություն

19.10.2012թ.

18. Դավիթ Դավթյան և Ալիսա Զոբաբուրյան v. «Արմավիա» ավիաընկերություն ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0852/02/10 **Էջ 129-137**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է գույքային և անձնական ապահովագրության իրավակարգավորման առանձնահատկությունների և դրանց տարանջատման խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-րդ կետից հետևում էր,

որ իրավահարաբերության ծագման ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում էր ապահովագրության երկու տեսակ՝ գույքային և անձնական, որոնց համար օրենսդիրը նախատեսել էր առանձին իրավակարգավորում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 985-րդ հոդվածի, 987-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրությունը գույքային ապահովագրության տեսակ է, հետևաբար դրա նկատմամբ կիրառելի են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 985-րդ հոդվածի կանոնակարգումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վնաս պատճառելու հետևանքով **պարտավորություններով պատասխանատվության** ռիսկի ապահովագրության տեսակը ծագում է միայն այն դեպքում, երբ ապահովագրվողի կամ այլ անձի մոտ որոշակի ապահովագրական պատահարի հետևանքով ծագում է պարտավորություն և առաջանում է պատասխանատվություն կրելու խնդիր: Այդ պարտավորությունները դրսևորվում են որպես վնաս պատճառելու, մասնավորապես այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ տվյալ դեպքում ապահովագրվողն ապահովագրում է իր կամ այլ անձի (ով պետք է կրի պատասխանատվությունը) պատասխանատվության ռիսկը, այսինքն՝ ապահովագրության միջոցով **իր կամ այլ անձի** պատասխանատվություն կրելու գործընթացը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապահովագրության վերոնշյալ տեսակը կոչված է վնաս պատճառողին (պատասխանատվություն կրողին) ապահովագրելու, որպեսզի վերջինս պարտավորության ծագման դեպքում կարողանա պատշաճ կատարել վնասը հատուցելու իր պարտավորությունը: Միաժամանակ այն որոշակի երաշխիքներ է ստեղծում պարտավորության մյուս կողմի՝ տուժողի համար՝ ստանալու համապատասխան վնասի հատուցումը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 990-րդ հոդվածի հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավահարաբերության ծագման ժամանակ օրենսդիրը տարբերակում է դրել վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության և անձնական ապահովագրության միջև՝ դրանք դիտարկելով որպես ապահովագրության տարբեր տեսակներ: Ի տարբերություն վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության՝ անձնական ապահովագրության օբյեկտ է համարվում անձի կյանքը կամ առողջությունը, որին էլ վնաս պատճառվելու դեպքում ծագում են անձնական ապահովագրության հետ կապված քաղաքացիական իրավահարաբերությունները: Այդ նպատակից ելնելով էլ օրենսդիրը հստակ սահմանել է, որ անձնական ապահովագրության դեպքում ապահովագրական գումար ստանալու իրավունք ունի այն անձը, ում օգտին պայմանագիրը կնքվել է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 990-րդ հոդվածով նախատեսված անձնական ապահովագրությունն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

1. Անձնական ապահովագրության օբյեկտ է համարվում անմիջականորեն անձի կյանքը, առողջությունը և այլն.

2. Անձնական ապահովագրության պայմանագրով շահառու է համարվում ապահովագրվողը, իսկ պայմանագրում այլ անձ նշված լինելու դեպքում՝ նշված երրորդ անձը կամ նրա իրավահաջորդները.

3. Երրորդ անձի օգտին կնքված անձնական ապահովագրության պայմանագիրը համարվում է երրորդ անձի օգտին կնքված պայմանագիր և դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 446-րդ հոդվածի դրույթները.

4. Երրորդ անձի օգտին կնքված անձնական ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են ապահովադրի և երրորդ անձի միջև անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառվելու փաստի ուժով, որի արդյունքում ապահովադիրը պարտավոր է ապահովագրական գումարը վճարել երրորդ անձ շահառուին:

Վերոնշյալ վերլուծություններից հետո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել քննարկման առարկա դարձնել վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության և անձնական ապահովագրության տարբերությունները:

Մասնավորապես, վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության օբյեկտ են համարվում վնաս պատճառողի գույքային շահերը՝ վնաս պատճառելու համար *պատասխանատվության ռիսկը*: Անձնական ապահովագրության դեպքում ապահովագրության օբյեկտն անմիջականորեն *անձի կյանքը կամ առողջությունն* է՝ անկախ դրան վնաս պատճառելու համար վրա հասնող պատասխանատվությունից: Հետևաբար, վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի նորմերին և այլ իրավական ակտերին համապատասխան ապահովագրվողի մոտ ծագում է շահառուին պատճառված վնասը հատուցելու պարտավորություն: Այն դեպքում, երբ նշված նորմերին համապատասխան ապահովագրվողը շահառուին պատճառված վնասը հատուցելու պարտավորություն չունի կամ ազատվում է պատասխանատվությունից, վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության պարտավորություններ չեն ծագում: Ի տարբերություն նշվածի՝ անձնական ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու փաստի ուժով: Այսինքն՝ անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառվելու պահից ապահովադրի և շահառուի միջև ծագում են անձնական ապահովագրության իրավահարաբերություններ: Մինչդեռ վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են ոչ թե շահառուի և ապահովադրի, այլ ապահովագրվողի և ապահովադրի միջև այն դեպքում, երբ ապահովագրվողը պետք է պատասխանատվություն կրի շահառուի առջև՝ վերջինիս կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար:

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր դրույթներ վնասի հատուցման մասին

23.03.2012թ.

19. Սարգիս Սեդիկյան v. ՀՀ պաշտպանության նախարարություն և ՀՀ ֆինանսների նախարարություն, քաղ. գործ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 — **Էջ 138-142**

Խնդիր. Արդյո՞ք քրեական գործի վարույթի կարճումն ինքնին հիմք է անձի մեղավորությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության առումով բացառելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ քրեական գործի վարույթի կարճումն ինքնին հիմք չէ անձի մեղավորությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության առումով բացառելու համար, քանի որ պատասխանատվության երկու տեսակները կարող են կիրառվել ինչպես միասին, այնպես էլ առանձին: Ավելին, արարքում հանցակազմի բացակայությունը վկայում է ընդամենը արարքի քրեականացնող հատկանիշի բացակայության մասին, մինչդեռ չի բացառում տվյալ արարքում անձի մեղավոր վարքագծի դրսևորումը և որպես վերջինիս հետևանք՝ քաղաքացիական պատասխանատվությունը:

27.04.2012թ.

20. Նարինե Զաքարյան և այլոք v. «Միքաձոր» ՍՊԸ և Արշակ Աղաբեկյան, քաղ. գործ թիվ ՍԴ3/0498/02/09 **Էջ 143-149**

Խնդիր. Արդյո՞ք ընկերությունն է պարտավոր հատուցել իր աշխատակցի կողմից առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը: Տվյալ դեպքում «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Արշակ Աղաբեկյանը հանդիսանում է առավել վտանգի աղբյուրը կառավարող անձը, բայց ոչ օրինական (տիտղոսային) տիրապետող, նա աշխատանքային իրավահարաբերությունների մեջ է գտնվել Ընկերության հետ (հատոր 1, գ. թ. 57-58), որը, հատուցելով տուժողների կրած վնասները, կարող է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի ուժով հետադարձ պահանջ ներկայացնել Արշակ Աղաբեկյանի դեմ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածն առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջն ազատում է վնասը հատուցելու պարտավորությունից հետևյալ դեպքերում.

* անհաղթահարելի ուժի,
* տուժողի դիտավորության և
* առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից աղբյուրն այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով դուրս գալու դեպքերում:

Ամփոփելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունը՝ որպես «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի օրինական տիրապետող, պարտավոր է հատուցել առավել վտանգի աղբյուր հանդիսացող մեքենայով Նարինե Զաքարյանի, Էլեն և Սուսաննա Դանիելյանների առողջությանը և գույքին պատճառված վնասը, որի արդյունքում նա ռեգրեսի իրավունք է ձեռք բերում Արշակ Աղաբեկյանի նկատմամբ:

25.12.2012թ.

21. Արմինե Աբելյան v. անհատ ձեռնարկատեր Հովհաննես Դանիելյան, քաղ. գործ թիվ ԿԴ/0125/02/11 **Էջ 150-158**

Խնդիր. Ու՞մ կողմից է ենթակա հատուցման աշխատողի կողմից երրորդ անձին պատճառված վնասը, երբ աշխատողը գործել է գործատուի վերահսկողությունից դուրս:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ գործատուն պատասխանատվություն է կրում իր աշխատողի կողմից հասցված վնասի համար ոչ միայն այն դեպքում, երբ վերջինս գործել է գործատուի առաջադրանքով, այլ նաև այն դեպքում, երբ աշխատողը պարտավոր էր նման կերպ գործել: Դեռ ավելին, աշխատողը պետք է գործի աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ գործատուի վերահսկողության ներքո, այսինքն՝ գործատուն պարտավորվում է պատշաճ կերպով վերահսկել իր աշխատողների կողմից աշխատանքային պարտականությունների (այդ թվում կարգապահական կանոնների) պատշաճ կատարումը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ աշխատողն իր աշխատանքային պարտականությունները կատարում է գործատուի վերահսկողությունից դուրս, դրանով իսկ խախտելով աշխատանքային պայմանագիրը, ապա նա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթի իմաստով չի դադարում **աշխատող** լինելուց, դրանից բխող հետևանքներով:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Էմին Յավրյանը «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետ-

համարանիշի ավտոմեքենան լվացել է գործատուի գտնվելու վայրում՝ ավտոլվացման կետում, հետևապես վերջինիս կողմից այդ ընթացքում պատճառված վնասը պետք է համարվի աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում պատճառված վնաս, որը ենթակա է հատուցման Ձեռնարկատիրոջ կողմից:

Պատվին արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

24.07.2012թ.

22. Թաթուլ Մանասերյան v. «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԿԴ/2293/02/10 **Էջ 159-182**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի համակարգային մեկնաբանությանը:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե ինչ նպատակ է հետապնդում տեղեկատվության աղբյուրի բացահայտումը զրպարտող կամ վիրավորող տեղեկություն տարածելիս:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով և մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը և սահմանելով այդ հոդվածի միասնական կիրառման համար սահմանելով կանոններ՝ Վճռաբեկ դատարանը, այդ կանոնները կիրառելով գործի փաստերի նկատմամբ, անհրաժեշտ է համարել նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերից հետևում է, որ Ընկերությունն ազատվում է պատասխանատվությունից երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

• «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» հոդվածում արտահայտված կամ ներկայացված փաստացի տվյալներն անձի հրապարակային ելույթների, պաշտոնական փաստաթղթերի, հեղինակային ստեղծագործությունների, լրատվական գործունեություն իրականացնող ընկերությունների հրապարակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են,

• նշված տեղեկատվությունը տարածելիս Ընկերությունը հղում է կատարել տեղեկատվության աղբյուրին:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերում ամրագրված «տեղեկատվության աղբյուր» եզրույթի՝ սույն գործով բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ հիշատակված հոդվածում որպես աղբյուր պետք է նշվեր այն անձը (անձինք) կամ լրատվական գործակալությունը, որտեղից ստացվել էր հոդվածում տեղ գտած տեղեկությունը: Ինչ վերաբերում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրության գնահատմանը, ապա նշված հարցին հնարավոր կլիներ անդրադառնալ, երբ Ընկերությունը կներկայացներ այն հրապարակային ելույթները, պաշտոնական փաստաթղթերը, հեղինակային ստեղծագործությունները կամ ցանկացած այլ միջոց, որից վերցվել է վեճի առարկա հանդիսացող հոդվածում տեղ գտած տեղեկությունը: Վերոնշյալ հետևությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից բացակայում է հղումը տեղեկատվության աղբյուրին, միաժամանակ բացակայում է այդ տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրումը հիմնավորող որևէ ապացույց:

Այս հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ընկերությունն ինքն է համարվում տեղեկություն հրապարակող, հետևաբար և զրպարտող:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նաև նշել, որ բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը Ընկերության կողմից պետք է կատարվեր վեճի առարկա հոդվածի հրապարակման հետ միաժամանակ (նույն հոդվածում նշվեր, թե որն է տեղեկատվության աղբյուրը): Հոդվածի հրապարակման հետ

միաժամանակ և ոչ թե դրանից հետո աղբյուրի բացահայտումն այդ տեղեկատվության հասցեատերերի մոտ կապահովեր տեղեկացվածություն այն մասին, որ «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» վերտառությամբ հոդվածում տեղ գտած փաստերը դուրս են գալիս կոնկրետ սուբյեկտից, այլ ոչ թե անմիջական հրապարակողից կամ անորոշ թվով սուբյեկտներից: Հաշվի առնելով այն, որ Ընկերությունը նշված տեղեկությունը տարածել է զանգվածային լրատվության միջոցով, ինչն ապահովում է տեղեկատվության հասանելիության բարձր մակարդակ և տարածման ընդգրկուն շրջանակ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հոդվածում տեղ գտած տեղեկությունները կարող են ազդել անձի վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորման կամ առկա կարծիքի փոփոխման վրա: Մինչդեռ տեղեկատվության աղբյուրը դատական վարույթի ընթացքում բացահայտելը լիարժեք չի ապահովում զրպարտող սուբյեկտի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը և արդեն իսկ զրպարտվող անձի նկատմամբ ձևավորված հնարավոր բացասական կարծիքի փոփոխումը:

Այս հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Ընկերությունը չի կարող ազատվել Թաթուլ Մնանսերյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, քանի որ տեղեկատվության տարածման ժամանակ տեղեկատվության աղբյուրին (հեղինակին) հղում չի կատարվել, իսկ Ընկերության կողմից դատավարության ընթացքում աղբյուրի բացահայտումը որևէ կերպ չի ապահովում զրպարտող կամ վիրավորող սուբյեկտի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը: Բացի այդ, պատասխանողը չի ներկայացրել որևէ ապացույց, որ մինչ հոդվածի հրապարակվելը ձեռնարկել է որևէ միջոց՝ պարզելու իր «աղբյուրի» կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը: Պատասխանողը վիճարկվող հոդվածում հստակ նշել է, որ ըստ տեղեկությունների «քրգործը հարուցվել և քննվում է Կենտրոնի քննչական բաժնում»: Այսինքն՝ ողջամիտ կլիներ առնվազն հարցում ուղարկել նշված բաժին՝ ստացված տեղեկատվության իսկությունը պարզելու համար: Այս և նման որևէ այլ գործողություն՝ ուղղված հրապարակման ենթակա տեղեկատվության իսկությունը պարզելուն, պատասխանողի կողմից չի ձեռնարկվել:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ Ընկերությունը որպես բացահայտման ենթակա աղբյուր վկայակոչել է Անտոն Առակելովին: Մինչդեռ վերջինս վերը նշված հիմնավորումներով չի կարող համարվել տեղեկատվության աղբյուր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի1087.1-րդ հոդվածի իմաստով, քանի որ չի հանդիսանում տեղեկատվության տարածման որևէ միջոցի հեղինակ կամ լրատվական գործունեություն իրականացնող: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ այնպիսի անձի հրապարակած զրպարտող կամ վիրավորող տեղեկությանը հղում կատարելը, ով չի հանդիսանում տեղեկատվության աղբյուր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել տեղեկատվության աղբյուրի բացահայտում:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ «Ժամանակ» օրաթերթը 30.09.2010 թվականի համարում հստակեցրել է նախորդ օրը տպագրված հոդվածը՝ նշելով, որ «կա վաշխառության փաստով հարուցված գործ, որով որպես մեղադրյալ անցնում է այլ անձ …», ինչն իրենից ներկայացնում է հերքում, ապա Վճռաբեկ դատարանն այն հիմնավոր չի համարել հետևյալ պատճառաբանությամբ.

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հերքումն իրականացվում է լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով: Հերքումն իրականացվում է դրա պահանջն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Այդ ժամկետում լրատվության միջոցի թողարկում տեղի չունենալու կամ միակ թողարկումն արդեն իսկ թույլատրված լինելու դեպքում հերքումը պետք է տեղ գտնի լրատվության միջոցի առաջին իսկ թողարկման մեջ: Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը,

որին վերաբերում է:

Տվյալ դեպքում «Ժամանակ» օրաթերթի թիվ 160 (1861), 30.09.2010 թվականի համարի առաջին էջի ձախ կողմում հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է. «Պրն Սանասերյան, $ 40.000 տոկոսով չեք տվե՞լ», իսկ նշված հոդվածը տպագրված չէ «Հերքում» խորագրի ներքո: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ նոր հոդվածի հրապարակումը, որն իր մեջ ներառում է նախորդ հոդվածում հրապարակված փաստերի փոփոխում, չի կարող համարվել հերքում: Մինչդեռ վերը նշված հոդվածում հերքման համար անհրաժեշտ պայմանների պահպանման ամրագրումը նպատակ է հետապնդում հասարակությանն ակնառու եղանակով տեղեկացնել նախորդ հոդվածում տեղ գտած փաստերի՝ իրականությանը չհամապատասխանելու մասին: Հակառակ դեպքում առաջանում է անորոշություն, և բացակայում է տուժողի իրավունքների վերականգնումը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նաև նշել, որ հիշատակված հոդվածում նշվել է Թաթուլ Սանասերյանից հերքման տեքստ պահանջելու մասին, այսինքն՝ այդ հոդվածը հրապարակելիս որևէ հերքման տեքստ օրաթերթը չի ունեցել, նշված համարում զետեղած տեղեկատվությունը չի գնահատել որպես հերքում, հակառակ դեպքում՝ հերքման տեքստ չէր պահանջի: Ընդ որում, հերքման տեքստն Ընկերությանը տրվել է 20.10.2010 թվականին, սակայն գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ հերքման պահանջը բավարարվել է, և տպագրվել է հերքման տեքստը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 10-րդ կետի կանոնակարգումների ուժով չի դադարել կողմերի միջև զրպարտելու հետևանքով վնաս պատճառելու արդյունքում ծագած պարտավորական հարաբերությունը:

23. Վանո Եղիազարյան v. Բորիս Աշրաֆյան, քաղ. գործ թիվ ԼԴ/0749/02/10 **Էջ 183-206**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի համակարգային մեկնաբանության հիման վրա անդրադարձել է կոնկրետ փաստերը և արտահայտությունները զրպարտություն և վիրավորանք գնահատելու չափանիշներին:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վերլուծելով և մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը և սահմանելով այդ հոդվածի միասնական կիրառման համար սահմանելով կանոններ՝ Վճռաբեկ դատարանը, այդ կանոնները կիրառելով գործի փաստերի նկատմամբ, անհրաժեշտ է համարել նշել հետևյալը.

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների վիրավորանք որակված արտահայտություններին և այդ արտահայտությունները դիտարկելով արտահայտված ամբողջական մտքի համատեքստում, գտնել է, որ Բորիս Աշրաֆյանն իր հարցազրույցում չի կատարել վիրավորական, կտրուկ կամ անզուսպ արտահայտություններ, թեպետ կարելի է արձանագրել, որ նրանում բովանդակել է մի շարք զգացմունքային արտահայտություններ կատարված չափազանցությամբ կամ հրահրող ենթատեքստով: Վիճարկվող տեքստը գնահատելով արտահայտված մտքերի ամբողջության մեջ՝ Վճռաբեկ դատարանը գտնել է, որ այն չի գերազանցում քննադատության ընդունելի սահմանը, հատկապես, եթե հաշվի առնենք, որ այդ շրջանակն ավելի լայն է պաշտոնատար անձանց համար, ի տարբերություն ֆիզիկական անձանց: Մասնավորապես՝ «Հետո ասեց՝ թե ապօրինի գազ ա քաշել: Արա, ուրախ չե՞ս, ապօրինին ո՞րն ա...» արտահայտությունում «արա» բառը սույն հրապարակման մեջ բովանդակային առումով չի կրում այն բեռը, որն ուղղված կլիներ Վանո Եղիազարյանի պատիվը կամ արժանապատվությունն արատավորելուն: Տվյալ դեպքում այն ունի օժանդակ բնույթ և արտահայտությունում չունի էական դերակատարում: «Սա» արտահայտությունն օգտագործվել է հետևյալ համատեքստում՝ «Սա գայթակղվեց... Հիմա սա տեսախցիկ ու բանա դրել»:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նորից անդրադառնալ տվյալ բառի

լեզվաբանական իմաստին: «Սա» արտահայտությունը ցույց է տալիս խոսողին մոտ կանգնած կամ խոսքի մեջ նոր նշված առարկա, անձ, երևույթ: Հետևաբար, լեզվաբանական իմաստով «սա» արտահայտությունը կարող է վերաբերել նաև անձին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ գյուղապետի գործունեության քննադատության համատեքստում «Սա գայթակղվեց... Հիմա սա տեսախցիկ ու բանա դրել» արտահայտությունը չի կարող համարվել վիրավորանք, քանի որ այն ուղղված չէ անձի պատիվը կամ արժանապատվությունն արատավորելուն:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ Վանո Եղիազարյանի վկայակոչած՝ «Հռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՝ ախպորս անունից 100.000 գրել ես՝ մեռած մարդա, բայց իրա ստորագրությունը չի», «Ասի՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար, բացի հորիցդ, մորիցդ, փեսեներիցդ...» արտահայտությունները զրպարտություն չեն կարող համարվել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ կետից հետևում է, որ «զրպարտությունն» անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Նշվածից բխում է, որ զրպարտության բնորոշ հատկանիշներն են՝ խոսքը վերաբերում է փաստացի տվյալներին, դրանք չեն համապատասխանում իրականությանը, ներկայացվել են հրապարակայնորեն, արատավորում են անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը, դրանք չեն վերաբերում միայն լրատվամիջոցներով ներկայացված փաստացի տվյալներին:

Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է փաստի, որոշակի կոնկրետ տվյալների, որոնք չեն կարող լինել վերացական, ենթադրական, այլ ունեն կոնկրետ առարկայական դրսևորում: Նման փաստացի տվյալների բացակայության դեպքում քննության առարկա հոդվածի իմաստով «զրպարտությունը»՝ որպես այդպիսին, գոյություն չունի: Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստերի լույսի ներքո զրպարտություն որակված արտահայտությունները դիտարկելով արտահայտված ամբողջական մտքի համատեքստում, գտել է, որ դրանք չունեն վերոնշյալ թվարկված հատկանիշներից առնվազն երկուսը: Առաջինը՝ խոսքը չի վերաբերում փաստացի տվյալներին, քանի որ դրանք վերացական ու ենթադրական են, չունեն կոնկրետ առարկայական դրսևորում, երկրորդը՝ դրանցով որևէ կերպ չեն արատավորվում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Բացի այդ, պետք է արձանագրել, որ Բորիս Աշրաֆյանի օգտագործած՝ «Ասի՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար, բացի հորիցդ, մորիցդ, փեսեներիցդ...» արտահայտությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, որն իրենից ներկայացնում է պատասխանողի սուբյեկտիվ գնահատականը ուղղված համայնքի ղեկավարի գործունեության բարոյական կողմին: Իսկ ամբողջ մտքի համատեքստում գնահատելու պայմաններում պարզ է դառնում, որ նման արտահայտությամբ Բորիս Աշրաֆյանը Վանո Եղիազարյանի պատիվը կամ արժանապատվությունն արատավորելու նպատակ չի ունեցել, քանի որ այն ոչ թե վերաբերում է Վանո Եղիազարյանի հորը, մորը կամ փեսաներին «սոված» անվանելուն, այլ ուղղված է գյուղապետի գործունեության քննադատությանը, իրավիճակի վերաբերյալ Բորիս Աշրաֆյանի գնահատականին՝ սոցիալապես առավել անապահով անձանց օժանդակելու առումով, որոնք առավել վատ (օգտագործված «սոված») վիճակում են, քան Վանո Եղիազարյանի հայրը, մայրը կամ փեսաները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ արտահայտության հավաստիության ապացուցումն ակնհայտորեն անհնարին է:

Ինչ վերաբերում է հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորում է անձի՝ վիրավորանքի կամ

զրպարտության մասին տեղեկացված լինելու հետ: Հետևաբար, հայցային վաղեմության մասին վկայակոչած անձը պարտավոր է ապացուցել նաև այդ ժամկետի սկիզբը հաշվարկելու համար անհրաժեշտ փաստի, այն է՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացված լինելու առկայությունը:

Սույն գործով բողոքաբերը որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ վկայակոչել է 01.09.2010 թվականը՝ «Ժամանակ» օրաթերթում վիճարկվող հոդվածի հրապարակվելու օրը: Մինչդեռ բողոքաբերը չի հիմնավորել, թե կոնկրետ երբ է Վանո Եղիազարյանը տեղեկացել ենթադրյալ վիրավորանքի կամ զրպարտության մասին: Սույն գործի փաստերի համաձայն՝ Վանո Եղիազարյանի կարծիքով իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող արտահայտությունները կատարվել են «Ժամանակ» օրաթերթում հրապարակվելու եղանակով՝ 01.09.2010 թվականին, այսինքն՝ ենթադրյալ վիրավորանքի կամ զրպարտության պահը 01.09.2010 թվականն է: Իրավունքի պաշտպանության վերաբերյալ Վանո Եղիազարյանը հայցը դատարան է ներկայացրել 22.09.2010 թվականին: Դատարանի՝ 27.09.2010 թվականի որոշմամբ նշված հայցադիմումը վերադարձվել է թերությունները շտկելու և ստանալու պահից եռօրյա ժամկետում կրկին ներկայացնելու համար: Վանո Եղիազարյանի՝ 01.10.2010 թվականին ներկայացրած հայցադիմումը Դատարանը վերադարձրել է 05.10.2010 թվականին՝ դարձյալ տրամադրելով եռօրյա ժամկետ թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար: Միաժամանակ, Դատարանը նշել է, որ թերությունները վերացնելուց և եռօրյա ժամկետում՝ ներկայացնելուց հետո հայցադիմումը կհամարվի վարույթ ընդունված սկզբնական ներկայացնելու օրը: Վանո Եղիազարյանը դարձյալ 11.10.2010 թվականին ներկայացրել է հայցադիմում, որը Դատարանի 14.10.2010 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ, որպիսի պարագայում ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ կետի ուժով հայցադիմումը վարույթ ընդունված է համարվել սկզբնական ներկայացնելու օրը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցադիմումը դատարան է ներկայացվել տվյալ պահանջի նկատմամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետի՝ մեկամսյա ժամկետի պահպանմամբ, և այդ մասով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, իսկ վճռաբեկ բողոքն այդ հիմքով՝ անհիմն և մերժման ենթակա: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացրել Դատարանում գործի քննության ընթացքում, մինչդեռ, զրկված չի եղել Դատարանում նման միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից, այլ հայցային վաղեմության ժամկետի խախտման մասին դիրքորոշում հայտնել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներում:

25.12.2012թ.

24. Գեղամ Գալստյան և Նորիկ Պետրոսյան v. Պարույր Հայրիկյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3124/02/11 **Էջ 207-213**

Խնդիր. Հայցային վաղեմությունը պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման գործերով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերհաստատելով *Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի* և *Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի* գործերով հայցային վաղեմության վերաբերյալ ձևավորած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Վճռաբեկ դատարանը գտել է, որ մեկամսյա ժամկետը, որպես հայցային վաղեմության ժամկետ ներառված լինելով, վեցամսյա ժամկետում ենթակա է վերականգնման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչդեռ վեցամսյա ժամկետի բացթողնման դեպքում այն վերականգնման ենթակա չէ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրական նման ձևակերպումը ենթադրում է, որ վիրավորանքի և զրպարտության դեպքում դրա տարած-

ման մակարդակը նվազում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո առարկայազուրկ է դառնում նման պահանջի ներկայացումը: Այդուս կողմից հատկանշական է այն, որ բոլոր դեպքերում վեցամսյա ժամկետում հայցի ներկայացումը դեռևս չի նշանակում հայցային վաղեմության ժամկետի պահպանում, քանի որ այդ դեպքում իմաստազուրկ է դառնում մեկամսյա ժամկետի նախատեսումը:

Ընդհանրացնելով վերոնշյալ եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցային վաղեմության հարց բարձրացնելիս դատարանները նախ և առաջ պետք է գնահատեն վեցամսյա ժամկետի պահպանված լինելու հանգամանքը, ապա դրա շրջանակներում անդրադառնան մեկամսյա ժամկետի պահպանված լինելու հարցին:

Սույն գործի շրջանակներում ՀՀ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ այն հարցին, թե ով է կրում հայցային վաղեմության ժամկետում հայց ներկայացված լինելու փաստն ապացուցելու բեռն այն դեպքում, երբ պատասխանող կողմը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն:

Հայցային վաղեմության ժամկետը բաց թողած լինելու կամ չլինելու փաստի ապացուցումը վիրավորանքի և զրպարտության հետևանքով պատճառված վնասների հատուցման գործերով առանձնահատուկ է այնքանով, որքանով ժամկետի հաշվարկման սկիզբը կապված է տուժողի՝ տեղեկացված լինելու հետ: Այս առումով գրեթե անհնար է պատասխանողի (հայցային վաղեմություն վկայակոչող անձի) կողմից այնպիսի ապացույցների ներկայացումը, որոնք կհաստատեն նշված փաստերի առկայությունը: Այսինքն՝ օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը:

Միաժամանակ հարց է առաջանում, արդյոք բացարձակ առումով պետք է դիտարկել փաստը չապացուցելու հետևանքը նմանատիպ գործերով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կոնկրետ փաստի գոյությունը: Եթե ապացուցման պարտականություն կրող կողմը ներկայացրել է բացառապես անուղղակի ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ առավել հավաստի են դարձնում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը, ապա նման ապացույցները չպետք է մերժվեն զուտ այն հիմքով, որ ուղղակի ապացույցներ չեն:

ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

23.03.2012թ.

25. Լյուդվիգ Խաչատրյան v. Վլադիմիր Խաչատրյան և ՀՀ Կոտայքի նոտարական տարածքի նոտար Ռիմա Մխիթարյանի, քաղ. գործ թիվ ԿԴ1/0809/02/10 **Էջ 214-218**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու հարցին:

** Միաժամանակ Վճռաբեկ դատարանը քննարկել է հայցապահանջի շրջանակներից դուրս գալու, ինչպես նաև դատական ակտի հիմնավորվածության հարցերը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, եզրահանգել է, որ նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իր՝ նախկինում կայացրած որոշումներում արտահայտած այն դիրքորոշումը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1126-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք առկա են ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյոք ժառանգությունն ընդունելու համար ժառանգը միջոցներ (ակտիվ գործողություններ) է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից և հավակնություններից պաշտպանելու համար (տես՝ Կիմա Սարգսյանի հայցն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1224/ՎԴ որոշումը):

19.10.2012թ.

26. Մխիթար Ասատրյան v. Նարգիզ Ասատրյան և ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյան, քաղ. գործ թիվ ԵԷԴ/0850/02/11 **Էջ 219-217**

Խնդիրը. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.

Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել նաև փաստացի տիրապետմամբ ժառանգությունը ընդունելու խնդրի վերաբերյալ: Մասնավորապես, *Միխթար Ասատրյանն ընդդեմ Նարգիզ Ասատրյանի և ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, **ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը** (*ի թիվս այլ ակտերի տես՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոբյանի և այլոց, թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը*): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ **ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով,** ընդ որում գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև **բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը**, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (*տես՝ Գառնիկ Նազարյանն ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի, թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիս 1-ի որոշումը*):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված

են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (*տես՝ Կիմա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի և այլոց, թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձանց բացատրությունները, վկաների ցուցմունքները, Ալբերտ Դավթյանի հայտարարությունը, համատիրության կողմից տրված տեղեկանքները՝ որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ Մխիթար Ասատրյանը ժառանգության բացման ժամանակ ժառանգական գույք հանդիսացող Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը բնակվել է և նշված հասցեից զինվորական ծառայության է զորակոչվել, ավելին վերջինս զորացրվելուց հետո վերադարձել է նշված տուն և շարունակել բնակվել այնտեղ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Մխիթար Ասատրյանը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ներկայացման իրավունքով ընդունել է ժառանգական գույքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացված լինելու դեպքում գործի վարույթը կարճելու վերաբերյալ իր նախկին դիրքորոշումը (*տես՝ Սիսիանի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Շահեն Սարգսյանի, թիվ 3-1920(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը*):

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

23.03.2012թ.

27. Անի Մարտիրոսյան v. Գուրգեն Խալաթյան, քաղ. գործ թիվ ԵԱՔԴ/0474/02/11 **Էջ 228-233**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացրած հետազոտության ակտը, որն անցկացվել է առանց երեխայի և նրա դաստիարակությանը հավակնող ծնողներից մեկի կյանքի հետազոտության, կարող է դատարանի կողմից գնահատվել որպես վեճի լուծման համար պատշաճ ապացույց:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով պետությունը պարտավորվում է օրենսդրական, վարչական միջոցներ ձեռնարկել երեխայի շահերի ապահովման համար, սահմանել երեխայի խնամարկյալների, ծնողների իրավունքների և պարտականությունների ծավալը, հետևել պետական և պատկան մարմինների գործունեությանը տվյալ իրավահարաբերություններում միտված երեխայի բարեկեցությանն անհրաժեշտ պաշտպանությանը և հոգատարությանը:

Վերլուծելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետը և 53-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ երեխաների ծնողներից մեկի հետ ապրելու հարցը դատարանը որոշում է՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահերով: Բացի այդ, խնամակալության և հոգաբարձության մարմինը օրենքով սահմանված կարգով պարտավոր է անցկացնել թե՛ երեխայի և թե՛ այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը: Վերոնշյալից հետևում է, որ եթե երեխայի դաստիրակությանը հավակնում են մի քանի անձ, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել նշված բոլոր անձանց կյանքի հետազոտություն և դատարան ներկայացնել հետազո-

տության ակտը ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

Նշված դիրքորոշման լույսի ներքո գնահատելով գործում առկա երկու եզրակացությունների ապացուցողական արժեքը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի 16.06.2011 թվականի եզրակացությունը, որն անցկացվել է առանց երեխայի՝ Աշոտ Խալաթյանի և նրա դաստիարակությանը հավակնող ծնողներից մեկի՝ Գուրգեն Խալաթյանի կյանքի հետազոտության, չի կարող գնահատվել որպես վեճի լուծման համար պատշաճ ապացույց:

27.04.2012թ.

28. Ավետիս Խաչատրյան և Մարիամ Ավետիսյան v. Վիոլետտա Համբարձումյան, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0799/02/11 **Էջ 234-240**

Խնդիր. Տատը և պապը դիմել են դատարան թոռանը շաբաթական երկու օր, օրական չորս ժամ առանց մոր ներկայության տեսակցելու պահանջով, այն դեպքում, երբ երեխայի հայրը շաբաթական երկու օր մասնակցում է երեխայի դաստիարակությանը՝ վերջինիս բերելով այն նույն բնակարանը, որտեղ բնակվում են տատը և պապը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը երեխայի՝ ազգականների հետ շփվելու հարցերին վերաբերող վեճերը քննելիս առաջնային պետք է հիմք ընդունի երեխայի շահերը և գործը լուծի՝ ելնելով երեխայի շահերից: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, սահմանելով թոռան հետ տեսակցելու կարգ շաբաթական երկու օր՝ 4 ժամ տևողությամբ, հաշվի է առել հոր կողմից տատի և պապի՝ երեխայի հետ շփվելու իրավունքը, սակայն պատշաճ կերպով չի գնահատել այն հարցը, թե ինչքանով է երեխայի հետ տեսակցության նման կարգի սահմանումը համապատասխանում երեխայի շահերին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխան արդեն իսկ շաբաթական երկու օր չորս ժամ տևողությամբ առանց մոր ներկայության տեսակցում է հոր հետ վերջինիս բնակության վայրում, որտեղ ի դեպ բնակվում են նաև Ավետիս Խաչատրյանը և Մարիամ Ավետիսյանը:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

23.03.2012թ.

29. Մխիթար Գրիգորյան v. «Դալկին» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2172/02/10 **Էջ 241-247**

Խնդիր. Արդյո՞ք «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում նշված դրույթը վերաբերում է երաշխիքային սպասարկման պայմաններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում նշված «սպառողը, որին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, և եթե վաճառողը դրա թերությունների մասին նախապայման չի սահմանել, իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել…» դրույթը, գտել է, որ նշված արտահայտությունը վերաբերում է մինչ ապրանքի օգտագործումը եղած առկա կամ հնարավոր թերությունների մասին գնորդին տեղեկացնելուն կամ որևէ պայման սահմանելուն, այլ ոչ թե երաշխիքային սպասարկման պայմաններին, որոնք կիրառվում են բացառապես մինչ ապրանքն օգտագործելը գոյություն չունեցող և այն օգտագործելու արդյունքում ի հայտ եկած թերությունները վերացնելիս:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

19.10.2012 թ.

30. Արայիկ Բաղդասարյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0006/04/10 **Էջ 248-254**

Խնդիր. Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է օտարալեզու ապացույցի թույլատրելիության հարցին, ինչպես նաև քննարկել է այն խնդիրը, թե արդյոք սնանկության գործերով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով Յուրի Ապրեսյանի ներկայացրած՝ 08.07.2010-23.07.2010 թվականներն ընկած ժամանակահատվածում վատառողջ լինելու վերաբերյալ տեղեկանքը, որի հիման վրա Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ վերջինիս 52.500.000 ՀՀ դրամի չափով ընդգրկել էր Արայիկ Բաղդասարյանի՝ սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի չապահովված «է» հերթում, արձանագրել է, որ այն չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված թույլատրելիության պահանջին, քանի որ տրված է ռուսերեն լեզվով: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը շրջանցել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը հայերեն տարվելու պահանջը, ընդունել, գնահատման է արժանացրել և ապա Դատարանի վճռի բեկանման հիմքում է դրել մի փաստաթուղթ, որը կազմված չէ հայերենով՝ այդպիսով խախտելով դատավարությունը հայերեն վարելու վերոգրյալ սկզբունքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով <Մնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 82-րդ, 85-րդ հոդվածները, անդրադառնալով պարտատերերի կողմից իրենց պահանջները ներկայացնելու կարգին, նշել է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում դատարան չներկայացված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ և կարող են բավարարվել օրենքի 82-րդ հոդվածի «ը» ենթակետում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառները համարում է հարգելի: Միայն այս դեպքում սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: Ընդ որում օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է գործը քննող դատարանի՝ պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու համար դատական նիստ հրավիրելու և պատճառների հարգելիության քննարկման արդյունքում որոշում կայացնելու պարտականությունը: Արդյունքում Վճռաբեկ դատարանը 28.07.2010 թվականին Յուրի Ապրեսյանի կողմից Արայիկ Բաղդասարյանի նկատմամբ 38.000.000 ՀՀ դրամի չափով ներկայացված պահանջի համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ որևէ միջնորդության բացակայության պայմաններում անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի կողմից 28.07.2010 թվականին Յուրի Ապրեսյանի կողմից ներկայացված 38.000.000 ՀՀ դրամի չափով պահանջը Արայիկ Բաղդասարյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի չապահովված «է» հերթում ընդգրկելու հանգամանքը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

23.03.2012թ.

31. «Օթյակ» ՓԲԸ v. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2028/02/10 **Էջ 255-263**

Խնդիր. Արդյո՞ք ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով գերավճարները և դրանց նկատմամբ հաշվարկվող տոկոսները բռնագանձելու պահանջի քննությունն ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը կրկնել է նախկինում արտահայտած այն դիրքորոշումը, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դիմաց սեփականապիրոջը վճարվող փոխհատուցումը չի համարվում վերջինիս եկամուտ, հետևաբար նաև՝ հարկման օբյեկտ:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործերի առարկայական ընդդատության հարցին, եզրահանգել է, որ քաղաքացիական օրենսդրությունը մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ, իսկ հարկային պարտավորություններից ավել բյուջե վճարված գումարները (գերավճարները) հարկ վճարողին վերադարձնելու հետ կապված հարաբերություններն իրենց բնույթով հարկային (վարչական) հարաբերություններ են, որոնք կարգավորվում են հարկային օրենսդրությամբ:

Տվյալ դեպքում Ընկերության պահանջը վերաբերում է ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով ավել վճարված գումարների բռնագանձմանը, որպիսի հարաբերությունները կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և դուրս են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորման շրջանակներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետից և 109-րդ հոդվածի 1-ին կետից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են միայն քաղաքացիական գործերը, իսկ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան այլ բնույթի, այդ թվում նաև՝ հարկային գործի ներկայացման դեպքում վերջինս պարտավոր է կարճել այդպիսի գործի վարույթը:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՈՒՄ

23.03.2012թ.

32. Ռուզաննա Գևորգյան v. «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0703/02/10 **Էջ 264-270**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է գործում առկա հայտարարությունները վերաբերելի ապացույց դիտելու խնդրին:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար *(տես Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Մասիսի Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը իր որոշումներում, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված ապացույցների թույլատրելիությանը, գտել է, որ դատարանը պետք է վերոնշյալ հոդվածը կիրառելիս ցույց տա, թե որ հոդվածով է արգելված ապացույցի նման տեսակով նման փաստի հաստատումը *(տես՝ Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի և այլոց թիվ ԱՎԴ/0235/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ դատարանն ապացույցների վերաբերելիության կանոնները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ վերաբերելի են այն ապացույցները, որոնք անհրաժեշտ են քննվող գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար: Այդ մասին է վկայում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածը, որի համաձայն՝ նախագահողը ղեկավարում է դատական նիստը՝ մերժելով այն ամենը, ինչն առնչություն չունի քննվող գործի հետ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանն ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը լուծելիս պետք է պահպանի վերոնշյալ կանոնները, որից հետո որոշի փաստի հաստատված լինելու կամ չլինելու հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, վերը նշված պատճառաբանությամբ օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, անտեսել է, որ Գոռ Աբաջյանի և Մուշեղ Մուրադյանի, Բանկի գործադիր տնօրեն Գագիկ Վահանյանի հայտարարությունները վերաբերելի և թույլատրելի ապացույցներ են, քանի որ Վահան Սաֆարյանը՝ համաձայն Բանկի ղեկավարության բանավոր կարգադրության իր անմիջական ղեկավար Սերոբ Մինասյանի հետ պարտավոր էր ամեն երկուշաբթի փաստաթղթային հաշվետվությունները ներկայացնել Բանկ: Տվյալ պարագայում, Սերոբ Մինասյանը և Վահան Սաֆարյանը, հանդիսանալով Բանկի աշխատակիցներ, դժբախտ պատահարի օրն առավոտյան հրավիրված են եղել Բանկի գլխամասային գրասենյակ հաշվետվություն և վարկային գործ ներկայացնելու համար, ինչի մասին իրենց հայտարարություններում նշել են Գագիկ Վահանյանը, Գոռ Աբաջյանը և Մուշեղ Մուրադյանը:

33. Հերիքնազ Գևորգյան v. Ռոմ Ավագյան և Տանյա Առաքելյան, քաղ. գործ թիվ ԵԴԴ/0220/02/11 **Էջ 271-277**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է փաստերի նախադատելիության հարցին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած իր այն դիրքորոշումը, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված փաստերին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները, փաստերը հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը, փաստերը նոր կայացվող դատական ակտում: Որպես

կանոն դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա: Հետևաբար, նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Նշված նորմը պարունակում է վերը բարձրացված իրավական խնդրի լուծման տեսանկյունից կարևոր երկու դատավարական կանոն, այն է՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը).

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդված): Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի վերը հիշատակված երկու դատավարական կանոնների պահպանումը:

Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորություն է տվել ապացուցման առարկայի՝ վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ճիշտ որոշման հարցին, քանզի դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական (առանց դատավարական նախադրյալի՝ հայցվորի կամահայտնության) ընդլայնումը բերում է այդ գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման *(տես՝ «Սաթնէ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Աշոտ և Հեւրիկ Այվազյանների թիվ 3-93/ՎԴ գործով Վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):*

29.06.2012թ.

34. Օֆելյա Հովագիմյան v. Բենիամին Մարգարյան, քաղ. գործ թիվ ՍԴ/0269/02/10 **Էջ 278-284**

Խնդիր. Արդյոք մասնագիտական աշխատունակության կորստի վերաբերյալ գործատուի տված գրությունը կարող է համարվել թույլատրելի ապացույց:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է փուժողին փրվելիք վճարները միանվագ հատկացնելու համար անհրաժեշտ վավերապայմաններին:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճաբեկ դատարանը գտել է, որ Օֆե-

լյա Հովագիմյանը պարտավոր էր ապացուցել այն փաստը, որ կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցման ենթակա չափը, ելնելով մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանից, կազմում է 1.882.712 ՀՀ դրամ: Որպես նշված փաստի հաստատում՝ Օֆելյա Հովագիմյանը վկայակոչել է մինչ իրեն վնաս պատճառվելը և դրանից հետո ստացած աշխատավարձի բացասական տարբերությունը ու որպես ապացույց Դատարան է ներկայացրել իր գործատուի 09.07.2010 թվականի թիվ 013-209 գրությունն այն մասին, որ Օֆելյա Հովագիմյանի հետ 2009թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած վրաերթի հետևանքով վերջինիս առողջության քայքայման և աշխատունակության անկման պատճառով նրա հետ կնքվել է թիվ 106 աշխատանքային պայմանագիրը, որի համաձայն՝ վերջինիս հանձնարարվել է իրականացնել ավելի քիչ աշխատաժամանակով աշխատանք (նա չէր կարող ավելի երկար ժամանակ անցկացնել աշխատանքային պրոցեսում՝ կանգնած կամ նստած վիճակով):

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործատուի այդ գրությունը չի հանդիսանում վերը նշված ապացուցման ենթակա փաստը հաստատող թույլատրելի և վերաբերելի ապացույց ու չէր կարող դրվել պահանջի բավարարման հիմքում, քանի որ առաջին դեպքում, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը որոշելու համար անհրաժեշտ էր նշանակել փորձաքննություն՝ հիմք ընդունելով այն, որ այդ հարցի պարզաբանումը պահանջում է հատուկ մասնագիտական գիտելիքներ, իսկ երկրորդ դեպքում, այդ գրությունը որևէ տեղեկություն չի պարունակում մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանի վերաբերյալ:

(...)Վճռաբեկ դատարանը նաև վերահաստատել է դատական ակտերի հիմնավորվածության վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը (տես ըստ հայցի Ռազմիկ Սարությանի ընդդեմ Ստեփան և Անահիտ Սարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին, Ստեփան և Անահիտ Սարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54/ՎԴ որոշումը):

Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև 1085-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը՝ արձանագրելով, որ տուժողին տրվելիք վճարները միանվագ, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար հատկացնելու համար անհրաժեշտ է որոշակի վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, անգամ այդ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում նման հատկացում կատարելը ոչ թե դատարանի պարտականությունն է, այլ իրավունքը:

Մասնավորապես այդ վավերապայմաններն են՝

1. հատուցման իրավունք ունեցող քաղաքացու պահանջի առկայությունը.
2. հարգելի պատճառների առկայությունը.
3. նման հատուցում կատարելու համար վնաս պատճառողի հնարավորության առկայությունը:

35. «ԱրմենՏել» ՓԲԸ v. Զվարթ Ալավերդյան, քաղ. գործ թիվ ԼԴ/0154/02/11 **Էջ 285-290**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք «Ծառայությունների մատուցման հաշիվ»-ները ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հայցը հիմնավորող թույլատրելի ապացույցներ են:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը նախ վերահաստատել է նախկինում կայացրած իր որոշումներում «ծառայությունների մատուցման հաշիվ»-ների՝ որպես Ընկերության հայցը հիմնավորող ապացույցի վերաբերելիության և թույլատրելիության վերաբերյալ դիրքորոշումը. հայցը հիմնավորող միակ թույլատրելի ապացույցն Ընկերության կողմից ներկայացված ծառայությունների մատուց-

ման փաստի և ծավալների վերաբերյալ հաշիվն է (*տես ըստ հայցի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ընդդեմ «Էյ Ար-Այ Սի Թի» ՍՊԸ-ի թիվ ԱՎԴ1/0009/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոգրյալը և վերլուծելով կողմերի միջև կնքված պատվեր-դիմումի (պայմանագրի) ծառայությունների մատուցման պայմանները և գործում առկա «ծառայությունների մատուցման հաշիվ»-ները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով «ծառայությունների մատուցման հաշիվ»-ները ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հայցը հիմնավորող թույլատրելի ապացույցներ են: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ընկերության հայցը ենթակա էր բավարարման:

25.12.2012թ.

36. Գայանե Հովհաննիսյան v. Վադիմ Ավանեսյան, քաղ. գործ թիվ ԱՎԴ1/0381/02/11 **Էջ 291-296**

Խնդիր. 1. Վերաքննիչ դատարանում նոր ապացույց ներկայացնելը:

2. Արդյո՞ք նախաքննության մարմնի որոշումը փոխսառության գործարքով պարտքը վերադարձնելու փաստը հաստատող բավարար ապացույց է:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. Վերաքննիչ դատարանն իրավասու չէ նոր ապացույց ընդունել, բացառությամբ այն դեպքի, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ կողմերի կողմից ներկայացված նոր ապացույցը չի ներկայացվել նրանց կամքից անկախ հանգամանքներով: Ընդ որում, այդ ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով նոր ապացույցը պետք է օբյեկտիվորեն առկա լինի, սակայն կողմերի կամքից անկախ պատճառներով գործի քննության ընթացքում չներկայացվի *(տես՝ ըստ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հայցը ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Պապյանի թիվ ՀՔԴ3/0049/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):*

2. Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում կայացրած որոշումներում արտահայտած իր այն դիրքորոշումը, որ քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշմամբ, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը տվյալ գործի շրջանակներում պարտավոր է տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը *(տես՝ ըստ Վարթկես Հագոփյանի հայցի ընդդեմ Անահիտ Հակոբջանյանի թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը):*

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

29.06.2012թ.

37. Ֆերդինանտ Առաքելյան v. Հարություն Պետրոսյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1587/02/10 **Էջ 297-303**

Խնդիր. Որո՞նք են փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս հաշվի առնվող չափանիշները:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը պարտադրում է պարտապանի պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին նրան ուղացական տալ, իսկ պարտապանի կողմից պարտատիրոջն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ տրված լինելու դեպքում պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարինության դեպքում այդ մասին նշել իր տված ուղացականում: Ուղացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Ընդ որում, այլ բան ապացուցված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Անդրադառնալով 2.380.000 ՀՀ դրամը որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով սրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը:

Ելնելով վերը նշված չափանիշներից և նկատի ունենալով, որ փաստաբանը սույն գործով ի շահ հայցվորի կատարել է 26.07.2010 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով սահմանված դատավարական գործողությունները, ինչպես նաև հաշվի առնելով գործի քննության երկարատևությունը (մոտ երկու տարի)՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ է համարել 500.000 ՀՀ դրամը:

38. «Նարինե Ռոստոմյան» ԱՁ v. «ԱրմենՏել» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԱՔԴ/1401/02/11 **Էջ 304-310**

Խնդիր. Արդյո՞ք փաստաբանի խելամիտ վարձատրության համար վճարված գումարի բռնագանձման հարցը ենթակա է քննության բացառապես այն գործի շրջանակներում, որի ընթացքում իրականացվում է ներկայացուցչությունը:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման վերաբերյալ իր նախկինում կայացրած որոշման՝ սույն գործով կիրառելիության հարցին:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Բացահայտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ, 73-րդ և 132-րդ հոդվածների իրավական բովանդակությունը՝ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախ և առաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս, թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող

ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար: Եթե դատարանը, համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք զրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար 142-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով:

Հնարավոր է, որ կողմերը չներկայացնեն փաստաբանի վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց (և դրա բռնագանձման մասին պահանջ): Սակայն նրանք զրկված չեն փաստաբանի ծառայությունների համար կատարված վճարումները առանձին հայցով բռնագանձելու իրավունքից: Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով չի արգելվում դատական ծախսերը այլ՝ առանձին վարույթի շրջանակներում բռնագանձելը: Վերջինս էլ ուղղակիորեն ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրված յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված և այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտող գործողություններ կատարելու իրավունքի իրացման դրսևորումներից է:

Վերոնշյալ մեկնաբանության և սույն գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թիվ ԵԿԴ/2843/02/09 և թիվ ԵԱՔԴ/0172/02/10 քաղաքացիական գործերով Ձեռնարկատիրոջ և Ընկերության միջև վեճերով փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը, որպես դատական ծախս, բռնագանձելու հարցը քննարկման առարկա չի դարձվել, քանի որ Ձեռնարկատերն իր պահանջի շրջանակներում չի ներառել փաստաբանի խելամիտ վարձատրության հետ կապված ծախսերը որպես դատական ծախս Ընկերությունից բռնագանձելու հարցը: Հետևաբար Ձեռնարկատերը չէր կարող մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը դիմել լրացուցիչ վճիռ կայացնելու համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածը կիրառելի չէ և չի սահմանափակում փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը բռնագանձելու համար առանձին հայցով դատարան դիմելու անձի իրավունքը:

19.10.2012թ.

39. Արամ Ասատրյան v. Ռիմա Գրիգորյան, քաղ. գործ թիվ ԵԱՔԴ/1155/02/11 **Էջ 311-314**

Խնդիր. Ինչպե՞ս պետք է հաշվարկել պետական տուրքը գումար բռնագանձելու և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջներ ներկայացված լինելու դեպքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ 8.500.000 ՀՀ դրամ՝որպես պարտքի գումար, բռնագանձելու **պահանջը գույքային է,** իսկ բռնագանձումն առաջսահեթթ օրենքի ուժով ծագած գրավի առարկա հանդիսացող «Ֆոլկսվագեն Տուարեգ-32» մակնիշի ավտոմեքենայի վրա տարածելու **պահանջը ոչ գույքային,** նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը, ելնելով հայցապահանջների գույքային կամ ոչ գույքային բնույթից, տարբերակում է վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում գանձվող պետական տուրքի երկու եղանակ՝ պարզ՝ ոչ գույքային բնույթի հայցապահանջների համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով, և համեմատական՝գույքային պահանջի գործերով վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ Ասատրյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի վճռի՝ բռնագանձումն ավտոմեքենայի վրա տարածելու մասով հայցը մերժելու մասի վերաբերյալ, այսինքն՝ վճիռը բողոքարկել է ոչ գույքային

բնույթի պահանջը մերժելու մասով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում կիրառելի է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, այն է՝ Արամ Ասատրյանից ՀՀ պետական բյուջեի օգտին ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ գումար:

25.12.2012թ.

40. «Մեծ Հիմք» Ա/Կ v. «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3051/02/11 **Էջ 315-319**

Խնդիր. Դատարանը վերսկսել է գործի քննությունը՝ այդ մասին պատշաճ չծանուցելով հայցվորին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իր դիրքորոշումն այն մասին, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում *(տես՝Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, Գյումրու քաղաքապետի հայցն ընդդեմ «Զապ» ՍՊԸ-ի թիվ ԾԴ/0351/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի որոշումը)* Վճռաբեկ դատարանը գտել է, որ, քանի որ Դատարանը 13.04.2012 թվականին գործի քննությունը հայտարարել է ավատրված և վճռի հրապարակման օր է նշանակել 27.04.2012 թվականը, սակայն նշված օրը Դատարանը որոշում է կայացրել գործի քննությունը վերսկսելու մասին, նույն օրն ավարտել է գործի քննությունը և վճռի հրապարակման օր է հայտարարել 10.05.2012 թվականը՝ ժամը 11:00-ն և գործում չկա որևէ ապացույց Դատարանի կողմից 27.04.2012 թվականին վերսկսված գործի քննության վերաբերյալ Կոոպերատիվին պատշաճ ծանուցելու վերաբերյալ, հետևաբար, Կոոպերատիվը զրկված է եղել վերսկսված քաղաքացիական գործի քննությանը մասնակցելու հնարավորությունից, որի արդյունքում խախտվել են ինչպես կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, այդ թվում՝ Կոոպերատիվի՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ ապացույցների հետազոտմանը մասնակցելու և քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ իր փաստարկները ներկայացնելու իրավունքները:

ՎԱՐՈՒՅԹՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հայցի հարուցումը

19.10.2012թ.

41. Յուրիկ և Աղունիկ Փիլոյաններ v. Սիրանուշ Փիլոյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0462/02/08 **Էջ 320-324**

Խնդիր. Արդյո՞ք դատարանը պարտավոր է պարզաբանել հայցից հրաժարվելու գործողության իմաստն ու նշանակությունը՝ համոզվելու, որ դա կամքի ազատ արտահայտում է:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը *Յուրիկ և Աղունիկ Փիլոյաններն ընդդեմ Սիրանուշ Փիլոյանի* գործով նշել է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութահիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարումն է: Հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով: Դատարանը չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, սակայն պարտավոր է հայցվորին պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից:

Գործի դատաքննության 31.10.2011 թվականի դատական նիստի ձայնային արձանագրման ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ բողոք բերած անձինք իրենց հայցապահանջից հրաժարվելու նպատակ չեն ունեցել, և դատական նիստում այդ հայեցողական իրավունքից օգտվել են միայն այն բանից հետո, երբ համոզվել են Սիրանուշ Փիլոյանի կողմից վիճելի անշարժ գույքի 1/3 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրություն չունենալու հարցում: Մինչդեռ Դատարանն անտեսել է բողոք բերած անձանց առաջադրած հայցից հրաժարվելու պայմանը և չպարզաբանելով վերապահումով հայցից հրաժարվելու անթույլատրելիությունը՝ ընդունել է հայցից հրաժարումը: Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին անհիմն կերպով արձանագրել է, որ բողոք բերած անձանց կողմից հայցից հրաժարումը պայմանավորված չի եղել Սիրանուշ Փիլոյանի կողմից վիճելի անշարժ գույքի 1/3 բաժնի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքից հրաժարվելով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից իր դատավարական իրավունքների իրացման տնօրինչական գործողություն է, որով վերջինս անվերապահ հրաժարվում է իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունից և ուղղված է իր նախաձեռնությամբ հարուցված գործի վարույթի դադարեցմանը: Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով հայցից հրաժարումը բողոք բերած անձանց իրական կամքի խաթարման արդյունք է, նրանց կամքն ամենևին էլ ուղղված չի եղել պարզապես հայցից հրաժարվելուն, քանի որ նրանք այդ տնօրինչական իրավունքն իրացրել են՝ հաստատապես համոզված լինելով, որ Սիրանուշ Փիլոյանը հրաժարվում է վիճելի անշարժ գույքի 1/3 բաժնի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքից և հայցից հրաժարման հիմքում բացառապես դրել են վերոհիշյալ պայմանը:

Գործի վարույթի կասեցումը և կարճումը

29.06.2012թ.

42. Հենրիկ Սվազյան v. Ռոբերտ Խաչատրյանի և այլոց, քաղ. գործ թիվ ԵԴԴ/1216/02/10 **ԷՋ 325-328**

<u>Խնդիր.</u> Արդյոք բնակարանից վտարելու հայցի քննության ընթացքում այլ դատարանում պատասխանող կողմում հանդես եկող անձի կողմից տվյալ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հայց ներկայացնելը հիմք է վտարման պահանջով գործի վարույթը կասեցնելու համար:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իր այն դիրքորոշումը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, դրանք են սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական

դատավարությունների կարգով քննվող այլ գործի առկայությունը և տվյալ գործի քննության անհնարինությունը մինչև նշված դատավարությունների կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Դա պայմանավորված է այն հանգամանքներով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար ունեն նշանակություն, և տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում *(տե՛ս Գայանե Ասլանյանն ընդդեմ Սահակ Ասլանյանի և այլոց թիվ ԵԱՔԴ/0169/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը)*:

Վերոնշյալ մեկնաբանության և գործի փաստերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵՇԴ/1448/02/10 քաղաքացիական գործը սույն գործի քննության համար առաջացնում է անհնարինություն, քանի որ նշված գործով քննվում է Ռոբերտ Սվազյանի՝ վեճի առարկա գույքի սեփականատեր լինելու հանգամանքը, որպիսի փաստի հաստատումը սույն գործի լուծման համար ունի էական նշանակություն: Հետևաբար Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կասեցնել սույն գործի վարույթը:

25.12.2012թ.

43. ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանդ համայնք v. «Գ. Արշակյան» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0407/02/11 Էջ 329-333

Խնդիր. Գործի վարույթի կարճումը նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պարագայում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կարող է կարճվել միայն այն դեպքում, երբ նույնն են օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործերի

1. կողմերը, այսինքն՝ քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք,

2. հայցի առարկան, այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութահիրավական պահանջը,

3. հայցի հիմքը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

Հետևաբար, վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճվել չի կարող:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հանգամանքի պարզումը, թե արդյոք սույն քաղաքացիական գործով և թիվ ԵԿԴ/2520/02/10 քաղաքացիական գործով հայցապահանջների հիմքերը՝ սերվիտուտի պայմանագրերը, նույնն են, թե ոչ, ինչպես նաև արդյոք հայցերի առարկաները՝ վերոնշյալ պայմանագրերով նախատեսված գումար վճարելու նյութահիրավական պահանջները, համընկնում են, թե ոչ:

44. Երևանի քաղաքապետարան v. Մարի Զիբիլյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2633/02/08 Էջ 334-338

Խնդիր. Արդյո՞ք առուվաճառքի պայմանագրի կողմ գնորդի մահից հետո նրա կողմից անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման վիճարկումը կարող է գնահատվել որպես անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքի վիճարկում, որի դեպքում իրավահաջորդությունը բացառվում է:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 02.02.2006 թվականին կնքված թիվ 293 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման և դրա հիման վրա այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման արդյունքում գնորդի՝ Մարի Զիբիլյանի մոտ ծագել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք՝ գույքային իրավունք, որը ներառվում է ժառանգատուի ժառանգական զանգվածում և օրենքով սահմանված կարգով փոխանցվում է ժառանգներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման անվավերության պահանջի ներկայացմամբ վիճարկվում է անձի սեփականության իրավունքը, որն անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունք չէ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստորադաս դատարանների այն պատճառաբանությունը, որ վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդություն, անհիմն է:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ

23.03.2012թ.

45. Մարինե Պետրոսյան v. Հարություն Պետրոսյան, քաղ. գործ թիվ ԳԴ1/0144/02/10 **Էջ 339-342**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչված լինելու փաստը գնահատել է որպես նոր երևան եկած հանգամանք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում արտահայտած իր այն դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն՝ արդյոք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա, թե ոչ՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ օրինական ուժի մեջ մտած վճռով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչված լինելու փաստը տվյալ գործով նոր երևան եկած հանգամանք է:

46. «ՍԻ ԷՅ ԱՐ ԼԻԶ» ՍՊԸ v. «Ինզո Արմենիա ապահովագրական» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1112/02/09 **Էջ 343-349**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ապահովագրական հատուցման մերժման հարցի համատեքստում անդրադարձել է դատական ակտը նոր հանգամանքի հիմքով բեկանելու խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող (2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունն իրավունք ունի նվազեցնելու կամ մերժելու ապահովագրական պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

1) ապահովագրական պատահարն առաջացել է ապահովադրի կամ ապահովագրված անձի կամ շահառուի դիտավորությամբ կատարված գործողությունների հետևանքով.

2) ապահովագրական պայմանագիր կնքելիս ապահովադիրն ապահովագրու-

թյան օբյեկտի վերաբերյալ ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք.

3) ապահովադիրը հատուցում է ստացել երրորդ անձից, որը պատասխանատու է պատճառված վնասի համար այն չափով, որքանով հատուցում ստացվել է վնաս պատճառած անձից.

4) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Սույն գործով Դատարանը, ապահովագրական վճարը բռնագանձելու պահանջի մասով հայցը բավարարելիս ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, գտել է, որ «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոնները»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերով սահմանված պայմանները հակասում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին, Կազմակերպության 04.03.2009 թվականի թիվ 286-09 մերժումը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի պահանջներից, հետևաբար Կազմակերպությունը պարտավոր է Ընկերությանը հատուցելու MC/012997 ապահովագրության վկայագրով նախատեսված ապահովագրական վճարը:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճռի նշված մասը, արձանագրել է, որ Դատարանն իրավացիորեն է «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերով սահմանված պայմանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին հակասող դիտել: Տվյալ դեպքում Դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքին հակասող է ճանաչել նշված կանոնների այն կետը, որը վերաբերում է կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում ապահովագրական հատուցման լրիվ կամ մասնակի մերժմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը վերադարձրել է Վերաքննիչ դատարանի որոշման դեմ Կազմակերպության վճռաբեկ բողոքը: Կազմակերպության դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետի (2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ)՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանելիության հարցը, 14.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-975 որոշմամբ որոշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ: Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածների ուժով կարող են պայմանագրով նախատեսել օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված ցանկացած պայման, այն վերապահումով, որ կողմերը չեն կարող հայեցողություն դրսևորել պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով: Ինչ վերաբերում է «Տրանսպորտային միջոցների ապահովագրության կանոնների»՝ սույն գործին առնչվող կետերին, ապա դրանցում տառացիորեն հղումը կատարվում է «ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների» խախտմանը: Նման կանոններ սահմանված են, մասնավորապես, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի

24-րդ հոդվածում, որի առանձին դրույթներ վերարտադրվել են կողմերի փոխադարձ պարտավորություններում: (…) Ապահովագրական ընկերությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված՝ ապահովագրական հատուցումը նվազեցնելու և հատուցումը մերժելու վերաբերյալ ցանկացած այլ պայմանի ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված՝ պայմանագրի ազատության սահմանափակման շրջանակներում է, եթե նախ՝ այդպիսի պայմանի բովանդակությունը չի փոխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմանների բովանդակությունը, երկրորդ՝ այդպիսի պայմանը չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10031-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 14.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-975 որոշումը նոր հանգամանք է և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.05.2010 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման վերանայման հիմք:

19.10.2012 թ.

47. Հրայր Ագանիկյան v. Ալիսա Մարգարյան և այլոք, քաղ. գործ թիվ 2-3/2004 **Էջ** 350-354

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերը դիտել է որպես նոր երևան եկած հանգամանքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.

Այլ գործերով ևս Վճռաբեկ դատարանը անդրադարձել է կոնկրետ փաստերը նոր երևան եկած հանգամանքներ դիտելու խնդրին: Մասնավորապես, *Հրայր Ագանիկյանն ընդդեմ Ալիսա Մարգարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 31.01.2011 թվականի թիվ ԵՔԴԴ/0059/01/08 դատավճռով հաստատված հանգամանքները, որոնց համաձայն՝ Հրայր Ագանիկյանը շորթման եղանակով պահանջել և իրավունք է ձեռք բերել Ալիսա Մարգարյանի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 5.742.250 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ, Հրայր Ագանիկյանը տվյալ գործով որպես ապացույցներ դատարանում ներկայացրել է կեղծված 04.09.2003 թվականի փոխառության պայմանագիրը, 17.09.2003 թվականի, 18.09.2003 թվականի և 24.12.2003 թվականի պարտավորագրերը, Ալիսա Մարգարյանը Հրայր Ագանիկյանի սպառնալիքների ներքո կեղծել է վերոնշյալ գրավոր ապացույցները, ինչպես նաև վերոնշյալ դատավճռով հաստատվել է, որ Երանուհի և Տիգրան Մարգարյանների, Հասմիկ Աշոտի Մարգարյանի, Հասմիկ Բագրաթի Մարգարյանի անվամբ դատական ծանուցագրերը ստացել է նրանց ընտանիքի անդամ Ալիսա Մարգարյանը ու թաքցրել է այդ փաստը նրանցից, նոր երևան եկած հանգամանքներ են այն գործի համար, որով հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հրայր Ագանիկյանի կողմից ներկայացված 04.09.2003 թվականին և 17.09.2003 թվականին կնքված փոխառության պայմանագրերով ու 18.09.2003, 24.12.2003 թվականի պարտավորագրերով հիմնավորվում է Հրայր Ագանիկյանի կողմից Ալիսա Մարգարյանին 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար տրամադրելու փաստը, Ալիսա Մարգարյանը հայցի դեմ չի առարկել, իսկ Երանուհի և Տիգրան Մարգարյանները, Հասմիկ Աշոտի Մարգարյանը, Հասմիկ Բագրաթի Մարգարյանը, դատական նիստի օրվա և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված լինելով, չեն ներկայացել դատական նիստին:

25.12.2012թ.

48. Գալուստ Չիրինյան v. «ՍիրԿապ Արմենիա» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2228/02/10 **Էջ** 355-359

Խնդիր. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1038 որոշմամբ ՀՀ աշխա-

տանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը ՀՀ վճռաբեկ դատարանը դիտել է նոր հանգամանք:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Գալուստ Շիրինյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի ՀՀ Սահմանադրության համապատասխանելիության հարցը, 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշմամբ որոշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ միաժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի, 298-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունից հանգելով այն եզրահանգման, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը:

ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերի վերաբերելի նորմերի համադրված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ *ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը* և հանգել այն հետևության, որ տվյալ դեպքում առկա է իրավունքի պաշտպանության խնդիր, և հարցի նկատմամբ չի կարող ձևական մոտեցում դրսևորվել:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ *յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այդ թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար*՝ պատճառաբանելով, որ սույն իրավական դիրքորոշումից շեղումը կհանգեցնի գործատուի պատասխանատվության անտեսման և աշխատողի իրավունքների ոտնահարման, քանի որ կատարած *փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում վճարելուց հրաժարվելը նաև անձի սեփականության իրավունքի ոտնահարում է:*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշումը նոր հանգամանք է և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.08.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման վերանայման հիմք:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

23.03.2012թ.

49. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ v. Համբարձում Բեգլարյան և Արմեն Գրիգորյան, քաղ. գործ թիվ ԳԴ4/0092/02/11 **Էջ 360-366**

<u>Խնդիր.</u> Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է կողմի կամքից անկախ ապացույցը չներկայացնելու և գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելու հարցերին:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը</u>. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ վերաքննիչ դատարանն իրավասու չէ նոր ապացույց ընդունել, բացառությամբ այն դեպքի, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ կողմերի կողմից ներկայացված նոր ապացույցը չի ներկայացվել նրանց կամքից անկախ հանգամանքներով: Ընդ որում, ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով նոր ապացույցը պետք է օբյեկտիվորեն առկա լինի, սակայն կողմերի կամքից անկախ պատճառներով գործի քննության ընթացքում չներկայացվի (*տես՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Պապյանի թիվ ՀՔԴ3/0049/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել նաև, որ եթե ապացույցը առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ներկայացնելու համար արգելքներ չեն եղել, ապա այն վերաքննիչ դատարանի կողմից ընդունվել և վճռի բեկանման հիմքում դրվել չի կարող: Կողմերի կամքից անկախ ապացույցը չներկայացնելը կարող է պայմանավորված լինել օբյեկտիվ հանգամանքներով, որի արդյունքում կողմը չի կարողացել ձեռք բերել և ներկայացնել այն առաջին ատյանի դատարանում կամ դատարանի այնպիսի գործողություններով, որոնցով վերջինս անհիմն մերժել է ապացույցի կցումը գործի նյութերին կամ այն ձեռք բերելու վերաբերյալ կողմի միջնորդությունը կամ դատավարական իրավունքների խախտման պայմաններում կողմը հնարավորություն չի ունեցել դատարան ներկայացնել այդ ապացույցը:

Նշված գործով Վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելու խնդրին: Գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելիս դատարանը պարտավոր է կողմերի հետ քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: ՀՀ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության սկզբունքի հիման վրա: Սակայն գործը դատաքննության նախապատրաստելու վերաբերյալ նորմերը սահմանում են մրցակցային դատավարությունում դատարանի պարտականությունները: Միաժամանակ դատարանը, ղեկավարելով գործը դատաքննության նախապատրաստելու գործընթացը, պահպանում է անկախություն, օբյեկտիվություն և անաչառություն, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողություններն ուղղված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 1498-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանը գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կողմերին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնա-

վորել իրենց պահանջները և առարկությունները (*տես՝ Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵԷԴ/1637/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի դատաքննության նախապատրաստումը սույն գործով անհրաժեշտ էր Արմեն Գրիգորյանին իր առարկությունները հիմնավորող ապացույցներ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու համար:

29.06.2012թ.

50. Ռաֆիկ Նիկողոսյան v. Լավուրիկ Ասլանյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2082/02/08 **Էջ 367-372**

Խնդիր. Արդյոք վերաքննիչ դատարանը կարող է քննության առարկա դարձնել և որոշում կայացնել ստորադաս դատական ատյանի վճռի այն մասի վերաբերյալ, որը չի բողոքարկվել:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանի պատճառաբանությունը անհիմն համարելով վերջինիս կայացրած վճիռը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով՝ վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ հետևության:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետերի վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ վերաքննիչ բողոքի հիմքերն են՝

1. վերաքննիչ բողոքում նշված դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը, ըստ բողոք բերող անձի, ազդել է գործի ելքի վրա,

2. նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Վերաքննիչ բողոքի հիմնավորումները վերաքննիչ բողոքի հիմքերի առկայության, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ փաստարկներն են, որոնց հիման վրա բողոք բերող անձը հիմնավորում է վերաքննիչ բողոքում ներկայացրած իր պահանջը:

Վերոգրյալից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում և չի կարող քննության առարկա դարձնել և որոշում կայացնել ստորադաս դատական ատյանի վճռի այն մասի վերաբերյալ, որը չի բողոքարկվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոք բերելը այդպիսի իրավունք ունեցող անձանց տնօրինչական գործողությունն է, որի հիման վրա վերջիններս իրացնում են օրենքով իրենց վերապահված՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնել է, որ Անդրանիկ և Նարինե Մանուկյանների կողմից Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք չներկայացնելու, իսկ Ռաֆիկ Նիկողոսյանի կողմից վճիռն իր հայցի մասով բողոքարկելու պայմաններում դատական ակտն Անդրանիկ և Նարինե Մանուկյանների հայցը մերժելու մասով մտել է օրինական ուժի մեջ: Հետևաբար Վերաքննիչ դատարանը Ռաֆիկ Նիկողոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա պետք է վերանայեր և բեկաներ միայն վճռի՝ նրա կողմից բողոքարկված մասը:

25.12.2012թ.

51. Գայանե Հովհաննյան v. Վաղիմ Ավանեսյան, քաղ. գործ թիվ ԱՎԴ1/0381/02/11 **Էջ 373-378**

Խնդիր. 1. Վերաքննիչ դատարանում նոր ապացույց ներկայացնելը:

2. Արդյոք նախաքննության մարմնի որոշումը փոխառության գործարքով պարտքը վերադարձնելու փաստը հաստատող բավարար ապացույց է:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը</u>. 1. Վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ արտահայտած իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ վերաքննիչ դատարանն իրավասու չէ նոր ապացույց ընդունել, բացառությամբ այն դեպքի, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ կողմերի կողմից ներկայացված նոր ապացույցը չի ներկայացվել **նրանց կամքից անկախ հանգամանքներով:** Ընդ որում, այդ **ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար**: Միաժամանակ, առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով **նոր ապացույցը պետք է օբյեկտիվորեն առկա լինի,** սակայն կողմերի կամքից անկախ պատճառներով գործի քննության ընթացքում չներկայացվի *(տես՝ ըստ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հայցը ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Պապյանի թիվ ՀՔԴ3/0049/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը կայացվել է 19.05.2012 թվականին, այսինքն՝ Դատարանի 16.05.2012 թվականի վճիռը հրապարակվելուց հետո: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով նոր ապացույց չէ, քանի որ այն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում օբյեկտիվորեն գոյություն չի ունեցել, որպիսի հիմքով և դրա չներկայացնելը պայմանավորված չի եղել Վադիմ Ավանեսյանի կամքից անկախ հանգամանքներով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը ոչ միայն պետք է անդրադառնար ապացույցը բողոքաբերի կամքից անկախ հանգամանքներում չներկայացնելու իրական հնարավորությանը, այլ պետք է պարզեր տվյալ գործի լուծման համար նոր ներկայացված ապացույցի **էական նշանակություն ունենալու հանգամանքը**:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում սույն գործի լուծման համար **էական նշանակություն** կարող էին ունենալ փոխառուի (պարտապանի)՝ Վադիմ Ավանեսյանի կողմից փոխատու (պարտատեր) Գայանե Հովհաննյանին փոխառությամբ ստացված գումարը վերադարձնելու պարտավորության ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարելու վերաբերյալ ապացույցները՝ պարտապանի մոտ գտնվող պարտքային փաստաթուղթը, պարտատիրոջ կողմից պարտքը լրիվ կամ մասնակիորեն ստանալու վերաբերյալ պարտապանին տված ստացականը կամ **պարտքն ամբողջությամբ կամ մասնակիորեն ստացած լինելու փաստը պարտատիրոջ կողմից ընդունելը:**

2. Միաժամանակ, վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում արտահայտած իր այն դիրքորոշումը, որ քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշմամբ, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հան-

գամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը տվյալ գործի շրջանակներում պարտավոր է տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը *(տես՝ ըստ Վարթկես Հագոփյանի հայցի ընդդեմ Մնահիպո Հակոբջանյանի և այլոց թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը):* Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ 19.05.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշմամբ հաստատված հանգամանքները հիմնվում են վկաների ցուցմունքների վրա: **Մինչդեռ նշված որոշմամբ որևէ ձևով չի հաստատվել այն հանգամանքը, որ Գայանե Հովհաննյանն ընդունել է Վադիմ Ավանեսյանի կողմից իրեն վիճելի իրավահարաբերությունների շրջանակներում 1.405.000 ՀՀ դրամ վճարելու փաստը:**

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ

27.04.2012թ.

52. Սվետլանա Թադևոսյան և Սոնա Վարդանյան v. Գոհար և Գրիգոր Վարդանյան, քաղ. գործ թիվ ԵՄԴ/1086/02/10 **Էջ 379-384**

Խնդիր. Շահագրգիռ անձի կողմից գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի ծագումը պայմանավորված չէ արգելանքի վերցնելու վերաբերյալ հարկադիր կատարողի որոշումը վերադասության կամ դատական կարգով բողոքարկված կամ վիճարկված լինելու հանգամանքով:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է հայցի ապահովման ինստիտուտի նպատակին՝ կրկնելով նախկին դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի գործողությունների (որոշումների) բողոքարկման իրավունք նախատեսված է ինչպես կատարողական վարույթի կողմերի՝ պահանջատիրոջ և պարտապանի, այնպես էլ կատարողական վարույթի կողմ չհանդիսացող շահագրգիռ անձանց համար: Այդպիսիք են հանդիսանում արգելանքի տակ գտնվող գույքի սեփականատերը կամ այլ օրինական տիրապետողը: Ի տարբերություն վարույթի կողմերի, ովքեր իրավունք ունեն բողոքարկելու հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով, կատարողական վարույթի կողմ չհանդիսացող շահագրգիռ անձինք արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում իրավունք ունեն դիմել դատարան: Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճի առկայության դեպքում շահագրգիռ անձը պետք է գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, որն իրենից ենթադրում է համապատասխան պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ շահագրգիռ անձի կողմից գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի ծագումը պայմանավորված չէ արգելանքի վերցնելու վերաբերյալ հարկադիր կատարողի որոշումը վերադասության կամ դատական կարգով բողոքարկված կամ վիճարկված լինելու հանգամանքով:

Նշված հիմնավորումները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ «հարկադիր կատարողի վերոնշյալ որոշումները ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում ոչ հայցվորների, ոչ էլ Գոհար Վարդանյանի կողմից չեն բողոքարկվել հարկադիր կատարման

ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան կամ վերադասության կարգով, հետևաբար Դատարանը իրավացիորեն մերժել է հայցը» անհիմն է:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանը Ծառայության 02.06.2010 թվականի որոշմամբ հարուցված թիվ 01/02-187/10 կատարողական վարույթի կողմեր չեն: Տվյալ դեպքում վեճը վերաբերում է արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիությանը, այսինքն՝ Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանն իրավասու են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի հիմքով արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում դիմելու դատարան գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

25.12.2012թ.

53. Կրոմվել Գրիգորյան v. ՀՀ փաստաբանների պալատ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2598/02/11 **Էջ 385-394**

Խնդիր. Սույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է փաստաբանի կարգապահական պատասխանատվության առանձնահատկություններին:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության խնդրին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեություն է, դրսևորվում է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմամբ ու պաշտպանությամբ՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ փաստաբանական գործունեությունը՝ որպես վստահորդի և փաստաբանի միջև ծագած իրավահարաբերություն, ներառում է տարբեր գործողություններ՝ սկսած խորհրդատվությունից, ներառյալ ներկայացուցչությունը, պաշտպանությունը քրեական գործերով, օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ իրավաբանական օգնության իրավահարաբերությունը ծագում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելու պահից, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Ընդ որում, կախված փաստաբանի և վստահորդի միջև առաջացած իրավահարաբերության բնույթից, իրավաբանական օգնությունը կարող է մի դեպքում սահմանափակվել օրենքում նշված գործողություններից մեկով կամ ներառել դրանցում նշված տարբեր գործողություններ:

Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու բնույթը, դրանում ներառվող գործողությունների շրջանակները և իրավաբանական օգնության ժամանակահատվածը կարող է պարզվել կողմերի միջև իրավահարաբերության առաջացման հիմք համարվող իրավաբանական փաստերի կամ կատարված փաստացի գործողությունների ուսումնասիրության արդյունքում (պայմանագիր, լիազորագիր և այլն):

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադառնալով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված՝ փաստաբանի՝ **իրավաբանական օգնություն ցույց տալու իրավունքը սահմանափակող կա-**

նոնակարգմանը, գտել է, որ օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը: Այս սկզբունքն ուղղակիորեն ամրագրված է նաև Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների 14-րդ կետում, որի համաձայն՝ իրենց հաճախորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության շահերը պահպանելիս իրավաբանները պետք է նպաստեն ազգային և միջազգային իրավունքներով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը և բոլոր պարագաներում **գործեն անկախ ու բարեխղճորեն՝ օրենքին և ընդունված նորմերին ու իրավաբանի մասնագիտական բարոյականությանը համապատասխան:**

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կարգապահական պատասխանատվության հիմքը իրավաբանական օգնության ցուցաբերումն է, այսինքն՝ փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելը, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Այդ գործողությունները սույն դեպքում դիտարկվում են որպես իրավախախտում, իսկ կարգապահական պատասխանատվության հիմքը ծագում է այդ իրավախախտումը կատարելու պահից: Այն դեպքում, երբ վստահորդի և փաստաբանի միջև իրավաբանական օգնության իրավահարաբերության բնույթից ելնելով այդ իրավախախտումը դրսևորվում է իրավաբանական օգնության մեջ ներառվող տարբեր գործողություններ կատարելով, այդ գործողությունները նույնպես դիտարկվում են որպես իրավախախտում, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի կատարման ժամանակ ծագում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ վերլուծությունները և օրենքի նման մեկնաբանությունը բխում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում սահմանված օրինապահության սկզբունքից, քանի որ հակառակ պարագայում, եթե որպես կարգապահական պատասխանատվության հիմքի ծագման պահ գնահատվի վստահորդի կողմից փաստաբանին լիազորագիր տալու պահը, կամ իրավաբանական օգնություն ցուցաբերելու սկիզբը, ապա նման մեկնաբանության դեպքում իրավախախտումը կարող է շարունակվել, սակայն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմությունն անցած լինելու հիմքով փաստաբանը ոչ միայն չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել, այլև կարող է շարունակել տվյալ իրավախախտումը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի նման մեկնաբանությունը բխում է Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներից:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

23.03.2012թ.

54. Վլադիմիր Սալիբեկյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԴ/4519/05/10 — Էջ 395-399

Խնդիր. Արդյոք վարչական իրավախախտման գործի վերաբերյալ արձանագրությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի կողմից ստորագրված չլինելու հանգամանքը բավարար է փաստելու, որ վարչական իրավախախտման գործը քննվել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ, և որ խախտվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունքը վերապահված է ճանապարհապարեկային ծառայության տեսուչներին, ինչը ենթադրում է վարչական վարույթ իրականացնելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից իրականացվող վարչական վարույթի առանձնահատուկ բնույթը և դրա արդյունավետ իրականացումն ապահովելու համար որոշ պայմանների պարտադիր առկայության և վարչական վարույթի իրականացման հետ կապված համապատասխան գործողություններն արագ իրականացնելու և գործելու, այսինքն՝ վարչական իրավախախտման տեղում վարչական իրավախախտման արձանագրություն կազմելու, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու, ինչպես նաև իրավախախտման տեղում վարչական տույժ նշանակելու անհրաժեշտությունը:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելու և դատական ակտը փոփոխելու հիմքում դնելով այն հանգամանքը, որ արձանագրությունում առկա գրառումը չի վկայում, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ, և ապահովվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, հաշվի չի առել, որ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ արձանագրությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի կողմից ստորագրված չլինելու հանգամանքը բավարար չէ փաստելու, որ վարչական իրավախախտման գործը քննվել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ, և որ խախտվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

29.06.2012թ.

55. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն v. Հրանտ Վարձելյան, վարչ. գործ ՎԴ3/0161/05/11 — Էջ 400-404

Խնդիր. Արդյոք վարչական իրավախախտման համար նշանակված տուգանքը մասնակի վճարելու դեպքում եռապատկվում, ապա հնգապատկվում է տուգանքի ամբողջ գումարը:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու դեպքում պետական տուրքի գանձման հարցին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Մեկնաբանելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 297-րդ հոդվածը և 305-րդ հոդվածի 3-րդ մասը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ վերոնշյալ նորմերից հետևում է, որ դրանցով սահմանված տուգանքի գումարի վճարման պարտականությունը, ինչպես նաև այն չվճարելու արդյունքում նախատեսված հետևանքները վերաբերում են տուգանքի գումարի ամբողջ չափին, այլ ոչ թե դրա մի մասին: Վերոգրյալ դրույթներում տառացիորեն նշված է, որ սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում եռապատկվում, ապա հնգապատկվում է տուգանքի չափը, այլ ոչ թե տուգանքի չվճարված մասը: Հետևաբար տուգանքի գումարի մի մասի վճարումը չի կարող համարվել տուգանքի վճարում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ոստիկանության 25.09.2009 թվականի թիվ ԱՌ 118399 որոշմամբ Հրանտ Վարձելյանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ենթարկվել է վարչական տույժի՝ տուգանքի՝ 50.000 ՀՀ դրամի չափով: Նշված որոշումը Հրանտ Վարձելյանին հանձնվել է 25.09.2009 թվականին: Վերջինս, ի կատարումն Ոստիկանության 25.09.2009 թվականի թիվ ԱՌ 118399 որոշման, 26.10.2009 թվականին վճարել է 20.000 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տուգանքի գումարը չի վճարվել, այն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով հնգապատկվել է:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնավոր է Դատարանի դիրքորոշումն այն հարցում, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ «տուգանքի չափը հնգապատկվում է» արտահայտությունը վերաբերում է տուգանքի գումարի ողջ չափին՝ անկախ տուգանքի գումարի որևէ չափի վճարված լինելու հանգամանքից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ տուգանքի գումարի մի մասի վճարումը չի կարող համարվել տուգանքի վճարում, ուստի այն սահմանված ժամկետում ամբողջությամբ չվճարելը հանգեցնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված իրավական հետևանքներին:

56. ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչություն v. «Հասմիկ-Ա» ՍՊԸ-ի տնօրեն Մարուսյա Զալինյան, վարչ. գործ թիվ ՎԴ/0282/05/11 **Էջ 405-410**

Խնդիր. Ընկերության տնօրենն առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձի միջոցով իրականացրել է լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ, որպիսի արարքն առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Քաղաքաշինական գործունեություն իրականացնող սեփականատերը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ուժով հանդիսանում է կառուցապատող: Կառուցապատողի կողմից կառուցապատման աշխատանքները պետք է իրականացվեն շինարարության թույլտվության հիման վրա, բացառությամբ այն շինարարական աշխատանքների, որոնց իրականացման համար ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ շինարարության թույլտվություն չի պահանջվում: Ընդ որում, շինարարության թույլտվություն պահանջող կառուցապատման աշխատանքներն իրականացվում են բացառապես համապատասխան լիցենզիայի առկայությամբ, այսինքն՝ ենթակա են լիզենզավորման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157.7-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելն առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Ընկերությունը, որն իր գործառույթները «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն իրականացնում է գործադիր մարմնի (գլխավոր տնօրեն, նախագահ և այլք) միջոցով, որպես կառուցապատող Երևանի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Գալշոյան փողոցի թիվ 36 շենքի առաջին հարկում սեփականության իրավունքով իրեն պատկանող թիվ 747/1 խանութի տարածքը պարփակող քարե պատերում իրականացրել է թվով մեկ դռան և հինգ պատուհանների բացվածքների, ինչպես նաև մուտքի կազմակերպման ինքնակամ՝ առանց շինարարության թույլտվության, շինարարական աշխատանքներ: Նշված շինարարական աշխատանքներն իրականացրել է Արտակ Ղազարյանը, որպիսի հանգամանքն էլ հաստատված է Երևանի քաղաքապետի 03.11.2010 թվականի թիվ Վ.-39/7 որոշմամբ: Այսինքն՝ Ընկերության տնօրենն առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձի միջոցով իրականացրել է լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ, որպիսի արարքն առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

23.03.2012թ.

57. «Գարալե» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՊԵԿ, վարչ. գործ թիվ ՎԴ1/0069/05/09 **Էջ 411-417**

Խնդիր. Արդյո՞ք ակտը կազմելուց հետո ներկայացված հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, որոնք վարչական վարույթի ընթացքում չեն ներկայացվել և չեն հետազոտվել, չէին կարող քննարկվող պարագայում հիմք հանդիսանալ ակտով առաջադրված պարտավորությունները վերահաշվարկելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանի վճիռը՝ հայցը մերժելու մասով, բեկանելու հիմքում դրված Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Ընկերության տնօրենի՝ Կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչությունում 04.05.2009 թվականին տված բացատրությունը եղել է սպառիչ այն իմաստով, որ ապրանքներն առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռք է բերել շուկաներից և 2008 թվականի տարեկան հաշվետվություններում ծախսային մասը ցույց է տվել առանց հիմնավորող փաստաթղթերի: Այսինքն՝ մինչ վիճարկվող ակտը կազմելու պահը ստուգող տեսուչներին չեն ներկայացվել կատարված ծախսերը հիմնավորող հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, ինչի հետևանքով ստուգումն իրականացվել է հարկային գործում առկա փաստաթղթերի և Ընկերության անձնական հաշվի քարտերի հիման վրա: Հետևաբար, վարչական մարմինը հիմք չի ունեցել կասկածելու դրանց հավաստիությանը, իսկ ակտը կազմելուց հետո ներկայացված հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, որոնք վարչական վարույթի ընթացքում չեն ներկայացվել և չեն հետազոտվել, չէին կարող քննարկվող պարագայում հիմք հանդիսանալ ակտով առաջադրված պարտավորությունները վերահաշվարկելու համար:

27.04.2012թ.

58. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե v. Կամո Պետրոսյան, «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ՎԴ1/0143/05/10 **Էջ 418-424**

Խնդիր. Արդյո՞ք վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը, կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտը առոչինչ գնահատելու համար:

** Միաժամանակ ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական ակտի անվավերության հիմքերի հարցին:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտած այն դիրքորոշումը, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը, կամ անձին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը, կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առ ոչինչ դիտելու համար: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունն առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առ ոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր (տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոռոսինվեստ» ՍՊԸ-ի՝ 1.269.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, վարչական գործ թիվ ՎԴ/0562/05/09):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենդիրը ոչ իրավաչափ է դիտում այն վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կամ եթե ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ ըստ էության տվյալ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում: Այսինքն՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար պետք է առկա լինի հետևյալ հիմքերից որևէ մեկը, այն է՝

«ա» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ կիրառմամբ, կամ

«բ» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանմամբ, կամ

«գ» ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում: Ընդ որում, վարչական ակտի ոչ իրավաչափ՝ անվավեր լինելու հանգամանքը ճանաչվում է ինչպես այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, այնպես էլ դատական կարգով:

Վերոգրյալից ելնելով և գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանը գտնել է, որ Կամո Պետրոսյանի կողմից վարչական ակտն առոչինչ ճանաչելու պահանջի հիմքում դրված հիմնավորումները, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, ոչ թե վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու, այլ անվավեր ճանաչելու հիմք են, քանի որ տվյալ դեպքում վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում առկա չեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերը, ուստի Կամո Պետրոսյանի հակընդդեմ հայցը ենթակա էր մերժման, և նկատի ունենալով, որ Կոմիտեի 12.08.2010 թվականի որոշումն առ ոչինչ չէ, օրենքով սահմանված կարգով անվավեր չի ճանաչվել, ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ բռնագանձելու Կոմիտեի պահանջը ենթակա էր բավարարման, որպիսի դիրքորոշում և իրավացիորեն դրսևորել է Դատարանը:

29.06.2012թ.

59. Մարինե Վարդանյան և այլոք v. Աբովյանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ՎԴ/1896/05/10 **Էջ 425-430**

Խնդիր. Արդյո՞ք քաղաքապետարանի կողմից խախտվում է միատեսակ փաստական հանգամանքներում հավասար մոտեցում ցուցաբերելու սկզբունքը, երբ համայնքի տնտեսության գրքից միևնույն հասցեում բնակվող անձանց մի մասին տրամադրվում է քաղվածք, իսկ մյուս մասին ոչ:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատարանի կողմից գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու հարցին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը անդրադարձել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության հարցին:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ վարչական մարմինը միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ պարտավոր է ցուցաբերել հավասար մոտեցում: Հետևաբար նշված հոդվածի՝ որպես վարչարարության կարևորագույն սկզբունքներից մեկի կիրառման համար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք երկու իրավիճակները միատեսակ են և արդյոք վարչական մարմինն անհավասար մոտեցում է ցուցաբերել:

Սույն գործով 2003 թվականին Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյանների, Սյուզան և Վաչագան Ստեփանյանների անունով տրվել է թիվ 643 քաղվածքը՝ հիմք ընդունելով ընտանիքի կազմը: Նշված քաղվածքը տրվել է Աբովյանի քաղաքապետարանի կողմից համայնքի տնտեսության թիվ 1 գրքից: Մարինե Վարդանյանը, Ինգա և Վահե Կարապետյանները պահանջել են պարտավորեցնել Աբովյանի քաղաքապետարանին հայցվորների անվամբ տնտեսության թիվ 1 գրքից Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ քաղվածք տրամադրել՝ հիմք ընդունելով նաև ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված երկու իրավիճակներում առկա են միատեսակ փաստական հանգամանքներ, քանի որ Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյանների պահանջը նույնպես ուղղված է Աբովյանի քաղաքապետարանին, նույնպես վերաբերում է Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ թիվ 1 գրքից քաղվածք տրամադրելուն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Աբովյանի քաղաքապետարանը՝ որպես վարչարարություն իրականացնող մարմին, չի կարող մի դեպքում այդ քաղվածքը տրամադրել, իսկ մեկ այլ՝ Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյաննեի պահանջի դեպքում մերժել քաղվածքի տրամադրումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ թիվ 1 գիրքն իրենից իրավահաստատող փաստաթուղթ չի ներկայացնում, և վերջինս իրավասու չէ տրամադրել այդպիսի քաղվածք:

19.10.2012թ.

60. Հասմիկ Օհնիկյան v. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, վարչ. գործ թիվ ՎԴ/0585/05/11 **Էջ 431-437**

Խնդիր. Արդյո՞ք կացության քարտը կարող է հանձնվել ներկայացուցչին, անկախ այն հանգամանքից, լիազորագիրը վավերացված է նոտարի կողմից, թե ոչ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում, ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշման մեջ բացակայում է կացության կարգավիճակը հաստատող քարտի տրամադրման այնպիսի կանոնակարգում, որը կբացառեր որևէ այլ կերպ, քան կացության կարգավիճակ հայցող անձին քարտն ուղարկելու հնարավորություն: Հետևաբար հարկ է հաշվի առնել այն, որ այն դեպքերում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը վարչական վարույթին մասնակցել է իր ներկայացուցչի միջոցով, և վերջինս ներկա է գտնվել

վարույթին, կացության քարտը կարող է հանձնվել ներկայացուցչին, անկախ այն հանգամանքից, լիազորագիրը վավերացված է նոտարի կողմից, թե ոչ:

Մյուս կողմից Վճռաբեկ դատարանը, կարևորելով կացության կարգավիճակը հավաստող քարտի տրամադրման առանձնահատկությունները, հաշվի առնելով այն, որ նշված քարտը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթուղթն է, գտնում է, որ ներկայացուցչի միջոցով վարույթին մասնակցելու դեպքից էականորեն տարբերվում է կացության քարտը վարչական վարույթին չմասնակցած ներկայացուցչին հանձնելը, երբ վերջինս ներկայացնում է հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր: Վերջին դեպքում բացակայում է որևէ իրավահաստատող գործողություն, որը կվկայեր լիազորագիրը կոնկրետ իրավատիրոջ կողմից տալու հանգամանքը, ինչը ռիսկ է պարունակում այնքանով, որքանով կացության քարտը կարող է հանձնվել մի անձի, ով իրապես լիազորված չէ այն ստանալու: Մյուս կողմից կացության քարտը բացառապես հասցեատիրոջը հանձնելու պահանջն անձին անհարկի զրկում է իր իրավունքները ոչ անձամբ, ներկայացուցչի միջոցով իրացնելուց: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն իրողությունը, որ կացության կարագավիճակ հայցող անձինք միշտ չէ, որ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և հնարավորություն ունեն ներկայանալ և անձամբ ստանալ կացության քարտը:

Նշված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը վարչական վարույթին մասնակցել է իր ներկայացուցչի միջոցով, և վերջինս ներկա է գտնվել վարույթին, կացության քարտը կարող է հանձնվել ներկայացուցչին, անկախ այն հանգամանքից, լիազորագիրը վավերացված է նոտարի կողմից, թե ոչ, իսկ այն դեպքում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը չի մասնակցել վարչական վարույթին, չի ունեցել ներկայացուցիչ, ով մասնակցել է վարչական վարույթին, զրկված չէ կացության քարտը ներկայացուցչի միջոցով ստանալու իրավունքից, եթե վերջինիս լիազորությունները հավաստված են նոտարական կարգով վավերացված լիազորագրով:

Համադրելով վերը նշված մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կացության կարգավիճակ տրամադրելու որոշումը, ինչպես նաև կացության քարտը (այդ թվում՝ ժամանակավոր կացության քարտը) անձամբ տրվում է նման կարգավիճակ հայցող օտարերկրացուն, կամ նոտարական կարգով վավերացված լիազորագիր ունեցող ներկայացուցչին, ուստի մասնակցի կամ վերջինիս օրինական ներկայացուցչի անունից հասարակ գրավոր ձևով ձևակերպված լիազորագիր ներկայացրած անձին չի կարող տրամադրվել կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը:

25.12.2012թ.

61. Ալբերտ Խաչատրյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ՎԴ/4585/05/10 **Էջ 438-447**

Խնդիր. Բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու խնդրին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վերլուծելով Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումը կայացնելու պահին գործող խմբագրությամբ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, արձանագրել է, որ դրանով նախատեսված հողամասերի նկատմամբ անձանց սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ է որոշակի պայմանների միաժամանակյա առկայություն: Մասնավորապես՝ Երևանի վարչական տարածքում

մինչև 15.05.2001 թվականը տիրապետվող և «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին՝ 19.07.2008 թվականի դրությամբ առկա, քաղաքացիներին պատկանող՝ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300քմ մակերեսով սահմանազատված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը համարվում են այն ֆիզիկական անձանց սեփականությունը, որոնց սեփականությունը համարվող հողամասին կից է ավել օգտագործվող հողամասը, և ովքեր տիրապետում են այդ գույքը՝ որպես սեփականը:

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

23.03.2012թ.

62. Ավետիք Կարապետյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ՎԴ/2058/05/10 **Էջ 448-456**

Խնդիր. Արդյո՞ք անհրաժեշտ է բազմաբնակարան շենքի համասեփականատերերի համաձայնությունը ոչ առևտրային կամ առևտրային նպատակով իրականացվող քաղաքաշինական գործունեության դեպքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրառման խնդրին: Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է խախտի այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Մասնավորապես՝ օրենքով շինության սեփականատիրոջը վերապահված՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության ոչ առևտրային նպատակով քաղաքաշինական գործունեության իրավունքը պետք է իրականացվի բացառապես օրենսդրությամբ սահմանված նորմերի և կանոնների պահպանմամբ՝ նախօրոք տեղեկացնելով շենքի կառավարման մարմնին: Միաժամանակ, այն դեպքում, երբ նման քաղաքաշինական գործունեության հետևանքով խախտվելու են մյուս սեփականատերերի՝ իրենց շինությունները տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, ապա շինության սեփականատերը կարող է այդպիսի քաղաքաշինական գործունեություն իրականացնել միայն մյուս սեփականատերերի համաձայնությամբ՝ հատուցելով նրանց պատճառվող վնասները: Այսինքն՝ ոչ առևտրային նպատակով իրականացվող քաղաքաշինական գործունեության հետևանքով մյուս սեփականատերերի իրավունքների խախտումների, ինչպես նաև անկախ նման խախտումներից առևտրային նպատակով իրականացվող քաղաքաշինական գործունեության դեպքերում մյուս սեփականատերերի համաձայնությունը պարտադիր է:

ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

23.03.2012թ.

63. Ելենա Թովմասյան v. Երևանի քաղաքապետարան և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Մարաշ տարածքային ստորաբաժանում, վարչ. գործ թիվ ՎԴ/4677/05/09 **Էջ 457-464**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու և այդ հողամասի վրա կառուցված ինքնակամ շինության նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման խնդիրներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ մինչև «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ

04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնց օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց օգտագործման կամ վարձակալության իրավունքով հանձնվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողեր, այդ հողերի նկատմամբ ձեռք են բերում սեփականության իրավունք՝ օգտագործման կամ վարձակալության իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված լինելու և այդ հողերը ըստ նպատակային նշանակության օգտագործելու (կառուցապատելու) դեպքում:

Վկայակոչելով մի շարք իրավական ակտեր՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ կառուցապատման նպատակով չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ նախատեսված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի խախտումներով իրականացված կառույցը համարվում է ինքնակամ կառույց, որի նկատմամբ կարող է ճանաչվել միայն այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է հողամասը: Երևան քաղաքում ինքնակամ կառույցն օրինական կարող է ճանաչվել Երևանի քաղաքապետի որոշմամբ: Ընդ որում, այն ինքնակամ կառույցները, որոնց մի մասը կառուցված է սեփականության իրավունքով ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող հողամասին կից՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա, օրինականացվում և տնօրինվում է ինքնակամ կառույցով զբաղեցված հողամասի մասով կամ կառույցի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասով:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

23.03.2012թ.

64. Միքայել Անտոնյան v. ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու տարածքային հարկային տեսչություն վարչ. գործ թիվ ՎԴ5/0716/05/10 — **Էջ 465-474**

Խնդիր. Արդյո՞ք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված «հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի» կիրառման դեպքում իրացման շրջանառության չափը կարող է որոշվել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

** Միաժամանակ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է փաստը հանրահայտ ճանաչելու խնդրին:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ 1-ին հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել հասույթ օրենսդրական եզրույթի բովանդակության դրսևորումները ՀՀ օրենսդրության մեջ:

Հասույթ հասկացությունն օգտագործվում է հարկային օրենսդրության տարբեր ակտերում: Այսպես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը 3-րդ հոդվածի 9-րդ պարբերության և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 171-ին հոդվածի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրության մեջ օգտագործվում են հասույթ, եկամուտ, զուտ հասույթ, ապրանքաշրջանառություն եզրույթները: Ընդ որում, որոշ դեպքերում (եկամտահարկ) օրենսդիրը ապրանքի իրացումից ստացված եկամուտը նույնացնում է ապրանքի իրացումից ստացված հասույթի հետ: Օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ զուտ հասույթ հասկացությունն իր մեջ ներառում է հասույթն առանց անուղղակի հարկերի: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հարկային օրենսդրությամբ հասույթ եզրույթն իր մեջ ներառում է տնտեսական գործունեության (ապրանքների իրացում, ծառայությունների իրացում, հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացում) ընդհանուր արդյունքը, որից դեռևս պակասեցված չեն կատարված ծախսերը (այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման գծով ծախսեր) և անուղղակի հարկերը:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ հասույթի չափի որոշ-

ման համար էական նշանակություն ունեն տնտեսական գործունեության ծավալները՝ ապրանքների իրացման, ծառայությունների իրացման, հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացման ծավալները:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հաստատագրված վճարը փոխարինող հարկ է, սակայն այն ունի հաշվարկման և վճարման ինքնուրույն կարգ, իսկ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է հաստատագրված վճարողների կողմից հաստատագրված վճարի հաշվարկման և վճարման կարգը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, գտել է, որ հաստատագրված վճարի չափի ձևավորման հիմքում օրենսդիրը դրել է այլ տրամաբանություն և հաշվարկման այլ կարգ: Մասնավորապես, հաստատագրված վճարների հաշվարկման համար տնտեսական գործունեության ծավալները, ինչպիսին է, օրինակ՝ ծառայությունների մատուցումից ստացված արդյունքը, էական նշանակություն չունեն, քանի որ հաստատագրված վճարների հաշվարկման հիմք են ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցները, որոնք սահմանված են նույն օրենքով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ հասույթի չափը կամ իրացման շրջանառությունը հաստատագրված վճարների հաշվարկի համար էական նշանակություն չունի:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ այն հանգամանքը, որ հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով, նույնպես հիմք չէ եզրակացնելու, որ հաստատագրված վճարի ձևավորման համար էական է իրացման շրջանառությունը կամ ապրանքաշրջանառությունը հետևյալ պատճառաբանությամբ:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով …:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ դրույթը նախատեսում է ավելացված արժեքի հարկի հաշվարկային, այլ ոչ թե իրական մեծությունը, իսկ նման նորմի նախատեսումն օրենսդրի կողմից ուղղված է նույն օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված հաշվանցի իրականացմանը: Նշված հոդվածի համաձայն՝ վճարողների կողմից նույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով, 251 հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, 33-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով, 53 հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանային չափերը գերազանցելու դեպքում վճարված (հաշվարկված) հաստատագրված վճարների գումարը հաշվանցվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով: Հաշվանցումն առաջին հերթին իրականացվում է համապատասխան հարկատեսակների մասին օրենքներով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկված փաստացի շահութահարկի (կամ եկամտահարկի) և ավելացված արժեքի հարկի գումարների դիմաց՝ նույն օրենքի 6-րդ հոդվածում նշված համամասնությամբ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանի և Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն հիմնավոր են և քննարկվող պարագայում Տեսչությունը չէր կարող իրացման շրջանառությունը որոշել հարկվող եկամտից, հարկվող եկամուտը որոշել եկամտահարկի գումարից, իսկ եկամտահարկի գումարը՝ հաստատագրված վճարից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և 22-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելն ապօրինի գործունեություն է, որն առաջացնում է տուգանքի նշանակում: Նշված տուգանքի չափի հաշվարկումն իրականացվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանած կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, հարկային տեսչությունը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվարկել հարկ վճարողի

հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները (տես՝ անհատ ձեռնարկատեր Տիգրան Խոսրովյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության՝ Տեսչության 11.11.2008 թվականի թիվ 2303487 ակտի 4-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/0054/05/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը)։ Տվյալ դեպքում օրենսդիրը, հղում անելով նույն օրենքի 22-րդ հոդվածին, նկատի է ունեցել այն դեպքը (ապօրինի գործունեության իրականացում), երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը։ Հետևաբար, նման դեպքում հարկային տեսչության համար ծագում է պարտավորություն՝ հաշվարկելու հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, հիմնվելով օրենքով սահմանված չափանիշների վրա (տես՝ Անահիտ Թորոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 2006 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1303288 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-500/ՏԴ գործով Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը)։

Վճռաբեկ դատարանը գտել է, որ հաստատագրված վճարի գումարի մեծությունից իրացման շրջանառություն որոշելը չի բխում օրենքի պահանջներից, և այս մասով Դատարանի վճիռը հիմնավորված է, ինչը բավարար է ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար։ Բացի այդ, իրացման շրջանառությունն ակտով հաշվարկվել է «Հաստատագրված վճարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտումներով, ինչը նույնպես հանգեցրել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի սխալ կիրառմանը։ Նշված իրավական ակտերի խախտումների պայմաններում առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ակտի անվավերության հիմքը։

Այսինքն՝ տվյալ դեպքում օրենքի խախտմամբ ընդունված ակտն արդեն իսկ հանգեցնում է դրա անվավերության՝ անկախ Վերաքննիչ դատարանի կատարած հաշվարկի հիմնավորվածությունից։

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրահայտ փաստերն ապացուցման կարիք չունեն։

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հանրահայտ համարվում են այն փաստերը, որի վերաբերյալ տեղեկությունները հայտնի են հանրության լայն շրջանակների, այդ թվում կողմերին և դատարանին։

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ փաստերի հանրահայտության աստիճանը կարող է տարբեր լինել։ Դրանք կարող են հայտնի լինել համաշխարհային մասշտաբով, Հայաստանի Հանրապետության, մարզի կամ համայնքի մասշտաբով։ Վճռաբեկ դատարանը գտել է, որ փաստի հանրահայտ լինելը որոշում է դատարանը յուրաքանչյուր գործով, քանի որ փաստի հանրահայտության աստիճանը կախված է որոշակի հանգամանքներից՝ ժամանակ, տարածություն և այլն։ Հետևաբար նույն փաստը կարող է որոշակի ժամանակ անց կորցնել իր հանրահայտությունը կամ լայն տարածված լինելով որոշակի վայրում՝ այդպիսի լայն տարածում չունենալ այլ վայրերում։

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելիս պետք է դատական ակտում նշեր, որ տվյալ փաստը հանրահայտ է և ապացուցման կարիք չունի։ Սույն գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով հայցը, որոշման եզրահանգման հիմքում դրել է նաև այն վերլուծությունը, որ ակտով հաշվարկված իրացման շրջանառությունը նշանակում է, որ մեկ ամսվա իրացման շրջանառությունը պայմանական մեկ ավտոմեքենայի հաշվով կազմում է 124.000 ՀՀ դրամ, որը համարժեք է միայն վարորդի ամսական աշխատավարձին, որն էլ Վերաքննիչ դատարանը համարել է հանրահայտ փաստ։

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով 124.000 ՀՀ դրամը վա-

որդի ամսական աշխատավարձի չափին հավասար լինելու փաստը չի կարող համարվել հանրահայտ, քանի որ հանրահայտ փաստերը կապված են որոշակի դեպքերի, իրադարձությունների հետ, որոնք հայտնի են հանրության լայն շրջանակների, իսկ աշխատավարձի չափը որոշվում է կողմերի միջև կնքված պայմանագրի հիման վրա և կարող է փոփոխվել տնտեսական տարբեր գործոնների ազդեցության տակ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ապացույցներ և ապացուցում

27.04.2012թ.

65. Փարաքարի գյուղապետարան v. Նորիկ Այվազյան, վարչ. գործ թիվ ՎԴ4/0014/05/11 **Էջ 475-479**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գույքահարկի դրույքաչափը որոշելու հարցի համատեքստում անդրադարձել է վարչական դատավարությունում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության խնդրին՝ կրկնելով նախկին դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Դատարանի իրավունքն է, սակայն Դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու Դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (տես ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Աշտարակի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ Ժորա Դանիելովի՝ 5.670.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և Ժորա Դանիելովի հակընդդեմ հայցն ընդդեմ Տեսչության՝ 08.05.2008 թվականի թիվ 2326225 ակտը վերացնելու պահանջի մասին գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի թիվ ՎԴ3/0207/05/08 որոշումը):

Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, որոշման հիմքում դրել է Նորիկ Այվազյանի սեփականության իրավունքի թիվ 2536252 վկայականը և Գյուղապետարանի կողմից կազմված տեղեկանքը, որոնց մեջ առևտրի սրահի մասին ոչինչ նշված չէ, և եզրակացրել է, որ գույքահարկով հարկման ենթակա օբյեկտի բացակայության պայմաններում Նորիկ Այվազյանը չի համարվում տվյալ գույքի համար գույքահարկ վճարող: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ թե Դատարանը և թե Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն հետազոտել և չեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ինչի արդյունքում հանգել են չպատճառաբանված եզրահանգումների, որոնք էլ ազդել են գործի ելքի վրա:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանները, հիմք ընդունելով Նորիկ Այվազյանին 15.04.2008 թվականին տրված թիվ 2536252 սեփականության իրավունքի վկայականում առևտրի սրահի նշված չլինելու հանգամանքը, չեն պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Գործի վարույթը կասեցնելը

25.12.2012թ.

66. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ v. ՀՀ պաշտպանության նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԴ/1314/05/10 **Էջ 480-485**

Խնդիր. Այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում միջնորդություն է ստացվում գործի քննությունը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու՝ կիրառման ենթակա օրենքի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը պարզելու համար, արդյոք դատարանն իրավասու է դիրքորոշում հայտնել օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը չհակասելու վերաբերյալ:

** Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով վերանայելու խնդրին:*

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեճը լուծող դատարանները (ընդհանուր իրավասության և (կամ) մասնագիտացված) որոշակի հանգամանքների ի հայտ գալու ուժով լիազորված են կասեցնելու գործի վարույթը: Նման հանգամանքներից է կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ դատարանի կարծիքով ՀՀ Սահմանադրությանը հակասելը: Կոնկրետ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը ենթակա է գնահատման դատարանի (գործը քննող դատավոր կամ դատավորների կազմի) կողմից: Լիազորված լինելով գնահատել կիրառման ենթակա դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը՝ դատարանն այն իրականացնում է սուբյեկտիվ համոզմամբ, հենվելով օբյեկտիվ չափորոշիչների վրա, մասնավորապես՝ կոնկրետ դրույթի մեկնաբանումը, այդ դրույթի՝ իրավունքի սկզբունքներին հակասելը, սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքներին հակասելը և այլն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանը նախ և առաջ պետք է դիրքորոշում հայտնի կիրառման ենթակա դրույթի և ՀՀ Սահմանադրության կոնկրետ հոդվածներին դրա *հնարավոր (ենթադրյալ)* հակասության մասին և որպես հետևանք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով կասեցնի գործի վարույթը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի հիմքով դիմի ՀՀ Սահմանադրական դատարան: Հետևաբար, կիրառման ենթակա օրենքի հոդվածի կամ այլ իրավական ակտի դրույթի Սահմանադրությանը չհակասելու վերաբերյալ դատարանի դատողություններն ուղղված են բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված լիազորության իրականացմանը: Դրանք չեն կարող նույնացվել սահմանադրական արդարադատության հետ, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է որոշել օրենքների և ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսված այլ իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

27.04.2012թ.

67. «Վիբրոգրաֆուս» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի հարկային տեսչություն, վարչ. գործ իվ ՎԴ/2540/05/10 **Էջ 486-489**

Խնդիր. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչական վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը դրա հիմքերի և հիմնավորումների սահմանում քննելու խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով

գործի փաստերը արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, որպես վերաքննություն իրականացնող դատական ատյան, պարտավոր է համապատասխան դատական ակտը վերանայել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ըստ էության քննություն իրականացնելիս չպետք է դուրս գա վարչական գործի հարուցման հիմք հանդիսացող հայցադիմումի շրջանակներից:

Գործի փաստերի համաձայն՝ ոչ 12.05.2010 թվականի թիվ 1010285 ստուգման ակտի հիմքում, ոչ հայցադիմումի պատասխանում, ոչ Դատարանում գործի քննության ընթացքում, և ոչ էլ վերաքննիչ բողոքում որպես պարզեցված հարկի ռեժիմից դուրս գալու հիմք Ընկերության կողմից միայն մեկ վայրում գործունեություն չիրականացնելու հանգամանքը Տեսչությունը չի փաստարկել: Ավելին, վերաքննիչ բողոքի հիմքում, որպես «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի խախտում, դրվել է միայն Ընկերության կողմից երաժշտական գործիքների վարձակալության հանձնելու գործունեությամբ զբաղվելու և գովազդային ծառայություններ մատուցելու հանգամանքները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ

19.10.2012 թ.

68. Սուրեն Մարգարյանը և այլոք v. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն, քաղ. գործ թիվ ՎԴ/0636/05/11 **Էջ 490-495**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է կատարողական վարույթը կասեցնելու և վերսկսելու հարկադիր կատարողի իրավունքին այն դեպքում, երբ կատարողական վարույթը կասեցվել է պարտապանի նկատմամբ հետախուզում հայտարարելու հիմքով, սակայն առանց նրան հայտնաբերելու հարկադիր կատարողը վերսկսել է վարույթը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը պետք է մեկնաբանել նույն օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածների, ինչպես նաև 40-րդ հոդվածի 4-րդ մասի համակցությամբ: Օրենսդիրը համապատասխանաբար «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով սպառիչ սահմանել է կատարողական գործողությունների իրականացմանը խոչընդոտող և՛ պարտադիր, և՛ լրացուցիչ այն բոլոր հանգամանքները, որոնց առկայության պարագայում հարկադիր կատարողը մի դեպքում պարտավոր է, իսկ մյուս դեպքում կարող է կասեցնել կատարողական վարույթը: Այսպես՝ եթե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով թվարկված պայմաններից մեկի առկայության դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, ապա նույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված դեպքերում վերջինս օժտված է **հայեցողական լիազորությամբ** և կասեցնում է կատարողական վարույթը միայն այն դեպքում, երբ գնահատելով ստեղծված իրավիճակը՝ գալիս է այն եզրահանգման, որ տվյալ պայմաններում անհնարին է դարձել կատարողական գործողությունների իրականացումը: Նույն կանոնը կիրառվում է նաև կատարողական վարույթը վերսկսելու դեպքում: Այսպես՝ եթե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված հիմքով կատարողական վարույթը կասեցված լինելու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է այն վերսկսել միայն նույն հոդվածով թվարկված պայմանները վերանալուց հետո, ապա նույն օրենքի 38-րդ հոդվածի հիմքով կատարողական վարույթը կասեցնելու դեպքում կարող է այն վերսկսել նաև այն դեպքում, երբ գտնում է, որ թեև նշված հոդվածով սահմանված պայմանները չեն վերացել, բայց և այնպես այս կամ այն հանգամանքի առաջացման կամ վերացման արդյունքում հնարավոր է դարձել շարունակել կատարողական գործողությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով պարտապանին հետախուզում հայտարարելու և կատարողական վարույթը կասեցնելու հիմքը, ըստ էության, կատարողական գործողությունները շարունակելու անհնարինությունն էր, որն էլ դրսևորվում էր հետևյալում. նախ՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.05.2006 թվականի վճռից բխում է, որ ապօրինի կառույցը քանդելու և դրա համար անհրաժեշտ ծախսերը հոգալու պարտականությունը կրում է Գագիկ Մարգարյանը, և ապա կառույցը քանդելու համար, այնուամենայնիվ, անհրաժեշտություն էր առաջանալու մուտք գործել վերջինիս բնակարան: Սակայն պահանջատիրոջ դիմումի հիման վրա, որով վերջինս իր համաձայնությունն էր տվել ապօրինի կառույցը քանդել իր բնակարանի պատշգամբը քանդելու միջոցով և իր հաշվին, ըստ էության վերանում են այն խոչընդոտող հանգամանքները, որոնք հիմք էին հանդիսացել պարտապանին հետախուզում հայտարարելու և ապա կատարողական վարույթը կարճելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգեց, որ Դատարանի պատճառանությունը հիմնավոր է, քանի որ պահանջատիրոջ կողմից կատարողական գործողություններն իր հաշվին իրականացնելու վերաբերյալ դիմումով, ըստ էության, վերացել է այդ գործողություններն իրականացնելուն խոչընդոտող հանգամանքները, ինչպես նաև կատարողական վարույթը կասեցված պահելու անհրաժեշտությունը:

Մյուս հարցը կապված էր հարկադիր կատարողի կողմից քանդման ենթակա կցակառույցն օրինականացնելու մասին իրազեկվելու փաստի պարզման հետ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործում կատարողական վարույթ հարուցելու պահից մինչև վարույթը կարճելու պահը հարկադիր կատարողի կողմից քանդման ենթակա կցակառույցն օրինականացնելու մասին իրազեկվելու փաստը հաստատելու վերաբերյալ ապացույցի բացակայության պարագայում հարկադիր կատարողը, ձեռնամուխ լինելով պահանջատիրոջ կողմից ներկայացրած 31.05.2006 թվականի 2-1-382 կատարողական թերթի պահանջի կատարմանը, որևէ պարտավորություն չէր կրում պարզելու, թե արդյոք այդ ընթացքում նշված կառույցը որևէ մեկի կողմից օրինականացվել է, թե ոչ: Ավելին, նման դեպքում կառույցն օրինականացնելու վերաբերյալ համապատասխան ապացույց ներկայացնելու պարտականություն, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի, կրում է շահագրգիռ կողմը, քանի որ նա է միայն տիրապետում այդ ապացույցին, ինչպես նաև այդ փաստի ապացուցումը հենց իր համար է կրում բարենպաստ բնույթ:

69. Արմեն Վանյան v. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԴ/3448/05/11 **Էջ 496-505**

<u>Խնդիր.</u> Արդյո՞ք պարտապանի գույքի գտնվելու վայրի հայտնի լինելու դեպքում, պարտապանի գտնվելու վայրի անհայտ լինելը խոչընդոտ է այդ գույքի վրա բռնագանձում տարածելու համար:

<u>Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.</u> Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ պարտապան ֆիզիկական անձի բացակայությունն անհնար չի դարձնում կատարողական գործողությունների իրականացումը, նրա անձի հետախուզում կարող է և չիրականացվել: Նշված տրամաբանությունից ելնելով՝ օրենսդիրը նախատեսում է կատարողական վարույթն ավարտելու երկու դեպք՝ կապված անձի և կապված անձի գույքի պարզման անհնարինության հետ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության դեպքում վարույթն ավարտվում է այն պատճառով, որ առանց տվյալ անձի ֆիզիկական ներկայության օբյեկտիվորեն հնարավոր չէ շարունակել կատարողական գործողությունները և փաստացի կատարել դատական ակտը: Իսկ այն դեպքում, երբ պարտապանը ֆիզիկապես ներկա է, սակայն նրա ֆիզիկական ներկայությամբ նույնպես օբյեկտիվորեն հնարավոր չէ փաստացի կատարել դատական ակտը, քանի որ այն գույքային բնույթ ունի և փաստացի կարող է կատարվել պարտապանի գույքի առկայության դեպքում, այդ դեպքի համար էլ օրենսդիրը պարտապանի ֆիզիկական ներկայու-

թյան պարագայում հնարավոր է համարում ավարտել կատարողական վարույթը պարտապանի գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության դեպքում:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն անձի գույքի առկայության դեպքում նրա բացակայությամբ կատարողական գործողությունների իրականացումը, նրա գույքի նկատմամբ որոշակի կատարողական գործողությունների կատարումը, որն ուղղված է պարտատիրոջ իրավունքների ապահովմանը և դատական ակտի կատարմանը, չպետք է բացարձակ բնույթ կրի, քանի որ պարտապանի իրավունքների և շահերի անտեսմամբ նշված գործողությունների կատարումը կխախտի բարենպաստ հավասարակշռություն ստեղծելու պահանջը, ինչն իր հերթին կհանգեցնի համաչափության սկզբունքի խախտման: Հետևաբար նմանատիպ դեպքերում յուրաքանչյուր գործով պետք է պարզվի՝ արդյոք չեն անտեսվել կամ խախտվել պարտապանի այն հիմնարար նյութական և ընթացակարգային իրավունքները (երաշխիքները), որոնք ՀՀ Սահմանադրությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, ՀՀ օրենսդրությունը վերջինիս համար նախատեսել է որպես իր իրավունքների ապահովման երաշխիք:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քննելով Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռով նշել է, որ «Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ, այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք) առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որը անհամատեղելի կլիներ օրինականության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (*տես Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի վճիռը, կետ 34*)»: «Դատարանը, այնուհետև, կրկնում է իր նախադեպային իրավունքը այն առումով, որ Դիմումատուի օգտին կայացրած վճռի կատարմանը հասնելու անհնարինությունը բերում է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասության մեջ սահմանված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտության (*տես Յասիուսիեվիչն ընդդեմ Լիտվայի գործով Եվրոպական դատարանի 06.03.2003 թվականի վճիռը, կետ 45*): Դատարանը նշում է, որ մինչ օրս, 2001թ. հուլիսի 2-ին Դիմումատուների օգտին կայացված վճիռը ընդհանուր առմամբ մնում է չկատարված: Հետևաբար, Դիմումատուների դեպքում պարտքերի վերադարձման ընթացքը մինչև այժմ տևել է ավելի քան ութ տարի և չորս ամիս, որից մոտավորապես յոթ ու կես տարին ընկնում է Դատարանի իրավասության տակ ratione temporis: Դատարանը գտնում է, որ Դիմումատուների օգտին կայացված վճռի կատարման համար անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով՝ հայաստանյան իշխանությունները սահմանափակել են Դիմումատուների «դատարան դիմելու իրավունք»-ի իմաստը և զգալի ժամանակահատվածով խոչընդոտել են և դեռ խոչընդոտում են Դիմումատուների՝ գումարն ամբողջությամբ ստանալուն, որի իրավունքը նրանք ունեին, որն էլ հավասարեցվում է իրենց գույքից անարգել օգտվելու անհամաչափ միջամտության: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրան կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԾԴ/0177/02/11
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԾԴ/0177/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գոլդուել» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ «Վալտի Մոթորս» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ բաց թողնված օգուտը հատուցելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 167.081.882 ՀՀ դրամ՝ որպես 01.01.2010 թվականից մինչ 01.06.2011 թվականն ընկած ժամանակահատվածում բաց թողնված օգուտ:

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա.Կուբանյան) (այսուհետ՝ Դատարան) 10.10.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.02.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, Դատարանի 10.10.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 408-րդ և 409-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 149.8-րդ, 219-րդ և 220-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն և գնահատում, սխալ է մեկնաբանել վնասի ինստիտուտը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ 05.11.2009 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է ավտոմեքենայի առուվաճառքի թիվ 289 պայմանագիրը, որով Կազմակերպությունը պարտավորվել է մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը հանձնել թվով 35 հատ «SKODA» մակնիշի «Octavia tour» 1.4 մոդելի ավտոմեքենա:

Կազմակերպության կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի հունիսի 1-ը Ընկերությունը կրել է 167.081.882 (հարյուր վաթսունյոթ միլիոն ութսունմեկ հազար ութ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ վնաս (բաց թողնված օգուտ):

2010 թվականի ընթացքում ընդհանուր 19 տաքսիների շահագործմամբ Ընկերության ավտոտրանսպորտային գործունեությունից (տաքսի ծառայություն) ստացած հասույթը կազմել է 131.815.521 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև գործի նյութերում առկա ձայնագրման կրիչը, որում հստակ արտացոլված են Taxi-2008 (2010) համակարգչային ծրագրի տվյալները, որտեղ ֆիքսված են Ընկերության՝ միայն քաղաքային հեռախոսահամարներով պատվիրված և չկատարված պատվերները, մինչդեռ հայցվորի ծառայություններից օգտվել են նաև բջջային հեռախոսազանգերով տաքսի պատվիրելով, որոնց մի մասը հնարավոր չի եղել կատարել մեքենաների սակավաթվության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.02.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Կողմերի միջև 05.11.2009 թվականին կնքված թիվ 289 առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը Ընկերությանը հանձնել 35 հատ «SKODA» մակնիշի «Octavia tour 1.4» մոդելի ավտոմեքենաներ (հատոր 1-ին, գ.թ. 5):

2. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 08.12.2010 թվականի թիվ ԵՇԴ/0620/02/10 օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ Կազմակերպության կողմից Ընկերությանը չի հանձնվել 17 ավտոմեքենա կամ չի վերադարձվել դրանց արժեքը (հատոր 1-ին, գ.թ. 79):

3. Ընկերությունն իր կողմից մատուցվող տաքսի ծառայությունների ընթացքում

Taxi-2008 ծրագրի օգտագործման համար կնքել է 15.01.2008 թվականի «հեղինակային օբյեկտի վերաբերյալ պայմանագիր» (հատոր 1-ին, գ.թ.22):

4. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Կենտրոն հարկային տեսչության 19.05.2011 թվականի թիվ ՏՎ-2696 գրության համաձայն՝ Ընկերությունը 2010 թվականին ավտոտրանսպորտային գործունեությամբ զբաղվելու ընթացքում շահագործել է ամսական միջինը 19 մեքենա (հատոր 1-ին, գ.թ. 20):

5. 2010 թվականի ընթացքում 19 տաքսիների շահագործմամբ ավտոտրանսպորտային գործունեությունից (տաքսի ծառայություն) ստացած հասույթը կազմել է 131.815.521 (հարյուր երեսունմեկ միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, հիմք՝ տեսաձայնագրման կրիչը (տեսաձայնագրման կրիչում հստակ արտացոլված են Taxi-2008(2010) համակարգչային ծրագրի տվյալները), (հատոր 1-ին, գ.թ.69):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը բողոքում բարձրացված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցերին՝

* Բաց թողնված օգուտի ընդհանուր իրավական կարգավորմանը
* Բաց թողնված օգուտի հաշվարկման առանձնահատկություններին

4.1 Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ընդհանուր կանոնները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է բաց թողնված օգուտի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների մեկնաբանությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ բաց թողնված օգուտն այն եկամուտն է, որը սեփականատերը քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում կստանար, եթե չխախտվեր նրա իրավունքը: Բաց թողնված օգուտի առկայությունը, այսինքն՝ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամուտի ստացման իրական հնարավորությունը որոշելը յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձնահատկությունները: Մասնավորապես, բաց թողնված օգուտի առկայությունը որոշելու համար նախ և առաջ պետք է հաշվի առնվի մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը, կամ սեփականատիրոջ իրական մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունը այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ (*տես՝ Ջուլիետա Պետրոսյանը, Կարեն Դավթյանը և Արման Դավթյանն ընդդեմ Թևոս Սաֆարյանի՝ պատճառված վնասների հատուցման պահանջի մասին թիվ 3-691(ՎԴ) ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*): Այդպիսին կարող է լինել նաև ընկերության և երրորդ անձանց միջև ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրերը, նրանց միջև կնքված նախնական պայմանագրերը, մտադրությունների վերաբերյալ արձանագրությունները, գրագրությունը պայմանագիր կնքելու վերաբերյալ և այլ պայմանավորվածություններ (*տես «Սասնա-Մանանա» ՍՊԸ-ն ընդդեմ Դանիել Ղասաբօղլյանի՝ պատճառված վնասի հատուցման*

պահանջի մասին թիվ ԵՔԴ/0086/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը կամ «Էքսոլթ» ՍՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի՝ բաց թողնված օգուտը հատուցելու և գումար բռնագանձելու պահանջների մասին թիվ ԵՔԴ/0036/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բարձրացված իրավական հարցադրումներին պետք է պատասխանել վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ նպատակ ունենալով զարգացնել դրանցում արտահայտված կանոնակարգումները:

4.2. Բաց թողնված օգուտի սահմանադրաիրավական և կոնվենցիոն հիմքերը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված օգուտի հատուցման կանոնները դատարանները պետք է կիրառեն ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթների պահպանմամբ:

ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Վերոնշյալ սահմանադրական իրավունքը ենթադրում է ոչ միայն պետության կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորության ընձեռում, այլև ձեռնարկատիրության և ձեռնարկատիրական գործունեության համար համապատասխան միջավայրի ձևավորում՝ այդ թվում գործարարությամբ զբաղվող անձանց համար խախտված իրավունքների վերականգնման երաշխիքների ստեղծում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործարարության ոլորտում բաց թողնված օգուտի որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել մի կարևոր առանձնահատկություն՝ գործարարական գործունեությունը անձի շահույթ ստանալուն ուղղված գործունեություն է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդված), ուստի գործարարության ոլորտում ողջամտորեն ենթադրվում է, որ անձի իրականացրած գործողությունները (պայմանագրերի կնքում, քաղաքացիական տարբեր իրավունքների ձեռքբերում) ուղղված են շահույթ ստանալուն: Այսինքն՝ գործարարության ոլորտում անձը պայմանագիր կնքելու, քաղաքացիական իրավահարաբերության մեջ մտնելու ժամանակ ակնկալում է ստանալ որոշակի օգուտ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, նշել է, որ «պահանջը» Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի իմաստով կարող է հասկացվել որպես «սեփականություն» այն դեպքում, եթե բավարար չափով հաստատված է, որ այն կարող է իրավաբանորեն իրականացվել *(տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 02.05.2002 թվականին Եվրոպական դատարանի վճիռը, կետ 40, Վարդուհի Հովսեփյանն ընդդեմ Ռիմա Կարապետյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԱՔԴ/1522/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը)*:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները նույնպես կարող են դիտարկվել Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Նման իրավիճակներում Եվրոպա-

կան դատարանը հիմք է ընդունել վնասի հատուցման վերաբերյալ ներպետական կանոնները, որի հիման վրա վերջինս այն դիտարկել է որպես «ակտիվ», «գույք» և հետևաբար նաև «տիրապետում» 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Արդյունքում Եվրոպական դատարանը գտել է, որ դատական ակտի հիման վրա դիմողները կարող են ունենալ «օրինական սպասելիք», որ պատահարի արդյունքում վերջիններիս ներկայացրած պահանջը պետք է քննարկվի վնասի հատուցման ընդհանուր կանոններով *(տես՝ PRESSOS COMPANIA NAVIERA S.A և մյուսներն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, կետ 31)*:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հետ կապված հարաբերությունները պետք է դիտարկվեն ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո, վնասի հատուցման պահանջը կարող է համարվել «տիրապետում» Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, հետևաբար դրա նկատմամբ սահմանափակումները և հատուցման հարցերը պետք է քննարկման առարկա դառնան համաչափության սկզբունքի պահպանմամբ:

4.3. Բաց թողնված օգուտի որոշման ընդհանուր կանոնները.

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում հաստատել է, որ բաց թողնված օգուտի որոշման ժամանակ իրական մտադրությունը պետք է զուգորդվի իրական հնարավորության հետ: Դա բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ կետից, որի համաձայն՝ բաց թողնված օգուտը որոշելիս հաշվի են առնվում այն ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները:

Ընկերության իրական մտադրությունը կարող է հաստատվել ընկերության գործունեության բնույթի ուսումնասիրությամբ (օրինակ՝ կանոնադրություն և այլ փաստաթղթեր): Դրանք կարող են հաստատվել նաև համապատասխան պայմանագրային հարաբերությունների բնույթը բացահայտելով, ընկերության բիզնես ծրագրերն ուսումնասիրելով: Բացի այդ, այդպիսիք կարող են լինել ընկերության գործունեության շրջանակների կամ ծավալների ավելացման վերաբերյալ ապացույցներ (պահեստի պատրաստում, ապրանք արտադրելու համար սարքավորումների ձեռքբերում կամ ծավալի ավելացում): Այս ամենը հիմնավորում է ընկերության իրական մտադրությունը:

Ընկերության իրական հնարավորությունը կարող է հաստատվել օգուտ ստանալու վերաբերյալ համապատասխան իրական կամ ողջամտորեն հավանական ապացույցներով: Օրինակ կարող են լինել ընկերության շրջանառության վերաբերյալ տվյալները, որոնք ցույց են տալիս նմանատիպ ապրանքներից կամ ծառայություններից ընկերության ստացած հասույթը, որպիսիք կարող են արտացոլված լինել ընկերության հաշվապահական կամ այլ փաստաթղթերում կամ պետական տարբեր մարմինների (հարկային, մաքսային և այլն) տվյալներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունները տնտեսության մեջ գործարարական գործունեությամբ զբաղվում են ոչ միայնակ, այլ մյուս կազմակերպությունների հետ գործարարական հարաբերությունների միջոցով, ընկերության իրական շրջանառության վերաբերյալ ապացույցներ կարող են լինել ընկերության գործընկեր այլ կազմակերպությունների հետ առկա շրջանառության ծավալները հիմնավորող ապացույցները:

4.4. Բաց թողնված օգուտի հաշվարկման կանոնները.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված օգուտի հաշվարկման ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն, որ բաց թողնված օգուտն այն եկամուտն

է, որն այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր: Այսինքն՝ բաց թողնված օգուտը չի կարող նույնանալ կազմակերպության շրջանառության կամ հասույթի հետ:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանները բաց թողնված օգուտի հաշվարկման ժամանակ պետք է նվազեցնեն անհիրաժեշտ այն ծախսերը, որոնք վնաս կրած անձը կկատարեր վնասը չպատճառվելու դեպքում: Այդ ծախսերի մեջ կարող են ներառվել ապրանքի արտադրության, վաճառքի կամ ծառայության մատուցման համար նյութերի, օգտագործվող հումքի արժեքը, ամորտիզացիոն ծախսերը, աշխատողներին վճարվող աշխատավարձը և այլն: Պետք է նվազեցվեն նաև այն հարկերը, որոնք անձը կվճարեր այդ ապրանքների կամ ծառայությունների համար: Արդյունքում պետք է մնա այն շահույթը, որը ձևավորվում է անհիրաժեշտ ծախսերի նվազեցումից հետո: Բացի այդ, կախված ապրանքաշրջանառության կամ մատուցվող ծառայության առանձնահատկություններից՝ կարող են հաշվի առնվել սեզոնային փոփոխությունները, շուկայում տիրող վիճակը, պետության ֆինանսական քաղաքականության փոփոխությունները և այլն:

Եթե ընկերությունը պարտավորության խախտման հետևանքով փոխել է իր արտադրության կամ ծառայության որակը, ապա բաց թողնված օգուտը պետք է որոշվի նոր արտադրվող (առավել ցածրորակ կամ նոր որակի, որն առավել ցածր ինքնարժեք ունի) ապրանքի կամ մատուցվող ծառայության շահույթի և պարտավորությունը չխախտվելու դեպքում արտադրվող ապրանքի կամ մատուցվող ծառայության (առավել բարձրորակ կամ բարձր ինքնարժեք ունեցող) միջև շահույթի տարբերությունից:

Բացի այդ, անհիրաժեշտ է ուշադրություն դարձնել այն ժամանակահատվածին, որի համար պետք է հատուցվի բաց թողնված օգուտը: Եթե ապրանքը կամ ծառայությունը, որը պետք է տրամադրվեր ընկերությանը, սակայն չի տրամադրվել, և որի արդյունքում ընկերությունը օգուտ է բաց թողել, ունի օգտագործման որոշակի ժամկետ, ապա այդ ժամկետից ավել օգուտը չի կարող հատուցվել: Օրինակ, եթե ապրանքը մատակարարելու կամ ծառայությունը մատուցելու ժամկետ է նշված, սակայն չի կատարվել, ապա օգուտը պետք է հատուցվի այն ժամանակահատվածի համար, որը տուժող ընկերությունը պետք է օգտագործեր օգուտ ստանալու համար (ապրանքը պետք է վաճառեր, վերամշակեր և վաճառեր, կամ դրա հիման վրա այլ ծառայություն մատուցեր և այլն):

4.5. Պայմանագրային պարտավորություններում բաց թողնված օգուտի կանոնները.

Պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով բաց թողնված օգուտի փոխհատուցման համար հայցվորը պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք կհիմնավորեն.

* պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտումը.
* օգուտ ստանալու իրական մտադրությունը և հնարավորությունը.
* վերջիններիս պատճառահետևանքային կապը.
* վնասների չափը.
* պարտավորությունների խախտման, օգուտ ստանալու իրական մտադրության և հնարավորության և վնասի չափի միջև պատճառահետևանքային կապը.
* իրավունքը խախտված անձի կողմից ձեռնարկվող միջոցները, որոնք ուղղված են վնասի նվազեցմանը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ պայմանագրային հարաբերություններում վնասի հատուցման հարցը քննարկելիս պետք է հաշվի առ-

նել, որ բաց թողնված օգուտի հատուցման արդյունքում պարտատիրոջ մոտ չպետք է առաջանա հարստացում, այսինքն՝ վնասների փոխհատուցման գումարի մեջ չեն կարող ընդգրկվել այնպիսի վնասներ, որոնք կողմն իրականում չի կրել: Այլ կերպ ասած՝ վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիաիրավական պատասխանատվության հետևանքով տուժողի գույքային դրությունը պետք է բարելավվի այն աստիճան, որում նա կգտնվեր, եթե վերջինիս իրավունքները չխախտվեին: Պայմանագրային պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կողմը չպետք է հատուցի այն վնասը, որը չի առաջացել կամ երբեք չէր կարող առաջանալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ նմանատիպ գործերի քննության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, որի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հոդվածը ցույց է տալիս, որ որոշակի դեպքերում գնորդը կարող է ողջամիտ միջոցներ ձեռնարկել վնասի նվազեցման համար: Բաց թողնված օգուտի դեպքում դա կարող է դրսևորվել նման օգուտ ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած ողջամիտ միջոցներով՝ այլ եղանակներով նման ապրանք կամ ծառայություն ստանալով և այլն: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հարցի պարզումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից և չպետք է հանգեցնի բաց թողնված օգուտի հատուցման չափի անհարկի նվազեցման:

4.6.Վնասներ և տուժանք.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրային հարաբերություններում բաց թողնված օգուտի հատուցման վերաբերյալ դրույթների ամբողջական կիրառման նպատակով դատարանները պետք է հաշվի առնեն նաև պայմանագրով նախատեսված տուժանքը, ինչպես նաև տուժանքի և վնասների վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք, ապա վնասները հատուցվում են տուժանքով չծածկված մասով:

Օրենքով կամ պայմանագրով կարող են նախատեսվել դեպքեր, երբ՝

1) թույլատրվում է բռնագանձել միայն տուժանքը, սակայն ոչ վնասները.

2) վնասները կարող են բռնագանձվել լրիվ գումարով՝ չհաշված տուժանքը.

3) պարտատիրոջ ընտրությամբ կարող են բռնագանձվել կամ տուժանքը, կամ վնասները:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պայմանագրային հարաբերություններում կողմերը կարող են նախատեսել տուժանք վճարելու պարտավորություն: Տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվու-

թյուն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը *(տես՝ «Թամամ» արտադրական կոոպերատիվն ընդդեմ «ԱՄ-ԿԱ» ՍՊԸ-ի՝ 22.533.430 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին թիվ 3-27 (ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հատուցվող բաց թողնված օգուտի չափը որոշելիս դատարանները պետք է ուշադրություն դարձնեն պայմանագրով սահմանված տուժանքին, տուժանքի և վնասների հատուցման հարաբերակցության վերաբերյալ պայմանագրի դրույթներին, որից հետո որոշեն հատուցվող օգուտի վերջնական չափը:

4.7.Բաց թողնված օգուտի հաշվարկը և դատական հայեցողությունը.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ չնայած վնասի հաշվարկման վերաբերյալ վերոնշյալ կողմնորոշիչ վերլուծություններին, այնուամենայնիվ, վնասի հատուցման կոնկրետ չափը առանձին դեպքերում կարող է բավականաչափ հստակ չլինել կամ ողջամտության աստիճանի հավաստիությամբ չորոշվել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նմանատիպ դեպքերում անձն ընդհանրապես չի կարող զրկվել բաց թողնված օգուտի հատուցման իրավունքից, քանի որ նման դիրքորոշումը կհակասի գործարարության էությանը, վերը նշված սահմանադրական և կոնվենցիոն դրույթներին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նմանատիպ իրավիճակներում դատարանները հատուցվող օգուտի չափը որոշում են իրենց հայեցողությամբ: Նման կարգավորում գործում է նաև միջազգային պրակտիկայում: Մասնավորապես, «Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների» 7.4.3 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե վնասի չափը չի կարող հաստատվել ողջամտության աստիճանի արժանահավատությամբ, դրա չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ կանոնը կարող է կիրառվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված բաց թողնված օգուտի չափի որոշման նկատմամբ, ընդ որում, դատական հայեցողությունը պետք է իրականացվի միայն վերոնշյալ իրավական դիրքորոշումների հիման վրա բաց թողնված օգուտի չափը որոշելու անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սկզբունքները, բարեխղճության, խելամտության և արդարացիության պահանջները:

4.8. Վերոնշյալ կանոնների կիրառումը սույն գործի նկատմամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ նախադեպային որոշումներում անդրադարձել է դատական ակտի իրավական հիմնավորվածության հարցին՝ ամրագրելով այն դիրքորոշումը, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ դատական ակտի իրավական և փաստական հիմնավորումները:

Դատական ակտի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի

կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Դատական ակտի մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Դատական ակտի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա ակտի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական ակտի օրինականությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում *(տես՝ Համլյակ Ոսկանյանն ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու և ապօրինի զավթած հողամասից վտարելու պահանջների մասին և Վոլոդյա Հակոբյանն ընդդեմ Համլյակ Ոսկանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման՝ ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԷԴ/1634/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ կողմերի միջև 05.11.2009 թվականին կնքվել է թիվ 289 առուվաճառքի պայմանագիրը, համաձայն որի՝ Կազմակերպությունը պարտավորվել է մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը Ընկերությանը հանձնել 35 հատ «SKODA» մակնիշի «Octavia tour 1.4» մոդելի ավտոմեքենաներ: Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.12.2010 թվականի թիվ ԵՇԴ/0620/02/10 վճռի համաձայն՝ Կազմակերպության կողմից Ընկերությանը չի հանձնվել 17 ավտոմեքենա և չի վերադարձվել դրանց արժեքը: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Կենտրոն հարկային տեսչության 19.05.2011 թվականի թիվ ՏՎ-2696 գրության համաձայն՝ Ընկերությունը 2010 թվականին ավտոտրանսպորտային գործունեությամբ զբաղվելու ընթացքում շահագործել է ամսական միջինը 19 մեքենա, իսկ 2010 թվականին 19 տաքսիների շահագործմամբ ավտոտրանսպորտային գործունեությունից (տաքսի ծառայություն) ստացած հասույթը կազմել է 131.815.521 (հարյուր երեսունմեկ միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ՝ հիմք տեսաձայնագրման կրիչը (տեսաձայնագրման կրիչում հստակ արտացոլված են Taxi-2008(2010) համակարգչային ծրագրի տվյալները):

Վերաքննիչ դատարանը, Դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով, նշել է, որ «…Ընկերությունը պետք է ապացուցեր իր կողմից վկայակոչված այն փաստը, որ հայցադիմումում նշված ժամանակահատվածում ունեցել է իր կողմից վկայակոչված շահույթը»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ սույն գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվում է այն հանգամանքը, որ Ընկերությունը մատուցում է տաքսի ծառայություն, հղում կատարելով 05.11.2009 թվականին կնքված թիվ 289 առուվաճառքի պայմանագրին, եկել է այն եզրահանգման, որ «Տվյալ դեպքում Ընկերությունը պետք է ապացուցեր իր կողմից վկայակոչած այն փաստը, որ պայմանագրով ձեռք բերվող ավտոմեքենաները պետք է շահագործվեին որպես տաքսի ավտոմեքենա…»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, իսկ գործը պետք է ուղարկվի նոր քննության Ընկերության կողմից ներկայացված ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու, ինչպես նաև սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Ընկերության կողմից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակը, մեքենաների հնարավոր շահագործմամբ եկամտի ստացման հնարավորությունը (բաց թողնված օգուտի որոշման կանոնների համաձայն) և դրա չափը պարզելու համար, որպիսի ուղղությամբ սույն գործով ստորադաս դատարանների կողմից քննություն չի իրականացվել, իսկ դրա կոնկրետ չափը որոշելու անհնարինության դեպքում հատուցման չափը որոշել դատարանի հայեցողությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ3/0332/02/11
Նախագահող դատավոր Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Մկրտչյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ3/0332/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Զուլալ Ջրեր» արտադրական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ) հիմնադիր Կարմեն Բախշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի ընդդեմ Կոոպերատիվի հիմնադիր Կարմեն Բախշյանի՝ վերջինիցս 2.563.940 ՀՀ դրամ բռնագանձելու և բռնագանձումը նրան պատկանող գույքի վրա տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանը պահանջել է Կոոպերատիվի հիմնադիր Կարմեն Բախշյանից բռնագանձել 2.563.940 ՀՀ դրամ, որից 500.000 ՀՀ դրամը՝ որպես դատական ծախս, 748.940 ՀՀ դրամը՝ որպես «Հայգազարդ» ՓԲԸ-ի նկատմամբ ունեցած պարտք, 890.000 ՀՀ դրամը՝ որպես նախկին կառավարչի աշխատավարձ, իսկ 425.000 ՀՀ դրամը՝ որպես կառավարչի աշխատավարձ և վարչական ծախսեր՝ բռնագանձումը տարածելով վերջինիս պատկանող գույքի վրա:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան) 15.03.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.06.2012 թվականի որոշմամբ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 15.03.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոոպերատիվի հիմնադիր Կարմեն Բախշյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 48-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրավաբանական անձի լուծարումը նոր պարտավորություններ չի կարող առաջացնել պարտապանի՝ տվյալ դեպքում Կոոպերատիվի հիմնադիր Կարմեն Բախշյանի նկատմամբ, ինչպես նաև հաշվի չի առել այն հանգամանքը, որ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի կողմից պահանջվող գումարը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել: Բացի այդ, 19.09.2011 թվականին տեղի է ունեցել Կոոպերատիվի պարտատերերի ժողով՝ մասնակցությամբ սնանկության գործերով նոր կառավարիչ Անդրանիկ Ելինյանի, ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ-ի լիազոր ներկայացուցչի և Պետրոս Եղիազարյանի, որտեղ որոշվել է լրացուցիչ հայցադիմումով դիմել դատարան՝ պահանջելով նախորդ հայցադիմումով «անտեսված» պահանջների դիմաց Կոոպերատիվի նկատմամբ ևս 2.563.940 ՀՀ դրամի բռնագանձում: Տվյալ դեպքում Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը չի հիմնավորել, թե արդյոք իրավաբանական ուժ ունի պարտատերերի վերը նշված ժողովի արձանագրությունը:

Ինչ վերաբերում է 748.940 ՀՀ դրամ «Հայգազարդ» ՓԲԸ-ի նկատմամբ ունեցած պարտքի պահանջին, ապա Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով ներկայացվել է այլ փաստաթուղթ, որում 2004 թվականի կտրվածքով «Հայգազարդ» ընկերության նկատմամբ պարտքը կազմում է գրեթե 20 անգամ պակաս գումար: Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը վերաբերելի այլ ապացույց չի ներկայացրել, ուստի Դատարանն այդ մասով հայցն իրավացիորեն մերժել էր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.06.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.03.2012 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ տնտեսական դատարանի 04.10.2004 թվականի թիվ SU6-289 որոշման համաձայն՝ Կոոպերատիվը լուծարվել է, հանձնարարվել է իրավասու մարմնին օրենքով սահմանված կարգով կատարելու համապատասխան գրառում իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում (հատոր 1, գ.թ. 50-51):

2) ՀՀ տնտեսական դատարանի 02.11.2004 թվականի թիվ SU6-289՝ պարտապա-

նի նկատմամբ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման համաձայն՝ հաստատվել է Կոոպերատիվի նկատմամբ դատարան ներկայացված պահանջների վերջնական ցուցակը, ըստ որի՝ պարտատեր ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության բավարարված պահանջը կազմում է 1.253.100 ՀՀ դրամ (հատոր 1, գ.թ. 11):

3) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010 թվականի թիվ ԱՎԴ 3/0081/02/10 վճռով վճռվել է Կարմեն Բախշյանից հօգուտ Կոոպերատիվի բռնագանձել 1.253.100 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ տնտեսական դատարանի 02.11.2004 թվականի թիվ ՏԱ-289 որոշմամբ ՀՀ ԿԱ ՀՊԾ Եղեգնաձորի ՏՀՏ-ի բավարարված պահանջի գումար (հատոր 1, գ.թ. 10-12):

4) Կոոպերատիվի կնիքի և շտամպի հանձնման-ընդունման մասին 18.08.2004 թվականի թիվ 1 ակտի համաձայն՝ կոոպերատիվի անվճարունակ ճանաչվելու կապակցությամբ Կոոպերատիվն ի դեմս Պետրոս Եղիազարյանի հանձնել է, իսկ Կոոպերատիվի անվճարունակության գործով կառավարիչ Գագիկ Թումանյանն ընդունել է Կոոպերատիվի անվամբ կնիքը և շտամպը: Կոոպերատիվի փաստաթղթերի հանձնման-ընդունման մասին 18.08.2004 թվականի թիվ 2 ակտի համաձայն, կոոպերատիվի անվճարունակ ճանաչվելու կապակցությամբ Կոոպերատիվը ի դեմս Պետրոս Եղիազարյանի հանձնել է, իսկ Կոոպերատիվի անվճարունակության գործով կառավարիչ Գագիկ Թումանյանն ընդունել է Կոոպերատիվի անվամբ թվով 12 փաստաթղթեր (գ.թ. 48-49):

5) «Հայգազարդ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 29.11.2004 թվականի թիվ 01-04/1534 գրության համաձայն՝ Կոոպերատիվի էլեկտրաէներգիայի գծով պարտքը «Հայաստանի էլ. Ցանցեր» ՓԲԸ-ի նկատմամբ կազմել է 40.500 դրամ: ՀՀ կառավարության 22.08.2002 թվականի թիվ 1318-Ա որոշման համաձայն՝ «Հայաստանի էլ. Ցանցեր» ՓԲԸ-ի և «Հայգազարդ» ՓԲԸ-ի միջև 16.09.2002 թվականին կնքված պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագրով էլ. ցանցի դեբիտորական պահանջները, այդ թվում Կոոպերատիվի նշված պարտքը փոխանցվել են «Հայգազարդ» ՓԲԸ-ին (հատոր 1, գ.թ. 47):

6) Սնանկ ճանաչված Կոոպերատիվի պարտատերերի ժողովի 19.09.2011 թվականի արձանագրության համաձայն՝ քննարկվել են Կոոպերատիվի փայատեր անդամից գանձել առաջացած այն պարտավորությունները, որոնք չեն ընդգրկվել 14.04.2009 թվականի թիվ ԱՎԴ 3/0081/02/10 վճռում (հատոր 1, գ.թ. 13):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կոոպերատիվի անդամները պարտավոր են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, լրացուցիչ վճարների միջոցով փակել առաջացած վնասները: Այս պարտականությունը չկատարելու դեպքում կոոպերատիվը, պարտատերերի պահանջով, կարող է լուծարվել դատական կարգով: Կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չմուծված մասի սահմաններում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձը լուծարվում է նաև սնանկության հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են նաև նույն օրենսգրքով նշված այլ հիմքերից:

Վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտել է իր իրավական դիրքորոշումը վերոնշյալ իրավական խնդրի հետ կապված: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ սահմանված ժամկետում (տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում) լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասները փակելու օրենքով սահմանված իրենց պարտավորությունը չկատարելը չի ազատում կոոպերատիվի անդամներին կոոպերատիվի պարտավորությունների համար օրենքով սահմանված պատասխանատվությունից: Այն պայմաններում, երբ սահմանված ժամկետում (տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում) լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասները փակելու օրենքով սահմանված իրենց պարտավորությունը չկատարելու հետևանքով անհնար է որոշել կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չմուծված մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված՝ լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասները փակելու Կոոպերատիվի անդամների պարտականությունը ներառում է մինչև Կոոպերատիվի անվճարունակ ճանաչվելը գոյացած բոլոր պարտավորությունները: Հակառակ պարագայում կարող է խախտվել Կոոպերատիվի պարտատերերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը (*տես «Լոտոս» արտադրական կոոպերատիվի անվճարունակության գործով կառավարիչ Լևոն Պետրոսյանն ընդդեմ Կոոպերատիվի անդամներ Էդուարդ Ասատրյանի, Սվետլանա Խալաթյանի և Ռիմա Աղասարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ 3-1555(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշումը*):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի տրամաբանությունից բխում է, որ կոոպերատիվի անդամների՝ առաջացած վնասները լրացուցիչ վճարների միջոցով փակելու պարտավորությունը պետք է կապված լինի կոոպերատիվի գործունեության հետ, քանի որ այն վնասները, որոնք կոոպերատիվի անդամը պետք է փակի, որոշվում են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո, որը չի վերաբերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված լուծարման հաշվեկշռին: Նշված տրամաբանությամբ պետք է մեկնաբանվի նաև նշված հոդվածի դրույթն այն մասին, որ կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի **լրացուցիչ վճարի չմուծված մասի սահմաններում**: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կոոպերատիվի անդամների լրացուցիչ պատասխանատվությունը սահմանափակվում է կոոպերատիվի գործունեության ընթացքում առաջացած վնասներով, իսկ կոոպերատիվի լուծարման՝ այդ թվում սնանկության եղանակով լուծարման հետ կապված ծախսերը չեն ներառվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված լրացուցիչ պատասխանատվության շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է կողմերի միջև ապացուցման դատավարական բեռի բաշխման հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: **Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը** *(տե՛ս ըստ հայցի Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի ընդդեմ Սեդա Սարգսյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոոպերատիվը ՀՀ տնտեսական դատարանի 19.07.2004 թվականի վճռով իր պարտավորությունները չկատարելու համար ճանաչվել է սնանկ, իսկ հետագայում 04.10.2004 թվականի որոշմամբ լուծարվել է, ինչը վկայում է այն մասին, որ Կոոպերատիվի հիմնադիր անդամը չի կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված՝ լրացուցիչ վճարների միջոցով առաջացած վնասները փակելու իր պարտականությունը: Այդ պայմաններում Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Գագիկ Թումանյանը հայց է ներկայացրել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որի 14.04.2010 թվականի թիվ ԱՎԴ 3/0081/02/10 վճռով վճռվել է Կարմեն Բախշյանից հօգուտ Կոոպերատիվի բռնագանձել 1.253.100 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ տնտեսական դատարանի 02.11.2004 թվականի թիվ SU6-289 որոշմամբ ՀՀ ԿԱ ՀՊԾ Եղեգնաձորի ՏՀՏՏ-ի բավարարված պահանջի գումար և վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Սնանկ ճանաչված Կոոպերատիվի պարտատերերի ժողովի 19.09.2011 թվականի արձանագրության համաձայն՝ քննարկվել են Կոոպերատիվի փայատեր անդամից գանձել առաջացած այն պարտավորությունները, որոնք չեն ընդգրկվել 14.04.2009 թվականի թիվ ԱՎԴ 3/0081/02/10 վճռում:

Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ հաստատված է, որ բռնագանձման ենթակա գումարների վերաբերյալ պահանջը հաստատող պատշաճ ապացույցներ հայցվորի կողմից դատարան չեն ներկայացվել:

Վերաքննիչ դատարանը վճիռը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս պատճառաբանել է, որ «Ընդհանուր իրավասության դատարանը վիճարկվող վճռով չի անդրադարձել որպես պետական տուրք օրենքով սահմանված և ամրագրված գումա-

րի բոնագանձմանը: Ընդհանուր իրավասության դատարանը չի անդրադարձել նաև 14.04.2010թ. թիվ ԱՎԴ 3/0081/02/10 վճռում չընդգրկված մնացած պահանջների մասով բողոքաբերի ներկայացված փաստարկներին և հիմնավորումներին: Այն է՝ կայացված դատական ակտով չի պարզվել, թե երբ և ինչ հանգամանքներում են գոյացել Ա. Ելինյանի կողմից ներկայացված լրացուցիչ պահանջների գումարները, արդյոք ներկայացված պահանջները, մասնավորապես «Հայգազարդ» ԲՔ ընկերության նկատմամբ ունեցած պարտքը, ինչպես նաև նախկին կառավարչի համար սահմանված վարձատրությունն ընդգրկված չի եղել պահանջների ցուցակում, և եթե այո, ապա ինչն է հիմք հանդիսացել հայցապահանջի մերժման համար»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված փաստական հանգամանքների առկայությամբ չեն հիմնավորվում պարտապանի՝ տվյալ դեպքում Կոոպերատիվի հիմնադիր Կարմեն Բախշյանի նկատմամբ Ա. Ելինյանի կողմից ներկայացված լրացուցիչ պահանջների գումարները, քանի որ Կոոպերատիվը ՀՀ տնտեսական դատարանի 19.07.2004 թվականի վճռով իր պարտավորությունները չկատարելու համար ճանաչվել է սնանկ, 04.10.2004 թվականի որոշմամբ լուծարվել է և Կոոպերատիվին պատկանող գույքը, փաստաթղթերը, կնիքը և շտամպը, հանձնման-ընդունման մասին 18.08.2004 թվականի թիվ 1 և թիվ 2 ակտերով հանձնվել են սնանկության գործով կառավարչին, իրացվել է գույքը, Կոոպերատիվը գործունեություն չի իրականացրել, իսկ տվյալ պարագայում դատարանի կողմից իրավաբանական անձի լուծարումից հետո առաջացած պարտքերը և պարտավորությունները չեն կարող դիտվել որպես Կոոպերատիվի գործունեության հետ կապված ծախսեր:

Ինչ վերաբերում է 748.940 ՀՀ դրամը որպես «Հայգազարդ» ՓԲԸ-ի նկատմամբ ունեցած պարտք գանձելու պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանն իրավացիորեն պատճառաբանել է, որ դրանք հիմնավորող պատշաճ ապացույցներ Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի կողմից չեն ներկայացվել, հետևաբար դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը՝ Անդրանիկ Ելինյանը: Անդրադառնալով «Հայգազարդ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 29.11.2004 թվականի թիվ 01-04/1534 գրությանը, որի համաձայն՝ Կոոպերատիվի էլեկտրոէներգիայի գծով պարտքը «Հայաստանի էլ. Ցանցեր» ՓԲԸ-ի նկատմամբ կազմել է 40.500 դրամ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ նշված գրությամբ չի հիմնավորվում, որ դրանում նշված պարտքն առաջացել է մինչև Կոոպերատիվի լուծարման գործընթացը, այսինքն՝ վերջինիս գործունեության ընթացքում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցապահանջը վերոնշյալ մասով անհիմն է նաև այն պատճառաբանությամբ, որ այդ պահանջն օրենքով սահմանված կարգով չի ներկայացվել սնանկության վարույթում, և այն չի ընդգրկվել պարտատերերի պահանջների ցուցակում, որպիսի օրենսդրական պահանջն էլ բխում էր սնանկության վարույթի ընթացքում գործող «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 46-րդ հոդվածներից: Մասնավորապես նշված օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ կառավարիչը սույն օրենքով սահմանված կարգով իր կողմից վարվող գրանցամատյանում հաշվառում և հաշվարկում է պարտապանի նկատմամբ ներկայացված բոլոր պահանջների չափերը և առաջնահերթությունը: Նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ

դատարանը գտնում է, որ 500.000 ՀՀ դրամը՝ որպես դատական ծախսի, 890.000 ՀՀ դրամը՝ որպես նախկին կառավարչի աշխատավարձի, իսկ 425.000 ՀՀ դրամը՝ որպես կառավարչի աշխատավարձի և վարչական ծախսերի գումարները չեն կարող համարվել կոոպերատիվի գործունեության հետ կապված պարտավորություններ, հետևաբար դրանց համար Կոոպերատիվի հիմնադիր Կարմեն Բախշյանը պարտավոր չէ կրել լրացուցիչ պատասխանատվություն:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 08.06.2012 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 15.03.2012 թվականի վճռին:

2. «Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի իա.1) կետի հիմքով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԼԴ4/0201/02/10

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ4/0201/02/10**
2012թ.

Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ Մարինե Բաղրամյանի, Արթուր Ղուկասյանի, «Ամոարթարգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), անհատ ձեռնարկատեր Արսեն Ղուկասյանի, անհատ ձեռնարկատեր Անահիտ Զաքարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է համապարտության կարգով բռնագանձել Մարինե Բաղրամյանից, Արթուր Ղուկասյանից, Ընկերությունից, անհատ ձեռնարկատեր Արսեն Ղուկասյանից, անհատ ձեռնարկատեր Անահիտ Զաքարյանից 11.100.305,7 ՀՀ դրամ՝ որպես վարկային պարտավորության գումար, 135.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի գումար, ինչպես նաև 15.04.2009 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը վարկային պայմանագրով նախատեսված կարգով հաշվեգրել տոկոսներ և տույժեր:

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 10.12.2010 թվականի վճռով հայցը բավա-

րարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.05.2012 թվականի որոշմամբ Դատարանի 10.12.2010 թվականի վճռի դեմ Արամայիս Ղուկասյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, բեկանվել է Դատարանի 10.12.2010 թվականի վճռի՝ Ընկերությունից համապարտության կարգով գումար բռնագանձելու մասը, և այդ մասով գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արամայիս Ղուկասյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետը, 211-րդ հոդվածը, 219-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ բողոք բերող անձը վերաքննիչ բողոք ներկայացնելիս Բանկին չի ուղարկել բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները, իսկ Վերաքննիչ դատարանը, անտեսելով այդ հանգամանքը, վարույթ է ընդունել վերաքննիչ բողոքը՝ զրկելով Բանկին օրենքով իրեն վերապահված վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքից:

Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, գործով կողմ չհանդիսացող անձից, առանց ապացույցն իր կամքից անկախ հանգամանքներով առաջին ատյանի դատարան չներկայացնելու վերաբերյալ հիմնավորվածության, ընդունել է նոր ապացույց՝ Ընկերության կանոնադրությունը, գնահատել այն: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ անկախ այն հանգամանքից, թե Արամայիս Ղուկասյանն Ընկերության քանի տոկոս բաժնեմասն է տիրապետում, որևէ հիմք չի եղել նրան սույն գործով որպես կողմ ներգրավելու համար: Երաշխավորության պայմանագրի կնքման պահին Ընկերության տնօրենն է եղել Արթուր Ղուկասյանը, որն էլ իր լիազորությունների սահմաններում Բանկի հետ կնքել է երաշխավորության պայմանագիր: Այսինքն՝ Ընկերության մասնակցի որևէ իրավունք չի խախտվել:

Բացի այդ, ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ երաշխավորության պայմանագիրը պետք է կնքվեր Ընկերության ընդհանուր ժողովի որոշման հիման վրա, ապա նշված հարցը սույն գործով չի կարող քննարկման առարկա լինել, քանի որ երաշխավորության պայմանագիրը չի վիճարկվում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.05.2012 թվականի որոշման՝ Ընկերությունից գումար բռնագանձելու մասով Դատարանի 10.12.2010 թվականի վճիռը բեկանելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ Դատարանի 10.12.2010 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոք բերած անձն անտեսել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և Ընկերության

կանոնադրության 7.5-րդ կետի պահանջները, որոնցով սահմանափակվում են ընկերության տնօրենի իրավասությունները:

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն եզրահանգել է, որ Դատարանի վճռով խախտվել են Ընկերության 66,6 տոկոս բաժնեմասի սեփականատեր Արամայիս Ղուկասյանի իրավունքները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Բանկի և Մարինե Բաղրամյանի միջև 15.05.2008 թվականին կնքված թիվ 506 վարկային պայմանագրով, անշարժ գույք ձեռք բերելու նպատակով, Մարինե Բաղրամյանին տրամադրվել է 8.000.000 ՀՀ դրամ վարկ մինչև 15.05.2018 թվականը մարման ժամկետով **(հատոր 1-ին, գ.թ. 7-9)**:

2) Բանկի և Ընկերության միջև 15.05.2008 թվականին կնքված թիվ 506-Ա երաշխավորության պայմանագրով Ընկերությունն ամբողջ ծավալով երաշխավորել է 15.05.2008 թվականի թիվ 506 վարկային պայմանագրով Մարինե Բաղրամյանի ստացած 8.000.000 ՀՀ դրամ վարկի վերադարձը **(հատոր 1-ին, գ.թ. 12-14)**:

3) Ընկերության կանոնադրության համաձայն՝ Արամայիս Ղուկասյանը Ընկերության մասնակից է բաժնեմասերի 2/3-րդ չափով **(ներկայացվել է վերաքննիչ բողոքին կից, հատոր 2-րդ, գ.թ. 46-56)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել հայցվորի կամ պատասխանողի կողմում մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, եթե գործով կայացվող վճիռը կարող է ազդել կողմերից մեկի հանդեպ նրանց ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա:

Նույն օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի ոչ միայն գործին մասնակցող անձը, այլ նաև գործին մասնակից չդարձված անձը, պայմանով, եթե գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է տվյալ անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, իսկ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ ընկերությունը պատասխանատու չէ իր մաս-

նակիցների պարտավորությունների համար, իսկ ընկերության **մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը**:

Սույն գործով վեճը վերաբերում է երկու իրավաբանական անձանց միջև կնքված երաշխավորության պայմանագրով ծագած պարտավորություններին: Հետևաբար Ընկերությունը երաշխավորության պայմանագիրը կնքել է և այդ պայմանագրով ծագած հարաբերություններում հանդես է եկել որպես ինքնուրույն սուբյեկտ: Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն ազդում Ընկերության մասնակիցների իրավունքների և պարտականությունների վրա: Օրենսդրական նման կանոնակարգումից էլ բխում է, որ միայն Ընկերությունն է կրում երաշխավորության պայմանագրով սահմանված պարտավորությունը պատշաճ չկատարելու ռիսկը, որպես քաղաքացիաիրավական հարաբերության ինքնուրույն սուբյեկտ:

Դատարանը Բանկի հայցը բավարարելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Բանկի և Ընկերության միջև 15.05.2008 թվականին կնքված թիվ 506-Ա երաշխավորության պայմանագրով Ընկերությունն ամբողջ ծավալով երաշխավորել է 15.05.2008 թվականի թիվ 506 վարկային պայմանագրով Մարինե Բաղրամյանի ստացած 8.000.000 ՀՀ դրամ վարկի վերադարձը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը՝ Ընկերությունից համապարտության կարգով գումար բռնագանձելու մասով բեկանելիս պատճառաբանել է, որ Դատարանն ըստ էության վճիռ է կայացրել Ընկերության մասնակից Արամայիս Ղուկասյանի իրավունքների վերաբերյալ՝ առանց նրան մասնակից դարձնելու գործի քննությանը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է ընկերության մասնակիցների իրավունքները, համաձայն որի՝ նրանք իրավունք ունեն՝ ա) սույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը, բ) ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ, գ) ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը, դ) օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց, ե) անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից, զ) ընկերության լուծարման դեպքում օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով բաժին ստանալ ընկերության մնացած գույքից: Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է ընկերության մասնակիցների պարտականությունները, համաձայն որի՝ նրանք պարտավոր են՝ ա) ներդրումներ կատարել ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով, բ) չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից: Ընկերության մասնակիցները կրում են նաև օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Վերը նշված նորմերն ամրագրվել են նաև Ընկերության կանոնադրության 4-րդ գլխում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով երկու իրավաբանական անձանց միջև երաշխավորության պայմանագրով ծագած պարտավորությունների կա-

տարման վերաբերյալ կայացված վճիռը որևէ կերպ չի վերաբերում Ընկերության մասնակցի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-13-րդ հոդվածներով սահմանված իրավունքներին և պարտականություններին, հետևաբար Ընկերության մասնակից Արամայիս Ղուկասյանին գործին մասնակից դարձնելու դատավարական պարտականություն Դատարանը չուներ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի եզրահանգմանն առ այն, որ երաշխավորության պայմանագրով ստանձնած պարտավորությունը գերազանցում է Ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը, հետևաբար այդ գործարքը կարող էր կատարվել միայն Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ իրավաբանական անձանց մասնակցությամբ վեճին Ընկերության մասնակցին մասնակից դարձնելու համար, քանի որ նշված հարցի քննարկումը դուրս է սույն գործով քննարկվող հարցի շրջանակներից, քանի որ Բանկի և Ընկերության միջև կնքված երաշխավորության պայմանագիրը չի վիճարկվում: Նշված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը սույն գործի նկատմամբ կիրառելի չի համարում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը:

Վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը, կիրառել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր և Ընկերության մասնակից Արամայիս Ղուկասյանին սույն գործի քննությանը մասնակից դարձնելու անհրաժեշտության վերաբերյալ հանգել է սխալ եզրահանգման:

Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը

հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.05.2012 թվականի որոշման՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի վճռի՝ «Ամոարթարգ» ՍՊԸ-ից համապարտության կարգով գումար բռնագանձելու մասով բեկանելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2010 թվականի վճռին:

2. Արամայիս Ղուկասյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 317.059,17 ՀՀ դրամ՝ վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.03.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար, 337.059,17 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի 27.06.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2304/02/10
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2304/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյանի ներկայացուցիչ Կիմա Սարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.10.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյանի ընդդեմ Գայանե և Ռուբեն Զուլումյանների՝ 28.12.2006 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Երևանի Մաշտոցի պողոտայի 18-րդ շենքի թիվ 9 հասցեում գտնվող բնակարանը սնանկ ճանաչված Հարություն Զուլումյանին վերադարձնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյանը պահանջել է պատասխանողներ Գայանե և Ռուբեն Զուլումյաններից սնանկ ճանաչված Հարություն Զուլումյանին հետ վերադարձնել 28.12.2006 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Հարություն Զուլումյանի կողմից Գայանե և Ռուբեն Զուլումյաններին նվեր տրված (անհատույց փոխանցված)

Երևանի Մաշտոցի պողոտայի 18-րդ շենքի թիվ 9 հասցեում գտնվող բնակարանը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 11.07.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.10.2011 թվականի որոշմամբ Գայանե և Ռուբեն Զուլումյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 11.07.2011 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյանի հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գայանե և Ռուբեն Զուլումյանների ներկայացուցիչ Նարինե Սարգսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ կետը, 176-րդ հոդվածի 2-րդ կետը, 279-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 29-րդ և 54-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ընդհանրապես չի անդրադարձել սույն գործով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի կիրառելիությանը, սնանկության գործերով կառավարչի լիազորությունների իրականացման հարցին: Վերաքննիչ դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, այլապես կնկատեր, որ կատարված անհատույց գործարքն է Հարություն Զուլումյանի սնանկության պատճառ հանդիսացել:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցի բավարարման առումով Դատարանի դիրքորոշումն իրավաչափ համարվել չի կարող, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհատույց փոխանցումների վերադարձման լիազորությունը չի կարող վերաբերել անշարժ գույքին: Այնինչ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ եզրահանգման այն մասին, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհատույց փոխանցումների վերադարձման լիազորությունը չի կարող վերաբերվել անշարժ գույքին: Բացի այդ, նվիրատվության պայմանագիրն ինքնին անհատույց գործարք է, գույքի անհատույց փոխանցում, ուստի սնանկության գործերով կառավարիչը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի համաձայն, կարող է դատական կարգով հետ ստանալ անհատույց փոխանցված գույքը, տվյալ դեպքում անշարժ գույքը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ պարտապանին զրկել է սնանկ վիճակից դուրս բերելու՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված միակ հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.10.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը ճիշտ որոշում է կայացրել, և վճռաբեկ բողոքը չի պարունակում այնպիսի դատական սխալների մասին հիմնավորված փաստարկներ, որոնք կարող են հիմք ծառայել որոշումը բեկանելու համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ կետի, 176-րդ հոդվածի 2-րդ կետի, 279-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները Վերաքննիչ դատարանի կողմից խախտված լինելու մասին բողոքում բերված փաստարկները հիմնավորված չեն, իսկ գործում առկա բոլոր ապացույցները հետազոտվել ու գնահատվել են բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ: Այսինքն Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հանգել է ճիշտ եզրակացության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 04.10.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով վճռվել է Հարություն Զուլումյանից հօգուտ Վահե Սիմոնյանի բռնագանձել 400.000 ՌԴ ռուբլուն բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ (հատոր 1, գ. թ. 9):

2) 28.12.2006 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Հարություն Զուլումյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող Երևանի Մաշտոցի պողոտա 18-րդ շենքի թիվ 9 բնակարանը նվիրել է իր երեխաներին՝ Գայանե և Ռուբեն Զուլումյաններին (հատոր 1, գ.թ. 10, 59):

3) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.08.2010 թվականի վճռով Հարություն Զուլումյանը ճանաչվել է սնանկ, իսկ նույն դատարանի 22.09.2010 թվականի որոշմամբ Աղասի Արսենյանը նշանակվել է Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ (հատոր 1, գ. թ. 11):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում նրա ամուսինը, նրանց հետ երկու աստիճան ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տես՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համապատասխանաբար ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0026/02/08)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 04.10.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով վճռվել է Հարություն Զուլումյանից հօգուտ Վահե Սիմոնյանի բռնագանձել 400.000 ՌԴ ռուբլուն բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ:

Հարություն Զուլումյանը, հանդիսանալով Երևանի Մաշտոցի պողոտայի 18-րդ շենքի թիվ 9 բնակարանի սեփականատեր, 28.12.2006 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով նշված բնակարանը նվիրել է իր երեխաներ Գայանե և Ռուբեն Զուլումյաններին:

Հարություն Զուլումյանը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.08.2010 թվականի վճռով ճանաչվել է սնանկ, իսկ նույն դատարանի 22.09.2010 թվականի որոշմամբ Աղասի Արսենյանը նշանակվել է Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ:

Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 29-րդ և 54-րդ հոդվածները՝ հաստատված համարելով, որ կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված ան-

ձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով:

Վերաքննիչ դատարանը վճիռը բեկանելիս և հայցը մերժելիս պատճառաբանել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ օրենսդիրը տվյալ նորմով սնանկության գործով կառավարչին իրավունք է վերապահել որոշակի ժամանակահատվածում (սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում) հետ ստանալ պարտապանի կատարած անհատույց փոխանցումները: Սակայն նշված նորմով օրենսդիրը չի մանրամասնել, թե ինչպիսի գույքի մասին է խոսքը՝ շարժական, թե՝ անշարժ: Եվ եկել է այն եզրահանգման, որ հայցի բավարարման առումով Դատարանի դիրքորոշումն իրավաչափ համարվել չի կարող, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհատույց փոխանցումների վերադարձման լիազորությունը չի կարող վերաբերվել անշարժ գույքին, իսկ տվյալ պարագայում հայցվորի կողմից պահանջվող անհատույց փոխանցումը 28.12.2006 թվականին կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա Գայանե և Ռուբեն Զուլումյանների անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածով սահմանված են սեփականության իրավունքի դադարման հիմքերը: Տվյալ նորմի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Սույն պարագայում հայցի բավարարման հիմքում դրված «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածը սեփականության իրավունքի դադարման հիմք չի սահմանում, այլ պարզապես սնանկության գործով կառավարչին տվյալ նորմով իրավունք է վերապահում հետ ստանալ սնանկ ճանաչված անձի կողմից կատարված անհատույց փոխանցումները, որոնք կատարվել են սնանկության մասին դիմումը ներկայացնելուց մեկ տարվա ընթացքում, իսկ պարտապանի հետ փոխկապակցված անձանց պարագայում 5 տարվա ընթացքում կատարված անհատույց փոխանցումներն են ենթակա հետ վերադարձման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով: Ընդ որում, կատարված փոխանցումները հետ ստանալու հիմքում դրված է այն հանգամանքը, որ դրանք պետք է փոխանցված լինեն պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում և **անհատույց**: Այդ փոխանցումները կարող են լինել նաև ոչ դրամային, այսինքն՝ այլ գույքային փոխանցումներ, այդ թվում՝ ապրանքներ, արժեթղթեր, շարժական և **անշարժ գույք:** Կառավարիչն այդ իրավունքը դատական կարգով կարող է իրականացնել պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, բայց ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում, ինչն էլ սույն գործով արել է Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով չի սահմանափակվում այն գույքի շրջանակը, որի վերաբերյալ կատարված փոխանցումները կառավարչի հայցով կարող են հետ ստացվել, հետևաբար անհիմն է Վերաքննիչ դատարանի պնդումն այն մասին, որ վերոնշյալ հոդվածը չի կարող կիրառվել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցումների դեպքի համար:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, համաձայն որի՝ հայցի բավարարման հիմքում դրված «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվա-

ծը սեփականության իրավունքի դադարման հիմք չի սահմանում, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և **գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:**

Նույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացուն դատարանով սնանկ ճանաչելու դեպքում պարտատերերի պահանջների բավարարման կարգը և դադարման հիմքերը, ինչպես նաև **պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները** սահմանվում են սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել **դատական կարգով հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները** (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով, որի նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով: Այսինքն՝ նշված նորմը սահմանում է սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմք:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 29-րդ և 54-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, և որոնց կիրառման դեպքում կառավարչի պահանջը պետք է բավարարվեր, որն իրավացիորեն իրականացրել էր Դատարանը:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 13.10.2011 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական

դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.10.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.07.2011 թվականի վճռին:

2. Գայանե և Ռուբեն Զուլումյաններից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/1165/02/08
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՔԴ/1165/02/08**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով երրորդ անձ Մայրամ Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.02.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լիզա Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Համլետ Նաջարյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Մայրամ Սարգսյանի (միացել է հայցապահանջին) ընդդեմ Լիզա Գրիգորյանի, Սոնիկ Աթայանի՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և գույքը հետ վերադարձնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել 22.09.2006 թվականին Լիզա Գրիգորյանի և Սոնիկ Աթայանի միջև կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, գույքը հետ վերադարձնել և անվավեր ճանաչել Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի 5-րդ շենքի թիվ 121 բնակարանի նկատմամբ Սոնիկ Աթայանի սեփականության իրավունքի գրանցումը:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.07.2010 թվականի որոշմամբ Մայ-

րամ Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.09.2010 թվականի որոշմամբ Սոնիկ Աթայանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Բաբայան) (այսուհետ՝ Դատարան) 02.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.02.2012 թվականի որոշմամբ Սոնիկ Աթայանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 02.06.2011 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մայրամ Սարգսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սոնիկ Աթայանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Մասնակության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 595-րդ, 596-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է, որ կառավարչի կողմից Դատարան չեն ներկայացվել ոչ վիճարկվող պայմանագիրն անվավեր ճանաչելու կամ առոչինչ համարելու իրավական հիմքերը, ոչ էլ, առավել ևս, այդպիսիք հաստատող ապացույցներ, ուստի վիճարկվող պայմանագիրն անվավեր ճանաչելու և դրա անվավերության հետևանքները կիրառելու մասին պահանջը հիմնավորված համարվել ու բավարարվել չէր կարող, մինչդեռ Դատարանը կայացրել է հայցը բավարարելու մասին վճիռ՝ կիրառելով «Մասնակության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջները՝ պատճառաբանելով, որ նշվածը գործարքի անվավերության հետ որևէ առնչություն չունի: Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը սխալ է, քանի որ ստացվում է, որ Դատարանը չի քննարկել հայցվորների կողմից ներկայացված գործարքների անվավերության իրավական հիմքերը, այլ միայն առաջնային դիտելով սնանկության կառավարչի կողմից իրավական հիմքերի առկայությունը՝ հայցը բավարարել է զուտ դատավարական իրավունքի առկայության փաստով: Նման եզրահանգումը սխալ է, քանի որ Դատարանի վճռում հստակ ամրագրված են այն եզրահանգումները, որ իրականում Լիզա Գրիգորյանը մտադրություն չի ունեցել նվիրաբերելու իր բնակարանը, այլ ուղղակի ցանկություն է ունեցել խուսափելու բնակարանի նկատմամբ բռնագանձում տարածելու իրավական ընթացակարգից: Դատարանը հանգամանալից անդրադարձել է պատասխանողի և նրա ներկայացուցչի կողմից բերված փաստարկներին, մասնավորապես վկաների ցուցմունքների ոչ իրավաչափ լինելուն՝ դրանք որակելով որպես ոչ իրավաչափ և անընդունելի:

Անհիմն են Վերաքննիչ դատարանի այն փաստարկները, որ Դատարանը քննարկման առարկա չի դարձրել գործարքի անվավերության իրավական հիմքը և հետևանքները, քանի որ դատական ակտում հանգամանորեն նշված են գործարքի անվավերության հիմքում ընկած փաստացի հանգամանքները, ինչպես նաև Դատարանը քննարկման առարկա է դարձրել պատասխանողի և նրա ներկայացուցչի կողմից որպես

ապացույց ներկայացրած վկաների ցուցմունքների ոչ իրավաչափ լինելու և դրանք համապատասխանաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանելու հարցը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.06.2011 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը կատարել է գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ճիշտ գնահատել է փաստական հանգամանքներն ու ապացույցները, որոնք էլ հանգեցրել են սույն գործի ճիշտ լուծման: Այսինքն՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը չէր կարող հիմնավոր համարվել, քանզի վիճարկման հիմքում դրված է եղել միայն «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի պահանջը, որպիսին գործարքի անվավերության հիմքերի հետ որևէ առնչություն չունի:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 14.12.2007 թվականի թիվ 2-3250 օրինական ուժի մեջ մտած վճռով վճռվել է Լիզա Գրիգորյանից հօգուտ Սայրամ Սարգսյանի բռնագանձել 8.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և այդ գումարի համար տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքով՝ սկսած 01.03.2007 թվականից մինչև պարտավորության դադարման օրը (հատոր 2, գ. թ. 72):

2) Լիզա Գրիգորյանի և Սոնիկ Աթայանի միջև 22.09.2006 թվականին կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Լիզա Գրիգորյանն իր մայր Սոնիկ Աթայանին նվիրել է, իսկ Սոնիկ Աթայանը որպես նվեր ընդունել է Երևանի Նոր Նորքի 9-րդ մ/շ 5-րդ շենքի թիվ 121 հասցեում գտնվող բնակարանը (հատոր 1, գ. թ. 15):

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Նոր Նորք տարածքային ստորաբաժանման կողմից 03.10.2006 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2217436 վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Նորքի 9-րդ մ/շ 5-րդ շենքի թիվ 121 բնակարանի նկատմամբ գրանցված է Սոնիկ Աթայանի սեփականության իրավունքը նոտարի 22.09.2006 թվականի թիվ 5465 նվիրատվության պայմանագրի հիման վրա (հատոր 1, գ. թ. 37):

4) Երևանի քաղաքացիական դատարանի՝ 23.07.2008 թվականի թիվ ԵՔԴ/0600/04/08 օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ Լիզա Գրիգորյանը ճանաչվել է սնանկ:

Երևանի քաղաքացիական դատարանի 23.07.2008 թվականի որոշման համաձայն՝ Լիզա Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Համլետ Նաջարյանը: Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.04.2011 թվականի որոշմամբ Լիզա Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Վարդգես Բալաբեկյանը (հատոր 1, գ. թ. 7-9, հատոր 1, գ. թ. 10,

հատոր 4, գ.թ. 66-67):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում նրա ամուսինը, նրանց հետ երկու աստիճան ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տես՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային սպորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և*

բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0026/02/08)։

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 14.12.2007 թվականի թիվ 2-3250 օրինական ուժի մեջ մտած վճռով վճռվել է Լիզա Գրիգորյանից հօգուտ Մայրամ Սարգսյանի բռնագանձել 8.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և այդ գումարի համար տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքով՝ սկսած 01.03.2007 թվականից մինչև պարտավորության դադարման օրը։ Լիզա Գրիգորյանի և Սոնիկ Աթայանի միջև 22.09.2006 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Լիզա Գրիգորյանը նվիրել է, իսկ Սոնիկ Աթայանը որպես նվեր ընդունել է Երևանի Նոր Նորքի 9-րդ մ/շ 5-րդ շենքի թիվ 121 հասցեում գտնվող բնակարանը։ Երևանի քաղաքացիական դատարանի՝ 23.07.2008 թվականի թիվ ԵՔԴ/0600/04/08 օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ Լիզա Գրիգորյանը ճանաչվել է սնանկ, նույն դատարանի 23.07.2008 թվականի որոշման համաձայն՝ Լիզա Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Համլետ Նաջարյանը, իսկ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.04.2011 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Վարդգես Բալաբեկյանը։

Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 29-րդ և 54-րդ հոդվածները՝ հաստատված համարելով, որ կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով։

Վերաքննիչ դատարանը վճիռը բեկանելիս և հայցը մերժելիս պատճառաբանել է, որ սույն գործի փաստերից ակնհայտ է, որ «Բնակարանի՝ որպես անշարժ գույքի նվիրատվության վիճարկվող Պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղ. օր.-ի 595-րդ և 596-րդ հոդվածներին համապատասխան, իսկ այդ Պայմանագրի վիճարկման իրավական հիմքում դրվել է միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, որը, սնանկության գործով կառավարչին պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում պարտապանի կողմից նրան փոխկապակցված անձանց կատարած անհատույց փոխանցումները դատական կարգով հետ ստանալու նպատակով դատարան դիմելու իրավունք վերապահելով հանդերձ, չի սահմանում ո՛չ այդ փոխանցումները հետ ստանալու այլ իրավական եղանակներ, քան դրանց հիմքում ընկած գործարքներն անվավեր ճանաչելը և (կամ) այդ գործարքների անվավերության հետևանքները կիրառելը, ո՛չ էլ այդ գործարքների անվավերության այլ հիմքեր, քան ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվածները», և եկել է այն եզրահանգման, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի վկայակոչմամբ դատարան դիմած կառավարիչը պետք է.

ա) վկայակոչի նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այն հիմքերը, որոնք դատարանին թույլ են տալիս վիճարկվող գործարքը ճանաչել անվավեր կամ գնահատել որպես առոչինչ՝ կիրառելով դրա անվավերության հետևանքները.

բ) ներկայացնի վիճարկվող գործարքի անվավերության հիմքերի առկայությունը հաստատող թույլատրելի և վերաբերելի ապացույցներ։ Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ տվյալ դեպքում Լիզա Գրիգորյանի սնանկության գործով կառավարչի կողմից Դատարանին չեն ներկայացվել ո՛չ վիճարկվող Պայմանագիրն անվավեր ճանաչելու կամ առոչինչ համարելու իրավական հիմքերը, ո՛չ էլ, առավել ևս, այդպիսիք հաստատող ապացույցներ, ուստի վիճարկվող Պայմանագիրն անվավեր ճանաչելու և դրա անվավերության հետևանքները կիրառելու մասին պահանջը հիմնա-

վորված համարվել ու բավարարվել չէր կարող, մինչդեռ Դատարանը կայացրել է հայցը բավարարելու մասին վճիռ՝ այն պատճառաբանելով սոսկ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված պայմանների առկայությամբ, որպիսիք գործարքի անվավերության հետ որևէ առնչություն չունեն:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշմամբ անդրադարձել է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքի հարցին՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով, որի նպատակը պարտապանի գույքի հավաքագրումն է՝ սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով: Այսինքն՝ նշված նորմը սահմանում է սեփականության իրավունքի դադարման ինքնուրույն հիմք: Ընդ որում, կատարված փոխանցումները հետ ստանալու հիմքում դրված է այն հանգամանքը, որ դրանք պետք է փոխանցված լինեն պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում և **անհատույց**: Այդ փոխանցումները կարող են լինել նաև ոչ դրամային, այսինքն՝ այլ գույքային փոխանցումներ, այդ թվում՝ ապրանքներ, արժեթղթեր, շարժական և **անշարժ գույք:** Կառավարիչն այդ իրավունքը դատական կարգով կարող է իրականացնել պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, բայց ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում *(տե՛ս Հարություն Զուլումյանի սնանկության գործով կառավարիչ Աղասի Արսենյանի ընդդեմ Գայանե և Ռուբեն Զուլումյանների՝ 28.12.2006 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Երևանի Մաշտոցի պողոտայի 18-րդ շենքի թիվ 9 հասցեում գտնվող բնակարանը սնանկ ճանաչված Հարություն Զուլումյանին վերադարձնելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/2304/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը):*

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, և որի կիրառման դեպքում կառավարչի պահանջը պետք է բավարարվեր, որն իրավացիորեն իրականացրել էր Դատարանը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի վկայակոչմամբ դատարան դիմած կառավարիչը պետք է.

ա) վկայակոչի նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այն հիմքերը, որոնք դատարանին թույլ են տալիս վիճարկվող գործարքը ճանաչել անվավեր կամ գնահատել որպես առոչինչ՝ կիրառելով դրա անվավերության հետևանքները, բ) ներկայացնի վիճարկվող գործարքի անվավերության հիմքերի առկայությունը հաստատող թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտապանի կատարած անհատույց փոխանցումները հետ ստանալու լիազորությունն իրականացնելիս կառավարիչը պարտապանի գույքը վերադարձնելու նպատակով պետք է գործարքն անվավեր ճանաչելու հայցապահանջով դիմի դատարան հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացուն դատարանով սնանկ ճանաչելու դեպքում պարտատերերի պահանջների բավարարման կարգը և դադարման հիմքերը, ինչպես նաև **պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները** սահմանվում են սնանկության հարաբե-

րությունները կարգավորող օրենքով:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել **դատական կարգով հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները** (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Վերոնշյալից հետևում է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը և դադարումը ենթակա է պետական գրանցման: Այսինքն՝ սեփականատեր ունեցող գույքը իր նախկին սեփականատիրոջը **վերադարձնելու** համար անհրաժեշտ է անվավեր ճանաչել իրավունքի փոխանցման վերաբերյալ պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը, իսկ վերոնշյալը կարող է իրականանալ միայն համապատասխան **անվավերության հիմքի** առկայության դեպքում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել նաև, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ այն նախատեսում է սնանկության վերաբերյալ գործով կառավարչի դատարան դիմելու իրավունքը՝ պարտապանի կողմից իրեն փոխկապակցված անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու պահանջով: Վերոնշյալ հոդվածով առանձնացվել են այնպիսի փոխանցումների տեսակներ, որոնք ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու պարտապանի մտադրության մասին:

Այսինքն՝ վերոնշյալ օրենքով սահմանվել են փոխանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների հետ ստանալու իրավունքը, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը վերոնշյալ փոխանցումների անվավերության հիմք չի նախատեսում:

Վերոնշյալից հետևում է, որ առկա է օրենսդրական բաց, քանի որ ստացվում է մի իրավիճակ, երբ օրենքով նախատեսվում է որոշակի փաստերի վրա հասնելու ուժով անշարժ գույքի վերաբերյալ կատարված փոխանցումները հետ ստանալու իրավունքը, սակայն այդ իրավունքի իրականացման մեխանիզմները բացակայում են:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անշարժ գույքը հետ ստանալը դրա վերաբերյալ կնքված գործարքի անվավերության հետևանք է, հետևաբար «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անշարժ գույքը հետ ստանալու իրավունքը կարող է իրականացվել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 09.02.2012 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.06.2011 թվականի վճռին:

2. Սոնիկ Աթայանից հօգուտ Մայրամ Սարգսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3430/02/09
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ն. Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3430/02/09**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմենուհի Մալխասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լուսինե Իսրաելյանի ընդդեմ Կարեն Խաչատրյանի և Արմենուհի Մալխասյանի, երրորդ անձ Արմեն Սարգսյանի՝ բաժնեմասի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լուսինե Իսրաելյանը պահանջել է անվավեր ճանաչել Կարեն Խաչատրյանի և Արմենուհի Մալխասյանի միջև 30.03.2007 թվականին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը ամուսնու կողմից օտարվել է առանց իր համաձայնության, որի արդյունքում խախտվել է իր սեփականության, ինչպես նաև գույքը նախապատվության իրավունքով ձեռք բերելու իրավունքը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 04.08.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.12.2010 թվականի որոշմամբ Լու-

սինե Իսրաելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 04.08.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝Ս.Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 27.05.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.09.2011 թվականի որոշմամբ Արմենուհի Մալխասյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 27.05.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմենուհի Մալխասյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Լուսինե Իսրաելյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետը և 471-րդ հոդվածի 3-րդ կետը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետը, 289-րդ և 305-րդ հոդվածները, 436-րդ և 470-րդ հոդվածների 1-ին կետերն ու 448-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 481-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերը, 51-րդ, 53-րդ և 219-րդ հոդվածների 1-ին կետերը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը և 221-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բողոք բերած անձի մոտ չի բացակայել Պայմանագրով իրավունք ձեռք բերելու կամահայտնությունը, որպիսի հանգամանքը հաստատվում է նրանով, որ Պայմանագիրը կնքելուց հետո «ԳԵՎՈՐԳՅԱՆ-ՄԱՆՐԻԿՅԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրական կապիտալում Կարեն Խաչատրյանի ունեցած 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ իր իրավունքը ենթարկել է պետական գրանցման, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևանի Սայաթ-Նովա փողոցի 29/4 հասցեում գտնվող կիսաքանդ տաղավարով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու ուղղությամբ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կարեն Խաչատրյանի մոտ չի բացակայել Պայմանագրով իրավունք փոխանցելու կամահայտնությունը, որպիսի հանգամանքը հաստատվում է նրանով, որ Պայմանագիրը կնքելու օրը վերջինս հանձնման-ընդունման ակտով իրեն է հանձնել Ընկերության կնիքը, կանոնադրությունը, պետական գրանցման վկայականը՝ ներդիրներով, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, ինչպես նաև առկա բոլոր հաշվապահական և հարկային հաշվառման փաստաթղթերը, Ընկերության բոլոր պայմանագրերը, հրամանները, որոշումները և Ընկերության ստեղծած, Ընկերության համար իրավունքներ և պարտականություններ առաջացնող այլ փաստաթղթերը: Բացի այդ, սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ Կարեն Խաչատրյանը երբևէ չի հայտնել դիրքորոշում այն մասին, որ իր մոտ բացակայել է Արմենուհի Մալխասյանին որոշակի իրավունքներ փոխանցելու կամահայտնությունը, ավելին, իր կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանում պնդել է, որ հանդիսանալով Ընկերության միակ մասնակիցը և տնօրենը՝ իր հայեցողությամբ տնօրինել է Ընկերության բաժնեմասերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անգամ վերը նշված կամքի և կամահայտնության բացակայության պայմաններում Պայմանագիրը ենթակա էր ոչ թե անվավեր ճանաչման, այլ այն կարող էր դիտվել առոչինչ (կեղծ) գործարք, և կիրառվեին անվավերության հետևանքներ, հետևաբար անգամ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները ճիշտ լինելու դեպքում Դատարանի վճիռը չի կարող մնալ օրինական ուժի մեջ, որով անվավեր է ճանաչվել Պայմանագիրը:

Վերաքննիչ դատարանը, քննարկման առարկա դարձնելով Պայմանագրի կողմերի միջև միմյանց որոշակի իրավունքներ և պարտականություններ փոխանցելու կամքի ու կամահայտնության բացակայության փաստը, դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ այդ փաստը քննարկման առարկա չի դարձվել Դատարանի կողմից: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այնպիսի փաստեր, որոնց վերաբերյալ ինքը զրկված է եղել որևէ դիրքորոշում հայտնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Պայմանագիրն իր ամուսնու ցուցումով կնքվելու, Պայմանագրի էական պայմանների վերաբերյալ Կարեն Խաչատրյանի հետ պայմանավորվածություն ձեռք չբերվելու, Պայմանագրում նշված գումարը չվճարվելու պայմաններում այն կարող էր ոչ թե անվավեր ճանաչվել որպես վիճահարույց գործարք, այլ համարվել չկնքված, եթե Լուսինե Իսրաելյանի կողմից ներկայացվեր նման պահանջ, իսկ քանի որ նման պահանջ չի ներկայացվել, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից վճիռը ենթակա էր բեկանման, իսկ հայցը՝ մերժման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Պայմանագրի գնի մասին պայմանն օրենսդիրն էական պայման չի համարում, իսկ ապրանքի համար չվճարելը դիտվում է որպես պարտավորության խախտում կամ չկատարում, որպիսի իրավահարաբերությունների կարգավորմանն օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի առանձին դրույթներ է նվիրել՝ որպես հետևանք նախատեսելով ոչ թե պայմանագիրն անվավեր ճանաչելը, այլ այն լուծելը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Լուսինե Իսրաելյանն է վկայակոչել այն փաստերը, որ Պայմանագիրը կնքելիս Կարեն Խաչատրյանի մոտ բացակայել է անհրաժեշտ լիազորությունը, իսկ Արմենուհի Մալխասյանն իմացել է այդ մասին, որի պայմաններում Լուսինե Իսրաելյանի վրա պետք է դրվեր նշված փաստերի ապացուցման պարտականությունը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը նշված պարտականությունը վերջինիս վրա չի դրել, իսկ Լուսինե Իսրաելյանն իր հերթին ինչպես չի ապացուցել այդ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը, այնպես էլ չի ներկայացրել դրանց վերաբերյալ ապացույցներ, ուստի դրանց վիճելի մնալու դեպքում բացասական հետևանքները պետք է կրեր ոչ թե ինքը, այլ՝ Լուսինե Իսրաելյանը:

Վերաքննիչ դատարանի որոշումը զուրկ է իրավական հիմնավորումից, քանի որ նույն քաղաքացիական գործով, նույն հայցադիմումի շրջանակներում մի դեպքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 17.12.2010 թվականի որոշմամբ էական նշանակություն է տալիս Կարեն Խաչատրյանի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության և գործարքի մյուս կողմի՝ Արմենուհի Մալխասյանի այդ մասին իմանալու ակնհայտ հնարավորության առկայության փաստերը պարզելուն՝ այն համարելով գործի լուծման նախապայման, իսկ 02.09.2011 թվականի որոշման մեջ նշում է, որ վիճարկվող գործարքի՝ մյուս կողմի լիազորությունների մասին իմանալու կամ չիմանալու գնահատման հարցերը չեն կարող ազդել սույն քաղաքացիական գործի ելքի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.09.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 04.08.2010 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Արմենուհի Մալխասյանի պնդումն այն մասին, որ իր և Կարեն Խաչատրյանի միջև չի բացակայել միմյանց իրավունքներ և պարտականություններ փոխանցելու կամքն ու կամահայտնությունը, ընդամենը բողոք բերող կողմի հայտարարությունն է, որը չի հիմնավորվում գործի փաստական հանգամանքներով: Բողոք բերողը չի կարող պնդումներ անել Կարեն Խաչատրյանի փոխարեն: Այն, որ Կարեն Խաչատրյանը և Արմենուհի Մալխասյանը ստորագրել են վիճարկվող գործարքը, այն ստացել է պետական գրանցում, և Կարեն Խաչատրյանը գործարքով գնորդին է հանձնել ընկերության կնիքն ու փաստաթղթերը, դեռ չեն հերքում գործով հաստատված ապացույցներն առ այն, որ Արմենուհի Մալխասյանը վիճարկվող գործարքը կնքել է Արմեն Մալխասյանի ցուցումով, այսինքն՝ անձամբ չակնկալելով փոխանցել կամ ստանալ ոչ մի իրավունք ու պարտականություն, և որ Արմենուհի Մալխասյանին գործարքի գինը չի վճարվել: Կարեն Խաչատրյանի պնդումն այն մասին, որ որպես ընկերության տնօրեն միանձնյա է տնօրինել բաժնեմասերը, ևս չի հերքում վերաքննիչ դատարանի եզրահանգումներն առնվազն այնքանով, որքանով որ Կարեն Խաչատրյանը չի հանդիսացել ընկերության միանձնյա սեփականատեր, ընկերությունը եղել է Կարեն Խաչատրյանի և իր ընդհանուր սեփականությունը, իսկ Կարեն Խաչատրյանը կնոջ սեփականությունը տնօրինելու լիազորություն չի ստացել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

Կարեն Խաչատրյանի և Լուսինե Իսրաելյանի միջև ամուսնությունը Երևանի Ամուսնության պալատում գրանցվել է 09.08.1996 թվականին (հ. 1-ին, գ.թ.12).

Սասուն Խաչատրյանն Ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած 100 տոկոս բաժնեմասը վաճառել է Կարեն Խաչատրյանին, որի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Կենտրոնի տարածքային բաժնում 08.06.2004 թվականին գրանցում է կատարվել այն մասին, որ Ընկերության միակ մասնակիցը և տնօրենն է Կարեն Խաչատրյանը (հ. 1-ին, գ.թ.55).

Կարեն Խաչատրյանի և Արմենուհի Մալխասյանի միջև 30.03.2007 թվականին կնքվել է Պայմանագիր, որի համաձայն՝ Կարեն Խաչատրյանը Արմենուհի Մալխասյանի սեփականությանն է հանձնել Ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած 100 տոկոս բաժնեմասը: Այդ Պայմանագրի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Կենտրոնի տարածքային բաժնում 06.04.2007 թվականին գրանցում է կատարվել այն մասին, որ Ընկերության միակ մասնակիցը և տնօրենն է Արմենուհի Մալխասյանը (հ. 1-ին, գ.թ.15, 55).

Կարեն Խաչատրյանի ներկայացուցիչ Անուշիկ Պողոսյանը հայցադիմումի պատասխան է ներկայացրել նաև այն մասին, որ Կարեն Խաչատրյանն «իր հայեցողությամբ է տնօրինել բաժնեմասը», «Պայմանագիրը կնքվել է օրենքի շրջանակներում, օրենքի պահանջներին համապատասխան» (հ. 1-ին, գ.թ.81):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին նախադասության համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նույն կետի երկրորդ նախադասության համա-

ձայն՝ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, հաշվի առնելով ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի ծագման հիմքը՝ ամուսնական հարաբերությունները և օրենքով նախատեսված այլ դեպքերը, ըստ էության ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի՝ գույքի **տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը** *(տես՝ Անուշ Արտաշեսյանի հայցն ընդդեմ Արմենուհի Սրեփանյանի, ՀՀ Երևանի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, Լյուդվիկ Հովհաննիսյանի՝ բնակարանի առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին գործով Վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի թիվ ԵԱՔԴ/0275/02/08 որոշումը, ինչպես նաև Համլիկ Ղազարյանի ընդդեմ «Արցախբանկ» ՓԲԸ-ի, Սարգիս Թերզյանի, երրորդ անձ Խորեն Սարգսյանի՝ հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 27.12.2011 թվականի թիվ ԵԱՔԴ/1023/02/10 որոշումը)*:

Վճռաբեկ դատարանի որոշումներով արձանագրվել է, որ համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորապես, գնորդի տեղեկացված լինելու փաստը: Նման պահանջը դատարանի կողմից կարող է բավարարվել միայն, եթե միաժամանակ առկա են երկու պայմաններ՝

1) համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայություն.

2) գործարքի մյուս կողմի՝ այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը *(տես՝ Լուսինե Իսրաելյանի հայցի ընդդեմ Ժաննա Ղազարյանի՝ «Բիզնես կենտրոն» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 16.08.2004 թվականի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին և ըստ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ Յոլակ Միլիտրոսյանի հայցի ընդդեմ Թագուշ Պետրոսյանի և Ժաննա Ղազարյանի՝ «Բիզնես կենտրոն» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 16.08.2004 թվականի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-459 (ՏԴ) գործով Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը, ինչպես նաև Համլիկ Ղազարյանի ընդդեմ «Արցախբանկ» ՓԲԸ-ի, Սարգիս Թերզյանի, երրորդ անձ Խորեն Սարգսյանի՝ հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 27.12.2011 թվականի թիվ ԵԱՔԴ/1023/02/10 որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ամուսիններ Կարեն Խաչատրյանի և Լուսինե Իսրաելյանի միջև այլ բան նախատեսող համաձայնություն չի եղել: Այսինքն՝ Կարեն Խաչատրյանը, որպես համատեղ սեփականության մասնակից, ունեցել է համատեղ սեփականություն հանդիսացող բաժնեմասերի տնօրինման գործարք կնքելու իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լուսինե Իսրաելյանի կողմից բաժնեմասերի առուվաճառքի գործարքն անվավեր ճանաչելու պահանջը դատարանի կողմից կարող էր բավա-

րարվել միայն Կարեն Խաչատրյանի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության և դրա մասին գործարքի մյուս կողմի՝ գնորդ Արմենուհի Մալխասյանի կողմից իմանալու կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայության փաստը ապացուցված համարելու դեպքում:

Սույն գործով ստորադաս դատարանները, հաստատված համարելով այն հանգամանքը, որ Կարեն Խաչատրյանը և Արմեն Սարգսյանը եղել են վաղեմի ծանոթներ, և Արմենուհի Մալխասյանը պետք է իմանար, որ Կարեն Խաչատրյանը և Լուսինե Իսրաելյանն ամուսիններ են, այդ հանգամանքը բավարար է համարել եզրակացնելու համար, որ Արմենուհի Մալխասյանն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար բաժնեմասերի՝ Կարեն Խաչատրյանի և Լուսինե Իսրաելյանի համատեղ սեփականությունը հանդիսանալու ու Կարեն Խաչատրյանի մոտ բաժնեմասերի առուվաճառքի գործարքի կնքման համար անհրաժեշտ լիազորության բացակայության մասին:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ նախադասության վերը նշված կարգավորումը, գտնում է, որ միայն Կարեն Խաչատրյանի և Լուսինե Իսրաելյանի՝ ամուսիններ լինելու փաստի հաստատումը բավարար հիմք չէ ենթադրելու, որ Կարեն Խաչատրյանը համատեղ գույքը տնօրինելու լիազորություն չի ունեցել, քանի որ ընդհանուր սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը մնացած մասնակիցների պահանջով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի դատաքննությամբ չի ապացուցվել այն հանգամանքը, որ Արմենուհի Մալխասյանն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար համասեփականատերերի միջև համաձայնության բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Մինչդեռ, սույն գործով հայցվոր Լուսինե Իսրաելյանը Կարեն Խաչատրյանի՝ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության և այդ մասին գործարքի մյուս կողմի՝ գնորդ Արմենուհի Մալխասյանի կողմից իմանալու կամ իմանալու ակնհայտ հնարավորության առկայությունը հիմնավորող որևէ հիմնավոր ապացույց չի ներկայացրել:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա, իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսինքն՝ վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր է՝

- քաղաքացիական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա,

- քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում:

Սույն գործով ստորադաս դատարանները հայցի բավարարման հիմքում դրել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ, 289-րդ, 436-րդ, 446-րդ, 449-րդ, 470-րդ և 305-րդ հոդվածները՝ պատճառաբանելով, որ վեճի առարկա պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին, քանի որ կողմերի միջև համաձայնություն ձեռք չի բերվել պայմանագրի էական պայմանների վերաբերյալ, և բացակայել են կողմերի կամքը միմյանց փոխանցելու որոշակի իրավունքներ և պարտականություններ, որի արդյունքում ուղղակիորեն խախտվում է հայցվորի համասեփականության իրավունքը, ինչպես նաև գնման նախապատվության իրավունքը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված փաստերը սույն գործով չէին կարող քննության առարկա դառնալ, քանի որ սույն գործով հայցվորի կողմից վեճի առարկա պայմանագրի անվավերության նման հիմք չի նշվել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2011 թվականի որոշումը և այն փոփոխել. Լուսինե Իսրաելյանի հայցը մերժել:

2. Լուսինե Իսրաելյանից հօգուտ Արմենուհի Մալխասյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1402/02/09

Քաղաքացիական գործ թիվ <u>ԵԱՆԴ/1402/02/09</u>
2012թ.

Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լիանա Դոքմանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Տարանայի ընդդեմ Կարապետ և Լիանա Դոքմանյանների՝ առանց փոխհատուցման ընտանիքով բնակարանից վտարելու, վարձավճար բռնագանձելու պահանջների մասին, և Կարապետ և Լիանա Դոքմանյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Սուսաննա Տարանայի, Վարուժան Ղահրամանյանի, Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի՝ բնակարանի նկատմամբ Սուսաննա Տարանայի սեփականության իրավունքի գրանցումը, դրա համար հիմք ծառայած անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, բնակարանի նկատմամբ Էմմա Ալեքսանյանին և Վարուժան Ղահրամանյանին տրված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, գրանցման վկայականներն անուժ լինելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը հաստատելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

<u>1. Գործի դատավարական նախապատմությունը</u>

Դիմելով դատարան՝ Սուսաննա Տարանան պահանջել է առանց փոխհատուցման Կարապետ և Լիանա Դոքմանյաններին ընտանիքով վտարել Երևանի Ա. Հովհաննի-

այան փողոցի 26-րդ շենքի թիվ 7 բնակարանից և բռնագանձել վարձավճար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կարապետ և Լիանա Դոքմանյանները պահանջել են անվավեր ճանաչել Երևանի Ա. Հովհաննիսյան փողոցի 26-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ Սուսաննա Տարաևայի սեփականության իրավունքի գրանցումը, դրա համար հիմք ծառայած անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, Էմմա Ալեքսանյանին և Վարուժան Ղահրամանյանին տրված սեփականության իրավունքի գրանցումը, դրա համար հիմք ծառայած 14.05.2009 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, և հաստատել գրանցման վկայականներն անուժ լինելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.03.2010 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը բավարարվել են մասնակիորեն: Վճռվել է «Հայցը բավարարել մասնակիորեն՝ վտարել Լիանա Դոքմանյանին և նրա ընտանիքի անդամներ Կարապետ և Հակոբ Դոքմանյաններին Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, Ա. Հովհաննիսյան փողոց, 26-րդ շենքի թիվ 7 բնակարանից: Մերժել հայցը՝ վարձավճարի բռնագանձման պահանջով: Հակընդդեմ հայցը բավարարել մասնակիորեն. մասնակիորեն՝ Վարուժան Ղահրամանյանի մասով, անվավեր ճանաչել 14.05.2009 թվականին Էմմա Ալեքսանյանին և Վարուժան Ղահրամանյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի վերաբերյալ, և այդ մասով Լիանա Դոքմանյանին ճանաչել 03.10.2004 թվականին մահացած Լևոն Ղահրամանյանի գույքի ժառանգ: Մերժել պահանջը՝ 23.06.2009 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Մերժել պահանջը՝ Սուսաննա Տարաևայի անվամբ Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Կարճել քաղաքացիական գործի վարույթը՝ նույն բնակարանի վերաբերյալ Սուսաննա Տարաևային տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով: Մերժել պահանջը՝ Էմմա Ալեքսանյանի և Վարուժան Ղահրամանյանի անվամբ Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ 26.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Կարճել քաղաքացիական գործի վարույթը նույն բնակարանի վերաբերյալ Էմմա Ալեքսանյանին և Վարուժան Ղահրամանյանին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2010 թվականի որոշմամբ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.03.2010 թվականի վճռի դեմ Կարապետ և Լիանա Դոքմանյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Որոշվել է բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.03.2010 թվականի վճիռը հետևյալ մասերով՝ «Հայցը բավարարել մասնակիորեն. վտարել Լիանա Դոքմանյանին և նրա ընտանիքի անդամներ Կարապետ Դոքմանյանին, Հակոբ Դոքմանյանին Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, Ա.Հովհաննիսյան փողոցի 26-րդ շենքի /նախկին 9-րդ շենք/ թիվ 7 բնակարանից: Հակընդդեմ հայցը բավարարել մասնակիորեն. մերժել պահանջը՝ 2009 թվականի հունիսի 23-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Մերժել պահանջը՝ Սուսաննա Տարաևայի անվամբ

Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Մերժել պահանջը՝ Էմմա Ալեքսանյանի և Վարուժան Ղահրամանյանի անվամբ Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ 2009 թվականի մայիսի 26-ին կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Լիանա և Կարապետ Դոքմանյաններից համապարտ կարգով հօգուտ Սուսաննա Տարաևայի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի փոխհատուցում, և այդ մասերով գործն ուղարկել նոր քննության: Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.03.2010 թվականի վճիռը մնացած մասերով թողնել օրինական ուժի մեջ»:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 24.05.2011 թվականի վճռով վճռվել է. «Հակընդդեմ հայցվորներ Կարապետ Դոքմանյանի և Լիանա Դոքմանյանի հակընդդեմ հայցը բավարարել մասնակիորեն: Անվավեր ճանաչել մասնակիորեն անվավեր ճանաչված՝ 14.05.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության վկայագրի հիման վրա Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի (ներկայումս՝ Ա. Հովհաննիսյան փողոց 26 շենք) թիվ 7 բնակարանի 1/4-րդ բաժնի նկատմամբ Վարուժան Ղահրամանյանի անվամբ 2009 թվականի մայիսի 26-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Մասնակիորեն՝ Վարուժան Ղահրամանյանի մասով, անվավեր ճանաչել Էմմա Ալեքսանյանի, Վարուժան Ղահրամանյանի և Սուսաննա Տարաևայի միջև 23.06.2009 թվականին կնքված և «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի կողմից վավերացված՝ Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի (ներկայումս՝ Ա. Հովհաննիսյան փողոց 26 շենք) թիվ 7 բնակարանի առուվաճառքի թիվ 2773 պայմանագիրը: Անվավեր ճանաչել Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի (ներկայումս՝ Ա. Հովհաննիսյան փողոց 26 շենք) թիվ 7 բնակարանի նկատմամբ Սուսաննա Տարաևայի անվամբ 24.06.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Որպես 23.06.2009 թվականին կնքված և «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի կողմից վավերացված՝ Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի (ներկայումս՝ Ա. Հովհաննիսյան փողոց 26 շենք) թիվ 7 բնակարանի առուվաճառքի թիվ 2773 պայմանագրի անվավերության հետևանք՝ Վարուժան Ղահրամանյանին պարտավորեցնել առուվաճառքի պայմանագրով վաճառողներ Էմմա Ալեքսանյանի և Վարուժան Ղահրամանյանի կողմից ստացված 9.000.000 ՀՀ դրամ գումարի 1/4-րդը՝ 2.250.000 ՀՀ դրամ գումարը վերադարձնել Սուսաննա Տարաևային: Թույլատրել Սուսաննա Տարաևային կատարելու իր սեփականության իրավունքի պետական գրանցումը Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի (ներկայումս՝ Ա. Հովհաննիսյան փողոց 26 շենք) թիվ 7 բնակարանի 3/4-րդ բաժնի նկատմամբ: Թույլատրել Լիանա Դոքմանյանին կատարելու իր սեփականության իրավունքի պետական գրանցումը Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի (ներկայումս՝ Ա. Հովհաննիսյան փողոց 26 շենք) թիվ 7 բնակարանի 1/4-րդ բաժնի նկատմամբ: Թիվ ԵԱՆԴ/1402/02/09 քաղաքացիական գործի վարույթի մասն ըստ Կարապետ ու Լիանա Դոքմանյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Սուսաննա Տարաևայի, Վարուժան Լևոնի Ղահրամանյանի, «Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի՝ գրանցման վկայականների անուժ լինելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին, կարճել՝ ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Կարապետ ու Լիանա Դոքմանյանների հակընդդեմ հայցը մնացած մասով մերժել: Հայցվոր Սուսաննա Տարաևայի հայցը՝ Կարապետ Դոքմանյանին և Լիանա Դոքմանյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանից վտարելու պահանջի մասին, մերժել: Թիվ ԵԱՆԴ/1402/02/09 քաղաքացիական գործի վարույթի մասն ըստ հայցի Սուսաննա Տարաևայի ընդդեմ Կարապետ Դոքմանյանի և Լիանա Դոքմանյանի՝ վարձավճար բռնագանձելու պահանջի մասին, կարճել՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ առկա լինելու հիմքով»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.09.2011 թվականի որոշմամբ Դատարանի 24.05.2011 թվականի վճռի դեմ Սուսաննա Տարաևայի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, իսկ Կարապետ և Լիանա Դոքմանյանների վերաքննիչ բողոքը մերժվել է: Որոշվել է «Դատարանի 24.05.2011 թվականի թիվ ԵԱՆԴ/1402/02/09 վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել. Սուսաննա Տարաևայի հայցապահանջը բավարարել մասնակիորեն. Լիանա և Կարապետ Դոքմանյաններին վտարել Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9 շենքի թիվ 7 բնակարանից: Լիանա և Կարապետ Դոքմանյանների հակընդդեմ հայցապահանջը բավարարված մասով մերժել: Մնացած մասով վճիռը թողնել անփոփոխ»:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիանա Դոքմանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սուսաննա Տարաևան:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ, 304-րդ, 305-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով հաստատվել է այն փաստը, որ Լիանա Դոքմանյանը, 2004 թվականից բնակվելով վիճելի բնակարանում, փաստացի տիրապետման եղանակով ընդունել է ժառանգությունը, ինչը նշանակում է, որ անկախ վիճելի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումից, Լևոն Ղահրամանյանի մահից հետո Լիանա Դոքմանյանը բնակարանի նկատմամբ ունեցել է բաժնային սեփականության իրավունք: Այսինքն՝ Էմմա Ալեքսանյանի և Վարուժան Ղահրամանյանի կողմից վիճելի բնակարանի օտարմամբ այդ բնակարանի՝ Լիանա Դոքմանյանին սեփականության իրավունքով պատկանող մասը նրա տիրապետությունից դուրս է եկել իր կամքից անկախ պատճառներով, քանի որ Էմմա Ալեքսանյանը և Վարուժան Ղահրամանյանը Լիանա Դոքմանյանի մասը վաճառելու իրավունք չեն ունեցել: Ավելին, Լիանա Դոքմանյանը որևէ մեկին չի լիազորել և գրավոր համաձայնություն չի տվել բնակարանի իր մասը վաճառելու համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Լիանա Դոքմանյանը վիճելի բնակարանի 1/4 մասի սեփականատեր է, Լիանա և Կարապետ Դոքմանյաններին վտարել է վիճելի բնակարանից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.09.2011 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գնահատել է այն փաստական հանգամանքը, որ Լիանա Դոքմանյանը տեղյակ է եղել, որ Էմմա Ալեքսանյանը ցանկացել է վաճառել բնակարանը և այդ մասին հայտնել է նաև գործի քննության ընթացքում: Այսինքն՝ բնակարանը Լիանա Դոքմանյանի տիրապետումից դուրս է եկել նրա իմացությամբ, հետևաբար Սուսաննա Տարաևան բարեխիղճ ձեռք բերող է, որից բնակարանը չի կարող հետ պահանջվել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Լևոն Ղահրամանյանի և Էմմա Ալեքսանյանի ամուսնությունը գրանցվել է 31.12.1959 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 72)**:

20.10.1959 թվականին ծնված Վարուժան Ղահրամանյանի ծնողներն են հայրը՝ Լևոն Ղահրամանյան, մայրը՝ Էմմա Ղահրամանյան (Ալեքսանյան) **(հատոր 1-ին, գ.թ. 73):**

3. 05.11.1961 թվականին ծնված Լիանա Ղահրամանյանի ծնողներն են հայրը՝ Լևոն Ղահրամանյան, մայրը՝ Էմմա Ղահրամանյան (Ալեքսանյան) **(հատոր 1-ին, գ.թ. 75):**

4. 04.07.1992 թվականին գրանցվել է Կարապետ Դոքմանյանի և Լիանա Ղահրամանյանի ամուսնությունը, ամուսնությունից հետո Լիանա Ղահրամանյանը կրում է Դոքմանյան ազգանունը **(հատոր 1-ին, գ.թ. 74):**

5. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) 11.02.2004 թվականի թիվ 1284218 վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Նորք համայնքի Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ 05.02.2004 թվականի թիվ 481 առուվաճառքի պայմանագրի հիման վրա Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 4-85 մատյանի թիվ 91 համարի տակ գրանցվել է Լևոն Ղահրամանյանի և Էմմա Ալեքսանյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 79):**

6. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի թիվ ԱԲ 004161 մահվան վկայականի համաձայն՝ Լևոն Ղահրամանյանը մահացել է 03.10.2004 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 80):**

7. 13.05.2009 թվականին Կենտրոն նոտարական գրասենյակ ներկայացված դիմումով Էմմա Ալեքսանյանը և Վարուժան Ղահրամանյանը հայտնել են, որ «03.10.2004 թվականին մահացել է առաջինիս ամուսին, երկրորդիս հայր Լևոն Ղահրամանյանը, որի մահից հետո մնացել է անշարժ գույք: Խնդրում ենք Ձեզ տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր: Բացի մեզանից այլ ժառանգներ չկան» **(հատոր 1-ին, գ.թ. 85):**

8. 14.05.2009 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ 03.10.2004 թվականին մահացած Լևոն Ղահրամանյանի գույքի (Երևանի Նոր Նորք համայնքի Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի 1/2-րդ բաժնի) նկատմամբ հավասար բաժիններով ժառանգ են հանդիսանում կինը՝ Էմմա Ալեքսանյանը, որդին՝ Վարուժան Ղահրամանյանը **(հատոր 1-ին, գ.թ. 86):**

9. 23.06.2009 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Էմմա Ալեքսանյանը և Վարուժան Ղահրամանյանը վաճառել, իսկ Սուսաննա Տարաևան 9.000.000

ՀՀ դրամով գնել է Երևանի Նոր Նորք համայնքի Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանը **(հատոր 1-ին, գ.թ. 87):**

10. Կադաստրի 24.06.2009 թվականի թիվ 2477806 վկայականի համաձայն՝ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-08-4-119 մատյանի թիվ 122 համարի տակ, Երևանի Նոր Նորք համայնքի Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ գրացվել է Սուսաննա Տարաևայի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 88):**

11. Էմմա Ալեքսանյանը մահացել է 16.08.2009 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 86):**

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք օրենքի և այլ իրավական ակտի հիման վրա կարող են հաստատվել միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և օգտագործվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի սահմանած կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի իր բաժինը վաճառել, նվիրել, կտակել, գրավ դնել կամ այլ կերպ տնօրինել՝ դրա հատուցելի օտարման դեպքում պահպանելով սույն օրենսգրքի 195 հոդվածում նախատեսված կանոնները:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ բաժնային սեփականության իրավունքով, երբ սեփականության իրավունքում բաժինները որոշված են, մի քանի անձանց պատկանող գույքի տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը պետք է իրականացվի բոլոր մասնակիցների՝ սեփականատերերի կողմից: Առանձին մասնակցի կամ մասնակիցների կողմից գույքի տնօրինման գործարք կնքելու իրավունքը պայմանավորված է բոլոր սեփականատերերի համաձայնության առկայությամբ: Ի տարբերություն ընդհանուր համատեղ սեփականության, որտեղ **բաժինները որոշված չեն,** բաժնային սեփականության դեպքում սեփականատերերից յուրաքանչյուրը կարող է **տնօրինել սեփականության իրավունքի իր բաժինը** առանձին, անկախ մյուս սեփականատերերի համաձայնության առկայությունից:

Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ բաժնային սեփականության մասնակիցների կողմից տրվող համաձայնությունը ենթադրում է գույքի, ներառյալ **սեփականության իրավունքում իր բաժնի** տնօրինմանը հավանություն տալու կամքի արտահայտություն և միաժամանակ մեկ կամ մի քանի սեփականատերերին գույքի տնօրինման պայմանագիր կնքելու լիազորության տրամադրում: Նման կերպ բաժնային սեփականության մասնակիցները ստեղծում են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Հետևաբար բաժանային սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ պայմանագիր կնքելու լիազորության տրամադրումը պետք է տրվի օրենքով սահմանված կարգով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդված):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ /բարեխիղճ ձեռք բերող/, ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝

1. գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից,
2. ձեռք բերողը չի իմացել կամ չէր կարող իմանալ դրա մասին,
3. սեփականատերը կամ գույքը տիրապետողը կորցրել են գույքը, կամ այն նրանցից հափշտակվել է, կամ դուրս է եկել նրանց տիրապետումից այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդարադարձել է գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջելու իրավական հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի պահանջներին հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով պաշտպանված չէ սեփականատիրոջ՝ գույքը վերադարձնելու պահանջից, եթե գույքը վերջինիս տիրապետումից դուրս է եկել նրա կամքից անկախ պատճառներով *(տես՝ Լաուրա Ամիրյանի հայցն ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի, Գոհար Պողոսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ-սեփականատեր ճանաչելու պահանջի մասին, ըստ հայցի Վիլեն Գաբրիելյանի ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի և Գոհար Պողոսյանի՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին, ըստ հայցի Եղիսաբեթ Ալավերդյանի ընդդեմ Լաուրա Ամիրյանի, Վիլեն Գաբրիելյանի, Լիլիթ Սևոյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային սպորաբաժանման՝ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կադաստրի միասնական մատյանում կատարված գրանցումը և սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1311 (ՎԴ) որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է՝ նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից

(առոչինչ գործարք):

Նույն օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Նույն օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Սույն գործով Դատարանը Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի (ներկայումս՝ Ա. Հովհաննիսյան փողոց 26 շենք) թիվ 7 բնակարանի 1/4-րդ մասի նկատմամբ Վարուժան Ղահրամանյանի անվամբ 26.05.2009 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը, Վարուժան Ղահրամանյանի մասով Էմմա Ալեքսանյանի, Վարուժան Ղահրամանյանի և Սուսաննա Տարաևայի միջև 23.06.2009 թվականին կնքված բնակարանի առուվաճառքի թիվ 2773 պայմանագիրը, Սուսաննա Տարաևայի անվամբ նույն բնակարանի նկատմամբ 24.06.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու հակընդդեմ հայցի պահանջները բավարարելիս և անվավերության հետևանքներ կիրառելիս, ինչպես նաև Սուսաննա Տարաևայի հայցը մերժելիս պատճառաբանել է, որ «Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.03.2010 թվականի թիվ ԵԱՆԴ/1402/02/09 վճռով մասնակիորեն՝ Վարուժան Ղահրամանյանի մասով, անվավեր է ճանաչվել վիճելի բնակարանի վերաբերյալ 2009 թվականի մայիսի 14-ին Էմմա Ալեքսանյանին և Վարուժան Ղահրամանյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, և այդ մասով Լիանա Դոքմանյանը ճանաչվել է 2004 թվականի հոկտեմբերի 03-ին մահացած Լևոն Ղահրամանյանի գույքի ժառանգ: Այդ մասով վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ: Նշվածից հետևում է, որ Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի 1/4 բաժինը սեփականության իրավունքով պատկանել է Լիանա Դոքմանյանին, այլ ոչ թե Վարուժան Ղահրամանյանին: Մինչդեռ Սուսաննա Տարաևան 23.06.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով վիճելի բնակարանն ամբողջությամբ, 9.000.000 ՀՀ դրամի հատուցմամբ ձեռք է բերել Էմմա Ալեքսանյանից և Վարուժան Ղահրամանյանից: Այսինքն՝ Սուսաննա Տարաևան բնակարանի 1/4 բաժինը հատուցմամբ ձեռք է բերել այն օտարելու իրավունք չունեցող անձից՝ Վարուժան Ղահրամանյանից», «Լիանա Դոքմանյանը չի լիազորել կամ որևէ գրավոր համաձայնություն չի տվել եղբորը՝ Վարուժան Ղահրամանյանին, որպեսզի վերջինս վաճառի սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի 1/4 բաժինը, ուստի Վարուժան Ղահրամանյանի կողմից նշված բնակարանի 1/4 բաժնի օտարմամբ այդ գույքը դուրս է եկել Լիանա Դոքմանյանի տիրապետումից վերջինիս կամքից անկախ պատճառներով», «Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի 3/4 բաժինը բաժնային սեփականության իրավունքով պատկանել է Էմմա Ալեքսանյանին և նա՝ որպես բաժնային սեփականության մասնակից, իրավունք

է ունեցել իր բաժինը վաճառել: Նման պայմաններում Էմմա Ալեքսանյանի, Վարուժան Ղահրամանյանի և Սուսաննա Տարաևայի միջև 23.06.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը պետք է անվավեր ճանաչվի միայն Վարուժան Ղահրամանյանի մասով»: Միաժամանակ Դատարանը պատճառաբանել է, որ «որպես գործարքի անվավերության հետևանք՝ անհրաժեշտ է անվավեր ճանաչել մասնակիորեն անվավեր ճանաչված 14.05.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության վկայագրի հիման վրա Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ Վարուժան Ղահրամանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, մասնակիորեն՝ Վարուժան Ղահրամանյանի մասով անվավեր ճանաչել Էմմա Ալեքսանյանի, Վարուժան Ղահրամանյանի և Սուսաննա Տարաևայի միջև 23.06.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև պետք է անվավեր ճանաչել Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ Սուսաննա Տարաևայի անվամբ 24.06.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Ինչ վերաբերում է մասնակիորեն անվավեր ճանաչված 14.05.2009 թվականի ըստ օրենքի ժառանգության վկայագրի հիման վրա Էմմա Ալեքսանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, Էմմա Ալեքսանյանի, Վարուժան Ղահրամանյանի և Սուսաննա Տարաևայի միջև 23.06.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն ամբողջությամբ, նաև՝ Էմմա Ալեքսանյանի մասով անվավեր ճանաչելու վերաբերյալ հակընդդեմ հայցվորների պահանջին, ապա այդ մասով նրանց պահանջն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ 14.05.2009 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի մասնակիորեն՝ Վարուժան Ղահրամանյանի մասով անվավեր ճանաչումը նման իրավաբանական հետևանքների չի հանգեցնում», «Անդրադառնալով հայցվոր Սուսաննա Տարաևայի՝ Կարապետ և Լիանա Դոքմանյաններին Երևանի Նոր Նորքի 4-րդ միկրոշրջանի, 2-րդ հատվածի 9-րդ շենքի թիվ 7 բնակարանից վտարելու վերաբերյալ պահանջին, ապա այն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ նշված բնակարանի 1/4 բաժինը սեփականության իրավունքով պատկանում է Լիանա Դոքմանյանին, և վերջինս հանդիսանում է այդ բնակարանի բաժնային սեփականատեր»:

Վերաքննիչ դատարանը Սուսաննա Տարաևայի վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելիս, իսկ Լիանա և Կարապետ Դոքմանյանների վերաքննիչ բողոքը մերժելիս և դատական ակտը փոփոխելիս պատճառաբանել է՝ «Լիանա Դոքմանյանի՝ բնակարանը Սուսաննա Տարաևայից՝ որպես բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջելու իրավունքը չի կարող իրացվել, քանի որ բացակայում է այդ իրավունքի իրացման բոլոր պայմանների միաժամանակյա առկայությունը: Բնակարանը Լիանա Դոքմանյանի տիրապետումից դուրս է եկել նրա կամքին համապատասխան: Նման դիրքորոշման հիմնավոր լինելը հավաստվում է Լիանա Դոքմանյանի՝ սույն գործի քննության ընթացում տրված ցուցմունքներով, որոնցով վերջինս ընդունել է այն փաստական հանգամանքները, որ ինքն իմացել է Էմմա Ալեքսանյանի՝ վիճելի բնակարանը վաճառելու ցանկության մասին: Լիանա Դոքմանյանը, չառարկելով բնակարանի վաճառքին, այլ նաև նպաստելով դրա շուտ վաճառվելուն, դրանով իսկ հայտնել է իր համաձայնությունը բնակարանն օտարելու հարցում», «Լիանա Դոքմանյանի՝ բնակարանն օտարելու վերաբերյալ համաձայնության առկայության փաստը հավաստվում է սույն գործով տրված ցուցմունքներով, որոնք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի տրամաբանությամբ ևս համարվում են ապացույցներ: Լիանա Դոքմանյանի և Էմմա Ալեքսանյանի բաժնային սեփականությունը հանդիսացող բնակարանը Սուսաննա Տարաևային օտարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածով սահմանված

կարգով, ինչը նշանակում է, որ այդ գործարքի անվավերության հիմքերը բացակայում են: Բացի այդ, Լիանա Դոքմանյանի իրավունքը ժառանգական զանգվածի նկատմամբ ճանաչվել է ժառանգությունն ընդունած այլ ժառանգների կողմից օրենքով սահմանված կարգով գույքը բարեխիղճ ձեռքբերողին օտարելուց հետո, ինչից հետևում է, որ վերջինս չի կարող պահանջել ժառանգական զանգվածը բնեղենով: Այսպիսով, նշվածից բխում է, որ համապատասխանաբար չի կարող անվավեր ճանաչվել նաև Սուսաննա Տարաևայի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, և նման պայմաններում վերջինիս պահանջը՝ Կարապետ և Լիանա Դոքմանյաններին վտարելու մասով ենթակա է բավարարման»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ «Սուսաննա Տարաևան հանդիսանում է վիճելի գույքի սեփականատեր /հիմք՝ 24.06.2009 թվականին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայական/, և հակընդդեմ հայցվորների կողմից այն տիրապետվում է ապօրինի, և վերջիններիս կողմից չի ներկայացվել այլ ապացույց դրա՝ օրինական հիմքերով տիրապետելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է Լիանա Դոքմանյանի ժառանգ հանդիսանալուն, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ինչպես նշվել է սույն որոշման վերոգրյալ պատճառաբանություններում, այն իր տիրապետումից դուրս է եկել իր իսկ կամահայտնությամբ», «Սուսաննա Տարաևան հանդիսանում է վիճելի անշարժ գույքի բարեխիղճ ձեռքբերող, ինչպիսի հիմքի առկայությամբ դրա նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմք հանդիսացող անշարժ գույքի օտարման գործարքը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը չեն կարող անվավեր ճանաչվել, հետևաբար հակընդդեմ հայցապահանջն առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու մասով ենթակա է մերժման ամբողջությամբ»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լիանա Դոքմանյանը վիճելի բնակարանի 1/4 մասի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել ժառանգական գույքի նշված մասը փաստացի տիրապետելու եղանակով՝ անկախ իրավունքի պետական գրանցումից, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ Վարուժան Ղահրամանյանը վիճելի գույքն օտարելիս դրա նկատմամբ ունեցել է գրանցված սեփականության իրավունք, սակայն գույքի օտարմամբ Լիանա Դոքմանյանի գույքը նրա տիրապետումից դուրս է եկել իր **կամքից անկախ պատճառներով:** Այսինքն՝ գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից:

Իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Լիանա Դոքմանյանն իմացել է բնակարանը վաճառելու ցանկության մասին և տվել է իր համաձայնությունը, ապա Վճռաբեկ դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի վերաբերյալ վերը նշված պատճառաբանությունները հիմք ընդունելով, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումն անհիմն է, քանի որ բնակարանը վաճառելու ցանկության մասին տեղեկացված լինելու հանգամանքը դեռևս չի փաստում, որ Լիանա Դոքմանյանը տվել է բնակարանի, ներառյալ՝ սեփականության իրավունքում իր բաժինը **օտարելու լիազորություն**: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ո՛չ Վարուժան Ղահրամանյանը և ո՛չ էլ Էմմա Ալեքսանյանը լիազորված չեն եղել վիճելի բնակարանի՝ Լիանա Դոքմանյանին սեփականության իրավունքով պատկանող 1/4 մասն օտարելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.03.2010 թվականի վճռի 2.1 կետով Վարուժան Ղահրամանյանի մասով անվավեր է ճանաչվել Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի վերաբերյալ 14.05.2009 թվականին Էմմա Ալեքսանյանին և Վարուժան Ղահրամանյանին տրված

ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, և այդ մասով Լիանա Դոքմանյանը ճանաչվել է 03.10.2004 թվականին մահացած Լևոն Ղահրամանյանի գույքի ժառանգ, ինչպես նաև հաշվի առնելով, որ նշված մասը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2010 թվականի որոշմամբ թողնվել է օրինական ուժի մեջ, գտնում է, որ Էմմա Ալեքսանյանի, Վարուժան Ղահրամանյանի և Սուսաննա Տարաևայի միջև 23.06.2009 թվականին կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագիրը Վարուժան Ղահրամանյանի մասով կնքվել է օրենքի պահանջների խախտմամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով մասնակիորեն անվավեր է, ուստի մասնակիորեն անվավեր է նաև տվյալ պայմանագրից ծագած՝ Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի նկատմամբ Սուսաննա Տարաևայի անվամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-08-4-119 մատյանի թիվ 122 համարի տակ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Նշված եզրահանգման հիմքով Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Դատարանն իրավացիորեն կիրառել է Վարուժան Ղահրամանյանի մասով անվավեր ճանաչված գործարքի անվավերության հետևանքներ:

Ինչ վերաբերում է Լիանա և Կարապետ Դոքմանյաններին վիճելի բնակարանից վտարելու Սուսաննա Տարաևայի պահանջը բավարարելուն ուղղված Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված և պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն օժտված է իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներով և իրավունք ունի իր գույքը հետ պահանջելու ուրիշի ապօրինի տիրապետումից: Ընդ որում, գույքի ապօրինի տիրապետումն առկա է ցանկացած պարագայում, երբ տիրապետումը հիմնված չէ օրենքի կամ պայմանագրի վրա *(տե՛ս mատ հայցի Էդվարդ Քառյանի ընդդեմ Գագիկ Ղազարյանի, Միդա Խոջյանի, Տաթևիկ Ղազարյանի՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի թիվ ՏԴ3/0019/02/08 որոշումը):*

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լիանա Դոքմանյանը Երևանի Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված, 9-րդ շենքի թիվ 7 բնակարանի 1/4 մասը տիրապետում է օրենքի ուժով, հետևաբար Սուսաննա Տարաևայի հայցը ենթակա է մերժման:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.09.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.05.2011 թվականի վճռին:

2. Սուսաննա Տարաևայից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0389/02/11
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Թումանյան
Կ. Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0389/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Իզաբելլա Թամանովայի և Հեղինե Սիմոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Իզաբելլա Թամանովայի և Հեղինե Սիմոնյանի ընդդեմ Արա Հովհաննիսյանի՝ տանիքի դռան փոխված փականի բանալին տրամադրելուն պարտավորեցնելու և դրանից հետո առանց Իզաբելլա Թամանովայի և Հեղինե Սիմոնյանի համաձայնության տանիքի հատվածում որևէ փոփոխում (աշխատանքներ) չկատարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Իզաբելլա Թամանովան և Հեղինե Սիմոնյանը պահանջել են Արա Հովհաննիսյանին պարտավորեցնել անհապաղ իրենց տրամադրել տանիքի դռան փոփոխված փականի բանալին և դրանից հետո, առանց Իզաբելլա Թամանովայի և Հեղինե Սիմոնյանի համատեղ համաձայնության, տանիքի հատվածում որևէ փոփոխում (աշխատանքներ) չկատարել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 06.07.2011 թվակա-

նի վճռով գործի վարույթը կարճվել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.12.2011 թվականի որոշմամբ Իզաբելլա Թամանովայի և Հեղինե Սիմոնյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.07.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Իզաբելլա Թամանովան և Հեղինե Սիմոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ դատարանը, անհիմն կերպով կարճելով քաղաքացիական գործի վարույթը, Իզաբելլա Թամանովային և Հեղինե Սիմոնյանին զրկել է իրենց սահմանադրական իրավունքներն իրականացնելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 01.12.2011 թվականի որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Իզաբելլա Թամանովան և Հեղինե Սիմոնյանը Երևանի Ամիրյան 3-րդ շենքի թիվ 1 և թիվ 6 բնակարանների սեփականատերերն են (հատոր 1-ին, գ.թ.27-30):

2. ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի «Կենտրոն» համատիրության 05.11.2010 թվականի Կ-72 գրության համաձայն՝ համատիրության կողմից տեղազննվել է տանիքի փակված լինելու հանգամանքը, և նախազգուշացվել է բնակչին՝ հանելու փականը (հատոր 1-ին, գ.թ.23):

3. Ա. Հովհաննիսյանին ուղղված ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի «Կենտրոն» համատիրության 05.11.2010 թվականի Կ-72 գրությամբ վերջինիս առաջարկվել է սեղմ ժամկետում հանել տանիքի դռան փականը (հատոր 1-ին, գ.թ.24):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝

1) վեճը ենթակա չէ դատարանում քննության.

2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ սույն

օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի.

3) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճիռ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճռի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի.

4) գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը.

5) գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է.

6) հայցվորը հրաժարվել է հայցից.

7) դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղը, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, որոնք չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափա-

կումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև *(տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44)*:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում *(տես՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի, թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19, կետ 52, Ջ-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 29392/95, 91-93-րդ կետեր)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Իզաբելլա Թամանովան և Հեղինե Սիմոնյանը Երևանի Ամիրյան 3-րդ շենքի թիվ 1 և թիվ 6 բնակարանների սեփականատերերն են, ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի «Կենտրոն» համատիրության 05.11.2010 թվականի Կ-72 գրության համաձայն՝ համատիրության կողմից տեղազննվել է տանիքի փակված լինելու հանգամանքը, և նախազգուշացվել է բնակչին՝ հանելու փականը, իսկ Ա. Հովհաննիսյանին ուղղված ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի «Կենտրոն» համատիրության 05.11.2010 թվականի Կ-72 գրությամբ վերջինիս առաջարկվել է սեղմ ժամկետում հանել տանիքի դռան փականը:

Դատարանը գործի վարույթը կարճելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Իզաբելլա Թամանովայի և Հեղինե Սիմոնյանի պահանջների լուծումը վերապահված է ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնին՝ շինությունների սեփականատերերի ժողովին, որն էլ իրավասու է խնդրո առարկա հարցերի վերաբերյալ կայացնել համապատասխան որոշումներ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «սույն վեճը ենթակա չէ դատարանի քննությանը, քանի որ այն ենթակա է լուծման արտադատարանական կարգով, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված կարգով՝ իրավունքի պաշտպանության օրենքով նախատեսված այլ եղանակներով»: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածների հիման վրա հայցվորներն ու պատասխանողը միևնույն բազմաբնակարան շենքի բնակիչներ են, հետևաբար վերջիններս օրենքով ունեն շենքի ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ համատեղ սեփականության իրավունք, և ոչ մի սեփականատեր չպետք է խոչընդոտի մյուս համասեփականատերերի իրավունքների անարգել իրականացմանը: Մինչդեռ տվյալ դեպքում վեճը ենթակա չէ դատարանի քննությանը, այլ ենթակա է լուծման ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի կողմից, որպիսին հանդիսանում է շինությունների սեփականատերերի ժողովը»:

Մինչդեռ, հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով,

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործին մասնակցող անձանց՝ որպես վիճելի բազմաբնակարան շենքի, շինությունների սեփականատերերի, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, նկուղները, տանիքը, մեկից ավելի շինություններ (բնակարաններ, շինություններ) սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն, և որոնք բազմաբնակարան շենքի սեփականատերերը տիրապետում են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով: Հետևաբար, բազմաբնակարան շենքի շինությունների (բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ) սեփականատերերը շենքի վերը նշված գույքի (տարածքների) նկատմամբ ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցների համար սահմանված բոլոր իրավունքները և կրում են բոլոր պարտականությունները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածով և 197-րդ հոդվածի 2-6-րդ կետով սահմանված բացառություններով:

Մասնավորապես, բազմաբնակարան շենքի սեփականատերերն ունեն ընդհանուր համաձայնությամբ ընդհանուր գույքը տիրապետելու, օգտագործելու և կառավարելու իրավունք, մինչդեռ Արա Հովհաննիսյանը ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ կերպով փոխել է շենքի տանիքի դռան փականը, որի բանալին չի տրամադրել այդ տարածքի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունք ունեցող անձանց՝ տվյալ դեպքում Իզաբելլա Թամանովային և Հեղինե Սիմոնյանին՝ դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված սեփականատիրոջ իրավազորություններից օգտվելու վերջիններիս իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Իզաբելլա Թամանովան և Հեղինե Սիմոնյանը Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմամբ զրկվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ վեճը ենթակա չէ դատարանի քննությանը, այլ ենթակա է լուծման ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի կողմից, որպիսին հանդիսանում է շինությունների սեփականատերերի ժողովը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և **օգտագործվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ**, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի սահմանած կարգով:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ժողովն է (այսուհետ՝ ժողով), որին պատկանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի **լուծման իրավունքը**, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքի համաձայն համարվում են կառավարման մարմնի բացառիկ լիազորությունը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել

է բազմաբնակարան շենքի կառավարման՝ այդ թվում ընդհանուր բաժնային սեփականության օգտագործման և տնօրինման առանձին կարգ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ կարգն ամենևին չի վերացնում բաժնային սեփականության մասնակիցների իրավունքները, այդ թվում դրանց պաշտպանության իրավունքը, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Հետևաբար բազմաբնակարան շենքի սեփականատերերի իրավունքների և դրանց իրականացման առանձնահատուկ կարգի (ընդհանուր ժողովի կողմից կառավարման հարցերի լուծում) միջև պետք է գտնվի ողջամիտ հավասարակշռվածություն՝ օրենսդրության տրամաբանությունը չխախտելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հավասարակշռվածությունը դրսևորվում է հետևյալ կանոնի պահպանմամբ՝ քանի դեռ սեփականատերերի ընդհանուր ժողովի կողմից վերջինիս իրավասությանը վերապահված հարցը որոշմամբ լուծում չի ստացել, մյուս բաժնային սեփականության մասնակիցներն իրավունք ունեն պաշտպանելու ընդհանուր բաժնային սեփականության իրենց իրավունքի ցանկացած խախտում: Նշված դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածից, որի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Իզաբելլա Թամանովան և Հեղինե Սիմոնյանն իրավունք ունեն դիմելու դատարան իրենց իրավունքների խախտումը վերացնելու պահանջով, իսկ սեփականատերերի ընդհանուր ժողովի իրավասությունը տվյալ դեպքում չի խախտվում, քանի որ վերջինս իրավունք ունի տվյալ հարցի վերաբերյալ կայացնել որոշում, և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված՝ իր լիազորությունների սահմաններում և համապատասխան ձայների առկայությամբ ժողովի ընդունված որոշումը պարտադիր կլինի բազմաբնակարան շենքի շինությունների բոլոր սեփականատերերի համար, այդ թվում և նրանց, ովքեր անկախ պատճառներից չեն մասնակցել քվեարկությանը կամ դեմ են քվեարկել որոշմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.12.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԴԴ/0676/02/08
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴԴ/0676/02/08**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25 –ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աննա Սայադյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Աննա Սայադյանի հայցի ընդդեմ Արտեմ Սայադյանի՝ բնակարանի 1/2 մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Աննա Սայադյանը պահանջել է ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Արտաշիսյան փողոցի 46-րդ շենքի թիվ 45 բնակարանի 1/2 մասի նկատմամբ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր Ա. Կուբանյան) 07.07.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր Ն. Հովսեփյան, դատավորներ Ա. Մկրտչյան, Ն. Բարսեղյան) 07.04.2011 թվականի որոշմամբ Արտեմ Սայադյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 07.07.2008 թվականի

վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր Ն. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 25.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.09.2012 թվականի որոշմամբ Արտեմ Սայադյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 25.05.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աննա Սայադյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արտեմ Սայադյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ և 220-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է, որ վիճելի բնակարանը ձեռք է բերվել իր և Արտեմ Սայադյանի համատեղ ամուսնության ընթացքում, հատուցմամբ, այն համարվում է ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.09.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.05.2012 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իրականացրել է օբյեկտիվ և բազմակողմանի քննություն: Նշված որոշումն արդարացի է, քանի որ վիճելի բնակարանը համատեղ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույք չէ. այն գնել է Արտեմ Սայադյանի մայրը՝ նաև վերջինիս և Արտեմ Սայադյանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող բնակարանի վաճառքից առաջացած գումարով: Ընդ որում, վիճելի բնակարանը գնվել է վերը նշված բնակարանը վաճառելու օրը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.12.1993 թվականին Երևանի Էրեբունու ՔԿԱԳ-ի բաժնում գրանցվել է Աննա Սարոյանի (ամուսնությունը գրանցելուց հետո կրել է Սայադյան ազգանունը) և Արտեմ Սայադյանի ամուսնությունը, որի վերաբերյալ նույն բաժնի կողմից նույն օրը տրվել է III-ՃՃ447051 ամուսնության վկայականը (հատոր 1, գ.թ. 5).

2) 28.10.1997 թվականին Սամվել Շահվերդյանի և Արտեմ Սայադյանի միջև կնքվել է «Բնակարանի վաճառքի պայմանագիր», որի համաձայն՝ Արտեմ Սայադյանը սեփա-

կանության իրավունքով ձեռք է բերել Երևանի Ծերեթելի (ներկայիս Արտաշիսյան) փողոցի 46-րդ շենքի թիվ 45 բնակարանը (հատոր 1, գ.թ. 10).

3) նշված բնակարանի նկատմամբ Արտեմ Սայադյանին 28.10.1997 թվականին տրվել է սեփականության վկայագիր (հատոր 1, գ.թ. 9).

4) 28.10.1997 թվականի դրությամբ Աննա և Արտեմ Սայադյանների ամուսնությունը լուծված չի եղել:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը (*տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Սրեփիան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Սրեփիան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը*):

Վիճելի իրավահարաբերության պահին գործող ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են ամուսնությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելու պահից:

Նույն օրենսգրքի 20-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների վաստակած գույքը նրանց ընդհանուր համատեղ սեփականությունն է: Ամուսիններն այդ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հավասար իրավունքներ ունեն: Ամուսինները գույքի նկատմամբ հավասար իրավունքներ ունեն նաև այն դեպքում, երբ նրանցից մեկը զբաղված է եղել տնային տնտեսությամբ, երեխաների խնամքով կամ այլ հարգելի պատճառներով ինքնուրույն վաստակ չի ունեցել:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ամուսնության ընթացքում ձեռք բերված (վաստակած) գույքը, անկախ նրանից՝ որ ամուսինն է ձեռք բերել (վաստակել), ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել է երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույն է, հանդիսանում է ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արտեմ և Աննա Սայադյանների ամուսնությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվել է 23.12.1993 թվականին, իսկ վիճելի բնակարանը ձեռք է բերվել և Արտեմ Սայադյանի անվամբ է գրանցվել նրանց ամուսնության ընթացքում՝ 28.10.1997 թվականին, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ բնակարանի նկատմամբ ծագել է նաև Աննա Սայադյանի սեփականության իրավունքը, և այն ամուսինների համատեղ սեփականությունն է:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերը նշված հանգամանքները, Դատարանի 25.05.2012 թվականի վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու իր 12.09.2012 թվականի որոշմամբ սահմանել է գործի նոր քննության ծավալ՝ նշելով, որ «Դատարանն իրավական գնահատման չի ենթարկել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ գույքը ձեռք չի բերվել ամուսինների դրամական միջոցներով, չի պարզել՝ պատասխանողի ծնողների կողմից վիճելի բնակարանի գնման համար կատարված դրամական ներդրումը եղել է հատուցելի, թե ոչ, ինչպես նաև նրանց դիտավորությունն ուղղված է եղել միայն պատասխանողի ակտիվների ավելացմանը, թե նախատեսվել է երկու ամուսինների համար ընդհանուր սեփականության ձեռքբերում»: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը վերը նշված իրավական նորմերի վկայակոչմամբ սույն գործի քննության համար չունեն էական նշանակություն:

Վիճելի իրավահարաբերության պահին գործող ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 21-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը հանդիսացող գույքը բաժանելիս նրանց բաժինները հավասար են:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Աննա Սայադյանի հայցի՝ վիճելի բնակարանի 1/2 մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին բավարարումը Դատարանի կողմից օրինաչափ է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ

ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում

քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.09.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 25.05.2012 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Արտեմ Սայադյանից հօգուտ Աննա Սայադյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես Աննա Սայադյանի կողմից վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1167/02/10
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/1167/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Միհրան Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.10.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արման Մադաթյանի ընդդեմ Անահիտ Գոհարյանի և Արփինե Քանքանյանի՝ վտարման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Արփինե Քանքանյանի և Անահիտ Գոհարյանի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), Երևանի «Աղամանդ» Ապրանքա-Հումքային բորսայի (այսուհետ՝ Բորսա), Արման Մադաթյանի, երրորդ անձ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման և ՀՀ Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանի՝ ածուրդային վաճառքի արձանագրությունը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և պայմանագրի հիմքով կատարված իրավունքի պետական գրանցման գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արման Մադաթյանը պահանջել է Արփինե Քանքանյանին և Անահիտ Գոհարյանին վտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արփինե Քանքանյանը և Անահիտ Գոհարյանը պահանջել են անվավեր ճանաչել Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարա-

նի ածուրդային վաճառքի արձանագրությունը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և պայմանագրի հիմքով կատարված իրավունքի պետական գրանցման գրառումը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Գաբրիելյան) (այսուհետ՝ Դատարան) 14.07.2011 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.10.2011 թվականի որոշմամբ Արման Սադաթյանի և Բանկի վերաքննիչ բողոքները մերժվել են, Դատարանի 14.07.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 132-րդ հոդվածները, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ օրենսդիրն ածուրդային գործընթացի կասեցման պայմաններում ածուրդային գործընթացը վերսկսելու դեպքում կրկնակի ծանուցման ընթացակարգ չի նախատեսել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ գրավատուները ծանուցվել են ածուրդային գործընթացը սկսված լինելու մասին, տեղյակ են եղել, որ ածուրդային գործընթացը ժամանակավորապես է դադարեցվել, այլ ոչ թե ավարտվել, և Բանկը պարտավոր չէ անընդհատ հիշեցնել գրավատուներին իրենց պարտավորությունների չկատարման մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 21.10.2011 թվականի որոշումը, այն փոփոխել՝ հակընդդեմ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 27.06.2008 թվականին Բանկի և Արփինե Քանքանյանի միջև կնքվել է թիվ 947 վարկային պայմանագիր, որի համաձայն՝ վերջինիս տրամադրվել է 5.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ, մինչև 17.06.2011 թվականը մարման ժամկետով, տարեկան 22 տոկոս տոկոսադրույքով:

2. Որպես թիվ 947 վարկային պարտավորության կատարման ապահովման միջոց՝ գրավադրվել է Արփինե Քանքանյանին և Անահիտ Գոհարյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանը, որի վերաբերյալ նրանց և Բանկի միջև 20.06.2008 թվականին կնքվել է թիվ 947 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը (հատոր 1-ին, գ.թ. 115, 116, 117):

3. Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանի համասեփականատերեր Արփինե Քանքանյանին և Անահիտ Գոհարյանին Բանկի կողմից 01.06.2009 թվականին առձեռն հանձնվել են բռնագանձման ծանուցումները (հատոր 2-րդ, գ.թ. 5, 6):

4. Բորսայի կառավարիչ Կ. Եղիազարյանի կողմից Արփինե Քանքանյանին և Անահիտ Գոհարյանին 25.09.2009 թվականին ուղարկվել է ծանուցում, որի համաձայն՝ 27.10.2009 թվականից Բորսայի հարթակում իրականացվելու է Բանկում գրավադրված Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցեում գտնվող 83,6 քմ ընդհանուր մակերեսով բնակարանի ածուրդային վաճառքը հոլանդական եղանակով՝ 20.000.000 ՀՀ դրամ մեկնարկային գնից (հատոր 1-ին, գ.թ. 42):

5. 11.12.2009 թվականին «Ֆլորես» աճուրդի տուն ՍՊԸ-ի կողմից Լուսինե Խաչատրյանին տրվել է գործարքի վկայական առ այն, որ նա 11.12.2009 թվականին կայացած աճուրդում 3.550.000 ՀՀ դրամ գումարով գնել է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցում գտնվող բնակարանը (հատոր 1-ին, գ.թ. 52):

6. Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 անշարժ գույքի 11.12.2009 թվականին կատարված գործարքը չեղյալ համարելու և գործարքի համար վճարված գումարը՝ 3.550.000 ՀՀ դրամ, վերադարձնելու մասին Լուսինե Խաչատրյանը գրություն է ուղարկել Բորսայի կառավարչին (հատոր 1-ին, գ.թ. 53):

7. Բանկը 21.01.2010 թվականի գրությամբ Բորսայի կառավարչին հայտնել է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցեի անշարժ գույքի աճուրդային վաճառքը ժամանակավորապես դադարեցնելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 54):

8. Բանկը 02.06.2010 թվականի գրությամբ Բորսայի կառավարչին հայտնել է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցեի անշարժ գույքի աճուրդային վաճառքը վերսկսելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 55):

9. 03.06.2010 թվականի «Ազգ» օրաթերթում տրվել է հայտարարություն այն մասին, որ «Ֆլորես» աճուրդի տուն ՍՊԸ-ն Բորսայի հարթակում շարունակում է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանի աճուրդային վաճառքը (հատոր 1-ին, գ.թ. 56):

10. 16.06.2010 թվականին կազմվել է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցեի անշարժ գույքի աճուրդային վաճառքի արձանագրությունը, որի համաձայն՝ աճուրդի մասնակիցներից գնորդ է արձանագրվել Արման Մադաթյանը (հատոր 1-ին, գ.թ. 58):

11. «Ֆլորես» աճուրդի տուն ՍՊԸ-ի կողմից Արման Մադաթյանին 16.06.2010 թվականին տրվել է գործարքի վկայական առ այն, որ նա 16.06.2010 թվականին կայացած աճուրդում 3.550.000 ՀՀ դրամ գումարով գնել է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցեի անշարժ գույքը (հատոր 1-ին, գ.թ.112):

12. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 07.07.2010 թվականի թիվ 2728927 վկայականի համաձայն՝ Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցեի բնակարանի սեփականատերն է Արման Մադաթյանը: Սեփականության իրավունքի գրանցման հիմք է հանդիսացել 30.06.2010 թվականին վաճառող Բանկի, աճուրդի կազմակերպիչ «Ֆլորես» աճուրդի ՍՊԸ-ի, գնորդ Արման Մադաթյանի միջև կնքված, նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 16.06.2010 թվականի անշարժ գույքի աճուրդային վաճառքի արձանագրությունը (հատոր 1-ին, գ.թ. 6-8):

13. ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 21.03.2011 թվականի թիվ 07131101 եզրակացության համաձայն՝ Արփինե Քանքանյանի անվամբ տրված 01.06.2009 թվականի թիվ 325 երկու ծանուցումների ստորին մասերում առկա ձեռագրի գրառումներն ու ստորագրություններն ունեն մեկից մինչև 3 տարվա կատարման վաղեմություն՝ հաշված փորձաքննության կատարման օրվանից (հատոր 2-րդ, գ.թ. 2,3):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի առիմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավա-

ռուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) **դա նախատեսված է գրավի պայմանագրով**,

2) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում **գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում)**: Գրավատուն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար:

Բռնագանձման ծանուցումը պարտապանին պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար:

Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց **երկու ամիս հետո** գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Դատարանը հայցը մերժելու և հակընդդեմ հայցը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Բանկը և Բորսան անշարժ գույքի աճուրդային վաճառքը ժամանակավորապես դադարեցնելուց հետո պարտավոր էին նոր պատշաճ ծանուցում ուղարկել անշարժ գույքի աճուրդային վաճառքը վերսկսելու մասին, Բանկը և Բորսան՝ առանց պատշաճ ծանուցման և չպահպանելով աճուրդի անցկացման կարգը, գրավի առարկան իրացրել են տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնին անհամապատասխան, որի հետևանքով էլ Դատարանն անվավեր է ճանաչել աճուրդային վաճառքի արձանագրությունը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և պայմանագրի հիմքով կատարված իրավունքի պետական գրանցման գրառումը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքների մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Բանկը չի կատարել վարկառուին ծանուցելու իր պարտականությունը՝ պատշաճ ծանուցման ապահովումը, ինչը հանգեցրել է վարկառուի իրավունքների սահմանափակմանը: Բանկի գործողությունները որակվել են որպես ոչ իրավաչափ, օրինականության, համաչափության և իրավունքների չարաշահման արգելման սկզբունքներից չբխող գործողություններ, որոնց արդյունքում սահմանափակվել են Արփինե Քանքանյանի և Անահիտ Գոհարյանի սահմանադրական իրավունքները, և նրանք զրկվել են սեփականության իրավունքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա կարող է բռնա-

գանձում տարածվել, և այն կարող է իրացվել երկու դեպքերում՝ երբ դա նախատեսված է գրավի պայմանագրով, և երբ առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն: Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Արփինե Քանքանյանի ու Անահիտ Գոհարյանի միջև 20.06.2008 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի թիվ 947 պայմանագրի «Գրավառուի երաշխիքները, իրավունքները և պարտավորությունները» վերտառությամբ 2-րդ հոդվածի 2.5.2 կետի համաձայն՝ պայմանագրի 1.1 կետում նշված վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում պարտապանի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավառուն պայմանագրով նախատեսված կարգով իրացնում է գրավի առարկան և մարում է դրանով ապահովված պարտավորությունները: Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ պարտապանի կողմից պայմանագրի 1.1 կետում նշված **վարկային պայմանագրով ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում գրավատուն գրավառուին իրավունք է վերապահում և տալիս իր համաձայնությունը իրականացնելու գրավի առարկայի իրացում առանց դատարան դիմելու**՝ ուղղակի վաճառքի միջոցով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով և գրավի առարկայի իրացման գումարի հաշվին բավարարել իր պահանջները: Այսինքն՝առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորությունը նախատեսված էր Բանկի և Արփինե Քանքանյանի ու Անահիտ Գոհարյանի միջև կնքված պայմանագրով: Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարկառուն՝ Արփինե Քանքանյանը, պարբերաբար խախտել է իր և Բանկի միջև կնքված վարկային պայմանագիրը, որի արդյունքում վարկը և տոկոսները դարձել են ժամկետանց 18.05.2009 թվականին: Նման պայմաններում Բանկն իր և հաճախորդի միջև կնքված պայմանագրի 2.5.2-րդ և 8.1-րդ կետերին համապատասխան սկսել է առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման և իրացման գործընթացը: Այն է՝

- Բանկի կառավարչի 01.06.2009 թվականի թիվ 325 ծանուցումները՝ ամբողջությամբ Բանկի նկատմամբ պարտքը չմարելու դեպքում առանց դատարան դիմելու գրավի առարկայի իրացման վերաբերյալ, 01.06.2009 թվականին առձեռն հանձնվել են Անահիտ Գոհարյանին և Արփինե Քանքանյանին, ինչի մասին են վկայում ծանուցումների վերջնամասում առկա գրառումները՝ հաստատված Անահիտ Գոհարյանի և Արփինե Քանքանյանի ստորագրություններով՝ առ այն, որ իրենք ստացել են ծանուցումները 01.06.2009 թվականին: Այդ մասին է վկայում նաև Անահիտ Գոհարյանի և Արփինե Քանքանյանի ներկայացուցիչ Լուսինե Ավագյանի միջնորդությամբ կատարված փորձաքննության եզրակացությունը, որը հաստատել է, որ նշված գրառումները կատարվել են Անահիտ Գոհարյանի և Արփինե Քանքանյանի կողմից 21.03.2008 թվականից մինչև 21.03.2010 թվականն ընկած ժամանակահատվածում, բայց ոչ երբեք 01.06.2010 թվականին, ինչպես պնդում էին Անահիտ Գոհարյանը և Արփինե Քանքանյանը (հատոր 2-րդ, գ.թ. 2, 3):
- Բանկի գլխավոր տնօրեն, տնօրինության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Մ. Գրիգորյանի 24.09.2009 թվականի թիվ Ե22-3204 գրությանը կից թիվ 59 հավելվածով աճուրդային վաճառքի է ներկայացվել Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանը, այսինքն՝ աճուրդային գործընթացը սկսվել է դեռևս 24.09.2009 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 46-49):
- Բորսայի կառավարիչ Կ. Եղիազարյանի կողմից Արփինե Քանքանյանին և Անահիտ Գոհարյանին 25.09.2009 թվականին ուղարկվել է ծանուցում, որի համաձայն՝ 27.10.2009 թվականից Բորսայի հարթակում իրականացվելու է Բանկում գրավադրված Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցեում գտնվող 83,6 քմ ընդհանուր մակերեսով բնակարանի աճուրդային վաճառքը հոլանդական եղանակով՝ 20.000.000 ՀՀ դրամ մեկնարկային գնից (հատոր 1-ին, գ.թ. 42):

- 11.12.2009 թվականին «Ֆլորես» աճուրդի տուն ՍՊԸ-ի կողմից Լուսինե Խաչատրյանին տրվել է գործարքի վկայական առ այն, որ նա 11.12.2009 թվականին կայացած աճուրդում 3.550.000 ՀՀ դրամ գումարով գնել է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 հասցում գտնվող բնակարանը (հատոր 1-ին, գ.թ. 52):
- Բանկի գլխավոր տնօրեն, տնօրինության նախագահ Վ. Օվսյաննիկովի 21.01.2010 թվականի թիվ Ե22-124 գրությամբ ժամանակավորապես դադարեցվել է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանի աճուրդային վաճառքը, քանի որ գնորդը՝ Լուսինե Խաչատրյանը, իր դիմումով խնդրել է չեղյալ համարել Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանի 11.12.2009 թվականին կատարված գործարքը և վերադարձնել գործարքի համար վճարված գումարը (հատոր 1-ին, գ.թ. 53, 54):
- Բանկի գլխավոր տնօրեն, տնօրինության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Մ. Գրիգորյանի 02.06.2010 թվականի թիվ Ե22-1513 գրությամբ նշված անշարժ գույքի աճուրդային վաճառքը կրկին վերսկսվել է, 03.06.2010 թվականի «Ազգ» օրաթերթում տրվել է հայտարարություն այն մասին, որ «Ֆլորես» աճուրդի տուն ՍՊԸ-ն Բորսայի հարթակում շարունակում է Երևանի Արցախի փողոցի 8/3 շենքի թիվ 23 բնակարանի աճուրդային վաճառքը (հատոր 1-ին, գ.թ. 55, 56):
- 16.06.2010 թվականի անշարժ գույքի աճուրդային վաճառքի արձանագրության համաձայն՝ գնորդ է արձանագրվել Արման Սադաթյանը, որի հետ էլ կնքվել է բնակարանի առուվաճառքի պայմանագիր (հատոր 1-ին, գ.թ.9-12):

Վերոգրյալից հետևում է, որ Բանկը և Բորսան, իրականացնելով գրավի առարկայի իրացումը, թույլ չեն տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի որևէ խախտում, պատշաճ կերպով ծանուցել են գրավատուներին գրավի առարկայի իրացման մտադրության վերաբերյալ, աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցում է կատարվել «Ազգ» օրաթերթում և ի վերջո, 16.06.2010 թվականի անշարժ գույքի աճուրդային վաճառքի արձանագրության համաձայն՝ գնորդ արձանագրված Արման Սադաթյանի հետ առուծախի պայմանագիրը կնքվել է 30.06.2010 թվականին, այսինքն՝ բռնագանձման ծանուցումը հանձնելուց մոտ մեկ տարի հետո:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդրությունը որևէ նորմ չի պարունակում կրկնակի անգամ գրավատուին գրավի առարկայի իրացման վերաբերյալ ծանուցելու գրավառուի պարտավորության վերաբերյալ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ գրավառուի՝ գրավատուին ծանուցելու պարտականությունը կրում է մեկանգամյա բնույթ և հետագայում՝ բռնագանձման գործընթացի կասեցման պարագայում, լրացուցիչ բռնագանձման ծանուցում ուղարկելու պարտականություն նախատեսված չէ: Ինչ վերաբերում է աճուրդի մասին ծանուցմանը, ապա այն օրենքով սահմանված կարգով կատարվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև **այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ**

դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պարզ չէ, թե որ օրենքով կամ իրավական ակտով են ղեկավարվել ստորադաս դատարանները՝ հակընդդեմ հայցը բավարարելու վերաբերյալ դիրքորոշում արտահայտելիս, քանի որ ՀՀ գործող օրենսդրությունը գրավառուին չի պարտավորեցնում կրկնակի անգամ գրավատուին ծանուցելու գույքի իրացման գործընթացի վերսկսման վերաբերյալ, իսկ հրապարակային սակարկություններով գրավի առարկայի վաճառքի մասին գրավատուներին ծանուցելուց բացի օրենքով սահմանված կարգով հրապարակվել է հայտարարություն: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Բանկը չի կատարել վարկառուին ծանուցելու իր պարտականությունը:

Անդրադառնալով բնակարանի աճուրդային վաճառքի շուկայական գնի ողջամտության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն՝ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց **երկու ամիս հետո** գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Վերոհիշյալ նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը գրավատուի և գրավառուի կողմից գրավի առարկայի իրացման այլ կարգ նախատեսված չլինելու դեպքում գրավառուին իրավունք է վերապահել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով: Ընդ որում, գրավի առարկան ողջամիտ գնով իրացնելու պահանջն անմիջականորեն վերաբերում է գրավի առարկան ուղղակի վաճառքի միջոցով իրացնելու դեպքին, իսկ հրապարակային սակարկությունների միջոցով գույքն իրացնելիս էական է այն հանգամանքը, որ գույքն աճուրդի դրվի այդ պահին շուկայում գործող ողջամիտ գնով: Հետևաբար հրապարակային սակարկությունների արդյունքում գրավի առարկայի գնի հնարավոր նվազումը և աճուրդի դրված գնից ցածր գնով իրացումը, սակարկություններն օրենքին համապատասխան անցկացվելու պայմաններում (աճուրդի անցկացման ընթացակարգի օրինականությունը սույն գործով չի վիճարկվում) չի կարող համարվել գրավի առարկայի ոչ ողջամիտ գնով իրացում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Անահիտ Գոհարյանի ու Արփինե Քանքանյանի միջև 20.06.2008 թվականին կնքված թիվ 947 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրի 1.4-րդ կետով կողմերի համաձայնությամբ գրավի առարկան գնահատվել է 20.000.000 ՀՀ դրամ: Բորսայի կառավարիչ Կ. Եղիազարյանի 12.11.2010 թվականի թիվ Կ-3904/2 գրության (հատոր 1-ին, գ.թ. 78-80) համաձայն՝ բնակարանի հայտարարված մեկնարկային գինը՝ 20.000.000 ՀՀ դրամը, եղել է հենակետային, իսկ սահմանված հատման՝ նվազագույն գինը՝ 3.405.633 ՀՀ դրամ, բնակարանի աճուրդային վաճառքն իրականացվել է աճուրդի համար սահմանված հոլանդական եղանակով, որի դեպքում, ըստ Բանկի և Բորսայի միջև 12.02.2008 թվականի թիվ 01/08 անշարժ գույքի աճուրդային վաճառքի կազմակերպման մասին պայմանագրի 3.3-րդ կետի (հատոր 1-ին, գ.թ. 82), կայացվող յուրաքանչյուր հերթական փուլում պատվիրատուն կարող է սահմանել ստորին հատման գինն իջեցված որոշակի տոկոսով (տվյալ դեպքում՝ 10 տոկոս), հաշվարկված նախորդ կայացած փուլի հատման գնից, իսկ նախորդ փուլի հատման գինը համարվում է տվյալ աճուրդի համար մեկնարկային գին: Բորսայի կառավարիչ Կ. Եղիազարյանի թիվ ԴՌ16/Ե12556/10 գրության (հատոր 2-րդ, գ.թ. 42-43) համաձայն՝ երկու անգամ դասական եղանակով բնակարանը չվաճառվելուց հետո 19 անգամ

ածուրդն իրականացվել է հոլանդական եղանակով, որի արդյունքում միայն բնակարանը վաճառվել է: Ընդ որում, ըստ «Ֆլորես» ածուրդի տուն ՍՊԸ-ի կողմից Արման Մադաթյանին 16.06.2010 թվականին տրված գործարքի վկայականի՝ վերջինս 16.06.2010 թվականին կայացած ածուրդում գրավի առարկան գնել է 3.550.000 ՀՀ դրամով (հատոր 1-ին, գ.թ.112):

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վիճելի բնակարանի ածուրդային վաճառքն սկսվել է 20.000.000 ՀՀ դրամ մեկնարկային գնից, այսինքն՝ գրավի առարկան ածուրդի է դրվել այդ պահին շուկայում գործող ողջամիտ գնով, ածուրդն անցկացվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իսկ ածուրդի արդյունքում գրավի առարկայի գնի նվազումը որևէ առնչություն չունի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գրավի առարկայի ողջամիտ գնով իրացնելու պարտականության հետ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.10.2011 թվականի որոշման՝ հակընդդեմ հայցի մասը և այդ մասով այն փոփոխել՝ հակընդդեմ հայցը մերժել:

2. Արփինե Քանքանյանից և Անահիտ Գոհարյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ1/0338/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ1/0338/02/08**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Մովսիսյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետարանի, Նորիկ Մալխասյանի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վեդու տարածքային ստորաբաժանման, ՀՀ Արարատի մարզի Դաշտաքար համայնքի՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը վավեր ճանաչելու, գործարքը (մրցույթը) անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, ինչպես նաև ըստ Նորիկ Մալխասյանի հակընդդեմ հայցի՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերի վարձակալության 19.10.2007 թվականի կայացած մրցույթն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու, հողատարածքը նախկին տեսքին բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վավեր ճանաչել Արարատի մարզպետի հետ կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով

հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը, որի առարկան է Վեդի քաղաքից 3,5կմ հյուսիս-արևմուտք գտնվող, Դաշտաքար գյուղին հարող 40,0հա հողամասը՝ ըստ ներկայացված գլխավոր հատակագծի:

Ընկերությունը, ավելացնելով հայցային պահանջների չափը, պահանջել է անվավեր ճանաչել 104հա, 40հա և 18հա հողամասերի վարձակալության մրցույթները (աճուրդը), որոնցում հաղթող է ճանաչվել Նորիկ Մալխասյանը, և որոնց վերաբերյալ կազմվել են առանց ամիս, ամսաթվի թիվ 9, թիվ 8 և թիվ 7 արձանագրությունները, որպես մրցույթի (աճուրդի) անվավերության հետևանք, անվավեր ճանաչել Արարատի մարզպետի 25.11.2004 թվականի թիվ 86 որոշման Նորիկ Մալխասյանին վերաբերող մասը, 01.03.2005 թվականին կնքված՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը, ինչպես նաև 03.03.2005 թվականի 104հա հողամասի վարձակալության իրավունքի պետական գրանցումը, որի համար տրվել է թիվ 0072014 վկայականը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Նորիկ Մալխասյանը պահանջել է անվավեր ճանաչել գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերի վարձակալության 19.10.2007 թվականին կայացած մրցույթը, դրա արդյունքում 19.10.2007 թվականին կազմված արձանագրությունն Ընկերության մասով, ինչպես նաև որպես մրցույթի անվավերության հետևանք մասնակի անվավեր ճանաչել Արարատի մարզպետի 31.10.2007 թվականի թիվ 154 որոշումը՝ Ընկերությանը վերաբերող մասով, և պարտավորեցնել Ընկերությանը Նորիկ Մալխասյանին վարձակալության իրավունքով տրամադրված և Ընկերության կողմից ապօրինի օգտագործվող հողամասը բերել նախկին տեսքի:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ.Բալյան) (այսուհետ՝ Դատարան) 09.12.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել: Վճռվել է. «Վավեր ճանաչել «Մովսիսյան» ՍՊԸ-ի ու Արարատի մարզպետի միջև կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը, որի առարկան է Վեդի քաղաքից 3,5կմ հյուսիս-արևմուտք գտնվող, Դաշտաքար գյուղին հարող 40,0 հա հողամասը՝ ըստ թիվ ԱՎԴ1/0338/02/08 քաղ. գործի հատոր 1-ին, գ.թ. 112-ում առկա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և քարտեզագրության» ՊՈԱԿ-ի կողմից 2010թ. կազմված, S-2 նշման տակ գտնվող սև գույնի գծով սահմանազատված 40հա հողատարածքի հատակագծի: Մասնակիորեն՝ «Մովսիսյան» ՍՊԸ-ի կողմից փաստացի զբաղեցված 40հա հողատարածքից (փաստացի՝ հանքավայր) Նորիկ Մալխասյանին վարձակալության տրված 104հա հողատարածքի հետ համադրվող 33,7 հա մակերեսով հատվածի (տես թիվ ԱՎԴ1/0338/02/08 քաղ. գործում առկա «Մովսիսյան» ՍՊԸ-ի 40հա և Նորիկ Մալխասյանի 104հա հողատարածքների հատակագիծը՝ հատոր 1-ին, գ.թ. 112) մասով անվավեր ճանաչել 104հա հողամասի վարձակալության մրցույթը (աճուրդը), որում հաղթող է ճանաչվել Նորիկ Մալխասյանը, և որի վերաբերյալ կազմվել է առանց ամիս, ամսաթվի թիվ 9 արձանագրությունը: Որպես մրցույթի (աճուրդի) անվավերության հետևանք, մասնակիորեն՝ «Մովսիսյան» ՍՊԸ-ի կողմից զբաղեցված 40հա (փաստացի՝ հանքավայրի) հողատարածքից համադրվող 33,7հա մակերեսով հատվածի (տես թիվ ԱՎԴ1/0338/02/08 քաղ. գործում առկա «Մովսիսյան» ՍՊԸ-ի 40հա և Նորիկ Մալխասյանի 104հա հողատարածքների հատակագիծը՝ հատոր 1-ին, գ.թ. 112) մասով անվավեր ճանաչել. 1) Արարատի մարզպետի 25.11.2004թ. N 86 որոշման Նորիկ Մալխասյանին վերաբերող մասը, 2) 01.03.2005թ.-ին կնքված՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը,

3) 03.03.2005թ. 104հա հողամասի վարձակալության իրավունքի պետական գրանցումը (թիվ 0072014 վկայական)»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.05.2012 թվականի որոշմամբ Նորիկ Մալխասյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 09.12.2011 թվականի վճիռը, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նշված ծավալով նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նորիկ Մալխասյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ կետը, 138-րդ, 221[2]-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սույն քաղաքացիական գործը քննել է նախագահող դատավոր Ա. Մկրտչյանի, *մասնակցությամբ դատավորներ* Ն. Տավարացյանի և Ն. Բարսեղյանի կոլեգիալ կազմով, սակայն 25.05.2012 թվականին դատական ակտը հրապարկվել է միայն նախագահող դատավոր Ա. Մկրտչյանի կողմից, ինչը չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան և դատարանի օրինական կազմ, այսինքն՝ սույն քաղաքացիական գործը քննվել է ոչ օրինական կազմով:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, ինչպես նաև անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերությունը, լինելով առևտրային կազմակերպություն և զբաղվելով հանքավայրերի երկրաբանահետախուզական աշխատանքներով, շահագրգիռ է հանքավայրերի և կից տարածքների ձեռքբերմամբ, հետևաբար Ընկերությունը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով համարվում է շահագրգիռ անձ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.05.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.12.2011 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը սույն քաղաքացիական գործը քննել է օրինական կազմով, ավելին, վերաքննիչ դատարանի դատական ակտերի հրապարակման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221[2]-րդ հոդվածով, որով նախատեսված չէ դատական ակտի հրապարակման դեպքում գործը քննող բոլոր դատավորների մասնակցությունը: Բացի այդ, դատական նիստում հրապարակվում է բողոքի քննության արդյունքում արդեն իսկ ընդունված որոշումը՝ դատական կազմի բոլոր դատավորների կողմից ստորագրված և կնքված վիճակում:

Վերաքննիչ դատարանի կողմից լիարժեք պատճառաբանվել և հիմնավորվել է Նորիկ Մալխասյանի վերաքննիչ բողոքը և կայացվել համապատասխան որոշում, հետևաբար բերված վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերությանը հասցեագրված ՀՀ Արարատի մարզպետի 25.09.2001 թվականի թիվ 30/1746 գրության համաձայն՝ մարզպետարանը չի առարկել, որպեսզի Դաշտաքար գյուղին հարող պետական ֆոնդի տարածքում (**40հա**, համաձայն հաստատված սխեմայի) Ընկերությունը կատարի երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ շինարարական քարի պաշարները հաստատելու նպատակով (հատոր 1-ին, գ.թ.40):

2. ՀՀ բնապահպանության նախարարության 16.10.2001 թվականի թիվ 192 թույլտվության համաձայն՝ «Գալենիտ» ՍՊԸ-ին թույլատրվել է Ընկերության ֆինանսական միջոցներով ըստ Արարատի մարզպետի թիվ 30-176 գրության տվյալների՝ Արարատի մարզի Վեդու ենթաշրջանի $39^{0}55$ հյուսիսային լայնությամբ և $44^{0}45$ արևմտյան երկարությամբ **40հա** հողամասում իրականացնել Դաշտաքարի տրավերտինի երևակում լեռնային փորվածքներ և հորատանցքեր պահանջող կամ հատուկ ցանկով սահմանված երկրաբանահետախուզական աշխատանքներ (հատոր 1-ին, գ.թ.9-13):

3. 25.02.2002 թվականին «Գալենիտ» ՍՊԸ-ի և Ընկերության միջև հաստատվել է Արարատի մարզի Դաշտաքարի տրավերտինի հատվածի Ընկերության տեղամասի **40հա** տարածքում հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների մասին հաշվետվությունը (հատոր 1-ին, գ.թ.7-8):

4. ՀՀ Արարատի մարզպետին հասցեագրված Ընկերության 22.05.2002 թվականի թիվ 017/02 գրությամբ հայտնվել է, որ Ընկերության միջոցներով «ԳԱԼԵՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է երկրաբանահետախուզական աշխատանքներ Դաշտաքար գյուղին հարող **40հա** պետական ֆոնդի տարածքում, միաժամանակ խնդրվել է թույլատրել նշված տարածքի շահագործման համար ստանալ արտոնագիր (հատոր 1-ին, գ.թ.39):

5. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից 15.07.2002 թվականին Ընկերությանը 25 տարի ժամկետով տրվել է գործունեության թիվ ՀՎ-Շ-13/229 թույլտվությունը՝ Արարատի մարզի Դաշտաքարի տրավերտինի հանքավայրի շահագործման մասին (հատոր 1-ին, գ.թ.127):

6. ՀՀ բնապահպանության նախարարության և Ընկերության միջև 08.01.2003 թվականին կնքված հանքավայրերից պինդ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի տրամադրման և օգտագործման թիվ 306 պայմանագրով մինչև 06.08.2027 թվականն Ընկերության ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնվել Դաշտաքարի տրավերտինի հանքավայրը (հատոր 1-ին, գ.թ.128-136):

7. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության և Ընկերության միջև 20.12.2004 թվականին կնքված հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային թիվ 029 պայմանագրով 23 տարի ժամկետով Ընկերության ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնվել Դաշտաքարի տրավերտինի հանքավայրը, որն ըստ թիվ 1 հավելվածի՝ գտնվում է **ՀՀ Արարատի մարզում Վեդի քաղաքից 3,5կմ հյուսիս-արևմուտք,** իսկ թիվ 2 հավելվածի՝ ընդերքի տեղամասի մակերեսը 11,6հա է (հատոր 1-ին, գ.թ.14-29):

8. 15.09.2004 թվականին Արարատի մարզպետարանի կողմից թերթում կատարված հայտարարության համաձայն՝ «Ս/թ-ի հոկտեմբերի 20-ին՝ ժ. 11.00, Արարատի մարզպետարանում տեղի կունենա համայնքների վարչական սահմաններից դուրս մարզի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման վարձակալության մրցույթ: Մրցույթի է դրվում 21.500-հա արոտավայր: Մրցույթի դրված հողամասերի մեկնարկային գինը սահմանվել է հողի

հարկի գույքաչափերին հավասար: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել մրցութային հանձնաժողովին» (հատոր 2-րդ, գ.թ.29):

9. ՀՀ Արարատի մարզպետի 25.11.2004 թվականի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին թիվ 86 որոշման համաձայն՝ որոշվել է համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրել կից հավելվածում նշված քաղաքացիներին և մրցույթի արդյունքում հողամասերի վարձակալության իրավունքը շահած քաղաքացիների հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագրեր: ՀՀ Արարատի մարզպետի 25.11.2004 թվականի թիվ 86 որոշմանը կից հավելվածում նշված է «Նորիկ Մալխասյան – 162հա» (հատոր 2-րդ, գ.թ.23):

10. Առանց ամիս, ամսաթվի նշման հողամասի վարձակալության տրամադրելու մասին թիվ 7, թիվ 8, թիվ 9 մրցույթի արձանագրությունների համաձայն՝ գյուղգործունեություն ծավալելու նպատակով պետական ազատ ֆոնդի հողամասերից համապատասխանաբար 18հա, 40հա և 104հա մակերեսով հողատարածքները վարձակալությամբ տրամադրելու մրցույթում հաղթող է ճանաչվել Նորիկ Մալխասյանը (հատոր 2-րդ, գ.թ.20-22):

11. ՀՀ Արարատի մարզպետի և ՀՀ Արարատի մարզի Դաշտաքար գյուղի բնակիչ Նորիկ Մալխասյանի միջև 01.03.2005 թվականին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագրով Նորիկ Մալխասյանին վարձակալության իրավունքով տրամադրվել է 162,0հա 5-րդ կարգի արոտավայր մարզի վարչական սահմանում «Ագրիջա» կից վայրում գտնվող Վեդի-Ներքին Արփա գոտում (հատոր 2-րդ, գ.թ.16-19), որից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, և 03.03.2005 թվականին Նորիկ Մալխասյանին տրվել է 104հա մակերեսով արոտավայրի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 0072014 վկայականը (հատոր 2-րդ, գ.թ.12):

12. 18.09.2007 թվականին Արարատի մարզպետարանի կողմից «ԱԶԴ» թերթում կատարված հայտարարության համաձայն՝ «Ս/Թ հոկտեմբերի 19-ի ժամը 11-ին ՀՀ Արարատի մարզպետարանի շենքում տեղի կունենա պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության տրամադրման նպատակով մրցույթ: Անասնապահության նպատակով մրցույթի է դրվում 5700,0հա արոտավայր, մրցույթի մեկնարկային գինը սահմանվել է հողի հարկի դրույքաչափին հավասար: Հայտերն ընդունվում են մինչև ս/թ հոկտեմբերի 15-ը, ժամը 18-00: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի մարզպետարան: հեռ. (0235) 26122» (հատոր 3-րդ, գ.թ.100):

13. ՀՀ Արարատի մարզպետի 31.10.2007 թվականի հողամասերը վարձակալության տրամադրելու մասին թիվ 154 որոշման համաձայն՝ որոշվել է կից հավելվածում նշված ֆիզիկական և իրավաբանական անձանց գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության տրամադրել 557հա գյուղատնտեսական նշանակության հողամաս և պարտավորեցնել վարձակալության իրավունքը շահած անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագրեր: ՀՀ Արարատի մարզպետի 31.10.2007 թվականի թիվ 154 որոշմանը կից հավելվածում նշված է ««Մովսիսյան» ՍՊԸ– 40,0հա» (հատոր 1-ին, գ.թ.34):

14. 19.10.2007 թվականի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը մասնակցել և հաղթել է Դաշտաքար գյուղին հարող 40,0հա հողամասի վարձակալության տրամադրելու մրցույթում (հատոր 1-ին, գ.թ.35):

15. Արարատի մարզպետը և Ընկերությունը 31.10.2007 թվականի թիվ 154 որոշման

և մրցույթի արդյունքների մասին թիվ 5 արձանագրության հիման վրա կազմել, ստորագրել ու կնիքով հաստատել են գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը, որով Ընկերությանը 25 տարի ժամկետով վարձակալությամբ տիրապետման և օգտագործման է տրամադրվել ՀՀ Արարատի մարզի վարչական սահմաններում գտնվող Վեդի-Ներքին Արփա գոտում 40,0հա մակերեսով 5-րդ կարգի արոտ: Պայմանագիրը նոտարական վավերացման չի ենթարկվել (հատոր 1-ին, գ.թ. 32-33):

16. Քաղաքացիական գործի 1-ին հատորի գ.թ. 62-63-ում առկա ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հաստատված Նավասարդյանի կողմից կազմված «Մարզպետի 31.10.2007թ. N 154 որոշմամբ» Ընկերությանը հատկացված 40հա վարձակալած հողամասի հատակագիծը (Մ1:6400 մասշտաբով) իր տեսքով համընկնում է քաղաքացիական գործի 1-ին հատորի գ.թ. 41-ում առկա «Հողաշինարարության անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2008 թվականին կազմված (Մ1:10000 մասշտաբով) հատակագծին, ինչպես նաև 1-ին հատորի գ.թ. 112-ում առկա «Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2010 թվականին կազմված (Մ1:10000 մասշտաբով) 104հա մակերեսով և 40հա մակերեսով (որից 33.7հա համադրված է 104հա հողամասի հետ) հողամասերի հատակագծին:

17. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի 28.10.2008 թվականի թիվ 04/01-398 գրությամբ հայտնվել է, որ «Ձեր ներկայացրած 2 հատակագծերից «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից կազմվել է միայն 1:10000 մասշտաբի հատակագիծը, որը տեղում հանույթագրվել է Դաշտաքարի գյուղապետի և «Մհվսիսյան» ՍՊԸ-ի տնօրենի մասնակցությամբ, որոնք ցույց են տվել հողօգտագործության փաստացի սահմանները» (հատոր 1-ին, գ.թ. 61):

18. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վեդու տարածքային ստորաբաժանման 04.11.2008 թվականի թիվ 3153 գրության համաձայն՝ Դաշտաքար համայնքի վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող հողամասերից Նորիկ Մալխասյանի անվամբ 104հա արոտավայրի նկատմամբ վարձակալության իրավունքի պետական գրանցում կատարվել է 03.03.2005 թվականին, ինչպես նաև պետական գրանցումը կատարվել է առանց կոորդինատային տվյալների, քանի որ 2005 թվականին համայնքի վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող հողամասերի էլեկտրոնային քարտեզներն անշարժ գույքի կադաստրի Վեդու տարածքային ստորաբաժանումը չի ունեցել (հատոր 1-ին, գ.թ. 60):

19. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի 03.02.2010 թվականի թիվ 04/01-26 գրությամբ հայտնվել է, որ «մասնագետների կողմից ուսումնասիրվել է «Մհվսիսյան» ՍՊԸ-ի 40.0հա տարածքը և Նորիկ Մալխասյանի 104,0հա տարածքը, որտեղ կա համադրում: Հողաշինարարական փորձաքննությունից պարզվել է, որ համադրման մակերեսը կազմում է 33.76հա: Կից ներկայացնում ենք հատակագիծը, որտեղ ընդգծված է համադրումը» (հատոր 1-ին, գ.թ. 108-109):

20. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.03.2010 թվականի թիվ 01-4/49 գրությամբ հայտնվել է, որ ««Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի գեոդեզիական դիտարկումների և չափաբանության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են նշված տարածքի նշահարման աշխատանքներ՝ օգտագործելով GPS-1200 մակնիշի արբանյակային ընդունիչ կայանը: Նշահարվել են 19 կետ, որից 104հա տարածքն ամբողջովին 12 կետ և 7 առանցքային կետ 40հա-ից: Նշահարման ար-

դյունքում պարզվել է, որ 40հա տարածքի 33.7հա-ն համադրվում է 104հա տարածքի մեջ: Նշահարման աշխատանքների համար հիմք են հանդիսացել հողամասերի ներկայացված հատակագծերի շրջադարձային կետերի կոորդինատները: Կից ներկայացնում ենք 1:10000 մասշտաբի հատակագիծը» (հատոր 1-ին, գ.թ. 110-112):

21. «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 15.06.2010 թվականի շինարարատեխնիկական թիվ 11121007 եզրակացության համաձայն՝ ««Մովսիսյան» ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրվող, Վեդի քաղաքից 3,5կմ հյուսիս-արևմուտք գտնվող, Դաշտաքար գյուղին հարող՝ ըստ ներկայացված 31.10.2007թ. թիվ 154 որոշմանը կից հատակագծի 40,0հա հողատարածքի 33,7հա-ն համադրվում է քաղաքացի Նորայր Մալխասյանի վարձակալության իրավունքով գրանցված թիվ 0072014 վկայականի 104հա հողատարածքի մեջ: (տես թիվ ԱՎԴ1/0338/02/08 քաղ. գործում առկա «Մովսիսյան» ՍՊԸ-ի 40հա և Նորայր Մալխասյանի 104հա հողատարածքների հատակագիծը գ.թ.111-112)» (հատոր 1-ին, գ.թ. 118-120):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ քաղաքաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **օրենքով սահմանված կանոնների խախտմամբ անցկացված** սակարկությունները **շահագրգիռ անձի** հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա:

ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի: Պետության և համայնքի հողերից հողամասերի վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով:

ՀՀ հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հողամասը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար համայնքի ղեկավարը կամ մարզպետը, իրենց իրավասության շրջանակում, ստեղծում են մրցութային հանձնաժողովներ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մրցութային հանձնաժողովները սահմանում են մրցույթի պայմաններ, որոնք պետք է ներառեն՝ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության և (կամ) կառուցապատման ժամկետները, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, **հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը,** գյուղատնտեսական հողատեսքերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պա-

հանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները:

ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մրցույթներն անցկացվում են բաց, մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ: Մրցույթները կազմակերպում և անցկացնում են մրցութային հանձնաժողովները:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները. 1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը, 2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը), 3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն), 4) աճուրդի ձևը և անցկացման կարգը, 5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմանները, 6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, 7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը, 8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները, 9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը, 10) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լոտերի վաճառքի հերթականությունը, 11) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով: Նույն օրենքի **3-5-րդ, 8-9-րդ և 14-րդ** հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը **շահագրգիռ անձի** պահանջով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Օրենսդիրը նշված դրույթով **շահագրգիռ անձին** հնարավորություն է ընձեռել դատական կարգով անվավեր ճանաչել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի **3-5-րդ, 8-9-րդ և 14-րդ** հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը:

Հաշվի առնելով սույն վեճի նկատմամբ կիրառման ենթակա իրավական ակտերի նորմերում պարունակվող դրույթների ոչ միանշանակ ընկալման և մեկնաբանման հնդիրը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ով կարող է հանդիսանալ շահագրգիռ անձ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իմաստով:

Այսպես՝ անձի մոտ շահագրգռվածությունը պետք է առկա լինի աճուրդի հանված լոտի նկատմամբ: Ընդ որում, շահագրռգված լինելը կարող է պայմանավորված լինել ինչպես լոտի նկատմամբ սուբյեկտիվ իրավունքներ ունենալու փաստով, այնպես էլ հնարավոր իրավունքներ ձեռք բերելու համար բավարար նախադրյալներ առկա լինելու փաստով: Վերջին դեպքում անհրաժեշտ է իրավաբանական այնպիսի փաստերի ամբողջություն, որոնք իրենց համակցությամբ կարող են բավարար լինել նպաստելու անձի մոտ ապագայում լոտի նկատմամբ իրավունքներ ծագելուն: Կիրառելով վերոնշյալ մեկնաբանությունը՝ սույն գործի փաստերի նկատմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության՝ շահագրգիռ անձ լինելու հանգամանքը պետք է գնահատվի վիճելի հողամասի նկատմամբ իրականացված գործընթացների համատեքստում:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 53-րդ հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ «թե՛ հայցվորի և թե՛ հակընդդեմ հայցվորի կողմից ներ-

կայացվել են համապատասխանաբար յուրաքանչյուրի մասնակցությամբ տեղի ունեցած աճուրդներն անվավեր ճանաչելու պահանջներ», «փաստերի ժամանակագրական հերթականությունն էական նշանակություն ունի կողմերից յուրաքանչյուրի մյուսի մասնակցությամբ կայացած աճուրդի անվավեր ճանաչելու հարցում շահագրգռվածությունը պարզելու համար: Այսպես՝ Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերից հետևում է, որ հակընդդեմ հայցվորը հողամասի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել 2004 թվականին կազմակերպված աճուրդի հիմքով, իսկ հայցվորի մասնակցությամբ աճուրդը տեղի է ունեցել միայն 2007 թվականին»: Այսինքն՝ «վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքը հայցվորի համար ծագել է միայն 2007 թվականին, հետևաբար անհերքելի է 2004 թվականին վերջինիս մոտ վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի բացակայությունը: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ միայն աճուրդների ժամանակագրական փաստի հաշվառմամբ կարելի է արձանագրել, որ 2007 թվականի հողի վարձակալության աճուրդին հայցվորի հաղթող ճանաչվելու փաստով չի կարող հաստատվել վերջինիս շահագրգռվածությունը 2004 թվականի մրցույթն անվավեր ճանաչելու հարցում: Ինչ վերաբերում է հակընդդեմ հայցվորի աճուրդն անվավեր ճանաչելու պահանջին, ապա հարկ է նշել, որ վերջինիս մոտ 2004 թվականի աճուրդին հաղթելու և երկու աճուրդների առարկա հողերի համադրման մասին գործում առկա փորձագիտական եզրակացության ուժով անհերքելիորեն առկա է հակընդդեմ հայցվորի շահագրգռվածությունը»:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արարատի մարզպետի 25.09.2001 թվականի թիվ 30/1746 գրությամբ մարզպետարանը չի առարկել Ընկերությանը կատարելու Դաշտաքար գյուղին հարող պետական ֆոնդի 40հա տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքներ: Ավելին, ՀՀ բնապահպանության նախարարության 16.10.2001 թվականի թիվ 192 թույլտվությամբ թույլատրվել է «Գալենիտ» ՍՊԸ-ին Ընկերության ֆինանսական միջոցներով ըստ Արարատի մարզպետի թիվ 30-176 գրության տվյալների՝ Արարատի մարզի Վեդու ենթաշրջանի $39^{0}55$ հյուսիսային լայնությամբ և $44^{0}45$ արևմտյան երկարությամբ 40հա հողամասում իրականացնել Դաշտաքարի տրավերտինի երևակում լեռնային փորվածքներ և հորատանցքեր պահանջող կամ հատուկ ցանկով սահմանված երկրաբանահետախուզական աշխատանքներ, որի արդյունքում 25.02.2002 թվականին «Գալենիտ» ՍՊԸ-ի և Ընկերության միջև հաստատվել է Արարատի մարզի Դաշտաքարի տրավերտինի հատվածի Ընկերության տեղամասի 40հա տարածքում հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների մասին հաշվետվությունը: Հատկանշական է, որ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից 15.07.2002 թվականին Ընկերությանը 25 տարի ժամկետով տրվել է գործունեության թիվ ՀՎ-Ե-13/229 թույլտվությունը՝ Արարատի մարզի Դաշտաքարի տրավերտինի հանքավայրի շահագործման մասին, իսկ ՀՀ բնապահպանության նախարարության և Ընկերության միջև 08.01.2003 թվականին կնքված հանքավայրերից պինդ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի տրամադրման և օգտագործման թիվ 306 պայմանագրով մինչև 06.08.2027 թվականն Ընկերության ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնվել Դաշտաքարի տրավերտինի հանքավայրը:

Համադրելով վերոնշյալ մեկնաբանությունները և փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը 16.10.2001 թվականի թիվ 192 թույլտվությամբ, ապա նաև 15.07.2002 թվականի 25 տարի ժամկետով տրված թիվ ՀՎ-Ե-13/229 թույլտվությամբ և դրա հիման վրա 08.01.2003 թվականին կնքված թիվ 306 պայմանագրով սկսել է հանքային իրավունքի ձևավորմանն ուղղված գործընթացը: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ նշված բոլոր փաստերն ուղղակիորեն կապված են

եղել միևնույն հանքավայրի հետ (Դաշտաքարի տրավերտինի հանքավայր)։

Նշված հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված **շահագրգիռ անձի** հասկացությունը։

2. Անդրադառնալով վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը սույն քաղաքացիական գործը քննել է ոչ օրինական կազմով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, այլ դատական ակտերի դեմ բողոքը՝ միանձնյա։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը գործին մասնակցող անձանց հարցնում է, թե նրանք արդյոք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ դրանք հետազոտելու միջնորդությամբ։ Նման միջնորդությունների բացակայության դեպքում նախագահողը գործի քննությունը հայտարարում է ավարտված, և դատարանը հայտարարում է վճռի հրապարակման վայրն ու ժամանակը։ Վճիռը կազմում և ստորագրում է դատական նիստը նախագահողը։ Դատարանի վճիռը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում։ Դատարանի վճիռը հրապարակելիս նիստը նախագահողը պարզաբանում է վճիռը բողոքարկելու կարգը։ Հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց։ Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221^2-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը հրապարակվում և գործին մասնակցող անձանց ուղարկվում են առաջին ատյանի դատարանի համար սահմանված կարգով։

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ վարույթում դատական ակտերի հրապարակման և գործին մասնակցող անձանց ուղարկելու կանոնները նույնն են, ինչ առաջին ատյանի դատարանում։ Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի կանոնակարգումներից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործերի միանձնյա և կոլեգիալ քննության կարգի զուգորդման սկզբունքով։ Այս սկզբունքի լույսի ներքո ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221^2-րդ հոդվածում ամրագրված «**դատական ակտերը հրապարակվում են առաջին ատյանի դատարանի համար սահմանված կարգով**» դրույթը պետք է մեկնաբանել նշված սկզբունքի համատեքստում, ինչը ենթադրում է վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտերի հրապարակում գործերի քննության կոլեգիալության սկզբունքի պահպանմամբ։ Գործի քննությունն իրականացվում է դատավարական ձևին համապատասխան, ինչն էլ ապահովում է ընթացակարգի որոշակիությունը։ Հետևաբար վերաքննիչ դատարանում կոլեգիալ քննության դեպքում դատավորների կազմը հանդես է գալիս որպես դատարան բողոքը վարույթ ընդունելուց մինչ դատական ակտի հրապարակումը ներառյալ, այնպես, ինչպես առաջին ատյանի դատարանում միանձնյա դատավորը։

Վերոնշյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

դատական ակտերի հրապարակումն այն դեպքում, երբ գործը քննվել է կոլեգիալ կազմով, պետք է իրականացվի կոլեգիալության սկզբունքի պահպանմամբ: Հակառակ դեպքում առաջանում է դատական ակտը ոչ օրինական կազմով հրապարակելու խնդիր, ինչի արդյունքում խախտվում է դատավարության վերոնշյալ սկզբունքը և հիմք է դատական ակտի անվերապահ բեկանման համար:

Անդրադառնալով վերը նշված փաստարկի հիմնավորման համար Ընկերության ներկայացրած տեսաձայնագրման, որպես ապացույց դիտելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության 47-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն:

Վերոնշյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ դատական նիստի տեսաձայնագրումը՝ որպես օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույց (ապացուցման միջոց), իրավաբանական ուժ և ապացուցողական արժեք կարող են ունենալ միայն այն դեպքում, երբ կատարվել է օրենքով սահմանված կարգով, այն է՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ: Նշված կանոնի խախտմամբ կատարված տեսաձայնագրումը չունի ապացուցողական նշանակություն և պետք է գնահատվի որպես օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույց:

Վերոնշյալ պատճառաբանությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության ներկայացրած վճռաբեկ բողոքին կից ներկայացված տեսաձայնագրությունը չի կարող համարվել թույլատրելի ապացույց, քանի որ սույն գործում բացակայում է դատական նիստի տեսաձայնագրում կատարելու կապակցությամբ կողմերի համաձայնությունը և գործը քննող դատարանի թույլտվություն տալու փաստը հավաստող ապացույց: Նշված հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության բողոքի սույն փաստարկն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0052/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/0052/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25 -ին

դռնբաց դատական նիստում, քննելով Թորոս Սակերյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.04.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Սամվել Պողոսյանի հայցի ընդդեմ Թորոս Սակերյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Պողոսյանը պահանջել է Թորոս Սակերյանից բռնագանձել 37.845.680 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, 41.441.020 ՀՀ դրամ՝ որպես տույժի գումար, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 25.12.2009 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 08.11.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.04.2011 թվականի որոշմամբ Թորոս Սակերյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 08.11.2010

թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել նոր քննության:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ն. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 12.01.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.04.2012 թվականի որոշմամբ Թորոս Սակերյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.01.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Թորոս Սակերյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ կետը, 335-րդ հոդվածը, 337-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ և 3-րդ հոդվածները, 47-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 49-րդ հոդվածի 1-ին կետը, 51-րդ հոդվածը, 52-րդ հոդվածի 2-րդ կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 75-րդ հոդվածի 2-րդ կետը և 92-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է, որ Սամվել Պողոսյանի կողմից ներկայացված պահանջի համար հայցային վաղեմության ժամկետը լրացել է 25.12.2009 թվականին, իսկ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 27.04.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը դատարանում ընդունված է համարել 22.01.2010 թվականին: Այսինքն՝ Սամվել Պողոսյանը դատարան է դիմել հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունների համաձայն՝ Սամվել Պողոսյանի ներկայացրած հայցադիմումը գրասենյակում ստացվել է 21.01.2010 թվականին և նույն օրն էլ մակագրվել է դատավոր Ա. Բաբայանին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Սամվել Պողոսյանի ներկայացրած հայցադիմումի վրա առկա է միայն դրոշմակնիք և ամսաթիվ, մինչդեռ բացակայում է դատարանի գրասենյակի պատասխանատու դատական ծառայողի ստորագրությունը՝ տվյալ հայցադիմումը ստանալու վերաբերյալ, որով խախտվել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.12.2007 թվականի թիվ 23-Լ որոշման 3-րդ մասի 3-րդ կետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սամվել Պողոսյանի և Թորոս Սակերյանի միջև 01.11.2006 թվականին կնքվել է «փողի փոխառության պայմանագիր», որի համաձայն՝ Սամվել Պողոսյանը Թորոս Սակերյանի սեփականությանն է հանձնում 37.845.680 ՀՀ դրամ գումար, իսկ Թորոս Սակե-

դյանը պարտավորվել է մինչև 25.12.2006 թվականը նշված գումարը վերադարձնել Սամվել Պողոսյանին (հատոր 1, գ.թ. 13).

2) Սամվել Պողոսյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ վերը նշված փոխառության գումարը, այդ գումարի նկատմամբ հաշվարկված տույժի գումարը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարը բռնագանձելու պահանջների մասին (հատոր 1, գ.թ. 12).

3) նշված հայցադիմումի վրա առկա է այն 25.12.2009 թվականին դատարանում ստացվելու վերաբերյալ դրոշմակնիք, ինչպես նաև հայցադիմումը դատարանի դատավոր Ա. Բաբայանին հանձնելու վերաբերյալ դատարանի նախագահի 21.01.2010 թվականի մակագրությունը (հատոր 1, գ.թ. 12).

4) datalex.am ինտերնետային կայքում որպես վերը նշված հայցադիմումը Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացված լինելու ամսաթիվ նշված է 21.01.2010 թվականը (հատոր 2, գ.թ. 52).

5) 22.01.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է (հատոր 1, գ.թ. 11).

6) 23.02.2010 թվականի որոշմամբ վերադարձվել է կրկին ներկայացված հայցադիմումը (հատոր 1, գ.թ. 18,19).

7) նույն դատարանի դատավոր Ա. Բաբայանը, որոշելով վարույթ ընդունել կրկին ներկայացված հայցադիմումը, որպես այն դատարանում ընդունված համարելու ամսաթիվ նշել է 22.01.2010 թվականը (հատոր 1, գ.թ. 1).

8) Թորոս Սակերյանը և նրա ներկայացուցիչը դիմում են ներկայացրել դատարան հայցային վաղեմություն կիրառելու մասին (հատոր 1, գ.թ. 59, 103):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցը

- *որն է համարվում օրենքի պահանջներին համապատասխան հայցի հարուցում և, հետևաբար, հիմք հայցային վաղեմության ժամկետի ընդհատման համար.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցադիմումը ներկայացվում է գրավոր: Նույն հոդվածը սահմանում է նաև հայցադիմումին ներկայացվող պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է վարույթ ընդունել նույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցի հարուցման համար էական է համարում հայցադիմում ներկայացնելը: Ընդ որում, օրենսդիրը հայցի հարուցման համար ներկայացնում է մի շարք պահանջներ, որոնց առկայության դեպքում այն համարվում է հարուցված: Այդ պահանջների չպահպանման դեպքում դատավորը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ կամ 92-րդ հոդվածների հիման վրա, համապատասխանաբար, մերժում է հայցադիմումի ընդունումը կամ վերադարձնում այն: Հետևաբար, եթե հայցադիմումը վերոնշյալ հոդվածների հիման վրա չի վերադարձվել կամ դրա ընդունումը չի մերժվել, ապա հայցը համարվում է օրենքով սահմանված կարգով հարուցված:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցադիմումի ներկայացումը

կարող է կատարվել ինչպես կապի կազմակերպությանը համապատասխան փաստաթուղթը հանձնելու, այնպես էլ անմիջականորեն դատարան հայցադիմումը մուտքագրելու ձևով:

Այդ նպատակից ելնելով՝ դատարաններում դատավարական փաստաթղթերի ընդունման համար ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի հիման վրա սահմանել է Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.12.2007 թվականի թիվ 23Լ որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնների 1-ին բաժնի 5-րդ կետի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները պարտադիր են դատավորների** և աշխատողների **համար**:

Նույն կանոնների 3-րդ բաժնի 11-րդ կետի համաձայն՝դատարան ստացված փաստաթղթի վրա դրվում է գրանցման դրոշմը, նշվում է ստացման ամսաթիվը և **մուտքի հերթական համարը:**

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ դատարանների գործավարության կանոններով կանոնակարգված են այն գործողությունները, որոնք պետք է կատարվեն դատարանների կողմից հայցադիմումի ընդունման ժամանակ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցային վաղեմություն կիրառելու հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ անձի՝ օրենքով սահմանված ժամկետում դատարան դիմելու հանգամանքը պարզելու համար էական է, թե երբ է հայցադիմումը մուտք արվել դատարան, որը հնարավոր է պարզել դատարան ստացված փաստաթղթի վրա գրանցման դրոշմի, ինչպես նաև ստացման ամսաթվի ուսումնասիրությամբ: Այդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ օրենսդիրը հայցային վաղեմության ընդհատման համար էական է համարում *օրենքով սահմանված կարգով* և *ժամկետում* հայցադիմումի ներկայացումը դատարան:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սամվել Պողոսյանի և Թորոս Սակերյանի միջև 01.11.2006 թվականին կնքվել է «փողի փոխառության պայմանագիր», որի համաձայն՝ Սամվել Պողոսյանը Թորոս Սակերյանի սեփականությանն է հանձնում 37.845.680 ՀՀ դրամ գումար, իսկ Թորոս Սակերյանը պարտավորվել է մինչև 25.12.2006 թվականը նշված գումարը վերադարձնել Սամվել Պողոսյանին, Սամվել Պողոսյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ վերը նշված փոխառության գումարը, այդ գումարի նկատմամբ հաշվարկված տույժի գումարը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարը բռնագանձելու պահանջների մասին, որի վրա առկա է այն 25.12.2009 թվականին դատարանում ստացվելու վերաբերյալ դրոշմակնիք, ինչպես նաև հայցադիմումը դատարանի դատավոր Ա. Բաբայանին հանձնելու վերաբերյալ դատարանի նախագահի 21.01.2010 թվականի մակագրությունը: Datalex.am ինտերնետային կայքում որպես վերը նշված հայցադիմումը Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացված լինելու ամսաթիվ նշված է 21.01.2010 թվականը: 22.01.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է, 23.02.2010 թվականի որոշմամբ վերադարձվել է կրկին ներկայացված հայցադիմումը, իսկ նույն դատարանի դատավոր Ա. Բաբայանը, որոշելով վարույթ ընդունել կրկին ներկայացրած հայցադիմումը, որպես այն դատարանում ընդունված համարելու ամսաթիվ նշել է 22.01.2010 թվականը:

Սույն գործով Դատարանը, հաստատված համարելով, որ Սամվել Պողոսյանը հայցադիմումը դատարան է ներկայացրել 25.12.2009 թվականին, մերժել է հայցային

վաղեմություն կիրառելու մասին դիմումը՝ արձանագրելով, որ հայցադիմումը ներկայացվել է հայցային վաղեմության եռամյա ժամկետի պահպանմամբ: Ընդ որում, հայցադիմումը նշված օրը դատարան ներկայացված լինելու հանգամանքը հաստատված է համարել հայցադիմումի վրա դատարանի գրասենյակի դրոշմակնիքի և դրա վրա համապատասխան ամսաթվի առկայության փաստերով:

Վերաքննիչ դատարանն իր հերթին, նշելով, որ «գործին է կցված Սամվել Պողոսյանի՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան մուտք արված հայցադիմումը, որի վրա առկա է դատարանի համապատասխան դատական ծառայողի կողմից դրված շտամպ և ամսաթիվ՝ 25.12.2009թ.», «փաստաթղթի ընդունված և գրանցված լինելու հանգամանքը հավաստվում է համապատասխան պատասխանատու դատական ծառայողի կողմից մուտք եղած փաստաթղթի վրա ստացման դրոշմակնիքը, ամսաթիվը դնելով, ինչը տվյալ պարագայում առկա է սույն գործով հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումի վրա», արձանագրել է, որ սույն իրավահարաբերության նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտը կիրառելի չէ, ինչը իրավացիորեն կատարվել է դատարանի կողմից»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը լրիվ չեն հետազոտել Սամվել Պողոսյանի կողմից ներկայացված հայցադիմումի վրա առկա փաստաթղթերի ստացման դրոշմակնիքը՝ անտեսելով, որ այն չի հանդիսանում հայցադիմումը 25.12.2009 թվականին դատարանում ստացված լինելու փաստը հաստատող թույլատրելի ապացույց հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ Դատարանների նախագահների խորհուրդը հաստատում է դատարանների գործավարության կանոնները:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.12.2007 թվականի թիվ 23Լ որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնների 1-ին բաժնի 5-րդ կետի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները պարտադիր են դատավորների** և աշխատողների **համար**:

Նույն կանոնների 3-րդ բաժնի 11-րդ կետի համաձայն՝դատարան ստացված փաստաթղթի վրա դրվում է գրանցման դրոշմը, նշվում է ստացման ամսաթիվը և **մուտքի հերթական համարը**:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ Սամվել Պողոսյանի կողմից ներկայացված հայցադիմումի վրա առկա է միայն ամսաթիվ, իսկ հայցադիմումի ստացման դրոշմակնիքը նշում չի պարունակում փաստաթղթի մուտքի հերթական համարի մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված դրոշմակնիքը չի կարող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով հանդիսանալ հայցադիմումը 25.12.2009 թվականին դատարանում ստացված լինելու մասին տեղեկություն պարունակող (փաստը հաստատող) թույլատրելի գրավոր ապացույց, վերը նշված կանոնների 1-ին բաժնի 5-րդ կետի իմաստով պարտադիր լինել դատավորի համար և դատական ակտ կայացնելիս դրվել դատարանի հետևությունների հիմքում:

Փաստորեն, Դատարանը հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը մերժելիս, իսկ Վերաքննիչ դատարանն այդ մերժումը համարելով իրավացի, որպես միակ

հիմք ընդունել են վերը նշված պատճառաբանությամբ ոչ թույլատրելի հանդիսացող ապացույցը:

Միաժամանակ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.12.2007 թվականի թիվ 23Լ որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնների 3-րդ բաժնի 3-րդ կետի համաձայն՝ փաստաթղթերն առձեռն ստանալիս գրասենյակի պատասխանատու դատական ծառայողն ստուգում է փաստաթղթի ամբողջականությունը՝ կից փաստաթղթերի ցանկի կամ որևէ փաստաթղթի, փաստաթղթի հավելվածի հետ: Ներկայացված փաստաթղթի ամբողջականությունն ստուգելուց հետո գրասենյակի պատասխանատու դատական ծառայողը **փաստաթղթի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա** դնում է փաստաթղթերի ստացման դրոշմակնիքը, նախատեսված մասում լրացնում ամսաթիվը (անհրաժեշտության դեպքում ժամը) և փաստաթղթի ստացումը հավաստում է իր ստորագրությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ գործով չի պարզվել՝ արդյոք առկա է Սամվել Պողոսյանի կողմից առձեռն ներկայացված հայցադիմումի պատճենը կամ դրա երկրորդ օրինակը, ինչպես նաև չի հետազոտվել նշված փաստաթուղթը՝ պարզելու համար, թե արդյոք դրա վրա գրասենյակի պատասխանատու դատական ծառայողի կողմից դրված է այն ստանալու վերաբերյալ դրոշմակնիքը, նախատեսված մասում լրացված է այն ստանալու ամսաթիվը և փաստաթղթի ստացումը հավաստված է ստորագրությամբ, թե ոչ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.04.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2499/02/10
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Ն. Հովսեփյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2499/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարեն և Վազգեն Հարությունյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Հովհաննես Շահինյանի, Սաթիկ Սեյրանյանի հայցի ընդդեմ Կարեն և Վազգեն Հարությունյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հովհաննես Շահինյանը, Սաթիկ Սեյրանյանը պահանջել են համապարտության կարգով Կարեն և Վազգեն Հարությունյաններից հօգուտ իրենց բռնագանձել 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև 31.12.2009 թվականից 10.000 ԱՄՆ դոլարի և 16.05.2010 թվականից 100.000 ԱՄՆ դոլարի մասերով մինչև պարտավորության դադարման օրը տոկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 19.08.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.11.2011 թվականի որոշմամբ Կարեն և Վազգեն Հարությունյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.08.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Կարեն և Վազգեն Հարությունյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Հովհաննես Շահինյանը, Սաթիկ Սեյրանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 11-րդ, 12-րդ, 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ, 78-րդ, 118-րդ, 130-132-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ, 1287-րդ հոդվածները, ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 308-րդ, 466-րդ, 475-րդ, 480-րդ հոդվածները (կամ համապատասխանաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ, 395-րդ, 396-րդ, 447-րդ, 481-491-րդ հոդվածները), որոնք պետք է կիրառեր, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ, 345-րդ, 347-րդ, 362-րդ, 408-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը 03.12.2009 թվականի ստացականին տվել է առաջնային նշանակություն՝ որպես իբր բանավոր պայմանավորվածության արդյունքում կազմված պարտավորությունների մասին պատշաճ գրավոր ապացույց և պարտադիր կատարման ենթակա գործարքի ձև, մինչդեռ 09.12.2009 թվականին այլ էական պայմաններով կնքված և նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրին տվել է երկրորդական նշանակություն՝ այն ընդամենը դիտելով որպես բանավոր գործարքի կատարմանն ուղղված արդյունք, ինչպես նաև եզրահանգում կատարելով, որ Հովհաննես Շահինյանն իբր դրանով իսկ պատշաճ կատարել է իր բաժնեմասը վաճառելու պարտավորությունը, իսկ բողոք բերած անձինք չեն վճարել բանավոր գործարքով պայմանավորված գումարը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցած անձանց (երրորդ անձանց) համար, իսկ տվյալ դեպքում ապագայում նոտարական կարգով վավերացման ենթակա առուվաճառքի պայմանագիր կնքելու մտադրություն են ունեցել «ԳՐԻԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 51 տոկոսի բաժնետեր Հովհաննես Շահինյանը և Վազգեն Հարությունյանը, հետևաբար ո՛չ Կարեն Հարությունյանը և ո՛չ էլ Սաթիկ Սեյրանյանը 09.12.2009 թվականին կնքված պայմանագրի կողմեր չեն հանդիսացել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում Վազգեն Հարությունյանը և Հովհաննես Շահինյանը կնքել են նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագիր՝ սահմանելով դրա համար Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությանը (նաև՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը) չհակասող բոլոր էական պայմանները, միաժամանակ նրանք չեղյալ են համարել մինչ նշված պայմանագրի կնքումը նախկին բոլոր այլ բանավոր կամ գրավոր պարտավորությունները և պայմանավորվածությունները:

Վերաքննիչ դատարանը սույն գործի քննությունը նշանակել է 09.11.2011 թվականին՝ ժամը 12:00-ին, իսկ դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցումը Կարեն Հարությունյանը ստացել է միայն 10.11.2011 թվականին, սակայն Վերաքննիչ դատարանը, պարզելով այդ հանգամանքը, գործի քննությունը չի հետաձգել, այլ բավարար համարելով տվյալ պահին միայն Վազգեն Հարությունյանի ներկայությունը՝ շարունակել և ավարտել է այն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքն-

նիչ դատարանի 24.11.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վճռաբեկ բողոքում Վազգեն Հարությունյանը նշել է, որ Սաթիկ Սեյրանյանը որպես վաճառող հանդես չի եկել, իր հետ որևէ բանավոր կամ գրավոր պայմանավորվածություն չի ունեցել և որպես ապագա գնորդ՝ ինքը ստացականի տակ չի ստորագրել, մինչդեռ Վազգեն Հարությունյանը հենց վճռաբեկ բողոքում նշել է նաև, որ ինքն է հանձնարարել որդուն, որպեսզի 40.000 ԱՄՆ դոլարը հանձնի Սաթիկ Սեյրանյանին, ինչն էլ հանդիսացել է Ընկերության բաժնեմասի առուվաճառքի գնի դիմաց նախապես պայմանավորված վճարվելիք գումարի մի մասը:

Ավելին, Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը ձեռք բերելու պահին Հովհաննես Շահինյանը և Սաթիկ Սեյրանյանը գտնվել են օրինական ամուսնության մեջ, հետևաբար Ընկերության բաժնեմասը հանդիսացել է վերջիններիս ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, այսինքն՝ բաժնեմասն ինչպես ձեռքբերման, այնպես էլ օտարման ժամանակ նրանց է պատկանել համատեղ սեփականության իրավունքով:

Ինչ վերաբերում է Վազգեն Հարությունյանի այն փաստարկին, որ ինքը Կարեն Հարությունյանին չի լիազորել բացի գումարը հանձնելուց և դրա մասին ստացական վերցնելուց որևէ այլ բան պարտավորվելու, ապա գործարքի գինը փոխադարձ համաձայնությամբ սահմանվել էր 150.000 ԱՄՆ դոլար, այսինքն՝ մնացած 110.000 ԱՄՆ դոլարը ենթակա էր վճարման, հետևաբար Վազգեն Հարությունյանի այն դիրքորոշումը, որ ինքը 40.000 ԱՄՆ դոլարը վճարելուց բացի որևէ այլ բան չի պարտավորվել, անհիմն է:

Բողոք բերած անձանց այն պատճառաբանությունը, որ Դատարանը, 03.12.2009 թվականին կազմված ստացականին առաջնային նշանակություն տալով, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, նույնպես անհիմն է և առարկայազուրկ, քանի որ այդ ստացականը՝ որպես գրավոր ապացույց, պարունակում է Վազգեն Հարությունյանի կողմից ձեռք բերված Ընկերության բաժնեմասի գնի չափի վերաբերյալ տեղեկություն, որը ստորագրվել է Վազգեն Հարությունյանի հանձնարարությամբ նրա որդու կողմից, հետևաբար սույն վեճի օբյեկտիվ լուծման համար այն ունի էական ապացուցողական նշանակություն:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրով կողմերը չեղյալ են համարել մինչ դրա կնքումը նախկին բոլոր այլ բանավոր կամ գրավոր պարտավորությունները և ներկայացումները, ապա այդ փաստարկը նույնպես անհիմն և առարկայազուրկ է, քանի որ Վազգեն Հարությունյանը և նրա ներկայացուցիչը հայցադիմումի պատասխանում, ինչպես նաև դատաքննության ողջ ընթացքում ցուցմունքներ են տվել այն մասին, որ 10.000 ԱՄՆ դոլարը 21.12.2009 թվականին փոխանցել են Հովհաննես Շահինյանին՝ նրա ընտանիքին հավատարիմ մարդու միջոցով, այսինքն՝ 09.12.2009 թվականի առուվաճառքի պայմանագիրը կնքվելուց հետո նույն գործարքի շրջանակներում Վազգեն Հարությունյանի պնդմամբ դեռ շարունակվել են իր և Հովհաննես Շահինյանի փոխհարաբերությունները՝ հատկապես գործարքի գնի՝ 150.000 ԱՄՆ դոլարի մասով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 03.12.2009 թվականի ստացականի համաձայն՝ Սաթիկ Սեյրանյանը 03.12.2009 թվականին Կարեն Հարությունյանից ստացել է 40.000 ԱՄՆ դոլար:

Ստացականում նշվել է, որ պայմանավորվածության համաձայն՝ ևս 10.000 ԱՄՆ

դոլար պետք է տրվի 30.12.2009 թվականին, իսկ գումարի մնացած մասը՝ 100.000 ԱՄՆ դոլարը, պետք է տրվի մինչև 15.05.2010 թվականն ընկած ժամանակահատվածում:

Ստացականի համաձայն՝ Սաթիկ Սեյրանյանը Հովհաննես Շահինյանի կինն է, իսկ Կարեն Հարությունյանը՝ Վազգեն Հարությունյանի որդին **(հատոր 1-ին, գ.թ. 9):**

2) 09.12.2009 թվականին ՌԴ Կրասնոդարի երկրամասի Սոչի քաղաքում կնքված «Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի առուվաճառքի» թիվ 23 ԱՐ 787226 պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Հովհաննես Շահինյանը, ում անունից գործում է Դոնարա Կասյանը, Վազգեն Հարությունյանին վաճառեց Ընկերության կանոնադրական կապիտալում իրեն պատկանող ամբողջ բաժնեմասը: Ընկերության կանոնադրական կապիտալում Հովհաննես Շահինյանին պատկանող բաժնեմասի չափը կազմում է 51 տոկոս:

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ Ընկերության նշված բաժնեմասի անվանական արժեքը, համաձայն Իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրի 08.12.2009 թվականի քաղվածքի, կազմում է 5.100 ռուբլի:

Պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ Ընկերության կանոնադրական կապիտալում նշված բաժնեմասը կողմերը գնահատում են 5.100 ռուբլի:

Պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ Վազգեն Հարությունյանը Հովհաննես Շահինյանից գնեց Ընկերության կանոնադրական կապիտալում նշված բաժնեմասը 5.100 ռուբլով: Կողմերի միջև հաշվարկը կատարված է ամբողջությամբ: Մինչև պայմանագրի ստորագրումը Հովհաննես Շահինյանը, ում անունից գործում է Դոնարա Կասյանը, Վազգեն Հարությունյանից ստացել է 5.100 ռուբլի:

Պայմանագրի 6-րդ կետի համաձայն՝ նոտարի կողմից կողմերին բացատրվեց, որ գնի մասին համաձայնությունը հանդիսանում է նույն պայմանագրի էական պայման, և որ Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի իրական գինն ու իսկական մտադրությունները նրանց կողմից թաքցնելու դեպքում նրանք ինքնուրույն են կրում գործարքն անվավեր ճանաչելու, ինչպես նաև այլ բացասական հետևանքների ի հայտ գալու ռիսկը:

Պայմանագրի 13-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը պարունակում է նույն պայմանագրի առարկայի վերաբերյալ կողմերի միջև համաձայնությունների ողջ ծավալը և չեղյալ է դարձնում բոլոր այլ բանավոր կամ գրավոր պարտավորությունները կամ ներկայացումները, որոնք կողմերը կարող էին ընդունել կամ անել մինչև նույն պայմանագրի կնքումը **(հատոր 1-ին, գ.թ. 51-53):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը բազմա-

կողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Վազգեն Հարությունյանի որդի Կարեն Հարությունյանի և Հովհաննես Շահինյանի կնոջ՝ Սաթիկ Սեյրանյանի միջև 03.12.2009 թվականին կազմված ստացականի համաձայն՝ Սաթիկ Սեյրանյանը 03.12.2009 թվականին Կարեն Հարությունյանից ստացել է 40.000 ԱՄՆ դոլար, ևս 10.000 ԱՄՆ դոլար Սաթիկ Սեյրանյանին պետք է տրվի 30.12.2009 թվականին, իսկ գումարի մյուս մասը՝ 100.000 ԱՄՆ դոլարը, պետք է տրվի մինչև 15.05.2010 թվականն ընկած ժամանակահատվածում: Այնուհետև Հովհաննես Շահինյանի ներկայացուցիչ Դոնարա Կապյանը և Վազգեն Հարությունյանը 09.12.2011 թվականին կնքել են Ընկերության կանոնադրական կապիտալում Հովհաննես Շահինյանին պատկանող ամբողջ 51 տոկոս բաժնեմասի առուվաճառքի պայմանագիր: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Դատարանը պատշաճ գնահատման է արժանացրել գործում առկա բոլոր ապացույցները և դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ Ընկերության բաժնեմասի օտարման արդյունքում Կարեն և Վազգեն Հարությունյանների մոտ Հովհաննես Շահինյանի, Սաթիկ Սեյրանյանի նկատմամբ ծագել է գումար վճարելու պարտավորություն:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործում առկա ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես՝ սույն գործի փաստերի համաձայն՝ 03.12.2009 թվականի ստացականով հաստատվում է այն փաստական հանգամանքը, որ Սաթիկ Սեյրանյանը՝ Հովհաննես Շահինյանի կինը, նույն թվականին Կարեն Հարությունյանից՝ Վազգեն Հարությունյանի որդուց, ստացել է 40.000 ԱՄՆ դոլար, ևս 10.000 ԱՄՆ դոլար պետք է տրվեր 30.12.2009 թվականին, իսկ գումարի մնացած մասը՝ 100.000 ԱՄՆ դոլարը, պետք է տրվեր մինչև 15.05.2010 թվականն ընկած ժամանակահատվածում: Միաժամանակ 09.12.2009 թվականի «Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի առուվաճառքի» թիվ 23 ԱՐ 787226 պայմանագրի 1-ին և 5-րդ կետերով հաստատվում են այն փաստական հանգամանքները, որ Հովհաննես Շահինյանը Վազգեն Հարությունյանին վաճառել է Ընկերության կանոնադրական կապիտալում իրեն պատկանող ամբողջ բաժնեմասը, Վազգեն Հարությունյանը Հովհաննես Շահինյանից գնել է Ընկերության կանոնադրական կապիտալում նշված բաժնեմասը 5.100 ռուբլով, և կողմերի միջև հաշվարկը կատարվել է ամբողջությամբ, իսկ նույն պայմանագրի 13-րդ կետով հաստատվում է այն փաստական հանգամանքը, որ այդ պայմանագիրը չեղյալ է դարձնում բոլոր այլ բանավոր կամ գրավոր պարտավորությունները կամ ներկայացումները, որոնք կողմերը կարող էին ընդունել կամ անել մինչև նույն պայմանագրի կնքումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով:

Վերոնշյալ դրույթի բովանդակության վերլուծությունից հետևում է, որ կողմերը, օգտվելով պայմանագրի ազատության սկզբունքից, կարող են չսահմանափակվել օրենքով նշված՝ պարտավորությունների դադարման հիմքերով և պայմանագրում նախատեսել օրենքով չսահմանված այլ հիմք:

Համադրելով վերոնշյալ դրույթը սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 03.12.2009 թվականի ստացականը կազմելուց հետո

09.12.2009 թվականին կնքված «Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի առուվաճառքի» թիվ 23 ԱԳ 787226 պայմանագրի ուժով (13-րդ կետ) կողմերը դադարեցրել են բոլոր այն բանավոր կամ գրավոր պարտավորությունները կամ ներկայացումները, որոնք կողմերը կարող էին ընդունել կամ անել մինչև այդ պայմանագրի կնքումը, որպիսի փաստական հանգամանքն անտեսվել և չի գնահատվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց 09.12.2009 թվականի «Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի առուվաճառքի» թիվ 23 ԱԳ 787226 պայմանագիրը գնահատելու միայն 03.12.2009 թվականի ստացականի հիմքով հայցի բավարարումը չունի որևէ իրավական հիմք, և նման պայմաններում սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց (երրորդ անձանց) համար:

Վճռաբեկ դատարանը նշված դրույթի հիման վրա գտնում է, որ 09.12.2009 թվականի «Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի առուվաճառքի» թիվ 23 ԱԳ 787226 պայմանագրի կողմերն են հանդիսացել Հովհաննես Շահինյանը և Վազգեն Հարությունյանը, մինչդեռ Դատարանը սույն գործով Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի վաճառքի հիմքով գումարի վճարման պարտավորություն է դրել նաև Կարեն Հարությունյանի վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կարեն Հարությունյանը 03.12.2009 թվականի ստացականով ևս վճարման որևէ պարտավորություն չի ստանձնել, սակայն նշված հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից նույնպես անտեսվել են:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին, ինչպես նաև վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից վերոգրյալ պայմանագրի անտեսման և չգնահատման պայմաններում այդ փաստարկները սույն գործի լուծման համար չունեն որևէ էական նշանակություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0720/02/10
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Կ. Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0720/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ անհատ ձեռնարկատեր Վաչագան Հովհաննիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Վաչագան Հովհաննիսյանից հօգուտ Ընկերության բռնագանձել 864.000 ՀՀ դրամ՝ որպես պարտավորության չկատարման գումար, 124.800 ՀՀ դրամ՝ որպես «Առևտրային գործունեության թույլտվության» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 6-րդ գլխի 19-րդ կետով նախատեսված տուժանքի գումար և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով 192.325 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վաչագան Հովհաննիսյանը պահանջել է Ընկերությունից հօգուտ Վաչագան Հովհաննիսյանի բռնագանձել 540.000 ՀՀ դրամ՝ որպես անվավեր գործարքի շրջանակներում վճարված գումար, ինչպես նաև 540.000

ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարները, որոնք կառաջանան 01.12.2007 թվականից մինչև գումարի փաստացի վճարումը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Վարդանյան) (այսուհետ՝ Դատարան) 20.09.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.12.2011 թվականի որոշմամբ Վաչագան Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 20.09.2011 թվականի վճիռը և այն փոփոխվել է՝ հայցը մերժվել է, հակընդդեմ հայցը՝ գումարի բռնագանձման պահանջի մասով, բավարարվել է, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ հաշվեգրելու պահանջը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ, 304-րդ, 437-րդ և 438-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 220-րդ և 221-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Երևանի Սարյան 22 հասցեում շենքի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը ծագել է ՀՀ կառավարության 03.03.2005 թվականի թիվ 336-Ա որոշման հիման վրա, ինչպես նաև այն հանգամանքը, որ գործում առկա է Երևանի Սարյան 22 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը հաստատող սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով կնքված Պայմանագրի իրավական կարգավիճակի և բովանդակության մասին Ընկերության ներկայացրած վերլուծություններն ու փաստարկները, որևէ կերպ չի հիմնավորել, թե Ընկերության և Վաչագան Հովհաննիսյանի միջև կնքված Պայմանագիրը ինչով է հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կամ այլ օրենքի պահանջներին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Վաչագան Հովհաննիսյանը Պայմանագիրը կնքելիս և հետագայում՝ դրա գործողության ընթացքում, որևէ պահանջ կամ առարկություն չի ներկայացրել դրա իրավական կարգավիճակի կամ բովանդակության վերաբերյալ, որևէ անգամ չի նշել, որ կնքված պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր և Ընկերությունից չի պահանջել իրականացնել նոտարական վավերացում և պետական գրանցում: Բացի այդ, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա առևտրի իրականացման վայրում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, և այլն) տաղավարների կամ վաճառատեղերի տրամադրումը ևս չի հանդիսանում վարձակալություն, ինչից էլ բխում է, որ ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինները ևս գտնում են, որ անշարժ գույքի օգտագործման ոչ բոլոր դեպքերը պետք է համարվեն վարձակալու-

թյուն, և կողմերը կարող են կնքել այնպիսի պայմանագրեր, որոնք արտահայտում են վերջիններիս համաձայնությունները և համապատասխանում են կողմերի միջև ձևավորված հարաբերություններին և իրականացվող գործունեության նպատակին:

Վերաքննիչ դատարանը, առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելով և սահմանելով երկկողմանի ռեստիտուցիայի ռեժիմ, անտեսել է, որ կիրառել է միակողմանի ռեստիտուցիա, քանի որ Ընկերությունից բռնագանձել է Վաչագան Հովհաննիսյանի վճարածը՝ անտեսելով, որ Վաչագան Հովհաննիսյանը պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում տիրապետել և օգտագործել է Ընկերության գույքը և պետք է հատուցի դրա արժեքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.12.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 01.10.2007 թվականին Ընկերության և Վաչագան Հովհաննիսյանի միջև կնքված թիվ 030 թույլտվության համաձայն՝ Երևանի Սարյան 22 հասցեում՝ հայցվորին պատկանող թիվ 0002 փոստային բաժանմունքի շենքում տրամադրված տարածքում, Վաչագան Հովհաննիսյանին թույլատրվել է իրականացնել բջջային հեռախոսների վաճառք (հատոր 1-ին, գ.թ.8-14):

2. Սեփականության իրավունքի գրանցման 02.11.2006 թվականին տրված թիվ 2246617 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Սարյան 22 հասցեի անշարժ գույքը գրանցված է Ընկերության անվամբ (հատոր 2-րդ, գ.թ.36-43):

3. Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերությունն ունի լիարժեք իրավունքներ իր փոստային բաժանմունքներում իրականացնել տարբեր տեսակի գործունեություն, այդ թվում որոշակի կարգով ու պայմաններով իրականացնելու տարբեր տեսակի ապրանքների մանրածախ առուվաճառք (հատոր 1-ին, գ.թ.44-64):

4. Պատասխանողի կողմից «Թույլտվության» պայմաններով սահմանված ժամանակահատվածում Վաչագան Հովհաննիսյանը գործունեություն է իրականացրել Ընկերության թիվ 0002 փոստային բաժանմունքի տարածքում և որոշակի ժամանակահատվածի համար կատարել է 540.000 ՀՀ դրամի չափով վճարումներ, սակայն Վաչագան Հովհաննիսյանի կողմից պարտավորությունները ամբողջությամբ չեն կատարվել (հատոր 1-ին, գ.թ.40):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում

որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե կողմերը պայմանավորվել են պայմանագիրը կնքել որոշակի ձևով, ապա այն կնքված է համարվում դրան պայմանավորված ձև տալուց հետո, թեկուզև պայմանագրի տվյալ տեսակի համար այդ ձևն օրենքով չի պահանջվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման կամ պայմանագրերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որոշակի պայմանագրերի տարրերի առկայության բացահայտումը մի քանի փուլերից բաղկացած գործընթաց է, որն իրենից ներկայացնում է պայմանագրի մեկնաբանության բաղկացուցիչ մաս:

Մասնավորապես, պայմանագրի իրավաբանական դասակարգման համար պետք է՝

- պարզվեն տվյալ պայմանագրի պայմանները (առարկան, գինը, ձևը, կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակը),
- դրանք համադրվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրերի վերաբերյալ ընդհանուր և կոնկրետ պայմանագրի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հատուկ նորմերի հետ պայմանագրի տեսակը որոշելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման նկատմամբ կիրառելի են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիական իրավունքի նորմերի և պայմանագրի մեկնաբանության վերաբերյալ հոդվածները:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին: Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկ-

նաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (տես «Կարատ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ԵԴ1/0303/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Դատարանը հայցի բավարարման և հակընդդեմ հայցի մերժման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքված «Թույլտվություն» վերնագրով գրված պայմանագիրը կազմվել է Վաչագան Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտի հիման վրա և նա չի առարկել այդ ձևով պայմանագիր կնքելուն, որում ամրագրվել են կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել նաև պայամանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Ուստի կողմերի միջև կնքված պայմանագրով Ընկերությունը տրամադրել է այդ տարածքը Վաչագան Հովհաննիսյանին՝ Ընկերության հաճախորդներին սպասարկելու նպատակով որոշակի առևտրային գործունեություն իրականացնելու համար:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի բավարարման և հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «կնքված «Թույլտվություն» վերտառությամբ փաստաթուղթն իր մեջ պարունակում է տարածքի վարձակալության պայմանագրին վերաբերող դրույթներ և հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ կողմերը չեն պահպանել վարձակալության պայմանագրին առաջադրվող պայմանները, ինչն էլ հանգեցրել է պայմանագրի անվավերության:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Վաչագան Հովհաննիսյանի միջև 01.10.2007 թվականին կազմվել է թիվ 030 թույլտվությունը, որի համաձայն Ընկերությունը Երևանի թիվ 02 փոստային մասնաճյուղում թույլատրել է Վաչագան Հովհաննիսյանին՝ Ընկերության հաճախորդներին սպասարկելու նպատակով որոշակի առևտրային գործունեություն իրականացնելու համար, իսկ վերջինս էլ պարտավորվել է իրականացնել բացառապես նշված գործունեությունը, վճարել թույլտվության տարեկան վճարը և գործել՝ Ընկերության ներքին իրավական ակտերի և նույն թույլտվությանը կից տրամադրված 31.07.2007 թվականի Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան: Պայմանագրի 5-րդ գլխի 15-րդ և 16-րդ կետերի համաձայն՝ թույլտվության տարեկան վճարը կազմել է 1.560.000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվեր ամսական համամասնություններով, իսկ 6-րդ գլխի 19-րդ կետի համաձայն՝ թույլտվություն ստացողի կողմից թույլտվության տարեկան վճարի ամսական համամասնությունը նույն թույլտվությամբ սահմանված ժամկետում չվճարելու դեպքերում թույլտվություն ստացողը Ընկերությանը պարտավորվել է վճարել տուգանք՝ թույլտվության տարեկան վճարի 1 տոկոսի չափով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կողմերի համաձայնությունը և կամահայտնությունը պայմանագիրը կնքելիս ուղղված է եղել Ընկերության տարածքում հաճախորդներին սպասարկելու նպատակով որոշակի առևտրային գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալուն, այլ ոչ թե անշարժ գույքի (կամ դրա մի մասի) վարձակալությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության

ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը, իսկ վերը հիշատակված հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ պարտապանը պարտավոր է ամբողջությամբ կատարել պարտավորության բովանդակությունից և օրենադրությունից բխող բոլոր պարտավորությունները:

Վերոգրյալ իրավական նորմերը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ սույն պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով չնախատեսված պայմանագիր է, որը, սակայն, չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերի պահանջներին և հստակորեն արտահայտում է այն համաձայնությունը, որն Ընկերությունն առաջարկել էր Վաչագան Հովհաննիսյանին, իսկ վերջինս էլ ընդունել էր այն:

Այսպիսով, սույն գործով հիմնավորված է, որ Վաչագան Հովհաննիսյանը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ սահմանված ժակետներում չի վճարել պարտավորության գումարը, որն Ընկերության կողմից տրված դուրս գրված հաշիվների և ստացված վճարումների մասին տեղեկանքի համաձայն կազմել է 864.000 ՀՀ դրամ:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի համաձայն՝ տուժանք է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վաչագան Հովհաննիսյանը պատշաճ կարգով չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորու-

թյունը, հետևաբար Ընկերության նկատմամբ ունեցած պարտավորության գումարը՝ ներառյալ պայմանագրով սահմանված տուգանքը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները ենթակա են բռնագանձման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 29.12.2011 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-2412-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.12.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 20.09.2011 թվականի վճռին:

2. Վաչագան Հովհաննիսյանից հօգուտ «Հայփոստ» ՓԲԸ-ի բռնագանձել 51.634 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Վաչագան Հովհաննիսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 51.634 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2011 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԾԴ/1103/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ա. Մկրտչյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԾԴ/1103/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հմայակ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.04.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Արմեն Տիշինյանի հայցի ընդդեմ Հմայակ Խաչատրյանի՝ պայմանագիրը լուծելու և գումարը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Տիշինյանը պահանջել է լուծել 04.04.2011 թվականի իր և Հմայակ Խաչատրյանի միջև կնքված ավտոմեքենայի տարաժամկետ առուվաճառքի պայմանագիրը, պարտավորեցնել Հմայակ Խաչատրյանին վերադարձնել ավտոմեքենայի համար վճարված 3.000 ԱՄՆ դոլարը:

Արմեն Տիշինյանը, ավելացնելով հայցային պահանջների չափը, պահանջել է պարտավորեցնել Հմայակ Խաչատրյանին հատուցելու պարտավորությունների խախտման հետևանքով առաջացած վնասը՝ վերադարձնել ավտոմեքենայի համար վճարված 3.000 ԱՄՆ դոլարը, ինչպես նաև 04.04.2011 թվականից հաշվարկված տոկոսները՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով և իրավաբանական օգնության համար «Պողգան» ՍՊԸ-ին վճարված 380.000 ՀՀ դրամը:

ՀՀ Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Կուբանյան) (այսուհետ՝ Դատարան) 23.12.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է «Լուծել 04.04.2011թ. Արմեն Տիշինյանի և Հմայակ Խաչատրյանի միջև կնքված «Ford Tranzit 2.5» մակնիշի 23 US 977 պետհամարանիշի ավտոմեքենայի տարաժամկետ առուվաճառքի պայմանագիրը: Հմայակ Խաչատրյանից հօգուտ Արմեն Տիշինյանի բռնագանձել 2.000 (երկու հազար) ԱՄՆ դոլար որպես «Ford Tranzit 2.5» մակնիշի 23 US 977 պետհամարանիշի ավտոմեքենայի համար վճարված գումար, վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև 2.000 (երկու հազար) ԱՄՆ դոլարի փաստացի մարումը նշված գումարի վրա ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով հաշվարկված տոկոսները, ինչպես նաև 380.000 (երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես իրավաբանական օգնության համար «Պողգան» ՍՊ ընկերությանը վճարված գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.04.2012 թվականի որոշմամբ Հմայակ Խաչատրյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ մասնակիորեն բեկանվել է Դատարանի 23.12.2011 թվականի վճռի՝ Հմայակ Խաչատրյանից հօգուտ Արմեն Տիշինյանի որպես իրավաբանական օգնության համար «Պողգան» ՍՊ ընկերությանը վճարված գումար 380.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասը և այդ մասով փոփոխվել է. Հմայակ Խաչատրյանից հօգուտ Արմեն Տիշինյանի որպես փաստաբանի վարձատրության գումար բռնագանձվել է 100.000 ՀՀ դրամ: Վճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հմայակ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետը, 466-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 468-րդ հոդվածի 2-րդ կետը, 470-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, անտեսել է այն հանգամանքը, որ Արմեն Տիշինյանի և Հմայակ Խաչատրյանի միջև 04.04.2011 թվականին կնքված տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով Հմայակ Խաչատրյանն իրեն պատկանող նշված ավտոմեքենան հանձնել է Արմեն Տիշինյանին, որպիսի փաստը հիմնավորվում է նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին 04.08.2011 թվականի որոշմամբ, մինչդեռ Արմեն Տիշինյանը պայմանագրով ստանձնած պարտավորությունը չի կատարել և 05.07.2011 թվականից սկսած չի վճարել ավտոմեքենայի չվճարված մասը, ինչը վկայում է Արմեն Տիշինյանի կողմից թույլ տրված նշված պայմանագրի էական խախտման մասին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Հմայակ Խաչատրյանի կողմից ավտոմեքենան Արմեն Տիշինյանի տիրապետությունից հանելու նպատակը եղել է ոչ թե պայմանագրային հարաբերությունների դադարումը, այլ պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումն ավտոմեքենայի չվճարված մասի համար:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Արմեն Տիշինյանը չի պահպանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածով սահմանված պայմանագիրը լուծելու կարգը: Այսինքն՝ Արմեն Տիշինյանը կարող էր պայմանա-

գիրը լուծելու պահանջ ներկայացնել միայն պայմանագրի լուծման առաջարկի վերաբերյալ Հմայակ Խաչատրյանի կողմից մերժումն ստանալուց կամ պատասխան չստանալուց կամ պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնություն կնքելուց հրաժարվելու դեպքում: Հատկանշական է, որ 04.04.2011 թվականին կնքված տարաժամկետ առուվաճառքի պայմանագրի 3.5 կետով սահմանվել է, որ նշված պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

Փաստորեն, Արմեն Տիշինյանի կողմից պայմանագիրը լուծելու արտադատական կարգը չպահպանելու հետևանքով Հմայակ Խաչատրյանը կրել է լրացուցիչ պարտավորություն՝ դատական ծախս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.04.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Արմեն Տիշինյանի և Հմայակ Խաչատրյանի միջև 04.04.2011 թվականին կնքված տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով Հմայակ Խաչատրյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող «Ford Tranzit 2.5» մակնիշի 23 US 977 պետհամարանիշի ավտոմեքենան 8.000 ԱՄՆ դոլարով վաճառել է Արմեն Տիշինյանին: Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Արմեն Տիշինյանը Հմայակ Խաչատրյանից կանխիկ ստացել է 2.000 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 6.000 ԱՄՆ դոլարը Արմեն Տիշինյանը պարտավորվել է վճարել 3 ամիսը լրանալուց անմիջապես հետո, սկսած՝04.04.2011 թվականից (հատոր 1-ին, գ.թ. 8):

2. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 04.08.2011 թվականի որոշմամբ պարզվել է. «2011թ. հուլիսի 15-ին ժամը 06.30-ի սահմաններում, Երևան քաղաքի Օրբելի փողոցում թիվ 67 շենքի դիմաց ավտովարորդ Յուրի Ռաֆիկի Ստեփանյանն իրեն ամրակցված «Ռենո» մակնիշի S 71-38 պ/հ ավտոմեքենայով ընդհարվել է մայթեզրի մոտ կայանված Արմեն Միշայի Տիշինյանին պատկանող «Ֆորդ» մակնիշի 23 US 977 պ/հ ավտոմեքենային» (հատոր 1-ին, գ.թ. 60):

3. 04.04.2011 թվականին կնքված տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով ստանձնած պարտավորությունն Արմեն Տիշինյանի կողմից պատշաճ չկատարելու՝ավտոմեքենայի վաճառքի գումարն ուշացնելու հետևանքով 01.08.2011 թվականից ավտոմեքենան գտնվում է Հմայակ Խաչատրյանի մոտ (հատոր 2-րդ, գ.թ. 5):

4. 27.09.2011 թվականի ծառայությունների մատուցման թիվ 61 պայմանագրով և 27.09.2011 թվականի թիվ 94 հաշվով և թիվ 110927004564004 օրդերով Հմայակ Խաչատրյանը «Շահբազյան և գործընկերներ» ՍՊ ընկերությանը վճարել է 200.000 ՀՀ դրամ՝ իրավաբանական ծառայություն մատուցելու համար (հատոր 1-ին, գ.թ. 56-58):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ

օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Նույն օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այն դեպքում, երբ առուվաճառքի պայմանագրով նախատեսված է ապրանքի համար վճարել այն գնորդին հանձնելուց որոշակի ժամանակ հետո (ապրանքի ապառիկ վաճառք), գնորդը պարտավոր է վճարել պայմանագրով նախատեսված ժամկետում, իսկ եթե նման ժամկետ նախատեսված չէ պայմանագրով՝ նույն օրենսգրքի 352 հոդվածին համապատասխան որոշվող ժամկետում:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Տիշինյանի և Հմայակ Խաչատրյանի միջև 04.04.2011 թվականին կնքված տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով Հմայակ Խաչատրյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող «Ford Tranzit 2.5» մակնիշի 23 US 977 պետհամարանիշի ավտոմեքենան 8.000 ԱՄՆ դոլարով վաճառել է Արմեն Տիշինյանին: Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Արմեն Տիշինյանը Հմայակ Խաչատրյանից կանխիկ ստացել է 2.000 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 6.000 ԱՄՆ դոլարը գնորդը պարտավորվել է վճարել 3 ամիսը լրանալուց անմիջապես հետո: 04.04.2011 թվականին կնքված տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով ստանձնած պարտավորությունն Արմեն Տիշինյանի կողմից պատշաճ չկատարելու՝ավտոմեքենայի վաճառքի գումարն ուշացնելու հետևանքով 01.08.2011 թվականից ավտոմեքենան գտնվում է Հմայակ Խաչատրյանի մոտ:

Վերոնշյալից հետևում է, որ Հմայակ Խաչատրյանը 04.04.2011 թվականին կնքված տարաժամկետ առուվաճառքի պայմանագրի որևէ խախտում չի կատարել, այլ օգտվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված հնարավորությունից, ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման՝ ավտոմեքենան պահել է իր մոտ:

Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պայմանագրի կողմի պահանջով այն կարող է լուծվել միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով նման հիմքը բացակայում է, Վճռաբեկ դատարանն արձանագրում է որ Արմեն Տիշինյանի հայցն անհիմն է:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ պայմանագրի փոփոխումը և **լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ **պայմանագրով**: Ընդ որում, օրենսդիրը սույն դրույթով հնարավորություն է ընձեռել կողմին պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջ ներկայաց-

նել դատարան միայն հետևյալ դեպքերից հետո՝

- պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց, կամ
- այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, կամ
- ժամկետի բացակայության դեպքում՝ առաջարկը ստանալուց հետո երեսնօրյա ժամկետում:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 470-րդ հոդվածների 1-ին կետերը, 468-րդ հոդվածի 2-րդ կետը, Հմայակ Խաչատրյանի վերաքննիչ բողոքի՝ պայմանագիրը լուծելու և գումարը բռնագանձելու մասերը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ «04.04.2011թ. Արմեն Տիշինյանի և Հմայակ Խաչատրյանի միջև կնքվել է ավտոմեքենայի տարաժամկետ առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ ավտոմեքենան վաճառվել է 8.000 ԱՄՆ դոլարով, որից Արմեն Տիշինյանը վճարել է 2.000 ԱՄՆ դոլարը, իսկ մնացած 6.000 ՀՀ դրամը պարտավորվել է վճարել 3 ամիսը լրանալուց անմիջապես հետո: Գործի նյութերից հետևում է, որ Արմեն Տիշինյանը 6.000 ԱՄՆ դոլար գումարի վճարման՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունը չի կատարել, որի հետևանքով էլ Հմայակ Խաչատրյանը 01.08.2011թ.-ին գումարն ուշացնելու պատճառաբանությամբ Արմեն Տիշինյանից հետ է վերցրել մեքենան: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թեև Արմեն Տիշինյանը 6.000 ԱՄՆ դոլար գումարի վճարման՝ ավտոմեքենայի տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով ստանձնած պարտավորությունը չի կատարել, այդուհանդերձ Հմայակ Խաչատրյանը փաստացի վերադարձրել է մեքենան, որը մինչև օրս գտնվում է նրա տիրապետության ներքո: Հետևում է, որ բողոքաբերի փաստարկները վերաքննիչ բողոքի սույն մասով հիմնավոր չեն և ենթակա են մերժման»:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ 04.04.2011 թվականի տարաժամկետ առուվաճառքի պայմանագրի 3.4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև **լուծումը կատարվում է կողմերի համաձայնությամբ**՝ նոտարական վավերացմամբ, իսկ 3.5-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կապակցությամբ **ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով,** համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ համապատասխան դատարանի քննությանը:

Տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու կարգը չպահպանելու դեպքը, այսինքն՝ Արմեն Տիշինյանը պայմանագիրը լուծելու սույն հայցային պահանջը ներկայացրել է դատարան պայմանագրի լուծման վերաբերյալ Հմայակ Խաչատրյանին առաջարկ չկատարելու պայմաններում:

Բացի այդ, 04.04.2011 թվականի տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով արդեն իսկ կողմերը նախատեսել են պայմանագրի բոլոր լրացումների և փոփոխությունների, **լուծման կատարում կողմերի համաձայնությամբ**՝ նոտարական վավերացմամբ, ինչպես նաև **պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի լուծում բանակցությունների միջոցով, և միայն համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծման հանձնումը դատարանի քննությանը**:

Ավելին, 04.04.2011 թվականի տարաժամկետ առուվաճառքի պայմանագրով ստանձնած պարտավորություններն Արմեն Տիշինյանի կողմից պատշաճ չկատարելու՝

ավտոմեքենայի արժեքի մնացած մասը չվճարելու, պայմանագրի առարկա ավտոմեքենան ավտովթարի ենթարկելու հետևանքով արժեքն ընկնելու պայմաններում Արմեն Տիշինյանը թույլ է տվել պայմանագրի էական խախտում, որը հանգեցրել է պատասխանող Հմայակ Խաչատրյանի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկել է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս, ինչի ուժով պատասխանող Հմայակ Խաչատրյանի մոտ կարող էր ծագել պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու պահանջ:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված՝ յուրաքանչյուր ապացույց գործում առկա բոլոր ապացույցների համակցության մեջ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատելու պահանջը, կատարել է սխալ եզրահանգում 04.04.2011 թվականի տարաժամկետ առուվաճառքի պայմանագրի պայմանների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի, 468-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ, անտեսել է այն հանգամանքը, որ Արմեն Տիշինյանի կողմից ստանձնած պարտավորությունները պատշաճ չկատարելու, պայմանագրի առարկա ավտոմեքենան ավտովթարի ենթարկելու հետևանքով արժեքը նվազելու պայմաններում ավտոմեքենան պատասխանող Հմայակ Խաչատրյանի մոտ գտնվելը հիմք չէ արձանագրելու, որ հայցվոր Արմեն Տիշինյանի կողմից մինչդատական կարգով պայմանագրի լուծման մասին հայց հարուցելը պահպանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանագրի լուծման ընթացակարգը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել պայմանագրի լուծման կարգը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը որպես դատական ծախս խելամիտ է համարում Հմայակ Խաչատրյանի կողմից դատական ներկայացուցչության համար վճարած 200.000 ՀՀ դրամը՝ հաշվի առնելով հայցագնի չափը, երեք դատական ատյաններում դատական նիստերին ներկայացուցչության ապահովումը, ինչպես նաև Հմայակ Խաչատրյանի իրավունքների պաշտպանությանն ուղղված դատավարական գործողությունների ծավալը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մա-

սին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.04.2012 թվականի որոշումը և այն փոփոխել. Արմեն Տիշինյանի հայցը մերժել:

2. Արմեն Տիշինյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 60 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված և չվճարված պետական տուրք, 13.400 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի չվճարված մաս:

Արմեն Տիշինյանից հօգուտ Հմայակ Խաչատրյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրք և 25.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք, ինչպես նաև 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0688/02/10
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Մատինյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0688/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Քաղաքապետի ընդդեմ «Թրու Ֆրենդս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ տարածքի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, վարձավճարը բռնագանձելու պահանջների մասին, և հակընդդեմ հայցի՝ պայմանագրային պարտավորությունը կատարելուն, այն է՝ վարձակալած տարածքն իր փաստաթղթերով, ներառյալ՝ շինարարության թույլտվությամբ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետը պահանջել է վաղաժամկետ լուծել 05.05.2003 թվականի վարձակալության պայմանագիրը, ինչպես նաև բռնագանձել Ընկերությունից 10.614.671 ՀՀ դրամ՝ որպես չվճարված վարձավճարի և գոյացած տույժի գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին կատարելու վարձակալության պայմանագրով սահմանված պարտավորությունը, այն է՝ տրամադրել վարձակալած տարածքն իր փաս-

տաթղթերով, ներառյալ՝ շինարարության թույլտվությամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 26.04.2011 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.09.2011 թվականի որոշմամբ Քաղաքապետի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.04.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 123-րդ, 130-րդ, 131-րդ, 132-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ, 613-րդ հոդվածները, չի կիրառել նույն օրենսգրքի 345-րդ, 448-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ վարձակալությամբ տրված տարածքն օդային տարածություն է, չի համապատասխանում գործով ձեռք բերված ապացույցներին, քանի որ գործում առկա է անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայական, որն անվավեր կամ առոչինչ չի ճանաչվել, իսկ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գրանցման են ենթակա միայն անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքները, այսինքն՝ տվյալ դեպքում վարձակալի իրավունքը գրանցված է անշարժ գույքի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.09.2011 թվականի որոշման՝ հայցը մերժելու մասը և այդ մասով այն փոփոխել՝ հայցը բավարարել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոք բերած անձը բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 123-րդ, 130-132-րդ հոդվածները, սակայն չի բերել այդ խախտումների վերաբերյալ հիմնավորումներ:

Անհիմն է բողոք բերած անձի այն պատճառաբանությունը, որ Ընկերության իրավունքը գրանցված լինելու պայմաններում գույքը համարվում է վարձակալին հանձնված, քանի որ վարձակալության առարկան օդային տարածություն է, որտեղ Ընկերությունը պետք է կառուցեր հարթակներ, իսկ դրանց վրա՝ առևտրի սրահներ, սակայն այդ հարթակները կառուցելու հնարավորություն չի ունեցել շինարարական թույլտվություն չստանալու պատճառով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Քաղաքապետի 21.02.2002 թվականի «Երևան քաղաքի ստորգետնյա անցումների վերակառուցման և վերին հարթակում առևտրի սրահների շինարարության թույլտ-

վություն տալու մասին» թիվ 268 որոշմամբ Ընկերությանը թույլատրվել է սեփական միջոցների հաշվին Աբովյան և Իսահակյան փողոցների հատման մասում գտնվող չորս ստորգետնյա անցումների մուտքի և ելքի աստիճանների վրա, ծածկի նիշի մակարդակում կառուցել հարթակներ՝ առևտրի սրահների տեղադրման նպատակով **(հատոր 1-ին, գ.թ. 7-8)**:

2) Երևանի քաղաքապետարանի (վարձատու) և Ընկերության (վարձակալ) միջև 05.05.2003 թվականին կնքված թիվ 139 վարձակալության պայմանագրի համաձայն՝ վարձատուն պարտավորվել է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Երևան քաղաքի Աբովյան և Մոսկովյան փողոցների հատման մասում ստորգետնյա անցման երկու մուտքերի և ելքերի աստիճանահարթակների վերնամասում 90 քմ մակերեսով տարածք՝ առևտրի և սպասարկման սրահների տեղադրման նպատակով: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 25 տարի՝ մինչև 05.05.2028 թվականը **(հատոր 1-ին, գ.թ. 13-17)**:

3) 14.05.2003 թվականի անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 0035575 և 0035576 վկայականների համաձայն՝նշված վարձակալության պայմանագրից ծագած իրավունքները ենթարկվել են պետական գրանցման **(հատոր 1-ին, գ.թ. 11-12)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտ է գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինություններն ու հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը **տարածվում է դրա սահմաններում գտնվող վերգետնյա և ստորգետնյա տարածքի** վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ի թիվս այլոց քաղաքացիական իրավունքների օբյեկտ է նաև հողամասի սահմաններում գտնվող վերգետնյա տարածքը, որի նկատմամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հնարավոր է ազատորեն գործարք կնքել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները (չսպառվող գույք): Օրենքով կարող են սահմանվել գույքի տեսակներ, որոնց վարձակալության հանձնելը չի թույլատրվում կամ սահմանափակված է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 613-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձատուն պարտավոր է գույքը վարձակալին տրամադրել վարձակալության պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ենթակա են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս ըստ հայցի Ռազմիկ Մարությանի ընդդեմ Սյուզիան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին, Սյուզիան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54 (ՎԴ) որոշումը)*:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի դատական ակտը, պատճառաբանել է, որ 05.05.2003 թվականի վարձակալության պայմանագրով Երևանի քաղաքապետարանն Ընկերությանը վարձակալության է հանձնել Երևան քաղաքի Աբովյան և Մոսկովյան փողոցների հատման մասում ստորգետնյա անցման երկու մուտքերի և ելքերի աստիճանահարթակների վերնամասում 90 քմ մակերեսով տարածք, որն օդային տարածություն է և անհատականորեն որոշվող գույք հանդիսանալ չի կարող: Ավելին, այն չի համարվում անշարժ գույք, որից ելնելով վարձակալության պայմանագրից ծագած իրավունքները ենթակա չեն պետական գրանցման: Նշված տարածությունը կարող էր դառնալ օգտագործման համար պիտանի, վարձակալության օբյեկտ միայն Քաղաքապետի 21.02.2002 թվականի թիվ 268 որոշման 1-ին կետով արձանագրված ծածկի նիշի մակարդակում հարթակները կառուցելուց հետո:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետի 21.02.2002 թվականի «Երևան քաղաքի ստորգետնյա անցումների վերակառուցման և վերին հարթակում սրահների շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 268 որոշմամբ Ընկերությանը թույլատրվել է սեփական միջոցների հաշվին Աբովյան և Իսահակյան փողոցների հատման մասում գտնվող չորս ստորգետնյա անցումների մուտքի և ելքի աստիճանների վրա, ծածկի նիշի մակարդակում կառուցել հարթակներ՝ առևտրի սրահների տեղադրման նպատակով: 05.05.2003 թվականի թիվ 139 վարձակալության պայմանագրով Երևանի քաղաքապետարանը պարտավորվել է վճարի դիմաց Ընկերության ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Երևան քաղաքի Աբովյան և Մոսկովյան փողոցների հատման մասում ստորգետնյա անցման երկու մուտքերի և ելքերի աստիճանահարթակների վերնամասում **90 քմ մակերեսով տարածք**՝ առևտրի և սպասարկման սրահների տեղադրման նպատակով, ընդ որում, նշված վարձակալության պայմանագրից ծագած իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 05.05.2003 թվականի վարձակալության պայմանագրի առարկա է հանդիսացել Երևան քաղաքի Աբովյան և Մոսկովյան փողոցների հատման մասում ստորգետնյա անցման երկու մուտքերի և ելքերի աստիճանահարթակների վերնամասում **90 քմ մակերեսով տարածքը,** այսինքն՝ Երևանի քաղաքապետարանին պատկանող հողամասի սահմաններում գտնվող **վերգետնյա տարածքը**, որի նկատմամբ վարձակալության իրավունքը ստացել է պետական գրանցում: Հետևաբար, անկախ Քաղաքապետի 21.02.2002 թվականի թիվ 268 որոշմամբ նշված հարթակները կառուցելու հանգամանքից, նշված տարածքը կարող էր դառնալ վարձակալության առարկա:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել իր եզրահանգումները և պատշաճ իրավական գնահատական չի տվել գործում առկա ապացույցներին, մասնավորապես՝ 05.05.2003 թվականին կնքված թիվ 139 վարձակալության պայմանագրին և դրա հիման վրա 14.05.2003 թվականին տրված անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 0035575 և 0035576 վկայականներին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից անտեսվել է նաև այն հանգամանքը, որ Քաղաքապետարանի հայցապահանջը հիմնված է Ընկերության հետ կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի վրա, որից ծագած իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, իսկ վերոնշյալ պայմանագիրը և դրանից ծագող իրավունքի պետական գրանցումը վիճարկված չլինելու պայմաններում ստորադաս դատարանների կողմից վարձակալության պայմանագրի վավերականության հարցին անդրադառնալն օրինաչափ չէ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0175/02/11
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ/0175/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ «Արգինա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ պայմանագիր կնքելուն պարտադրելու պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ 14.06.2004 թվականին կնքված պայմանագրին համապատասխան պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտադրել Կազմակերպությանը կնքել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 1.250 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր՝ համաձայն կից ներկայացված պայմանագրի նախագծի:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը 14.06.2004 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված հողամասի ենթավարձակալության պայմանագրին համապատասխան կնքելու վարձակալության պայմանագիր:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Հովհան-

նիայան) (այսուհետ՝ Դատարան) 02.09.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել: Վճռվել է՝ «Հարկադրել «Արգինա» ՍՊԸ-ին «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ի հետ կնքել «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող և «Արգինա» ՍՊԸ-ի կողմից փաստացի օգտագործվող 1.250 քմ հողամասի վարձակալության պայմանագիր «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ի կողմից հողամասի վարձակալության պայմանագրի նախագծում նշված պայմաններին համապատասխան»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.12.2011 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 02.09.2011 թվականի վճիռը և փոփոխվել՝ հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել: Որոշվել է Ընկերությանը պարտավորեցնել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ուսանողական 1 հասցեում գտնվող 1.250 քմ հողամասի նկատմամբ Կազմակերպության և Ընկերության միջև 14.06.2004 թվականին կնքված ենթավարձակալության մնացած ժամկետի սահմաններում դադարած վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան պայմաններով կնքել նոր պայմանագիր:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետը, 621-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ նախադասությունը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 219-րդ հոդվածների 1-ին կետերի, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ 14.06.2004 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված հողամասի ենթավարձակալության պայմանագիրը դադարել է վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ դադարելու հետ միասին, հետևաբար Կազմակերպության հետ ենթավարձակալության պայմանագրին համապատասխան ենթավարձակալի օգտագործման տակ գտնվող գույքի վարձակալության պայմանագիր կնքելը վարձատուի՝ Ընկերության իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը: Փաստորեն, Վերաքննիչ դատարանը փոփոխել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ նախադասության իմաստը և «իրավունք ունի» եզրույթը մեկնաբանել է «պարտավոր է» իմաստով:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածը, նշել է, որ թեև գույքի սեփականատիրոջ փոփոխությամբ կողմերի միջև 14.06.2004 թվականին կնքված ենթավարձակալության պայմանագիրն օրենքի ուժով դադարել է, սակայն Կազմակերպությունը, որպես ուրիշի հողամասի վրա տեղակայված գույքի սեփականատեր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի ուժով պահպանել է հողամասն օգտագործելու իրավունքը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կազմակերպության անշարժ գույքով ծանրաբեռնված հողամասի մակերեսը կազմում է 126,75 քմ մակերես, ոչ թե 1.250 քմ, հետևաբար Վերաքննիչ դատարանը չէր կարող հանգել հետևության, որ Ընկե-

րությունը պարտավոր է կնքել Կազմակերպության հետ 1.250 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.12.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.09.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 12.09.2002 թվականի վճռով ճանաչվել է Ընկերության օգտագործման իրավունքը վարձակալության հիմքով Վանաձորի Ուսանողական թիվ 1 հասցեում գտնվող 1.250 քմ մակերեսով հողամասի նկատմամբ 99 տարի ժամկետով: Միաժամանակ, ճանաչվել է Կազմակերպության օգտագործման իրավունքը նույն տարածքի նկատմամբ ենթավարձակալության հիմքով 30 տարի ժամկետով (հատոր 1-ին, գ.թ. 60):

2. 14.06.2004 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված հողամասի ենթավարձակալության պայմանագրով Ընկերությունը Վանաձորի Ուսանողական թիվ 1 հասցեում գտնվող 1.250 քմ մակերեսով հողամասը 30 տարի ժամկետով ենթավարձակալության է տրամադրել Կազմակերպությանը: Նշված պայմանագիրը նոտարական կարգով վավերացվել է 30.06.2004 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 61-62):

3. 12.09.2007 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1920002 վկայականի համաձայն՝ Վանաձորի Ուսանողական թիվ 1 հասցեում գտնվող 3.443,8 քմ մակերեսով հանրախանութի և 0,8608 հա մակերեսով հողամասի, այդ թվում նաև՝ Կազմակերպությանը ենթավարձակության իրավունքով տրամադրված 1.250 քմ մակերեսով հողամասի, սեփականատերն Ընկերությունն է, հիմք՝ 23.12.1996 թվականի սեփականաշնորհման թիվ 3933 պայմանագիրը, Վանաձորի քաղաքապետի 02.08.2007 թվականի թիվ 914 հաստատված որոշումը (հատոր 1-ին, գ.թ. 13-17):

4. 07.04.2005 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1263716 վկայականի համաձայն՝ Վանաձորի Ուսանողական թիվ 1ա հասցեում գտնվող 126,75 քմ մակերեսով խանութի սեփականատերը, իսկ դրա սպասարկման նպատակով առկա 0,125 հա մակերեսով հողամասի ենթավարձակալը Կազմակերպությունն է, հիմք՝ շինարարության շահագործման փաստագրման 28.12.2004 թվականի թիվ 156 ակտը, 30.06.2004 թվականի հողամասի ենթավարձակալության թիվ 6453 պայմանագիրը (հատոր 1-ին, գ.թ. 56-59):

5. Ընկերության տնօրենը 16.10.2010 թվականին Կազմակերպությանն առաջարկել է կնքել 1.250 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր և ներկայացրել է վարձակալության պայմանագրի նախագիծը (հատոր 1-ին, գ.թ. 5-9):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ու-

նի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով սեփականության իրավունքը, այն բնորոշում է որպես բացարձակ իրավունք, որն իր բնույթով ամրապնդում է նյութական բարիքների պատկանելիությունը իրավունքը կրողին, հանդիսանում է ամենալայն գույքային իրավունքը, որը դրանով օժտված անձին՝ սեփականատիրոջը, հնարավորություն է տալիս անձնական շահերից բխող իրավունքները բավարարել անսահմանափակ տնօրինմամբ: Այսինքն՝ իրեն պատկանող գույքի նկատմամբ կատարել օրենքին չհակասող ցանկացած գործողություն, այդ թվում այլ անձանց փոխանցել գույքի նկատմամբ տիրապետման, օգտագործման իրավունքը, այն գրավ դնել կամ տնօրինել այլ կերպ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ Սահմանադրության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված սեփականության իրավունքի իրականացման երաշխիքները դրսևորվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սկզբունքներում:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, **սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության**, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրի ազատության սկզբունքն իր մեջ ներառում է նաև պայմանագիր կնքելու կամ չկնքելու ազատությունը, որը գույքի սեփականատիրոջ դեպքում լրացնում է վերջինիս՝ իր հայեցողությամբ գույքը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու սահմանադրական իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քաղաքացիական օրենսդրության ցանկացած սկզբունքից բացառություն նախատեսվելու կամ բացառություն նախատեսող օրենսդրության մեկնաբանության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, **այլոց իրավունքների և ազատությունների**, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ պայմանագրի ազատության սկզբունքից բացառությունը

1. պետք է նախատեսված լինի օրենքով
2. անհրաժեշտ լինի պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, **այլոց իրավունքների և ազատությունների**, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալն իրավունք ունի վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալած գույքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը գրավ դնել, կամ որպես ավանդ ներդնել տնտեսական ընկերակցություններին և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում միայն վարձատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով: Նշված դեպքում, բացառությամբ ենթավարձակալության, վարձատուի առջև պայմանագրով պատասխանատվություն է կրում վարձակալը:

Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ ենթավարձակալության պայմանագիրը չի կարող կնքվել վարձակալության պայմանագրի ժամկետը գերազանցող ժամկետում:

Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ վարձակալությունը և ենթավարձակալությունը միմյանց հետ սերտորեն կապված քաղաքացիաիրավական պայմանագրեր են և ենթավարձակալությունը ոչ մի պարագայում չի կարող գոյություն ունենալ վարձակալության պայմանագրից անկախ՝ որպես ինքնուրույն պայմանագրի տեսակ, ուստի, լինելով վարձակալության պայմանագրից ածանցյալ պայմանագիր՝ ենթավարձակալությունը չի կարող կնքվել վարձակալության պայմանագիրը գերազանցող ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ դադարելու հետ միասին դադարում է նաև դրան համապատասխան կնքված ենթավարձակալության պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով: Այդ դեպքում **վարձատուն իրավունք ունի**, ենթավարձակալության պայմանագրին համապատասխան, **ենթավարձակալի օգտագործման տակ գտնվող գույքի վարձակալության պայմանագիր կնքել նրա հետ**, ենթավարձակալության մնացած ժամկետի սահմաններում՝ **դադարած վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան**:

Նշված դրույթների տրամաբանական վերլուծությունից հետևում է, որ վարձակալության պայմանագրով այլ պայման նախատեսված չլինելու պարագայում վարձակալության պայմանագրի վաղաժամկետ դադարումը միաժամանակ հանգեցնում է դրան համապատասխան կնքված ենթավարձակալության պայմանագրի դադարման: Ընդ որում, օրենսդիրը հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթավարձակալության պայմանագիրը կարող է կնքվել միայն վարձատուի համաձայնությամբ, ողղակիորեն սահմանել է վարձատուի իրավունքը վարձակալության պայմանագրի վաղաժամկետ դադարելու դեպքում ենթավարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան ենթավարձակալի օգտագործման տակ գտնվող գույքի վերաբերյալ վերջինիս հետ կնքելու վարձակալության պայմանագիր, այսինքն՝ տվյալ պարագայում օրենսդիրը, հաշվի առնելով վարձատուի իրավունքը և միաժամանակ ապահովելով երաշխիք ենթավարձակալի շահերի պաշտպանության համար, վարձատուին իրավունք է վերապահում պահանջել կնքելու գույքի վարձակալության պայմանագիր **միայն նախկինում կնքված ենթավարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան**, որն իր հերթին ենթավարձակալի համար ուղղակիորեն ստեղծում է պարտականություն՝ վարձատուի կողմից նախկին պայմաններով պայմանագիր կնքելու առաջարկ ստանալու դեպքում այն կնքելու վարձատուի հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագիր կնքելը, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ օրենքը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդված) բացառություն է նախատեսում պայմանագրի ազատության սկզբունքից՝ հիմք ընդունելով վարձատուի և ենթավարձակալի շահերի համակողմանի պաշտպանության անհրաժեշտությունը: Հետևաբար վարձատուն իրավունք ունի պահանջել, իսկ ենթավարձակալը պարտավոր է կնքել գույքի վարձակալության պայմանագիր միայն նախկինում կնքված ենթավարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այլ անձի պատկանող հողամասում գտնվող անշարժ գույքի սեփականատերն **իրավունք ունի օգտագործել** այդ հողամասի այն մասը, **որում ամրակայված է անշարժ գույքը**:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ուրիշի հողամասի վրա գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս, վերջինս հողամասի համապատասխան մասի օգտագործման իրավունք է ձեռք բերում նույն պայմաններով և ծավալով, ինչ անշարժ գույքի նախկին սեփականատերը: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելը հիմք չէ այդ հողամասի վրա գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ՝ հողամասի օգտագործման իրավունքը փոփոխելու կամ դադարելու համար:

Վերոնշյալ հոդվածները վերաբերում են այն դեպքերին, երբ հողամասի և դրա վրա ամրակայված անշարժ գույքի սեփականատերերը չեն համընկնում միևնույն անձի մեջ: Այս դեպքում անշարժ գույքի սեփականատերն **օրենքի ուժով** իրավունք է ստանում օգտագործել հողամասի այն մասը, որն զբաղեցված է անշարժ գույքով: Ընդ որում, օրենսդիրը կարգավորել է նաև հողամասի սեփականատիրոջ փոփոխության հարցը՝ սահմանելով, որ վերջինիս փոփոխությունը որևէ պարագայում չի հանգեցնում անշարժ գույքի սեփականատիրոջ օգտագործման իրավունքի դադարեցմանը կամ փոփոխմանը:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումը հիմնվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 205-րդ հոդվածի իրավակարգավորման ուսումնասիրության վրա: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին կետը սահմանում է հողամասի սեփականատիրոջ իրավունքը՝ իրեն պատկանող հողամասը տրամադրել այլ անձանց օգտագործման՝ ներառյալ վարձակալության: Այսինքն՝ նշված նորմով օրենսդիրը կարգավորել է սեփականատիրոջ հայեցողությամբ իր իրավունքների իրականացման կարգը՝ իր գույքն օգտագործման տրամադրելու առումով: Միաժամանակ նույն հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ նույն օրենսգրքի 207 հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում հողամասի օգտագործման իրավունք կարող է ձեռք բերել նաև շենքի, շինության և այլ անշարժ գույքի սեփականատերը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հոդվածով օրենսդիրը տարբերակել է սեփականատիրոջ կողմից իր հայեցողությամբ իրեն պատկանող հողամասն օգտագործման տրամադրելու իրավունքն անշարժ գույքի սեփականատիրոջ՝ գույքով զբաղեցված և իրեն չպատկանող հողամասի օգտագործման իրավունքից:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ շենքի կամ շինության սեփականատերը միաժամանակ դրանով զբաղեցված հողամասի սեփականատերը չէ, վերջինս անկախ հողամասի սեփականատիրոջ համաձայնությունից, օրենքի ուժով դրա նկատմամբ ձեռք է բերում օգտագործման իրավունք:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարա-

նի՝ օրինական ուժի մեջ մտած 12.09.2002 թվականի վճռով ճանաչվել է Ընկերության օգտագործման իրավունքը վարձակալության հիմքով Վանաձորի Ուսանողական թիվ 1 հասցեում գտնվող 1.250 քմ մակերեսով հողամասի նկատմամբ 99 տարի ժամկետով: Միաժամանակ, ճանաչվել է Կազմակերպության օգտագործման իրավունքը նույն տարածքի նկատմամբ ենթավարձակալության հիմքով 30 տարի ժամկետով, 14.06.2004 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված հողամասի ենթավարձակալության պայմանագրով Ընկերությունը Վանաձորի Ուսանողական թիվ 1 հասցեում գտնվող 1.250 քմ մակերեսով հողամասը 30 տարի ժամկետով ենթավարձակալության է տրամադրել Կազմակերպությանը: 12.09.2007 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1920002 վկայականի համաձայն՝ Վանաձորի Ուսանողական թիվ 1 հասցեում գտնվող 3.443,8 քմ մակերեսով հանրախանութի և 0,8608 հա մակերեսով հողամասի, այդ թվում նաև Կազմակերպությանը ենթավարձակության իրավունքով տրամադրված 1.250 քմ մակերեսով հողամասի սեփականատերն Ընկերությունն է, իսկ 07.04.2005 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1263716 վկայականի համաձայն՝ Վանաձորի Ուսանողական թիվ 1ա հասցեում գտնվող 126,75 քմ մակերեսով խանութի սեփականատերը, իսկ դրա սպասարկման նպատակով առկա 0,125 հա մակերեսով հողամասի ենթավարձակալը Կազմակերպությունն է:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածի 1-ին կետը, Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ «ենթավարձակալության պայմանագրից բխող իրավունքներով ծանրաբեռնված գույքի նոր սեփականատիրոջ՝ գույքն իր հայեցողությամբ տնօրինելու իրավունքը որոշակիորեն սահմանափակվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածով, և նոր սեփականատերը, հանդիսանալով տվյալ գույքի վարձատու, իրավասու չէ իր հայեցողությամբ վարձակալության այլ պայմաններ առաջարկել նախկինում գույքի ենթավարձակալ հանդիսացած սուբյեկտին, այլ պետք է վերջինիս հետ կնքի ենթավարձակալության պայմանագրին համապատասխան, ենթավարձակալության մնացած ժամկետի սահմաններում՝ դադարած վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան պայմաններով»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում հողամասի սեփականատիրոջ հետ գույքի վարձակալության պայմանագիր կնքելը Կազմակերպության ոչ միայն պարտականությունն է, այլ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածից բխող իրավունքը, որի իրացումն անմիջականորեն կապված է նույն օրենսգրքի 621-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան պայմանագիր կնքելու վարձատուի պարտավորությամբ: Վերոնշյալի հիման վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեև գույքի սեփականատիրոջ փոփոխությամբ կողմերի միջև 14.06.2004 թվականին կնքված ենթավարձակալության պայմանագիրն օրենքի ուժով դադարել է, սակայն Կազմակերպությունը՝ որպես ուրիշի հողամասի վրա տեղակայված գույքի սեփականատեր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի ուժով պահպանել է հողամասն օգտագործելու իրավունքը, և հիմք ընդունելով, որ հակընդդեմ հայցով հայցվորը պահանջել է իր հետ պայմանագիր կնքել 14.06.2004 թվականին կնքված ենթավարձակալության պայմաններին համապատասխան, ինչը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածով սահմանված դիրքորոշումից, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ սկզբնական հայցը ենթակա է մերժման, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպությունն իր կողմից ենթավարձակալած Վանաձորի Ուսանողական թիվ 1 ա հասցեում գտնվող 1.250 քմ հողամասից 126,75 քմ նկատմամբ օգտագործման իրավունք ունի օրենքի ուժով, որը տվյալ հողամասի սեփականատիրոջ՝ Ընկերության կողմից դադարեցվել կամ փոփոխվել չի կարող

վարձակալության իրավունքի դադարման հիմքով: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի որոշումն այդ մասով հիմնավոր է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին կետը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ նշված դրույթով իմպերատիվ կարգով սահմանված է **վարձատուի իրավունքը,** այլ ոչ թե **պարտականությունը** վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ դադարելու պայմաններում ենթավարձակալի օգտագործման տակ գտնվող գույքի վերաբերյալ ենթավարձակալության պայմանագրին համապատասխան կնքել վարձակալության պայմանագիր: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետը, հաշվի չի առել այն հանգամանքը, որ Կազմակերպության՝ անշարժ գույքով զբաղեցրած մակերեսը կազմում է 126,75 քմ, այլ ոչ թե 1.250 քմ, որով Վերաքննիչ դատարանը պարտավորեցրել է Ընկերությանը կնքել վարձակալության պայմանագիր:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ սույն գործով Ընկերությունը պարտավոր չէ ենթավարձակալության պայմանագրին համապատասխան կնքել վարձակալության պայմանագիր, այլ իրավունք ունի պահանջել Կազմակերպությունից վարձակալության պայմանագիր կնքել նրա հետ 14.06.2004 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված հողամասի ենթավարձակալության պայմանագրին համապատասխան**:** Միևնույն ժամանակ Ընկերության՝ վարձակալության պայմանագիր կնքելու պահանջի իրավունքը սահմանափակված է նախկին ենթավարձակալության պայմանագրի պայմաններով, ուստի Ընկերությունն իրավունք չունի պահանջել կնքելու նոր վարձակալության պայմանագիր՝ իր կողմից առաջարկված պայմաններով:

Ինչ վերաբերում է 14.06.2004 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված հողամասի ենթավարձակալության պայմանագրին համապատասխան վարձակալության պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու Կազմակերպության պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 621-րդ հոդվածը ենթավարձակալին իրավունք չի տալիս հողամասի սեփականատիրոջից պահանջելու կնքել նոր վարձակալության պայմանագիր, ինչը կհակասեր սեփականատիրոջ՝ գույքն իր հայեցողությամբ օգտագործելու և օգտագործման հանձնելու իրավունքին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարու-

նակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն**:** Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2011 թվականի որոշման՝ հակընդդեմ հայցը բավարարելու մասը և այդ մասով այն փոփոխել. հակընդդեմ հայցը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2011 թվականի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. «Արգինա» ՍՊԸ-ից հօգուտ «Հանրախանութ Դիմաց» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0852/02/10
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0852/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արմավիա» Ավիաընկերություն ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Դավիթ Դավթյանի և Ալիսա Զորաբուրյանի հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Դավիթ Դավթյանը և Ալիսա Զորաբուրյանը պահանջել են Ընկերությունից բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք 7.564.600 ՀՀ դրամ գումար, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 13.11.2006 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) (դատավոր Ա. Մկրտչյան) 03.04.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.05.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.04.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, նույն կոնվենցիային կից թիվ 11 արձանագրության 1-ին հոդվածը, «Միջազգային օդային փոխադրումների որոշ կանոնների միասնականության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին կետը, 335-րդ հոդվածի 2-րդ կետը և 1022-րդ հոդվածը, ավիավթարի պահին գործող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերը, 985-րդ հոդվածի 1-ին կետը և 2-րդ կետի 2-րդ ենթակետը, 991-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 996-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածը և «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին կետը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ, 345-րդ, 416-րդ, 424-րդ, 1058-րդ և 1066-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ և 15-րդ հոդվածները, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 14-րդ հոդվածները, 32-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածների 1-ին կետերը, 54-րդ և 149.7-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, կայացնելով վերը նշված վճիռը, դուրս է եկել հայցի առարկայի շրջանակներից, քանի որ Դավիթ Դավթյանի և Ալիսա Զոբաբուրյանի կողմից նշված գումարը պահանջվել է ոչ թե որպես Արման Դավթյանի կյանքին պատճառված վնասի հատուցման գումար, այլ որպես վերջինիս կյանքի ապահովագրության գումար:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արման Դավթյանի կյանքին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որի համաձայն՝ Դավիթ Դավթյանին և Ալիսա Զոբաբուրյանին յուրաքանչյուր ամիս հատուցման գումար է սահմանվել 150.000 ՀՀ դրամի չափով: Դեռ ավելին, Ընկերությունը վճարումները կատարել է նշված գումարի կրկնապատիկի չափով, որի արդյունքում 04.04.2012 թվականի դրությամբ Դավիթ Դավթյանին և Ալիսա Զոբաբուրյանին վճարվել է նրանց կողմից պահանջվող գումարից ավելի գումար, և դեռ այդ վճարումները նրանց կատարվելու են ցմահ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վճռաբեկ դատարանի 23.05.2008 թվականի որոշմամբ արդեն իսկ հաստատվել է, որ ապահովագրության օբյեկտ են ոչ թե Ընկերությանը պատկանող ինքնաթիռի անձնակազմի կյանքը կամ առողջությունը, այլ անձնակազմին հասցված վնասի հետ կապված Ընկերության գույքային շահերը, իսկ պայմանագրով շահառուն Ընկերությունն է: Այսինքն՝ ապահովագրության պայմանագրով ապահովագրվել է ոչ թե Արման Դավթյանի կյանքը, այլ Ընկերության պատասխանատվության ռիսկը, գույքային շահերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունն օդաչու Արման Դավթյանի կյանքն ապահովագրելու պարտավորություն չուներ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ լրացել է նշված պահանջը ներկայացնելու համար օրենքով սահմանված երկու տարվա ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.05.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արման Դավթյանն Ընկերությունում աշխատել է որպես Airbus A 320 տիպի օդանավի երկրորդ օդաչու (հատոր 2-րդ, գ.թ.84).

2) 03.05.2006 թվականին Airbus A 320 տիպի օդանավը կործանվել է, որի հետևանքով Արման Դավթյանը զոհվել է (հատոր 1-ին, գ.թ 8, հատոր 2-րդ, գ.թ. 103, 104, 109).

3) Դավիթ Դավթյանը Արման Դավթյանի հայրն է, Ալիսա Զոբաբուրյանը՝ մայրը.

4) Ընկերության և «Գրանդ» Ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 26.12.2005 թվականին կնքված ապահովագրության վկայագրի համաձայն՝ ապահովագրության օբյեկտը թռիչքային առաջադրանքի ընթացքում ինքնաթիռի թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ ինժեներա-տեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված Ընկերության գույքային շահերն են՝ բացառելով աշխատանքի մեկնելը (աշխատանքից վերադառնալը) (հատոր 1-ին, գ.թ.11-21).

5) 13.11.2006 թվականի թիվ 263 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Կազմակերպությունն Ընկերության հաշվեհամարին է փոխանցել 7.564.600 ՀՀ դրամ, վճարման նպատակը՝«ապահովագրական հատուցում (Արման Դավթյան)» (հատոր 1-ին, գ. թ. 22).

6) Վճռաբեկ դատարանի 23.05.2008 թվականի թիվ 3-356(ՎԴ) որոշմամբ հաստատվել է, որ Ընկերության և Կազմակերպության միջև 26.12.2005 թվականին կնքված ապահովագրության վկայագրով ապահովագրության օբյեկտ են ոչ թե Ընկերությանը պատկանող ինքնաթիռի անձնակազմի կյանքը կամ առողջությունը, այլ անձնակազմին հասցված վնասի հետ կապված Ընկերության գույքային շահերը. իսկ պայմանագրով շահառուն Ընկերությունն է (հատոր 1-ին, գ.թ.40).

7) Դավիթ Դավթյանը և Ալիսա Զոբաբուրյանը հայցը դատարան են ներկայացրել 16.09.2010 թվականին (հատոր 1-ին, գ.թ.2).

8) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 28.03.2008 թվականին թիվ 08-1082 քաղաքացիական գործով կայացրած որոշման համաձայն՝ Դավիթ Դավթյանի և Ալիսա Զոբաբուրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել ամբողջությամբ: Սույն դատական ակտի համաձայն՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի թիվ 2-1313 քաղաքացիական գործով 2007 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը մասնակիորեն բեկանել և Ընկերությանը պարտավորեցրել է Դավիթ Առաքելի Դավթյանին և Ալիսա Հովհաննեսի Զոբաբուրյանին յուրաքանչյուր ամիս, ցմահ վճարել 150.000 ՀՀ դրամ՝ որպես կերակրողի մահվան հետևանքով կրած վնասի փոխհատուցում՝ գումարների վճարման սկիզբը հաշվելով 03.05.2006 թվականից: Վճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Սույն քաղաքացիական գործով Ընկերության և Կազմակերպության միջև կնքված 26.12.2005 թվականի ապահովագրության վկայագրի համաձայն՝ ապահովագրվել են թռիչքային առաջադրանքի ընթացքում ինքնաթիռի թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված Ընկերության գույքային շահերը: Վկայագրով շահառու է հանդիսացել Ընկերությունը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշմամբ անդրադարձել է վերոնշյալ իրավական խնդրին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ վկայագրից հետևում է, որ ապահովագրության օբյեկտ են ոչ թե Ընկերությանը պատկանող ինքնաթիռի անձնակազմի կյանքը կամ առողջությունը, այլ անձնակազմին հասցված վնասի հետ կապված Ընկերության գույքային շահերը, իսկ Պայմանագրով շահառուն Ընկերությունն է: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն քաղաքացիական գործով Կազմակերպության և Արման Դավթյանի, ինչպես նաև նրա ժառանգների միջև որևէ պարտավորահիրավական հարաբերություններ առկա չեն (*տես Դավիթ Դավթյանը, Ալիսա Զոբաբուրյանն ընդդեմ «Գրանդ» Ապահովագրական ՍՊԸ-ի՝ առանց որևէ նախապայմանի 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ վճարելու պահանջի մասին թիվ 3-356(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.05.2008 թվականի որոշումը*):

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը բարձրացված իրավական հարցին սույն գործով իրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է համարում կրկին անդրադառնալ վերոնշյալ իրավական խնդրին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրող կազմակերպության (ապահովագրողի) հետ քաղաքացու կամ իրավաբանական անձի (ապահովագրվողի) կնքած **գույքային** կամ **անձնական** ապահովագրության պայմանագրի հիման վրա:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ իրավահարաբերության ծագման ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում էր ապահովագրության երկու տեսակ՝ գույքային և անձնական, որոնց համար օրենսդիրը նախատեսել էր առանձին իրավակարգավորում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 985-րդ հոդվածի համաձայն՝

1. Գույքային ապահովագրության պայմանագրով՝ մի կողմը (ապահովագրողը) պարտավորվում է պայմանագրով պայմանավորված վճարի (ապահովագրական պարգևի) դիմաց, պայմանագրով նախատեսված դեպքը (ապահովագրական դեպքը) վրա հասնելիս, մյուս կողմին (ապահովագրվողին) կամ այլ անձի, ում օգտին կնքվել է պայմանագիրը (շահառուին) հատուցել ապահովագրված գույքին այդ դեպքի հետևանքով պատճառված կամ **ապահովագրվողի այլ գույքային շահերի հետ կապված վնասները** (ապահովագրական հատուցումը)՝ պայմանագրով որոշված գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում:

2. Գույքային ապահովագրության պայմանագրով կարող են, *մասնավորապես*, ապահովագրվել հետևյալ գույքային շահերը՝

2) **այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններով պատասխանատվության, իսկ օրենքով**

նախատեսված դեպքերում՝ նաև պայմանագրերով քաղաքացիական պատասխանատվության ռիսկը (987 և 988 հոդվածներ):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 987-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝**այլ անձանց կյանքին, առողջությանը** կամ գույքին **վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորություններով պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրվել հենց ապահովագրվողի** կամ այլ անձի, որի վրա կարող է նման պատասխանատվություն դրվել, **պատասխանատվության ռիսկը**:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրությունը գույքային ապահովագրության տեսակ է, հետևաբար դրա նկատմամբ կիրառելի են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 985-րդ հոդվածի կանոնակարգումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ վնաս պատճառելու հետևանքով **պարտավորություններով պատասխանատվության** ռիսկի ապահովագրության տեսակը ծագում է միայն այն դեպքում, երբ ապահովագրվողի կամ այլ անձի մոտ որոշակի ապահովագրական պատահարի հետևանքով ծագում է պարտավորություն և առաջանում է պատասխանատվություն կրելու խնդիր: Այդ պարտավորությունները դրսևորվում են որպես վնաս պատճառելու, մասնավորապես այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում ապահովագրվողն ապահովագրում է իր կամ այլ անձի (ով պետք է կրի պատասխանատվությունը) պատասխանատվության ռիսկը, այսինքն՝ ապահովագրության միջոցով **իր կամ այլ անձի** պատասխանատվություն կրելու գործընթացը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապահովագրության վերոնշյալ տեսակը կոչված է վնաս պատճառողին (պատասխանատվություն կրողին) ապահովագրելու, որպեսզի վերջինս պարտավորության ծագման դեպքում կարողանա պատշաճ կատարել վնասը հատուցելու իր պարտավորությունը: Միաժամանակ այն որոշակի երաշխիքներ է ստեղծում պարտավորության մյուս կողմի՝ տուժողի համար՝ ստանալու համապատասխան վնասի հատուցումը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 990-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձնական ապահովագրության պայմանագրով՝ մի կողմը (ապահովագրողը) պարտավորվում է մյուս կողմի (ապահովագրվողի)՝ պայմանագրով պայմանավորված վճարի (ապահովագրական պարգևի) դիմաց, միանվագ կամ պարբերաբար վճարել պայմանագրով պայմանավորված գումարը (ապահովագրական գումարը) ապահովագրվողի կամ **պայմանագրում նշված այլ քաղաքացու (ապահովագրված անձի) կյանքին կամ առողջությանը** կամ աշխատունակությանը **վնաս պատճառելու**, նրա որոշակի տարիքի հասնելու կամ նրա կյանքում պայմանագրով նախատեսված այլ իրադարձության (ապահովագրական դեպքի) երևան գալու **դեպքերում**: **Ապահովագրական գումար ստանալու իրավունք ունի այն անձը, ում օգտին պայմանագիրը կնքվել է:**

2. Անձնական ապահովագրության պայմանագիրը կնքված է համարվում հօգուտ ապահովագրվող անձի, եթե պայմանագրում այլ անձ նշված չէ որպես շահառու: Պայմանագրով, որում որպես շահառու այլ անձ նշված չէ, ապահովագրված անձի մահվան դեպքում շահառուներ են ճանաչվում ապահովագրված անձի ժառանգները:

3. Հօգուտ ապահովագրված անձ չհամարվող անձի անձնական ապահովագրության պայմանագիրը՝ ներառյալ հօգուտ ապահովագրված անձ չհամարվող ապահո-

վագրվողի, կարող է կնքվել միայն ապահովագրված անձի գրավոր համաձայնությամբ: Ապահովագրված անձի գրավոր համաձայնության բացակայությամբ կնքված ապահովագրության պայմանագիրն առ ոչինչ է:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավահարաբերության ծագման ժամանակ օրենսդիրը տարբերակում է դրել վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության և անձնական ապահովագրության միջև՝ դրանք դիտարկելով որպես ապահովագրության տարբեր տեսակներ: Ի տարբերություն վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության՝ անձնական ապահովագրության օբյեկտ է համարվում անձի կյանքը կամ առողջությունը, որին էլ վնաս պատճառվելու դեպքում ծագում են անձնական ապահովագրության հետ կապված քաղաքացիական իրավահարաբերությունները: Այդ նպատակից ելնելով էլ օրենսդիրը հստակ սահմանել է, որ անձնական ապահովագրության դեպքում ապահովագրական գումար ստանալու իրավունք ունի այն անձը, ում օգտին պայմանագիրը կնքվել է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 990-րդ հոդվածով նախատեսված անձնական ապահովագրությունն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

1. Անձնական ապահովագրության օբյեկտ է համարվում անմիջականորեն անձի կյանքը, առողջությունը և այլն.

2. Անձնական ապահովագրության պայմանագրով շահառու է համարվում ապահովագրվողը, իսկ պայմանագրում այլ անձ նշված լինելու դեպքում՝ նշված երրորդ անձը կամ նրա իրավահաջորդները.

3. Երրորդ անձի օգտին կնքված անձնական ապահովագրության պայմանագիրը համարվում է երրորդ անձի օգտին կնքված պայմանագիր և դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 446-րդ հոդվածի դրույթները.

4. Երրորդ անձի օգտին կնքված անձնական ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են ապահովադրի և երրորդ անձի միջև անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառվելու փաստի ուժով, որի արդյունքում ապահովադիրը պարտավոր է ապահովագրական գումարը վճարել երրորդ անձ շահառուին:

Վերոնշյալ վերլուծություններից հետո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության և անձնական ապահովագրության տարբերությունները:

Մասնավորապես, վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության օբյեկտ են համարվում վնաս պատճառողի գույքային շահերը՝ վնաս պատճառելու համար *պատասխանատվության ռիսկը*: Անձնական ապահովագրության դեպքում ապահովագրության օբյեկտն անմիջականորեն *անձի կյանքը կամ առողջությունն* է՝ անկախ դրան վնաս պատճառելու համար վրա հասնող պատասխանատվությունից: Հետևաբար, վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի նորմերին և այլ իրավական ակտերին համապատասխան ապահովագրվողի մոտ ծագում է շահառուին պատճառված վնասը հատուցելու պարտավորություն: Այն դեպքում, երբ նշված նորմերին համապատասխան ապահովագրվողը շահառուին պատճառված վնասը հատուցելու պարտավորություն չունի կամ ազատվում է պատասխանատվությունից, վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության պարտավորություններ չեն ծագում: Ի տարբերություն նշվածի՝ անձնական

ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու փաստի ուժով: Այսինքն՝ անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառվելու պահից ապահովադրի և շահառուի միջև ծագում են անձնական ապահովագրության իրավահարաբերություններ: Մինչդեռ վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրության իրավահարաբերությունները ծագում են ոչ թե շահառուի և ապահովադրի, այլ ապահովագրվողի և ապահովադրի միջև այն դեպքում, երբ ապահովագրվողը պետք է պատասխանատվություն կրի շահառուի առջև՝ վերջինիս կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արման Դավթյանն Ընկերությունում աշխատել է որպես Airbus A 320 տիպի օդանավի երկրորդ օդաչու: 03.05.2006 թվականին Airbus A 320 տիպի օդանավը կործանվել է, որի հետևանքով Արման Դավթյանը զոհվել է: Դավիթ Դավթյանը Արման Դավթյանի հայրն է, Ալիսա Ջոբաբուրյանը՝ մայրը: Ընկերության և «Գրանդ» Ապահովագրական ՍՊԸ-ի միջև 26.12.2005 թվականին կնքված ապահովագրության վկայագրի համաձայն՝ ապահովագրության օբյեկտը թռիչքային առաջադրանքի ընթացքում ինքնաթիռի թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ ինժեներա-տեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված **Ընկերության գույքային շահերն են՝** բացառելով աշխատանքի մեկնելը (աշխատանքից վերադառնալը): 13.11.2006 թվականի թիվ 263 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Կազմակերպությունն Ընկերության հաշվեհամարին է փոխանցել 7.564.600 ՀՀ դրամ, վճարման նպատակը՝ «ապահովագրական հատուցում /Արման Դավթյան/»:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ, 996-րդ հոդվածները, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթները, արձանագրելով, որ Դատարանը, հաշվի առնելով վերը նշված փաստերը և ղեկավարվելով վերոնշյալ նորմերով, քանի որ դրանցով է կարգավորվում կողմերի միջև ներկայումս ծագած վեճը, եկել է այն հետևության, որ հայցը հիմնավոր է և վճիռ է կայացրել այն բավարարելու մասին, գտել է, որ Դատարանի նշված հետևությունը հիմնավոր է, քանի որ Ընկերությունը և ապահովագրական ընկերությունը վերը նշված գրություններում նույնպես ընդունել են այն փաստը, որ ներկայումս Հայցվորների կողմից պահանջվող գումարը պետք է վճարվեր նրանց, սակայն գործի փաստերով հաստատվել է այն հանգամանքը, որ այդպիսի գումար Դավիթ Դավթյանին և Ալիսա Ջոբաբուրյանին չի վճարվել: Ինչ վերաբերում է Ընկերության այն պատճառաբանությանը, որ այդ գումարը և դեռ ավելին, Հայցվորներն ստացել են Վերաքննիչ դատարանի 28.03.2008 թվականի թիվ 08-1082 որոշմամբ սահմանված և պարբերաբար նրանց կատարվող վճարումների միջոցով, ապա Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Վերաքննիչ դատարանի՝ 28.03.2008 թվականի թիվ 08-1082 օրինական ուժի մեջ մտած որոշմամբ սահմանվել է՝ Ընկերությանը պարտավորեցնել Հայցվորներին յուրաքանչյուր ամիս 150.000 ՀՀ դրամի չափով գումար վճարել, որպես կերակրողի՝ Արման Դավթյանի մահվան հետևանքով կրած վնասի փոխհատուցում, որը Հայցվորներին վճարվելու է պարբերաբար և ցմահ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պատճառաբանություններն անհիմն են, քանի որ վերջինիս կողմից կիրառված իրավանորմերը իրավահարաբերության ծագման պահին (Ընկերության և Կազմակերպության միջև 26.12.2005 թվականին ապահովագրության վկայագրի կնքման) չեն գործել, հետևաբար նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի են դրանց ծագման պահին գործող նորմերը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ ներկայումս Հայցվորների կողմից պահանջվող գումարը պետք է վճարվեր նրանց, սակայն գործի փաստերով հաստատվել է այն հանգամանքը, որ այդպիսի գումար Հայցվորներին չի վճարվել, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 987-րդ հոդվածի 4-րդ կետը չէր պարտավորեցնում Կազմակերպությանն այդ գումարները վճարել Դավիթ Դավթյանին և Ալիսա Ջոբաբուրյանին, քանի որ ապահովագրական իրավահարաբերությունները տվյալ դեպքում ծագել են Ընկերության և Կազմակերպության միջև՝ որպես Ընկերության՝ վնաս պատճառելու հետևանքով պատասխանատվության ապահովագրություն, իսկ սույն գործում առկա 26.12.2005 թվականին ապահովագրության վկայագրով Ընկերության՝ ապահովագրական գումարը Դավիթ Դավթյանին կամ նրա իրավահաջորդներին վճարելու պարտավորություն նախատեսված չէ: Հետևաբար Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն բխում վերոնշյալ նորմի իմաստից և անհիմն են:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Արման Դավթյանի կյանքին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որի համաձայն՝ Դավիթ Դավթյանին և Ալիսա Ջոբաբուրյանին յուրաքանչյուր ամիս հատուցման գումար է սահմանվել 150.000 ՀՀ դրամի չափով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ լրացել է նշված պահանջը ներկայացնելու համար օրենքով սահմանված երկու տարվա ժամկետը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածը սույն գործով կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ծագման ժամանակ գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի համաձայն՝ գույքային ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել երկու տարվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել երեք տարվա ընթացքում, իսկ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել տասը տարվա ընթացքում:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետ է սահմանել ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով, որն էլ վերաբերում է ապահովագրական պարտավորության կողմերին՝ ապահովագրողին և ապահովագրվողին, որի ընթացքում վերջինս ապահովագրողից կարող է պահանջել վճարելու ապահովագրավճարը:

Սույն գործով Դավիթ Դավթյանը և Ալիսա Ջոբաբուրյանը պահանջել են Ընկերությունից հօգուտ իրենց բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք 7.564.600 ՀՀ դրամ գումար:

Վճռաբեկ դատարանի 23.05.2008 թվականի թիվ 3-356(ՎԴ) որոշմամբ արձանագրվել է, որ Կազմակերպության և Արման Դավթյանի, ինչպես նաև նրա ժառանգների միջև որևէ պարտավորաիրավական հարաբերություններ առկա չեն, իսկ սույն որոշման վերլուծություններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վեճի առարկա 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք 7.564.600 ՀՀ դրամ ապահովագրական գումարը ստանալու իրավունքը պատկանում է Ընկերությանը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածով նախատեսված ժամկետի կիրառման հարցը կարող էր

քննարկվել միայն Ընկերության և Կազմակերպության միջև ապահովագրական իրավահարաբերությունների դաշտում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2. Դավիթ Դավթյանից և Ալիսա Զոբաբուրյանից հօգուտ «Արմավիա» Ավիաընկերություն ՍՊԸ-ի բռնագանձել 453.876 ՀՀ դրամ՝ որպես «Արմավիա» Ավիաընկերություն ՍՊԸ-ի կողմից վճարված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1097/02/10
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/1097/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սարգիս Սեդիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սարգիս Սեդիկյանի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սարգիս Սեդիկյանը պահանջել է բռնագանձել ՀՀ պաշտպանության և ֆինանսների նախարարություններից 1.648.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի գումար:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Բաղիրյան) (այսուհետ՝ Դատարան) 11.07.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.09.2011 թվականի որոշմամբ Դատարանի 11.07.2011 թվականի վճռի դեմ Սարգիս Սեդիկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.07.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սարգիս Սեդիկյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ չեն ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 345-րդ, 1058-րդ, 1074-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների և ոչ օրինաչափ գործողությունների միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունն ապացուցվում է նրանով, որ նախաքննության ընթացքում նշանակված փորձաքննությունների եզրակացություններով պարզվել է, որ ՊՆ 21833 զորամասի պայմանագրային զինծառայող Վահե Սաքանյանը, վարելով իրեն ամրակցված «Կամազ» մակնիշի բեռնատար ավտոմեքենան, ստեղծել է վթարային իրադրություն և բախվել տվյալ պահին ճանապարհի աջ երթևեկելի ուղեմասում կանգնած, վթարված «Վազ 21099» մակնիշի, 90 OU 066 պետհամարանիշի ավտոմեքենային, ինքն իրեն զրկելով վթարը կանխելու տեխնիկական հնարավորությունից: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Սարգիս Սեդիկյանի ավտոմեքենային վնաս պատճառելու հարցում ՀՀ պաշտպանության նախարարության ավտոմեքենան վարած անձի մեղքի առկայությունը պետք է ապացուցի Սարգիս Սեդիկյանը: Մինչդեռ, Սարգիս Սեդիկյանին պատճառված վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով կրում է վնաս պատճառած անձը: Իսկ իր մեղքի բացակայությունը հավաստող որևէ ապացույց Վահե Սաքանյանը չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և չի քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.09.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 12.03.2010 թվականի թիվ 44270908 եզրակացության համաձայն՝ «Պատահարի պարագայում կարող էր տեղ գտնել ՎԱԶ-21099 մակնիշի, 90 OU 066 հ/հ և Կամազ մակնիշի ՊՆ 2820 S գ/հ ավտոմոբիլների անմիջական փոխազդեցություն (կոնտակտ)՝ ՎԱԶ-21099 ավտոմոբիլի աջ կողային մասի առջևի վնասված ու Կամազ մակնիշի ավտոմոբիլի առջևի վնասված հատվածների միջև, սակայն պարզել, թե տվյալ պատահարի որ փուլում է տեղ գտել այդ ավտոմոբիլների անմիջական փոխազդեցությունը (կոնտակտը) և ինչ հաջորդականությամբ, տվյալ դեպքում փորձագիտական եղանակով հնարավոր չէ: Պարզել նաև, թե փորձաքննությանը տրամադրված մյուս ավտոմոբիլներից որոնք և որ մասերով են միմյանց հետ փոխազդեցության մեջ մտել և ինչ հաջորդականությամբ, տվյալ դեպքում փորձագիտական եղանակով հնարավոր չէ՝ փորձագիտական բավարար հատկանիշների բացակայության պատճառով» **(հատոր 1-ին, գ.թ. 12-23)**:

2) ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.05.2010 թվականի թիվ 14391008 եզրակացության համաձայն՝ «Առաջադրված պայմաններում ՎԱԶ-21099 մակնիշի 90 OU 066 հ/հ ավտոմոբիլի վարորդի կողմից ինչպես տվյալ պատահարը կանխելու տեխնիկական հնարավորություններ, այնպես էլ թույլ տրված այնպիսի գործողություններ, որպիսիք հակասեին ՃԵԿ-ի պահանջներին ու պայմանավորած լինեին տվյալ պատահարի առաջացումը, չեն

դիտվում: Առաջադրված պայմաններում Կամազ մակնիշի ՊՆ 2820 գ/հ ավտոմոբիլի վարորդն ավտոմոբիլը վարելով առանց հաշվի առնելու ճանապարհային պայմանները, մասնավորապես ճանապարհային ծածկույթի վիճակը, իսկ նրա կողմից ընտրված արագությունը չի ապահովել ավտոմոբիլի լիարժեք կառավարումը, թույլ է տվել ՃԵԿ-ի 65 և 66 կետերի ու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, տեխնիկական տեսակետից ստեղծել վթարային իրադրություն, դրանով իսկ պայմանավորել ՎԱԶ-21099 մակնիշի 90 OU 066 հ/հ ավտոմոբիլի ընդհարման առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից: Առաջադրված պայմաններում Կամազ ավտոմոբիլի վարորդը երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով, տեխնիկական տեսակետից պետք է ավտոմոբիլը վարեր, հաշվի առնելով առկա ճանապարհային պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակը և ընտրեր այնպիսի արագություն, որը կապահովեր ավտոմոբիլի լիարժեք կառավարումը» **(հատոր 1-ին, գ.թ. 33-38)**:

3) ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության 19.05.2010 թվականի թիվ 351 եզրակացության համաձայն՝ «Փորձաքննությանը տրամադրված ՎԱԶ-21099 մակնիշի 90 OU 066 պ/հ ավտոմեքենային վթարի հետևանքով պատճառված նյութական վնասի չափի շուկայական գինը գործող շուկայական գներով գնահատվում է 2.075.000 ՀՀ դրամ» **(հատոր 1-ին, գ.թ. 7-8)**:

4) ՀՀ Կոտայքի մարզի դատախազության 02.06.2010 թվականի որոշմամբ Վահե Սաքանյանի նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով: Նշված որոշմամբ արձանագրվել է, որ «ՎԱԶ-21099 մակնիշի 90 OU 066 պ/հ ավտոմեքենայի վարորդին Վահե Սաքանյանի գործողությունների հետևանքով պատճառվել է միայն գույքային վնաս, ուստի նրանց միջև ծագած փոխհարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ…» **(հատոր 1-ին, գ.թ. 46-49)**:

5) ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության 21.03.2011 թվականի թիվ 177-ԱՊ եզրակացության համաձայն՝ «Որոշման մեջ նշված ՎԱԶ-21099 մակնիշի 90 OU 066 պ/հ ավտոմեքենայի հետնամասը վթարվելու հետևանքով պատճառված նյութական վնասի չափի հավանական միջին շուկայական գինը դեպքի օրվա դրությամբ գործող շուկայական գներով գնահատվում է 427.000 ՀՀ դրամ» **(հատոր 2-րդ, գ.թ. 3-4)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրների փոխներգործության հետևանքով նրանց սեփականատերերին պատճառված վնասը հատուցվում է ընդհանուր հիմունքներով (հոդված 1058):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի

հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու **պարտապանի մեղքի** միաժամանակյա առկայությունը *(տես՝ Նաիրալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին, թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը)*:

Վերաքննիչ դատարանը որոշմամբ արձանագրել է, որ սույն գործով հնարավոր չի եղել որոշել նաև ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող «Կամազ» մակնիշի ավտոմեքենայի **վարորդի մեղքը**, քանի որ վերջինիս նկատմամբ քրեական գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումների գնահատման հարցին՝ արձանագրելով, որ թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տան դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը տվյալ գործի շրջանակներում պարտավոր է տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը *(տես՝ Վարթկես Հագոփյանն ընդդեմ Մնահիտ Հակոբջանյանի, Ալեքսանդր Դուրգարյանի, Աջափնյակ նուրարական փարածքի նուրար Ռ. Առաքելյանի՝ Մնահիտ Հակոբջանյանին և նրա ներկայացուցիչ Ալեքսանդր Դուրգարյանին 7-օրյա ժամկետում 25.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը վճարելուն պարտավորեցնելու, այլապես գումարը 7-օրյա ժամկետում չվճարելու դեպքում պայմանագիրը լուծված համարելու, Մնահիտ Հակոբջանյանի անվամբ գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին և ըստ հակընդդեմ հայցի Ալեքսանդր Դուրգարյանի ընդդեմ Վարթկես Հագոփյանի՝ դրամական պարտավորությունը մասնակի կատարած համարելու և պարտքի գումարի չափը նվազեցնելու պահանջի մասին թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը)*:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով հանցակազմի բացակայության պատճառով քրեական գործով վարույթի կարճվելու հանգամանքը, գտել է, որ սույն գործով հնարավոր չի եղել որոշել «Կամազ» մակնիշի ավտոմեքենայի վարորդի մեղքը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ քրեական գործի վարույթի կարճումն ինքնին հիմք չէ անձի մեղավորությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության առումով բացառելու համար, քանի որ պատասխանատվության երկու տեսակները կարող են կիրառվել ինչպես միասին, այնպես էլ առանձին: Ավելին, արարքում հանցակազմի բացակայությունը վկայում է ընդամենը արարքի քրեականացնող հատկանիշի բացակայության մասին, մինչդեռ չի բացառում տվյալ արարքում անձի մեղավոր վարքագծի դրսևորումը և որպես վերջինիս հետևանք՝ քաղաքացիական պատասխանատվությունը:

Նշված եզրահանգումներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից պատշաճ գնահատականի չեն արժանացվել սույն գործով թույլատրելի համարվող վերոնշյալ ապացույցները, որպիսի դատավարական նորմի խախտումը հիմք է սույն գործը առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող համարվել հիմնավորված նաև հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է վերանայի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայելիս պետք է պարտադիր անդրադառնա վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին և հիմնավորումներին *(տես՝ Տիգրան Կիրակոսյանն ընդդեմ Վիկտոր Խոլոդնիյի՝ նոտարական վավերացում չպահանջող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու և գնած անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2010 թվականի որոշումը)*:

Սույն գործով Վերաքննիչ բողոքի հիմքում դրվել է նաև այն հանգամանքը, որ Դատարանի կողմից չի կիրառվել սույն գործով կիրառման ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ կետը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար վերաքննիչ բողոքի նյութական իրավունքի խախտման հիմքին և հիմնավորումներին և քննարկման առարկա դարձներ նաև բողոքի այդ մասը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բացակայում է որևէ անդրադարձ վերը նշված հիմքին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.09.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՍԴ3/0498/02/09
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Սահակյան

Քաղաքացիական գործ թիվ **ՍԴ3/0498/02/09**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նարինե Զաքարյանի, Գեննադի Դանիելյանի և Սուսաննա Դանիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նարինե Զաքարյանի և Էլեն Դանիելյանի օրինական ներկայացուցիչ Գեննադի Դանիելյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Սուսաննա Դանիելյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Արաբատ Հակոբյանի ընդդեմ «Միքաձոր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Արշակ Աղաբեկյանի՝ 1.998.780 ՀՀ դրամ առողջությանը և գույքին պատճառված վնասների բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նարինե Զաքարյանը և Գեննադի Դանիելյանը պահանջել են Ընկերությունից և Արշակ Աղաբեկյանից բռնագանձել 1.998.780 ՀՀ դրամ՝ 1.364.680 ՀՀ դրամ՝ որպես առողջությանը, 600.000 ՀՀ դրամ՝ որպես գույքին պատճառված վնասներ, և 34.100 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության ծախսեր:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.05.2010 թվակա-

նի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ընկերությունից և Արշակ Աղաբեկյանից համապարտության կարգով հօգուտ Նարինե Զաքարյանի վճռվել է բռնագանձել 889.980 ՀՀ դրամ՝ որպես նրա և նրա անչափահաս երեխայի՝ Էլեն Դանիելյանի առողջությանը պատճառված վնասի փոխհատուցում, և հօգուտ Գեննադի Դանիելյանի՝ 634.100 ՀՀ դրամ, որից 600.000 ՀՀ դրամը՝ որպես գույքին պատճառված վնաս, իսկ 34.100 դրամը՝ որպես փորձաքննության իրականացման ծախս, մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.11.2010 թվականի որոշմամբ Ընկերության և Նարինե Զաքարյանի ու Գեննադի Դանիելյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ բեկանվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.05.2010 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.01.2011 թվականի որոշմամբ Նարինե Զաքարյանի ու Գեննադի Դանիելյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 29.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ընկերությունից Նարինե Զաքարյանի և Էլեն Դանիելյանի օգտին որոշվել է բռնագանձել 723.000 ՀՀ դրամ՝ որպես առողջությանը պատճառված վնասի գումար, Ընկերությունից Սուսաննա Դանիելյանի օգտին որոշվել է բռնագանձել 634.100 ՀՀ դրամ, որից 600.000 ՀՀ դրամը՝ որպես գույքին պատճառված վնասի գումար, և 34.100 ՀՀ դրամը՝որպես փորձաքննության ծախս: Հայցը մնացած՝ 641.680 ՀՀ դրամի բռնագանձման մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.12.2011 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 29.06.2011 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Նարինե Զաքարյանը, Գեննադի Դանիելյանը և Սուսաննա Դանիելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել համակցության մեջ և անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանի 29.06.2011 թվականի վճռով բազմակողմանի, օբյեկտիվ և հիմնավոր վերլուծության են ենթարկվել գործի բոլոր փաստերն ու հանգամանքները՝ նախաքննության մարմնի կողմից նախապատրաստված նյութերը, գործում առկա բոլոր փաստաթղթերը, կողմերի ու մասնակիցների փաստարկներն ու առարկությունները: Դատարանը հիմնավորել է նաև, թե ինչու է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը, համադրելով վարորդ

Արշակ Աղաբեկյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի բոլոր դրույթներն ու լիազորագիրը գործով ձեռք բերված ապացույցների հետ, հանգել է ճիշտ եզրակացության, որ ավտոմեքենան անօրինական կարգով դուրս չի եկել դրա սեփականատիրոջ տիրապետությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 14.12.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 29.06.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սյունիքի մարզի Գորիս քաղաքի բնակիչ Արշակ Աղաբեկյանը իր վարած «Սամանդ» մակնիշի S0805 պետհամարանիշի ավտոմեքենայով 06.05.2009 թվականին՝ ժամը 12-ի սահմաններում, Երևան ընթանալիս Երևան-Եղեգնաձոր ճանապարհի 82-րդ կմ հատվածում բախվել է հանդիպակաց ընթացող Գեննադի Դանիելյանի վարած «ՎԱԶ 21033» մակնիշի 11 LU 262 պետհամարանիշի ավտոմեքենային, որի հետևանքով երկու մեքենաների ուղևորները ստացել են տարբեր ծանրության աստիճանի մարմնական վնասվածքներ (հատոր 1, գ. թ. 5),

2. Դեպքի առթիվ Արարատի քննչական բաժանմունքում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ Արշակ Աղաբեկյանը խախտել է ՃԵԿ-ի 65-66 կանոնները, ինչպես նաև «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն, դրանով իսկ պայմանավորել պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, ինչի արդյունքում Նարինե Զաքարյանի առողջությանը պատճառել է ծանր, Էլեն Դանիելյանի առողջությանը՝ միջին ծանրության վնաս, իսկ Գեննադի Դանիելյանի առողջությանը պատճառվել է թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք: Արշակ Աղաբեկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն: Սակայն ՀՀ Ազգային ժողովի կողմից համաներում հայտարարելու մասին 19.06.2009 թվականի որոշման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և Արշակ Աղաբեկյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել (հատոր 1, գ. թ. 5-7),

3. 1981 թվականի արտադրության մարդատար «ՎԱԶ 21033» ավտոմեքենայի սեփականատեր է հանդիսանում Ստեփանակերտի Վազգեն Սարգսյան փողոցի 15/12 հասցեի բնակիչ Սուսաննա Դանիելյանը (հատոր 1, գ.թ 10, 11), ով գույքին պատճառված վնասի հատուցման պահանջ է ներկայացրել Ընկերության դեմ (հատոր 5, գ. թ. 23),

4. 2007 թվականի արտադրության մարդատար «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի սեփականատերն է հանդիսանում Գորիսի Մաշտոցի փողոցի 28 հասցեի բնակիչ Արարատ Հակոբյանը (հատոր 1 գ.թ 5), որը ներգրավվել է գործին որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող 3-րդ անձ (հատոր 5, գ.թ. 28),

5. Տրանսպորտային միջոցի վարձակալության մասին 01.06.2007 թվականի պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Կորյուն Հակոբյանի, վարձատու Արարատ Հակոբյանից վարձակալել է սեփականության իրավունքով նրան պատկանող «Սամանդ» մակնիշի 2007 թվականի արտադրության, սեդան տիպի ավտոմեքենան՝դրա կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցման թույլտվությամբ՝ ուղևորափոխադրումներ իրականացնելու նպատակով (հատոր 1, գ.թ 53-54),

6. Ընկերության և Արշակ Աղաբեկյանի միջև 01.10.2008 թվականին կնքվել է անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր, համաձայն որի՝ վերջինս ՀՀ տարածքում ուղևորափոխադրումներ իրականացնելու նպատակով նշանակվել է աշխատանքի վարորդի պաշտոնում (հատոր 1, գ.թ. 57-58),

7. 27.10.2008 թվականին Ընկերության և Արշակ Աղաբեկյանի միջև կնքվել է լիակատար նյութական պատասխանատվության մասին 57/2/1 պայմանագիրը, համաձայն որի՝ Ընկերությունն աշխատողի պատասխանատվությանն է հանձնել «Ռենո» մակնիշի S0819 պետհամարանիշի ավտոմեքենան (հատոր 1, գ. թ. 56),

8. 27.10.2008 թվականին կատարվել է «Ռենո» մակնիշի S0819 պետհամարանիշի ավտոմեքենայի հանձնում-ընդունում, և կազմվել է մեքենայի հանձնման-ընդունման 57/2/2 ակտը (հատոր1, գ.թ. 55)։

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագում են նաև այլ անձին վնաս պատճառելու հետևանքով, իսկ նույն օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, **վնաս պատճառելու հետևանքով** և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից։ Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել։ Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ **վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ**։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (**տրանսպորտային միջոցների**, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), **պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով**։ Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ նույն օրենսգրքի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով։ Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը *(տես՝ Նաիրալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին թիվ ՀՔԴ 3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009թ.-ի որոշումը)։*

Ընդ որում, քննարկվող պարագայում օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատ-

ճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց:

Սակայն քաղաքացիական օրենսդրությունն այս ընդհանուր կանոնից սահմանել է մի շարք բացառություններ, երբ անձը պարտավոր է հատուցել պատճառված վնասը նաև վնաս պատճառելու մեջ իր մեղքի բացակայության դեպքերում: Այդ բացառություններից մեկն էլ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցումն է:

Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ բացակայում են վնասը հատուցելու պարտականությունից ազատելու օրենքով մատնանշված հիմքերը, հետևաբար, Նարինե Զաքարյանին, Էլեն և Սուսաննա Դանիելյաններին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ դատաքննությամբ հիմնավորված չափի շրջանակներում:

Վերաքննիչ դատարանն Ընկերության վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Դատարանը բողոքարկվող դատական ակտի պատճառաբանական մասում չի անդրադարձել Ընկերության կողմից ներկայացված լիազորագրին, Ընկերության և Արշակ Աղաբեկյանի միջև կնքված աշխատանքային, լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագրերին և դրանց գնահատմանը, մինչդեռ նշված ապացույցների՝ մյուս ապացույցների հետ համակցության մեջ գնահատելու արդյունքում հնարավոր կլինի պարզել, արդյոք սույն գործով կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ և 1072-րդ հոդվածների պահանջները, թե՝ ոչ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի սեփականատերն է Արարատ Հակոբյանը (հատոր 1 գ.թ 5), որը, սակայն, 01.06.2007 թվականի տրանսպորտային միջոցի վարձակալության մասին պայմանագրով այն հանձնել է Ընկերության ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը՝ դրա կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցման թույլտվությամբ: Պայմանագրի 4.14 կետի «ե» ենթակետի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 651-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալված տրանսպորտային միջոցով, նրա մեխանիզմներով և սարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է վարձակալը, այսինքն՝ Ընկերությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության համաձայն՝ վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (**վարձակալության իրավունք**, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: Ընկերությունը 01.06.2007 թվականի պայմանագրի ուժով հանդիսանում է «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի օրինական տիրապետողը:

Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը: Տվյալ դեպքում «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Արշակ Աղաբեկյանը հանդիսանում է առավել վտանգի աղբյուրը կառավարող անձը, բայց ոչ օրինական (տիտղոսային) տիրապետող, նա աշխատանքային իրավահարաբերությունների մեջ է գտնվել Ընկերության հետ (հատոր 1, գ. թ. 57-58), որը, հատուցելով տուժողների կրած վնասները, կարող է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի ուժով հետադարձ պահանջ ներկայացնել Արշակ Աղաբեկյանի դեմ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածն առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջն ազատում է վնասը հատուցելու պարտավորությունից հետևյալ դեպքերում.

- անհաղթահարելի ուժի,

- տուժողի դիտավորության և
- առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից աղբյուրն այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով դուրս գալու դեպքերում:

Տվյալ գործի փաստերից հետևում է, որ պատասխանատվությունից ազատելու վերը նշված երեք հիմքերն էլ առկա չեն, քանի որ ըստ Արարատի քննչական բաժանմունքի նախապատրաստած նյութերի՝ «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Արշակ Աղաբեկյանը, խախտելով ՃԵԿ-ի 65-66 կանոնները, ինչպես նաև «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն, դրանով իսկ պայմանավորել պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից: Ինչ վերաբերում է Ընկերության այն դիրքորոշմանը, որ Արշակ Աղաբեկյանը 06.05.2009 թվականին «Սամանդ» մակնիշի մեքենային ապօրինաբար է տիրացել, ապա գործի նյութերով նշված հանգամանքը չի ապացուցվել:

Ամփոփելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունը՝ որպես «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի օրինական տիրապետող, պարտավոր է հատուցել առավել վտանգի աղբյուր հանդիսացող մեքենայով Նարինե Զաքարյանի, Էլեն և Սուսաննա Դանիելյանների առողջությանը և գույքին պատճառված վնասը, որի արդյունքում նա ռեգրեսի իրավունք է ձեռք բերում Արշակ Աղաբեկյանի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հիմնավոր չեն Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ Դատարանը իրականացրել է թերի քննություն և չի անդրադարձել Ընկերության կողմից ներկայացված լիազորագրին, Ընկերության և Արշակ Աղաբեկյանի միջև կնքված աշխատանքային, լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագրերին, քանի որ տվյալ դեպքում անհրաժեշտ էր բացահայտել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող սուբյեկտին, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի և 01.06.2007 թվականի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի ուժով հանդիսանում է «Սամանդ» մակնիշի ավտոմեքենայի օրինական տիրապետող Ընկերությունը, այլ ոչ թե տրանսպորտային միջոցը ժամանակավորապես կառավարող վարորդ Արշակ Աղաբեկյանը:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը և սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 14.12.2011 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում

քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.06.2011 թվականի վճռին:

2. «Միքաձոր» ՍՊԸ-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 39.690 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար, 39.690 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0125/02/11
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Մատինյան

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ/0125/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմինե Աբելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2011 թվականի որոշման դեմ, ըստ հայցի Արմինե Աբելյանի ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Դանիելյանի (այսուհետ՝ Ձեռնարկատեր) վնասի փոխհատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արմինե Աբելյանը պահանջել է Ձեռնարկատիրոջից բռնագանձել 3.545.100 ՀՀ դրամ՝ որպես «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետական համարանիշով ավտոմեքենային պատճառված վնասի գումար:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի(դատավոր՝ Ն.Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան) 20.10.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 3.161.100 ՀՀ դրամի չափով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.12.2011 թվականի որոշմամբ Ձեռնարկատիրոջ վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 20.10.2011 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է, հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմինե Աբելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել անհատ ձեռնարկատեր Հովհաննես Դանիելյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը և 1062-րդ հոդվածի 1-ին կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես այն, որ Երևանի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի քննիչ Հ.Խալաթյանի 26.10.2010 թվականի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ հաստատվել է այն, որ Էմին Յավրյանը, որպես ավտովլացման կետի՝ Զեռնարկատիրոջ մոտ աշխատող աշխատակից, իրեն հանձնված «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքենան լվանալուց հետո մեքենայի վրայի ջրային կաթիլները չորացնելու նպատակով այն հանել է ավտովլացման կետից և վարել է Ն.Զարյան փողոցի կողմից Հ.Քոչար փողոցից դեպի Վ.Վաղարշյան փողոց տանող ուղեմասի մեջտեղով, ինչի հետևանքով ընդհարվել է այլ ավտոմեքենաների: «Այսինքն՝ Էմին Յավրյանն ինքն է հաստատել, որ նա վեճի առարկա ավտոմեքենան վթարի է ենթարկել իր աշխատանքային պարտականությունները կատարելիս, իսկ թե ինչ եղանակով է կատարում այն, դա Գործատուի և աշխատողի միջև եղած պայմանավորվածությունից և աշխատանքային պայմանագրից է կախված»:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.12.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 20.10.2011 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր: Սույն գործով Զեռնարկատիրոջ և Էմին Յավրյանի միջև 01.10.2010 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ սույն պայմանագրով աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է 21.00-ն, իսկ ավարտը 09.00-ն: Հետևաբար վերոնշյալ ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության արդյունքում դատարանը կարող էր եզրահանգել, որ Էմին Յավրյանը գործել է իր աշխատանքային պարտականություններից դուրս: Բանն այն է, որ «Վոլկսվագեն Էօս» մակնիշի ավտոմեքենան ավտովլացման կետ մուտք չի գործել և 11.10.2011 թվականին ժամը 09.00-ի սահմաններում՝ կայանել է ավտովլացման կետից դուրս գտնվող տարածքում, ինչը պնդել է նաև Էմին Յավրյանն իր 15.10.2010 թվականի բացատրությամբ, ավելին՝ Էմին Յավրյանը գտնվել է իր աշխատանքային պարտականությունների շրջանակից դուրս, այսինքն՝ վերը նշված աշխատանքային պայմանագրով սահմանված նրա աշխատանքային ժամն արդեն ավարտված է եղել: Հետևաբար այդ պահին Էմին Յավրյանը չի համարվել աշխատող և իրավունք չի ունեցել «Վոլկսվագեն Էօս» մակնիշի ավտոմեքենան լվանալու և վարելու, քանի որ վերջինիս համար աշխատանքային պայմանագրով այդպիսի պարտավորություն սահմանված չէ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 01.10.2010 թվականին Զեռնարկատիրոջ և Էմին Յավրյանի միջև անորոշ ժամկե-

տով կնքվել է աշխատանքային պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) (հատոր 1-ին, գ.թ. 10):

2. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Է.Յավրյանը աշխատանքի է ընդունվել որպես ավտոլվացող և աշխատանքի կատարման վայրն է հանդիսացել Գործատուի գտնվելու վայրը: Նշված պայմանագրով աշխատողին հանձնարարվող աշխատանքը ներառել է մեքենաների լվացումը (հատոր 1-ին, գ.թ. 10):

3. Պայմանագրի 4.1 կետում ամրագրվել է ցանկացած պահին աշխատողին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը ստուգելու և աշխատողի կողմից իր պարտականությունները ոչ պատշաճ որակով կատարելու դեպքում վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու Գործատուի իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 11):

4. Պայմանագրի 3.1 կետով՝ աշխատանքային օրվա սկիզբ է սահմանվել ժամը 21^{00}-ն, ավարտը՝ ժամը 09^{00}-ն (հատոր 1-ին, գ.թ. 11):

5. 11.10.2010 թվականին առավոտյան ժամը 09^{00}-ի սահմաններում՝ քաղաքացի Վարդան Պողոսյանը, ով օգտագործել է Արմինե Աբելյանին սեփականության իրավունքով պատկանող «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքենան, լվանալու նպատակով այն հանձնել է Էմին Յավրյանին (հատոր 1-ին, գ.թ. 108, 115՝ Էմին Յավրյանի և Վարդան Պողոսյանի բացատրությունները):

6. 11.10.2010 թվականին՝ ավտոմեքենան լվանալուց հետո՝ ժամը 10^{00}-ի սահմաններում, Երևան քաղաքի Հրաչյա Քոչարի փողոցի 143 տան դիմաց Էմին Յավրյանը «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքենայով ընդհարվել է Գարիկ Հովհաննիսյանի վարած «Ֆիատ Դոբլո» մակնիշի 17 SO 828 պետհամարանիշի ավտոմեքենային, այնուհետև մայթեզրի մոտ կայանված Կարեն Հակոբյանին պատկանող «ՎԱԶ 21213» մակնիշի 04 UԼ 399 պետհամարանիշի և Արամ Կարապետյանին պատկանող «Մերսեդես Բենց» մակնիշի 01 LԼ 349 պետհամարանիշի ավտոմեքենաներին, որի հետևանքով «Վոլկսվագեն Էօս» մակնիշի ավտոմեքենայի վարորդը ստացել է մարմնական վնասվածքներ և տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն (հատոր 1-ին, գ.թ. 20):

7. Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի 26.10.2010 թվականի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է ավտովարորդներ Էմին Յավրյանի և Գարիկ Հովհաննիսյանի արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանություններով (հատոր 1-ին, գ.թ. 20-22):

8. ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 25.10.2010 թվականի եզրակացության համաձայն՝ փորձաքննության տրամադրված վիճակում «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքենայի վնասվածքների հետևանքով այդ ավտոմեքենայի (գույքի) վնասի չափն արժեքային արտահայտությամբ 12.10.2010 թվականի դրությամբ գործող շուկայական գներով կազմում է 3.161.100 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 125-134):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է վնասի հատուցման ընդհանուր պայմաններին:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե

վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը *(տես՝ Նապալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Փաստորեն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը *(տես «Սաանա-Մանանա» ՍՊԸ-ն ընդդեմ Դանիել Ղասաբօղլյանի՝ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին թիվ ԵՔԴ/0086/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը, գտնելով, որ վերոնշյալ ընդհանուր կանոնները կիրառելի են նաև սույն գործի նկատմամբ, այնուամենայնիվ, անհրաժեշտ չի համարում կրկին անդրադառնալ վերոնշյալ իրավական հարցերին, և սույն գործով բողոքում բարձրացված հարցին պատասխանելու համար նպատակահարմար է գտնում քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցադրումը՝ *ո՞մ կողմից է ենթակա հատուցման աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս աշխատողի կողմից երրորդ անձին պատճառված վնասը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ նորմի կիրառման համար անհրաժեշտ է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածներով նախատեսված վնասի հատուցման ընդհանուր պայմանների առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաբանական անձի աշխատողի կողմից վնաս պատճառվելու դեպքում որպես վնաս պատճառող հանդես է գալիս տվյալ աշխատողը, քանի որ վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով է պատ-

ճառվել վնասը: Միաժամանակ, օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատողը տվյալ գործողությունները կատարել է ոչ թե ամբողջությամբ ազատ լինելով դրանց մեջ, այլ իրականացնելով իր աշխատանքային պարտականությունները, որպես պատասխանատվություն կրող սուբյեկտ դիտել է ոչ թե վնաս պատճառողին, այլ այն իրավաբանական անձին (անհատ ձեռնարկատիրոջը), որի աշխատողի կողմից պատճառվել է վնասը: Օրենսդրական նման իրավակարգավորման նպատակն առաջին հերթին կայանում է նրանում, որ աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս վնաս պատճառելու դեպքում աշխատողը գործում է ոչ թե իր, այլ հենց գործատուի անունից, և հետևաբար օրենսդիրը, վնասի հատուցման պարտավորությունը դնելով գործատուի վրա, կարևորել է տուժող կողմի համար որոշակի երաշխիքների ապահովումը պատճառված վնասի ամբողջական վերականգնման առումով, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված խախտված իրավունքների վերականգնման ապահովման սկզբունքի դրսևորում է վնասի հատուցման հարաբերություններում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանները պետք է հաշվի առնեն, որ նմանատիպ գործերի քննության ժամանակ էական նշանակություն ունի յուրաքանչյուր գործով պարզել՝ արդյոք վնասը պատճառվել է **աշխատող** համարվող անձի կողմից իր աշխատանքային պարտականությունները կատարելիս:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ աշխատող է համարվում աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարող քաղաքացին, եթե նա գործել է կամ **պետք է գործեր** համապատասխան իրավաբանական անձի կամ քաղաքացու առաջադրանքով և աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է նաև աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման կարգը:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ **ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին**, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

Նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ գործատուները, **աշխատողները** և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և **պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ**: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է: Աշխատանքային իրավունքների իրականացմամբ և պարտականությունների կատարմամբ չպետք է խախտվեն այլ անձանց՝ օրենքներով պաշտպանվող իրավունքներն ու շահերը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը սահմանում է նաև, որ **աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով**

ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը, գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել գործատուին:

Վերոնշյալ նորմերի համադրությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի 2-րդ կետի հետ ցույց է տալիս, որ անձը աշխատող համարվելու համար պետք է աշխատի աշխատանքային պայմանագրի հիման վրա: Միաժամանակ, օրենսդիրը վերջինիս պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել օրինականության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների պահպանմամբ: Աշխատողն աշխատանքային պարտականությունները կատարում է ոչ թե ամբողջովին իր հայեցողությամբ, այլ պարտադիր կերպով ենթարկվելով աշխատանքային ռեժիմին, կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային կարգապահությանը, աշխատանքի սահմանված նորմաներին: Նշված վերլուծությունը բխում է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասից, որի համաձայն՝ աշխատողները պարտավոր են աշխատել սահմանված աշխատանքի **(հերթափոխային) ժամանակացույցներին համապատասխան**: Կազմակերպության աշխատանքի (հերթափոխային) ժամանակացույցում կատարվող փոփոխության մասին **գործատուն պարտավոր է աշխատողին պատշաճ ծանուցել** ոչ ուշ, քան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց երկու ամիս առաջ: Գործատուն պարտավոր է ապահովել աշխատողների աշխատանքների կատարման հերթափոխության համաչափությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ գործատուն, իր ներքին իրավական ակտերով սահմանելով կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքի (հերթափոխային) և հանգստի ժամանակացույցերը (գրաֆիկները), աշխատողներին արտաժամյա աշխատանքի և հերթապահության ներգրավելու կարգը, միաժամանակ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 35-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է աշխատողների կողմից **աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը:** Այսինքն՝ օրենսդիրը, գործատուին իրավունք ընձեռելով սահմանել վերոնշյալ ակտերը, միաժամանակ վերջինիս իրավունք է ընձեռել վերահսկողություն իրականացնել դրանց պահպանման նկատմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ գործատուն պատասխանատվություն է կրում իր աշխատողի կողմից հասցված վնասի համար ոչ միայն այն դեպքում, երբ վերջինս գործել է գործատուի առաջադրանքով, այլ նաև այն դեպքում, երբ աշխատողը պարտավոր էր նման կերպ գործել: Դեռ ավելին, աշխատողը պետք է գործի աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ գործատուի վերահսկողության ներքո, այսինքն՝ գործատուն պարտավորվում է պատշաճ կերպով վերահսկել իր աշխատողների կողմից աշխատանքային պարտականությունների (այդ թվում կարգապահական կանոնների) պատշաճ կատարումը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ աշխատողն իր աշխատանքային պարտականությունները կատարում է գործատուի վերահսկողությունից դուրս, դրանով իսկ խախտելով աշխատանքային պայմանագիրը, ապա նա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթի իմաստով չի դադարում **աշխատող** լինելուց, դրանից բխող հետևանքներով:

Վերոնշյալ իրավական վերլուծություններից հետո սույն գործի առանձնահատկու-

թյունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել նաև հրապարակային պայմանագրերի հիման վրա աշխատանք կատարելիս կամ ծառայություն մատուցելիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի կիրառման առանձնահատկությունները՝ դրանք դիտարկելով սպառողների իրավունքների պաշտպանության համատեքստում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հրապարակային է համարվում առևտրային կազմակերպության կնքած և ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ **ծառայություններ մատուցելու** նրա պարտականությունները սահմանող պայմանագիրը, որոնք այդ կազմակերպությունն իր գործունեության բնույթով պետք է իրականացնի յուրաքանչյուրի նկատմամբ, ով կդիմի իրեն (մանրածախ առևտուր, ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրումներ, կապի ծառայություններ, էներգամատակարարում, բժշկական, հյուրանոցային սպասարկում և այլն):

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է սպառողին հայտնել իր կազմակերպության անվանումը (ֆիրմային անվանումը), գտնվելու վայրն ու աշխատանքային ռեժիմը:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի, սպառողների կենցաղային և սպասարկման այլ տեսակների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի աշխատակարգը սահմանվում է նրանց կողմից ինքնուրույնաբար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Վաճառողի (կատարողի) աշխատակարգի մասին տեղյակ է պահվում սպառողին:

Վերոնշյալ իրավակարգավորման իմաստը կայանում է նրանում, որ հատկապես հրապարակային պայմանագրի դեպքում, երբ գործատուն որոշակի ապրանքներ է վաճառում, աշխատանքներ կատարում կամ ծառայություններ մատուցում, յուրաքանչյուրին ով իրեն կդիմի, ապա սպառողը առաջարկվող ծառայություններից օգտվելիս ամենևին պարտականություն չի կրում ստուգելու գործատուի աշխատանքների կազմակերպման տարածքում գտնվող և որպես աշխատող ներկայացող անձի՝ իրականում այդպիսին լինելու, աշխատողի աշխատաժամանակը ավարտված լինելու և այդ դեպքում արտաժամյա աշխատանքների իրականացումը աշխատողի և գործատուի կողմից համաձայնեցված լինելու հանգամանքները: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ գործատուն պարտավորվում է պատշաճ կերպով կազմակերպել իր գործունեությունը և բացառել ոչ միայն այլ անձանց մուտքը իր տարածք, այլ նաև վերահսկել իր աշխատողների աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարումը, ինչպես նաև թույլ չտալ նրանց աշխատաժամանակից դուրս շարունակել ծառայություններ մատուցել, իսկ եթե այդպիսիք մատուցվում են, ապա դա պետք է որակվի որպես աշխատողի կողմից արտաժամյա աշխատանքի իրականացում, և դրա բացասական ռիսկը կրում է գործատուն: Ավելին, օրենսդիրը գործատուին է պարտավորեցնում իր կազմակերպության գործունեության մասին տեղեկատվություն տրամադրել սպառողին, հետևաբար այդ պարտականությունը չկատարելու դեպքում վերջինս պետք է կրի նաև դրանց բխող բացասական հետևանքների ռիսկը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ հրապարակային պայմանագրի դեպքում սպառողների կողմից աշխատանքի կատարման կամ ծառայությունների մատուցման դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պետք է մեկնաբանվի նաև սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրության տրամաբանության ներքո:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 01.10.2010 թվականին Ձեռնարկատիրոջ և Էմին Յավրյանի միջև անորոշ ժամկետով կնքվել է Պայմանագիր և Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ **Է. Յավրյանը աշխատանքի է ընդունվել որպես ավտոլվացող: Աշխատանքի կատարման վայր է հանդիսացել Գործատուի գտնվելու վայրը: Նշված պայմանագրով աշխատողին հանձնարարվող աշխատանքը ներառել է մեքենաների լվացումը**:

11.10.2010 թվականին՝ **առավոտյան ժամը 09^{00}-ի սահմաններում,** քաղաքացի Վարդան Պողոսյանը, ով օգտագործել է Արմինե Աբելյանին սեփականության իրավունքով պատկանող «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքենան, լվանալու նպատակով հանձնել է **Ձեռնարկատիրոջը պատկանող ավտոլվացման կետի** աշխատակից Է. Յավրյանին: Վերջինս, հանդիսանալով որպես Ձեռնարկատիրոջ աշխատակից, ստանձնել է ավտոմեքենան լվանալու իր աշխատանքային պարտականությունը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելիս պատճառաբանել է, որ ավտոմեքենան ավտոլվացողին հանձնվել է նրա աշխատանքային ժամն ավարտվելուց հետո կամ աշխատանքային ժամի ավարտին, ավտոմեքենային վնաս է պատճառվել Էմին Յավրյանի կողմից այն ավտոլվացման կետի տարածքից դուրս, փողոցներում վարելու ընթացքում, որն աշխատանքային պայմանագրով վերջինիս աշխատանքային պարտավորությունների շրջանակներում չի գտնվել, Ձեռնարկատիրոջ, ղեկավար անձանց կողմից իրեն հանձնարարված չի եղել: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի դրույթների վերլուծությունից հետևում է, որ իրավաբանական անձը կամ քաղաքացին պատասխանատվություն են կրում իր աշխատողի կողմից պատճառված վնասների համար միայն այն դեպքում, երբ վնաս հասցնելու պահին վերջինս գտնվել է աշխատանքի մեջ և կատարել է իր աշխատանքի գործառույթների շրջանակներում գտնվող աշխատանքային պարտականությունները, գործել է իրավաբանական անձի կամ քաղաքացու առաջադրանքով և աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել սույն գործի առանձնահատկությունները, սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրական պահանջը և այն հանգամանքը, որ սույն գործով Վարդան Պողոսյանը՝ որպես սպառող, «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքենան հանձնել է **Ձեռնարկատիրոջը պատկանող ավտոլվացման կետի** աշխատակից Է. Յավրյանին, այսինքն՝ վերջինս ավտոմեքենան հանձնել է ոչ թե անհատապես Է. Յավրյանին, այլ Ձեռնարկատիրոջը՝ որպես ծառայություն մատուցող և միաժամանակ որպես Է. Յավրյանի գործատուի: Հետևաբար, Վարդան Պողոսյանն առաջարկվող ծառայություններից օգտվելիս ամենևին պարտականություն չէր կրում ստուգելու Ձեռնարկատիրոջ աշխատանքների կազմակերպման տարածքում գտնվող և որպես աշխատող ներկայացող Է. Յավրյանի՝ իրականում այդպիսին լինելու, աշխատողի աշխատաժամանակն ավարտված լինելու և այդ դեպքում արտաժամյա աշխատանքների իրականացումն աշխատողի և գործատուի կողմից համաձայնեցված լինելու հանգամանքները: Ավելին, սույն գործով **Ձեռնարկատերն է կրում** Վարդան Պողոսյանին աշխատանքային ռեժիմի և աշխատակարգի մասին տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև իր աշխատող Է. Յավրյանի կողմից աշխատանքային օրենսդրության պահանջների և աշխատանքային ռեժիմի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությունը, որպիսիք պատշաճ չիրականացնելու արդյունքում աշխատակցի գործողությունների հետևանքով պատճառվել է վնաս: Հետևաբար սույն գործով «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքե-

նային վնաս պատճառվելու դեպքում ոիսկը կրում է ծառայություն մատուցողը՝ Ձեռնարկատերը, ուստի վերջինս էլ պետք է հատուցի ավտոմեքենային պատճառված վնասը:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Էմին Յավրյանը «Վոլկսվագեն Էօս» մակնիշի 03 OO 777 պետհամարանիշի ավտոմեքենան լվացել է գործատուի գտնվելու վայրում՝ ավտոլվացման կետում, հետևապես վերջինիս կողմից այդ ընթացքում պատճառված վնասը պետք է համարվի աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում պատճառված վնաս, որը ենթակա է հատուցման Ձեռնարկատիրոջ կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 20.10.2011 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Անհատ ձեռնարկատեր Հովհաննես Դանիելյանից հօգուտ Արմինե Աբելյանի բռնագանձել 22.320 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի և վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար: Անհատ ձեռնարկատեր Հովհաննես Դանիելյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 230.568 ՀՀ դրամ որպես հայցադիմումի, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախատեսված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2293/02/10
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2293/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Թաթուլ Մանասերյանի ընդդեմ Ընկերության՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Թաթուլ Մանասերյանը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը «Ժամանակ» օրաթերթի առաջին էջում հերքել Թաթուլ Մանասերյանի վերաբերյալ հրապարակված զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալները, ինչպես նաև որպես փոխհատուցում վճարել նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով՝ 2.000.000 ՀՀ դրամ, փաստաբանի վարձատրության գումարը՝ 500.000 ՀՀ դրամ և նախապես վճարված պետական տուրքի գումարը: Ընդ որում, Թաթուլ Մանասերյանը մասնավորեցրել է, որ «Ժամանակ» օրաթերթում 29.09.2010 թվականին հրապարակված «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» վերտառությամբ հոդվածում իր պատիվն ու արժանապատվությունն արատավորել են այն տեղեկությունները, թե «ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանի դեմ քր. գործ է հարուցվել» և «նրան կասկածում են վաշխառությամբ զբաղվելու մեջ», իսկ նույն օրա-

թերթի սեպտեմբերի 30-ին հրապարակված հոդվածում՝ հոդվածի վերնագիրը՝ «Պրն Մանասերյան, $ 40.000 տոկոսով չեք տվե՞լ», և «Թաթուլ Մանասերյանը տվել է 40.000 դոլար՝ 12% տոկոսադրույքով» արտահայտությունը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 20.09.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է պարտավորեցնել Ընկերությանը հերքելու «Ժամանակ» օրաթերթի թիվ 159 (1860), 29.09.2010 թվականի համարի առաջին էջում՝ վերևի աջ կողմում «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» խորագրով հոդվածում Թաթուլ Մանասերյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող (զրպարտող) տեղեկությունները (այն է՝ ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանի դեմ քրգործ է հարուցվել, և այն գտնվում է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում՝ հատուկ կարևորագույն քննիչներից մեկի վարույթում: Նրան կասկածում են վաշխառությամբ զբաղվելու մեջ) և հերքումը տպագրել նույն «Ժամանակ» օրաթերթում՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում «Հերքում» խորագրի ներքո հետևյալ բովանդակությամբ. ««Ժամանակ» օրաթերթի թիվ 159 (1860), 29 սեպտեմբերի 2010 թվականի համարի առաջին էջում՝ վերևի աջ կողմում «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» խորագրով հոդվածը, որում հայտնվում էր, որ «ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանի դեմ քրգործ է հարուցվել, և այն գտնվում է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում՝ հատուկ կարևորագույն քննիչներից մեկի վարույթում: Նրան կասկածում են վաշխառությամբ զբաղվելու մեջ»: Հոդվածում ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը»: Հերքման տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափն ու տեսակը չպետք է զիջի «Ժամանակ» օրաթերթի թիվ 159 (1860), 29 սեպտեմբերի 2010 թվականի համարի առաջին էջում՝ վերևի աջ կողմում «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» խորագրով հոդվածի տեղեկատվությանը: Ընկերությունից բռնագանձել 510.000 ՀՀ դրամ, որից 300.000 ՀՀ դրամը՝ որպես փոխհատուցման գումար, 200.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի վարձատրություն, 10.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.12.2011 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.09.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Թաթուլ Մանասերյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի որոշումից հետևում է, որ դատաքննության փուլում վիրավորանքի կամ զրպարտության վերաբերյալ տարածված տեղեկատվության աղբյուրի բացահայտումը և դրա հիման վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետի ուժով տեղեկատվությունը տարածողին պատասխանատվությունից ազատելն անհիմն է: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի նման մոտեցումն ուղղակի հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջին:

Մասնավորապես՝ նշված նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը զրպարտության համար պատասխանատվությունից ազատելու երեք պահանջ է սահմանել՝ 1) եթե լրագրողն իր հրապարակած հոդվածում հղում է կատարել աղբյուրին (հեղինակին), 2) եթե լրագրողն իր հրապարակած հոդվածում թեև հղում չի կատարել աղբյուրին (հեղինակին), սակայն աղբյուրը (հեղինակը) հայտնի է, 3) եթե լրագրողն իր հրապարակած հոդվածում թեև հղում չի կատարել աղբյուրին (հեղինակին), սակայն հետագայում բացահայտել է հեղինակի անունը: Տվյալ դեպքում թեև լրագրողը չէր նշել հեղինակի անունը, սակայն Դատարանում բացահայտել է այն:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ «Ժամանակ» օրաթերթը 30.09.2010 թվականի համարում հստակեցրել է նախորդ օրը տպագրված հոդվածը՝ նշելով, որ «կա վաշխառության փաստով հարուցված գործ, որով որպես մեղադրյալ անցնում է այլ անձ …»: Բացի այդ, «Ժամանակ» օրաթերթը երբևիցե չի ստացել հերքման տեքստ, հետևաբար չէր կարող այն տպել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.12.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Պատասխանողը կարող է ազատվել պատասխանատվությունից միայն այն դեպքում, երբ հոդվածում հղում կատարած լինի տեղեկատվության աղբյուրին, իսկ հղումը պետք է լինի պատշաճ, այսինքն՝ լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի, հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունը:

30.09.2010 թվականի հոդվածը չի կարող դիտվել որպես նախորդ հոդվածի հերքում, քանի որ այդ հոդվածում լրագրողը նշել է, որ Թաթուլ Մանասերյանից պահանջել է հերքման տեքստ ուղարկել: Բացի այդ, «Հերքում» խորագրի ներքո Ընկերության կողմից որևէ հրապարակում չի եղել: Ավելին, 20.10.2010 թվականին Ընկերությանը ներկայացվել է պահանջագիր և կից հերքման տեքստը, որի վերաբերյալ, սակայն, որևէ արձագանք չի եղել, ինչից հետո Թաթուլ Մանասերյանը դիմել է իր իրավունքների դատական պաշտպանության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերությունը «Ժամանակ» օրաթերթի հրատարակիչն է:

2) «Ժամանակ» օրաթերթի թիվ 159 (1860), 29.09.2010 թվականի համարի առաջին էջի աջ կողմում հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է. «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ»: Հոդվածում տեղ են գտել հետևյալ տեղեկությունները. «Մեր տեղեկություններով՝ ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանի դեմ քրգործ է հարուցվել, և այն գտնվում է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում՝ հատուկ կարևորագույն քննիչներից մեկի վարույթում: Նրան կասկածում են վաշխառությամբ զբաղվելու մեջ: Մեկ այլ քրգործի շրջանակներում որպես վկա հրավիրված անձանցից մեկը միամիտ բերանից թոցրել է, որ Թաթուլ Մանասերյանն իրեն տոկոսով փող է տվել: Ասում են՝ այդպես էլ ծնվել է քրգործը» **(հատոր 1-ին, գ.թ. 11)**: Նշված հոդվածում բացակայում է հղումը տեղեկատվության աղբյուրին:

3) «Ժամանակ» օրաթերթի թիվ 160 (1861), 30.09.2010 թվականի համարի առա-

ջին էջի ձախ կողմում հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է. «Պրն Մանասերյան, $ 40.000 տոկոսով չեք տվե՞լ»: Հոդվածում տեղ են գտել հետևյալ տեղեկությունները. ««Ժամանակ»-ում նախօրեին հրապարակված լուրից («Քրգործ՝ Աժ նախագահի խորհրդականի դեմ») անհանգստացած և զայրացած՝ երեկ խմբագրություն էր զանգահարել ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանը և պահանջում էր, որ հերքենք և ներողություն խնդրենք ոչ ճիշտ տեղեկատվության համար: Որպես հիմնավորում՝ նշում էր, որ ինքն անձամբ հետաքրքրվել է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի պետ Մաթևոսյանից, թե կա՞ իր դեմ վաշխառության փաստով հարուցված քրգործ, թե ոչ, Մաթևոսյանն էլ բացասական պատասխան էր տվել: Մանասերյանն ասաց, որ ոստիկանությունն էլ է հերքել և մեզ ևս առաջարկեց անձամբ զանգել այդ պաշտոնյային և համոզվել: Բայց մենք զանգահարեցինք ոստիկանության լրատվական ծառայություն, որտեղ այնքան էլ տեղյակ չէին և առաջարկեցին՝ հաջորդ օրը զանգահարել մինչև քննիչներից պարզեն: Պարոն Մանասերյանին խնդրեցինք, ամեն դեպքում՝ հերքման տեքստ ուղարկել, սակայն նա ասաց, որ դա կանի, երբ մեզնից տեղեկանա, թե ինչ են պատասխանել ոստիկանությունից: Նաև հերքեց, որ ինքը նախօրեին ցուցմունք է տվել: Այնուհանդերձ, մեր աղբյուրները պնդում են, որ կա վաշխառության փաստով հարուցված գործ, որով որպես մեղադրյալ անցնում է այլ անձ, ում Թաթուլ Մանասերյանը տվել է 40.000 դոլար՝ 12% տոկոսադրույքով: Նախաքննությունը դեռ շարունակվում է: Այլ մանրամասներ առայժմ չենք հրապարակում և այսօր անպայման կզանգահարենք ոստիկանություն» **(հատոր 1-ին, գ.թ. 10):** Նշված հոդվածը տպագրված չէ «Հերքում» խորագրի ներքո:

4) 20.10.2010 թվականին Թաթուլ Մանասերյանը հերքման պահանջ է ներկայացրել «Ժամանակ» օրաթերթը հրատարակող Ընկերությանը **(հատոր 1-ին, գ.թ. 12-13):** Հերքման պահանջը բավարարելու վերաբերյալ գործում ապացույցներ չկան:

5) Ընկերության միջնորդության և 09.06.2011 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ Ընկերությունն Անտոն Առակելովին վկայակոչել է որպես բացահայտման ենթակա աղբյուր **(հատոր 1-ին, գ.թ. 124, 127, 195):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Բողոքի քննությանն անդրադառնալիս Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կիրառման առումով առկա է օրենքի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտություն, ուստի նախ և առաջ անդրադառնում է վերոնշյալ հոդվածի, բովանդակային առումով վերջինիս փոխկապված և պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը:

Ա. ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի 1-ին մասի հա-

մաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից..., իսկ 2-րդ մասի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների հայեցողական լիազորության ճիշտ կենսագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից սահմանված չափորոշիչները խոսքի ազատության իրավունքի և դրա սահմանափակումների վերաբերյալ, մասնավորապես.

1. Խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով,
2. Դրանք պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում,
3. Դրանք պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ,
4. Կիրառված սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող իրավաչափ նպատակներին:

Նախատեսված է օրենքով

Օրենքով նախատեսված լինելու պահանջն առաջին հերթին հանգում է համապատասխան ներպետական օրենքի առկայության: Միաժամանակ որոշակի պահանջներ պետք է նախատեսվեն նաև այդ օրենքի որակական հատկանիշների համար:

Մասնավորապես այն պետք է լինի ընդհանուր կիրառման ներքին ակտ, պետք է լինի հստակ և յուրաքանչյուրին հասանելի:

Այդ մասին է վկայում նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Այսպես՝ Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայում նշված «նախատեսված է օրենքով» արտահայտությունը պահանջում է ոչ միայն ներպետական օրենքի առկայություն, այլև այն վերաբերում է օրենքի որակին: Օրենքը պետք է հասանելի և կանխատեսելի լինի, այսինքն՝ ձևակերպված լինի բավականաչափ հստակ, որպեսզի անհատին հնարավորություն ընձեռի անհրաժեշտության դեպքում կարգավորել իր վարքագիծը *(տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 26.04.1979 թվականի վճիռը, կետ 49, Սանոմա Ուիտգեյերս Բ. Վ.-ն ընդդեմ Նիդերլանդների գործով Եվրոպական դատարանի 14.09.2010 թվականի վճիռը, կետ 81)*:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի սահմանադրականության հարցը քննարկվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշմամբ՝ ճանաչվելով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, հետևաբար «նախատեսված է օրենքով» հասկացության որակական պահանջները համապատասխանում են նաև դրանց սահմանադրականության տեսանկյունից:

Հետապնդում է իրավաչափ նպատակ

Արտահայտվելու նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ գործերով իրավաչափ են այն նպատակները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ կամ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված արժեքների՝ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության համար:

Խոսքի ազատության սահմանափակումները նախատեսված են թե՛ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում, թե՛ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետում, թե՛ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-97-Ն օրենքի ընդունումը, որով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը շարադրվեց նոր խմբագրությամբ և օրենսգիրքը լրացվեց նոր՝ 1087.1-րդ հոդվածով, նպատակ ունի ապահովել անձի պատվի և արժանապատվության պաշտպանությունը այլ անձանց ոտնձգություններից, հստակեցնել զրպարտություն և վիրավորանք հասկացությունները, զրպարտության և վիրավորանքի համար պատասխանատու անձանց շրջանակը և համարժեք դարձնել պատասխանատվությունը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթները հետապնդում են իրավաչափ նպատակ, այն է՝ ապահովել անձի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը:

Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում և համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակներին

Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանմանը, բազմիցս նշել է, որ իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը որոշելու հարցում մասնակից պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմանով, որը, սակայն, ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ, իսկ վերջինիս սահմանները կախված են գործի բնույթից: Բոլոր այն դեպքերում, երբ արձանագրվում է միջամտություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով երաշխավորված ազատություններին և իրավունքներին, եվրոպական կառույցները պետք է խիստ վերահսկողություն սահմանեն, ինչը պայմանավորված է այդ իրավունքների կարևորությամբ *(տե՛ս «Ասլրոնիկ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 22.05.1990 թվականի վճիռը, կետ 61, «Գրոպպերա ռադիո» բաժնետիրական ընկերությունը և մյուսներն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 28.03.1990 թվականի վճիռը, կետ 61)*:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «անհրաժեշտ» հասկացությունը նշանակում է, որ սահմանափակումն առաջացել է հասարակական կամ սոցիալական կարիքներից և առկա է ճնշող հասարակական կարծիք այդ հարցում: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց համարվելու համար միջամտությունը պետք է «բավականաչափ» հիմնավորված լինի, ինչը պարզելու համար հարկավոր է հաշվի առնել տվյալ գործով հանրությանը հուզող յուրաքանչյուր հայեցակետ *(տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 26.04.1979 թվականի վճիռը, կետ 65)*:

Հետապնդվող իրավաչափ նպատակներին միջամտության համաչափությունը

գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև **պատասխանատվության միջոցների բնույթն ու խստությունը** *(տե՛ս Տամներն ընդդեմ Էսբոնիայի գործով Եվրոպական դատարանի 04.04.2001 թվականի վճիռը, կետ 69)*: Պատասխանատվության համար ընտրված միջոցի բնույթը և խստությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դրանք պարզման ենթակա ինքնուրույն հարցեր են:

Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ բոլոր դեպքերում համաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել կիրառված միջոցների **պիտանիությունը**: Սա ենթադրում է, որ պատասխանատվության միջոցների կիրառման լիազորություն ունեցող սուբյեկտը ընտրում է հնարավոր միջոցներից պիտանին: Պիտանի միջոցների մեկից ավելիի առկայության դեպքում պետք է ընտրվի այն միջոցը, որն **անհրաժեշտ է** նպատակին հասնելու համար, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից միայն նա, որը հնարավորություն է տալիս առավել **նվազ ձևով միջամտելով** կարծիքն ազատ արտահայտելու իրավունքին ապահովել այլ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը:

Բ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կանոնակարգումները

Վնաս պատճառողը և տուժողը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Վերոնշյալ դրույթից հետևում է, որ **վնաս պատճառողն** այն անձն է (ֆիզիկական կամ իրավաբանական), ով վիրավորանքի կամ զրպարտության միջոցով արատավորել է այլ ֆիզիկական անձի պատիվը կամ արժանապատվությունը կամ անհատ գործարարի կամ իրավաբանական անձի գործարար համբավը:

Տուժողը (զրպարտության կամ վիրավորանքի ենթարկված անձ) այն ֆիզիկական անձն է, ում պատիվը կամ արժանապատվությունը կամ անհատ գործարարի կամ իրավաբանական անձի գործարար համբավն արատավորել է մեկ այլ անձ (ֆիզիկական կամ իրավաբանական) վիրավորանքի կամ զրպարտության միջոցով:

Վիրավորանքի կամ զրպարտության միջոցով վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության սուբյեկտների շրջանակի սահմանափակում օրենսդիրն արդարացիորեն չի նախատեսել, և այդպիսիք կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Ինչպես վնաս կրողի, այնպես էլ վնաս պատճառողի կողմում կարող են հանդես գալ մեկից ավելի անձինք, և այս դեպքում ծագում է անձանց բազմաթվությամբ պարտավորություն: Ըստ այդմ էլ վնաս պատճառողները հանդես կգան որպես համապարտ պարտապաններ, եթե ծագած պարտավորությունը (վնասի հատուցումը) անբաժանելի է, իսկ տուժողները՝ որպես համիրավ պարտատերեր: Նշված դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետի և 1073-րդ հոդվածի կանոնակարգումները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ թեև մեկնաբանվող դրույթը ուղղակիորեն չի ամրագրում անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձանց պատիվը և արժանապատվությունը պաշտպանելու հնարավորություն, սակայն այն միաժամանակ չի էլ բացառում նման հնարավորությունը, ուստի անկախ լրիվ գործունակության առկայությունից կամ բացակայությունից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ հոդվածներ)՝ անձը պետք է հնարավորություն ունենա

պաշտպանելու իր պատիվն ու արժանապատվությունը: Այս դեպքում դատարան համապատասխան հայց կարող են ներկայացնել անգործունակի կամ սահմանափակ գործունակի օրինական ներկայացուցիչները (ծնող, խնամակալ, հոգաբարձու): Ինչ վերաբերում է իրավունակությունը դադարած, այսինքն՝ մահացած կամ մահացած ճանաչված քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելուն, ապա վերջինիս իրավական կարգավորումն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ կետում, որի համաձայն՝ քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո: Որպես շահագրգիռ անձ կարող են հանդես գալ ինչպես վերջինիս ժառանգները, այնպես էլ յուրաքանչյուր անձ, ով կապացուցի նշված հարցում իր շահագրգիռ անձ լինելը:

Վիրավորանքը և զրպարտությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ վիրավորանքը (պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը) կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլացիաներ, սիմվոլներ): Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակել միջոցների շարքը, որոնք կարող են կիրառվել վիրավորանքն արտահայտելիս՝ հնարավորություն տալով իրավակիրառողին, կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, որոշել՝ արդյոք տվյալ միջոցի օգտագործմամբ կատարված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք: Հետևաբար վիրավորանքը կարող է արտահայտվել ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, որը ներառված չէ վերոնշյալ թվարկման մեջ:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ՝

1. արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստը ապացուցելու դատավարական բեռը կրում է հայցվորը,

2. արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը:

3. արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, որպիսի փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը): Նման դեպքերում առկա է վնասի համատեղ պատճառում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց:

Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային (անձը վիրավորել է տուժողին առանց երրորդ անձանց ներկայության):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված դրույթում ամրագրված վիրավորանքի սահմանումը չի կարող ենթադրել, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողություն պաշտպանված չէ օրենքով: Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի կամ գնահատող դատողության արտահայտումը այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա: Ի տարբերություն փաստերի, որոնք կարող են ներկայացվել և հիմնավորվել, գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել: Գնահատող դատողության ապացուցման պարտականությունն անհնար է իրականացնել և ինքնին խախտում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված իրավունքի հիմնարար մասն է կազմում: Այնուամենայնիվ, երբ հայտարարությունը որակվում է որպես գնահատող դատողություն, անհրաժեշտ է, որ վերջինս հիմնվի բավարար փաստական կազմի վրա *(տե՛ս Պեդերսենը և Բաադսգաարդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանի 17.12.2004 թվականի վճիռը, կետ 76)*: Գնահատողական դատողությունը կարող է անընդունելի համարվել, քանի որ այն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված համարվել *(տե՛ս Ռիգոսը և Դասկասն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 27.05.2004 թվականի վճիռը, կետ 45)*:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ պայմանների առկայությունը պարտադիր է արտահայտությունը վիրավորանք գնահատելու համար: Այդուհանդերձ, օրենսդիրն ամրագրել է որոշակի դեպքեր, երբ արտահայտությունը թեև բավարարում է վերոնշյալ պայմաններին, սակայն կոնկրետ իրավիճակում և իր բովանդակությամբ օրենքի ուժով կարող է չհամարվել վիրավորանք: Այդպիսիք են այն դեպքերը, երբ տեղեկատվությունը հիմնված է **ստույգ փաստերի վրա** (բացառությամբ բնական արատների) կամ **պայմանավորված է գերակա հանրային շահով**: Օրենսդրական նման ձևակերպումը հիմք է արձանագրելու, որ այդ դեպքերը յուրաքանչյուր կոնկրետ

գործով ենթակա են առանձին գնահատման՝ պարզելու, թե արդյոք տվյալ **բովանդակությամբ** և տվյալ **իրավիճակում** ներկայացված արտահայտությունը պարունակում է վիրավորանք, թե ոչ:

Անդրադառնալով «Ստույգ փաստեր» եզրույթին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այդպիսիք հանդիսանում են այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր (ապացուցման անհրաժեշտություն չունեցող): Անհրաժեշտ է ուշադրության դարձնել փաստերի և գնահատող դատողությունների տարբերակման խնդրին, քանի որ դրանք մեծ կարևորություն են ներկայացնում գործի քննության համար և մեծապես կարող են ազդել գործի ելքի վրա: Եվրոպական դատարանը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում անդրադառնալով նշված խնդրին, հստակ տարանջատում է կատարում **փաստերի** և **գնահատող դատողությունների** միջև, որի վերաբերյալ ձևավորել է հետևյալ ընդհանուր սկզբունքը. «Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել. գնահատող դատողությունների ապացուցումն անհնարին խնդիր է, և նման պահանջը խախտում է կարծիքի արտահայտման ազատությունը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնարար մասերից է:» *(տե՛ս Լինգենան ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, կետ 46)*:

Վերոգրյալից զատ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ գնահատող դատողությունը, դիտարկելով որպես կարծիքի ազատ արտահայտման, այլ ոչ թե տեղեկություններ տարածելու իրավունքի դրսևորում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնել այն, թե արդյոք տվյալ դատողությունը հիմնված է որոշակի փաստերի վրա: Փաստական հիմքից զուրկ գնահատող դատողությունը պաշտպանված չէ պետական միջամտությունից: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է նաև նրանով, որ անդրադառնալով նշված հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական կարծիքը կարող է չափազանցված համարվել՝ հատկապես փաստացի հիմքի բացակայության պայմաններում (*տե՛ս Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 01.07.1997 թվականի վճիռը, կետ 33*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ յուրաքանչյուր դատական գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ներկայացված փաստացի տվյալները տվյալ իրավիճակում և իրենց բովանդակությամբ բխել են «Գերակա հանրային շահից», որն անմիջականորեն պայմանավորված է հասարակության տեղեկացված լինելու իրավունքի շահով, արդյո՞ք հանրության համար այդ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է եղել, արդյո՞ք հասարակությունը հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել է դրանց հետագա հրապարակմանը: «Գերակա հանրային շահը» գնահատելիս վերոնշյալ հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում գաղափարների տարածման պարտականություն: Զանգվածային լրատվության միջոցների այդ գործառույթին (պարտականությանը) զուգորդվում (համապատասխանում) է հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաս-

տացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:

Հետևաբար, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որպեսզի վիրավորանքի և զրպարտության գործերով հստակ տարանջատում կատարվի գնահատողական դատողության և փաստերի միջև՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումներ թույլ տալը բացառելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն**),** նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Որպեսզի միջամտությունը խոսքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքին լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայություն գնահատող դատողությունների և այն անձի միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձի հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որ սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին, կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել քննադատության թիրախ *(տե՛ս Դյուլդին և Կիպևովը ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կետ 44)*:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերն արդեն իսկ անդրադարձ կատարվել է «հրապարակային ներկայացնել», «փաստեր» և «գնահատողական դատողություններ» եզրույթներին և դրանց մեկնաբանությունները հավասարապես կիրառելի են նաև

զրպարտության դեպքերի համար՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կրկին չի անդրադառնում դրանց:

Հետևաբար, նշված վավերապայմանների կամ դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի բովանդակության ընկալման տեսանկյունից չի կարող խոսք լինել զրպարտության, հետևաբար նաև՝ դրանով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Վերը նշված չափանիշների առկայության կամ բացակայության հանգամանքի բացահայտումը կարևոր է դատարանների կողմից արդարադատություն իրականացնելիս, այդ թվում՝ ներկայացված փաստացի տվյալները որպես զրպարտություն գնահատելիս:

Միաժամանակ հարկ է նկատել, որ օրենսդիրն ամրագրել է պայմաններ, երբ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն: Նշված պայմաններն ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետում: Ըստ նշված կետի՝ նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.

3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

Վերոնշյալ դրույթի վերլուծությունից հետևում է, որ անկախ նրանից՝ անձը հրապարակել է մեկ այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող և իրականությանը չհամապատասխանող տվյալներ, վերջիններիս ներկայացումը չի համարվի զրպարտություն, եթե դրանք ՝

1. **Վերաբերում են դատական կամ մինչդատական վարույթում գտնվող գործի հանգամանքներին կամ տեղ են գտել ապացույցներում:** Նշված դրույթում ամրագրված «մինչդատական» և «դատական վարույթ» տերմինները հավասարապես պետք է վերաբերեն ինչպես քաղաքացիական և վարչական դատավարության (դատական վարույթներ), այնպես էլ քրեական դատավարության կարգով քննվող գործերին (մինչդատական և դատական վարույթներ):

2**. Պայմանավորված են գերակա հանրային շահով:** Վճռաբեկ դատարանը վերևում տրված մեկնաբանությամբ արդեն իսկ անդրադարձել է «գերակա հանրային շահ» արտահայտության մեկնաբանմանը, ուստի կրկին չի անդրադառնում դրան: Ի տարբերություն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն: Մասնավորապես՝ փաստացի տվյալներ հրապարակած անձը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Այս դեպքում բարեխղճու-

թյունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք: Ինչ վերաբերում է «հավասարակշռված» եզրույթին, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստացի տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին:

3. Զրպարտությունը վերոնշյալ դրույթի ուժով բացակայում է նաև այն դեպքում, երբ հրապարակային **տեղեկություններ տարածող անձը նշված տեղեկությունները տարածում է՝ հիմք ընդունելով զրպարտության ենթարկվողի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթում կամ պատասխանում կամ նրանցից ելնող փաստաթղթում արված եզրահանգումները կամ փաստերը:**

Տեղեկատվության տարածումը այս դեպքում ևս ենթադրում է հրապարակային ելույթում կամ պատասխանում կամ փաստաթղթում տեղ գտած եզրահանգումների կամ փաստերի բարեխիղճ շարադրանք: Ելույթ պետք է դիտարկել անձի կողմից հնչեցրած բանավոր խոսքը, որը նպատակ ունի որոշակի տեղեկատվություն հասու դարձնել անորոշ թվով անձանց և արվում է որոշակի ձևաչափին համապատասխան կազմակերպված միջոցառումների ժամանակ (օրինակ՝ կոնֆերանսներ, համաժողովներ, հավաքներ, հանրահավաքներ և այլն):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն հոդվածի իմաստով «փաստաթուղթ» տերմինի մեկնաբանությունն անհրաժեշտ է կատարել՝ հաշվի առնելով նաև երկրում գործող փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կարգավորումը: Ուստի «փաստաթուղթ» տերմինը սույն հոդվածի իմաստով չպետք է նույնացվի բացառապես թղթային կրիչի օգտագործմամբ կազմված գրավոր արտահայտված տեղեկության հետ: Դրանում կարող են ներառվել կրիչի ցանկացած տեսակի (էլեկտրոնային (ֆաքս, լուսապատճեն և այլն), նյութական այլ կրիչներ) օգտագործմամբ կատարված գրառումները: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «փաստաթուղթ» տերմինի նեղ մեկնաբանումն անհարկի սահմանափակում է և չի ներառում դեպքերի այն շրջանակը, որոնց պարագայում փաստաթղթերը կազմվում և տարածվում են էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:

Պատասխանատվությունից ազատվելը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հողում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հողում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորան-

քը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վերոնշյալ դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև համակարգային մեկնաբանության սկզբունքը: Այսպես՝ սույն հոդվածը, ներառված լինելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վնաս պատճառելու հետևանքով ծագող հարաբերությունները կանոնակարգող գլխում, վերաբերում է քաղաքացու պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին վնաս պատճառելու հետևանքով ծագող հարաբերությունների կարգավորմանը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կանոնակարգումները վերաբերում են բացառապես **վիրավորանքի և զրպարտության միջոցով** պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին **վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերություններին:**

Վերոնշյալ մեկնաբանությունները հիմք ընդունելով և համադրելով դրանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված պարտավորությունների ծագման հիմքերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին վիրավորելը կամ զրպարտելը առաջացնում են պարտավորական հարաբերություն (պարտավորություն): Պարտավորական հարաբերության դադարման հիմքերին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով: Վիրավորանքի կամ զրպարտության հիմքով ծագած պարտավորությունը ևս դադարում է պարտավորությունների դադարման համար ընդհանուր հիմքերի առկայության դեպքում՝ հաշվի առնելով այդ հարաբերությունները կարգավորող նորմերի առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

Համադրելով վերոնշյալ դրույթը նույն հոդվածի 3-րդ կետում ամրագրված «զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը» դրույթի հետ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը. զրպարտության վերաբերյալ գործերի քննության ընթացքում գործում է այն կանխավարկածը, որ փաստերի՝ իրականությանը համապատասխանելու ապացուցման բեռը կրում է պատասխանողը: Այս ընդհանուր կանոնից բացառություն է հանդիսանում միայն այն դեպքը, երբ ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր: Այս պարագայում ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը, սակայն միայն այն դեպքում, երբ պատասխանողը կհիմնավորի իրենից պահանջվող գործողությունների և ջանքերի ոչ ողջամիտ լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Եթե նույնիսկ պատասխանողից պահանջվող գործողությունները կամ ջանքերը ոչ ողջամիտ են, սակայն անհրաժեշտ ապացույցներին հայցվորը չի տիրապետում, ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը:

Վիճարկվող փաստերի՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքի հաստատումը պատասխանողին (ենթադրյալ վնաս պատճառողին) ազատում է պա-

տասխանատվությունից, հետևաբար հանգեցնում է ենթադրյալ պարտավորության դադարման:

Զրպարտության կամ վիրավորելու հետևանքով ծագող հարաբերությունը դադարում է նաև այն դեպքում, երբ լրատվական գործունեություն իրականացնողը տուժողի պահանջով հրապարակել է հերքում կամ տուժողի պատասխանը: Վճռաբեկ դատարանի նշված եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 10-րդ կետի կանոնակարգումից, որի համաձայն՝ անձը չի կարող օգտվել սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:

Վերոնշյալ ընդհանուր և հատուկ հիմքերից բացի օրենսդիրը **վիրավորանքի կամ զրպարտության միջոցով վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության** դադարման որևէ այլ հիմք չի նախատեսել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերից հետևում է, որ անձն ազատվում է պատասխանատվությունից երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- արտահայտված կամ ներկայացված փաստացի տվյալներն անձի հրապարակային ելույթների, պաշտոնական փաստաթղթերի, հեղինակային ստեղծագործությունների, լրատվական գործունեություն իրականացնող ընկերությունների հրապարակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են,
- տեղեկատվությունը տարածելիս հղում է կատարվել **տեղեկատվության աղբյուրին:**

Տեղեկատվությունը բառացի կամ բարեխիղճ ներկայացնելու օրենսդրի պահանջը նպատակ է հետապնդում ապահովել բացահայտված աղբյուրում տեղ գտած տեղեկատվության բառացի շարադրանքը կամ հրապարակել այն այնպես, որ չփոխվի ինչպես ամբողջական իմաստը, այնպես էլ կոնկրետ փաստերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերում ամրագրված «տեղեկատվության աղբյուր» եզրույթին: Նշված դրույթների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով տեղեկատվության աղբյուրներն **անձինք** են (ֆիզիկական և իրավաբանական), որոնք տարբեր **միջոցներով** հրապարակում են տեղեկատվությունը: Տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հեղինակները և լրատվական գործակալությունները: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիշատակված դրույթներում ամրագրված **անձի հրապարակային ելույթները, պաշտոնական փաստաթղթերը, հեղինակային ստեղծագործությունները** տեղեկատվության **աղբյուրների** կողմից օգտագործվող **միջոցներ են:**

«Տեղեկատվության միջոց» հասկացությունը մեկնաբանելիս Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Վերջինիս համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի գործողության ոլորտում են գտնվում ոչ միայն այն տեղեկությունները և գաղափարները, որոնք արտահայտվում են գրավոր կամ բանավոր խոսքի **միջոցով,** այլ նաև տարաբնույթ միջոցներով արտահայտված և տարածվող տեղեկություններն ու գաղափարները: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելի է գեղարվեստական ինքնարտահայտման միջոցների՝ նկարների, ֆիլմերի և արվեստի այլ ստեղծագործությունների նկատ-

մամբ, ինչպես նաև հեռարձակման բոլոր միջոցների և էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի նկատմամբ (*տեղեկությունների և գաղափարների արտահայտման միջոցների հարցին Եվրոպական դատարանն ի թիվս այլոց անդրադարձել է Մյուլերը և մյուսներն ընդդեմ Շվեյցարիայի գործով 24.05.1988 թվականի որոշմամբ, կետ 34, Աութրոնիկ ԷյՋի-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով 22.05.1990 թվականի որոշմամբ, կետ 47*):

Վերոնշյալ հետևությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ հղում է կատարված տեղեկատվության աղբյուրին, սակայն նույն աղբյուրում տեղ գտած տեղեկատվությունը հրապարակված չէ բառացի կամ բարեխիղճ, այլ կերպ՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը), ապա հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից: Նույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ տարածողը թեև վերարտադրում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ շարադրանքը, այդուհանդերձ հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում «տեղեկատվության աղբյուր» ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն:

Վերը նշված երկու դեպքերում էլ տեղեկատվություն հրապարակողն ինքն է համարվում զրպարտող կամ վիրավորող:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ տեղեկատվություն հրապարակողը, եթե նույնիսկ հրապարակել է տեղեկատվության բովանդակությունը բառացի կամ բարեխիղճ և հղում է կատարել աղբյուրին, չի ազատվում պատասխանատվությունից, եթե դատավարության ընթացքում կապացուցվի, որ նա գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ զրպարտություն լինելու մասին, քանի որ նման դեպքում անձի մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը: Այս դեպքում ինչպես տեղեկատվությունը կրող աղբյուրը, այնպես էլ այդ տեղեկատվությունը հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն որպես համատեղ վնաս պատճառողներ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պետք է կատարվի տեղեկատվությունը տարածելու հետ միաժամանակ: Տեղեկատվությունը **տարածելիս** և ոչ թե դրանից հետո աղբյուրի բացահայտումը նպատակ է հետապնդում այդ տեղեկատվության հասցեատերերի մոտ ապահովել տեղեկացվածություն այն մասին, որ զրպարտությունը կամ վիրավորանքը դուրս է գալիս կոնկրետ սուբյեկտից, այլ ոչ թե անմիջական հրապարակողից կամ անորոշ թվով սուբյեկտներից: Աղբյուրի բացահայտումը, կախված աղբյուրի տեսակից, կարող է ազդել հասարակական կարծիքի ձևավորման վրա: Մինչդեռ տեղեկատվության աղբյուրը դատական վարույթի ընթացքում բացահայտելը լիարժեք չի ապահովում զրպարտող կամ վիրավորող սուբյեկտի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը:

Վնասի փոխհատուցումը վիրավորանքի և զրպարտության դեպքում

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնա-

կի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Նույն հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

1) վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը.

2) վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը:

Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը:

Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ քննարկման առարկա հարցի շրջանակներում գործ ունենք մի կողմից տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից անձի՝ իր պատվի, արժանապատվության, գործարար համբավի նկատմամբ հարգանք պահանջելու Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և երաշխավորված իրավունքների հետ, անհրաժեշտ է համարում նշել, որ փոխհատուցման չափ սահմանելու յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի վիրավորանք և զրպարտանք կատարած անձի ֆինանսական վիճակը և բացառվի փոխհատուցման այնպիսի չափերի և ձևերի սահմանումը, որոնք կարող են վճռորոշ նշանակություն ունենալ պատասխանող կողմի համար, առավել ևս, եթե պատասխանող կողմը զանգվածային լրատվության միջոց է՝ նրա հետագա գործունեությունը շարունակելու առումով:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիրավորանքի և զրպարտության համար սահմանվող փոխհատուցման ողջամտության հարցին, որը պետք է համաչափ լինի անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասին, և, միաժամանակ, անհարկի ֆինանսական պարտավորություններ չառաջացնի պատասխանողի համար:

Նախ, անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերը հնարավորություն են տալիս անձին նախատեսված մեկ կամ մի քանի միջոցների կիրառմամբ զրպարտող կամ վիրավորող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնել: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դատարանները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է անհրաժեշտ գնահատական տան այն հանգամանքին, թե արդյոք կողմերը որևէ փորձ արել են վեճը լուծել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված արտադատական կարգով, այն է՝ արդյոք անձը մինչև դատարան հայց ներկայացնելը դիմել է համապատասխան լրատվամիջոցին հերքում հրա-

պարակելու պահանջով, և այդ պահանջին զանգվածային լրատվության միջոցը որևէ ընթացք տվել է, թե ոչ: Բացի այդ, դատարանները քննարկվող հարցի վերաբերյալ գործեր քննելիս նախ պետք է ջանքեր գործադրեն գործը հաշտությամբ լուծելու ուղղությամբ, այնուհետև գործում առկա բոլոր ապացույցների գնահատմամբ անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք հնարավոր չէ վերականգնել անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասը ոչ նյութական փոխհատուցում նշանակելու միջոցով, քանի որ օրենսդիրը մինչև նյութական փոխհատուցում սահմանելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանել է նաև պատճառված վնասի վերականգնման այլ միջոցների ընտրության և կիրառման հնարավորություն (վիրավորանքի դեպքում՝ հրապարակային ներողություն խնդրել, եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը, զրպարտության դեպքում՝ եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը):

Նյութական փոխհատուցում նշանակելու դեպքում անհրաժեշտ է, որ դատարանները մեծ ուշադրություն դարձնեն փոխհատուցվող գումարի չափի սահմանմանը, պատասխանողներից պահանջեն նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններին ներկայացված ֆինանսական և այլ փաստաթղթեր (օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացված հարկային հաշվետվությունները), հակառակ դեպքում մեծ չափով փոխհատուցումները կարող են ծանր հետևանքներ ունենալ վերջիններիս բնականոն գործունեությունը շարունակելու առումով: Ընդ որում, այս հարցի քննարկման ժամանակ դատարանները պետք է ուշադրություն դարձնեն հայցվոր կողմի՝ նյութական փոխհատուցման պահանջի վերաբերյալ պատասխանող կողմի ներկայացրած փաստարկներին, որոնք, ըստ էության, պետք է պարունակեն նաև տեղեկություններ իրենց բնականոն գործունեության նկատմամբ պահանջվող փոխհատուցման չափի ֆինանսական ազդեցության վերաբերյալ:

Դրամական փոխհատուցման չափ սահմանելիս դատարանները նախ և առաջ պետք է հաշվի առնեն, թե ինչ միջոցով կամ եղանակով է կատարվել զրպարտությունը կամ վիրավորանքը և ապա վերջիններիս տարածման շրջանակը: Գնահատման առարկա պետք է դառնա օգտագործված միջոցի կամ եղանակի՝ տեղեկատվության արագ և համընդհանուր տարածման հարցը: Այսպես՝ զանգվածային լրատվության միջոցներով կատարված հրապարակումների տարածումը շատ ավելի արագ է, քան եթե հրապարակումն արվեր անձանց փոքրաթիվ խմբի շրջանակում: Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև տեղեկատվությունը տարածելու շրջանակը: Զանգվածային լրատվության միջոցները, որոնք գործում են տեղական մակարդակում (մարզ, քաղաք), ունեն ավելի փոքր տարածման շրջանակ, քան հանրապետության ամբողջ տարածքով հեռարձակվող և տարածվող լրատվամիջոցները:

Դրամական փոխհատուցման չափ սահմանելիս դատարանների կողմից հաշվի առնվող վերոնշյալ հանգամանքները սպառիչ չեն, քանի որ օրենսդիրը սահմանել է դատարանի պարտականությունը՝ հաշվի առնել կոնկրետ գործի առանձնահատկությունները: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ի թիվս վերոգրյալ հանգամանքների, այն դեպքերում, երբ վիրավորանքը կամ զրպարտությունը շարունակվում են նաև **գործի քննության ընթացքում** (գործի՝ դատարանում քննության գտնվելու ողջ ժամանակահատվածում), այդ հանգամանքը դատարանները կարող են հաշվի առնել դրամական փոխհատուցման չափ նշանակելու հարցը լուծելիս:

Ամփոփելով նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանները պետք է փորձեն գործում առկա ապացույցների գնահատմամբ և վերը նշված միջազգային փաստաթղթերի լույսի ներքո մինչև նյութական փոխհատուցում սահմանելը քննարկման առարկա դարձնել խախտված իրավունքների վերականգնման օրենքով նախատեսված այլ միջոցների կիրառման հնարավորությունը, որը զանգվածային լրատվության միջոցների դեպքում չի խոչընդոտի նրանց հետագա բնականոն գործունեությանը՝ միաժամանակ բացառելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումը:

Վերը հիշատակված դրույթով սահմանվում է նաև դատարանների պարտականությունը՝ հաշվի չառնել վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը, եթե այդպիսին առկա է կամ դրա չափը: Նման կանոնի նախատեսումը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դրամական հատուցումներն իրենցից ներկայացնում են ոչ նյութական վնասի հատուցում և պայմանավորված չեն իրական վնասի կամ բաց թողնված օգուտի առկայությամբ կամ բացակայությամբ: Նշված վնասները, եթե այդպիսիք կան, հատուցման ենթակա են առանձին կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի հիման վրա: Այսպես՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի՝ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իրեն պատճառված **գույքային վնասները**, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերում ամրագրված դրամական փոխհատուցման, երբ դատարանը կարող է մերժել դրամական փոխհատուցումը՝ հիմք ընդունելով պատասխանողի գույքային դրությունը, նույն հոդվածի 12-րդ կետում ամրագրված **գույքային վնասը** ենթակա է փոխհատուցման ամբողջ ծավալով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վնասի ինստիտուտը կանոնակարգող նորմերին համապատասխան: Հաշվի առնելով այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը «վնաս» եզրույթն օգտագործում է իրական վնաս և բաց թողնված օգուտ իմաստներով և օրենսգրքում որևէ այլ տեղ, բացի 1087.1-րդ հոդվածից, չի կիրառվում «գույքային վնաս» եզրույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «գույքային վնաս»-ը պետք է մեկնաբանվի որպես անձին պատճառված իրական վնաս և/կամ բաց թողնված օգուտ: Վնասում ներառվում են նաև **ողջամիտ** դատական ծախսերը, որոնք անձը կատարել է կամ կատարելու է իրավունքները վերականգնելու համար, ինչպես նաև ցանկացած այլ ծախս, որն ուղղակիորեն կատարվել է խախտված իրավունքների վերականգնման համար:

Պաշտոնատար անձանց քննադատությունը

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ևս մեկ իրավական խնդրի՝ քաղաքական խոսքին կամ հանրությանը հետաքրքրող հարցերի շուրջ բանավեճին և պաշտոնատար անձանց քննադատությանը:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քաղաքական խոսքը կամ հանրությանը հետաքրքրող հարցերի շուրջ բանավեճը սահմանափակելու առումով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառման նեղ ոլորտ ունի *(տե՛ս Ուինգրովն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 25.11.1996 թվականի վճիռը, կետ 58)*: Բացի այդ, թույլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են կառավարության, քան թե մասնավոր քաղաքացու կամ նույնիսկ քաղաքական գործչի նկատմամբ:

Ժողովրդավարական հասարակարգում պետության գործողությունները կամ բացթողումները պետք է ենթարկվեն խիստ վերահսկողության ոչ միայն օրենսդիր և դատական մարմինների, այլև մամուլի և հանրային կարծիքի կողմից *(տե՛ս Ինկալն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 09.06.1998 թվականի վճիռը, կետ 54)*: Քաղաքական գործիչների նկատմամբ ընդունելի քննադատության սահմանները, հետևաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց պարագայում: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար իրենց հասանելի են դարձնում արված յուրաքանչյուր խոսքի և գործի նկատմամբ լրագրողների և հանրության լայն խավերի սրված ուշադրության համար, և նրանք այդ կապակցությամբ պարտավոր են հանդուրժողականության ավելի մեծ աստիճան դրսևորել: Անկասկած, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը թույլ է տալիս պաշտպանել այլոց, այսինքն՝ բոլոր անհատների հեղինակությունը, և այս պաշտպանությունը տարածվում է քաղաքական գործիչների նկատմամբ ևս, եթե նույնիսկ նրանք հանդես չեն գալիս իրենց մասնավոր կարգավիճակում, սակայն նման դեպքերում այդպիսի պաշտպանության պահանջները պետք է կշեռքի նժարին դնել՝ մյուս նժարին դնելով քաղաքական հարցերը բաց կերպով քննարկելու շահերը *(տե՛ս Լինգենան ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, կետ 42)*:

Անդրադառնալով քաղաքացիական ծառայողների նկատմամբ քննադատության սահմանների հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական ծառայողների նկատմամբ ևս, ինչպես որ քաղաքական գործիչների դեպքում է, ընդունելի են քննադատության ավելի լայն սահմաններ: Այնուամենայնիվ, քաղաքացիական ծառայողները լիազորությունների պատշաճ կատարումն ապահովելու առումով պետք է վայելեն հասարակական վստահություն, զերծ լինեն անընդմեջ քննադատությունից, և այդ պատճառով է, որ անհրաժեշտ է նրանց տրամադրել պաշտպանություն իրենց պարտականությունների կատարման առնչությամբ վիրավորական և զրպարտչական հարձակումներից *(տե՛ս Յանովսկին ընդդեմ Լեհաստանի 21.01.1999 թվականի վճիռը, կետ 33)*:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանները պետք է հաշվի առնեն տարբերությունը քաղաքական գործիչների և հանրային ծառայողների միջև, և այն, որ հանրային ծառայողները՝ ներառյալ դատավորները, դատախազները, ոստիկանները, իրականացնում են հատուկ լիազորություններ և պետք է ունենան հանրային վստահություն, հետևաբար նրանք պետք է պաշտպանված լինեն վիրավորական և զրպարտչական հարձակումներից:

Վերոնշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման, հետևաբար և կարծիքի ազատ արտահայտման և տեղեկություններ տարածելու իրավունքի միջամտության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն, որ քաղաքական գործիչների, հանրային ծառայողների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ քննադատության սահմաններն ավելի լայն են, քան մասնավոր անձանց դեպքում: Այդուհանդերձ նման քննադատությունն ընդունելի կարող է համարվել, եթե այն արտահայտվել է վերջիններիս գործունեության առնչությամբ և չի գերազանցում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված վերոնշյալ սահմանափակումները: Հակառակ դեպքում քաղաքական գործչի՝ որպես մասնավոր անձի վերաբերյալ քննադատության նկատմամբ ամբողջ ծավալով կիրառելի են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումները, և հնչեցրած կարծիքը կամ տարածած տեղեկությունը որպես զրպարտություն գնահատելիս չպետք է հաշվի առնել անձի՝ պաշտոնատար անձ լինելու հանգամանքը:

Հայցային վաղեմության ժամկետները

Կապված քննարկման առարկա հոդվածով դատարաններ հայցեր ներկայացնելու ժամկետների հետ՝ հարկ է նշել, որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը: Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

Վերլուծելով վերը նշված իրավական դրույթների բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի պաշտպանության միջոցի ընտրությունը բոլոր դեպքերում կատարում է տուժողը: Վերջինս էլ կարող է մի դեպքում նախապատվություն տալ անմիջապես զանգվածային լրատվության միջոցին հերքման պահանջ ներկայացնելուն, մյուս դեպքում՝ իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելուն: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արտադատական կարգով խախտված իրավունքի վերականգնման համար զանգվածային լրատվամիջոցին դիմելը թեև պարտադիր պայման չէ իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար, այդուհանդերձ դատարանները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնեն այն, թե արդյոք անձը մինչև դատարան հայց ներկայացնելը դիմել է համապատասխան լրատվամիջոցին հերքում հրապարակելու պահանջով, և այդ պահանջին զանգվածային լրատվության միջոցը որևէ ընթացք տվել է, թե ոչ:

Օրենսդիրը հնարավորություն է տվել շահագրգիռ անձին դատարան դիմել բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մինչև վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիսը լրանալը՝ դրանում ներառելով նաև զանգվածային լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը: Անհրաժեշտ է նաև նշել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ զրպարտությունը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է զրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ ժամկետները այնպիսի ժամկետներ են, որոնց ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար, այդ ժամկետներն իրենց բնույթով համապատասխանում են հայցային վաղեմության ժամկետին, և դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները:

Գ. Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը «Ժամանակ» օրաթերթի հրատարակիչն է, իսկ «Ժամանակ» օրաթերթի թիվ 159 (1860), 29.09.2010 թվականի համարի առաջին էջի աջ կողմում հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է. «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ»: Հոդվածում տեղ են գտել հետևյալ

տեղեկությունները. «Մեր տեղեկություններով՝ ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի խորհրդական Թաթուլ Մանասերյանի դեմ քրգործ է հարուցվել, և այն գտնվում է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում՝ հատուկ կարևորագույն քննիչներից մեկի վարույթում: Նրան կասկածում են վաշխառությամբ զբաղվելու մեջ: Մեկ այլ քրգործի շրջանակներում որպես վկա հրավիրված անձանցից մեկը միամիտ բերանից թոցրել է, որ Թաթուլ Մանասերյանն իրեն տոկոսով փող է տվել: Ասում ենք՝ այդպես էլ ծնվել է քրգործը»: Նշված հոդվածում բացակայում է տեղեկատվության աղբյուրին հղումը:

Սույն փաստերի նկատմամբ կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերի վերաբերյալ վերոշարադրյալ մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերից հետևում է, որ Ընկերությունն ազատվում է պատասխանատվությունից երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» հոդվածում արտահայտված կամ ներկայացված փաստացի տվյալներն անձի հրապարակային ելույթների, պաշտոնական փաստաթղթերի, հեղինակային ստեղծագործությունների, լրատվական գործունեություն իրականացնող ընկերությունների հրապարակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են,
- նշված տեղեկատվությունը տարածելիս Ընկերությունը հղում է կատարել **տեղեկատվության աղբյուրին:**

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերում ամրագրված «տեղեկատվության աղբյուր» եզրույթի՝ սույն գործով բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ հիշատակված հոդվածում որպես աղբյուր պետք է նշվեր այն անձը (անձինք) կամ լրատվական գործակալությունը, որտեղից ստացվել էր հոդվածում տեղ գտած տեղեկությունը: Ինչ վերաբերում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրության գնահատմանը, ապա նշված հարցին հնարավոր կլիներ անդրադառնալ, երբ Ընկերությունը կներկայացներ այն **հրապարակային ելույթները, պաշտոնական փաստաթղթերը, հեղինակային ստեղծագործությունները կամ ցանկացած այլ միջոց,** որից վերցվել է վեճի առարկա հանդիսացող հոդվածում տեղ գտած տեղեկությունը:

Վերոնշյալ հետևությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից բացակայում է հղումը տեղեկատվության աղբյուրին, միաժամանակ բացակայում է այդ տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրումը հիմնավորող որևէ ապացույց:

Այս հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն ինքն է համարվում տեղեկություն հրապարակող, հետևաբար և զրպարտող:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը Ընկերության կողմից պետք է կատարվեր վեճի առարկա հոդվածի հրապարակման հետ միաժամանակ (սույն հոդվածում նշվեր, թե որն է տեղեկատվության աղբյուրը): Հոդվածի հրապարակման հետ միաժամանակ և ոչ թե դրանից հետո աղբյուրի բացահայտումն այդ տեղեկատվության հասցեատերերի մոտ կապահովեր տեղեկացվածություն այն մասին, որ «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» վերտառությամբ հոդվածում տեղ գտած փաստերը դուրս են գալիս կոնկրետ սուբյեկտից, այլ ոչ թե անմիջական հրապարակողից կամ անորոշ թվով սուբյեկտներից: Հաշվի առնելով այն, որ Ընկերությունը նշված տեղեկությունը տարածել է զանգվածային լրատվության միջոցով, ինչն ապահովում է տեղեկատվության հասանելիության բարձր մակարդակ և տարածման ընդգրկուն շրջանակ՝

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հոդվածում տեղ գտած տեղեկությունները կարող են ազդել անձի վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորման կամ առկա կարծիքի փոփոխման վրա: Մինչդեռ տեղեկատվության աղբյուրը դատական վարույթի ընթացքում բացահայտելը լիարժեք չի ապահովում զրպարտող սուբյեկտի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը և արդեն իսկ զրպարտվող անձի նկատմամբ ձևավորված հնարավոր բացասական կարծիքի փոփոխումը:

Այս հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը չի կարող ազատվել Թաթուլ Մանասերյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, քանի որ տեղեկատվության տարածման ժամանակ տեղեկատվության աղբյուրին (հեղինակին) հղում չի կատարվել, իսկ Ընկերության կողմից դատավարության ընթացքում աղբյուրի բացահայտումը որևէ կերպ չի ապահովում զրպարտող կամ վիրավորող սուբյեկտի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը: Բացի այդ, պատասխանողը չի ներկայացրել որևէ ապացույց, որ մինչ հոդվածի հրապարակվելը ձեռնարկել է որևէ միջոց՝ պարզելու իր «աղբյուրի» կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը: Պատասխանողը վիճարկվող հոդվածում հստակ նշել է, որ ըստ տեղեկությունների «քրգործը հարուցվել և քննվում է Կենտրոնի քննչական բաժնում»: Այսինքն՝ ողջամիտ կլիներ առնվազն հարցում ուղարկել նշված բաժին՝ ստացված տեղեկատվության իսկությունը պարզելու համար: Այս և նման որևէ այլ գործողություն՝ ուղղված հրապարակման ենթակա տեղեկատվության իսկությունը պարզելուն, պատասխանողի կողմից չի ձեռնարկվել:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Ընկերությունը որպես բացահայտման ենթակա աղբյուր վկայակոչել է Անտոն Առակելովին: Մինչդեռ վերջինս վերը նշված հիմնավորումներով չի կարող համարվել տեղեկատվության աղբյուր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով, քանի որ չի հանդիսանում տեղեկատվության տարածման որևէ **միջոցի** հեղինակ կամ լրատվական գործունեություն իրականացնող: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այնպիսի անձի հրապարակած զրպարտող կամ վիրավորող տեղեկությանը հղում կատարելը, ով չի հանդիսանում տեղեկատվության աղբյուր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել տեղեկատվության աղբյուրի բացահայտում:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ «Ժամանակ» օրաթերթը 30.09.2010 թվականի համարում հստակեցրել է նախորդ օրը տպագրված հոդվածը՝ նշելով, որ «կա վաշխառության փաստով հարուցված գործ, որով որպես մեղադրյալ անցնում է այլ անձ …», ինչն իրենից ներկայացնում է հերքում, ապա Վճռաբեկ դատարանն այն հիմնավոր չի համարում հետևյալ պատճառաբանությամբ.

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հերքումն իրականացվում է լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով: Հերքումն իրականացվում է դրա պահանջն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Այդ ժամկետում լրատվության միջոցի թողարկում տեղի չունենալու կամ միակ թողարկումն արդեն իսկ թույլատրված լինելու դեպքում հերքումը պետք է տեղ գտնի լրատվության միջոցի առաջին իսկ թողարկման մեջ:

Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է:

Տվյալ դեպքում «Ժամանակ» օրաթերթի թիվ 160 (1861), 30.09.2010 թվականի համարի առաջին էջի ձախ կողմում հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է. «Պրն Մանասերյան, $ 40.000 տոկոսով չեք տվե՞լ», իսկ նշված հոդվածը տպագրված չէ

«Հերքում» խորագրի ներքո: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր հոդվածի հրապարակումը, որն իր մեջ ներառում է նախորդ հոդվածում հրապարակված փաստերի փոփոխում, չի կարող համարվել հերքում: Մինչդեռ վերը նշված հոդվածում հերքման համար անհրաժեշտ պայմանների պահպանման ամրագրումը նպատակ է հետապնդում հասարակությանն ակնառու եղանակով տեղեկացնել նախորդ հոդվածում տեղ գտած փաստերի՝ իրականությանը չհամապատասխանելու մասին: Հակառակ դեպքում առաջանում է անորոշություն, և բացակայում է տուժողի իրավունքների վերականգնումը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ հիշատակված հոդվածում նշվել է Թաթուլ Մանասերյանից հերքման տեքստ պահանջելու մասին, այսինքն՝ այդ հոդվածը հրապարակելիս որևէ հերքման տեքստ օրաթերթը չի ունեցել, նշված համարում զետեղած տեղեկատվությունը չի գնահատել որպես հերքում, հակառակ դեպքում՝ հերքման տեքստ չէր պահանջի: Ընդ որում, հերքման տեքստն Ընկերությանը տրվել է 20.10.2010 թվականին, սակայն գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ հերքման պահանջը բավարարվել է, և տպագրվել է հերքման տեքստը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 10-րդ կետի կանոնակարգումների ուժով չի դադարել կողմերի միջև զրպարտելու հետևանքով վնաս պատճառելու արդյունքում ծագած պարտավորական հարաբերությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2011 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և Վճռաբեկ դատարանի 07.03.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0749/02/10
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Սահակյան

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ/0749/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Բորիս Աշրաֆյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վանո Եղիազարյանի ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վանո Եղիազարյանը պահանջել է պարտավորեցնել Բորիս Աշրաֆյանին վիրավորանք հասցնելու համար հրապարակային ներողություն խնդրել լրատվության նույն միջոցով և բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ, իսկ զրպարտության համար՝ պարտավորեցնել նույն թերթի միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև բռնագանձել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված դատական ծախսերը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (Դատավոր՝ Վ.Հովսաննյան) (այսուհետ՝ Դատարան) 22.07.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Վանո Եղիազարյանին վիրավորանք հասցնելու համար պար-

տավորեցնել Բորիս Աշոտի Աշրաֆյանին հրապարակային ներողություն խնդրել Վանո Եղիազարյանից «Ժամանակ» օրաթերթում ներողության տեքստը հրապարակելու միջոցով և Բորիս Աշրաֆյանից հօգուտ Վ. Եղիազարյանի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ, զրպարտության համար պարտավորեցնել Բորիս Աշրաֆյանին «Ժամանակ» օրաթերթում զրպարտություն համարվող տվյալները հերքելու մասին տեղեկատվություն հրապարակելու միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող տվյալները և Բորիս Աշրաֆյանից հօգուտ Վանո Եղիազարյանի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ, Բորիս Աշրաֆյանից հօգուտ Վանո Եղիազարյանի բռնագանձել 14.000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2011 թվականի որոշմամբ Բորիս Աշրաֆյանի և Վանո Եղիազարյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 22.07.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բորիս Աշրաֆյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վանո Եղիազարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ կետը, 13-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները.

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Հայցվորը հանդիսանում է Լեռնապատ համայնքի ղեկավարը, և նույն համայնքի բնակչի քննադատությունն ուղղված է եղել բացառապես նրա պաշտոնական լիազորություններից բխող պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը: Քննադատությունն էլ հիմնված է եղել նախկինում արդեն իսկ հրապարակայնորեն արտահայտված, ինչպես նաև իրավապահ մարմիններին ներկայացված տեղեկությունների վերարտադրության վրա:

Բողոքաբերը նշել է, որ իր կարծիքը հայտնել է համայնքի ղեկավարի գործունեության վերաբերյալ, որը վիրավորանք չի կարող դիտվել:

Ստորադաս դատարանները զրպարտանք են համարել «Հոռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՝ ախպորս անունից 100.000 գրել են՝ մեռած մարդ ա, բայց իրա ստորագրությունը չի» և «Ասի, ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար բացի հորիցդ, մորիցդ, փեսենոնցիցդ» արտահայտությունները, իսկ նաև վիրավորանք երկրորդ արտահայտությունը, մինչդեռ դրանք զրպարտանք չեն կարող համարվել, քանի որ հիմնված են փաստերի վրա: Բացի այդ, երկրորդ արտահայտությունը վիրավորանք չէ, քանի որ այն կրում է փոխաբերական իմաստ, այսինքն՝ այն, որ բացի նրա հորից, մորից և փեսաներից ավելի կարիքավոր, համայնքի ղեկավարի աջակցության կարիք ունեցող մարդ չկա, որ օգնություն ստանա:

Վիրավորանք է համարվել նաև «Արա» արտահայտությունը, մինչդեռ, «Ածառյանի անվան լեզվի բառարանում» այդ բառի բացատրությունը տրված է որպես դիմելաձև, հոմանիշը ունենալով «այ տղա» արտահայտությունը: Նմանապես չեն կարող վիրավորանք համարվել նաև «Սոված» արտահայտությունը, որը նշանակում է ապրուստի միջոցներից զուրկ, կարիքավոր:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ «Ժամանակ» օրաթերթին տրված հարցազրույցը տպագրվել է 01.09.2010 թվականին, մինչդեռ հայցվորն իրավունքների պաշտպանության հայցով դատարան է դիմել 11.10.2010 թվականին, այսինքն՝ իր իրավունքների խախտման մասին իմանալուց մեկ ամիս 11 օր անց՝ բաց թողնելով օրենքով սահմանված դատարան դիմելու վաղեմության ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար բերված վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայցադիմումը ՀՀ Լոռու մարզի դատարան է մուտքագրվել 22.09.2010 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 2):

2. «Ժամանակ» օրաթերթի 01.09.2010 թվականին տպագրված համարում «Էս թուրքին մեր միջից հանեք» վերնագրով տպագրված հոդվածում նշվել է, որ Լեռնապատ համայնքի բնակիչ Բ. Աշրաֆյանը նշել է, որ «Ես արդարության կողմնակից եմ... Երբ Վանոյին, երիտասարդ տղա, գյուղապետ առաջարկեցին, ես երեք անգամ էլ ձայնս տվել եմ իրեն: Ասել եմ՝ երիտասարդ տղա ես, Վանո ջան, չգայթակղվես, մարդավարի կաշխատես: Ասեց՝ հա ընկեր Աշրաֆյան..., բայց էս վերջերս, էս 2 տարվա մեջ, իմ բարեկամներից գալիս են, ասում են՝ սենց բան կլինի՝ մի ամսվա, երկու ամսվա, երեք ամսվա նպաստս կտրում ա... Հետո եկավ մեր տուն, ասեցի՝ Վանո, ամոթ քեզ, էս ինչ՞ր եմ լսում: Բա թե՝ կարմ՞ն ապացուցեն: Ասի՝ թող ապացուցեն, բայց քեզ սազական բան չի... ինքն էլ, եթե՝ ապացուցել տվողը թող երկու տարի նստի, ես էլ իրեք տարի: Ասի՝ ամոթ քեզ: Գազի գործով մարդիկ կային, որ ասեն թե տունը հեռու ա, մի երկու ստոլբա ա տնգել, իրա համար գազ ա քաշել: Ես էլ որպես վարչական հանձնաժողովի հասարակական կազմակերպության նախագահ, դե էդ ժամանակվա, թե արի՝ տուգանում ենք. բա ի՞նչ ա եղել: Հետո ասեց՝ թե ապօրինի գազ ա քաշել: Արա, ուրախ չ՞ես, ապօրինին ո՞րն ա... 2 ստոլբա ա տնգել մարդը, պիտի ուրախ լինես, որ ծախս չես անում, էն մարդը գազ ա տարել... Ու հետո, որ էս ցուցակը բացվեց օգնության, ես մնացել էի ապշած... Ասեց՝ բա դու էլ գրեիր, քեզ էլ կտայի: Ասի՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկա՞ր, բացի հորիցդ, մորիցդ, փեսեներսոնցիցդ... Հոռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՝ ախպորս անունից 100.000 գրել են՝ մեռած մարդ ա, բայց իրա ստորագրությունը չի: Սա գայթակղվեց... Հիմա սա տեսախցիկ ու բանա դրել, չգիտեմ «Առավոտ» թերթում գրել էին, թե ինչի՞ ես տեսախցիկ դրել, ասել էր, թե՝ գյուղում անասնագողությունը տարածված ա, դրա համար տեսախցիկ եմ դրել: Խի գյուղապետարանի մոտից անասուն են գողանո՞ւմ... Սա խայտառակություն է: Ափսոս էդ տղեն, բայց գայթակղվեց» (հատոր 1-ին, գ.թ. 4):

3. 01.09.2010 թվականի դրությամբ Վանո Եղիազարյանը ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ղեկավարն է:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Բողոքի քննությանն անդրադառնալիս Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կիրառման առու-

մով առկա է օրենքի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտություն, ուստի նախ և առաջ անդրադառնում է վերոնշյալ հոդվածի, բովանդակային առումով վերջինիս փոխկապված և պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը:

Ա. ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից..., իսկ 2-րդ մասի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների հայեցողական լիազորության ճիշտ կենսագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից սահմանված չափորոշիչները խոսքի ազատության իրավունքի և դրա սահմանափակումների վերաբերյալ, մասնավորապես.

5. Խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով,

6. Դրանք պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում,

7. Դրանք պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ,

8. Կիրառված սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող իրավաչափ նպատակներին:

Նախատեսված է օրենքով

Օրենքով նախատեսված լինելու պահանջն առաջին հերթին հանգում է համապատասխան ներպետական օրենքի առկայության: Միաժամանակ որոշակի պահանջներ պետք է նախատեսվեն նաև այդ օրենքի որակական հատկանիշների համար:

Մասնավորապես այն պետք է լինի ընդհանուր կիրառման ներքին ակտ, պետք է լինի հստակ և յուրաքանչյուրին հասանելի:

Այդ մասին է վկայում նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Այսպես՝ Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայում նշված «նախատեսված է օրենքով» արտահայտությունը պահանջում է ոչ միայն ներպետական օրենքի առկայություն, այլև այն վերաբերում է օրենքի որակին: Օրենքը պետք է հասանելի և կանխատեսելի լինի, այսինքն՝ ձևակերպված լինի բավականաչափ հստակ, որպեսզի անհատին հնարավորություն ընձեռի անհրաժեշտության դեպքում կարգավորել իր վարքագիծը *(տես Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 26.04.1979 թվականի վճիռը, կետ 49, Սանոմա Ուիրգելերս Բ. Վ.-ն ընդդեմ Նիդերլանդների գործով Եվրոպական դատարանի 14.09.2010 թվականի վճիռը, կետ 81)*:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի սահմանադրականության հարցը քննարկվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշմամբ՝ ճանաչվելով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, հետևաբար «նախատեսված է օրենքով» հասկացության որակական պահանջները համապատասխանում են նաև դրանց սահմանադրականության տեսանկյունից:

Հետապնդում է իրավաչափ նպատակ

Արտահայտվելու նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ գործերով իրավաչափ են այն նպատակները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ կամ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված արժեքների՝ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության համար:

Խոսքի ազատության սահմանափակումները նախատեսված են թե՛ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում, թե՛ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետում, թե՛ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-97-Ն օրենքի ընդունումը, որով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը շարադրվեց նոր խմբագրությամբ և օրենսգիրքը լրացվեց նոր՝ 1087.1-րդ հոդվածով, նպատակ ունի ապահովել անձի պատվի և արժանապատվության պաշտպանությունը այլ անձանց ոտնձգություններից, հստակեցնել զրպարտություն և վիրավորանք հասկացությունները, զրպարտության և վիրավորանքի համար պատասխանատու անձանց շրջանակը և համարժեք դարձնել պատասխանատվությունը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթները հետապնդում են իրավաչափ նպատակ, այն է՝ ապահովել անձի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը:

Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում և համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակներին

Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանմանը, բազմիցս նշել է, որ իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը որոշելու հարցում մասնակից պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմանով, որը, սակայն, ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ, իսկ վերջինիս սահմանները կախված են գործի բնույթից: Բոլոր այն դեպքերում, երբ արձանագրվում է միջամտություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթնե-

րով երաշխավորված ազատություններին և իրավունքներին, եվրոպական կառույցները պետք է խիստ վերահսկողություն սահմանեն, ինչը պայմանավորված է այդ իրավունքների կարևորությամբ *(տե՛ս «Աուգրոնիկ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 22.05.1990 թվականի վճիռը, կետ 61, «Գրոպպերա ռադիո» բաժնետիրական ընկերությունը և մյուսներն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 28.03.1990 թվականի վճիռը, կետ 61)*:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «անհրաժեշտ» հասկացությունը նշանակում է, որ սահմանափակումն առաջացել է հասարակական կամ սոցիալական կարիքներից և առկա է ճնշող հասարակական կարծիք այդ հարցում: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց համարվելու համար միջամտությունը պետք է «բավականաչափ» հիմնավորված լինի, ինչը պարզելու համար հարկավոր է հաշվի առնել տվյալ գործով հանրությանը հուզող յուրաքանչյուր հայեցակետ *(տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 26.04.1979 թվականի վճիռը, կետ 65)*:

Հետապնդվող իրավաչափ նպատակներին միջամտության համաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև **պատասխանատվության միջոցների բնույթն ու խստությունը** *(տե՛ս Տամներն ընդդեմ Էսթոնիայի գործով Եվրոպական դատարանի 04.04.2001 թվականի վճիռը, կետ 69)*: Պատասխանատվության համար ընտրված միջոցի բնույթը և խստությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դրանք պարզման ենթակա ինքնուրույն հարցեր են:

Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ բոլոր դեպքերում համաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել կիրառված միջոցների **պիտանիությունը**: Սա ենթադրում է, որ պատասխանատվության միջոցների կիրառման լիազորություն ունեցող սուբյեկտը ընտրում է հնարավոր միջոցներից պիտանին: Պիտանի միջոցների մեկից ավելիի առկայության դեպքում պետք է ընտրվի այն միջոցը, որն **անհրաժեշտ է** նպատակին հասնելու համար, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից միայն նա, որը հնարավորություն է տալիս առավել **նվազ ձևով միջամտելով** կարծիքն ազատ արտահայտելու իրավունքին ապահովել այլ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը:

Բ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կանոնակարգումները

Վնաս պատճառողը և տուժողը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Վերոնշյալ դրույթից հետևում է, որ **վնաս պատճառողն** այն անձն է (ֆիզիկական կամ իրավաբանական), ով վիրավորանքի կամ զրպարտության միջոցով արատավորել է այլ ֆիզիկական անձի պատիվը կամ արժանապատվությունը կամ անհատ գործարարի կամ իրավաբանական անձի գործարար համբավը:

Տուժողը (զրպարտության կամ վիրավորանքի ենթարկված անձ) այն ֆիզիկական անձն է, ում պատիվը կամ արժանապատվությունը կամ անհատ գործարարի կամ իրավաբանական անձի գործարար համբավն արատավորել է մեկ այլ անձ (ֆիզիկական կամ իրավաբանական) վիրավորանքի կամ զրպարտության միջոցով:

Վիրավորանքի կամ զրպարտության միջոցով վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության սուբյեկտների շրջանակի սահմանափակում օրենսդիրն արդարացիորեն չի նախատեսել, և այդպիսիք կարող են լինել ինչպես ֆիզիկական, այն-

պես էլ իրավաբանական անձինք: Ինչպես վնաս կրողի, այնպես էլ վնաս պատճառողի կողմում կարող են հանդես գալ մեկից ավելի անձինք, և այս դեպքում ծագում է անձանց բազմաթվությամբ պարտավորություն: Ըստ այդմ էլ վնաս պատճառողները հանդես կգան որպես համապարտ պարտապաններ, եթե ծագած պարտավորությունը (վնասի հատուցումը) անբաժանելի է, իսկ տուժողները՝ որպես համիրավ պարտատերեր: Նշված դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետի և 1073-րդ հոդվածի կանոնակարգումները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ թեև մեկնաբանվող դրույթը ուղղակիորեն չի ամրագրում անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձանց պատիվը և արժանապատվությունը պաշտպանելու հնարավորություն, սակայն այն միաժամանակ չի էլ բացառում նման հնարավորությունը, ուստի անկախ լրիվ գործունակության առկայությունից կամ բացակայությունից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ հոդվածներ)՝ անձը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր պատիվն ու արժանապատվությունը: Այս դեպքում դատարան համապատասխան հայց կարող են ներկայացնել անգործունակի կամ սահմանափակ գործունակի օրինական ներկայացուցիչները (ծնող, խնամակալ, հոգաբարձու): Ինչ վերաբերում է իրավունակությունը դադարած, այսինքն՝ մահացած կամ մահացած ճանաչված քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելուն, ապա վերջինիս իրավական կարգավորումն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ կետում, որի համաձայն՝ քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո: Որպես շահագրգիռ անձ կարող են հանդես գալ ինչպես վերջինիս ժառանգները, այնպես էլ յուրաքանչյուր անձ, ով կապացուցի նշված հարցում իր շահագրգիռ անձ լինելը:

Վիրավորանքը և զրպարտությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ վիրավորանքը (պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը) կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլացիաներ, սիմվոլներ): Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակել միջոցների շարքը, որոնք կարող են կիրառվել վիրավորանքն արտահայտելիս՝ հնարավորություն տալով իրավակիրառողին, կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, որոշել՝ արդյոք տվյալ միջոցի օգտագործմամբ կատարված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք: Հետևաբար վիրավորանքը կարող է արտահայտվել ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, որը ներառված չէ վերոնշյալ թվարկման մեջ:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ՝

1. արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստը ապացուցելու դատավարական բեռը կրում է հայցվորը,

2. արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը:

3. արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, որպիսի փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը): Նման դեպքերում առկա է վնասի համատեղ պատճառում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց:

Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային (անձը վիրավորել է տուժողին առանց երրորդ անձանց ներկայության):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված դրույթում ամրագրված վիրավորանքի սահմանումը չի կարող ենթադրել, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողություն պաշտպանված չէ օրենքով: Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի կամ գնահատող դատողության արտահայտումը այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա: Ի տարբերություն փաստերի, որոնք կարող են ներկայացվել և հիմնավորվել, գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել: Գնահատող դատողության ապացուցման պարտականությունն անհնար է իրականացնել և ինքնին խախտում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված իրավունքի հիմնարար մասն է կազմում: Այնուամենայնիվ, երբ հայտարարությունը որակվում է որպես գնահատող դատողություն, անհրաժեշտ է, որ վերջինս հիմնվի բավարար փաստական կազմի վրա *(տե՛ս Պեդերսենը և Բաադսգաարդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանի 17.12.2004 թվականի վճիռը, կետ 76)*: Գնահա-

տողական դատողությունը կարող է անընդունելի համարվել, քանի որ այն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված համարվել *(տե՛ս Ռիզոսը և Դասկաան ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 27.05.2004 թվականի վճիռը, կետ 45)*:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ պայմանների առկայությունը պարտադիր է արտահայտությունը վիրավորանք գնահատելու համար: Այդուհանդերձ, օրենսդիրն ամրագրել է որոշակի դեպքեր, երբ արտահայտությունը թեև բավարարում է վերոնշյալ պայմաններին, սակայն կոնկրետ իրավիճակում և իր բովանդակությամբ օրենքի ուժով կարող է չհամարվել վիրավորանք: Այդպիսիք են այն դեպքերը, երբ տեղեկատվությունը հիմնված է **ստույգ փաստերի վրա** (բացառությամբ բնական արատների) կամ **պայմանավորված է գերակա հանրային շահով**: Օրենսդրական նման ձևակերպումը հիմք է արձանագրելու, որ այդ դեպքերը յուրաքանչյուր կոնկրետ գործով ենթակա են առանձին գնահատման՝ պարզելու, թե արդյոք տվյալ **բովանդակությամբ** և տվյալ **իրավիճակում** ներկայացված արտահայտությունը պարունակում է վիրավորանք, թե ոչ:

Անդրադառնալով «Ստույգ փաստեր» եզրույթին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այդպիսիք հանդիսանում են այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր (ապացուցման անհրաժեշտություն չունեցող): Անհրաժեշտ է ուշադրության դարձնել փաստերի և գնահատող դատողությունների տարբերակման խնդրին, քանի որ դրանք մեծ կարևորություն են ներկայացնում գործի քննության համար և մեծապես կարող են ազդել գործի ելքի վրա: Եվրոպական դատարանը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում անդրադառնալով նշված խնդրին, հստակ տարանջատում է կատարում **փաստերի** և **գնահատող դատողությունների** միջև, որի վերաբերյալ ձևավորել է հետևյալ ընդհանուր սկզբունքը. «Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել. գնահատող դատողությունների ապացուցումն անհնարին խնդիր է, և նման պահանջը խախտում է կարծիքի արտահայտման ազատությունը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնարար մասերից է:» *(տե՛ս Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, կետ 46)*:

Վերոգրյալից զատ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ գնահատող դատողությունը, դիտարկելով որպես կարծիքի ազատ արտահայտման, այլ ոչ թե տեղեկություններ տարածելու իրավունքի դրսևորում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնել այն, թե արդյոք տվյալ դատողությունը հիմնված է որոշակի փաստերի վրա: Փաստական հիմքից զուրկ գնահատող դատողությունը պաշտպանված չէ պետական միջամտությունից: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է նաև նրանով, որ անդրադառնալով նշված հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական կարծիքը կարող է չափազանցված համարվել՝ հատկապես փաստացի հիմքի բացակայության պայմաններում (*տե՛ս Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 01.07.1997 թվականի վճիռը, կետ 33*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ յուրաքանչյուր դատական գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ներկայացված փաստացի տվյալները տվյալ իրավիճակում և իրենց բովանդակությամբ բխել են «Գերակա հանրային շահից», որն անմիջականորեն պայմանավորված է հասարակության տեղեկացված լինելու իրավունքի շահով, արդյո՞ք հանրության համար այդ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է եղել, արդյո՞ք հասարակությունը հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել է դրանց հետագա հրապարակմանը: «Գերակա հանրային շահը» գնահատելիս վերոնշյալ հարցերին պատասխանելու ան-

հրաժեշտությունը բխում է նրանից, որ զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում գաղափարների տարածման պարտականություն: Զանգվածային լրատվության միջոցների այդ գործառույթին (պարտականությանը) զուգորդվում (համապատասխանում) է հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:

Հետևաբար, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որպեսզի վիրավորանքի և զրպարտության գործերով հստակ տարանջատում կատարվի գնահատողական դատողության և փաստերի միջև՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումներ թույլ տալը բացառելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն**),** նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Որպեսզի միջամտությունը խոսքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքին լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայություն գնահատող դատողություննե-

րի և այն անձի միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձի հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որ սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին, կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել քննադատության թիրախ *(տե՛ս Դյուլդին և Կիպովը ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կետ 44)*:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերն արդեն իսկ անդրադարձ կատարվել է «հրապարակային ներկայացնել», «փաստեր» և «գնահատողական դատողություններ» եզրույթներին և դրանց մեկնաբանությունները հավասարապես կիրառելի են նաև զրպարտության դեպքերի համար՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կրկին չի անդրադառնում դրանց:

Հետևաբար, նշված վավերապայմանների կամ դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի բովանդակության ընկալման տեսանկյունից չի կարող խոսք լինել զրպարտության, հետևաբար նաև՝ դրանով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Վերը նշված չափանիշների առկայության կամ բացակայության հանգամանքի բացահայտումը կարևոր է դատարանների կողմից արդարադատություն իրականացնելիս, այդ թվում՝ ներկայացված փաստացի տվյալները որպես զրպարտություն գնահատելիս:

Միաժամանակ հարկ է նկատել, որ օրենսդիրն ամրագրել է պայմաններ, երբ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն: Նշված պայմաններն ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետում: Ըստ նշված կետի՝ նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտություններում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.

3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

Վերոնշյալ դրույթի վերլուծությունից հետևում է, որ անկախ նրանից՝ անձը հրապարակել է մեկ այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող և իրականությանը չհամապատասխանող տվյալներ, վերջիններիս ներկայացումը չի համարվի զրպարտություն, եթե դրանք ՝

1. **Վերաբերում են դատական կամ մինչդատական վարույթում գտնվող գործի հանգամանքներին կամ տեղ են գտել ապացույցներում:** Նշված դրույթում ամրագրված «մինչդատական» և «դատական վարույթ» տերմինները հավասարապես պետք է վերաբերեն ինչպես քաղաքացիական և վարչական դատավարության (դատական վարույթներ), այնպես էլ քրեական դատավարության կարգով քննվող գործերին (մինչդատական և դատական վարույթներ):

2. **Պայմանավորված են գերակա հանրային շահով:** Վճռաբեկ դատարանը վերևում տրված մեկնաբանությամբ արդեն իսկ անդրադարձել է «գերակա հանրային շահ» արտահայտության մեկնաբանմանը, ուստի կրկին չի անդրադառնում դրան: Ի տարբերու-

թյուն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն: Մասնավորապես՝ փաստացի տվյալներ հրապարակած անձը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Այս դեպքում բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք: Ինչ վերաբերում է «հավասարակշռված» եզրույթին, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստացի տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին:

3. Զրպարտությունը վերոնշյալ դրույթի ուժով բացակայում է նաև այն դեպքում, երբ հրապարակային **տեղեկություններ տարածող անձը նշված տեղեկությունները տարածում է՝ հիմք ընդունելով զրպարտության ենթարկվողի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթում կամ պատասխանում կամ նրանցից ելնող փաստաթղթում արված եզրահանգումները կամ փաստերը:**

Տեղեկատվության տարածումը այս դեպքում ևս ենթադրում է հրապարակային ելույթում կամ պատասխանում կամ փաստաթղթում տեղ գտած եզրահանգումների կամ փաստերի բարեխիղճ շարադրանք: Ելույթ պետք է դիտարկել անձի կողմից հնչեցրած բանավոր խոսքը, որը նպատակ ունի որոշակի տեղեկատվություն հասու դարձնել անորոշ թվով անձանց և արվում է որոշակի ձևաչափին համապատասխան կազմակերպված միջոցառումների ժամանակ (օրինակ՝ կոնֆերանսներ, համաժողովներ, հավաքներ, հանրահավաքներ և այլն):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն հոդվածի իմաստով «փաստաթուղթ» տերմինի մեկնաբանությունն անհրաժեշտ է կատարել՝ հաշվի առնելով նաև երկրում գործող փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կարգավորումը: Ուստի «փաստաթուղթ» տերմինը սույն հոդվածի իմաստով չպետք է նույնացվի բացառապես թղթային կրիչի օգտագործմամբ կազմված գրավոր արտահայտված տեղեկության հետ: Դրանում կարող են ներառվել կրիչի ցանկացած տեսակի (էլեկտրոնային (ֆաքս, լուսապատճեն և այլն), նյութական այլ կրիչներ) օգտագործմամբ կատարված գրառումները: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «փաստաթուղթ» տերմինի նեղ մեկնաբանումն անհարկի սահմանափակում է և չի ներառում դեպքերի այն շրջանակը, որոնց պարագայում փաստաթղթերը կազմվում և տարածվում են էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:

Պատասխանատվությունից ազատվելը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերար-

տադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վերոնշյալ դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև համակարգային մեկնաբանության սկզբունքը: Այսպես՝ սույն հոդվածը, ներառված լինելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վնաս պատճառելու հետևանքով ծագող հարաբերությունները կանոնակարգող գլխում, վերաբերում է քաղաքացու պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին վնաս պատճառելու հետևանքով ծագող հարաբերությունների կարգավորմանը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կանոնակարգումները վերաբերում են բացառապես **վիրավորանքի և զրպարտության միջոցով** պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին **վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերություններին:**

Վերոնշյալ մեկնաբանությունները հիմք ընդունելով և համադրելով դրանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված պարտավորությունների ծագման հիմքերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին վիրավորելը կամ զրպարտելը առաջացնում են պարտավորական հարաբերություն (պարտավորություն): Պարտավորական հարաբերության դադարման հիմքերին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով: Վիրավորանքի կամ զրպարտության հիմքով ծագած պարտավորությունը ևս դադարում է պարտավորությունների դադարման համար ընդհանուր հիմքերի առկայության դեպքում՝ հաշվի առնելով այդ հարաբերությունները կարգավորող նորմերի առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

Համադրելով վերոնշյալ դրույթը նույն հոդվածի 3-րդ կետում ամրագրված «զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը» դրույթի հետ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը. զրպարտության վերաբերյալ գործերի քննության ընթացքում գործում է այն կանխավարկածը, որ փաստերի՝ իրականությանը համապատասխանելու ապացուցման բեռը կրում է պատասխանողը: Այս ընդհանուր կանոնից բացառություն է հանդիսանում միայն այն դեպքը, երբ ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր: Այս պարագայում ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը, սակայն միայն այն դեպքում, երբ պատասխանողը կհիմնա-

վորի իրենից պահանջվող գործողությունների և ջանքերի ոչ ողջամիտ լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Եթե նույնիսկ պատասխանողից պահանջվող գործողությունները կամ ջանքերը ոչ ողջամիտ են, սակայն անհրաժեշտ ապացույցներին հայցվորը չի տիրապետում, ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը:

Վիճարկվող փաստերի՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքի հաստատումը պատասխանողին (ենթադրյալ վնաս պատճառողին) ազատում է պատասխանատվությունից, հետևաբար հանգեցնում է ենթադրյալ պարտավորության դադարման:

Զրպարտության կամ վիրավորելու հետևանքով ծագող հարաբերությունը դադարում է նաև այն դեպքում, երբ լրատվական գործունեություն իրականացնողը տուժողի պահանջով հրապարակել է հերքում կամ տուժողի պատասխանը: Վճռաբեկ դատարանի նշված եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 10-րդ կետի կանոնակարգումից, որի համաձայն՝ անձը չի կարող օգտվել սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:

Վերոնշյալ ընդհանուր և հատուկ հիմքերից բացի օրենսդիրը **վիրավորանքի կամ զրպարտության միջոցով վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության** դադարման որևէ այլ հիմք չի նախատեսել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերից հետևում է, որ անձն ազատվում է պատասխանատվությունից երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- արտահայտված կամ ներկայացված փաստացի տվյալներն անձի հրապարակային ելույթների, պաշտոնական փաստաթղթերի, հեղինակային ստեղծագործությունների, լրատվական գործունեություն իրականացնող ընկերությունների հրապարակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են,
- տեղեկատվությունը տարածելիս հողում է կատարվել **տեղեկատվության աղբյուրին:**

Տեղեկատվությունը բառացի կամ բարեխիղճ ներկայացնելու օրենսդրի պահանջը նպատակ է հետապնդում ապահովել բացահայտված աղբյուրում տեղ գտած տեղեկատվության բառացի շարադրանքը կամ հրապարակել այն այնպես, որ չփոխվի ինչպես ամբողջական իմաստը, այնպես էլ կոնկրետ փաստերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերում ամրագրված «տեղեկատվության աղբյուր» եզրույթին: Նշված դրույթների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով տեղեկատվության աղբյուրներն **անձինք** են (ֆիզիկական և իրավաբանական), որոնք տարբեր **միջոցներով** հրապարակում են տեղեկատվությունը: Տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հեղինակները և լրատվական գործակալությունները: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիշատակված դրույթներում ամրագրված **անձի հրապարակային ելույթները, պաշտոնական փաստաթղթերը, հեղինակային ստեղծագործությունները** տեղեկատվության **աղբյուրների** կողմից օգտագործվող **միջոցներ են:**

«Տեղեկատվության միջոց» հասկացությունը մեկնաբանելիս Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Վերջինիս համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի գործողության ոլորտում են գտնվում ոչ միայն այն տեղեկությունները և գաղափարները, որոնք արտա-

հայտվում են գրավոր կամ բանավոր խոսքի **միջոցով,** այլ նաև տարաբնույթ միջոցներով արտահայտված և տարածվող տեղեկություններն ու գաղափարները: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելի է գեղարվեստական ինքնարտահայտման միջոցների՝ նկարների, ֆիլմերի և արվեստի այլ ստեղծագործությունների նկատմամբ, ինչպես նաև հեռարձակման բոլոր միջոցների և էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի նկատմամբ (*տեղեկությունների և գաղափարների արտահայտման միջոցների հարցին Եվրոպական դատարանն ի թիվս այլոց անդրադարձել է Մյուլերը և մյուսներն ընդդեմ Շվեյցարիայի գործով 24.05.1988 թվականի որոշմամբ, կետ 34, Առթրոնիկ էյՋի-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով 22.05.1990 թվականի որոշմամբ, կետ 47*):

Վերոնշյալ հետևությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ հղում է կատարված տեղեկատվության աղբյուրին, սակայն նույն աղբյուրում տեղ գտած տեղեկատվությունը հրապարակված չէ բառացի կամ բարեխիղճ, այլ կերպ՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը), ապա հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից: Նույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ տարածողը թեև վերարտադրում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ շարադրանքը, այդուհանդերձ հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում «տեղեկատվության աղբյուր» ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն:

Վերը նշված երկու դեպքերում էլ տեղեկատվություն հրապարակողն ինքն է համարվում զրպարտող կամ վիրավորող:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ տեղեկատվություն հրապարակողը, եթե նույնիսկ հրապարակել է տեղեկատվության բովանդակությունը բառացի կամ բարեխիղճ և հղում է կատարել աղբյուրին, չի ազատվում պատասխանատվությունից, եթե դատավարության ընթացքում կապացուցվի, որ նա գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ զրպարտություն լինելու մասին, քանի որ նման դեպքում անձի մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը: Այս դեպքում ինչպես տեղեկատվությունը կրող աղբյուրը, այնպես էլ այդ տեղեկատվությունը հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն որպես համատեղ վնաս պատճառողներ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պետք է կատարվի տեղեկատվությունը տարածելու հետ միաժամանակ: Տեղեկատվությունը **տարածելիս** և ոչ թե դրանից հետո աղբյուրի բացահայտումը նպատակ է հետապնդում այդ տեղեկատվության հասցեատերերի մոտ ապահովել տեղեկացվածություն այն մասին, որ զրպարտությունը կամ վիրավորանքը դուրս է գալիս կոնկրետ սուբյեկտից, այլ ոչ թե անմիջական հրապարակողից կամ անորոշ թվով սուբյեկտներից: Աղբյուրի բացահայտումը, կախված աղբյուրի տեսակից, կարող է ազդել հասարակական կարծիքի ձևավորման վրա: Մինչդեռ տեղեկատվության աղբյուրը դատական վարույթի ընթացքում բացահայտելը լիարժեք չի ապահովում զրպարտող կամ վիրավորող սուբյեկտի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը:

Վնասի փոխհատուցումը վիրավորանքի և զրպարտության դեպքում

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Նույն հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

1) վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը.

2) վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը:

Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը:

Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ քննարկման առարկա հարցի շրջանակներում գործ ունենք մի կողմից տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից անձի՝ իր պատվի, արժանապատվության, գործարար համբավի նկատմամբ հարգանք պահանջելու Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և երաշխավորված իրավունքների հետ, անհրաժեշտ է համարում նշել, որ փոխհատուցման չափ սահմանելու յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի վիրավորանք և զրպարտանք կատարած անձի ֆինանսական վիճակը և բացառվի փոխհատուցման այնպիսի չափերի և ձևերի սահմանումը, որոնք կարող են վճռորոշ նշանակություն ունենալ պատասխանող կողմի համար, առավել ևս, եթե պատասխանող կողմը զանգվածային լրատվության միջոց է՝ նրա հետագա գործունեությունը շարունակելու առումով:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիրավորանքի և զրպարտության համար սահմանվող փոխհատուցման ողջամտության հարցին, որը պետք է համաչափ լինի անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասին, և, միաժամանակ, անհարկի ֆինանսական պարտավորություններ չառաջացնի պատասխանողի համար:

Նախ, անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերը հնարավորություն են տալիս անձին նախատեսված մեկ կամ մի քանի միջոցների կիրառմամբ զրպարտող կամ վիրավորող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնել: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դատարանները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է անհրաժեշտ գնահատական տան այն հանգամանքին, թե արդյոք կողմերը որևէ փորձ արել են վեճը լու-

ծել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված արտադատական կարգով, այն է՝ արդյոք անձը մինչև դատարան հայց ներկայացնելը դիմել է համապատասխան լրատվամիջոցին հերքում հրապարակելու պահանջով, և այդ պահանջին զանգվածային լրատվության միջոցը որևէ ընթացք տվել է, թե ոչ: Բացի այդ, դատարանները քննարկվող հարցի վերաբերյալ գործեր քննելիս նախ պետք է ջանքեր գործադրեն գործը հաշտությամբ լուծելու ուղղությամբ, այնուհետև գործում առկա բոլոր ապացույցների գնահատմամբ անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք հնարավոր չէ վերականգնել անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասը ոչ նյութական փոխհատուցում նշանակելու միջոցով, քանի որ օրենսդիրը մինչև նյութական փոխհատուցում սահմանելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանել է նաև պատճառված վնասի վերականգնման այլ միջոցների ընտրության և կիրառման հնարավորություն (վիրավորանքի դեպքում՝ հրապարակային ներողություն խնդրել, եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը, զրպարտության դեպքում՝ եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը):

Նյութական փոխհատուցում նշանակելու դեպքում անհրաժեշտ է, որ դատարանները մեծ ուշադրություն դարձնեն փոխհատուցվող գումարի չափի սահմանմանը, պատասխանողներից պահանջեն նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններին ներկայացված ֆինանսական և այլ փաստաթղթեր (օրինակ՝ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացված հարկային հաշվետվությունները), հակառակ դեպքում մեծ չափով փոխհատուցումները կարող են ծանր հետևանքներ ունենալ վերջիններիս բնականոն գործունեությունը շարունակելու առումով: Ընդ որում, այս հարցի քննարկման ժամանակ դատարանները պետք է ուշադրություն դարձնեն հայցվոր կողմի՝ նյութական փոխհատուցման պահանջի վերաբերյալ պատասխանող կողմի ներկայացրած փաստարկներին, որոնք, ըստ էության, պետք է պարունակեն նաև տեղեկություններ իրենց բնականոն գործունեության նկատմամբ պահանջվող փոխհատուցման չափի ֆինանսական ազդեցության վերաբերյալ:

Դրամական փոխհատուցման չափ սահմանելիս դատարանները նախ և առաջ պետք է հաշվի առնեն, թե ինչ միջոցով կամ եղանակով է կատարվել զրպարտությունը կամ վիրավորանքը և ապա վերջիններիս տարածման շրջանակը: Գնահատման առարկա պետք է դառնա օգտագործված միջոցի կամ եղանակի՝ տեղեկատվության արագ և համընդհանուր տարածման հարցը: Այսպես՝ զանգվածային լրատվության միջոցներով կատարված հրապարակումների տարածումը շատ ավելի արագ է, քան եթե հրապարակումն արվեր անձանց փոքրաթիվ խմբի շրջանակում: Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև տեղեկատվությունը տարածելու շրջանակը: Զանգվածային լրատվության միջոցները, որոնք գործում են տեղական մակարդակում (մարզ, քաղաք), ունեն ավելի փոքր տարածման շրջանակ, քան հանրապետության ամբողջ տարածքով հեռարձակվող և տարածվող լրատվամիջոցները:

Դրամական փոխհատուցման չափ սահմանելիս դատարանների կողմից հաշվի առնվող վերոնշյալ հանգամանքները սպառիչ չեն, քանի որ օրենսդիրը սահմանել է դատարանի պարտականությունը՝ հաշվի առնել կոնկրետ գործի առանձնահատկությունները: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ի թիվս վերոգրյալ հանգամանքների, այն դեպքերում, երբ վիրավորանքը կամ զրպարտությունը շարունակվում են նաև **գործի քննության ընթացքում** (գործի՝ դատարանում քննության գտնվելու

ողջ ժամանակահատվածում), այդ հանգամանքը դատարանները կարող են հաշվի առնել դրամական փոխհատուցման չափ նշանակելու հարցը լուծելիս:

Ամփոփելով նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանները պետք է փորձեն գործում առկա ապացույցների գնահատմամբ և վերը նշված միջազգային փաստաթղթերի լույսի ներքո մինչև նյութական փոխհատուցում սահմանելը քննարկման առարկա դարձնել խախտված իրավունքների վերականգնման օրենքով նախատեսված այլ միջոցների կիրառման հնարավորությունը, որը զանգվածային լրատվության միջոցների դեպքում չի խոչընդոտի նրանց հետագա բնականոն գործունեությանը՝ միաժամանակ բացառելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումը:

Վերը հիշատակված դրույթով սահմանվում է նաև դատարանների պարտականությունը՝ հաշվի չառնել վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը, եթե այդպիսին առկա է կամ դրա չափը: Նման կանոնի նախատեսումը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դրամական հատուցումներն իրենցից ներկայացնում են ոչ նյութական վնասի հատուցում և պայմանավորված չեն իրական վնասի կամ բաց թողնված օգուտի առկայությամբ կամ բացակայությամբ: Նշված վնասները, եթե այդպիսիք կան, հատուցման ենթակա են առանձին կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի հիման վրա: Այսպես՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի՝ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իրեն պատճառված **գույքային վնասները**, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերում ամրագրված դրամական փոխհատուցման, երբ դատարանը կարող է մերժել դրամական փոխհատուցումը՝ հիմք ընդունելով պատասխանողի գույքային դրությունը, նույն հոդվածի 12-րդ կետում ամրագրված **գույքային վնասը** ենթակա է փոխհատուցման ամբողջ ծավալով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վնասի ինստիտուտը կանոնակարգող նորմերին համապատասխան: Հաշվի առնելով այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը «վնաս» եզրույթն օգտագործում է իրական վնաս և բաց թողնված օգուտ իմաստներով և օրենսգրքում որևէ այլ տեղ, բացի 1087.1-րդ հոդվածից, չի կիրառվում «գույքային վնաս» եզրույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «գույքային վնաս»-ը պետք է մեկնաբանվի որպես անձին պատճառված իրական վնաս և/կամ բաց թողնված օգուտ: Վնասում ներառվում են նաև **ողջամիտ** դատական ծախսերը, որոնք անձը կատարել է կամ կատարելու է իրավունքները վերականգնելու համար, ինչպես նաև ցանկացած այլ ծախս, որն ուղղակիորեն կատարվել է խախտված իրավունքների վերականգնման համար:

Պաշտոնապար անձանց քննադատությունը

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ևս մեկ իրավական խնդրի՝ քաղաքական խոսքին կամ հանրությանը հետաքրքրող հարցերի շուրջ բանավեճին և պաշտոնատար անձանց քննադատությանը:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քաղաքական խոսքը կամ հանրությանը հետաքրքրող հարցերի շուրջ բանավեճը սահմանափակելու առումով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառման նեղ ոլորտ ունի *(տե՛ս Ուինգրովն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 25.11.1996 թվականի վճիռը, կետ 58)*: Բացի

այդ, թույլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են կառավարության, քան թե մասնավոր քաղաքացու կամ նույնիսկ քաղաքական գործչի նկատմամբ: Ժողովրդավարական հասարակարգում պետության գործողությունները կամ բացթողումները պետք է ենթարկվեն խիստ վերահսկողության ոչ միայն օրենսդիր և դատական մարմինների, այլև մամուլի և հանրային կարծիքի կողմից *(տե՛ս Իսկալն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 09.06.1999 թվականի վճիռը, կետ 54)*: Քաղաքական գործիչների նկատմամբ ընդունելի քննադատության սահմանները, հետևաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց պարագայում: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար իրենց հասանելի են դարձնում արված յուրաքանչյուր խոսքի և գործի նկատմամբ լրագրողների և հանրության լայն խավերի սրված ուշադրության համար, և նրանք այդ կապակցությամբ պարտավոր են հանդուրժողականության ավելի մեծ աստիճան դրսևորել: Անկասկած, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը թույլ է տալիս պաշտպանել այլոց, այսինքն՝ բոլոր անհատների հեղինակությունը, և այս պաշտպանությունը տարածվում է քաղաքական գործիչների նկատմամբ ևս, եթե նույնիսկ նրանք հանդես չեն գալիս իրենց մասնավոր կարգավիճակում, սակայն նման դեպքերում այդպիսի պաշտպանության պահանջները պետք է կշեռքի նժարին դնել՝ մյուս նժարին դնելով քաղաքական հարցերը բաց կերպով քննարկելու շահերը *(տե՛ս Լինգենան ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, կետ 42)*:

Անդրադառնալով քաղաքացիական ծառայողների նկատմամբ քննադատության սահմանների հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական ծառայողների նկատմամբ ևս, ինչպես որ քաղաքական գործիչների դեպքում է, ընդունելի են քննադատության ավելի լայն սահմաններ: Այնուամենայնիվ, քաղաքացիական ծառայողները լիազորությունների պատշաճ կատարումն ապահովելու առումով պետք է վայելեն հասարակական վստահություն, զերծ լինեն անընդմեջ քննադատությունից, և այդ պատճառով է, որ անհրաժեշտ է նրանց տրամադրել պաշտպանություն իրենց պարտականությունների կատարման առնչությամբ վիրավորական և զրպարտչական հարձակումներից *(տե՛ս Յանովսկին ընդդեմ Լեհաստանի 21.01.1999 թվականի վճիռը, կետ 33)*:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանները պետք է հաշվի առնեն տարբերությունը քաղաքական գործիչների և հանրային ծառայողների միջև, և այն, որ հանրային ծառայողները՝ ներառյալ դատավորները, դատախազները, ոստիկանները, իրականացնում են հատուկ լիազորություններ և պետք է ունենան հանրային վստահություն, հետևաբար նրանք պետք է պաշտպանված լինեն վիրավորական և զրպարտչական հարձակումներից:

Վերոնշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման, հետևաբար և կարծիքի ազատ արտահայտման և տեղեկություններ տարածելու իրավունքի միջամտության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն, որ քաղաքական գործիչների, հանրային ծառայողների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ քննադատության սահմաններն ավելի լայն են, քան մասնավոր անձանց դեպքում: Այդուհանդերձ նման քննադատությունն ընդունելի կարող է համարվել, եթե այն արտահայտվել է վերջիններիս գործունեության առնչությամբ և չի գերազանցում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված վերոնշյալ սահմանափակումները: Հակառակ դեպքում քաղաքական գործչի՝ որպես մասնավոր անձի վերաբերյալ քննադատության նկատմամբ ամբողջ ծավալով կիրառելի են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումները, և հնչեցրած կարծիքը կամ տարածած տեղեկությունը որպես զրպարտություն գնահատելիս չպետք է հաշվի առնել անձի՝ պաշտոնատար անձ լինելու հանգամանքը:

Հայցային վաղեմության ժամկետները

Կապված քննարկման առարկա հոդվածով դատարաններ հայցեր ներկայացնելու ժամկետների հետ՝ հարկ է նշել, որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը: Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

Վերլուծելով վերը նշված իրավական դրույթների բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի պաշտպանության միջոցի ընտրությունը բոլոր դեպքերում կատարում է տուժողը: Վերջինս էլ կարող է մի դեպքում նախապատվություն տալ անմիջապես զանգվածային լրատվության միջոցին հերքման պահանջ ներկայացնելուն, մյուս դեպքում՝ իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելուն: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արտադատական կարգով խախտված իրավունքի վերականգնման համար զանգվածային լրատվամիջոցին դիմելը թեև պարտադիր պայման չէ իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար, այդուհանդերձ դատարանները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնեն այն, թե արդյոք անձը մինչև դատարան հայց ներկայացնելը դիմել է համապատասխան լրատվամիջոցին հերքում հրապարակելու պահանջով, և այդ պահանջին զանգվածային լրատվության միջոցը որևէ ընթացք տվել է, թե ոչ:

Օրենսդիրը հնարավորություն է տվել շահագրգիռ անձին դատարան դիմել բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մինչև վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիսը լրանալը՝ դրանում ներառելով նաև զանգվածային լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը: Անհրաժեշտ է նաև նշել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ զրպարտությունը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է զրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ ժամկետները այնպիսի ժամկետներ են, որոնց ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար, այդ ժամկետներն իրենց բնույթով համապատասխանում են հայցային վաղեմության ժամկետին, և դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները:

Գ. Սույն վճռի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը

Վերոնշյալ վերլուծություններից հետո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն գործի առանձնահատկություններին և *նշված սկզբունքների կիրառությանը սույն գործի նկատմամբ:*

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ժամանակ» օրաթերթի 01.09.2010 թվականին տպագրված համարում «Էս թուրքին մեր միջից հանեք» վերնագրով տպագրված հոդվածում նշվել է, որ Լեռնապատ համայնքի բնակիչ Բ. Աշրաֆյանը նշել է, որ «Ես արդարության կողմնակից եմ... Երբ Վանոյին, երիտասարդ տղա, գյուղապետ առաջարկեցին, ես երեք անգամ էլ ձայնս տվել եմ իրեն: Ասել եմ՝ երիտասարդ տղա ես, Վանո ջան, չգայթակղվես, մարդավարի կաշխատես: Ասեց՝ հա ընկեր Աշրաֆյան..., բայց էս վերջերս, էս 2 տարվա մեջ, իմ բարեկամներից գալիս են, ասում են՝ սենց բան կլինի՝ մի ամսվա, երկու ամսվա, երեք ամսվա նպաստս կտրում ա... Հետո եկավ մեր տուն, ասեցի՝ Վանո, ամոթ քեզ, էս ինչո՞ւ եմ լսում: Բա թե՝ կարմն ապացուցեն: Ասի՝ թող ապացուցեն, բայց քեզ սազական բան չի... ինքն էլ, եթե՝ ապացուցել տվողը թող երկու տարի նստի, ես էլ իրեք տարի: Ասի՝ ամոթ քեզ: Գազի գործով մարդիկ կային, որ ասեն թե տունը հեռու ա, մի երկու ստոլբա ա տնգել, իրա համար գազ ա քաշել: Ես էլ որպես վարչական հանձնաժողովի հասարակական կազմակերպության նախագահ, դե էդ ժամանակվա, թե արի՝ տուգանում ենք. բա ինչ ա եղել: Հետո ասեց՝ թե ապօրինի գազ ա քաշել: Արա, ուրախ չես, ապօրինին ո՞րն ա... 2 ստոլբա ա տնգել մարդը, պիտի ուրախ լինես, որ ծախս չես անում, էն մարդը գազ ա տարել... Ու հետո, որ էս ցուցակը բացվեց օգնության, ես մնացել էի ապշած... Ասեց՝ բա դու էլ գրեիր, քեզ էլ կտայի: Ասի՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկա՞ր, բացի հորիցդ, մորիցդ, փեսեներսցիցդ... Հոռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՝ ախպորս անունից 100.000 գրել են՝ մեռած մարդ ա, բայց իրա ստորագրությունը չի: Սա գայթակղվեց... Հիմա սա տեսախցիկ ու բանա դրել, չգիտեմ «Առավոտ» թերթում գրել էին, թե ինչի՞ ես տեսախցիկ դրել, ասել էր, թե՝ գյուղում անասնագողությունը տարածված ա, դրա համար տեսախցիկ եմ դրել: Խի գյուղապետարանի մոտից անասուն են գողանում... Սա խայտառակություն է: Ափսոս էդ տղեն, բայց գայթակղվեց»:

Դատարանը և Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի շրջանակներում զրպարտություն են դիտել հետևյալ արտահայտությունները՝ «Հոռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՝ ախպորս անունից 100.000 գրել են՝ մեռած մարդա, բայց իրա ստորագրությունը չի», «Ասի՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար, բացի հորիցդ, մորիցդ, փեսեներսցիցդ...», «Արա», «Սա» արտահայտությունները դիտել են որպես վիրավորանք:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների վիրավորանք որակված արտահայտություններին և այդ արտահայտությունները դիտարկելով արտահայտված ամբողջական մտքի համատեքստում, գտնում է, որ Բորիս Աշրաֆյանն իր հարցազրույցում չի կատարել վիրավորական, կտրուկ կամ անզուսպ արտահայտություններ, թեպետ կարելի է արձանագրել, որ նրանում բովանդակել է մի շարք զգացմունքային արտահայտություններ կատարված չափազանցությամբ կամ հրահրող ենթատեքստով: Վիճարկվող տեքստը գնահատելով արտահայտված մտքերի ամբողջության մեջ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն չի գերազանցում քննադատության ընդունելի սահմանը, հատկապես, եթե հաշվի առնենք, որ այդ շրջանակն ավելի լայն է պաշտոնատար անձանց համար, ի տարբերություն ֆիզիկական անձանց: Մասնավորապես՝ «Հետո ասեց՝ թե ապօրինի գազ ա քաշել: Արա, ուրախ չես, ապօրինին ո՞րն ա...» արտահայտությունում «արա» բառը սույն հրապարակման մեջ բովանդակային առումով չի կրում այն բեռը, որն ուղղված կլիներ Վանո Եղիազարյանի պատիվը կամ արժանապատվությունն արատավորելուն: **Տվյալ դեպքում** այն ունի օժանդակ բնույթ և արտահայտությունում չունի էական դերակատարում:

«Սա» արտահայտությունն օգտագործվել է հետևյալ համատեքստում՝ «Սա գայթակղվեց... Հիմա սա տեսախցիկ ու բանա դրել»:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նորից անդրադառնալ տվյալ բառի լեզվաբանական իմաստին: «Սա» արտահայտությունը ցույց է տալիս խոսողին մոտ կանգնած կամ խոսքի մեջ նոր նշված առարկա, անձ, երևույթ: Հետևաբար, լեզվաբանական իմաստով «սա» արտահայտությունը կարող է վերաբերել նաև անձին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գյուղապետի գործունեության քննադատության համատեքստում «Սա գայթակղվեց... Հիմա սա տեսախցիկ ու բանա դրել» արտահայտությունը չի կարող համարվել վիրավորանք, քանի որ այն ուղղված չէ անձի պատիվը կամ արժանապատվությունն արատավորելուն:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Վանո Եղիազարյանի վկայակոչած՝ «Հռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՝ ախպորս անունից 100.000 գրել են՝ մեռած մարդա, բայց իրա ստորագրությունը չի», «Ասի՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար, բացի հորիցդ, մորիցդ, փեսեներացիցդ...» արտահայտությունները զրպարտություն չեն կարող համարվել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ կետից հետևում է, որ «**զրպարտությունն» անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը**: Նշվածից բխում է, որ զրպարտության բնորոշ հատկանիշներն են՝ խոսքը վերաբերում է **փաստացի տվյալներին,** դրանք **չեն համապատասխանում իրականությանը, ներկայացվել են հրապարակայնորեն, արատավորում են** անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը, դրանք չեն **վերաբերում միայն լրատվամիջոցներով ներկայացված փաստացի տվյալներին**:

Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է փաստի, որոշակի կոնկրետ տվյալների, որոնք չեն կարող լինել վերացական, ենթադրական, այլ ունեն կոնկրետ առարկայական դրսևորում: Նման փաստացի տվյալների բացակայության դեպքում քննության առարկա հոդվածի իմաստով «զրպարտությունը»՝ որպես այդպիսին, գոյություն չունի:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստերի լույսի ներքո զրպարտություն որակված արտահայտությունները դիտարկելով արտահայտված ամբողջական մտքի համատեքստում, գտնում է, որ դրանք չունեն վերոնշյալ թվարկված հատկանիշներից առնվազն երկուսը: Առաջինը՝ խոսքը չի վերաբերում փաստացի տվյալներին, քանի որ դրանք վերացական ու ենթադրական են, չունեն կոնկրետ առարկայական դրսևորում, երկրորդը՝ դրանցով որևէ կերպ չեն արատավորվում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Բացի այդ, պետք է արձանագրել, որ Բորիս Աշրաֆյանի օգտագործած՝ «Ասի՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար, բացի հորիցդ, մորիցդ, փեսեներացիցդ...» արտահայտությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, որն իրենից ներկայացնում է պատասխանողի սուբյեկտիվ գնահատականը ուղղված համայնքի ղեկավարի գործունեության բարոյական կողմին: Իսկ ամբողջ մտքի համատեքստում գնահատելու պայմաններում պարզ է դառնում, որ նման արտահայտությամբ Բորիս Աշրաֆյանը Վանո Եղիազարյանի պատիվը կամ արժանապատվությունն արատավորելու նպատակ չի ունեցել, քանի որ այն ոչ թե վերաբերում է Վանո Եղիազարյանի հորը, մորը կամ փեսաներին «սոված» անվանելուն, այլ ուղղված է գյուղապետի գործունեության քննադատությանը, իրավիճակի վերաբերյալ Բորիս Աշրաֆյանի գնահատականին՝ սոցիալապես առավել անապահով անձանց օժանդակելու առումով, որոնք առավել վատ (օգտագործված «սոված») վիճակում են, քան Վանո Եղիազարյանի հայրը, մայրը կամ փեսաները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ արտահայտության հավաստիության ապացուցումն ակնհայտորեն անհնարին է:

Ինչ վերաբերում է հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորում է անձի՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացված լինելու հետ: Հետևաբար, հայցային վաղեմության մասին վկայակոչած անձը պարտավոր է ապացուցել նաև այդ ժամկետի սկիզբը հաշվարկելու համար անհրաժեշտ փաստի, այն է՝ **վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացված լինելու** առկայությունը:

Սույն գործով բողոքաբերը որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ վկայակոչել է 01.09.2010 թվականը՝ «Ժամանակ» օրաթերթում վիճարկվող հոդվածի հրապարակվելու օրը: Մինչդեռ բողոքաբերը չի հիմնավորել, թե կոնկրետ երբ է Վանո Եղիազարյանը տեղեկացել ենթադրյալ վիրավորանքի կամ զրպարտության մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վանո Եղիազարյանի կարծիքով իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող արտահայտությունները կատարվել են «Ժամանակ» օրաթերթում հրապարակվելու եղանակով՝ 01.09.2010 թվականին, այսինքն՝ ենթադրյալ վիրավորանքի կամ զրպարտության պահը 01.09.2010 թվականն է: Իրավունքի պաշտպանության վերաբերյալ Վանո Եղիազարյանը հայցը դատարան է ներկայացրել **22.09.2010 թվականին**: Դատարանի՝ 27.09.2010 թվականի որոշմամբ նշված հայցադիմումը վերադարձվել է թերությունները շտկելու և ստանալու պահից եռօրյա ժամկետում կրկին ներկայացնելու համար: Վանո Եղիազարյանի՝ 01.10.2010 թվականին ներկայացրած հայցադիմումը Դատարանը վերադարձրել է 05.10.2010 թվականին՝ դարձյալ տրամադրելով եռօրյա ժամկետ թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար: Միաժամանակ, Դատարանը նշել է, որ թերությունները վերացնելուց և եռօրյա ժամկետում՝ ներկայացնելուց հետո հայցադիմումը կհամարվի վարույթ ընդունված սկզբնական ներկայացնելու օրը: Վանո Եղիազարյանը դարձյալ 11.10.2010 թվականին ներկայացրել է հայցադիմում, որը Դատարանի 14.10.2010 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ, որպիսի պարագայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ կետի ուժով հայցադիմումը վարույթ ընդունված է համարվել սկզբնական ներկայացնելու օրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցադիմումը դատարան է ներկայացվել տվյալ պահանջի նկատմամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետի՝ մեկամսյա ժամկետի պահպանմամբ, և այդ մասով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, իսկ վճռաբեկ բողոքն այդ հիմքով՝ անհիմն և մերժման ենթակա:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացրել Դատարանում գործի քննության ընթացքում, մինչդեռ, զրկված չի եղել Դատարանում նման միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից, այլ հայցային վաղեմության ժամկետի խախտման մասին դիրքորոշում հայտնել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Բորիս Աշրաֆյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2011 թվականի որոշման՝ Բորիս Աշրաֆյանի վերաքննիչ բողոքը մերժելու, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.07.2011 թվականի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով կայացրած վճիռը օրինական ուժի մեջ թողնելու, ինչպես նաև Բորիս Աշրաֆյանի մասով պետական տուրքի հարցը լուծված համարելու մասերը և այդ մասերով այն փոփոխել.

Վանո Եղիազարյանի հայցը մերժել:

Վանո Եղիազարյանից հօգուտ Բորիս Աշրաֆյանի բռնագանձել 19.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

2. Վանո Եղիազարյանից հօգուտ Բորիս Աշրաֆյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3124/02/11
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3124/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Պարույր Հայրիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.07.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գեղամ Գալստյանի, Նորիկ Պետրոսյանի ընդդեմ Պարույր Հայրիկյանի՝ պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները հերքելու և գումարը փոխհատուցելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանը պահանջել են պարտավորեցնել Պարույր Հայրիկյանին «հերքելու Գեղամ Խաչատուրի Գալստյանի և Նորիկ Խաչիկի Պետրոսյանի պատիվն արատավորող, վիրավորող և զրպարտող տեղեկությունները՝ զետեղված «Հրապարակ» օրաթերթում: Հայկական պետությունը և պետական այրերին վարկաբեկելու տեղեկությունները «Հայկական ժամանակ» օրաթերթում: Պարտավորեցնել պատասխանողին «Հրապարակ» օրաթերթում տպագրելու սույն գործով դատարանի վճռի եզրափակիչ մասը»:

09.02.2012 թվականի նախնական դատական նիստի ընթացքում Գեղամ Գալս-

տյանը և Նորիկ Պետրոսյանը, ավելացնելով հայցային պահանջի չափը, պահանջել են պարտավորեցնել Պարույր Հայրիկյանին «սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով փոխհատուցում վճարել Գեղամ Խաչատուրի Գալստյանին և Նորիկ Խաչիկի Պետրոսյանին, յուրաքանչյուրին 50-ապատիկի չափով, որպես կատարված վիրավորանքի փոխհատուցում, (այն է՝ պատասխանողը հայցվորներին պետք է վճարի նվազագույն աշխատավարձ՝ 32.500x100=325.000 ՀՀ դրամ, որը բաժանվում է 2 հայցվորների միջև, յուրաքանչյուրին՝ 162.500 ՀՀ դրամ)։ Պատասխանող Պարույր Արշավիրի Հայրիկյանին պարտավորեցնել սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով փոխհատուցում վճարել Գեղամ Խաչատուրի Գալստյանին և Նորիկ Խաչիկի Պետրոսյանին, յուրաքանչյուրին 50-ապատիկի չափով, որպես կատարված փոխհատուցում, (այն է՝ պատասխանողը հայցվորներին պետք է վճարի նվազագույն աշխատավարձ 32.500x100=325.000 ՀՀ դրամ, որը բաժանվում է 2 հայցվորների միջև յուրաքանչյուրին 162.500 ՀՀ դրամ)։ Պարտավորեցնել Պարույր Արշավիրի Հայրիկյանին «Հրապարակ» օրաթերթում տալ հերքում վերոնշված 2 հոդվածների կապակցությամբ։ Հերքման տեղակայման չափը ու տեսակը չպետք է զիջի վերոնշված հոդվածների ծավալներին։ Խնդրել դատարանին մասնակի որոշմամբ պարտավորեցնել հեռուստապետկոմին Հ1 ծրագրով «Հայոց հարց» հաղորդաշարով նոր հաղորդում պատրաստել Ս.Շահումյանի վերաբերյալ՝ մասնակից դարձնելով պատմական գիտնականներին», ինչպես նաև պահանջը բավարարվելու դեպքում պահանջել են «նշված գումարի 2%-ի չափով փոխանցել որպես դատական ծախսեր, իսկ մնացած գումարը փոխանցել Պարույր Հայրիկյանի միջնորդությամբ սեփականաշնորհման գործընթացի ժամանակ տուժած Բարձրաշենի գյուղական համայնքի մանկապարտեզի վերագործարկման հաշվին»։

09.02.2012 թվականի դատական նիստի ժամանակ Նորիկ Պետրոսյանը հրաժարվել է իր կողմից ներկայացված ավելացված հայցային պահանջի չափից։

13.02.2012 թվականին Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանը, ավելացնելով հայցային պահանջի չափը, արդյունքում պահանջել են Պարույր Հայրիկյանին «պարտավորեցնել սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով փոխհատուցում վճարել Գեղամ Խաչատուրի Գալստյանին 100-ապատիկի չափով, որպես կատարված փոխհատուցում, (այն է՝ պատասխանողը հայցվորին պետք է վճարի նվազագույն աշխատավարձ՝ 32.500x100=325.000 ՀՀ դրամ)։ Պարտավորեցնել Պարույր Արշավիրի Հայրիկյանին «Հրապարակ» օրաթերթում տալ հերքում վերոնշված 2 հոդվածների կապակցությամբ։ Հերքման տեղակայման չափը ու տեսակը չպետք է զիջի վերոնշված հոդվածների ծավալներին», ինչպես նաև պահանջը բավարարվելու դեպքում պահանջել են «նշված գումարի 2%-ի չափով փոխանցել որպես դատական ծախսեր, իսկ մնացած գումարը փոխանցել Պարույր Հայրիկյանի միջնորդությամբ սեփականաշնորհման գործընթացի ժամանակ տուժած Բարձրաշենի գյուղական համայնքի մանկապարտեզի վերագործարկման հաշվին»։

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Գ.Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 04.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Պարույր Արշավիրի Հայրիկյանին պարտավորեցնել «Հրապարակ» օրաթերթում հրապարակելու սույն վճռի եզրափակիչ՝ վճռեց մասը։ Պարույր Արշավիրի Հայրիկյանից հօգուտ Գեղամ Խաչատուրի Գալստյանի բռնագանձել 40.000 (քառասուն հազար) ՀՀ

դրամ՝ որպես վիրավորելու հետևանքով փոխհատուցման ենթակա գումար: Պարույր Արշավիրի Հայրիկյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 5.500 (հինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Գեղամ Խաչատուրի Գալստյանից և Նորիկ Խաչիկի Պետրոսյանից համապարտության կարգով հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 4.000 (չորս հազար) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Գեղամ Խաչատուրի Գալստյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 5.700 (հինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Հայցը մնացած մասերով մերժել՝ անհիմն լինելու հիմքով»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.07.2012 թվականի որոշմամբ Պարույր Հայրիկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.05.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Պարույր Հայրիկյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 27-րդ, 43-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 48-րդ հոդվածի 6-րդ կետը, 51-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածների 1-ին, 2-րդ կետերը.

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանը բաց են թողել օրենքով սահմանված դատարան դիմելու ժամկետը, քանի որ Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանը հայցադիմումում նշել են. «Հուլիսի 9-ին (խոսքը գնում է 2011 թվականի ժամանակահատվածին) Պարույր Հայրիկյանն արձագանքեց՝ «Հայհոյելը թուլության խոստովանություն է» և «Դատի տալ, թե չտալ այս է խնդիրը»», փաստորեն Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանն իրենց իրավունքների խախտման մասին իմացել են դեռևս նշված հոդվածների հրապարակման ժամանակ՝ 09.07.2011 թվականին, սակայն դատարան են դիմել 16.12.2011 թվականին՝ բաց թողնելով օրենքով սահմանված դատարան դիմելու ժամկետը:

Ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ Պարույր Հայրիկյանի կողմից հրապարակված նյութերն իրենց մեջ որևէ վիրավորական կամ այլ բնույթի տեղեկություններ չեն պարունակում, և դրանով այլ անձի իրավունքներ չեն խախտվում: Մինչդեռ, վիճարկվող նյութն ընդամենը Պարույր Հայրիկյանի կարծիքն է, որը պարունակում է քննադատություն և ուղղված է կոնկրետ գաղափարախոսությանը, սակայն այն ստորադաս դատարանների կողմից համարվել է որպես վիրավորանք՝ սահմանափակելով ազատ խոսքի արտահայտման իրավունքը:

Բացի այդ, ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ դատական ակտերը կայացվել են փաստաթղթերի պատճենների հիման վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.07.2012 թվականի որոշումը և փոփոխել այն՝ մերժել հայցադիմումի բավարարված մասը, իսկ վճռով հայցադիմումի մերժված մասը թողնել անփոփոխ, կամ բեկանել Վերաքննիչ դատարանի 12.07.2012 թվականի որոշման՝ հայցադիմումի բավարարված մասը, և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայցադիմումը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան մուտքագրվել է 16.12.2011 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 1-8,21-25):

2. «Հրապարակ» օրաթերթի 07.07.2011 թվականի հերթական համարի յոթերորդ էջում «Մշակույթ» խորագրի ներքո «Հունիսի 12-ի «Հայոց հարց» հաղորդաշարի թեմայով» կոմունիստներ Գեղամ Գալստյանի և Նորիկ Պետրոսյանի անունից տպագրվել է «Չնչին, ինչպես Արարատին նետած քար» հոդվածը(հատոր 1-ին, գ.թ. 15):

3. «Հրապարակ» օրաթերթի 09.07.2011 թվականի հերթական համարի յոթերորդ էջում «Պատասխան» խորագրի ներքո «Հրապարակի» հուլիսի 7-ի համարում «Չնչին, ինչպես Արարատին նետած քար» հոդվածի կապակցությամբ Պարույր Հայրիկյանի անունից տպագրվել է «Հայհոյելը թուլութեան խոստովանութիին է» հոդվածը (հատոր 1-ին, գ.թ. 16):

4. «Հրապարակ» օրաթերթի 20.07.2011 թվականի հերթական համարի յոթերորդ էջում «Մշակույթ» խորագրի ներքո Պարույր Հայրիկյանի անունից տպագրվել է «Դատի տալ, թե՝ Զտալ, այս է խնդիրը» հոդվածը (հատոր 1-ին, գ.թ. 17):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը: Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

Նշված իրավական դրույթների վերաբերյալ իր իրավական մեկնաբանությունը և դիրքորոշումն է արտահայտել Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դա-

տարանն արձանագրել է, որ իրավունքի պաշտպանության միջոցի ընտրությունը բոլոր դեպքերում կատարում է տուժողը: Վերջինս էլ կարող է մի դեպքում նախապատվություն տալ անմիջապես զանգվածային լրատվության միջոցին հերքման պահանջ ներկայացնելուն, մյուս դեպքում՝ իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելուն: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արտադատական կարգով խախտված իրավունքի վերականգնման համար զանգվածային լրատվամիջոցին դիմելը թեև պարտադիր պայման չէ իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար, այդուհանդերձ դատարանները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնեն այն, թե արդյոք անձը մինչև դատարան հայց ներկայացնելը դիմել է համապատասխան լրատվամիջոցին հերքում հրապարակելու պահանջով, և այդ պահանջին զանգվածային լրատվության միջոցը որևէ ընթացք տվել է, թե ոչ:

Օրենսդիրը հնարավորություն է տվել շահագրգիռ անձին դատարան դիմել բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մինչև վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիսը լրանալը՝ դրանում ներառելով նաև զանգվածային լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը: Անհրաժեշտ է նաև նշել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ զրպարտությունը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է զրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ ժամկետները այնպիսի ժամկետներ են, որոնց ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար, այդ ժամկետներն իրենց բնույթով համապատասխանում են հայցային վաղեմության ժամկետին, և դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության վերաբերյալ կանոնակարգումները (*տես՝ Վանո Եղիազարյանի հայցն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջների մասին թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը):*

Զարգացնելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեկամսյա ժամկետը, որպես հայցային վաղեմության ժամկետ ներառված լինելով, վեցամսյա ժամկետում ենթակա է վերականգնման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգով: Մինչդեռ վեցամսյա ժամկետի բացթողնման դեպքում այն վերականգնման ենթակա չէ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրական նման ձևակերպումը ենթադրում է, որ վիրավորանքի և զրպարտության դեպքում դրա տարածման մակարդակը նվազում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո առարկայազուրկ է դառնում նման պահանջի ներկայացումը: Միևս կողմից հատկանշական է այն, որ բոլոր դեպքերում վեցամսյա ժամկետում հայցի ներկայացումը դեռևս չի նշանակում հայցային վաղեմության ժամկետի պահպանում, քանի որ այդ դեպքում իմաստազուրկ է դառնում մեկամսյա ժամկետի նախատեսումը:

Ընդհանրացնելով վերոնշյալ եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության հարց բարձրացնելիս դատարանները նախ և առաջ պետք է գնահատեն վեցամսյա ժամկետի պահպանված լինելու հանգամանքը, ապա դրա շրջանակներում անդրադառնան մեկամսյա ժամկետի պահպանված լինելու հարցին:

Սույն գործի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում

անդրադառնալ այն հարցին, թե ով է կրում հայցային վաղեմության ժամկետում հայց ներկայացված լինելու փաստն ապացուցելու բեռն այն դեպքում, երբ պատասխանող կողմը միջնորդել է կիրառել հայցային վաղեմություն:

Հայցային վաղեմության ժամկետը բաց թողած լինելու կամ չլինելու փաստի ապացուցումը վիրավորանքի և զրպարտության հետևանքով պատճառված վնասների հատուցման գործերով առանձնահատուկ է այնքանով, որքանով ժամկետի հաշվարկման սկիզբը կապված է տուժողի՝ տեղեկացված լինելու հետ: Այս առումով գրեթե անհնար է պատասխանողի (հայցային վաղեմություն վկայակոչող անձի) կողմից այնպիսի ապացույցների ներկայացումը, որոնք կհաստատեն նշված փաստերի առկայությունը: Այսինքն՝ օբյեկտիվորեն տուժողին է հայտնի կոնկրետ տեղեկատվությունն իրեն հասու լինելու ժամանակը, հետևաբար տուժողի կողմից այլ բան ապացուցված չլինելու դեպքում հայցային վաղեմության սկիզբ է համարվում համապատասխան տեղեկատվության հրապարակման օրը:

Միաժամանակ հարց է առաջանում, արդյոք բացարձակ առումով պետք է դիտարկել փաստը չապացուցելու հետևանքը նմանատիպ գործերով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման համար անհրաժեշտ փաստերի ապացուցումը կարող է իրականացվել այնպիսի ապացույցներով, որոնք առավել հավանական են դարձնում կոնկրետ փաստի գոյությունը: Եթե ապացուցման պարտականություն կրող կողմը ներկայացրել է բացառապես անուղղակի ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ առավել հավաստի են դարձնում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը, ապա նման ապացույցները չպետք է մերժվեն զուտ այն հիմքով, որ ուղղակի ապացույցներ չեն:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «Ինչ վերաբերում է բողոքի մյուս փաստարկին, որ հայցվոր կողմը բաց է թողել օրենքով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը, նույնպես անհիմն է: Մասնավորապես՝ հաստատվել է, որ վիճարկվող հոդվածը հրապարակվել է 2011 թվականի հուլիսի 20-ին, իսկ հայցադիմումը Դատարան մուտք է եղել 2011 թվականի դեկտեմբերի 16-ին, այսինքն՝ հայցվոր կողմը տվյալ դեպքում պահպանել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված վիրավորանքի պահից առավելագույնը վեցամսյա ժամանակահատվածում դատարան հայց ներկայացնելու օրենսդրական պահանջը»:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետը հայցային վաղեմության մեկամսյա ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորում է անձի՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացված լինելու հետ:

Սույն գործով բողոքաբերը որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ վկայակոչել է 09.07.2011 թվականը և 20.07.2011 թվականը՝ «Հրապարակ» օրաթերթում վիճարկվող հոդվածների հրապարակվելու օրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գեղամ Գալստյանի և Նորիկ Պետրոսյանի կարծիքով իրենց պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող արտահայտությունները կատարվել են «Հրապարակ» օրաթերթում հրապարակվելու եղանակով՝ 09.07.2011 թվականին և 20.07.2011 թվականին: Իրավունքի պաշտպանության վերաբերյալ Գեղամ Գալստյանը և Նորիկ Պետրոսյանը հայցը դատարան են ներկայացրել **16.12.2011 թվականին**:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ զրպարտությունը, որպիսի պահից մեկամսյա ժամկետում իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցադիմումը ենթակա է ներկայացման դատարան: Մինչդեռ ստորադաս դատարանները սույն քաղաքացիական գործով չեն պարզել, թե Գեղամ Գալստյանին և Նորիկ Պետրոսյանին երբ են հայտնի դարձել «Հրապարակ» օրաթերթում 09.07.2011 թվականին և 20.07.2011 թվականին հրապարակված հոդվածներով արտահայտված վերջիններիս ենթադրյալ վիրավորանքի կամ զրպարտության մասին: Նշված փաստի գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ 09.07.2011 թվականին և 20.07.2011 թվականին հրապարակված հոդվածները հաջորդել են հայցվորների կողմից 07.07.2011 թվականին հրապարակված հոդվածին, իսկ վերջինս լույս է տեսել 12.06.2011 թվականին «Հայոց հարց» հաղորդաշարում պատասխանողի հնչեցրած կարծիքներից հետո: Սույն փաստերը անհրաժեշտ է գնահատել դրանց փոխկապվածության մեջ՝ հաշվի առնելով ժամանակագրական առումով միմյանց հաջորդելու հանգամանքը: Նշվածն անհրաժեշտ է եզրահանգելու, թե արդյոք հավանական է, որ պատասխանողի վերջին հոդվածի հրապարակումից (20.07.2011 թվական) սկսած շուրջ հինգ ամիս հետո են համահայցվորները տեղեկացել իրենց իրավունքի խախտման մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման կարգը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար, որպիսի պայմաններում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.07.2012 թվականի որոշման՝ հայցը բավարարելու մասով վճիռն անփոփոխ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին (այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի հարցին) անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0809/02/10
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ1/0809/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանների հայցի ընդդեմ Վլադիմիր Խաչատրյանի, ՀՀ Կոտայքի նոտարական տարածքի նոտար Ռիմա Մխիթարյանի, երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման, Արմեն Բադալյանի և Եղիա Դեզեմոնյանի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու ու ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանները պահանջել են անվավեր ճանաչել Վլադիմիր Խաչատրյանին 16.10.2008 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված սեփակա-

նության իրավունքի պետական գրանցումը, Վլադիմիր Խաչատրյանի և Եղիա Դեգեմոնյանի միջև 25.02.2010 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն ու իրենց ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգներ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Յու. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 08.06.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.09.2011 թվականի որոշմամբ Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, ու Դատարանի 08.06.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 2-րդ կետը, 1226-րդ հոդվածի 3-րդ կետը և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետը և 1228-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով իրենց մոր՝ Մանյա Խաչատրյանի մահից հետո ժառանգական գույքը տիրապետելու և օգտագործելու հետևանքով Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանների կողմից ժառանգությունը փաստացի ընդունած լինելու հանգամանքը, նշել է, որ վերջիններս բաց են թողել ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետը և դատարան չեն դիմել այդ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու պահանջով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանների և Վլադիմիր Խաչատրյանի միջև երբևէ վեճ չի եղել ժառանգական գույքի տիրապետման և օգտագործման վերաբերյալ, որի պատճառով նշանակություն չեն տվել, թե ում անունով այն կգրանցվի:

Վերաքննիչ դատարանը, չիրականացնելով գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, չի ստուգել և չի պարզել, թե ինչու է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը տրվել ժառանգատուի մահվանից 8 տարի հետո, իսկ եթե այն տրվել է ժառանգությունը փաստացի ընդունելու հիմքով, ապա ինչու է նոտարը այն տվել առանց այլ ժառանգների կողմից ժառանգությունը փաստացի ընդունած լինելու փաստը ստուգելու:

Վերաքննիչ դատարանի 29.09.2011 թվականի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի 16.10.2009 թվականի թիվ 3-93 (ՎԴ) որոշմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքն-

նիչ դատարանի 29.09.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի 2-րդ փողոցի թիվ 10 հասցեի տունը սեփականության իրավունքով պատկանել է Մանյա Խաչատրյանին (հատոր 1, գ.թ. 15).

2) Մանյա Խաչատրյանը 24.02.1999 թվականին մահացել է (հատոր 1, գ.թ. 15).

3) Լյուդվիգ, Վալերի, Ալֆրեդ, Վլադիմիր և Գենյա Խաչատրյանները Մանյա Խաչատրյանի երեխաներն են.

4) 16.10.2008 թվականին ՀՀ Կոտայքի նոտարական տարածքի նոտար Ռիմա Մխիթարյանը Վլադիմիր Խաչատրյանին տվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, որի հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման կողմից կատարվել է Վլադիմիր Խաչատրյանի՝ ժառանգական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում (հատոր 1, գ.թ. 12,13, 15).

5) 25.02.2010 թվականին Վլադիմիր Խաչատրյանի և Եղիա Դեգեմոնյանի միջև կնքվել է ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի 2-րդ փողոցի թիվ 10 հասցեի տան առուվաճառքի պայմանագիր, որի հիման վրա կատարվել է Եղիա Դեգեմոնյանի սեփականության իրավունքի պետական գրանցում (հատոր 1, գ.թ. 16, 184, 185):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ժառանգի կողմից փաստացի տիրապետման եղանակով ժառանգության ընդունման հարցին և նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1126-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնա-

հատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք առկա են ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյոք ժառանգությունն ընդունելու համար ժառանգը միջոցներ (ակտիվ գործողություններ) է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից և հավակնություններից պաշտպանելու համար (*տես՝ Կիմա Սարգսյանի հայցն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետումն եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1224(ՎԴ) որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսինքն՝ վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր է՝

- քաղաքացիական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա,

- քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս Անժելա Ղազարյանը,*

Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ռաֆեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843/ՎԴ):

Մինչդեռ, հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը վերլուծելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ չեն անդրադարձել հայցի հիմքերին, մասնավորապես՝ Լյուդվիգ, Վալերի և Ալֆրեդ Խաչատրյանները հայցադիմումի հիմքում դրել են նաև այն հանգամանքը, որ նրանք իրենց մոր մահից հետո փաստացի տիրապետման ուժով ընդունել են ժառանգությունը: Վերջիններս Դատարանում վկայակոչել են փաստ այն մասին, որ իրենց մոր մահից հետո տան պահպանության, վերանորոգման, հողամասի մշակման բոլոր աշխատանքները եղբայրներով կատարել են համատեղ, այդ թվում նաև Վլադիմիր Խաչատրյանը, հավասարապես օգտվել են այդ տնից և յուրաքանչյուրն ունեցել են իրենց բաժինը, իրենց համաձայնությամբ տունը փաստացի բաժանել են միմյանց միջև:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել պատշաճ քննություն, հետևաբար առկա է նոր քննության անհրաժեշտություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.09.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0850/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Մկրտչյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0850/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մխիթար Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Մխիթար Ասատրյանի հայցի ընդդեմ Նարգիզ Ասատրյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի (Գևորգի) Ասատրյանի ժառանգական գույքի նկատմամբ ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այդ հիմքով ժառանգական գույքի՝ 178,00քմ մակերեսով շենք-շինության և 1.800քմ մակերեսով հողամասի 1/2 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, Նարգիզ Ասատրյանին 11.10.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մխիթար Ասատրյանը պահանջել է փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի (Գևորգի) Ասատրյանի մահից հետո ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչել իրեն և այդ հիմքով ճանաչել իր սեփականության իրավունքը ժառանգական գույքի 178,00քմ շենք-շինության և 1.800քմ հողամասի 1/2 բաժնի նկատմամբ ու մասնակիորեն՝ 1/2 բաժնի մասով, անվավեր ճանաչել Նարգիզ Ասատրյանին 11.10.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և 19.10.2010 թվականին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականը:

Մխիթար Ասատրյանը, փոխելով և ավելացնելով հայցապահանջը, արդյունքում պահանջել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը պատկանում է Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին, ամբողջովին անվավեր ճանաչել Նարգիզ Ասատրյանին 11.10.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և որպես հետևանք ամբողջովին անվավեր ճանաչել 19.10.2010 թվականին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝Ե.Եսոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.03.2012 թվականին վճռել է. «Մխիթար Պետրոսի Ասատրյանի ընդդեմ Նարգիզ Բաղդասարի Ասատրյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Երևան տարածքային ստորաբաժանման՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993թ. տրված N 7858 սեփականության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու իրավաբանական փաստը հաստատելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի (Գևորգի) Ասատրյանի մահից հետո ներկայացման իրավունքով հայցվոր Մխիթար Ասատրյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այդ հիմքով նրա սեփականության իրավունքը ժառանգական գույքի՝ 178,00քմ շենք-շինության և 1.800քմ հողամասի 1/2 մասի նկատմամբ ճանաչելու, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից Նարգիզ Ասատրյանին 11.10.2010թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն (Ձև N 3) ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջների մասով հայցը մերժել: Որպես հետևանք 19.10.2010թ. տրված թիվ 2753055 սեփականության իրավունքի վկայականն ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջի մասով թիվ ԵԷԴ0850/02/11 քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.06.2012 թվականի որոշմամբ Մխիթար Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.03.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մխիթար Ասատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերը, 1226-րդ հոդվածի 1-ին, 3-րդ կետերը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 109-րդ հոդվածի 1-ին կետը, 189-193-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ Մխիթար Ասատրյանը ժառանգատու տատի՝ Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի մահից հետո փաստացի տիրապետել ու կառավարել է ժառանգական գույքը, շարունակել է բնակվել ժառանգական գույք հանդիսացող Երևանի Զրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 բնակելի տանը, ինչպես նաև ակտիվ գործողություններ է կատարել ժառանգությունն ընդունելու համար:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ ժառանգատու Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի ժառանգական գույքի նկատմամբ Նարգիզ Ասատրյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս վերջինս թաքցրել է այլ ժառանգ առկա լինելու փաստը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել այն փաստին, որ ժառանգական գույքը տիրապետող ժառանգը չպետք է ապացուցի իր կողմից այդ գույքի տիրապետումը, այլ այն պետք է ապացուցի այդպիսի փաստը վիճարկող անձը, մինչդեռ Նարգիզ Ասատրյանը չի ներկայացրել որևէ ապացույց Մխիթար Ասատրյանի կողմից ժառանգական գույքը չտիրապետելու և չկառավարելու, ժառանգական գույք հանդիսացող տանը չբնակվելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չգնահատելով գործում առկա ապացույցները, մերժել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատումը, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը պատկանում է Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին, որպիսի փաստի հաստատումն ուղղված է Մխիթար Ասատրյանի կողմից ժառանգատուի ժառանգական գույքը ներկայացման իրավունքով ընդունելուն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանն անհիմն կարճել է 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականն անվավեր ճանաչելու մասին գործի վարույթը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 08.06.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բաղդասար Զաքարի Ասատրյանի և Մարգարիտ Գրիգորի Ստեփանյանի ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցվել է 14.01.1954 թվականին, և վերջինս կրել է Ասատրյան ազգանունը (հատոր 1-ին, գ.թ.14): Ազգանուշ և Նարգիզ Ասատրյանները Բաղդասար և Մարգարիտ Գրիգորի Ասատրյանների դուստրերն են, իսկ Մխիթար Ասատրյանը՝ Ազգանուշ Ասատրյանի որդին (հատոր 1-ին, գ.թ.15,18,60):

2. Ազգանուշ Բաղդասարի Ասատրյանը մահացել է 16.11.1976 թվականին (հատոր 1-ին, գ.թ.19), Բաղդասար Զաքարի Ասատրյանը մահացել է 16.02.1979 թվականին(հատոր 1-ին, գ.թ.20), իսկ Մարգարիտ Գրիգորի Ասատրյանը մահացել է 03.05.1994 թվականին (հատոր 1-ին, գ.թ.21):

3. 01.12.1993 թվականի սեփականության թիվ 7858 վկայագրի համաձայն՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող 56,10քմ բնակելի, 84,10քմ օժանդակ մակերեսների և 1.800,0քմ հողամասի սեփականատերը Մարգարիտ Գեորգիի Ասատրյանն է (հատոր 1-ին, գ.թ. 61):

4. 11.10.2010 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7089 վկայագրի համաձայն՝ 03.05.1994 թվականին մահացած Մարգարիտ Գրիգորի Ասատրյանի ժառանգական գույքի՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող տան նկատմամբ ժառանգ է ճանաչվել դուստրը Նարգիզ Բաղդասարի Ասատրյանը (հատոր 1-ին, գ.թ.22):

5. 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականի համաձայն՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող 178,0քմ մակերեսով բնակելի տան և 0,17548հա հողամասի սեփականատերը Նարգիզ Բաղդասարի Ասատրյանն է, հիմք՝ 11.10.2010 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7089 վկայագիրը (հատոր 1-ին, գ.թ.238-240):

6. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Էրեբունու տարածքային ստորաբաժանման 21.10.2011 թվականի թիվ ԿԿ-04/3-6158 գրության համաձայն՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը նախկինում սեփականության իրավունքով գույքագրված է եղել Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ (կադաստրային գործում առկա փաստաթղթերում՝ 01.12.1993թ. թիվ 7858 սեփականության վկայագրում, 01.12.1993թ. ԱԿՏ-ում Մարգարիտ Ասատրյանի հայրանունը նշված է Գեորգիի) (հատոր 1-ին, գ.թ.159):

7. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունու անձնագրային բաժանմունքի 02.11.2010 թվականի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին թիվ 000675 տեղեկանքի և Մխիթար Ասատրյանի 26.10.2010 թվականին 009-ի կողմից տրված թիվ AK0645474 անձնագրի համաձայն՝ 03.01.1975 թվականին ծնված Մխիթար Ասատրյանը Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում հաշվառված է 14.04.1994 թվականից, միաժամանակ կատարվել է նշում «մշտական բնակվելու մասին» (հատոր 1-ին, գ.թ.16,17):

8. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունու անձնագրային բաժանմունքի 08.11.2011 թվականի թիվ 44-ա91160 գրությամբ հայտնվել է, որ 03.01.1975 թվականին ծնված Մխիթար Ասատրյանը Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեի հաշվառումից հանվել է 16.08.2011 թվականին՝ նշված հասցեի սեփականատեր Նարգիզ Ասատրյանի դիմումի հիման վրա (հատոր 1-ին, գ.թ.165):

9. 22.12.2010 թվականի թիվ OS 00042065 զինվորական գրքույկի և 26.02.2008 թվականի Էրեբունու զինվորական կոմիսարիատի թիվ 4/169 տեղեկանքի համաձայն՝ 03.01.1975 թվականին ծնված Մխիթար Ասատրյանը 18.06.1994 թվականին զորակոչվել է զինվորական ծառայության Երևանի Էրեբունու տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից, զորացրվել է 19.11.1995 թվականին և հաշվառված է նույն զինվորական կոմիսարիատում (հատոր 1-ին, գ.թ.27-30,139):

10. Թիվ 26 տեղամասի լիազոր ներկայացուցչի կնիքով դրոշմված և ստորագրու-

թյամբ հաստատված 27.05.2011 թվականի, 30.07.2011 թվականի և 11.11.2011 թվականի տեղեկանքների համաձայն՝ Մխիթար Ասատրյանին խնամել է մոր՝ Ազգանուշ Ասատրյանի մայրը՝ Մարգարիտ Ասատրյանը, և Մխիթար Ասատրյանը 1975 թվականից փաստացի բնակվել է տատին՝ Մարգարիտ Ասատրյանին պատկանող Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը մինչև 1994 թվականը, որտեղից զորակոչվել է զինվորական ծառայության, և 1995 թվականի դեկտեմբերին զորացրվելուց հետո վերադարձել է տատի տուն և շարունակել բնակվել Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը մինչև 1998 թվականը (հատոր 1-ին, գ.թ.24, 99,138):

11. Թիվ 26 տեղամասի լիազոր ներկայացուցչի կնիքով դրոշմված և ստորագրությամբ հաստատված 11.11.2011 թվականի Ալբերտ Դավթյանի հայտարարությամբ վերջինս հայտնել է, որ Մխիթար Ասատրյանին 1975 թվականից ճանաչում է որպես հարևան, 1975 թվականից մինչև 1998 թվականը բնակվել է Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը, 1994 թվականին զորակոչվել է զինվորական ծառայության նշված հասցեից և 1995 թվականի դեկտեմբերին զորացրվելուց հետո վերադարձել է և շարունակել բնակվել Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը, մշակել է հողամասը, իսկ 1998 թվականին նշված տանից հեռացել է ժամանակավորապես (հատոր 1-ին, գ.թ.131):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքը պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ

է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (*տես՝ Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Մնահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, **ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը** (*ի թիվս այլ ակտերի տես՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Գարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կրակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեպարն 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Գարինե Սերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը*): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով,** ընդ որում գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև **բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը**, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (*տես՝ Գառնիկ Նազարյանն ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի՝ փաստա-*

ցի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը, ինչպես նաև Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի տարածքային սպորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիս 1-ի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (*տես՝ Կիմա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Սույն գործով, Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ, 1216-րդ, 1221-րդ հոդվածները, 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, Մխիթար Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «Տվյալ դեպքում վերաքննիչ բողոք բերած անձի կողմից դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել որևէ ապացույց, որը թույլ կտար կատարել միանշանակ հետևություն առ այն, որ բողոքաբերը փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառանգությունը: Վերջինիս կողմից ներկայացված և գործին կցված հայտարարություններն ու դատաքննության ժամանակ տրված վկաների ցուցմունքները, տեղամասի լիազոր ներկայացուցչի 27.05.2011թ., 30.07.2011թ. և 11.11.2011թ., Էրեբունու զինկոմիսարիատի 26.02.2008թ. տեղեկանքները, ինչպես նաև Մ. Ասատրյանի զինվորական գրքույկը չեն կարող հայցը բավարարելու հիմք հանդիսանալ: Դատարանը դրանք հետազոտել է և իրավացիորեն հանգել հետևության, որ հայցվորի կողմից ներկայացված ապացույցները բավարար չեն հայցը բավարարելու համար: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործով ներկայացված չեն բավարար թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, որոնցով կարող էր հիմնավորվել հայցվոր Մխիթար Ասատրյանի կողմից փաստացի տիրապետմամբ ժառանգատու Մարգարիտ Ասատրյանի ժառանգությունն ընդունելու հանգամանքը: Հետևում է, որ ընդհանուր իրավասության դատարանն իրավացիորեն հանգել է այն հետևության, որ փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի Ասատրյանի մահվանից հետո ներկայացման իրավունքով հայցվոր Մխիթար Ասատրյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այդ հիմքով նրա սեփականության իրավունքը ժառանգական գույքի 1/2 մա-

սի նկատմամբ ճանաչելու, ինչպես նաև Նարգիզ Ասատրյանին 11.10.2010թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջներն անհիմն են և ենթակա են մերժման»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձանց բացատրությունները, վկաների ցուցմունքները, Ալբերտ Դավթյանի հայտարարությունը, համատիրության կողմից տրված տեղեկանքները՝ որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ Մխիթար Ասատրյանը ժառանգության բացման ժամանակ ժառանգական գույք հանդիսացող Երևանի Զրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը բնակվել է և նշված հասցեից զինվորական ծառայության է զորակոչվել, ավելին վերջինս զորացրվելուց հետո վերադարձել է նշված տուն և շարունակել բնակվել այնտեղ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մխիթար Ասատրյանը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ներկայացման իրավունքով ընդունել է ժառանգական գույքը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջին, գտել է, որ «Մխիթար Ասատրյանի՝ իրավաբանական փաստը ճանաչելու պահանջն ըստ էության ուղղված է վերջինիս կողմից ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելուն: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մերժմանը, արդեն իսկ փաստել է, որ ընդհանուր իրավասության դատարանի նման հետևությունն օրինական է և հիմնավոր: Նման պայմաններում անդրադառնալ ժառանգության իրավունքի վկայագրի պատկանելության հանգամանքը հիմնավորող իրավաբանական փաստի հաստատմանը, Վերաքննիչ դատարանը գտնում է անհիմն և առարկայազուրկ՝ նկատի ունենալով, որ բողոքաբերի վկայակոչած՝ 01.12.1993թ. Մարգարիտ Ասատրյանին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը փաստացի գոյություն չունի, քանի որ Նարգիզ Ասատրյանը ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն ընդունել է ժառանգական զանգվածի մեջ մտնող վիճելի գույքը: Ավելին, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի տարածքային ստորաբաժանման 19.10.2010թ. թիվ 2753055 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն այն սեփականության իրավունքով գրանցվել է վերջինիս անվամբ»:

Հիմք ընդունելով վերոնշյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգատու Մարգարիտ Գրիգորի Ասատրյանի ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով Մխիթար Ասատրյանի կողմից ընդունելու պայմաններում ծագում է իրավաբանական նշանակություն ունեցող՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու փաստը հաստատելու Մխիթար Ասատրյանի պահանջի իրավունքը:

Ինչ վերաբերում է 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ

2753055 վկայականն անվավեր ճանաչելու մասին հայցային պահանջը կարճելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտած այն դիքորոշումները, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը վարչական ակտ չէ, իսկ վարչական ակտ է սեփականության իրավունքի գրանցամատյանի գրառումը, գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ կետի հիմքով վարչական ակտ է հանդիսանում անշարժ գույքի գրանցամատյանի գրանցումը /գրառումը/, իսկ սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անշարժ գույքի գրանցման մատյանի գրանցումը, հետևաբար, Դատարանն արդարացիորեն եկել է այն եզրահանգման, որ որպես հետևանք 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականն ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջի մասով գործը ենթակա է կարճման (*տես՝ Սիսիանի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Շահեն Սարգսյանի, երրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Սիսիանի ստորաբաժանման, Կորյուն Օհանյանի՝ 2002թ. օգոստոսի 26-ին կնքված պայմանագիրը լուծելու, Շահեն Սարգսյանի և Կորյուն Օհանյանի միջև 11.09.2002թ. կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև Կորյուն Օհանյանին տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1920(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը*):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2012 թվականի որոշման՝ հայցը մերժելու մասով վճիռն անփոփոխ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/0474/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/0474/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գուրգեն Խալաթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անի Մարտիրոսյանի ընդդեմ Գուրգեն Խալաթյանի՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունը մորը հանձնելու և երեխայի բնակության վայրն ըստ մոր բնակության վայրի որոշելու պահանջների մասին և ըստ Գուրգեն Խալաթյանի հակընդդեմ հայցի՝ Անի Մարտիրոսյանին ծնողական իրավունքներից զրկելու, երեխայի խնամքն ու դաստիարակությունը հորը հանձնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անի Մարտիրոսյանը պահանջել է երեխայի՝ Աշոտ Խալաթյանի խնամքն ու դաստիարակությունը հանձնել իրեն և բնակության վայրը որոշել ըստ մոր բնակության վայրի:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Գուրգեն Խալաթյանը պահանջել է Անի Մարտիրոսյանին ծնողական իրավունքներից զրկել և երեխայի խնամքն ու դաստիարակությունը հանձնել իրեն:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 15.09.2011

թվականի վճռով հայցը մերժվել է, հակընդդեմ հայցը՝ Անի Մարտիրոսյանին ծնողական իրավունքներից զրկելու պահանջի մասով, մերժվել է, իսկ երեխայի խնամքն ու դաստիարակությունը հորը հանձնելու պահանջի մասով՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.12.2011 թվականի որոշմամբ Անի Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 15.09.2011 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գուրգեն Խալաթյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ, 53-րդ և 59-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես այն, որ Անի Մարտիրոսյանը չարամտորեն խուսափել է կատարել իր ծնողական պարտականությունները և 2010 թվականի սեպտեմբեր ամսից թողել է երեխային հոր մոտ և մեկնել Ռուսաստանի Դաշնություն: Բացի այդ, Երևանի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովը նպատակահարմար է գտել, որ անչափահաս Աշոտ Խալաթյանը բնակվի հոր՝ Գուրգեն Խալաթյանի հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.12.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.09.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գուրգեն Խալաթյանը և Անի Մարտիրոսյանը, առանց քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության, 2004 թվականից փաստացի բնակվել են միասին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Գուրգեն Խալաթյանին պատկանող Երևանի Շիրվանզադե փողոցի 6-րդ շենքի թիվ 5 բնակարանում: 14.09.2005 թվականին ծնվել է նրանց որդին՝ Աշոտ Խալաթյանը (հատոր 1-ին, գ.թ.5, 23, 109 և հատոր 2-րդ, գ.թ.19):

2) 2010 թվականի սեպտեմբեր ամսից Անի Մարտիրոսյանը հեռացել է Մոսկվա և երեխային թողել է Գուրգեն Խալաթյանի մոտ (հատոր 2-րդ, գ.թ.36):

3) 2010 թվականի սեպտեմբեր ամսից Աշոտ Խալաթյանը բնակվում է հոր՝ Գուրգեն Խալաթյանի հետ՝ Երևանի Շիրվանզադե փողոցի 6-րդ շենքի թիվ 5 բնակարանում:

4) 22.03.2011 թվականին Անի Մարտիրոսյանը (Մոսկվայից վերադառնալուց հետո) դիմել է Դատարան՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու և երե-

խայի բնակության վայրն ըստ մոր բնակության վայրի որոշելու պահանջներով (հատոր 1-ին, գ.թ.4)։

5) Երևանի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի 31.05.2011 թվականի հետազոտության ակտի համաձայն՝ Անի Մարտիրոսյանն առանց հաշվառման բնակվում է համատեղ սեփականության իրավունքով մորաքրոջը՝ Էմմա Օհանյանին պատկանող Երևանի Նորաշեն թաղամասի 18-րդ շենքի թիվ 3 բնակարանում, որտեղ բնակվում են Էմմա, Էդուարդ և Գուրգեն Օհանյանները, Լիանա Առաքելյանը, Անի Մարտիրոսյանը և անչափահաս Էդուարդ Օհանյանը։ Գուրգեն Խալաթյանը որպես համասեփականատեր մոր, կնոջ և երեխայի՝ Աշոտ Խալաթյանի հետ բնակվում է Երևանի Շիրվանզադե փողոցի 6-րդ շենքի թիվ 5 բնակարանում (հատոր 1-ին, գ.թ.24, 110)։

6) Երևանի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովը 01.06.2011 թվականի եզրակացությամբ (այսուհետ՝ 01.06.2011 թվականի եզրակացություն) նպատակահարմար է գտել Անի Մարտիրոսյանին չզրկել ծնողական իրավունքներից, իսկ անչափահաս Աշոտ Խալաթյանի բնակության վայրը որոշել Գուրգեն Խալաթյանի մոտ՝ Երևանի Շիրվանզադե փողոցի 6-րդ շենքի թիվ 5 բնակարանում (հատոր 1-ին, գ.թ.109)։

7) Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 16.06.2011 թվականի եզրակացության (այսուհետ՝ 16.06.2011 թվականի եզրակացություն) համաձայն՝ նպատակահարմար է անչափահաս Աշոտ Խալաթյանի բնակության վայրը «սահմանել» մոր՝ Անի Մարտիրոսյանի բնակության վայրով։ Հանձնաժողովը երեխայի հոր՝ Գուրգեն Խալաթյանի կյանքի հետազոտություն չի կատարել (հատոր 1-ին, գ.թ.106)։

8) Դատարան դիմելուց հետո 26.08.2011 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Անի Մարտիրոսյանը դարձել է Երևանի Նորաշեն թաղամասի 18-րդ շենքի թիվ 73 բնակարանի սեփականատերը (հատոր 2-րդ, գ.թ.57)։

9) Աշոտ Խալաթյանի փաստաթղթերը հանձնվել են թիվ 7 հիմնական դպրոց՝ 01.09.2011 թվականից հաճախելու համար։ 21.02.2012 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Աշոտ Խալաթյանը հաճախում է Երևանի Վ.Սայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոցի 1/ա դասարան։ Դասերին ներկայանում է պատրաստ, պարտաճանաչ։ Հայրը՝ Գուրգեն Խալաթյանը, չափազանց ուշադիր է Աշոտ Խալաթյանի ուսումնառության և դաստիարակության նկատմամբ (հատոր 1-ին, գ.թ.53)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ։

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը։

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը՝ *արդյոք խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացրած հետազոտության ակտը, որն անցկացվել է առանց* ***երե-***

<u>խայի</u> *և նրա դաստիարակությանը հավակնող* ***<u>ծնողներից մեկի</u>*** *կյանքի հետազոտության, կարող է դատարանի կողմից գնահատվել որպես վեճի լուծման համար պատշաճ ապացույց:*

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը: Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ նկատի ունենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկվում են համապատասխան բոլոր օրենսդրական ու վարչական միջոցները:

Վերոնշյալից հետևում է, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան **<u>երեխայի շահերի առավել ապահովմանը</u>**: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով պետությունը պարտավորվում է օրենսդրական, վարչական միջոցներ ձեռնարկել երեխայի շահերի ապահովման համար, սահմանել երեխայի խնամարկյալների, ծնողների իրավունքների և պարտականությունների ծավալը, հետևել պետական և պատկան մարմինների գործունեությանը տվյալ իրավահարաբերություններում միտված **<u>երեխայի բարեկեցությանն անհրաժեշտ պաշտպանությանը և հոգատարությանը:</u>**

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝ որոշել, թե ամուսնալուծությունից հետո **<u>ծնողներից ում հետ</u>** պետք է ապրեն երեխաները:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների **<u>շահերին հակառակ</u>**:

Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ **<u>ելնելով երեխաների շահերից</u>** և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ երեխաների **<u>ծնողներից մեկի հետ</u>** **<u>ապրելու</u>** հարցը դատարանը որոշում է՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահերով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը **<u>պարտավոր</u>** է անցկացնել **<u>երեխայի</u>** և **<u>այն անձի (անձանց)</u>** կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը, և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

Այսինքն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը օրենքով սահմանված կարգով պարտավոր է անցկացնել թե՛ երեխայի և թե՛ այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը: Վերոնշյալից հետևում է, որ եթե երեխայի դաստիրակությանը հավակնում են մի քանի անձ, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել նշված բոլոր անձանց կյանքի հետազոտություն և դատարան ներկայացնել հետազոտության ակտը ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում դրել է 16.06.2011 թվականի եզրակացությունը, որտեղ բացակայում է երեխայի և նրա հոր կյանքի հետազոտության մասին տեղեկություն: Ավելին, սույն գործով հաշվի չի առնվել Անի Մարտիրոսյանի նոր բնակության վայրի, այն է՝ 26.08.2011 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա որպես սեփականություն ձեռք բերված բնակարանում վերջինիս կյանքի հետազոտության մասին տեղեկության բացակայությունը:

Մինչդեռ, սույն գործում առկա են երկու տարբեր վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության մարմինների եզրակացություններ: 01.06.2011 թվականի եզրակացությամբ հանձնաժողովն անցկացրել է անչափահաս Աշոտ Խալաթյանի, Գուրգեն Խալաթյանի և Անի Մարտիրոսյանի կյանքի հետազոտություններ ու նպատակահարմար է գտել Անի Մարտիրոսյանին չզրկել ծնողական իրավունքներից, իսկ անչափահաս Աշոտ Խալաթյանի բնակության վայրը որոշել Գուրգեն Խալաթյանի մոտ: 16.06.2011 թվականի եզրակացությունից հետևում է, որ հանձնաժողովն իրականացրել է **միայն** Անի Մարտիրոսյանի կյանքի հետազոտություն, որի հիման վրա և որոշել է անչափահաս Աշոտ Խալաթյանի բնակության վայրը սահմանել Անի Մարտիրոսյանի բնակության վայրով, որը նրա մորաքրոջ բնակարանն է:

Փաստորեն 01.06.2011 թվականի եզրակացությամբ կյանքի հետազոտությունն անցկացվել է և՛ Գուրգեն Խալաթյանի, և՛ Անի Մարտիրոսյանի բնակության վայրերում: Գուրգեն Խալաթյանի կյանքի հետազոտումից պարզվել է, որ նա ունի մշտական բնակության վայր, որտեղ ծնվել է Աշոտ Խալաթյանը, որտեղից էլ հաճախում է դպրոց: 16.06.2011 թվականի եզրակացությամբ մոր բնակության վայրը դիտվել է մորաքրոջ տունը, որտեղ Անի Մարտիրոսյանը հաշվառված չէ, ինչը նշանակում է, որ սույն գործի քննության ժամանակ այն չէր կարող համարվել Անի Մարտիրոսյանի համար մշտական բնակության վայր:

Այսպիսով, 16.06.2011 թվականի եզրակացության հիմքում դրված է միայն Անի Մարտիրոսյանի կյանքի հետազոտությունը, մինչդեռ 01.06.2011 թվականի եզրակացության հիմքում դրված են և՛ Գուրգեն Խալաթյանի **մշտական** բնակության վայրի, և՛ Անի Մարտիրոսյանի **առանց հաշվառման** բնակության վայրի հետազոտությունները:

Տվյալ դեպքում Երևանի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմինը 16.06.2011 թվականի եզրակացության հիմքում պարտավոր էր դնել նաև Աշոտ Խալաթյանի և Գուրգեն Խալաթյանի կյանքի հետազոտության անցկացման մասին տեղեկություններ, ինչը, սակայն, չի կատարել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի 16.06.2011 թվականի եզրակացությունը, որն անցկացվել է առանց **երեխայի**՝ Աշոտ Խալաթյանի և նրա դաստիարակությանը հավակնող **ծնողներից մեկի**՝ Գուրգեն Խալաթյանի կյանքի հետազոտության, չի կարող գնահատվել որպես վեճի լուծման համար պատշաճ ապացույց:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործում առկա են երկու միմյանցից տարբեր եզրակացություններ, որոնք դատարանների

կողմից արժանացել են տարբեր հակասական իրավական գնահատականների, ինչպես նաև այն, որ Անի Մարտիրոսյանը ձեռք է բերել նոր բնակարան, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ելնելով Աշոտ Խալաթյանի լավագույն շահերից՝ սույն գործով առկա է նոր քննության անհրաժեշտություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0799/02/11
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0799/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վիոլետտա Համբարձումյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ավետիս Խաչատրյանի և Մարիամ Ավետիսյանի ընդդեմ Վիոլետտա Համբարձումյանի, երրորդ անձ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի հետ անարգել շփվելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ավետիս Խաչատրյանը և Մարիամ Ավետիսյանը պահանջել են թույլատրել շփվելու իրենց թոռնիկի՝ Ավետիս Հայկի Խաչատրյանի հետ՝ սահմանելով տեսակցության օրեր՝ շաբաթական 2 օր:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվալյան) (այսուհետ՝ Դատարան) 02.11.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Մարիամ Ավետիսյանին և Ավետիս Խաչատրյանին թույլատրվել է իրենց անչափահաս թոռանը՝ 13.07.2008 թվականին ծնված Ավետիս Հայկի Խաչատրյանին, տեսակցել յուրաքանչյուր երկուշաբթի՝ ժամը 17:00-ից մինչև ժամը 21:00-ն, մոր՝ Վիոլետտա Համբարձումյանի ներկայությամբ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.01.2012 թվականի որոշմամբ Ավետիս Խաչատրյանի և Մարիամ Ավետիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է Դատարանի 02.11.2011 թվականի վճիռը՝ Մարիամ Ավետիսյանին և Ավետիս Խաչատրյանին թույլատրվել է իրենց անչափահաս թոռանը՝ 13.07.2008 թվականին ծնված Ավետիս Հայկի Խաչատրյանին, տեսակցել յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 17:00-ից մինչև ժամը 21:00-ը, մոր՝ Վիոլետտա Համբարձումյանի բացակայությամբ, իսկ մնացած մասով Դատարանի 02.11.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վիոլետտա Համբարձումյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ավետիս Խաչատրյանը և Մարիամ Ավետիսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ և 36-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և 7-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ընտրանեկան օրենսգրքի 41-րդ, 51-րդ և 56-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.04.2010 թվականի թիվ ԵՄԴ/0233/02/10 քաղաքացիական գործով կայացված վճռով սահմանվել է Հայկ Խաչատրյանին իր անչափահաս երեխայի՝ Ավետիս Հայկի Խաչատրյանի հետ շփվելու համար տեսակցության օրեր, յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 16:00-ից մինչև 20:00-ը, և կիրակի օրը՝ ժամը 15:00-ից մինչև ժամը 19:00-ը: Այսինքն Ավետիս Հայկի Խաչատրյանն արդեն իսկ շաբաթական 2 օր անցկացնում է իր բնակավայրից դուրս, մոր՝ Վիոլետտա Համբարձումյանի բացակայությամբ և շաբաթական ևս 2 օր անչափահաս Ավետիս Խաչատրյանի հետ, իր բնակավայրից դուրս մոր բացակայությամբ տեսակցության կարգ սահմանելը լրջորեն կփոխի Ավետիս Հայկի Խաչատրյանի համար սովորական դարձած միկրոսոցիալական միջավայրը և կխախտի նրա օրակարգը, ինչը չի կարող դրական անդրադառնալ երեխայի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.01.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, իսկ Վիոլետտա Համբարձումյանի վճռաբեկ բողոքը իրավական հիմնավորումներից զուրկ է, և չեն խախտվել ոչ Վիոլետտա Համբարձումյանի, ոչ էլ Ավետիս Հայկի Խաչատրյանի շահերը:

Միաժամանակ վճռաբեկ բողոքի պատասխանով Ավետիս Խաչատրյանը և Մարիամ Ավետիսյանը հայտնել են, որ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.01.2012 թվականի թիվ ԵՄԴ/0970/02/11 վճռով Հայկ Խաչատրյանի կողմից Ավետիս Հայկի Խաչատրյանի հետ շփվելու համար սահմանվել է տեսակցության հետևյալ կարգ՝ յուրաքանչյուր շաբաթվա կիրակի օրը՝ ժամը 12:00-ից մինչև 20:30-ը, մինչդեռ տվյալ դատական ակտը Վիոլետտա Համբարձումյանի կողմից բողոքարկվել է վերաքննության կարգով, ինչի հետևանքով իրենք, այդ թվում՝ երեխայի հայրը՝ Հայկ Խաչատրյանը, զրկված են երեխայի հետ շփվելու հնարավորությունից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ԱՔ թիվ 006267 ծննդյան վկայականի համաձայն՝ Ավետիս Հայկի Խաչատրյանը ծնվել է 13.07.2008 թվականին, և հայրը Հայկ Խաչատրյանն է, իսկ մայրը՝ Վիոլետտա Համբարձումյանը (գ. թ. 6):

2. Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2009 թվականի վճռով լուծվել է Վիոլետտա Համբարձումյանի և Հայկ Խաչատրյանի ամուսնությունը, և որոշվել է 13.07.2008 թվականին ծնված Ավետիս Խաչատրյանին թողնել բնակվելու մոր՝ Վիոլետտա Համբարձումյանի հետ(գ. թ. 9-12):

3. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.04.2010 թվականի վճռով Հայկ Խաչատրյանի կողմից իր երեխայի՝ Ավետիս Խաչատրյանի հետ շփվելու համար սահմանվել են տեսակցության օրեր՝ յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը՝ ժամը 16:00-ից մինչև 20:00-ը, և կիրակի օրը՝ ժամը 15:00-ից մինչև 19:00-ը (գ. թ. 13-16): Վերոնշյալ վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

4. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի՝ Վիոլետտա Համբարձումյանի բնակարանային կենսապայմանների ուսումնասիրությունների ակտի համաձայն՝ Վիոլետտա Համբարձումյանն ունի անհրաժեշտ պայմաններ և պատշաճ կարգով զբաղվում է երեխայի՝ Ավետիս Խաչատրյանին խնամքով և դաստիարակությամբ (գ.թ 68):

5. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի՝ Մարիամ Ավետիսյանի և Ավետիս Խաչատրյանի բնակարանային կենսապայմանների ուսումնասիրությունների ակտի համաձայն՝ Մարիամ Ավետիսյանն ու Ավետիս Խաչատրյանն ունեն անհրաժեշտ պայմաններ զբաղվելու իրենց անչափահաս թոռան՝ Ավետիս Խաչատրյանի խնամքով ու դաստիարակությամբ (գ.թ 69):

6. ՀՀ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի 24.08.2011 թվականի հ.148-Ա որոշման համաձայն՝ թույլատրվել է Ավետիս Խաչատրյանին և Մարիամ Ավետիսյանին տեսակցել իրենց անչափահաս թոռնիկի՝ Ավետիս Խաչատրյանի հետ յուրաքանչյուր երկուշաբթի՝ ժամը 18:00-ից 20:00-ը (գ.թ 17):

7. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 17.09.2011 թվականի եզրակացությամբ վարչական շրջանի ղեկավարի 24.08.2011 թվականի թիվ 148-Ա որոշմամբ սահմանված տեսակցության կարգը թողնվել է անփոփոխ (գ.թ 67):

8. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 17.09.2011 թվականի եզրակացության համաձայն՝ Հայկ Խաչատրյանը ծնողների հետ բնակվում է Երևանի Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքի

6-րդ շենքի 31 բնակարանում (գ.թ 67)։

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար։

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին։ Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները։

Նշված կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք։

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու (որքան դա հնարավոր է), իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել նրա շահերին։ Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք։

Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին։ Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար։ Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին։ Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք։

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար։ Երեխաների

և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ *(տե՛ս ըստ հայցի Մարգարիտ Հովհաննիսյանի ընդդեմ Արթուր Թորոսյանի, երրորդ անձ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ինամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին և Արթուր Թորոսյանի հակընդդեմ հայցի՝ ծնողական իրավունքները սահմանափակելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 որոշումը)*: Ելնելով երեխայի լավագույն շահերից և նրան երաշխավորված իրավունքների գերակայությունից՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանել է երեխայի պապերի, տատերի՝ երեխայի հետ միայն շփվելու իրավունքը, և նշված անձանց երեխայի դաստիարակությամբ զբաղվելու իրավունք վերապահված չէ:

Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 17.09.2011 թվականի եզրակացությունը, գտել է, որ երեխայի տեսակցումը պետք է կատարվի շաբաթական մեկ անգամ, յուրաքանչյուր երկուշաբթի՝ ժամը 17-ից 21-ը, երեխայի մոր՝ Վիոլետտա Համբարձումյանի ներկայությամբ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ շաբաթական ընդամենը 1 օր տեսակցության կարգի սահմանումը հիմնավոր չէ և չի բխում մանկահասակ երեխայի շահերից, քանի որ տեսակցության օրերի միջև եղած 6-օրյա ոչ կարճատև ընդմիջումը կարող է որոշակի բարդություններ առաջացնել երեխայի և Ավետիս Խաչատրյանի, Մարիամ Ավետիսյանի շփման համար: Հաշվի առնելով երեխայի տարիքը՝ հնարավոր է, որ երեխան տեսակցության օրերի միջև եղած երկար ընդմիջման պատճառով որոշակի խնդիրներ ունենա տատի ու պապի հետ մերձենալու առումով, ինչն էլ յուրաքանչյուր տեսակցության ժամանակ երեխայի անցանկալի հուզումների առիթ կհանդիսանա, և գտել է, որ երեխայի տեսակցությունն իրենից առանձին ապրող տատի ու պապի հետ պետք է թույլատրվի շաբաթական 2 օր, ուստի, բացի երկուշաբթի օրվանից, պետք է սահմանվի նաև ևս մեկ տեսակցություն օր, այն է՝ յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը՝ ժամը 17:00-ից մինչև 21:00-ը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 17.09.2011 թվականի եզրակացության համաձայն՝ **Հայկ Խաչատրյանը բնակվում է Երևանի Մարգարյան փողոցի 1-ին նրբանցքի 6-րդ շենքի 31 բնակարանում՝ ծնողների՝ Ավետիս Խաչատրյանի և Մարիամ Ավետիսյանի հետ,** հետևաբար Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.04.2010 թվականի թիվ ԵՄԴ/0233/02/10 քաղաքացիական գործով կայացված վճռով Հայկ Խաչատրյանը հնարավորություն է ստանում երեխայի հետ տեսակցել, շփվել, մասնակցել նրա դաստիարակությանը և կրթությանը շաբաթական 2 օր՝ օրական 4 ժամ՝ երեխային տեղափոխելով իր բնակության վայր, որն էլ հնարավորություն է տալիս ապահովել նաև երեխայի շփումը տատի ու պապի հետ:

«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 3-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Դատարանները երե-

խայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան **երեխայի շահերի առավել ապահովմանը**: Կոնվենցիայով պետությունը պարտավորվում է օրենսդրական, վարչական միջոցներ ձեռնարկել երեխայի շահերի ապահովման համար, սահմանել երեխայի խնամարկյալների, ծնողների իրավունքների և պարտականությունների ծավալը, հետևել տվյալ իրավահարաբերություններում պետական մարմինների գործունեությանը՝ միտված **երեխայի բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությանը և հոգատարությանը:**

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխան ունի իր ծնողների, **պապերի և տատերի**, եղբայրների, քույրերի, ինչպես նաև այլ ազգականների հետ շփվելու իրավունք: Ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ծնողները կամ նրանցից մեկը չեն կատարում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, երեխայի մերձավոր ազգականները կարող են երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու հայցով դիմել դատարան: Դատարանը վեճը լուծում է՝ **ելնելով երեխայի շահերից** և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը երեխայի՝ ազգականների հետ շփվելու հարցերին վերաբերող վեճերը քննելիս առաջնայինը պետք է հիմք ընդունի երեխայի շահերը և գործը լուծի՝ ելնելով երեխայի շահերից: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, սահմանելով թոռան հետ տեսակցելու կարգ շաբաթական երկու օր՝ 4 ժամ տևողությամբ, հաշվի է առել տատի և պապի՝ երեխայի հետ շփվելու իրավունքը, սակայն պատշաճ կերպով չի գնահատել այն հարցը, թե ինչքանով է երեխայի հետ տեսակցության նման կարգի սահմանումը համապատասխանում երեխայի շահերին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխան արդեն իսկ շաբաթական երկու օր չորս ժամ տևողությամբ առանց մոր ներկայության տեսակցում է հոր հետ վերջինիս բնակության վայրում, որտեղ ի դեպ բնակվում են նաև Ավետիս Խաչատրյանը և Սարիամ Ավետիսյանը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ երեխայի՝ մոր ներկայությամբ շփվելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումը հիմնված է եղել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ներկայացուցչի՝ դատարանում արտահայտած կարծիքի վրա, ինչը հակասում է խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությանը, միևնույն ժամանակ սահմանել է տեսակցության մի կարգ, որը ևս հակասում է խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմանը՝ առանց պատշաճ հիմնավորման անտեսելով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝ թոռնիկի հետ տեսակցելու թույլտվության մասին թիվ 148-Ա որոշումը և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 17.09.2011 թվականի եզրակացությունը, որով վարչական շրջանի ղեկավարի 24.08.2011 թվականի որոշմամբ սահմանված տեսակցության կարգը թողնվել է անփոփոխ:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ, 51-րդ և 56-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վաճառբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վաճառբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2172/02/10
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Սահակյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2172/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մխիթար Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մխիթար Գրիգորյանի ընդդեմ «Դալկին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ առուվաճառքի պայմանագրի լուծման և գումարի բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մխիթար Գրիգորյանը պահանջել է լուծել Nokia C-5-00 բջջային հեռախոսի առուվաճառքի պայմանագիրը և Ընկերությունից հօգուտ իրեն բռնագանձել բջջային հեռախոսի համար վճարված գումարը՝ 79.500 ՀՀ դրամը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Կարախանյան) (այսուհետ՝ Դատարան) 01.07.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2011 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 01.07.2011 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մխիթար Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 508-րդ, 509-րդ հոդվածները, 518-րդ հոդվածի 3-րդ կետը, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պայմանագիր է համարել սույն քաղաքացիական գործում առկա երաշխիքային կտրոնը և դրանում սահմանված պայմանները: Մինչդեռ նշված երաշխիքային կտրոնն ընդամենն առուվաճառքի պայմանագրի կնքումից և ապրանքի վաճառքից հետո սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում երաշխիքային սպասարկման կարգի վերաբերյալ պայմանների կամ նախապայմանների ցուցակ է, այլ ոչ թե վաճառվող ապրանքի որակի վերաբերյալ նախապայման կամ առավել ևս՝ առուվաճառքի պայմանագիր:

Վերաքննիչ դատարանն անտեսել է գործում առկա այնպիսի ապացույցներ, ինչպիսիք են դրամարկղային կտրոնը, որը հանդիսանում է Մխիթար Գրիգորյանին հանձնված ապրանքի դիմաց վճարված լինելը, ինչպես նաև առուվաճառքի պայմանագրի պատշաճ կնքումը հավաստող փաստաթուղթ, փորձագետի եզրակացությունը, ըստ որի՝ բջջային հեռախոսի վրա որևէ արտաքին ներգործության մեխանիկական վնասվածքներ չեն հայտնաբերվել, իսկ էկրանի վրա միկրոճաքերի առկայության պայմաններում բջջային հեռախոսը պիտանի չէ նպատակային օգտագործման համար:

Բացի այդ, սույն գործով բջջային հեռախոսի՝ գործարանային անսարքության բացակայության փաստի ապացուցման բեռը կրում էր Ընկերությունը, որն այդպես էլ չապացուցեց նշված հանգամանքը: Այնուամենայնիվ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետը՝ապացուցման բեռից ազատելով վաճառողին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.09.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.07.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 23.09.2010 թվականին Մխիթար Գրիգորյանն Ընկերությանը պատկանող «Տելեկոմ» խանութ-սրահից կանխիկ վճարումով ձեռք է բերել Nokia C-5-00 մոդելի բջջային հեռախոս, որի համար գնորդին տրվել է երաշխիքային սպասարկման քարտ մեկ տարի ժամկետով, որի վրա շարադրված են երաշխիքային սպասարկման պայմանները **(հատոր 1-ին, գ.թ. 6)**: Հաջորդ օրը՝ 24.09.2010 թվականին, պարզելով, որ նշված հեռախոսի մոնիտորը չի աշխատում, նույն խանութի աշխատակցին խնդրել է ոչ պատշաճ ապրանքը փոխարինել նորով**:**

2. 27.09.2010 թվականին Մխիթար Գրիգորյանը գրավոր դիմում է ներկայացրել Ընկերության տնօրենին, որով պարզաբանել է, որ մեխանիկական կամ այլ վնաս հեռա-

խոսին պատճառված չէ, մոնիտորի անսարքությունն իր մեղքով չէ և խնդրել է միջոցներ ձեռնարկել իրեն վաճառված անպատշաճ որակի ապրանքը փոխարինելու նմանօրինակ մեկ այլ հեռախոսով **(հատոր 1-ին, գ.թ. 7):**

3. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 06.04.2011 թվականի եզրակացության համաձայն՝ Nokia C-5-00 մոդելի բջջային հեռախոսի վրա արտաքին ներգործության մեխանիկական վնասվածքներ չեն հայտնաբերվել: Էկրանի վրա առկա են միկրոճաքեր, որոնք էլ հանդիսանում են ապրանքի որակի խախտման պատճառը: Դրանց առաջացման մեխանիզմի և դրանից բխող որոշմամբ առաջադրված մյուս հարցերի պարզաբանումը հնարավոր չէ, քանի որ լրացուցիչ հետքեր չառաջացնելու նպատակով հեռախոսը չի ապամոնտաժվել և դրա դետալները չեն հետազոտվել, ինչի մասին տեղյակ են պահվել կողմերը **(հատոր 1-ին, գ.թ. 85-87):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 508-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մանրածախ առուվաճառքի պայմանագրով ապրանքների մանրածախ վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող վաճառողը պարտավորվում է գնորդին հանձնել ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված ապրանք: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքով չկարգավորված՝ գնորդ-քաղաքացու մասնակցությամբ մանրածախ առուվաճառքի պայմանագրով հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքները և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 509-րդ հոդվածի համաձայն՝ մանրածախ առուվաճառքի պայմանագիրը համարվում է պատշաճ ձևով կնքված՝ վաճառողի կողմից գնորդին՝ դրամարկղային, ապրանքային չեկ կամ ապրանքի վճարված լինելը հավաստող այլ փաստաթուղթ հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մանրածախ առուվաճառքի պայմանագրով՝ ներառյալ ստանդարտ ձևերի պայմաններով, որոնց միանում է գնորդը (հոդված 444):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 518-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնորդը, ում վաճառվել է անպատշաճ որակի ապրանք, եթե դրա թերությունների մասին վաճառողը նախապայման չի սահմանել, իր ընտրությամբ իրավունք ունի պահանջել՝

1) անորակ ապրանքը փոխարինելու պատշաճ որակի ապրանքով.

2) համաչափորեն իջեցնելու ապրանքի գինը.

3) անհապաղ և անհատույց վերացնելու ապրանքի թերությունները.

4) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու ծախսերը:

Գնորդն իրավունք ունի պահանջել՝ փոխարինելու տեխնիկապես բարդ կամ թանկարժեք ապրանքը միայն դրա որակին առաջադրվող պահանջների էական խախտման դեպքում (491 հոդվածի 2-րդ կետ):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն ապրանքի թերությունները հայտնաբերելու դեպքում, որի հատկությունները թույլ չեն տալիս վերացնել դրանք (պարենային ապրանք, կենցաղային քիմիայի ապրանք և այլն), գնորդը, իր ընտրությամբ, իրավունք ունի պահանջել փոխարինելու նման ապրանքը պատշաճ որակի ապրանքով կամ համաչափ իջեցնելու գինը:

Նույն հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պահանջները **ներկայացնելու փոխարեն գնորդն իրավունք ունի**

հրաժարվել մանրածախ առուվաճառքի պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը: Ընդ որում, գնորդն իր ստացած անպատշաճ որակի ապրանքը պետք է վերադարձնի վաճառողի պահանջով և նրա հաշվին:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողը, որին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, և եթե վաճառողը դրա թերությունների մասին նախապայման չի սահմանել, իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել՝

ա) ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ սպառողի կողմից դրանց վերացման ծախսերի հատուցում.

բ) գնման գնի համաչափ իջեցում.

գ) նմանօրինակ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում.

դ) այլ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում՝ գնման գնի համապատասխան վերահաշվարկով.

ե) առուվաճառքի պայմանագրի լուծում:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը, առանց որևէ բացառությունների, իրավունք է ընձեռում գնորդին ոչ պատշաճ որակի ապրանքի դեպքում իր իսկ ընտրությամբ վաճառողին ներկայացնել նույն հոդվածում նախատեսված պահանջներից որևէ մեկը, այդ թվում անմիջականորեն պահանջելու լուծել առուվաճառքի պայմանագիրը, հրաժարվել մանրածախ առուվաճառքի պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է բավարարել սպառողի պահանջները, **եթե չապացուցի**, որ ապրանքի թերություններն առաջացել են այն սպառողին հանձնելուց հետո նրա կողմից ապրանքի օգտագործման, պահման կամ փոխադրման սահմանված կանոնները խախտելու, երրորդ անձի գործողությունների կամ անհաղթահարելի ուժի հետևանքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (տե՛ս Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի հայցն ընդդեմ Սեդա Սարգսյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և Սեդա Սարգսյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 23.09.2010 թվականին Մխիթար Գրիգորյանը «Տելեկոմ» խանութ-սրահից կանխիկ վճարումով ձեռք է բերել Nokia C-5-00 մոդելի բջ-

ջային հեռախոս, որի համար գնորդին տրվել է երաշխիքային սպասարկման քարտ մեկ տարի ժամկետով, որի վրա շարադրված են երաշխիքային սպասարկման պայմանները: Հաջորդ օրը՝ 24.09.2010 թվականին, պարզելով, որ նշված հեռախոսի մոնիտորը չի աշխատում, նույն խանութի աշխատակցին խնդրել է ոչ պատշաճ ապրանքը փոխարինել նորով: Ընկերությունը մերժել է Մխիթար Գրիգորյանի խնդրանքը՝ պատճառաբանելով, որ այդ վնասվածքը ի հայտ է եկել ապրանքը գնելուց հետո:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 06.04.2011 թվականի եզրակացության համաձայն՝ Nokia C-5-00 մոդելի բջջային հեռախոսի վրա արտաքին ներգործության մեխանիկական վնասվածքներ չեն հայտնաբերվել: Էկրանի վրա առկա են միկրոճաքեր, որոնք էլ հանդիսանում են ապրանքի որակի խախտման պատճառը: *Դրանց առաջացման մեխանիզմի և դրանից բխող որոշմամբ առաջադրված մյուս հարցերի պարզաբանումը հնարավոր չէ իրականացնել*, քանի որ լրացուցիչ հետքեր չառաջացնելու նպատակով հեռախոսը չի ապամոնտաժվել և դրա դետալները չեն հետազոտվել, ինչ մասին տեղյակ են պահվել կողմերը:

Դատարանը հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ Մխիթար Գրիգորյանին հանձնված ապրանքը պիտանի չէ այն նպատակներին, որոնց համար այդ տեսակի ապրանքը սովորաբար օգտագործվում է, քանի որ բջջային հեռախոսի էկրանը վնասված է, ինչը չի հանդիսանում որևէ արտաքին ներգործության հետևանք՝ համաձայն «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 06.04.2011 թվականի եզրակացության:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վերոնշյալ վճիռը և հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ գնորդն իրավունք կունենար օգտվելու «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված պահանջները վաճառողին ներկայացնելու իրավունքից, եթե վերջինս ապրանքի թերությունների վերաբերյալ որևէ նախապայման սահմանած չլիներ: Այդ նախապայմանը Վերաքննիչ դատարանը համարել է երաշխիքային սպասարկման քարտը, որի պայմաններին գնորդը ծանոթացել է: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցը մերժելու հիմք է նաև այն հանգամանքը, որ փորձաքննությամբ չի հաստատվել, որ առկա վնասվածքները գործարանային խոտանի արդյունք են:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Դատարանի դիրքորոշումն այն հարցում, որ Ընկերությունն ի սկզբանե Մխիթար Գրիգորյանին վաճառել է ապրանք, որը պիտանի չէ նպատակային օգտագործման համար: Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում նշված «սպառողը, որին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, **և եթե վաճառողը դրա թերությունների մասին նախապայման չի սահմանել,** իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել…» արտահայտությունը վերաբերում է մինչ ապրանքի օգտագործումը եղած առկա կամ հնարավոր թերությունների մասին գնորդին տեղեկացնելուն կամ որևէ պայման սահմանելուն, այլ ոչ թե երաշխիքային սպասարկման պայմաններին, որոնք կիրառվում են բացառապես մինչ ապրանքն օգտագործելը գոյություն չունեցող և այն օգտագործելու արդյունքում ի հայտ եկած թերությունները վերացնելիս:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 485-րդ հոդվածի համաձայն՝ վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել առուվաճառքի պայմանագրին համապատասխանող որակի ապրանք: Սակայն սույն գործով Մխիթար Գրիգորյանին է վաճառվել ապրանք, որը չի համապատասխանում ապրանքի որակին ներկայացվող պահանջներին: Դա հաստատվում է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 06.04.2011 թվականի եզրակացությամբ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ փորձաքննությամբ չի հաստատվել առկա վնասվածքների՝ գործարանային խոտանի արդյունք լինելը, քանի որ մեխանիկական վնասվածքների պատճառները փորձագետի կողմից հնարավոր չի եղել պարզել, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դա բավարար չէ հայցը մերժելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով ապրանքի վնասվածքի գործարանային չլինելու փաստի ապացուցման բեռն ընկած էր Ընկերության վրա: Այսինքն՝ Ընկերությունը պարտավոր էր ապացուցել, որ բջջային հեռախոսի էկրանի վրա առաջացած միկրոճաքերը գործարանային խոտանի արդյունք չեն, ինչը ողջ դատաքննության ընթացքում չի ապացուցվել: Ավելին, փորձաքննությամբ հաստատվել է, որ այդ միկրոճաքերը չեն հանդիսանում արտաքին ներգործության հետևանք, իսկ գործարանային են թե ոչ՝ այդ հարցին փորձագետը չի պատասխանել, քանի որ լրացուցիչ հետքեր չառաջացնելու նպատակով հեռախոսը չի ապամոնտաժվել և դրա դետալները չեն հետազոտվել, ինչի մասին տեղյակ են պահվել կողմերը: Այսինքն՝ նշված փաստը մնացել է վիճելի, որի բացասական հետևանքները, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի, պետք է կրի այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը՝ Ընկերությունը: Ավելին, վնասվածքների՝ գործարանային չլինելու մեջ համոզված լինելու դեպքում, բնականաբար, Ընկերությունը կպնդեր թեկուզև լրացուցիչ հետքեր առաջանալու պայմաններում էլ շարունակել փորձաքննությունը, քանի որ նշված փաստն իր օգտին հաստատվելուց հետո վերջինս միևնույն է ազատվելու էր հնարավոր վնասները կրելուց:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա): 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.07.2011 թվականի վճռին:

2. «Դալկին» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար հետաձգված պետական տուրքի գումար:

«Դալկին» ՍՊԸ-ից հօգուտ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի բռնագանձել 32.340 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության կատարման ծախս:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0006/04/10
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0006/04/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Աղաբաբյանի, Գագիկ Տեր-Հարությունյանի, Ռուզան Սեդրակյանի, Կարինե Տոնոյանի, Գագիկ Նազարյանի, Ռոբերտ Բաղդասարյանի, Սամվել Ստեփանյանի, Սամվել Խալաթյանի, Մարտին Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.02.2012 թվականի որոշման դեմ՝ Արայիկ Բաղդասարյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին քաղաքացիական գործով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 12.10.2011 թվականի որոշման վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.05.2010 թվականի վճռով Արայիկ Բաղդասարյանը ճանաչվել է սնանկ:

Արայիկ Բաղդասարյանի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանը 23.07.2010 թվականին դատարան է ներկայացրել իր կողմից կազմված պարտատերերի պահանջների նախնական ցուցակը, այն կողմերին ուղարկելու վերաբերյալ գրությունը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 20.07.2010 թվականի թիվ 135 համարում տպագրված հայտարարությունը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության

դատարանը (նախագահող դատավոր՝ Լ.Կատվալյան) (այսուհետ՝ Դատարան) 12.10.2011 թվականի որոշմամբ հաստատել է Արայիկ Բաղդասարյանի պահանջների վերջնական ցուցակը՝ ըստ հետևյալ առաջնահերթության.

1. Լևոն Ղազարյան 49.000.000 ՀՀ դրամ՝ որպես ապահովված արտահերթ,

2. Դատական ծախսեր (պետական տուրք) 100.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «դ» հերթ,

3. Հասմիկ Աղաբաբյան 43.520.107 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

4. Գագիկ Տեր-Հարությունյան 95.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

5. Լևոն Ղազարյան 60.500.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

6. Ռոբերտ Բաղդասարյան 128.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

7. Ռուզան Սեդրակյան 8.000.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

8. Կարինե Տոնոյան 6.364.800 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

9. Գագիկ Նազարյան 30.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

10. Մարտին Բաղդասարյան 12.000.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

11. Սամվել Ստեփանյան 28.000.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

12. Սամվել Խալաթյան 28.000.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,

13. Արամ Մանուկյան 47.564.383 ՀՀ դրամ՝ որպես ստորադաս չապահովված «ը» հերթ,

14. Տիգրան Կարապետյան 31.976.712 ՀՀ դրամ՝ որպես ստորադաս չապահովված «ը» հերթ,

15. Հայկ Մարտիրոսյան 36.121.918 ՀՀ դրամ՝ որպես ստորադաս չապահովված «ը» հերթ,

16. Յուրի Ապրեսյան 52.500.000 ՀՀ դրամ՝ որպես ստորադաս չապահովված «ը» հերթ,

17. Անի Խաչատրյան 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝որպես ստորադաս չապահովված «ը» հերթ,

18. Հրաչյա Հունանյան 30.000.000 ՀՀ դրամ՝ որպես ստորադաս չապահովված «ը» հերթ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.02.2012 թվականի որոշմամբ Լևոն Ղազարյանի, Անի Խաչատրյանի, Հրաչյա Հունանյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Յուրի Ապրեսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ վերջինս 52.500.000 ՀՀ դրամի չափով ընդգրկվել է Արայիկ Բաղդասարյանի՝ սնակնության գործով պահանջների վերջնական ցուցակի չապահովված «է» հերթում:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հասմիկ Աղաբաբյանը, Գագիկ Տեր-Հարությունյանը, Ռուզան Սեդրակյանը, Կարինե Տոնոյանը, Գագիկ Նազարյանը, Ռոբերտ Բաղդասարյանը, Սամվել Ստեփանյանը, Սամվել Խալաթյանը և Մարտին Բաղդասարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենագրքի 7-րդ հոդվածը, 47-րդ հոդվածի 2-րդ կետը, 51-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ

հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Յուրի Ապրեսյանն իր առաջին՝ 14.500.000 ՀՀ դրամի ուշացված պահանջը դատարան է ներկայացրել 26.07.2010 թվականին և խնդրել է այդ պահանջով բաց թողնված ժամկետը հարգելի համարել 08.07.2010-23.07.2010 թվականներն ընկած ժամանակահատվածում հիվանդ լինելու պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել գործում առկա 08.07.2010-23.07.2010 թվականներն ընկած ժամանակահատվածում Յուրի Ապրեսյանի հիվանդության և բուժման մեջ գտնվելու վերաբերյալ տեղեկանքը: Այսպես՝ Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի որոշումը և հարգելի համարել պահանջ ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը՝ հիմք ընդունելով հիշյալ տեղեկանքը: Մինչդեռ նշված տեղեկանքը տրվել է ռուսերեն լեզվով և նշում չի պարունակում, թե ում ներկայացնելու համար է տրվում, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի ուժով չէր կարող՝ որպես ապացույց, գնահատվել դատարանի կողմից:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ կետը, 219-րդ հոդվածի 3-րդ կետը, 228-րդ հոդվածի 1-ին կետը, «Մասնակության մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 82-րդ, 85-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

14.500.000 ՀՀ դրամի ուշացված պահանջը ներկայացնելիս Յուրի Ապրեսյանը ոչինչ չի նշել այն մասին, որ ունի այլ պարտավորագիր, որը կներկայացնի լրացուցիչ: Մինչդեռ առաջին պահանջը ներկայացնելուց 3 օր անց Յուրի Ապրեսյանը ներկայացրել է 38.000.000 ՀՀ դրամի նոր ուշացված պահանջ՝ առանց բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդության: Հետևաբար, եթե Վերաքննիչ դատարանը 14.500.000 ՀՀ դրամի դեպքում արժանահավատ էր համարում Յուրի Ապրեսյանի պատճառաբանությունը, որ մինչև 23.07.2010 թվականը նա հիվանդ է եղել, ապա մյուս 38.000.000 ՀՀ դրամի ուշացված պահանջն ընդգրկելով «է» հերթում՝ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչպիսի հարգելի պատճառներ են դրա համար հիմք հանդիսացել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 15.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 12.10.2011 թվականի որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.05.2010 թվականի վճռով Արայիկ Բաղդասարյանը ճանաչվել է սնանկ **(հատոր 1-ին, գ.թ. 29-31):**

2. Համաձայն՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 15.06.2010 թվականի համարում տպագրված հայտարարության՝ սույն գործով պահանջները ներկայացնելու ժամկետ է համարվել 2010 թվականի հունիսի 15-ից մինչև 2010 թվականի հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածը **(հատոր 1-ին, գ.թ. 75):**

3. Պահանջատեր Յուրի Ապրեսյանը 26.07.2010 թվականին սնանկ ճանաչված Արայիկ Բաղդասարյանի նկատմամբ ներկայացրել է 14.500.000 ՀՀ դրամի պահանջ՝

միաժամանակ խնդրելով հարգելի համարել բաց թողնված ժամկետը՝ ներկայացնելով 08.07.2010-23.07.2010 թվականներն ընկած ժամանակահատվածում հիվանդության և բուժման մեջ գտնվելու մասին տեղեկանք: Տեղեկանքը տրվել է ռուսերեն լեզվով ««Ультрамед» лечебно-диагностический центр»-ի կողմից **(հատոր 1-ին, գ.թ. 181, 183):**

4. 28.07.2010 թվականին Յուրի Ապրեսյանը Արայիկ Բաղդասարյանի նկատմամբ կրկին ներկայացրել է պահանջ՝ 38.000.000 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 191):** Սույն գործում առկա չէ որևէ միջնորդություն նշված պահանջը ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերեն:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Յուրի Ապրեսյանի ներկայացրած՝ 08.07.2010-23.07.2010 թվականներն ընկած ժամանակահատվածում վատառողջ լինելու վերաբերյալ տեղեկանքը, վերջինիս 52.500.000 ՀՀ դրամի չափով ընդգրկել է Արայիկ Բաղդասարյանի՝ սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի չապահովված «է» հերթում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով Դատարանի վճիռը բեկանելու հիմք հանդիսացած հիշյալ տեղեկանքը, գտնում է, որ այն չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված թույլատրելիության պահանջին, քանի որ տրված է ռուսերեն լեզվով: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը շրջանցել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը հայերեն տարվելու պահանջը, ընդունել, գնահատման է արժանացրել և ապա Դատարանի վճռի բեկանման հիմքում է դրել մի փաստաթուղթ, որը կազմված չէ հայերենով՝ այդպիսով խախտելով դատավարությունը հայերեն վարելու վերոգրյալ սկզբունքը:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է,

որ 08.07.2010-23.07.2010 թվականներն ընկած ժամանակահատվածում Յուրի Ապրեսյանին ««Ультрамед» лечебно-диагностический центр»-ի կողմից տրված տեղեկանքը չի համարվում թույլատրելի ապացույց, հետևաբար, այն չէր կարող հիմք հանդիսանալ Դատարանի որոշումը Յուրի Ապրեսյանի մասով բեկանելու համար:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկային, պարտադիր այլ վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների, բավարարվում են «է» հերթում, իսկ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները, համաձայն նույն օրենքի 83-րդ հոդվածի, բավարարվում են «ը» հերթում:

Նույն օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: **Պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը և պահանջների հիմնավորվածությունը որոշելու համար դատավորը հրավիրում է դատական նիստ**, որի ժամանակի և վայրի մասին կառավարչին, պարտապանին, պարտատերերին ծանուցում է պատշաճ կարգով: Ծանուցվող անձանց թիվը 10-ից ավելի լինելու դեպքում պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակված հայտարարությունը: **Պատճառների հարգելիության և պահանջների հիմնավորվածության քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:**

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում դատարան չներկայացված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ և կարող են բավարարվել օրենքի 82-րդ հոդվածի «ը» ենթակետում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառները համարում է հարգելի: Միայն այս դեպքում սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: Ընդ որում օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է գործը քննող դատարանի՝ պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու համար դատական նիստ հրավիրելու և պատճառների հարգելիության քննարկման արդյունքում որոշում կայացնելու պարտականությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը 28.07.2010 թվականին Յուրի Ապրեսյանի կողմից ներկայացված 38.000.000 ՀՀ դրամի չափով պահանջը ևս ընդգրկել է Արայիկ Բաղդասարյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի չապահովված «է» հերթում:

Մինչդեռ, սույն գործում առկա փաստերի ուսումնասիրության արդյունքում պարզ

է դառնում, որ գործում առկա չէ 28.07.2010 թվականին Յուրի Ապրեսյանի կողմից Արայիկ Բաղդասարյանի նկատմամբ 38.000.000 ՀՀ դրամի չափով ներկայացված պահանջի համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ որևէ միջնորդություն: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն այդ մասով բողոքը բավարարելիս չի պատճառաբանել, թե ինչ փաստեր են հիմք հանդիսացել բաց թողնված ժամկետը այդ պահանջի մասով ևս հարգելի համարելու և այն պահանջների վերջնական ցուցակի չապահովված «է» հերթ ընդգրկելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս ըստ հայցի Ռազմիկ Մարությանի ընդդեմ Սյուզիան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին, Սյուզիան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54 (ՎԴ) որոշումը):*

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բացակայում են փաստական հանգամանքները հիմնավորող այն ապացույցները, որոնց հիման վրա կարող էր հարգելի ճանաչվել Յուրի Ապրեսյանի՝ 38.000.000 ՀՀ դրամի չափով պահանջը ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ

հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.02.2012 թվականի որոշման՝ Յուրի Ապրեսյանի 52.500.000 ՀՀ դրամի չափով պահանջը Արայիկ Բաղդասարյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի չապահովված «է» հերթում ընդգրկելու մասը, և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 12.10.2011 թվականի որոշմանը:

2. Յուրի Ապրեսյանից հօգուտ Հասմիկ Աղաբաբյանի, Գագիկ Տեր-Հարությունյանի, Ռուզան Սեդրակյանի, Կարինե Տոնոյանի, Գագիկ Նազարյանի, Ռոբերտ Բաղդասարյանի, Սամվել Ստեփանյանի, Սամվել Խալաթյանի և Մարտին Բաղդասարյանի բոնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2028/02/10
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2028/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.06.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ «Օթյակ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), ՀՀ Կառավարության, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ Նախարարության՝ վճարված 33.352.300 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի և 10.500.000 ՀՀ դրամ շահութահարկի, ինչպես նաև այդ գումարների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով տոկոսների՝ սկսած 25.05.2008 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է բռնագանձել Կազմակերպությունից, ՀՀ Կառավարությունից և Քաղաքապետարանից իր կողմից վճարված 33.352.300 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկը և 10.500.000 ՀՀ դրամ շահութահարկը, ինչպես

նաև այդ գումարների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով տոկոսներ՝ սկսած 25.05.2008 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 17.03.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ Կառավարության, հօգուտ Ընկերության բռնագանձել 43.852.300 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի և վերադարձման ենթակա անհիմն հարստացման գումար, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տոկոսներ՝ հաշվարկը կատարելով սկսած 05.05.2008 թվականից մինչև նշված գումարն Ընկերությանը փաստացի վերադարձնելու օրը: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.06.2011 թվականի որոշմամբ ՀՀ Կառավարության՝ ի դեմս Նախարարության, և Երևան համայնքի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 17.03.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Նախարարությունը և Քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքների պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Նախարարության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սեփական նախաձեռնությամբ առանձին քննարկման առարկա է դարձրել 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջին հակասելու հանգամանքը և այդ տրամաբանությամբ եզրակացրել է, որ քաղաքացիաիրավական պայմանագրով չեն կարող կարգավորվել այնպիսի հարաբերություններ, որոնց իրավական կարգավորումը սահմանված է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի փաստարկներից դուրս այլ փաստարկի քննության փաստով դուրս է եկել վերաքննության սահմաններից, ինչպես նաև սահմանազանցել է իր լիազորությունները, և դա այն պարագայում, երբ Դատարանում գործի քննության ընթացքում նշված պայմանագրի անվավերության պահանջը կողմերից որևէ մեկը չի բարձրացրել:

Վերաքննիչ դատարանը, արծարծելով 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի անվավերության հանգամանքը, հղում է կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետին: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նշված նորմն ուղղակիորեն վերաբերում է առաջացման պահից պետահիշխանական ենթակայություն ենթադրող, բնույթով վարչական, ֆինանսական, հարկային, էությամբ ամբողջովին հանրային այն հարաբերություններին, որոնք ծագել են որպես այդպիսիք և որոնց նկատմամբ, բնականաբար, քաղաքացիական

իրավունքի նորմերը ենթակա չեն կիրառման, իսկ սույն գործով կողմերի միջև ի սկզբանե վերոգրյալ պայմանագրի ուժով առաջացել են հավասարության ու կամքի ինքնավարության հատկանիշներով բնութագրվող քաղաքացիական հարաբերություններ, որոնք ենթակա են կարգավորման բացառապես քաղաքացիական իրավունքի նորմերով: Բացի այդ, 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագիրը՝ դրանում առկա գնին վերաբերող դրույթին հավելվող՝ Վերաքննիչ դատարանի մատնանշած «այդ թվում՝ ավելացված արժեքի հարկը» պայմանի մասով ոչ թե հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետին, այլ միանգամայն համապատասխանում է պայմանագրի գինը գործարքում ամրագրելու վերաբերյալ նույն օրենսգրքով սահմանվող պահանջին:

Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել հայցագնի բաղկացուցիչ մասը կազմող շահութահարկի գումարի վերաբերյալ Նախարարության ներկայացրած փաստարկներին և որևէ կերպ չպատճառաբանելով դրանց հիմնավոր կամ անհիմն լինելը՝ Դատարանի վճիռն այդ մասով ևս թողել է անփոփոխ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր որոշման մեջ անդրադառնալ Դատարանի վճռի դեմ Նախարարության ներկայացրած վերաքննիչ բողոքի բոլոր փաստարկներին և պատճառաբանել, թե դրանցից որոնք են իր համար ընդունելի և որոնք՝ ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.06.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Քաղաքապետի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 44-րդ հոդվածի 5-րդ կետը, 51-րդ հոդվածի 1-ին կետը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ օրենքին չհամապատասխանող գործարքն առոչինչ է միայն օրենքով ուղղակի սահմանված դեպքում: Մինչդեռ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, եզրակացնելով, որ 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի 1.1-րդ կետը հակասում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, և այն մի մասով դիտելով որպես առոչինչ՝ չի մատնանշել այն իրավական հիմքը, մասնավորապես՝ նշված օրենքի այն հոդվածը, որը սահմանում է, որ ավելացված արժեքի հարկի ներառումը պայմանագրի գնի մեջ առոչինչ պայման է: Նման պարագայում 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի վերոգրյալ պայմանն օրենքի ուժով չի կարող գնահատվել որպես առոչինչ, այլ այն առնվազն կարող է լինել վիճահարույց, սակայն Ընկերությունն իր կողմից հարուցված հայցի շրջանակներում այդ պայմանը չի վիճարկել:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետը, եկել է այն հետևության, որ քաղաքացիաիրավական պայմանագրով չեն կարող կարգավորվել այնպիսի հարաբերություններ, որոնց իրավական կարգա-

վորումը սահմանված է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ: Մինչդեռ, 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի մասնակիցները միմյանց նկատմամբ վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային հարաբերությունների մեջ չեն գտնվել, քանի որ վերջիններիս միջև ծագած իրավահարաբերությունները հավասարության և կամքի ինքնավարության հատկանիշներով բնութագրվող պայմանագրային հարաբերություններ են:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կազմակերպության ներկայացուցիչը գործի նախնական քննության ընթացքում միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի ներկայացուցչին որպես վկա հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ, որի ցուցմունքով կարող էր ապացուցվել այն փաստը, որ Ընկերությանը պատկանող գույքի գնահատման արժեքը ներառել է նաև ավելացված արժեքի հարկը: Մինչդեռ, Դատարանը, բավարարելով այդ միջնորդությունը և որոշում կայացնելով նշված ընկերության ներկայացուցչին որպես վկա հրավիրելու և հարցաքննելու մասին, չի հարցաքննել վկային՝ վերջինիս Դատարան չներկայանալու պատճառով, իսկ գործում առկա չէ որևէ ապացույց նրա՝ հարգելի պատճառով Դատարան չներկայանալու վերաբերյալ: Միաժամանակ Դատարանը չի ձեռնարկել միջոցներ անհարգելի պատճառով Դատարան չներկայացած վկային բերման ենթարկելու և հարցաքննելու ուղղությամբ: Արդյունքում Դատարանը վճիռը կայացրել է գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցի բացակայության պայմաններում:

Վերոգրյալ հիմնավորմամբ անհիմն է նաև Վերաքննիչ դատարանի հետևությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվեգրման վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.06.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.2. Վճռաբեկ բողոքների պատասխանի փաստարկները

Նախարարության վճռաբեկ բողոքում ներկայացվել է փաստարկ այն մասին, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքում նշված փաստարկների սահմաններից և քննության առարկա է դարձրել 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի հակասությունը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետին: Մինչդեռ, նշված փաստարկն անհիմն է և չի բխում քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթներից:

Նախարարության կողմից սխալ է մեկնաբանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետի էությունը, քանի որ այնքանով, որ վերոգրյալ պայմանագրով սահմանվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կանոններին հակառակ պայման, այն չի կարող առաջ բերել իրավական հետևանքներ և այդ հարաբերության նկատմամբ ուղղակիորեն կիրառելի են հարկային օրենսդրության պահանջները: Հետևաբար, իմաստազուրկ է վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ տվյալ դեպքում պայմանագրի անվավերության պահանջ չի ներկայացվել:

Ինչ վերաբերում է Նախարարության այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել շահութահարկին, ապա նշված փաստարկը ևս հիմնազուրկ է, քանի որ Նախարարության վերաքննիչ բողոքից պարզ է դառնում, որ վերջինս շահութահարկի վերաբերյալ Դատարանի վճռում տրված իրավական գնահատականների դեմ որևէ առարկություն չի ներկայացրել, այսինքն՝ Դատարանի կողմից այդ մասով ներկա-

յացված իրավական վերլուծությունը վերաքննիչ բողոքում չի վիճարկվել, և նման պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակից:

Սույն վճռաբեկ բողոքի պատասխանը վերաբերում է նաև Քաղաքապետի բերած վճռաբեկ բողոքի փաստարկներին:

3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Քաղաքապետի, որի անունից լիազորագրի հիման վրա հանդես է եկել Կազմակերպությունը՝ ի դեմս տնօրենի («Կողմ-1»), և Ընկերությունը՝ ի դեմս տնօրենի («Կողմ-2»), ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կառավարության 01.11.2007 թվականի թիվ 1607-Ն որոշմամբ, 05.05.2008 թվականին կնքել են «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագիրը, որի 1.1-րդ կետի համաձայն՝ «Կողմ-2»-ը «Կողմ-1»-ին փոխանցում է սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Նալբանդյան փողոցի 130-րդ շենքի դիմաց (Գետառ գետի վրա) գտնվող 98,8քմ, 71,3քմ ընդհանուր մակերեսներով շինությունները, 54,8քմ ընդհանուր մակերեսով շվաքարանը և 446քմ մակերեսով վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքը (այսուհետ՝ Օբյեկտ) …:

Օբյեկտի շուկայական արժեքը կազմում է 174.012.000 ՀՀ դրամ, որի հիմքում ընկած է «Արթին Էսթրփրայս» ՍՊԸ-ի կողմից 04.05.2008 թվականին կազմված գնահատման հաշվետվությունը: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված և շուկայական արժեքին ավելացվող 15 տոկոս գումարը կազմում է 26.101.800 ՀՀ դրամ, ընդամենը՝ 200.113.800 ՀՀ դրամ (փոխհատուցման գումար), այդ թվում՝ ավելացված արժեքի հարկը:

Նույն պայմանագրի 2.2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի 1.1-րդ կետում նշված «Կողմ-2»-ին հասանելիք գումարից Օբյեկտի շուկայական արժեքը՝ 174.012.000 ՀՀ դրամը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, վճարվում է պայմանագիրը կնքելուց և հաշիվ-ապրանքագրերը «Կողմ-1»-ին ներկայացնելուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում:

Նույն պայմանագրի 2.3-րդ կետի համաձայն՝ «Կողմ-2»-ին հասանելիք գումարից «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված և շուկայական արժեքին ավելացվող 15 տոկոս գումարը՝ 26.101.800 ՀՀ դրամը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, վճարվում է կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից Օբյեկտի ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց և հաշիվ-ապրանքագիրը «Կողմ-1»-ին ներկայացնելուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում **(հատոր 1-ին, գ.թ. 7-9):**

2) Ընկերության կողմից 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագիրը չի վիճարկվել:

3) «Արթին Էսթրփրայս» ՍՊԸ-ի 04.05.2008 թվականի գնահատման հաշվետվության եզրափակիչ մասի համաձայն՝ գնահատվող անշարժ գույքի շուկայական արժեքը 04.05.2008 թվականի դրությամբ կազմում է՝ շենք-շինությունների արժեքը՝ 158.915.237 ՀՀ դրամ, հողի արժեքը՝ 15.096.618 ՀՀ դրամ, ընդամենը՝ 174.011.855 ՀՀ դրամ, կլորացված՝ 174.012.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 54-67):**

4) 06.05.2008 թվականի թիվ 1 հաշվի համաձայն՝ Կազմակերպությունն Ընկերությանը վճարել է 174.012.000 ՀՀ դրամ՝ ներառյալ 29.002.000 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկը, իսկ 15.05.2008 թվականի թիվ 2 հաշվի համաձայն՝ Կազմակերպությունն Ընկերությանը վճարել է 26.101.800 ՀՀ դրամ՝ ներառյալ 4.350.300 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկը **(հատոր 1-ին, գ.թ. 74-75):**

5) 20.05.2008 թվականի վճարման թիվ 4 և թիվ 5 հանձնարարագրերի համաձայն՝ Ընկերությունը վճարել է համապատասխանաբար 29.002.000 ՀՀ դրամ և 4.350.300 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկ, իսկ 27.06.2008 թվականի վճարման թիվ 013 հանձնարարականի և 12.12.2008 թվականի վճարման թիվ 14 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունը վճարել է համապատասխանաբար 10.000.000 ՀՀ դրամ և 500.000 ՀՀ դրամ շահութահարկ **(հատոր 1-ին, գ.թ. 13-16):**

6) Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ՎԴ/2575/05/09 վարչական գործով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 11.12.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ Ընկերության՝ 22.454.300 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, 27.05.2010 թվականի որոշմամբ գտել է, որ 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ստացված 200.113.800 ՀՀ դրամը շահութահարկով հարկման ենթակա չէ **(«Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի» (2009-2010)-Եր.: Ամարաս, 2011, էջ՝ 536-540):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հիմնավոր են մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը …:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: **Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը**:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օտարվող սեփականության շուկայական արժեքը բաց և մրցակցային շուկայում սեփականություն հանդիսացող գույքի վաճառողի և գնորդի գիտակցաբար, արդարացի առևտրի պայմանների պահպանմամբ և օրինական գործողությունների արդյունքում ձևավորվող, գույքի վաճառքի առավել հավանական գինն է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **սեփականության օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականատիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները (հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ) հատուցում է ձեռքբերողը:**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6 հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները (այսուհետ՝ անձինք), բացառությամբ նույն հոդվածով և նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքերի:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը՝ հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հետևյալ կարգով. ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում (բացառությամբ նույն հոդվածով սահմանված դեպքերի) ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը կատարվում է ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի հիման վրա, որն իր բնույթով քաղաքացիաիրավական է, քանի որ օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը որոշվում են բացառապես նրանց համաձայնությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպության և Ընկերության միջև 05.05.2008 թվականին կնքված «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի 1.1-րդ կետով Ընկերությանը պատկանող Երևանի Նալբանդյան փողոցի 130-րդ շենքի դիմաց (Գետառ գետի վրա) գտնվող 98,8քմ, 71,3քմ ընդհանուր մակերեսներով շինությունների, 54,8քմ ընդհանուր մակերեսով շվաքարանի և 446քմ մակերեսով վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքի շուկայական արժեքը կողմերի միջև որոշվել է 174.012.000 ՀՀ դրամ, որին «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շուկայական արժեքին ավելացվող 15 տոկոս գումարը կազմել է 26.101.800 ՀՀ դրամ, ընդամենը՝ 200.113.800 ՀՀ դրամ (փոխհատուցման գումար), այդ թվում՝ ավելացված արժեքի հարկը:

Վերոգրյալից հետևում է, որ 200.113.800 ՀՀ դրամ գումարն օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվող համարժեք փոխհատուցման գումարն է: Հետևաբար, անհիմն է Նախարարության պատճառաբանությունն այն մասին, որ կողմերի միջև 05.05.2008 թվականին կնքված «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի 1.1-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ 200.113.800 ՀՀ դրամ գումարի մեջ ներառվել է նաև հարկման ենթակա ավելացված արժեքի հարկը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ՎԴ/2575/05/09 վարչական գործով Տեսչության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 11.12.2009 թվականի վճռի

դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ Ընկերության՝ 22.454.300 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, 27.05.2010 թվականի որոշմամբ գտել է, որ 05.05.2008 թվականի «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի հիման վրա Ընկերության կողմից ստացված 200.113.800 ՀՀ դրամը շահութահարկով հարկման ենթակա չէ: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի փաստերի համաձայն՝ սեփականատիրոջ գույքը ոչ թե վաճառվում է նրա ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում՝ անձնական շահերից ելնելով, այլ իրացվում է պետության և հասարակության կարիքների դիմաց՝ վճարվելով **փոխհատուցում, որը ոչ թե սեփականատիրոջ եկամուտն է,** այլ գույքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքի դադարեցման դիմաց տրվող **համարժեք փոխարինում**:

Ավելին, նշված գործով Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով հստակ սահմանված է, որ սեփականության օտարման հետ կապված առաջացող ֆինանսական պարտավորությունները, մասնավորապես՝ հարկերը, հատուցում է ձեռքբերողը, հետևաբար Ընկերությունը փոխհատուցման գումարից շահութահարկ չպետք է վճարի: Բացի այդ, վերոգրյալ օրենքով սահմանված սկզբունքներից է նաև, որ գերակա հանրային շահից ելնելով՝ սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը:

Ինչ վերաբերում է «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի առոչինչ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հիմնավորումներին, ապա այդ մասով վճռաբեկ բողոքը հիմնավոր է, քանի որ «Անշարժ գույքը պետության և հասարակության կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրի առոչինչության հետ կապված պահանջ չի ներկայացվել, և հետևաբար, նշված պայմանագրի իրավաչափության հետ կապված իրավական հարցերը դուրս են սույն գործի քննության շրջանակներից:

Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխով (33-35-րդ հոդվածներ) սահմանվում է հարկային պարտավորություններից ավել բյուջե վճարված գումարները (գերավճարները) հարկ վճարողին վերադարձնելու կարգը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական օրենսդրությունը մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ, իսկ հարկային պարտավորություններից ավել բյուջե վճարված գումարները (գերավճարները) հարկ վճարողին վերադարձնելու հետ կապված հարաբերություններն իրենց բնույթով հարկային (վարչական) հարաբերություններ են, որոնք կարգավորվում են հարկային օրենսդրությամբ:

Տվյալ դեպքում Ընկերության պահանջը վերաբերում է ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով ավել վճարված գումարների բռնագանձմանը, որպիսի հարաբերությունները կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և դուրս են ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի կարգավորման շրջանակներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Նշված նորմերից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են միայն քաղաքացիական գործերը, իսկ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան այլ բնույթի, այդ թվում նաև՝ հարկային գործի ներկայացման դեպքում վերջինս պարտավոր է կարճել այդպիսի գործի վարույթը:

Հետևաբար, Ընկերության ներկայացրած 33.352.300 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկը և 10.500.000 ՀՀ դրամ շահութահարկը, ինչպես նաև այդ գումարների նկատմամբ բանկային տոկոսները բռնագանձելու պահանջն ընդդատյա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, և այդ գործի վարույթը ենթակա է կարճման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը, ինչից հետևում է, որ սույն գործով պետական տուրքի հարցն օրենքի ուժով համարվում է լուծված:

Վճռաբեկ դատարանը Կազմակերպության ներկայացուցչին որպես վկա հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ Քաղաքապետի վճռաբեկ բողոքի փաստարկին չի անդրադառնում, քանի որ սույն որոշման պատճառաբանություններից ելնելով՝ տվյալ փաստարկը սույն գործի լուծման համար չունի որևէ էական նշանակություն:

Նշված պատճառաբանություններով հերքվում են նաև վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի և 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և սույն գործի վարույթը կարճելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.06.2011 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0703/02/10
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Մատինյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0703/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռուզաննա Գևորգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռուզաննա Գևորգյանի ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ վնասի փոխհատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռուզաննա Գևորգյանը պահանջել է Բանկից բռնագանձել 3.475.934 ՀՀ դրամ, որպես տուժող Վ. Սաֆարյանի խնամքի տակ գտնվող երկու երեխաների ու կնոջ համար վնասի փոխհատուցում 22 ամիսների հաշվարկով մինչև երեխաների 18 տարին լրանալը, հաշվարկը կատարելով մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, ինչպես նաև բռնագանձել ամենամսյա գումար 78.665 ՀՀ դրամ և դրանից հետո օրենքով սահմանված կարգով համապատասխան գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.10.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2011 թվականի որոշմամբ Ռուզաննա Գևորգյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է Երևա-

նի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.10.2010 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 23.06.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2011 թվականի որոշմամբ Ռուզաննա Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.06.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուզաննա Գևորգյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ կետը և 1062-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 15.11.1992 թվականի թիվ 579 որոշմամբ հաստատված՝ «Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների /անկախ սեփականության ձևից/ աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին» կանոնների 4-րդ, 7-րդ և 19-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 15.11.1992 թվականի թիվ 579 որոշմամբ հաստատված՝ «Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների /անկախ սեփականության ձևից/ աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին» կանոնների 1-ին կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները և 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում վնասը պատճառել է ոչ թե Բանկը, այլ վերջինիս աշխատակիցը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող՝ Գոռ Աբաջյանի, Մուշեղ Մուրադյանի և Բանկի գործադիր տնօրեն Գագիկ Վահանյանի հայտարարությունները որպես փաստ չի հետազոտել և դրանց օբյեկտիվ գնահատական չի տվել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանը չի կատարել ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտում՝ անտեսելով, որ գործով հիմնավորված է, որ Սերոբ Մինասյանը և Վահան Սաֆարյանը, հանդիսանալով Բանկի աշխատակիցներ, դժբախտ պատահարի օրն առավոտյան հրավիրված են եղել Բանկի գլխամասային գրասենյակ հաշվետվություն և վարկային գործ ներկայացնելու համար, ինչն ապացուցվում է Գագիկ Վահանյանի, Գոռ Աբաջյանի և Մուշեղ Մուրադյանի հայտարարություններով, և Բանկում գործերը վերջացնելուց հետո մեկնել են աշխատավայր ու ճանապարհին էլ Սերոբ Մինասյանի մեղքով տեղի է ունեցել ավտովթարը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2011 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ իրավացիորեն ամրագրել է, որ Ռուզաննա Գևորգյանը որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց Դատարանին չի ներկայացրել Վահան Սաֆարյանի կողմից աշխատանքային պարտականություններ, կազմակերպության օգտին անհրաժեշտ գործողություններ կատարելու հանգամանքը հիմնավորելու համար, իսկ Գագիկ Վահանյանի, Գոռ Աբաջյանի և Մուշեղ Մուրադյանի հայտարարությունները հայցի բավարարման հիմք հանդիսանալ չեն կարող: Ավելին, որևէ տեղ գրավոր ամրագրում չստացած կարգադրությունները չեն կարող պարտավորության առաջացման հիմք հանդիսանալ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ռուզաննա Սերժի Գևորգյանը և Վահան Երվանդի Սաֆարյանը ամուսնացել են 25.06.2001 թվականին, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երկու երեխաներ՝ 31.07.2001 թվականին ծնված Մանե և 13.11.2003 թվականին ծնված Երվանդ Վահանի Սաֆարյաններին (հատոր 1-ին, գ. թ. 7-9):

2) Ռուզաննա Գևորգյանի ամուսին Վահան Սաֆարյանը աշխատանքի անցնելու նպատակով 09.04.2007 թվականին Բանկի հետ կնքել է թիվ 115 աշխատանքային պայմանագիրը, որով Վ. Սաֆարյանը պարտավորվել է կատարել նույն բանկի «Գյումրի» մասնաճյուղի վարկավորման բաժնում գլխավոր մասնագետի պարտականությունները (հատոր 1-ին, գ. թ. 41-47):

3) Բանկի հետ 19.02.2007 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի, այնուհետև աշխատանքային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 01.08.2007 թվականին կնքված թիվ 97.4 համաձայնագրի համաձայն՝ Սերոբ Մինասյանը ստանձնել է Բանկի «Գյումրի» մասնաճյուղի կառավարչի պարտականությունները (հատոր 1-ին, գ. թ. 32-40):

4) Վահան Սաֆարյանը 06.08.2007 թվականին Բանկի «Գյումրի» մասնաճյուղի ղեկավար Սերոբ Մինասյանի հետ գտնվել է Բանկի գլխամասային գրասենյակում և իրականացրել իր աշխատանքային գործունեության հետ կապված գործառույթներ:

5) Վահան Սաֆարյանը 06.08.2007 թվականին Բանկի «Գյումրի» մասնաճյուղի ղեկավար Սերոբ Մինասյանի հետ «Գյումրի» մասնաճյուղ աշխատանքի մեկնելիս վերջինիս վարած ավտոմեքենայի վթարի հետևանքով մահացել է:

6) Գոռ Աբաջյանի հայտարարության համաձայն՝ 06.08.2007 թվականին, երբ վերջինս աշխատելիս է եղել Բանկի գլխամասային գրասենյակում որպես ամփոփ հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ, առավոտյան հանդիպել է «Գյումրու» մասնաճյուղի կառավարիչ Սերոբ Մինասյանին և նույն մասնաճյուղի ավագ մասնագետ Վահան Սաֆարյանին, որոնց հետ զրույցից իմացել է, որ նրանք մինչև Գյումրի մեկնելը եկել են գլխամաս գործադիր տնօրենի տեղակալ Գագիկ Վահանյանի կարգադրությամբ՝ մասնաճյուղի ընթացիկ հարցերը լուծելու, վարկային գործեր հաստատելու համար (հատոր 2-րդ, գ. թ. 74):

7) Մուշեղ Մուրադյանի հայտարարության համաձայն՝ 03.08.2007 թվականին, ուրբաթ օրը՝ երեկոյան, աշխատանքի վերջում մասնաճյուղի կառավարիչ Սերոբ Մինասյանն իրեն հրավիրել է իր մոտ և հայտնել է, որ օգոստոսի 06-ին՝ երկուշաբթի օրը, ին-

քը և մասնաճյուղի գլխավոր մասնագետ Վահան Սաֆարյանը հրավիրված են գլխամասային բանկի գործադիր տնօրենի տեղակալ Գ.Վահանյանի մոտ մասնաճյուղին վերաբերվող հարցերի քննարկման համար, այդ թվում տանելու էին մի քանի վարկային գործեր, ինչպես նաև քաղաքացի Ալբերտ Դերձակյանի վարկային գործը (հատոր 2-րդ, գ. թ. 73):

8) Գագիկ Վահանյանի հայտարարության համաձայն՝ «… ես վստահաբար կարող եմ հավաստիացնել, որ 2007 թվականի օգոստոսի 06-ին «ԲՏԱ Ինվեստ» բանկի «Գյումրու» մասնաճյուղի կառավարիչ Սերոբ Մինասյանը և առաջատար մասնագետ Վահան Սաֆարյանը եղել են «ԲՏԱ Ինվեստ» բանկի գլխամասային գրասենյակում, ուր և քննարկել ենք մասնաճյուղի ընթացիկ գործունեության հետ կապված տարաբնույթ հարցեր: Ի հավելումն կարող եմ նշել, որ նույն օրը բանկի իրավասու մարմինների հետ քննարկվել են «Գյումրու» մասնաճյուղի կողմից ներկայացված և հաստատման ենթակա վարկային գործեր …» (հատոր 2-րդ, գ. թ. 75):

9) ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետի՝ Ռուզաննա Գևորգյանին հասցեագրված 09.06.2009 թվականի թիվ Ե-477 գրության համաձայն՝ Բանկում իրականացված ստուգմամբ պարզվել է, որ Վահան Սաֆարյանի մահվան փաստի կապակցությամբ սահմանված կարգով չի իրականացվել ծառայողական քննություն և սահմանված կարգի խախտման արդյունքում չի հաշվարկվել և վճարվել միջին վաստակի չափով փոխհատուցում (հատոր 1-ին , գ. թ. 11):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը

հաստատելու կամ մերժելու համար *(տես Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչելու, գույքն ուրիշի սեփականության մեջ անցնելուց հետո պահանջելու և վերանորոգման աշխատանքների դիմաց կատարված ծախսերի փոխհատուցման պահանջների մասին թիվ ԵՄԴ/0232/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը իր որոշումներում, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված ապացույցների թույլատրելիությանը, գտել է, որ դատարանը պետք է վերոնշյալ հոդվածը կիրառելիս ցույց տա, թե որ հոդվածով է արգելված ապացույցի նման տեսակով նման փաստի հաստատումը (*տես՝ Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային սորտաբաժանման, երրորդ անձ Մարտին Պետրոսյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, Մարտին Պետրոսյանն ընդդեմ Վարդիթեր Հովհաննիսյանի՝ հողամասն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու պահանջի մասին, թիվ ԱՎԴ/0235/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ դատարանն ապացույցների վերաբերելիության կանոնները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ վերաբերելի են այն ապացույցները, որոնք անհրաժեշտ են քննվող գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար: Այդ մասին է վկայում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածը, որի համաձայն՝ նախագահողը ղեկավարում է դատական նիստը՝ մերժելով այն ամենը, ինչն առնչություն չունի քննվող գործի հետ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանն ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը լուծելիս պետք է պահպանի վերոնշյալ կանոնները, որից հետո որոշի փաստի հաստատված լինելու կամ չլինելու հարցը:

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Գագիկ Վահանյանի, Գոռ Աբաջյանի և Սուշեղ Սուրադյանի հայտարարությունները սույն գործով վերաբերելի ապացույց հանդիսանալ չեն կարող, քանի որ Վահան Սաֆարյանն աշխատանքային ժամին, աշխատավայրը լքելով Բանկի գլխամասային գրասենյակ գնալու, վարկային գործեր տանելու և զեկուցելու համար չի ունեցել համապատասխան հրաման:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ռուզաննա Գևորգյանի վերաքննիչ բողոքը, որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Հայցվորը որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց դատարան չի ներկայացրել Վահան Սաֆարյանի կողմից աշխատանքային պարտականություններ, կազմակերպության օգտին անհրաժեշտ գործողություններ կատարելու հանգամանքը հիմնավորելու համար: Իսկ Բանկի նախկին աշխատակիցներ Գոռ Աբաջյանի և Սուշեղ Սուրադյանի, Բանկի գործադիր տնօրեն Գագիկ Վահանյանի հայտարարությունները հայցի բավարարման հիմք հանդիսանալ չեն կարող»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող

փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին քաղաքացիական գործով, ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի թիվ 3-1843/ՎԴ որոշումը):

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Բանկի նախկին աշխատակիցներ Գոռ Աբաջյանի և Սուշեղ Սուրադյանի, Բանկի գործադիր տնօրեն Գագիկ Վահանյանի հայտարարությունները հայցի բավարարման հիմք հանդիսանալ չեն կարող, որևէ կերպ չի պատճառաբանել այդ եզրահանգումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վերը նշված պատճառաբանությամբ օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, անտեսել է, որ Գոռ Աբաջյանի և Սուշեղ Սուրադյանի, Բանկի գործադիր տնօրեն Գագիկ Վահանյանի հայտարարությունները վերաբերելի և թույլատրելի ապացույցներ են, քանի որ Վահան Սաֆարյանը՝ համաձայն Բանկի ղեկավարության բանավոր կարգադրության իր անմիջական ղեկավար Սերոբ Մինասյանի հետ պարտավոր էր ամեն երկուշաբթի փաստաթղթային հաշվետվությունները ներկայացնել Բանկ: Տվյալ պարագայում, Սերոբ Մինասյանը և Վահան Սաֆարյանը, հանդիսանալով Բանկի աշխատակիցներ, դժբախտ պատահարի օրն առավոտյան հրավիրված են եղել Բանկի գլխամասային գրասենյակ հաշվետվություն և վարկային գործ ներկայացնելու համար, ինչի մասին իրենց հայտարարություններում նշել են Գագիկ Վահանյանը, Գոռ Աբաջյանը և Սուշեղ Սուրադյանը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքը՝ կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 51-րդ հոդվածների խախտման հետ համարում է հիմնավոր, քանի որ առկա ապացույցները ոչ վերաբերելի դիտելն իրավաչափ չէ և դրանք պետք է հետազոտվեին ընդհանուր կարգով, իսկ գործուղ-

ման հրամանի բացակայությունը չի կարող բացառել այն հանգամանքը, որ Բանկի աշխատակից Վահան Սաֆարյանը Բանկի գլխամասային գրասենյակում է եղել կապված աշխատանքային պարտականությունների կատարման հետ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԾԴ/0220/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԾԴ/0220/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Տանյա Առաքելյանի և Ռոմ Ավագյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.10.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հերիքնազ Գևորգյանի ընդդեմ Ռոմ Ավագյանի, Տանյա Առաքելյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հերիքնազ Գևորգյանը պահանջել է բռնագանձել Տանյա Առաքելյանից և Ռոմ Ավագյանից 6.525 ԱՄՆ դոլար:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Բարսեղյան) (այսուհետ՝ Դատարան) 27.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.10.2011 թվականի որոշմամբ Դատարանի 27.06.2011 թվականի վճռի դեմ Տանյա Առաքելյանի և Ռոմ Ավագյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 27.06.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Տանյա Առաքելյանը և Ռոմ Ավագյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հերիքնազ Գևորգյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 53-րդ հոդվածները, ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.06.2010 թվականի թիվ ԵՇԴ/0052/01/10 որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է տուժողի և ամբաստանյալի հաշտվելու հիմքով: Այսինքն՝ տվյալ դեպքում առկա չէ հանցագործություն՝ վաշխառություն, կատարելու մեջ Տանյա Առաքելյանի մեղքը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որից հետևում է, որ Տանյա Առաքելյանն անմեղ է: Իսկ ինչ վերաբերում է մեղադրական եզրակացությանը, ապա այն չի կարող հանցագործություն կատարելու մեջ անձի մեղքը հաստատող ապացույց համարվել, քանի որ դրանով արձանագրված փաստերի հիմքով Տանյա Առաքելյանին առաջադրված մեղադրանքը պետք է հաստատվեր դատավճռով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Տանյա Առաքելյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, հիմնվելով մեղադրական եզրակացության վրա, ապացուցված է համարել, որ Տանյա Առաքելյանը, Հերիքնազ Գևորգյանից ամեն ամիս ստանալով հավելյալ հինգ տոկոս գումար, հանցագործությամբ պատճառել է վնաս:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ եթե անձը կատարել է հանցագործություն և հանցագործությամբ պատճառել է վնաս, ապա հանցագործություն կատարած անձն է պատասխանատու: Մինչդեռ, տվյալ դեպքում հաստատված համարելով, որ Տանյա Առաքելյանն է հանցագործություն կատարել և հանցագործությամբ պատճառել վնաս, պատասխանատվության է ենթարկել նաև Տանյա Առաքելյանի նախկին ամուսնուն՝ Ռոմ Ավագյանին: Այսինքն՝ եթե նույնիսկ պայմանականորեն ընդունենք, որ Տանյա Առաքելյանը կատարել է հանցագործություն, ապա այդ արարքի համար այլ անձինք որևէ պատասխանատվություն չեն կարող կրել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ եթե տեսականորեն ընդունենք, որ Հերիքնազ Գևորգյանը Տանյա Առաքելյանին 2005 թվականից մինչև 2008 թվականի փետրվար ամիսը յուրաքանչյուր ամիս տվել է հինգ տոկոս հավելյալ գումար, ապա Հերիքնազ Գևորգյանն իր իրավունքի խախտման մասին իմացել է հենց այդ գումարները տալու պահին: Մինչդեռ, իրավունքի պաշտպանության համար դատարան է դիմել միայն 2011 թվականի մարտ ամսին: Հետևաբար, Հերիքնազ Գևորգյանը բաց է թողել դատարան դիմելու հայցային վաղեմության ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.10.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Տանյա Առաքելյանն ու Ռոմ Ավագյանը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով փոխառությամբ տվել են 7.000 ԱՄՆ դոլար, որի դիմաց 2005 թվականից մինչև 2009 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում ստացել են 10.525 ԱՄՆ դոլար, որից 4.000 ԱՄՆ դոլարը՝ հիմնական պարտքի գումար, իսկ 6.525 ԱՄՆ դոլարը՝ տոկոսներ: Այսինքն՝ Տանյա Առաքելյանն ու Ռոմ Ավագյանն առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ձեռք են բերել 3.525 ԱՄՆ դոլար, որը ենթակա է վերադարձման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2010 թվականի՝ 23.06.2010 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով Ռոմ Ավագյանի և Տանյա Առաքելյանի հայցն ընդդեմ Հերիքնազ Գևորգյանի՝ 11.000 ԱՄՆ դոլար փոխառության գումարը բռնագանձելու պահանջի վերաբերյալ բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է բռնագանձել Հերիքնազ Գևորգյանից 3.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Նշված վճռով հաստատված են համարվել հետևյալ փաստերը.

ա/ Ռոմ Ավագյանը և Տանյա Առաքելյանն ամուսիններ են: Նրանք, չնայած ՔԿԱԳ գրանցմամբ ամուսնալուծված են, սակայն ընդհանուր տնտեսություն են վարում.

բ/ Իրականում գումարը փոխառությամբ տրվել է ամսական 5 տոկոս հավելավճարով վերադարձնելու պայմանով, սակայն այդ մասին գրավոր կարգով չի հիշատակվել.

գ/ Հերիքնազ Գևորգյանը 2005-2007 թվականների ընթացքում Տանյա Առաքելյանից մաս-մաս վերցրած և վերջինիս ամուսնուն՝ Ռոմ Ավագյանին տրված գումարը վերադարձնելու պարտավորագրում հիշատակված գումարից վերադարձրել է 4.000 ԱՄՆ դոլար և փաստացի պարտքը կազմում է 3.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 12-17):**

2. 24.05.2010 թվականի մեղադրական եզրակացության համաձայն՝ Տանյա Առաքելյանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն եզրակացության համաձայն՝ առաջադրված մեղադրանքում Տանյա Առաքելյանն իրեն մեղավոր չի ճանաչել **(հատոր 1-ին, գ.թ. 5-9)**:

3. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.06.2010 թվականի թիվ ԵՇԴ/0052/01/10 որոշմամբ Տանյա Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը Տանյա Առաքելյանի և Հերիքնազ Գևորգյանի հաշտվելու հիմքով կարճվել է **(հատոր 1-ին, գ.թ. 10-11):**

4. Երևանի Շահումյան շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի 02.03.1985 թվականի թիվ I-Շ319503 ամուսնալուծության վկայականի համաձայն՝ Ռոմ Ավագյանի և Տանյա Առաքելյանի ամուսնալուծությունը գրանցվել է 02.03.1985 թվականին **(հատոր 2-րդ, գ.թ. 9):**

5. Փոխառության գումարը 5 տոկոս տոկոսադրույքով տրված լինելու, ինչպես նաև Հերիքնազ Գևորգյանի կողմից Տանյա Առաքելյանին հավելյալ գումարներ վճարված լինելու փաստերը հաստատող գրավոր ապացույցներ գործում առկա չեն:

6. Առկա չէ վաշխառության կատարման մեջ Տանյա Առաքելյանի մեղավորությունն ապացուցող դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ**:**

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստական հանգամանքների վերաբերյալ պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ իրավական հարցը՝ արդյոք սույն գործով վկայակոչված և նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով ունեն նախադատելի նշանակություն քննվող գործի համար:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վերը նշված իրավական խնդրին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոհիշյալ իրավական հարցադրմանը պետք է պատասխանել նախադատելիության կամ պրեյուդիցիայի (լատիներեն praejudicialis-ից) դատավարական ինստիտուտի, դատական ակտերի պրեյուդիցիալ կապի և նման կապի օբյեկտիվ սահմանների վերլուծության լույսի ներքո:

Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված փաստերին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները, փաստերը հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը, փաստերը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա: Հետևաբար, նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Նշված նորմը պարունակում է վերը բարձրացված իրավական խնդրի լուծման տեսանկյունից կարևոր երկու դատավարական կանոն, այն է՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով

ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը).

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդված):

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի վերը հիշատակված երկու դատավարական կանոնների պահպանումը:

Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորություն է տվել ապացուցման առարկայի՝ վեճի լուծման համար **նշանակություն ունեցող** հանգամանքների ճիշտ որոշման հարցին, քանզի դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական (առանց դատավարական նախադրյալի՝ հայցվորի կամահայտնության) ընդլայնումը բերում է այդ գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման *(տես՝ «Սաթեխ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Աշոտ և Հենրիկ Այվազյանների՝ հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը լուծելու, Ընկերությանը պատկանող և 17.02.2003 թվականին կնքված հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված օդակաձև գբոսայգու 5-րդ հատվածում 0,04 հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը վերադարձնել պարտավորեցնելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի թիվ 3-93(ՎԴ) որոշումը):*

Առաջնորդվելով հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններին՝ վերը նշված կանոնով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սույն գործով ապացուցման առարկան են կազմել հետևյալ փաստերը. Հերիքնազ Գևորգյանի կողմից Ռոմ Ավագյանից և Տանյա Առաքելյանից 7.000 ԱՄՆ դոլար գումարն ամսական 5 տոկոս տոկոսադրույքով վերցնելու փաստը, Հերիքնազ Գևորգյանի կողմից վերջիններիս 10.525 ԱՄՆ դոլար վերադարձնելու փաստը:

Սույն գործում առկա Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2010 թվականի՝ 23.06.2010 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ Ռոմ Ավագյանի և Տանյա Առաքելյանի հայցի առարկան Հերիքնազ Գևորգյանից 11.000 ԱՄՆ դոլար փոխառության գումարը բռնագանձելու պահանջն էր, որը բավարարվել է մասնակիորեն, այն է՝ վճռվել է բռնագանձել Հերիքնազ Գևորգյանից 3.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Նշված վճռով արձանագրվել է, որ «Ռոմ Ավագյանը և Տանյա Առաքելյանն ամուսիններ են, չնայած ՔԿԱԳ գրանցմամբ ամուսնալուծված և, որ գումարը փոխառությամբ տրվել է ամսական 5 տոկոս հավելավճարով վերադարձնելու պայմանով, սակայն այդ մասին գրավոր կարգով չի հիշատակվել»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2010 թվականի՝ 23.06.2010 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված այն հանգամանքները, որ Ռոմ Ավագյանը և Տանյա Առաքելյանն ամուսիններ են, և գումարը փոխառությամբ տրվել է ամսական 5 տոկոս հավելավճարով վերադարձնելու պայմանով, սույն գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով չունեն նախադատելի նշա-

նակություն, քանի որ դրանք չեն մտնում **այդ գործով** ապացուցման առարկայի սահմանների մեջ, իսկ դատարանի բուն եզրահանգումն այդ փաստերի առկայության վերաբերյալ հաստատված չէ ապացուցման ֆորմալ պահանջների պահպանմամբ, այն է՝ դատարանը դրանք հաստատված է համարել առանց վերաբերելի որևէ ապացույցի առկայության: Նման եզրահանգման հանգելու համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքները, որ հենց դատարանի կողմից վերը նշված վճռում արձանագրվել է, որ փոխառության գումարն ամսական 5 տոկոս հավելավճարով վերադարձնելու վերաբերյալ գրավոր կարգով չի հիշատակվել, իսկ Երևանի Շահումյան շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի 02.03.1985 թվականի թիվ I-ՏԼ 319503 ամուսնալուծության վկայականի համաձայն՝ Ռոմ Ավագյանի և Տանյա Առաքելյանի ամուսնալուծությունը գրանցվել է 02.03.1985 թվականին:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. **գրավոր** և իրեղեն **ապացույցներով**, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ **գրավոր** և իրեղեն **ապացույցները**, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները, գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 29.01.2010 թվականի վճիռը, ինչպես նաև հաշվի չի առել, որ սույն գործում առկա չեն փոխառության գումարը 5 տոկոս տոկոսադրույքով տրված լինելու, Հերիքնազ Գևորգյանի կողմից Տանյա Առաքելյանին հավելյալ գումարներ վճարված լինելու փաստերը հաստատող գրավոր ապացույցներ, ինչպես նաև առկա չէ վաշխառություն կատարելու մեջ Տանյա Առաքելյանի մեղավորությունն ապացուցող դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ**:**

Ինչ վերաբերում է հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ վճռաբեկ բողոք բերած անձանց այն փաստարկին, որ Հերիքնազ Գևորգյանը Տանյա Առաքելյանին 2005 թվականից մինչև 2008 թվականի փետրվար ամիսը յուրաքանչյուր ամիս տվել է հինգ տոկոս հավելյալ գումար, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում, քանի որ գործում բացակայում է վերոնշյալ փաստը հիմնավորող որևէ ապացույց:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.10.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0269/02/10
Նախագահող դատավոր՝ Լ.Գրիգորյան
Դատավորներ՝ Գ.Մատինյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ՍԴ/0269/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Բենիամին Մարգարյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.08.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Օֆելյա Հովագիմյանի հայցի ընդդեմ Բենիամին Մարգարյանի՝ առողջությանը պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Օֆելյա Հովագիմյանը պահանջել է Բենիամին Մարգարյանից հօգուտ իրեն բռնագանձել 2.350.212 ՀՀ դրամ գումար՝ որպես առողջությանը պատճառված վնասի հատուցում:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 05.08.2010 թվականի վճռով հայցը 1.882.712 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասով մերժվել է, 82.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.10.2010 թվականի որոշմամբ Օֆելյա Հովագիմյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 05.08.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի 22.12.2010 և 23.03.2011 թվականի որոշումներով Բենիամին Մարգարյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի

(դատավոր՝ Վ. Մանասարյան) (այսուհետ՝ Դատարան) 08.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Բենիամին Մարգարյանից հօգուտ Օֆելյա Հովագիմյանի բռնագանձել 1.882.712 ՀՀ դրամ՝ որպես առողջությանը պատճառված վնասի հատուցման գումար, 380.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված իրավաբանական ծառայությունների գումար, իսկ 82.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.08.2011 թվականի որոշմամբ Բենիամին Մարգարյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 08.06.2011 թվականի վճիռը մասնակիորեն՝ Բենիամին Մարգարյանից հօգուտ Օֆելյա Հովագիմյանի 380.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված իրավաբանական ծառայությունների գումար, բռնագանձելու մասով բեկանվել և փոփոխվել է՝ հայցն այդ մասով մերժվել է, իսկ վճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բենիամին Մարգարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ, 1079-րդ և 1085-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերը, 51-րդ և 53-րդ հոդվածների 1-ին կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Օֆելյա Հովագիմյանը չի ապացուցել, թե ինչ աստիճանի մասնագիտական աշխատունակության կորուստ է կրել վրաերթի հետևանքով, Դատարանն իր հերթին նշված փաստը չի դիտել որպես ապացուցում պահանջող այն դեպքում, երբ նշված փաստն ինքը վիճարկել է:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Օֆելյա Հովագիմյանը չի ապացուցել այն փաստը, որ վթարից հետո իր հետ աշխատանքային պայմանագիրը կնքվել է ավելի կարճ աշխատաժամանակով այն պատճառով, որ ստացած հաշմության հետևանքով հնարավորություն չուներ աշխատելու ավելի երկար աշխատաժամանակով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը սխալ է որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը չի պարզել Օֆելյա Հովագիմյանի միջին ամսական աշխատավարձի չափը, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը, որոնցից ելնելով և տոկոսային հարաբերությամբ պետք է որոշվեր կորցրած աշխատավարձի հատուցման ենթակա չափը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վթարից հետո Օֆելյա Հովագիմյանը ոչ թե տեղափոխվել է ավելի կարճ աշխատաժամանակով աշխատանքի, այլ ազատվել է աշխատանքից, որից մեկ ամիս հետո նույն գործատուն նրա հետ կնքել է նոր աշխատանքային պայմանագիր:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գործատուի հրամանը որևէ դրույթ չի պարունակում այն մասին, որ Օֆելյա Հովագիմյանի աշխատանքային պայմանները, այդ թվում՝ վարձատրության չափը փոփոխվել են վրաերթի (աշխատունակության նվազման) արդյունքում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանն առանց հարգելի պատճառ-

ները նշելու է որոշել վնասը հատուցելու վճարները բոնագանձել միանվագ՝ երեք տարվա համար։

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը սխալ է գնահատել Օֆելյա Հովագիմյանի կողմից 750.000 ՀՀ դրամ ստանալու վերաբերյալ տրված ստացականը։

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակի բեկանել Վերաքննիչ դատարանի 31.08.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 05.08.2010 թվականի վճռին։

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի վարժարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի 04.01.2005 թվականի թիվ 35 հրամանի համաձայն՝ Օֆելյա Հովագիմյանն ընդունվել է աշխատանքի որպես մաթեմատիկայի ուսուցիչ (հատոր 1-ին, գ.թ.20).

2) 01.10.2009 թվականին Բենիամին Սարգարյանն իր վարած «ԳԱԶ-3110» մակնիշի ավտոմեքենայով խախտել է ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 129-րդ կետի պահանջը, որի հետևանքով ավտոմեքենայի առջևի մասով բախվել է ճանապարհն անցնող Օֆելյա Հովագիմյանին՝ վերջինիս պատճառելով միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով։ Բենիամին Սարգարյանն ունեցել է վթարը կանխելու տեխնիկական հնարավորություն (հատոր 1-ին, գ.թ.10-12).

3) Կազմակերպության տնօրենի 30.01.2010 թվականի թիվ 2 հրամանով Օֆելյա Հովագիմյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը 01.02.2010 թվականից լուծվել է (հատոր 1-ին, գ.թ.13).

4) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից 25.01.2010 թվականին տրված՝ 18 տարեկանից բարձր անձանց բժշկասոցիալական փորձաքննության որոշման վերաբերյալ թիվ 785419 տեղեկանքի համաձայն՝ Օֆելյա Հովագիմյանն ստացել է 3-րդ խմբի հաշմանդամություն մինչև 01.02.2011 թվականը, իսկ աշխատանքի բնույթի և պայմանների մասին եզրակացվել է, որ կարող է աշխատել կրճատ աշխատաժամանակով (հատոր 1-ին, գ.թ. 80).

5) Կազմակերպության տնօրենի 27.02.2010 թվականի թիվ 14 հրամանով Օֆելյա Հովագիմյանը նույն թվականի մարտի 1-ից ընդունվել է աշխատանքի Կազմակերպությունում որպես մաթեմատիկայի ուսուցիչ (հատոր 1-ին, գ.թ.14).

6) Կազմակերպության կողմից տրված տեղեկանքների համաձայն՝ Օֆելյա Հովագիմյանն աշխատել է Կազմակերպությունում որպես մաթեմատիկայի ուսուցիչ, և նրա միջին աշխատավարձը 01.10.2009 թվականի դրությամբ կազմել է 114.060 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի մարտ ամսվա աշխատավարձը՝ 62.653 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ.15, 16).

7) Կազմակերպության 09.07.2010 թվականի թիվ 013-209 գրության համաձայն՝ 2009թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած վրաերթի հետևանքով Օֆելյա Հովագիմյանի առողջության քայքայման և աշխատունակության անկման պատճառով նրա հետ կնքվել է թիվ 106 աշխատանքային պայմանագիրը, որի համաձայն՝ վերջինիս հանձնարարվել է իրականացնել ավելի քիչ աշխատաժամանակով աշխատանք (նա չէր կարող ավելի երկար ժամանակ անցկացնել աշխատանքային պրոցեսում՝ կանգնած կամ նստած վիճակով)։

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը *(տես՝ ըստ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի հայցի ընդդեմ Սեդա Սարգսյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և ըստ Սեդա Սարգսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի՝ գումար բռնագանձելու և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին թիվ ԵԱՆԴ/0479/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1079-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝տուժողի կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցման ենթակա չափը որոշվում է միջին աշխատավարձից (եկամտից) տոկոսներով, որը նա ստացել է մինչև հաշմությունը կամ առողջության այլ վնասվածքը կամ աշխատունակության կորուստը: Այդ տոկոսները որոշվում են տուժողի կողմից մասնագիտական աշխատունակության կորստի, իսկ մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ տուժողի կողմից մասնագիտական աշխատունակության կորստի դեպքում նրա կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցման ենթակա չափը որոշվում է մինչև հաշմությունը կամ առողջության այլ վնաս-

վածքը կամ աշխատունակության կորուստը նրա ստացած միջին աշխատավարձից (եկամտից) տոկոսներով՝ այդ կորստի աստիճանին համապատասխան, իսկ մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպության տնօրենի 04.01.2005 թվականի թիվ 35 հրամանի համաձայն՝ Օֆելյա Հովագիմյանն ընդունվել է աշխատանքի որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 01.10.2009 թվականին Բենիամին Սարգսյանն իր վարած «ԳԱԶ-3110» մակնիշի ավտոմեքենայով խախտել է ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 129-րդ կետի պահանջը, որի հետևանքով ավտոմեքենայի առջևի մասով բախվել է ճանապարհն անցնող Օֆելյա Հովագիմյանին՝ վերջինիս պատճառելով միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով:

Կազմակերպության տնօրենի 30.01.2010 թվականի թիվ 2 հրամանով 01.02.2010 թվականից լուծվել է Օֆելյա Հովագիմյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Կազմակերպության տնօրենի 27.02.2010 թվականի թիվ 14 հրամանով Օֆելյա Հովագիմյանը նույն թվականի մարտի 1-ից ընդունվել է աշխատանքի Կազմակերպությունում որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

Միաժամանակ Կազմակերպության կողմից տրվել են տեղեկանքներ այն մասին, որ Օֆելյա Հովագիմյանի միջին աշխատավարձը 01.10.2009 թվականի դրությամբ կազմել է 114.060 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի մարտ ամսվա աշխատավարձը՝ 62.653 ՀՀ դրամ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օֆելյա Հովագիմյանը պարտավոր էր ապացուցել այն փաստը, որ կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցման ենթակա չափը, ելնելով **մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանից**, կազմում է 1.882.712 ՀՀ դրամ: Որպես նշված փաստի հաստատում՝ Օֆելյա Հովագիմյանը վկայակոչել է մինչ իրեն վնաս պատճառվելը և դրանից հետո ստացած աշխատավարձի բացասական տարբերությունը ու որպես ապացույց Դատարան է ներկայացրել իր գործատուի 09.07.2010 թվականի թիվ 013-209 գրությունն այն մասին, որ Օֆելյա Հովագիմյանի հետ 2009թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած վրաերթի հետևանքով վերջինիս առողջության քայքայման և աշխատունակության անկման պատճառով նրա հետ կնքվել է թիվ 106 աշխատանքային պայմանագիրը, որի համաձայն՝ վերջինիս հանձնարարվել է իրականացնել ավելի քիչ աշխատաժամանակով աշխատանք (նա չէր կարող ավելի երկար ժամանակ անցկացնել աշխատանքային պրոցեսում՝ կանգնած կամ նստած վիճակով):

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործատուի այդ գրությունը չի հանդիսանում վերը նշված ապացուցման ենթակա փաստը հաստատող թույլատրելի և վերաբերելի ապացույց ու չէր կարող դրվել պահանջի բավարարման հիմքում, քանի որ առաջին դեպքում, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը որոշելու համար անհրաժեշտ էր նշանակել փորձաքննություն՝ հիմք ընդունելով այն, որ այդ հարցի պարզաբանումը պահանջում է հատուկ մասնագիտական գիտելիքներ, իսկ երկրորդ դեպքում, այդ գրությունը որևէ տեղեկություն չի պարունակում մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրա-

վահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը ընութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս ըստ հայցի Ռազմիկ Մարությանի ընդդեմ Սյուզիան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին, Սյուզիան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54/ՎԴ որոշումը)*:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1085-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վնասի հատուցումը՝ կապված տուժողի աշխատունակության նվազելու կամ մահվան հետ, կատարվում է ամենամսյա վճարներով: Հարգելի պատճառների առկայության դեպքում դատարանը վնաս պատճառողի հնարավորությունների հաշվառմամբ **կարող է** վնասի հատուցման իրավունք ունեցող քաղաքացու պահանջով նրան տրվելիք վճարները հատկացնել միանվագ, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ տուժողին տրվելիք վճարները միանվագ, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար հատկացնելու համար անհրաժեշտ է որոշակի վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, անգամ այդ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում նման հատկացում կատարելը ոչ թե դատարանի պարտականությունն է, այլ իրավունքը:

Մասնավորապես այդ վավերապայմաններն են՝

1. հատուցման իրավունք ունեցող քաղաքացու պահանջի առկայությունը.
2. հարգելի պատճառների առկայությունը.
3. նման հատուցում կատարելու համար վնաս պատճառողի հնարավորության առկայությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Դատարանի կողմից Բենիամին Մարգարյանի՝ որպես վնաս պատճառողի հնարավորությունները հաշվի չառնելու վերաբերյալ վերջինիս վերաքննիչ բողոքի պատճառաբանություններին, Օֆելյա Հովագիմյանին տրվելիք վճարները միանվագ երեք տարվա համար հատկացնելու մասին Դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելը պատճառաբանել է նրանով, որ գործում բացակայում է այն հանգամանքը հիմնավորող ապացույցը, որ Բենիամին Մարգարյանը չունի վնասը միանվագ երեք տարվա հաշվարկով հատուցելու հնարավորություններ, իսկ ներկայացված հաշմանդամության կամ ընտանիքի կազմի վերաբերյալ փաստաթղթերը դեռևս չեն բացահայտում Բենիամին Մարգարյանի գույ-

քային դրությունը և չեն հիմնավորում, որ նա իր գույքային դրությամբ նշված հնարավորությունը չունի:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1085-րդ հոդվածի 1-ին կետը կիրառել է՝ առանց վերը նշված վավերապայմանների միաժամանակյա առկայությունը հաստատված համարելու:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ վերը նշված առաջին երկու պարտադիր վավերապայմանների հետ միաժամանակ պետք է հաստատված համարվեր ոչ թե Օֆելյա Հովագիմյանին նման հատուցում կատարելու համար Բենիամին Մարգարյանի հնարավորության բացակայության փաստը, ինչպիսի հետևության եկել է Վերաքննիչ դատարանը, այլ, որ վերջինս ունի նման հնարավորություն:

Բացի այդ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից 25.01.2010 թվականին տրված՝ 18 տարեկանից բարձր անձանց բժշկասոցիալական փորձաքննության որոշման վերաբերյալ թիվ 785419 տեղեկանքի համաձայն՝ Օֆելյա Մարգարյանի հաշմանդամությունը սահմանվել է մինչև 01.02.2011 թվականը, և վերափորձաքննության ժամկետ է սահմանվել 25.01.2011 թվականը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, չհիմնավորելով տուժողին տրվելիք վճարները միանվագ երեք տարվա համար հատկացնելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1085-րդ հոդվածի 1-ին կետը կիրառել է առանց դրա իրավական հիմնավորումը տալու, քանի որ հաստատված չի համարել վերը նշված վավերապայմանների միաժամանակյա առկայությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.08.2011 թվականի որոշման՝ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 08.06.2011 թվականի վճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԼԴ4/0154/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ4/0154/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Զվարթ Ալավերդյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է բռնագանձել Զվարթ Ալավերդյանից 94.315 ՀՀ դրամ՝ որպես մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումար:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 21.10.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.03.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.10.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ, 345-րդ, 347-րդ, 777-րդ, 779-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը, հանդիսանալով շարժական կապի օպերատոր, կատարել է շարժական կապի ծառայություններից օգտվելու հրապարակային հրավեր, որի պայմաններին համաձայն լինելով՝ Ընկերության և Զվարթ Ալավերդյանի միջև 09.03.2009 թվականին կնքվել են ծառայությունների վճարովի մատուցման հրապարակային պայմանագրեր: Այդ պայմանագրերի հիմքով Ընկերությունը մատուցել է ծառայություններ, սակայն Զվարթ Ալավերդյանը մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ չի կատարել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ մատուցված ծառայությունների գումարային արտահայտությամբ չափը հիմնավորող ապացույց են հանդիսանում մատուցված ծառայությունների հաշիվները, որոնք հնարավորություն են ընձեռում պարզելու, թե ինչ ծավալի, քանակի և տեսակի ծառայություններ են մատուցվել բաժանորդին: Միևնույն Վերաքննիչ դատարանը որևէ գնահատական չի տվել ներկայացված հաշիվներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.03.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Զվարթ Ալավերդյանի միջև 09.03.2009 թվականին կնքված թիվ 055-052 և 055-053 պատվեր-դիմումների (պայմանագրեր) համաձայն՝ Զվարթ Ալավերդյանին հատկացվել են թվով 2 հեռախոսահամարներ: Ստորագրելով պատվեր-դիմումները՝ Զվարթ Ալավերդյանը հաստատել է, որ ծանոթացել է և համաձայն է Ընկերության GSM շարժական կապի պայմանագրային համակարգի ծառայությունների մատուցման կանոններին **(հատոր 1-ին, գ.թ. 5-14):**

2) Ընկերության կողմից 099005880 հեռախոսահամարի համար ներկայացված 30.06.2009 թվականի ծառայությունների մատուցման թիվ 101020309353 հաշվի համաձայն, որում ներառված են նաև 04.04.2009 թվականին ներկայացված թիվ 101018096711, 03.05.2009 թվականին ներկայացված թիվ 101018794162 և 03.06.2009 թվականին ներկայացված թիվ 101019511096 հաշիվներով վճարման ենթակա գումարները, Զվարթ Ալավերդյանի պարտքը կազմում է 72.027,68 ՀՀ դրամ: Նշված հաշվին կից թիվ 101020309353 շրջանառու տեղեկանքի համաձայն ևս պարտքը կազմում է 72.027,68 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 21-23):**

3) Ընկերության կողմից 099005808 հեռախոսահամարի համար ներկայացված 30.06.2009 թվականի ծառայությունների մատուցման թիվ 101020309318 հաշվի համաձայն, որում ներառված են նաև 04.04.2009 թվականին ներկայացված թիվ 101018096672, 03.05.2009 թվականին ներկայացված թիվ 101018794127 և 03.06.2009 թվականին ներկայացված թիվ 101019511058 հաշիվներով վճարման ենթակա գումարները, Զվարթ Ալավերդյանի պարտքը կազմում է 22.287,16 ՀՀ դրամ: Նշված հաշվին կից թիվ 101020309318 շրջանառու տեղեկանքի համաձայն ևս պարտքը կազմում է 22.287,16 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 45-47):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հրապարակային է համարվում առևտրային կազմակերպության կնքած և ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու նրա պարտականությունները սահմանող պայմանագիրը, որոնք այդ կազմակերպությունն իր գործունեության բնույթով պետք է իրականացնի յուրաքանչյուրի նկատմամբ, ով կդիմի իրեն (մանրածախ առևտուր, ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրումներ, կապի ծառայություններ, էներգամատակարարում, բժշկական, հյուրանոցային սպասարկում և այլն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 443-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրում կարող է նախատեսվել, որ դրա առանձին պայմանները որոշվում են համապատասխան տեսակի պայմանագրերի համար մշակված և մամուլում հրապարակված օրինակելի պայմաններով, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օրինակելի պայմանները կարող են շարադրվել օրինակելի պայմանագրի կամ այդ պայմանները պարունակող այլ փաստաթղթի ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործո-

ղություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 779-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է իրեն մատուցված ծառայությունների համար վճարել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված ժամկետներում և կարգով:

Սույն գործով վերաքննիչ բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ «պատվեր-դիմումները չեն կարող հանդիսանալ կողմերի միջև կնքված կապի ծառայության պայմանագրից բխող իրավահարաբերությունների ծագման հիմքը հաստատող ապացույցներ, քանի որ դրանցում բացակայում են օրենսդրի կողմից կապի ծառայության պայմանագրին առաջադրվող պայմանները, մասնավորապես նման պայմանագրի բովանդակությունը կազմող կատարողի կողմից պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցելու, ինչպես նաև վերջինիս կողմից այդ ծառայությունների համար վճարելու պարտավորությունը»:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Զվարթ Ալավերդյանի միջև 09.03.2009 թվականին կնքված թիվ 055-052 և 055-053 պատվեր-դիմումների (պայմանագրեր) համաձայն՝ Զվարթ Ալավերդյանին հատկացվել են թվով 2 հեռախոսահամարներ: Ստորագրելով պատվեր-դիմումները՝ Զվարթ Ալավերդյանը հաստատել է, որ **ծանոթացել է և համաձայն է Ընկերության GSM շարժական կապի պայմանագրային համակարգի ծառայությունների մատուցման կանոններին:**

«Ընկերության GSM շարժական կապի հետվճարային համակարգի ծառայությունների մատուցման պայմաններ»-ի 5.1-ին կետի համաձայն՝ վճարումները բաժանորդի կողմից կատարվում են հաշվետու ժամանակաշրջանում իրեն մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն նույն պայմաններում սահմանված պայմանների, բաժանորդի կողմից ընտրված սակագնային պլանի, օգտագործած ծառայությունների ցանկի և ծավալների: Պայմանների 5.2-րդ կետի համաձայն՝ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա և նշվում է բաժանորդին ներկայացվող ծառայությունների մատուցման հաշվում: Ծառայությունների մատուցման հաշիվը հանդիսանում է բաժանորդին ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ ապացույց, իսկ 5.5-րդ կետի համաձայն՝ բաժանորդի կողմից հաշվի չստանալը կամ ստացման ուշացումը չի կարող հիմք հանդիսանալ բաժանորդի կողմից ծառայությունների դիմաց վճարումները չկատարելու կամ վճարման ժամկետները հետաձգելու համար:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ, ինչպես նաև գործում առկա մյուս ապացույցների հետ համադրման եղանակով չի հետազոտել և գնահատել 09.03.2009 թվականի թիվ 055-052 և 055-053 պատվեր-դիմումները, որոնք ստորագրելով՝ Զվարթ Ալավերդյանը հաստատել է, որ **ծանոթացել է և համաձայն է Ընկերության GSM շարժական կապի պայմանագրային համակարգի ծառայությունների մատուցման կանոններին:**

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է «ծառայությունների մատուցման հաշիվ»-ների՝ որպես Ընկերության հայցը հիմնավորող ապացույցի վերաբերելիության և թույլատրելիության հարցին և արձանագրել, որ **հայցը հիմնավորող միակ թույլատրելի ապացույցն Ընկերության կողմից ներկայացված ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հաշիվն է** *(տե՛ս ըստ հայցի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ընդդեմ «Էյ Ար-Էյ Սի Թի» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղա-*

քացիական և վարչական պալատի 29.07.2011 թվականի թիվ ԱՎԴ1/0009/02/10 որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից 099005880 հեռախոսահամարի համար ներկայացված 30.06.2009 թվականի ծառայությունների մատուցման թիվ 101020309353 հաշվի համաձայն, որում ներառված են նաև 04.04.2009 թվականին ներկայացված թիվ 101018096711, 03.05.2009 թվականին ներկայացված թիվ 101018794162 և 03.06.2009 թվականին ներկայացված թիվ 101019511096 հաշիվներով վճարման ենթակա գումարները, Զվարթ Ալավերդյանի պարտքը կազմում է 72.027,68 ՀՀ դրամ: Նշված հաշվին կից թիվ 101020309353 շրջանառու տեղեկանքի համաձայն ևս պարտքը կազմում է 72.027,68 ՀՀ դրամ: Իսկ 099005808 հեռախոսահամարի համար ներկայացված 30.06.2009 թվականի ծառայությունների մատուցման թիվ 101020309318 հաշվի համաձայն, որում ներառված են նաև 04.04.2009 թվականին ներկայացված թիվ 101018096672, 03.05.2009 թվականին ներկայացված թիվ 101018794127 և 03.06.2009 թվականին ներկայացված թիվ 101019511058 հաշիվներով վճարման ենթակա գումարները, Զվարթ Ալավերդյանի պարտքը կազմում է 22.287,16 ՀՀ դրամ: Նշված հաշվին կից թիվ 101020309318 շրջանառու տեղեկանքի համաձայն ևս պարտքը կազմում է 22.287,16 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և վերլուծելով կողմերի միջև կնքված պատվեր-դիմումի (պայմանագրի) ծառայությունների մատուցման պայմանները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով **«ծառայությունների մատուցման հաշիվ»**-ները ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հայցը հիմնավորող թույլատրելի ապացույցներ են: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության հայցը ենթակա էր բավարարման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայցը բավարարել՝ Զվարթ Ալավերդյանից հօգուտ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի բռնագանձել 94.315 (ինսունչորս հազար երեք հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ՝ որպես մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումար:

2. Զվարթ Ալավերդյանից հօգուտ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի բռնագանձել 1.887 (հազար ութ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի, 2.830 (երկու հազար ութ հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի, 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ1/0381/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Սատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ1/0381/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գայանե Հովհաննայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.08.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գայանե Հովհաննայանի ընդդեմ Վաղիմ Ավանեսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գայանե Հովհաննայանը պահանջել է Վաղիմ Ավանեսյանից բռնագանձել 700.000 ՀՀ դրամ, այդ գումարի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները՝ մինչև պարտավորության փաստացի կատարումը, ինչպես նաև բռնագանձել 190.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն և վճռվել է. «Վաղիմ Ավանեսյանից հօգուտ Գայանե Հովհաննայանի բռնագանձել 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար: Վաղիմ Ավանեսյանից հօգուտ Գայանե Հովհաննայանի

հաշվարկել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոսի գումարը՝ սկսած կետանցի օրվանից՝ 01.06.2009թ.-ից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.08.2012 թվականի որոշմամբ Վադիմ Ավանեսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.05.2012 թվականի վճիռը բեկանվել, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գայանե Հովհաննյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն, սխալ է գնահատել և մեկնաբանել ապացույցները:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ Վադիմ Ավանեսյանը չի հիմնավորել այն հանգամանքը, որ իր կամքից անկախ պատճառներով չի կարողացել ներկայացնել փոխառության գումարը վճարված լինելու մասին հավաստող ապացույցներ:

Վերաքննիչ դատարանը, գործը նոր քննության ուղարկելու որոշման հիմքում դնելով քննիչի որոշումը, անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ ապացույցն էական նշանակություն չի կարող ունենալ գործի քննության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.08.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 16.05.2012 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վադիմ Ավանեսյանը 15.12.2008 թվականին տրված պարտավորագրով պարտավորվել է Գայանե Հովհաննյանից 15.12.2008 թվականին փոխառությամբ վերցրած 700.000 ՀՀ դրամ գումարը վերջինիս վերադարձնել 01.06.2009 թվականին **(հատոր 1-ին, գ.թ.19):**

2) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի կողմից 19.05.2012 թվականին կայացվել է «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշում, որի համաձայն՝ Գայանե Հովհաննյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով **(հատոր 1-ին, գ.թ. 70-74)**:

3) Նշված որոշման համաձայն՝ Գայանե Հովհաննյանը 07.09.2007 թվականին Վադիմ Ավանեսյանին պարտք տված 500.000 ՀՀ դրամին համարժեք 1.600 ԱՄՆ դոլարի համար մինչև 2010 թվականի ապրիլ ամիսը ներառյալ պահանջել և ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 12 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով՝ ամսական 10 տոկոս կամ 120 տոկոս հաշվարկով 1.405.000 ՀՀ դրամ: Նշված հանգամանքը հիմնավորվել է նախաքննության ընթացքում տուժողի և վկաների կողմից տրված ցուցմունքներով **(հատոր 1-ին, գ.թ. 72):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի ընդունելու նոր ապացույց և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ **ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով**, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է**, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:**

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու չէ նոր ապացույց ընդունել, բացառությամբ այն դեպքի, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ կողմերի կողմից ներկայացված նոր ապացույցը չի ներկայացվել **նրանց կամքից անկախ հանգամանքներով:** Ընդ որում, այդ **ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար**:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով **նոր ապացույցը պետք է օբյեկտիվորեն առկա լինի,** սակայն կողմերի կամքից անկախ պատճառներով գործի քննության ընթացքում չներկայացվի *(տես՝ ըստ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հայցը ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Պապյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ՀՔԴ3/0049/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Սույն գործով վերաքննիչ բողոքին կից որպես նոր ապացույց ներկայացվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ 19.05.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը: Նշված ապացույցը, ըստ Վադիմ Ավանեսյանի, Դատարան չի ներկայացվել իր կամքից անկախ հանգամանքներով՝ պատճառաբանելով, որ այն նախաքննության մարմնի կողմից կայացվել է Դատարանի վճիռը հրապարակվելուց հետո:

Վերաքննիչ դատարանը, որոշման հիմքում դնելով այն հանգամանքը, որ Դատարանում գործի քննության ժամանակ վերը նշված ապացույցը չի ներկայացվել բողոքաբերի կամքից անկախ հանգամանքներով և պատճառաբանելով, որ այն կարող է էական նշանակություն ունենալ գործի լուծման համար, բեկանել է Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հով-

հանձնիայանի՝ «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը կայացվել է 19.05.2012 թվականին, այսինքն՝ Դատարանի 16.05.2012 թվականի վճիռը հրապարակվելուց հետո: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով նոր ապացույց չէ, քանի որ այն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում օբյեկտիվորեն գոյություն չի ունեցել, որպիսի հիմքով և դրա չներկայացնելը պայմանավորված չի եղել Վադիմ Ավանեսյանի կամքից անկախ հանգամանքներով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը ոչ միայն պետք է անդրադառնար ապացույցը բողոքաբերի կամքից անկախ հանգամանքներում չներկայացնելու իրական հնարավորությանը, այլ պետք է պարզեր տվյալ գործի լուծման համար նոր ներկայացված ապացույցի **էական նշանակություն ունենալու հանգամանքը**:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

Նույն օրենսգրքի 880-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին: Եթե պարտապանն ի հավաստումն պարտավորության, պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը պարտատիրոջ (փոխատուի) վրա պարտականություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի (փոխառուի) պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին նրան ստացական տալ, իսկ պարտապանի կողմից պարտատիրոջը, ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ տրված լինելու դեպքում պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշել իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Ընդ որում, այլ բան ապացուցված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվե-

լը հավաստում է պարտավորության դադարումը *(տես՝ ըստ Ֆերդինանդ Առաքելյանի հայցի ընդդեմ Հարություն Պետրոսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում սույն գործի լուծման համար **էական նշանակություն** կարող էին ունենալ փոխառուի (պարտապանի)՝ Վադիմ Ավանեսյանի կողմից փոխատու (պարտատեր) Գայանե Հովհաննյանին փոխառությամբ ստացված գումարը վերադարձնելու պարտավորության ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարելու վերաբերյալ ապացույցները՝ պարտապանի մոտ գտնվող պարտքային փաստաթուղթը, պարտատիրոջ կողմից պարտքը լրիվ կամ մասնակիորեն ստանալու վերաբերյալ պարտապանին տված ստացականը կամ **պարտքն ամբողջությամբ կամ մասնակիորեն ստացած լինելու փաստը պարտատիրոջ կողմից ընդունելը:**

Ինչ վերաբերում է քրեական գործով նախաքննության մարմնի որոշմամբ հաստատված հանգամանքներին, ապա քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշմամբ, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը տվյալ գործի շրջանակներում պարտավոր է տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը *(տես՝ ըստ Վարթկես Հագոփյանի հայցի ընդդեմ Անահիտ Հակոբջանյանի, Ալեքսանդր Դուրգարյանի, Աջափնյակ նոտարական տարածքի նոտար Ռ. Առաքելյանի՝ Անահիտ Հակոբջանյանին և նրա ներկայացուցիչ Ալեքսանդր Դուրգարյանին 7-օրյա ժամկետում 25.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը վճարելուն պարտավորեցնելու, այլապես գումարը 7-օրյա ժամկետում չվճարելու դեպքում Պայմանագիրը լուծված համարելու, Անահիտ Հակոբջանյանի անվամբ գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին և ըստ հակընդդեմ հայցի Ալեքսանդր Դուրգարյանի ընդդեմ Վարթկես Հագոփյանի՝ դրամական պարտավորությունը մասնակի կատարած համարելու և պարտքի գումարի չափը նվազեցնելու պահանջի մասին թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հավաստումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից:

Տվյալ դեպքում ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ 19.05.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշմամբ հաստատված հանգամանքները հիմնվում են վկաների ցուցմունքների վրա: **Միևնույն նշված որոշմամբ որևէ ձևով չի հաստատվել այն հանգամանքը, որ Գայանե Հովհաննյանն ընդունել է Վադիմ Ավանեսյանի կողմից իրեն վիճելի իրավահարաբերությունների շրջանակներում 1.405.000 ՀՀ դրամ վճարելու փաստը:**

Հետևաբար, հաշվի առնելով փոխառություն իրավահարաբերությունների վերոգրյալ առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն գործում առ-

կա չէ պարտապանի՝ Վադիմ Ավանեսյանի կողմից պարտքը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձնելու վերաբերյալ որևէ վերաբերելի ապացույց, Վաճառաբեկ դատարանը գտնում է, որ գործը նոր քննության ուղարկելու պարագայում ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի 19.05.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը չէր կարող էական նշանակություն ունենալ սույն քաղաքացիական գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վաճառաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վաճառաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.08.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1587/02/10
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1587/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ֆերդինանտ Առաքելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.01.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ֆերդինանտ Առաքելյանի ընդդեմ Հարություն Պետրոսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ 27.07.2007 թվականի փոխառության գործարքը չկնքված համարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ֆերդինանտ Առաքելյանը պահանջել է Հարություն Պետրոսյանից բռնագանձել 26.180.000 ՀՀ դրամ, որից 17.500.000 ՀՀ դրամը՝ փոխառությամբ տրված գումարի չվճարված մաս, 6.300.000 ՀՀ դրամը՝ բանկային տոկոս, իսկ 2.380.000 ՀՀ դրամը՝ իրավաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հարություն Պետրոսյանը պահանջել է 27.07.2007 թվականի փոխառության գործարքը համարել չկնքված:

Գործի քննության ընթացքում Հարություն Պետրոսյանը հրաժարվել է հակընդդեմ հայցից:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 30.09.2011 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.01.2012 թվականի որոշմամբ Ֆերդինանտ Առաքելյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.09.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ֆերդինանտ Առաքելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը, 219-րդ հոդվածի 1-ին կետը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 2-րդ կետը, չի կիրառել նույն օրենսգրքի 14-րդ, 411-րդ, 877-րդ, 879-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ հաշվի չի առել, որ բողոք բերած անձը Դատարանին է ներկայացրել Հարություն Պետրոսյանի տված փաստաթղթի բնօրինակը, որի իսկությունը և այն իր կողմից գրելու հանգամանքը վերջինս հավաստել է հակընդդեմ հայցադիմումով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.01.2012 թվականի որոշման՝ հայցը մերժելու մասը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ռուսերեն լեզվով գրված 'Долгавая расписка' վերտառությամբ փաստաթղթի հայերեն թարգմանված տարբերակում որպես փաստաթղթի անվանում նշված է 'Ստացական', որտեղ բառացի արձանագրված է. 'Ես՝ Հարություն Գրիգորի Պետրոսյանս, պարտավորվում եմ վճարել 30.000.000 ՀՀ դրամի (երեսուն միլիոն դրամ) չափով պարտքը սույն թվականի երեք ամսվա ընթացքում մինչև հոկտեմբերի վերջ: 27.07.2007թ.' **(հատոր 1-ին, գ.թ. 13-14)**: Նշված ստացականը Դատարան է ներկայացրել Ֆերդինանտ Առաքելյանը, և դրանում առկա չէ մակագրություն պարտքի կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

2) Հարություն Պետրոսյանի ներկայացրած հակընդդեմ հայցադիմումի համաձայն՝ '27.07.2007 թվականին Ֆերդինանտ Առաքելյանը եկավ մեր տուն և պահանջեց, որպեսզի ես 30.000.000 ՀՀ դրամ վճարելու պարտավորագիր գրեմ…. գրեցի այդ պարտավորագիրը' **(հատոր 1-ին, գ.թ. 96-102)**:

3) ՀՀ կենտրոնական բանկի 01.03.2010 թվականի գրությամբ ներկայացվել է 01.01.2008 թվականից 24.02.2010 թվականն ընկած ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային հետևյալ դրույքաչափերը՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 03.12.2007 թվականի թիվ 389-Ն որոշմամբ՝ 11 տոկոս տարեկան, 07.10.2008 թվականի թիվ 279-Ն որոշմամբ՝ 12 տոկոս տարեկան, 21.01.2010 թվականի թիվ 7-Ն որոշմամբ՝ 13 տոկոս տարեկան **(հատոր 1-ին, գ.թ. 7)**:

4) Սույն գործով 27.07.2010 թվականին ներկայացված հայցադիմումով Ֆերդինանտ Առաքելյանը հայտնել է, որ Հարություն Պետրոսյանին փոխառությամբ տրված

30.000.000 ՀՀ դրամից վերջինս վճարել է միայն 12.500.000 ՀՀ դրամը, որից ելնելով էլ չվճարված 17.500.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկել է բանկային տոկոսներ հետևյալ կերպ՝ 2007 թվականի բանկային տոկոսը կազմել է միջինը տարեկան 11 տոկոս, 11 տոկոսը 2007 թվականի 5 ամսվա համար կազմում է 4,5 տոկոս, 17.500.000 ՀՀ դրամի 4,5 տոկոսը կազմում է **787.500 ՀՀ դրամ**: 2008 թվականի բանկային տոկոսի հաշվարկի դրույքը կազմել է միջինը տարեկան 12 տոկոս, 17.500.000 ՀՀ դրամի 12 տոկոսը 2008 թվականի 12 ամիսների համար կազմում է **2.100.000 ՀՀ** դրամ: 2009 թվականի բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կազմել է միջինը տարեկան 12 տոկոս, 17.500.000 ՀՀ դրամի 12 տոկոսը 2009 թվականի 12 ամիսների համար կազմում է **2.100.000 ՀՀ դրամ**: 2010 թվականի բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կազմել է միջինը 13 տոկոս, 13 տոկոսը 2010 թվականի 7 ամիսների համար կազմում է 7,5 տոկոս, 17.500.000 ՀՀ դրամի 7,5 տոկոսը կազմում է **1.312.500 ՀՀ դրամ**: Ընդհանուր առմամբ բանկային տոկոսները կազմում են 6.300.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 4-6)**:

5) Ֆերդինանտ Առաքելյանի ու ՙՎարդան Սաֆարյան՚ՍՊԸ-ի միջև 26.07.2010 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն՝ նշված ընկերությունը, ի դեմս տնօրեն Վարդան Սաֆարյանի, պարտավորվել է Ֆերդինանտ Առաքելյանին մատուցել հետևյալ ծառայությունները՝ նախապատրաստել հայցադիմում, այն ներկայացնել Դատարան, մասնակցել դատական նիստին, ապացույցներ ներկայացնել, բացատրություններ տալ, անհրաժեշտության դեպքում վերաքննիչ բողոք բերել, Վերաքննիչ դատարանում մասնակցել դատական նիստին, անհրաժեշտության դեպքում վճռաբեկ բողոք բերել և Վճռաբեկ դատարանում մասնակցել վճռաբեկ բողոքի քննությանը, իսկ Ֆերդինանտ Առաքելյանը պարտավորվել է մատուցվելիք ծառայության համար նշված ընկերությանը վճարել 2.380.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 11-12)**:

6) Գործում առկա 04.04.2011 թվականի լիազորագրի համաձայն՝ Ֆերդինանտ Առաքելյանը ՙՎարդան Սաֆարյան՚ՍՊԸ-ի տնօրեն, փաստաբան Վարդան Սաֆարյանին **(**փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 238) լիազորել է իր անունից հանդես գալ Դատարանում, բողոքարկել դատական ակտը, հանդես գալ Վերաքննիչ դատարանում, վճռաբեկ բողոք ներկայացնել, անհրաժեշտության դեպքում՝ մասնակցել Վճռաբեկ դատարանի դատական նիստին **(հատոր 1-ին, գ.թ. 148):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությու-

ները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին: Եթե պարտապանն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել:

Վերջին նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը պարտատիրոջ վրա պարտականություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին նրան ստացական տալ, իսկ պարտապանի կողմից պարտատիրոջն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ տրված լինելու դեպքում՝ պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշել իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Ընդ որում, այլ բան ապացուցված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի դատական ակտը, պատճառաբանել է, որ հայցվորը ներկայացրել է 27.07.2007 թվականի ստացականը, որի մեջ բացակայում է որևէ նշում այն մասին, որ հայցվորը պատասխանողին փոխառությամբ գումար է տվել, վերջինս այդ գումարի մի մասը վերադարձրել է և հայցվորին պարտք է մնացել 17.500.000 ՀՀ դրամ, քանի որ ներկայացված փաստաթղթում բացակայում են պարտավորության նկատմամբ որպես պահանջատեր հանդես եկող հայցվորի տվյալները, այսինքն՝ հայցվորը չի ապացուցել այն փաստը, որ պատասխանողը հայցվորի հանդեպ է դրամական պարտավորություն ստանձնել և ներկայիս վիճակում այդ պարտավորության չափը 17.500.000 ՀՀ դրամ է:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ ռուսերեն լեզվով 27.07.2007 թվականին գրված 'Долгавая расписка' վերտառությամբ փաստաթղթով (ստացականով) Հարություն Պետրոսյանը պարտավորվել է վճարել 30.000.000 ՀՀ դրամի չափով **պարտքը** նույն թվականի երեք ամսվա ընթացքում մինչև հոկտեմբերի վերջը, իսկ հակընդդեմ հայցադիմումում նշել է, որ Ֆերդինանտ Առաքելյանի պահանջով նշված գումարը նրան վճարելու վերաբերյալ պարտավորագիրն ինքն է գրել: Ընդ որում, նշված ստացականը Դատարան է ներկայացրել Ֆերդինանտ Առաքելյանը, և դրանում առկա չէ մակագրու-

թյուն պարտքի կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հարություն Պետրոսյանն ընդունել է 27.07.2007 թվականի ստացականում նշված 30.000.000 ՀՀ դրամ պարտավորությունը Ֆերդինանտ Առաքելյանի հանդեպ ստանձնած լինելու հանգամանքը, իսկ այդ ստացականը պարտատիրոջ մոտ գտնվելու փաստը և դրանում պարտքի կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին մակագրության բացակայությունը վկայում են ստացականում սահմանված պարտավորության առկայության (դադարած չլինելու) մասին: Այսինքն՝ ռուսերեն լեզվով գրված 'Долгавая расписка' վերտառությամբ ստացականը սույն գործով կողմերի միջև պարտավորաական իրավահարաբերությունների առկայությունը հավաստող փաստաթուղթ է, քանի որ դրանով Հարություն Պետրոսյանը պարտավորվել է 30.000.000 ՀՀ դրամի չափով **պարտքը** որոշակի ժամկետում՝ երեք ամսվա ընթացքում՝ մինչև հոկտեմբերի վերջը, վերադարձնել Ֆերդինանտ Առաքելյանին:

Սույն գործով ներկայացված հայցադիմումով Ֆերդինանտ Առաքելյանն ընդունել է Հարություն Պետրոսյանի կողմից 30.000.000 ՀՀ դրամ պարտքի գումարից 12.500.000 ՀՀ դրամը վճարելու հանգամանքը, իսկ մնացած 17.500.000 ՀՀ դրամը վերադարձնելու վերաբերյալ գործում որևէ ապացույց առկա չէ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստացականով Հարություն Պետրոսյանի պարտավորության չափը Ֆերդինանտ Առաքելյանի հանդեպ կազմում է 17.500.000 ՀՀ դրամ, որն էլ ենթակա է բռնագանձման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հարություն Պետրոսյանն ապօրինի պահել է և խուսափել է վերադարձնել Ֆերդինանտ Առաքելյանի դրամական միջոցները, հետևաբար պարտավորության հիմնական գումարի նկատմամբ ենթակա են հաշվարկման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսները:

Ըստ հայցադիմումի՝ այդ տոկոսների հաշվարկը սկսվել է 2007 թվականի հուլիսից մինչև հայցադիմումը ներկայացնելու օրը՝ 27.07.2010 թվականը, ինչի արդյունքում տոկոսների չափը կազմել է 6.300.000 ՀՀ դրամ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բանկային տոկոսները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն, հաշվարկվում են պարտավորության կատարման կետանցի օրվանից, իսկ տվյալ դեպքում պարտավորության կատարման վերջնաժամկետը 2007 թվականի հոկտեմբերի վերջն է, այսինքն՝ կետանցը թույլ է տրվել այդ ժամանակ, ուստի տոկոսները պետք է հաշվարկել 2007 թվականի նոյեմբերից: Այսպես՝ ՀՀ կենտրոնական բանկի 01.03.2010 թվականի գրության համաձայն՝ 2007 թվականի բանկային տոկոսը կազմել է տարեկան 11 տոկոս, այսինքն՝ 2007 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար բանկային տոկոսը կազմում է 1,8 տոկոս, իսկ 17.500.000 ՀՀ դրամի 1,8 տոկոսը 315.000 ՀՀ դրամ է: Արդյունքում, պարտավորության հիմնական գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվարկման ենթակա տոկոսները 2007 թվականի նոյեմբերից մինչև 2010 թվականի հուլիսը կազմում են 5.827.500 ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է 2.380.000 ՀՀ դրամ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը, ի թիվս այլ գումարների, կազմված են նաև փաստաբանի **խելամիտ** վարձատրության գումարից:

ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է չհաստատել այն դատական ծախսերը, որոնց չափը չի համապատասխանում դրանց ողջամիտ արժեքին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը:

Ելնելով վերը նշված չափանիշներից և նկատի ունենալով, որ փաստաբանը սույն գործով ի շահ հայցվորի կատարել է 26.07.2010 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով սահմանված դատավարական գործողությունները, ինչպես նաև հաշվի առնելով գործի քննության երկարատևությունը (մոտ երկու տարի)՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ է համարում 500.000 ՀՀ դրամը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.01.2012 թվականի որոշման՝ 23.827.500 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջը մերժելու մասը և այն փոփոխել՝ Ֆերդինանտ Առաքելյանի հայցը բավարարել մասնակիորեն՝ Հարություն Պետրոսյանից հօգուտ Ֆերդինանտ Առաքելյանի բռնագանձել 23.827.500 (քսաներեք միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից 17.500.000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ որպես

պարտքի գումարի չվճարված մաս, 5.827.500 (հինգ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ որպես բանկային տոկոսներ, իսկ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի ողջամիտ վարձատրության գումար: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.01.2012 թվականի որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Հարություն Պետրոսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 466.550 (չորս հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես հայցի բավարարված մասի, 699.825 (վեց հարյուր իննսունինը հազար ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ՝ որպես հայցի բավարարված մասով վերաքննիչ բողոքի, 699.825 (վեց հարյուր իննսունինը հազար ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ՝ որպես հայցի բավարարված մասով վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարներ:

Ֆերդինանտ Առաքելյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 9.450 (ինը հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես հայցի մերժված մասի, 14.175 (տասնչորս հազար մեկ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես հայցի մերժված մասով վերաքննիչ բողոքի, 14.175 (տասնչորս հազար մեկ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես հայցի մերժված մասով վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1401/02/11
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/1401/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով անհատ ձեռնարկատեր Նարինե Ռոստոմյանի (այսուհետ՝ Ձեռնարկատեր) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.02.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ձեռնարկատիրոջ ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ձեռնարկատերը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 2.500.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 24.11.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.02.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ձեռնարկատերը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ

հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 48-րդ, 53-րդ, 68-րդ, 73-րդ, 142-րդ, 219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ փաստաբանի վարձատրությունը բռնագանձելու պահանջը՝ որպես առանձին հայցապահանջ, կարող է դատական պաշտպանության առարկա լինել, և նման պահանջի ներկայացումը չի կարող սահմանափակվել: Այսինքն՝ Ձեռնարկատերն իրավունք ունի իր հայեցողությամբ իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.11.2011 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դատական ծախսերի հարցը լուծվում է կոնկրետ գործի քննության շրջանակներում, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածը ոչ թե սահմանափակում է դատական պաշտպանության իրավունքը, այլ լրացուցիչ երաշխիք է, երբ դատարանը չի անդրադարձել դատական ծախսերի լուծման հարցին: Հետևաբար այն պնդումը, որ փաստաբանի վարձատրությունը որպես առանձին հայցապահանջ կարող է դատական պաշտպանության առարկա լինել, անհիմն է:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 30.11.2009 թվականին Ձեռնարկատիրոջ և «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ն պարտավորվել է Ձեռնարկատիրոջ պատվերով մատուցել իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև իր աշխատակից փաստաբանների միջոցով դատարաններում և այլ մարմիններում ներկայացնել շահերը՝ կապված Ձեռնարկատիրոջ և Ընկերության միջև 17.04.2007 թվականին կնքված անշարժ գույքի ենթավարձակալության պայմանագրի շուրջ ծագած դատական վեճերի մասով, իսկ Ձեռնարկատերը պարտավորվել է վճարել մատուցված ծառայությունների դիմաց: Նույն պայմանագրի 3.1 կետով պայմանագրի գինը սահմանվել է 2.500.000 ՀՀ դրամ, իսկ 3.2.1 կետով սահմանվել է, որ պայմանագրի կնքման պահից 10 բանկային օրվա ընթացքում պատվիրատուն վճարում է կատարողին 150.000 ՀՀ դրամ, առանց հաշիվ-ապրանքագրի ներկայացման: Նույն պայմանագրի 3.2.2 կետով սահմանվել է, որ ծառայությունը ամբողջովին մատուցելուց 30 բանկային օրվա ընթացքում պատվիրատուն վճարում է Կատարողին՝ հաշիվ-ապրանքագրի հիման վրա, սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը ամբողջությամբ՝ նվազեցնելով 3.2.1 կետով նախատեսված կանխավճարը **(գ.թ. 27-29):**

2) 30.11.2009 թվականին Ձեռնարկատիրոջ և «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ն իր աշխատակից փաստաբանների միջոցով թիվ ԵԿԴ/2843/02/09 և թիվ

ԵԱՔԴ/0172/02/10 քաղաքացիական գործերով կազմակերպել և իրականացրել է դատական ներկայացուցչություն **(գ.թ. 7-26):**

3) 30.11.2009 թվականի թիվ 91130017711048 վճարման հանձնարարականով Ձեռնարկատերը «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ին փոխանցել է 150.000 ՀՀ դրամ **(գ.թ. 48):**

4) Ձեռնարկատիրոջ և «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ի միջև 10.06.2011 թվականին կազմված ակտի համաձայն՝ «Մենք՝ անհատ ձեռնարկատեր Նարինե Ռոստոմյանս և «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աբրահամյանի, կազմեցինք սույն ակտն այն մասին, որ պայմանագրի համաձայն «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ն կատարել է պայմանագրով նախատեսված ծառայությունները՝ ողջ ծավալով» **(գ.թ. 31):**

5) 19.07.2011 թվականի թիվ 01 վճարման հանձնարարագրով Ձեռնարկատերը «Ակտիվ Ինվեստ» ՍՊԸ-ին փոխանցել է 2.350.000 ՀՀ դրամ **(գ.թ. 30):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում *(տես՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland), թիվ 28249/95, 2001 թվակա-*

նի հունիսի 19, կետ 52, Զ-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Z. and Others v. The United Kingdom), թիվ 29392/95, 2009 թվականի մայիսի 10, 91-93-րդ կետեր):

Սույն գործով հայցը բավարարելով՝ Դատարանը պատճառաբանել է, որ Ձեռնարկատերն իր խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար թիվ ԵԿԴ/2843/02/09 և թիվ ԵԱՔԴ/0172/02/10 քաղաքացիական գործերով կատարել է ծախսեր, այն է՝ փաստաբանի ծառայության դիմաց վճարել է 2.500.000 ՀՀ դրամ, հետևաբար որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է սահմանել 2.500.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելով, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, պատճառաբանել է, որ Ձեռնարկատերը չի օգտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված իր իրավունքից և դատական ծախսերի չլուծված մասով լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ մեկամսյա ժամկետում (մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը) դիմում չի ներկայացրել դատարան, որպիսի պարագայում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում զրկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ և 73-րդ հոդվածների հիման վրա դատական ծախսերի բռնագանձման պահանջով դատարան դիմելու հնարավորությունից:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը կիրառել է Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-2431(ՎԴ) որոշումը՝ նշելով, որ միակ բացառությունն օրենսդիրը կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատաքննության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հատուցելու պարտականություն առաջացնել և հանգել այն հետևության, որ Ձեռնարկատերը հայցադիմումով խնդրել է բռնագանձել 2.500.000 ՀՀ դրամ ոչ թե որպես պատճառված վնասի հատուցում, այլ որպես նախկինում քննված քաղաքացիական գործի շրջանակներում կատարված դատական ծախս:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, **փաստաբանի խելամիտ վարձատրության** և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասում լուծվում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախս-

սերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախ և առաջ պետք է դիտել որպես **դատական ծախս,** և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս, թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար: Եթե դատարանը, համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք զրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար 142-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով:

Հնարավոր է, որ կողմերը չներկայացնեն փաստաբանի վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց (և դրա բռնագանձման մասին պահանջ): Սակայն նրանք զրկված չեն փաստաբանի ծառայությունների համար կատարված վճարումները առանձին հայցով բռնագանձելու իրավունքից: Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով չի արգելվում դատական ծախսերը այլ՝ առանձին վարույթի շրջանակներում բռնագանձելը: Վերջինս էլ ուղղակիորեն ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրված յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված և այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտող գործողություններ կատարելու իրավունքի իրացման դրսևորումներից է:

Վերոնշյալ մեկնաբանության և սույն գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԿԴ/2843/02/09 և թիվ ԵԱՔԴ/0172/02/10 քաղաքացիական գործերով Ձեռնարկատիրոջ և Ընկերության միջև վեճերով փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը, որպես դատական ծախս, բռնագանձելու հարցը քննարկման առարկա չի դարձվել, քանի որ Ձեռնարկատերն իր պահանջի շրջանակներում չի ներառել փաստաբանի խելամիտ վարձատրության հետ կապված ծախսերը որպես դատական ծախս Ընկերությունից բռնագանձելու հարցը: Հետևաբար Ձեռնարկատերը չէր կարող մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը դիմել լրացուցիչ վճիռ կայացնելու համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածը կիրառելի չէ և չի սահմանափակում փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը բռնագանձելու համար առանձին հայցով դատարան դիմելու անձի իրավունքը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-2431(ՎԴ) որոշմանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկման առարկա պետք է դարձվի այն հարցադրումը, *թե արդյոք նշված գործի փաստական հանգամանքները նույնանման են սույն գործի փաստական հանգամանքների հետ, և դրանում առկա իրավական հիմնավորումները պարտադիր են Վերաքննիչ դատարանի համար:*

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի

Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական կամ վարչական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը *(տե՛ս «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օղու գործարան» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Սոս Բաղդասարյանի՝ բնակարանի 1/7 մասի սեփականատեր ճանաչելու և բնակարանի մասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին Վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի թիվ 3-480 (ՎԴ) որոշումը):*

Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-2431(ՎԴ) գործի փաստական հանգամանքների համաձայն՝ հայցվոր Շուշանիկ Գրիգորյանը, դիմելով դատարան, պահանջել էր բռնագանձել Արարատ Մովսիսյանից 480.000 ՀՀ դրամ (դատարանում իր շահերը ներկայացնելու համար կատարված ծախս)՝ **որպես իր դեմ ներկայացրած անհիմն հայցի հետևանքով կրած վնաս**: Շուշանիկ Գրիգորյանը պահանջը հիմնավորել էր այն հանգամանքով, որ ՀՀ տնտեսական դատարանի 27.10.2005 թվականի վճռով մերժվել էր Արարատ Մովսիսյանի հայցն ընդդեմ Շուշանիկ Գրիգորյանի՝ «Թալին-1» ՍՊԸ-ի 30.12.2002 թվականի արտահերթ ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Նշված գործով Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վնասի ինստիտուտի իրավական վերլուծությանը և արձանագրելով, որ քաղաքացիական իրավունքում վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը պայմանավորված է վնասի առաջացման և վնաս պատճառած անձի գործողությունների պատճառահետևանքային կապով, մեղքի առկայությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, նշել էր. «միակ բացառությունը օրենսդիրը կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատաքննության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հատուցելու պարտականություն առաջացնել: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հատուցման հիմք է հանդիսանում դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն պատասխանողն իրա-

վունք ունի վնասների հատուցման պահանջով դիմելու դատարան: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսգրքի 129-րդ հոդվածի հիմքով դատարանի կողմից ակնհայտ անհիմն գնահատված հայց ներկայացրած անձի դեմ վնասների հատուցման պահանջով դատարան դիմելու դեպքից զատ որևէ այլ դեպքում պատասխանողի մոտ հայցվորի նկատմամբ դատարան դիմելու հետևանքով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջի իրավունք չի առաջանում»:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-2431(ՎԴ) գործով հայցվոր Շուշանիկ Գրիգորյանն իր պահանջի հիմքում դրել էր **պատասխանողի կողմից իր դեմ ակնհայտ անհիմն հայց հարուցելու հետևանքով վնաս պատճառելու հանգամանքը**, որը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով և վերաբերում է արագացված դատաքննության ընթացքում վնասների հատուցմանը:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ Ձեռնարկատերը, դիմելով դատարան, պահանջել էր Ընկերությունից բռնագանձել փաստաբանական ծառայության համար կատարված վճարումը, **որպես դատական ծախս**, որը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ, 73-րդ հոդվածներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի և Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-2431(ՎԴ) գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները նույնական չեն, հետևաբար Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի թիվ 3-2431(ՎԴ) որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով պարտադիր և կիրառելի չէին Վերաքննիչ դատարանի համար:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.02.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

1. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1155/02/11
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/1155/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արամ Ասատրյանի ներկայացուցիչ Մոնիկա Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.06.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արամ Ասատրյանի ընդդեմ Ռիմա Գրիգորյանի, երրորդ անձ «Վ.Ի.Ա.» ՍՊԸ-ի՝ 8.500.000 ՀՀ դրամ բռնագանձելու և բռնագանձումը գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենայի վրա տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արամ Ասատրյանը պահանջել է Ռիմա Գրիգորյանից բռնագանձել 8.500.000 ՀՀ դրամ և բռնագանձումը տարածել առաջնահերթ օրենքի ուժով ծագած գրավի առարկա հանդիսացող «Ֆոլկսվագեն Տուարեգ-32» մակնիշի, նույնացման համարը՝ WVGZGZZC750051633, գույնը՝ սպիտակ, ավտոմեքենայի վրա, ինչպես նաև Ռիմա Գրիգորյանից բռնագանձել 250.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանական ծառայության վճար:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Դանիելյան) (այսուհետ՝ Դատարան) 06.04.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն, վճռվել է Ռիմա Գրիգո-

դյանից բռնագանձել 8.500.000 ՀՀ դրամ՝որպես պարտքի գումար, ինչպես նաև 250.000 ՀՀ դրամ՝որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ հայցը մնացած՝ բռնագանձումն առաջնահերթ օրենքի ուժով ծագած գրավի առարկա հանդիսացող «Ֆոլկսվագեն Տուարեգ-32» մակնիշի, նույնացման համարը՝ WVGZGZZC750051633, գույնը՝ սպիտակ, ավտոմեքենայի վրա տարածելու պահանջի մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.06.2012 թվականի որոշմամբ Արամ Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.04.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Արամ Ասատրյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձվել է 255.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար չվճարված պետական տուրք:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արամ Ասատրյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Դատարանը բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելը չի համարել հայցագին ունեցող գույքային պահանջ և Արամ Ասատրյանից չի բռնագանձել նշված գույքի արժեքի երկու տոկոսը, նույն հարցի վերաբերյալ դրսևորելով հակառակ մոտեցում՝ համարել է, որ բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու վերաբերյալ պահանջից ենթակա է գանձման պետական տուրք՝ նույն գումարի երեք տոկոսի չափով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 14.06.2012 թվականի որոշումը՝ Արամ Ասատրյանից 255.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք գանձելու մասով, բեկանել և այն փոփոխել՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանի 06.04.2012 թվականի վճռով վճռվել է Ռիմա Գրիգորյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 170.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի մասով պետական տուրքի գումար (հատոր 1-ին, գ.թ.146-149):

2) Վերաքննիչ դատարանի 14.06.2012 թվականի որոշմամբ որոշվել է Արամ Ասատրյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 255.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված պետական տուրքի գումար (հատոր 2-րդ, գ.թ. 34-35):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է դատարան տրվող

հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար գանձվում է պետական տուրք՝ գույքային պահանջի գործերով վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով, իսկ նույն կետի «բ» ենթակետի համաձայն՝ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով գանձվում է պետական տուրք բազային տուրքի տասնապատիկի չափով:

Սույն գործով Դատարանը, հայցադիմումը մասնակիորեն բավարարելով և վճռելով Ռիմա Գրիգորյանից բռնագանձել 8.500.000 ՀՀ դրամ՝որպես պարտքի գումար, ինչպես նաև 250.000 ՀՀ դրամ՝որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ հայցը մնացած մասով մերժելով, հաշվի է առել այն հանգամանքը, որ Արամ Ասատրյանը հայցադիմում ներկայացնելիս վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, իսկ հայցի հիմքն ու առարկան փոփոխելուց հետո հայցագինը կազմել է 8.500.000 ՀՀ դրամ, գտել է, որ հայցապահանջը մասնակի բավարարելու պայմաններում Ռիմա Գրիգորյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման 170.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի մասով պետական տուրքի գումար:

Վերաքննիչ դատարանը, Արամ Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ բողոք բերող անձը չի հիմնավորել այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքված պայմանագիրն ապառիկ առուվաճառքի պայմանագիր է, և որոշել է Արամ Ասատրյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 255.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված պետական տուրքի գումար:

Փաստորեն, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, որոշելով Արամ Ասատրյանից որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված չվճարված պետական տուրք բռնագանձել 255.000 ՀՀ դրամ, բռնագանձումն առաջնահերթ օրենքի ուժով ծագած գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենայի վրա տարածելու հայցապահանջը համարել է գույքային պահանջ:

Վերը նշվածից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Արամ Ասատրյանի կողմից մեկ հայցադիմումով ներկայացվել է երկու պահանջ՝ 8.500.000 ՀՀ դրամ՝որպես պարտքի գումար, բռնագանձելու **գույքային պահանջ** և բռնագանձումն առաջնահերթ օրենքի ուժով ծագած գրավի առարկա հանդիսացող «Ֆոլկսվագեն Տուարեգ-32» մակնիշի ավտոմեքենայի վրա տարածելու **ոչ գույքային պահանջ**:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը, ելնելով հայցապահանջների գույքային կամ ոչ գույքային բնույթից, տարբերակում է վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում գանձվող պետական տուրքի երկու եղանակ՝ պարզ՝ ոչ գույքային բնույթի հայցապահանջների համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով, և համեմատական՝գույքային պահանջի գործերով վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավա-

րարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ Ասատրյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի վճռի՝ բռնագանձումն ավտոմեքենայի վրա տարածելու մասով հայցը մերժելու մասի վերաբերյալ, այսինքն՝ վճիռը բողոքարկել է ոչ գույքային բնույթի պահանջը մերժելու մասով, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառելի է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, այն է՝ Արամ Ասատրյանից ՀՀ պետական բյուջեի օգտին ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ գումար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը մասնակիորեն փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.06.2012 թվականի որոշման՝ Արամ Ասատրյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի 255.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված պետական տուրքի գումար բռնագանձելու մասը, և այդ մասով այն փոփոխել՝ Արամ Ասատրյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված պետական տուրքի գումար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3051/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3051/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25–ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի (այսուհետ՝ Կոոպերատիվ) ներկայացուցիչ Ռոմեն Ահարոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.07.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կոոպերատիվի ընդդեմ «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Համալսարան), երրորդ անձինք «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), «Սալմագ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-8/11» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի 18.11.2011 թվականի արձանագրությունը և 22.11.2011 թվականի պայմանագիր կնքելու որոշումը 2-րդ չափաբաժնի մասով անվավեր ճանաչելու և Կոոպերատիվի հայտը 2-րդ չափաբաժնի մասով որակավորման չափանիշներին բավարարող համարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոոպերատիվը պահանջել է անվավեր ճանաչել «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-8/11» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի 18.11.2011 թվականի արձանագրությունը և 22.11.2011 թվականի պայմանագիր կնքելու որոշումը 2-րդ չափաբաժնի մասով և Կոոպերատիվի հայտը 2-րդ չափաբաժնի մասով համարել որակավոր-

ման չափանիշներին բավարարող:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.05.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.07.2012 թվականի որոշմամբ Կոոպերատիվի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.05.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոոպերատիվի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համալսարանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 220-221-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը 13.04.2012 թվականին սույն քաղաքացիական գործի քննությունը հայտարարել է ավարտված և նշանակել է վճռի հրապարակման օր՝ 27.04.2012 թվականը:

27.04.2012 թվականին դատական նիստը հայտարարվել է բացված, սակայն վճռի հրապարակման փոխարեն Դատարանը հրապարակել է գործի քննությունը վերսկսելու մասին որոշում և միայն պատասխանողի ներկայացուցչի մասնակցությամբ ավարտել է դատաքննությունը և վճռի հրապարակման օր հայտարարել 10.05.2012 թվականը՝ ժամը 11:00-ին:

Դատարանը, վերսկսելով գործի քննությունը, այդ որոշումը հրապարակել է 27.04.2012 թվականին, սակայն գործի քննությունը վերսկսելու մասին չի ծանուցել հայցվորին և նրա ներկայացուցչին, որպիսի պայմաններում էլ հայցվորի, ինչպես նաև երրորդ անձանց բացակայությամբ իրականացրել է դատաքննություն և ավարտել գործի քննությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կողմերը պատշաճ չեն տեղեկացվել գործի քննությունը վերսկսելու մասին և գործի քննությանը մասնակից չդառնալու հետևանքով Կոոպերատիվի ներկայացուցիչը զրկված է եղել լրացուցիչ հետազոտված ապացույցների վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից: Փաստորեն՝ Կոոպերատիվը զրկվել է իր դատավարական իրավունքներից օգտվելու և դատավարական պարտականությունները կատարելու հնարավորությունից, որի արդյունքում խախտվել է հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.07.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքի պատճառաբանություններն անհիմն են, վճռաբեկ բողոքը են-

թակա է մերժման, քանի որ վճռաբեկ բողոքը կազմվել է՝ հենվելով բացառապես այն հանգամանքի վրա, որ Դատարանը գործի քննությունը վերսկսել է, սակայն այդ մասին կողմերին չի ծանուցել: Մինչդեռ, Դատարանը գործի քննությունը վերսկսել է դատական ակտի հրապարակման փոխարեն, իսկ դատական ակտի հրապարակման օրվա վերաբերյալ Կոոպերատիվը պատշաճ ձևով ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել: Տվյալ դեպքում Դատարանը գործի քննությունը վերսկսել է մինչ այդ քննարկված հանգամանքների վերաբերյալ պատասխանողի կողմից հնչեցված դիրքորոշումը հստակեցնելու նպատակով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 13.04.2012 թվականի դատական նիստում Դատարանը թիվ ԵԿԴ/3051/02/11 քաղաքացիական գործի քննությունը հայտարարել է ավարտված և վճռի հրապարակման օր է հայտարարել 27.04.2012 թվականը (հատոր 1, գ.թ. 180-194):

2) 27.04.2012 թվականին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով Դատարանը, վճիռ կայացնելիս անհրաժեշտ համարելով լրացուցիչ հետազոտել ապացույցները կամ շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, վերսկսել է գործի քննությունը, նույն օրն ավարտել է դատական նիստը և հայտարարել է վճռի հրապարակման օր՝ 10.05.2012 թվականի ժամը 11:00-ն (հատոր 1, գ.թ. 180-194):

3) 27.04.2012 թվականին վերսկսված գործի քննության մասին Կոոպերատիվը չի տեղեկացվել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Նույն օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանվում է գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները, որի 1-ին կետի 3-րդ ենթակետը սահմանում է գործին մասնակցող անձանց ***ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու***, իսկ 5-րդ ենթակետը՝ գործին մասնակցող անձանց՝ ***գործի քննության***

ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ իրենց փաստարկները ներկայացնելու իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննությունը տեղի է ունենում դատական նիստում, որի մասին պարտադիր կարգով տեղեկացվում են գործին մասնակցող անձինք և դատավարության այլ մասնակիցները:

Նույն օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը **գործը քննել է** գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին:

Վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Իսկ քաղաքացիական դատավարությունում գործին մասնակցող անձանց կողմից ***ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու***, ինչպես նաև գործի ***քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ իրենց փաստարկները ներկայացնելու*** իրավունքը մրցակցության սկզբունքի կարևորագույն տարրերից են: Հետևաբար, դատարանի կողմից պատշաճ ձևով չտեղեկացված գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ գործը քննելը հանդիսանում է մրցակցության և իրավահավասարության սկզբունքների անմիջական խախտում և վճռի բեկանման անվերապահ հիմք է:

Վճռաբեկ դատարանը իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի իրավական վերլուծությանը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում *(տես՝ Մնկերլ ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, Գյումրու քաղաքապետի հայցն ընդդեմ «Զապ» ՍՊԸ-ի՝ սեփականատիրոջ իրավունքների խախտումները վերացնելու պահանջի մասին և «Զապ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի՝ հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 31.10.2008 թվականի թիվ ԾԴ/0351/02/08 որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ թեև Դատարանը 13.04.2012 թվականին գործի քննությունը հայտարարել է ավատրված և վճռի հրապարակման օր է նշանակել 27.04.2012 թվականը, սակայն նշված օրը Դատարանը որոշում է կայացրել գործի քննությունը վերսկսելու մասին, նույն օրն ավարտել է գործի քննությունը և վճռի հրապարակման օր է հայտարարել 10.05.2012 թվականը՝ ժամը 11:00-ն: Սույն գործում չկա որևէ ապացույց Դատարանի կողմից 27.04.2012 թվականին վերսկսված գործի քննության վերաբերյալ Կոոպերատիվին պատշաճ ծանուցելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոոպերատիվը զրկված է եղել վերսկսված քաղաքացիական գործի քննությանը մասնակցելու հնարավորությունից, որի արդյունքում խախտվել են ինչպես կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, այդ թվում՝ Կոոպերատիվի՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ ապացույցների հետազոտմանը մասնակցելու և քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ իր փաստարկները ներկայացնելու իրավունքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.07.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0462/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Կ. Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0462/02/08**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.02.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների ընդդեմ Սիրանուշ Փիլոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին և Սիրանուշ Փիլոյանի հայցի ընդդեմ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ Երևանի քաղաքապետարանի՝ բնակարանից բաժինը ընեղենով առանձնացնելու, դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանները պահանջել են բռնագանձել Սիրանուշ Փիլոյանից 23.300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 790.520 ՀՀ դրամի 1/3 մասը՝ որպես ժառանգության հետ կապված ծախսերի հատուցում:

Դիմելով դատարան՝ Սիրանուշ Փիլոյանը պահանջել է Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51-րդ շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանից բնեղենով առանձնացնել իրեն պատկանող 1/3 մասը, դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության

մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 02.04.2008 թվականի որոշմամբ նշված գործերը միացվել են մեկ վարույթում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 30.07.2009 թվականի վճռով Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների հայցը մերժվել է, իսկ Սիրանուշ Փիլոյանի հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2009 թվականի որոշմամբ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 30.07.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.03.2010 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2009 թվականի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 14.11.2011 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է այն պատճառաբանությամբ, որ գործի դատաքննության ընթացքում հայցվոր Սիրանուշ Փիլոյանի ներկայացուցիչ Սեդա Գասպարյանը, ինչպես նաև հայցվորներ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանները հրաժարվել են իրենց ներկայացրած հայցերից:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.02.2012 թվականի որոշմամբ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.11.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Յուրիկ և Աղունիկ Փիլոյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սիրանուշ Փիլոյանը և նրա ներկայացուցիչ Սեդա Գասպարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 3-րդ կետը, 12-րդ հոդվածը, 47-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 109-րդ հոդվածի 6-րդ կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ բողոք բերած անձինք իրենց ներկայացրած հայցից հրաժարվել են միայն Սիրանուշ Փիլոյանի կողմից վիճելի տան 1/3 մասից հրաժարվելու պայմանով: Ընդ որում, գործի դատաքննության ընթացքում Սիրանուշ Փիլոյանի ներկայացուցիչ Սեդա Գասպարյանը հստակ հայտարարել է, որ հրաժարվում է ոչ միայն հայցապահանջից, այլև վիճելի տան 1/3 բաժնից, որպիսի հանգամանքն է միայն վճռորոշ նշանակություն ունեցել բողոք բերած անձանց համար հայցից հրաժարվելու հարցում և առաջնորդել նրանց գործողությունները: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն առանց լսելու դատական նիստի ձայնագրառումը՝ հիմք է ընդունել Վերաքննիչ դատարանում Սեդա Գասպարյանի տված այն ցուցմունքը, թե իբր բնակարանից հրաժարվելու մասին խոսք չի եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 23.02.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

31.10.2011 թվականի դատական նիստում Սեդա Գասպարյանն իր լիազորությունների շրջանակում համապատասխան մեկնաբանությունների և փաստարկների վկայակոչմամբ հրաժարվել է հայցից, Յուրիկ և Աղունիկ Փիլոյանները՝ իրենց հայցից, իսկ ժառանգական գույքի 1/3 բաժնից հրաժարվելու վերաբերյալ փաստարկը բողոք բերած անձանց երևակայության արդյունքն է:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 20.03.2006 թվականի թիվ 2011385 և 31.10.2006 թվականի թիվ 2237092 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականների համաձայն՝ Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51-րդ շենքի թիվ 2 հասցեում գտնվող 59.0 քմ և 40.0 քմ մակերեսներով բնակարանների նկատմամբ 01.03.2004 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3348 վկայագրի հիման վրա գրանցվել է Յուրիկ, Աղունիկ և Սիրանուշ Փիլոյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրին 1/3 բաժին **(հատոր 2-րդ, գ.թ. 11-18):**

2) Գործի դատաքննության 31.10.2011 թվականի դատական նիստի ձայնային արձանագրման համաձայն՝ Սիրանուշ Փիլոյանի ներկայացուցիչ Սեդա Գասպարյանը հայցից հրաժարվելիս հայտարարել է, որ «Վճռաբեկ դատարանի կողմից հիմնավորված վճարվելիք գումարների 1/3 մասը…թող դրվի ժառանգական գույքի վրա», իսկ նախագահող դատավորի այն հարցին, թե «այսինքն՝ հանվի ժառանգական գույքի արժեքից», պատասխանել է, որ «այո, այսինքն՝ մենք լրիվ, լրիվ հրաժարվում ենք, նվիրում եմ նրանց և վերջ»: Դրան հաջորդել է Աղունիկ Փիլոյանի հայտարարությունը. «եթե 1/3 բաժնից հրաժարվում է, ապա գումարի պահանջի մասին այլևս խոսք չկա, քանի որ այդ բաժինը կվաճառվի, և այդ գումարները կվճարվեն»: Այնուհետև նախագահող դատավորը Յուրիկ և Աղունիկ Փիլոյաններին հարցրել է, թե պնդում են իրենց պահանջը, որին ի պատասխան Աղունիկ Փիլոյանը նշել է. «դե, եթե ինքը տարածքից հրաժարվում է», նախագահող դատավորն արձագանքել է. «դե, եթե չկա, տիկին Փիլոյան, ասում է, որ հրաժարվում է»: Դրանից հետո Յուրիկ և Աղունիկ Փիլոյանները հայտարարել են, որ հրաժարվում են իրենց պահանջից՝ Աղունիկ Փիլոյանը միաժամանակ հավելելով. «բայց հետո մնալու է իմ թոռնիկներին, նվիրատվություն ենք անելու»: Սեդա Գասպարյանը որևէ կերպ չի արձագանքել իր կողմից անշարժ գույքի 1/3 բաժնից հրաժարվելու հայտարարության կապակցությամբ Յուրիկ, Աղունիկ Փիլոյանների դիրքորոշումներին և նախագահող դատավորի պարզաբանումներին **(հատոր 8-րդ, գ.թ. 126-128):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ իրավունքի պաշտպանության տնօրինման եղանակներից հայցից հրաժարվելու ինստիտուտին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հա-

մաձայն՝ …. Հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգքրի 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը կարձում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգքրի 110-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթի կարձման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեձի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում:

Վձռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութահիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից **անվերապահորեն, առանց որևէ պայմանի** հրաժարումն է: Հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով: Դատարանը չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատձառների գնահատմանը, սակայն պարտավոր է հայցվորին պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից:

Սույն գործի վարույթը կարձելիս Դատարանը պատձառաբանել է, որ դատաքննության ընթացքում՝ 31.10.2011 թվականին նշանակված դատական նիստում, Սիրանուշ Փիլոյանի ներկայացուցիչ Սեդա Գասպարյանը հայտնել է, որ իրենք ամբողջությամբ հրաժարվում են ներկայացրած բոլոր հայցապահանջներից, իսկ Աղունիկ և Յուրիկ Փիլոյանները հայտնել են, որ Սիրանուշ Փիլոյանի կողմից հայցից հրաժարվելու պարագայում իրենք նույնպես պահանջներ չունեն, ուստի ևս հրաժարվում են հայցից:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վձիռը, նշել է, որ Սիրանուշ Փիլոյանի ներկայացուցիչ Սեդա Գասպարյանը 31.10.2011 թվականի դատական նիստի ժամանակ բանավոր հայտարարել է, որ հրաժարվում է իր հայցապահանջից, այլ ոչ թե ժառանգության 1/3 բաժնից, ինչը վեձի առարկա չէ: Հետևաբար, անհիմն է բողոք բերած անձանց այն փաստարկը, որ իրենք հայցից հրաժարվել են միայն այն պայմանով, որ Սիրանուշ Փիլոյանը հրաժարվել է ժառանգության 1/3 բաժնից:

Մինչդեռ գործի դատաքննության 31.10.2011 թվականի դատական նիստի ձայնային արձանագրման ուսումնասիրության արդյունքում Վձռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձինք իրենց հայցապահանջից հրաժարվելու նպատակ չեն ունեցել, և դատական նիստում այդ հայեցողական իրավունքից օգտվել են միայն այն բանից հետո, երբ համոզվել են Սիրանուշ Փիլոյանի կողմից վիձելի անշարժ գույքի 1/3 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրություն չունենալու հարցում: Մինչդեռ Դատարանն անտեսել է բողոք բերած անձանց առաջադրած հայցից հրաժարվելու պայմանը և չպարզաբանելով վերապահումով հայցից հրաժարվելու անթույլատրելիությունը՝ ընդունել է հայցից հրաժարումը: Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին անհիմն կերպով արձանագրել է, որ բողոք բերած անձանց կողմից հայցից հրաժարումը պայմանավորված չի եղել Սիրանուշ Փիլոյանի կողմից վիձելի անշարժ գույքի 1/3 բաժնի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքից հրաժարվելով:

Վձռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից իր դատավարական իրավունքների իրացման տնօրինչական գործողություն է, որով

վերջինս անվերապահ հրաժարվում է իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունից և ուղղված է իր նախաձեռնությամբ հարուցված գործի վարույթի դադարեցմանը: Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցից հրաժարումը բողոք բերած անձանց իրական կամքի խաթարման արդյունք է, նրանց կամքն ամենևին էլ ուղղված չի եղել պարզապես հայցից հրաժարվելուն, քանի որ նրանք այդ տնօրինչական իրավունքն իրացրել են՝ հաստատապես համոզված լինելով, որ Սիրանուշ Փիլոյանը հրաժարվում է վիճելի անշարժ գույքի 1/3 բաժնի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքից և հայցից հրաժարման հիմքում բացառապես դրել են վերոհիշյալ պայմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, գործի դատաքննության ընթացքում բողոք բերած անձանց կողմից հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելով, իսկ Վերաքննիչ դատարանը, նշված դատական ակտի այդ մասն օրինական ուժի մեջ թողնելով, հաշվի չեն առել, որ տվյալ դեպքում բողոք բերած անձինք հայցից հրաժարվել են վերապահումով, ինչը չպետք է ընդունվեր: Արդյունքում, Սիրանուշ Փիլոյանը կորցրել է սույն գործով ներկայացրած հայցապահանջով կրկին անգամ դատարան դիմելու հնարավորությունը, սակայն ժառանգական գույքի նկատմամբ պահպանել է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, մինչդեռ բողոք բերած անձինք ընդհանրապես զրկվել են գումարի բռնագանձման պահանջով դատական պաշտպանություն հայցելու իրավունքից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է համարում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննությունը պետք է իրականացվի միայն Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների հայցի մասով, քանի որ Սիրանուշ Փիլոյանի հայցի մասով Դատարանի 14.11.2011 թվականի վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.02.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԾԴ/1216/02/10
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԾԴ/1216/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռոբերտ, Օֆելյա, Գևորգ Սվազյանների և Հայկանուշ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հենրիկ Սվազյանի (իրավահաջորդներ՝ Սուսաննա և Հենրիխ Սվազյաններ) ընդդեմ Ռոբերտ, Օֆելյա, Գևորգ Սվազյանների, Հայկանուշ Խաչատրյանի՝ վտարման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հենրիկ Սվազյանը պահանջել է Ռոբերտ, Օֆելյա, Գևորգ Սվազյաններին, Հայկանուշ Խաչատրյանին վտարել Երևանի Շիրակի 4-րդ նրբանցքի 6-րդ շենքի թիվ 3 բնակարանից:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ի. Բարսեղյան) (այսուհետ՝ Դատարան) 17.12.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2011 թվականի որոշմամբ Հենրիկ Սվազյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել և փոփոխվել է Դատարանի 17.12.2010 թվականի վճիռը, և հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ռոբերտ, Օֆելյա, Գևորգ Սվազյանները և Հայկանուշ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հենրիկ Սվազյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ռոբերտ Սվազյանը հոր՝ Հենրիկ Սվազյանի հետ միասին հանդիսացել է նույն՝ առաջին հերթի ժառանգ, որոնք 29.05.1994 թվականին մահացած Օֆելյա Կարապետյանի ժառանգներն են:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ռոբերտ Սվազյանի ներկայացուցիչը վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Ռոբերտ Սվազյանն ըստ օրենքի ժառանգ է, և ժառանգությունը ձևակերպելու համար փաստաթղթերը գտնվում են նոտարական գրասենյակում, սակայն իր կամքից անկախ պատճառներով չի հասցրել ստանալ ըստ օրենքի ժառանգության վկայագիր:

Միաժամանակ Ռոբերտ Սվազյանը միջնորդել է կասեցնել գործի վարույթը, քանի որ նույն անձանց միջև Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում առկա է մեկ այլ վեճ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը մերժել է միջնորդությունը:

2. Գործով առկա է նոր երևան եկած հանգամանք:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկով.

Ռոբերտ Սվազյանը 16.03.2011 թվականին ստացել է ըստ օրենքի ժառանգության վկայագիր, իսկ 21.03.2011 թվականին ստացել է 18.03.2011 թվականին կազմված անշարժ գույքի սեփականության վկայականը, որի համաձայն՝ Ռոբերտ Սվազյանը հանդիսանում է վիճելի բնակարանի համասեփականատեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 18.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չի տվել, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա: Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ առկա է նոր երևան եկած հանգամանք, ապա հարկ է նշել, որ նոր երևան եկած հանգամանքի հիմքով բողոք կարող է բերվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ, իսկ տվյալ դեպքում բողոքարկվող դատական ակտն օրինական ուժի մեջ մտած չէ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.03.2007 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2318486 վկայականի համաձայն՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-011-4-Շ-21 մատյանի թիվ 0036 համարի տակ Երևանի Շիրակի 4-րդ նրբանցքի 6-րդ շենքի թիվ 3 բնակարանի նկատմամբ գրանցվել է Հենրիկ Սվազյանի սեփականության իրավունքը **(գ.թ. 8-11)**:

2) 04.03.2011 թվականի դատական նիստի ընթացքում Ռոբերտ Սվազյանի ներ-

կայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան և պատճառաբանելով, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ԵՇԴ/1448/02/10 քաղաքացիական գործն ըստ հայցի Ռոբերտ Սվազյանի, երրորդ անձինք Օֆելյա, Գևորգ Սվազյանների և Հայկանուշ Խաչատրյանի ընդդեմ Հենրիկ Սվազյանի՝ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, խնդրել է կասեցնել սույն գործի վարույթը (գ. թ. 103):

3) 29.09.2011 թվականի թիվ ԱՌ 077427 մահվան վկայականի համաձայն՝ Հենրիկ Սվազյանը մահացել է 29.09.2011 թվականին:

4) 25.04.2012 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ 29.09.2011 թվականին մահացած Հենրիկ Սվազյանի գույքի նկատմամբ ժառանգներ են Սուսաննա և Հենրիխ Սվազյանները:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1. վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու հիմքին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, դրանք են սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարությունների կարգով քննվող այլ գործի առկայությունը և տվյալ գործի քննության անհնարինությունը մինչև նշված դատավարությունների կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Դա պայմանավորված է այն հանգամանքներով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար ունեն նշանակություն, և տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում (*տես Գայանե Ասլանյանն ընդդեմ Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյանների և Մարիամ Սրեփյանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին թիվ ԵԱՔԴ/0169/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը*):

Սույն գործով հայցվորը պահանջել է Ռոբերտ, Օֆելյա, Գևորգ Սվազյաններին, Հայկանուշ Խաչատրյանին վտարել Երևանի Շիրակի 4-րդ նրբանցքի 6-րդ շենքի թիվ 3 բնակարանից: 04.03.2011 թվականի դատական նիստի ընթացքում Ռոբերտ Սվազյանի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան և պատճառաբանել, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ԵՇԴ/1448/02/10 քաղաքացիական գործն ըստ հայցի Ռոբերտ Սվազյանի, երրորդ անձինք Օֆելյա, Գևորգ Սվազյանների և Հայկանուշ Խաչատրյանի ընդդեմ Հենրիկ Սվազյանի՝ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, և խնդրել է կասեցնել սույն գործի վարույթը:

Վերաքննիչ դատարանի կողմից միջնորդությունը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից միջնորդության մերժումն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵՇԴ/1448/02/10 քաղաքացիական գործը սույն գործի քննության համար առաջացնում է անհնարինություն, քանի որ նշված գործով քննվում է Ռոբերտ Սվազյանի՝ վեճի առարկա գույքի սեփականատեր լինելու հանգամանքը, որպիսի փաստի հաստատումը սույն գործի լուծման համար ունի էական նշանակություն: Հետևաբար Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կասեցնել սույն գործի վարույթը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի խախտումը հանգեցրել է գործի սխալ լուծման: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, իսկ գործը պետք է ուղարկվի Դատարան՝ նոր քննության:

Հիմք ընդունելով սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, որը բավարար հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին չի անդրադառնում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/0407/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Ն. Հովսեփյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ/0407/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արմենտել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Գարիկ Խաչատրյանի՝ 73.282 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Գարիկ Խաչատրյանից բռնագանձել 71.782 ՀՀ դրամ պարտքի գումարը և 1.500 ՀՀ դրամ վճարված պետական տուրքի գումարը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Ենոքյան) (այսուհետ՝ Դատարան) 12.08.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.11.2011 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.08.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր և խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել համակցության մեջ և անտեսել է այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքված պատվեր-դիմումի հիման վրա Գարիկ Խաչատրյանին փաստացի մատուցվել է հեռախոսակապի վճարովի ծառայություններ:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Ընկերության կողմից Դատարան է ներկայացվել հայցվող գումարի գոյացման հիմքը հիմնավորող ապացույցները, այն է՝ բաժանորդին ներկայացվող ծառայությունների մատուցման հաշիվը, որն իր մեջ ներառում է ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հաշվարկը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.11.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության և Գարիկ Խաչատրյանի միջև 08.05.2009 թվականին կնքված թիվ 114344861 պատվեր-դիմումի համաձայն՝ Գարիկ Խաչատրյանին տրամադրվել է 099 04-52-51 և 091 04-52-51 հեռախոսահամարները: Գարիկ Խաչատրյանի կողմից ստորագրվել է պատվեր-դիմումը, որով հաստատվել են վերջինիս կողմից Ընկերության GSM շարժական կապի հետվճարային համակարգի բաժանորդ դառնալու և ««ԱրմենՏել» ՓԲԸ GSM շարժական կապի հետվճարային համակարգի ծառայությունների մատուցման կանոնների» մասին իրազեկ լինելու վերաբերյալ փաստերը (գ.թ. 5-6):

2. Ընկերության GSM շարժական կապի հետվճարային համակարգի ծառայությունների մատուցման պայմանների 5.1-ին կետի համաձայն՝ վճարումները բաժանորդի կողմից կատարվում են հաշվետու ժամանակաշրջանում իրեն մատուցված փաստացի ծառայությունների դիմաց՝ համաձայն նույն պայմաններում սահմանված պայմանների, բաժանորդի կողմից ընտրված սակագնային պլանի, օգտագործած ծառայությունների ցանկի և ծավալների, եթե այլ բան չի սահմանված Ընկերության (այսուհետ՝ նաև Օպերատոր) կողմից, հաշվետու ժամանակաշրջանը հավասար է օրացուցային ամսվան: Պայմանների 5.2-րդ կետի համաձայն՝ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա և նշվում է բաժանորդին ներկայացվող ծառայությունների մատուցման հաշվում: Ծառայությունների մատուցման հաշիվը հանդիսանում է բաժանորդին՝ ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ ապացույց (գ.թ. 5):

3. Ծառայությունների մատուցման թիվ 101023583105, թիվ 101022792862, թիվ

101022006919, թիվ 101021342908, թիվ 101023583046, թիվ 101022792821, թիվ 101022006868 և թիվ 101021342893 հաշիվների համաձայն՝ համապատասխանաբար 01.10.2009 թվականից մինչև 31.10.2009 թվականը, 01.09.2009 թվականից մինչև 30.09.2009 թվականը, 01.08.2009 թվականից մինչև 31.08.2009 թվականը, 01.07.2009 թվականից մինչև 31.07.2009 թվականը, 01.10.2009 թվականից մինչև 31.10.2009 թվականը, 01.09.2009 թվականից մինչև 30.09.2009 թվականը, 01.08.2009 թվականից մինչև 31.08.2009 թվականը և 01.07.2009 թվականից մինչև 31.07.2009 թվականն ընկած ժամանակահատվածների համար մատուցված ծառայություններից գոյացել է պարտք 71.781,77 ՀՀ դրամ, որպիսի հաշվարկներն իրականացվել են փաստացի մատուցված ծառայությունների՝ ամսական ծառայությունների վարձի, զանգերի վարձի, կարճ հաղորդագրությունների վճարի հիման վրա (գ.թ. 12-35):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է կողմերի միջև ապացուցման դատավարական բեռի բաշխման հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը *(տե՛ս ըստ հայցի Էդգար Մարկոսյանի և Ջարուհի Գևորգյանի ընդդեմ Սեդա Սարգսյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.02.2009 թվականի թիվ ԵՄՆԴ/0479/02/08 որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Վերաքննիչ դատարանն Ընկերության վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Ընկերությունը բավարար ապացույցներ չի ներկայացրել հիմնավորելու իր վկայակոչած փաստն այն մասին, որ Գարիկ Խաչատրյանին մատուցվել են հենց վկայակոչած ծավալի ծառայություններ, որոնց մասով պարտավորությունը չկատարելու արդյունքում նրա պարտքը կազմել է 71.781,77 ՀՀ դրամ, ինչպես նաև չի ներկայացրել այդ պարտքի գոյացման հիմքերը հիմնավորող բավարար ապացույցներ:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Գարիկ Խաչատրյանի միջև 08.05.2009 թվականին կնքված թիվ 114344861 պատվեր-դիմումի (պայմանագիր) հիման վրա Գարիկ Խաչատրյանին հատկացվել են հեռախոսահամարներ: Նշված պայմանագրի ծառայությունների մատուցման պայմանների 5.1-ին կետի համաձայն՝ վճարումները բաժանորդի կողմից կատարվում են հաշվետու ժամանակաշրջանում իրեն մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն նույն պայմաններում սահմանված պայմանների, բաժանորդի կողմից ընտրված սակագնային պլանի, օգտագործած ծառայությունների ցանկի և ծավալների, իսկ 5.2-րդ կետի համաձայն՝ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա և նշվում է բաժանորդին ներկայացվող ծառայությունների մատուցման հաշվում: **Ծառայությունների մատուցման հաշիվը բաժանորդին՝ ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ ապացույց է:**

Հիմք ընդունելով վերոգրյալը և վերլուծելով կողմերի միջև կնքված պատվեր-դիմումի (պայմանագրի) ծառայությունների մատուցման պայմանները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ թիվ 101023583105, թիվ 101022792862, թիվ 101022006919, թիվ 101021342908, թիվ 101023583046, թիվ 101022792821, թիվ 101022006868 և թիվ 101021342893 հաշիվները սույն գործով հայցը հիմնավորող թույլատրելի և բավարար ապացույց են *(տե՛ս ըստ հայցի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ընդդեմ «Էյ Ար-Այ Սի Թի» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.07.2011 թվականի թիվ ԱՎԴ1/0009/02/10 որոշումը):*

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածների խախտում՝ անտեսելով Ընկերության կողմից բաժանորդին ներկայացված **ծառայությունների մատուցման թիվ 101023583105, թիվ 101022792862, թիվ 101022006919, թիվ 101021342908, թիվ 101023583046, թիվ 101022792821, թիվ 101022006868 և թիվ 101021342893 հաշիվները:**

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2633/02/08
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2633/02/08**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Քաղաքապետարանի ընդդեմ Մարի Զիբիլյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքը՝ 8.000 ՀՀ դրամը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է անվավեր ճանաչել 02.02.2006 թվականին կնքված թիվ 293 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 14.02.2006 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը և հօգուտ Քաղաքապետարանի բռնագանձել հայց ներկայացնելու համար վճարված պետական տուրքը՝ 8.000 ՀՀ դրամը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 10.05.2012 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է՝ Մարի Չիբիլյանի մահից հետո վիճելի իրավահարաբերությամբ պայմանավորված իրավահաջորդությունը բացառվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.09.2012 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.05.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 434-րդ և 1186-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ քաղաքացու մահից հետո իրավահաջորդությունը տեղի է ունենում ժառանգման կարգով, և փոխանցվում են գույքային բովանդակություն ունեցող իրավունքներն ու պարտականությունները: Ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները՝ ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները, քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը, անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.09.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Մալաթիա-Սեբաստիա բաժնի 14.09.2011 թվականի գրությամբ հայտնվել է, որ հետախուզման արդյունքում պարզվել է, որ Մարի Չիբիլյանը մահացել է (հատոր 1, գ.թ. 81):

2) Կոմիտեի կողմից 14.02.2006 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Շամպայն գինիների գործարանի մոտ գտնվող շրջանցիկ թունել հասցեում գտնվող 300 քմ հողամասի նկատմամբ գրանցվել է Մարի Չիբիլյանի սեփականության իրավունքը՝ հիմքում դնելով 02.02.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը (հատոր 1, գ.թ. 9-12):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը

գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի շրջանակներում ներկայացված վճռաբեկ բողոքի հիմնավորվածությունը պատճառաբանելու նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին.

Արդյո՞ք առուվաճառքի պայմանագրի կողմ գնորդի մահից հետո նրա կողմից անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման վիճարկումը կարող է գնահատվել որպես անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքի վիճարկում, որի դեպքում իրավահաջորդությունը բացառվում է:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը**:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, **գույքային իրավունքները և պարտականությունները:** Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես, ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները, քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը, անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ժառանգության դեպքում տեղի է ունենում ընդհանուր իրավահաջորդություն, այսինքն՝ ժառանգին են փոխանցվում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավահաջորդության բացառման հետևյալ չորս դեպքերի.

1. ալիմենտային պարտավորություններով իրավունքների և պարտականությունների,
2. քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքի,
3. անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների,
4. այն իրավունքների ու պարտականությունների, որոնց անցումը ժառանգու-

թյամբ չի թույլատրվում նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Ընդ որում, օրենսգրքի վերոնշյալ հոդվածում թվարկված դեպքերը սպառիչ են:

Դատարանը գործի վարույթի կարճման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «սույն գործով վիճարկվում է հատուցելի այն պայմանագիրը, որի կողմը մահացած է, հետևաբար պայմանագրի շուրջ ծագած վեճի առկայությամբ պայմանավորված պատասխանողի դեմ ներկայացված պահանջի մասով իրավահաջորդությունն ինքնին բացառվում է, քանի որ գործով ոչ թե վիճարկվում է պայմանագրի հիմքով ձեռք բերված պատասխանող կողմի իրավունքը, որը ժառանգաբար կարող է փոխանցվել իրավահաջորդությամբ (նման պահանջ առկա չէ), այլև առկա է պայմանագիրը վիճարկելու հայցային պահանջ՝ ուղղված կոնկրետ պայմանագրային կողմի դեմ, հայցվորի կարծիքով՝ կոնկրետ վերջինիս կողմից դրսևորված ոչ իրավաչափ վարքագծով պայմանավորված: Հետևաբար՝ այս մասով վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը, ու գործի վարույթը վերը նշված հոդվածի 4-րդ կետի պահանջով ենթակա է կարճման»:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործում առկա ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Մալաթիա-Սեբաստիա բաժնի կողմից 14.09.2011 թվականին տրված թիվ ԵՄ-11623/03 գրության համաձայն՝ հայտնվել է, որ պատասխանողի և նրա գույքի հետախուզման արդյունքում պարզվել է, որ Մարի Չիբիլյանը մահացել է: Պատասխանողին ուղարկված ծանուցումները նույնպես հետ են վերադարձվել ծրարի վրա «հասցեատերը մահացել է» նշումով: Գործում բացակայում է նաև առուվաճառքի պայմանագրով վաճառված՝ Երևանի Շամպայն գինիների գործարանի մոտ գտնվող շրջանցիկ թունել հասցեում գտնվող 300 քմ հողամասի նկատմամբ ժառանգություն ընդունելու վերաբերյալ ապացույցները, և գտել է, որ «Դատարանը ճիշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետը, քանի որ վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը՝ հաշվի առնելով, որ հայցադիմումի հիմքում ընկած և վիճարկվող պարտավորությունը պատասխանողի անձի հետ անխզելիորեն կապված պարտավորություն է»:

Հիմնվելով վերոգրյալի վրա և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 02.02.2006 թվականին կնքված թիվ 293 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման և դրա հիման վրա այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման արդյունքում գնորդի՝ Մարի Չիբիլյանի մոտ ծագել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք՝ գույքային իրավունք, որը ներառվում է ժառանգատուի ժառանգական զանգվածում և օրենքով սահմանված կարգով փոխանցվում է ժառանգներին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման անվավերության պահանջի ներկայացմամբ վիճարկվում է անձի սեփականության իրավունքը, որն անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունք չէ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների այն պատճառաբանությունը, որ վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդություն, անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԳԴ1/0144/02/10

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ1/0144/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հարություն Պետրոսյանի վճռաբեկ բողոքը՝ ըստ հայցի Սարինե Պետրոսյանի ընդդեմ Հարություն Պետրոսյանի՝ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման պահանջի մասին, Հարություն Պետրոսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Սարինե, Գարսևան, Տարոն Պետրոսյանների, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարտունու տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի ճանաչման և սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Սարինե Պետրոսյանի հայցի ընդդեմ Հարություն Պետրոսյանի՝ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ բաժինները որոշելու և դրանից բաժին առանձնացնելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.01.2012 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սարինե Պետրոսյանը պահանջել է Հարություն Պետրոսյանի հետ համատեղ ամուսնության ընթացքում սեփականության իրավունքով ձեռք բերած «Volkswagen Passat 1.8» մակնիշի 14 LU 434 պետհամարանիշի ավտոմեքենայից և ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող 0,125 հա, 0,148 հա, 0,34 հա, 0,21

հա, 0,20 հա և 0,11 հա հողամասերից բաժինն առանձնացնել:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հարություն Պետրոսյանը պահանջել է 0,148 հա հողամասի նկատմամբ ճանաչել միայն իր սեփականության իրավունքը՝ անվավեր ճանաչելով Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը, իսկ 0,125 հա և 0,11 հա հողամասերի նկատմամբ՝ իր և Մարինե Պետրոսյանի սեփականության իրավունքը՝ անվավեր ճանաչելով Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Գործի քննության ընթացքում Մարինե Պետրոսյանը հրաժարվել է անշարժ գույքի բաժնի առանձնացման պահանջից, այնուհետև կրկին դիմելով դատարան՝ պահանջել է ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող 0,125 հա, 0,148 հա, 0,21 հա և 0,11 հա հողամասերից առանձնացնել իրեն և իր երեխաներ Գարսևան, Տարոն Պետրոսյաններին պատկանող 3/4 մասը, ինչպես նաև վերը նշված ավտոմեքենայի արժեքի 1/2 մասը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 23.02.2011 թվականի որոշմամբ նշված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (նախագահող դատավոր՝ Վ. Վարդանյան) (այսուհետ՝ Դատարան) 07.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 0,148 հա, 0,21 հա և 0,11 հա հողամասերի 3/4 մասն առանձնացնելու և «Volkswagen Passat 1.8» մակնիշի ավտոմեքենայի վաճառքից ստացված գումարի 1/2 մասը հանձնելու պահանջների մասով: Հայցի մնացած մասը և հակընդդեմ հայցը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան, դատավորներ՝ Ն. Հովսեփյան, Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.10.2011 թվականի որոշմամբ Հարություն Պետրոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.06.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.01.2012 թվականի որոշմամբ վերադարձվել է Վերաքննիչ դատարանի 27.10.2011 թվականի որոշման դեմ Հարություն Պետրոսյանի վճռաբեկ բողոքը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հարություն Պետրոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա են նոր երևան եկած հանգամանքներ:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2011 թվականի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնված ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2011 թվականի վճռով անվավեր է ճանաչվել Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող 0,148 հա հողամասի նկատմամբ, ինչպես նաև առոչինչ է ճանաչվել Հարություն, Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը նույն գյուղում գտնվող 0,125 հա և 0,11 հա տնամերձ հողամասերի նկատմամբ: Հետևաբար, օրինական ուժի մեջ մտած վերոհիշյալ վճռով հաստատված հանգամանքները սույն գործով նոր երևան եկած հանգամանքներ են, քանի որ էական նշանակություն ունեն սույն գործի լուծման համար և

գործի քննության պահին չէին կարող հայտնի լինել բողոք բերած անձին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայել Վճռաբեկ դատարանի 11.01.2012 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, 0,148 հա և 0,11 հա հողամասերը բաժանելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 27.10.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2011 թվականի վճռով անվավեր է ճանաչվել Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող 0,148 հա հողամասի նկատմամբ, իսկ նույն գյուղում գտնվող 0,125 հա և 0,11 հա տնամերձ հողամասերի նկատմամբ առոչինչ է ճանաչվել Հարություն, Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը: Նշված վճռով հաստատված են համարվել 0,148 հա հողամասի նկատմամբ Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների, իսկ 0,125 հա և 0,11 հա տնամերձ հողամասերի նկատմամբ՝ Հարություն, Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքը ծագած չլինելու հանգամանքները **(ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից)**:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2011 թվականի որոշմամբ Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.08.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Նշված որոշումը վճռաբեկության կարգով չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ **(ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանագամանքների հիմքով վերանայվում է, եթե՝

1. այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ

2. այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և

3. այդ հանգամանքները էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտել է այն դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն՝ արդյոք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա, թե՝ ոչ *(տե՛ս ըստ Մարինե Մանուկյանի դիմումի՝ նոր երևան եկած հանգա-*

մանքների հիմքով դատական ակտը վերանայելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵԿԴ/2397/02/09 որոշումը):

Սույն գործով բողոք բերած անձը որպես նոր երևան եկած հանգամանքներ է վկայակոչել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 08.08.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները:

Տվյալ վճռով անվավեր է ճանաչվել Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող **0,148 հա** հողամասի նկատմամբ, և առոչինչ է ճանաչվել Հարություն, Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը նույն գյուղում գտնվող 0,125 հա և **0,11 հա** տնամերձ հողամասերի նկատմամբ: Այսինքն՝ վերոհիշյալ վճռով ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող **0,148 հա** հողամասը դադարել է ընդհանուր սեփականություն լինելուց, իսկ **0,11 հա** հողամասի նկատմամբ կողմերի սեփականության իրավունքն ընդհանրապես դադարել է**:** Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանի 27.10.2011 թվականի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնված Դատարանի 07.06.2011 թվականի վճռով որոշվել է առանձնացնել վերը նշված 0,148 հա և 0,11 հա հողամասերի 3/4 մասերը**:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 08.08.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող 0,148 հա հողամասի նկատմամբ Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյաններին, իսկ 0,11 հա հողամասի նկատմամբ՝ Հարություն, Մարինե, Գարսևան և Տարոն Պետրոսյանների սեփականության իրավունքը ծագած չլինելու հանգամանքներն էական նշանակություն ունեն սույն գործի լուծման համար, համարվում են նոր երևան եկած հանգամանքներ և հիմք են Վճռաբեկ դատարանի 11.01.2012 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերանայելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 27.10.2011 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ, 204.32-րդ, 204.38-րդ և 240-241²-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.01.2012 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.10.2011 թվականի որոշման՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում գտնվող 0,148 հա և 0,11 հա հողամասերի բաժիններն առանձնացնելուն վերաբերող մասը և գործն այդ մասով ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.10.2011 թվականի որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի
քաղաքացիական և վարչական
պալատի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1112/02/09

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1112/02/09**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը՝ ըստ հայցի «ՍԻ ԷՅ ԱՐ ԼԻԶ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ ապահովագրական վճարի տարաժամկետ վճարման համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.05.2010 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 25.762.675 ՀՀ դրամ, ինչպես նաև տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով՝ սկսած 04.03.2009 թվականից մինչև գումարի փաստացի վճարման օրը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը կատարել ապահովագրական վճարի տարաժամկետ վճարման համաձայնագրով ստանձնած պարտավորությունները և բռնագանձել 770.962 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 07.12.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 24.577.500 ՀՀ դրամ բռնագանձելու մասով, որից 10.257.500 ՀՀ դրամը՝ որպես ապահովագրական վճարի հատուցում, 13.820.000 ՀՀ դրամը՝ որպես բաց թողնված օգուտ, 500.000 ՀՀ դրամը՝ որպես իրավաբանական ծառայության վճար, ինչպես նաև 10.257.500 ՀՀ դրամի վրա 04.03.2009 թվականից մինչև գումարի փաստացի վճարման օրը հաշվարկվել են ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով տոկոսներ: Հայցը մնացած մասով մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան, դատավորներ՝ Կ. Հակոբյան, Տ. Նազարյան) (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.03.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 07.12.2009 թվականի վճռի՝ 13.820.000 ՀՀ դրամ՝ որպես բաց թողնված օգուտ բռնագանձելու մասը, և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության: Մնացած մասով վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.05.2010 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 05.03.2010 թվականի որոշման դեմ Կազմակերպության վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա է նոր հանգամանք:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերով սահմանված պայմանները հակասում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին, Կազմակերպության 04.03.2009 թվականի թիվ 286-09 մերժումը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի պահանջներից, հետևաբար Կազմակերպությունը պարտավոր է Ընկերությանը հատուցելու MC/012997 ապահովագրության վկայագրով նախատեսված ապահովագրական վճարը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճռի նշված մասն օրինական ուժի մեջ թողնելիս ամբողջությամբ հիմնվել է Դատարանի պատճառաբանությունների և հիմնավորումների վրա՝ դրանք դիտարկելով օրինական և հիմնավորված:

ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի (2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ)՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, 14.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-975 որոշմամբ հստակ արձանագրել է, որ պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածների ուժով իրավասու են պայմանագրով նախատեսել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված ցանկացած այլ պայման, սակայն չեն կարող փոփոխել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված պայմանների բովանդակությունը, ինչպես նաև չեն կարող սահմանել ՀՀ քա-

դաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին հակասող պայման: Դրանով իսկ ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ ապահովագրական ընկերությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված՝ ապահովագրական հատուցումը նվազեցնելու և հատուցումը մերժելու վերաբերյալ ցանկացած այլ պայմանի ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված՝ պայմանագրի ազատության սահմանափակման շրջանակներում է, **եթե այդպիսի պայմանի բովանդակությունը չի փոխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմանների բովանդակությունը, և այդպիսի պայմանը չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին:**

Տվյալ դեպքում Կազմակերպության կողմից հաստատված «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերը **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերի հետ համադրելով՝ պարզ է դառնում, որ նշված կետերը չեն հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետին:**

Փաստորեն, ՀՀ դատարանների կողմից **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետին և** «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերին տրվել է ՀՀ սահմանադրական դատարանի 14.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-975 որոշմամբ ամրագրված իրավական մեկնաբանություններին հակասող մեկնաբանություն, ուստի Կազմակերպության դեմ կայացված դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է բեկանման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.03.2010 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Կազմակերպության միջև 21.07.2008 թվականին կնքված թիվ MC/012997 տրանսպորտային միջոցների ապահովագրության վկայագրի համաձայն՝ Տոյոտա LC Պրադո 2,7 I GAS մակնիշի 900 UL 67 պետհամարանիշի ավտոմեքենան ապահովագրվել է մեկ տարի ժամկետով: Նշված վկայագրի հավելյալ և անբաժանելի մասը կազմող «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերի համաձայն՝ ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե ապահովադիրը, վարորդը կամ շահառուն չեն կատարել սույն կանոններով սահմանված իրենց պարտականությունները կամ ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների խախտմամբ լքել են ՃՏՊ-ի վայրը կամ խուսափել են սահմանված կարգով անցնել հարբածության առկայության ստուգում **(հատոր 1-ին, գ.թ. 43-47)**:

2) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետաքննության բաժանմունքի 20.02.2009 թվականի եզրակացության համաձայն՝ Երևանի Բագրևանդի փողոցում 07.02.2009 թվականին ժամը 07.00-ի սահմաններում տեղի է ունեցած վթարի հետևանքով Տոյոտա LC Պրադո 2,7 I GAS մակնիշի 900 UL 67 պետհա-

մարանիշի ավտոմեքենային պատճառվել է գույքային վնաս **(հատոր 1-ին, գ.թ. 21)**:

3) Կազմակերպությունը 04.03.2009 թվականի թիվ 286-09 գրությամբ մերժել է ապահովագրական հատուցում տալու վերաբերյալ դիմումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Տոյոտա LC Պրադո 2,7 I GAS մակնիշի 900 UL 67 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդը խախտել է Կազմակերպության կողմից հաստատված կանոնների 58-րդ, 78-րդ կետերի պահանջները, այն է՝ չի կատարել նշված կանոններով սահմանված իր պարտականությունները, ինչպես նաև ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների խախտմամբ լքել է ՃՏՊ-ի վայրը և խուսափել է սահմանված կարգով անցնել հարբածության առկայության ստուգում **(հատոր 1-ին, գ.թ. 13-14)**:

4) Կազմակերպության դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի (2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ)՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը, 14.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-975 որոշմամբ որոշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով **«պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ:** Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ տեքստի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետում առկա չէ օրենքի բաց, քանի որ անկախ նրանից, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետը հղում կկատարի քաղաքացիաիրավական պայմանագրին, թե ոչ, **պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածների ուժով կարող են պայմանագրով նախատեսել օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված ցանկացած պայման այն վերապահումով, որ կողմերը չեն կարող հայեցողություն դրսևորել պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով: Ինչ վերաբերում է «Տրանսպորտային միջոցների ապահովագրության կանոնների»՝ սույն գործին առնչվող կետերին, ապա դրանցում տառացիորեն հղումը կատարվում է «ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների» խախտմանը: Նման կանոններ սահմանված են, մասնավորապես, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում, որի առանձին դրույթներ վերարտադրվել են կողմերի փոխադարձ պարտավորություններում:**

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերի բնույթին՝ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ վերը նշված կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններն իմպերատիվ պայմաններ են, որոնց պարագայում պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

437-րդ և 438-րդ հոդվածների ուժով իրավասու են պայմանագրով նախատեսել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված ցանկացած այլ պայման, սակայն չեն կարող փոփոխել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված պայմանների բովանդակությունը, ինչպես նաև չեն կարող սահմանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին հակասող պայման: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը նշել է, որ ապահովագրական ընկերությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված՝ ապահովագրական հատուցումը նվազեցնելու և հատուցումը մերժելու վերաբերյալ ցանկացած այլ պայմանի ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված՝ պայմանագրի ազատության սահմանափակման շրջանակներում է, **եթե նախ՝ այդպիսի պայմանի բովանդակությունը չի փոխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմանների բովանդակությունը, երկրորդ՝ այդպիսի պայմանը չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին (ներկայացված է վճռաբեկ բողոքին կից)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող (2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունն իրավունք ունի նվազեցնելու կամ մերժելու ապահովագրական պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

1) ապահովագրական պատահարն առաջացել է ապահովադրի կամ ապահովագրված անձի կամ շահառուի դիտավորությամբ կատարված գործողությունների հետևանքով.

2) ապահովագրական պայմանագիր կնքելիս ապահովադիրն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք.

3) ապահովադիրը հատուցում է ստացել երրորդ անձից, որը պատասխանատու է պատճառված վնասի համար այն չափով, որքանով հատուցում ստացվել է վնաս պատճառած անձից.

4) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Սույն գործով Դատարանը, ապահովագրական վճարը բռնագանձելու պահանջի մասով հայցը բավարարելիս ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, գտել

է, որ «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերով սահմանված պայմանները հակասում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին, Կազմակերպության 04.03.2009 թվականի թիվ 286-09 մերժումը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի պահանջներից, հետևաբար Կազմակերպությունը պարտավոր է Ընկերությանը հատուցելու MC/012997 ապահովագրության վկայագրով նախատեսված ապահովագրական վճարը:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճռի նշված մասը, արձանագրել է, որ Դատարանն իրավացիորեն է «Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության կանոններ»-ի 78.13-րդ, 78.14-րդ, 78.17-րդ կետերով սահմանված պայմանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին հակասող դիտել: Տվյալ դեպքում Դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքին հակասող է ճանաչել նշված կանոնների այն կետը, որը վերաբերում է կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում ապահովագրական հատուցման լրիվ կամ մասնակի մերժմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը վերադարձրել է Վերաքննիչ դատարանի որոշման դեմ Կազմակերպության վճռաբեկ բողոքը:

Կազմակերպության դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի (2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ)՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանելիության հարցը, 14.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-975 որոշմամբ որոշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով **«պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ:** Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ **պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածների ուժով կարող են պայմանագրով նախատեսել օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված ցանկացած պայման, այն վերապահումով, որ կողմերը չեն կարող հայեցողություն դրսևորել պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով: Ինչ վերաբերում է «Տրանսպորտային միջոցների ապահովագրության կանոնների»՝ սույն գործին առնչվող կետերին, ապա դրանցում տառացիորեն հղումը կատարվում է «ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների» խախտմանը: Նման կանոններ սահմանված են, մասնավորապես, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում, որի առանձին դրույթներ վերարտադրվել են կողմերի փոխադարձ պարտավորություններում:** ... ապահովագրական ընկերությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրով ՀՀ քա-

դաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով չնախատեսված՝ ապահովագրական հատուցումը նվազեցնելու և հատուցումը մերժելու վերաբերյալ ցանկացած այլ պայմանի ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված՝ պայմանագրի ազատության սահմանափակման շրջանակներում է, **եթե նախ՝ այդպիսի պայմանի բովանդակությունը չի փոխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմանների բովանդակությունը, երկրորդ՝ այդպիսի պայմանը չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 14.06.2011 թվականի թիվ ՍԴՈ-975 որոշումը նոր հանգամանք է և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.05.2010 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման վերանայման հիմք:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.05.2010 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերանայելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ, 204.33-րդ, 204.38-րդ և 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.05.2010 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.03.2010 թվականի որոշման՝ «Վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ» մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ 2-3/2004
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **2-3/2004**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երանուհի, Հասմիկ և Տիգրան Մարգարյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հրայր Ագանիկյանի ընդդեմ Ալիսա, Երանուհի և Տիգրան Մարգարյանների, Հասմիկ Աշոտի Մարգարյանի, Հասմիկ Բագրաթի Մարգարյանի՝ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հրայր Ագանիկյանը պահանջել է Ալիսա, Երանուհի, Տիգրան Մարգարյաններից, Հասմիկ Աշոտի Մարգարյանից և Հասմիկ Բագրաթի Մարգարյանից համապարտության կարգով բռնագանձել 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, ինչպես նաև 20 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) (այսուհետ՝ Դատարան) 15.03.2004 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2012 թվականի որոշմամբ Երանուհի, Հասմիկ և Տիգրան Մարգարյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.03.2004 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Երանուհի, Հասմիկ և Տիգրան Մարգարյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հրայր Ագանիկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա է նոր երևան եկած հանգամանք:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 31.01.2011 թվականի թիվ ԵՔՐԴ/0059/01/08 օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ Հրայր Ագանիկյանը շորթման եղանակով պահանջել և իրավունք է ձեռք բերել Ալիսա Մարգարյանի առանձնապես խոշոր չափերի՝ 5.742.250 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ: Հրայր Ագանիկյանը տվյալ գործով որպես ապացույցներ դատարանում ներկայացրել է կեղծված 04.09.2003 թվականի փոխառության պայմանագիրը, 17.09.2003 թվականի, 18.09.2003 թվականի և 24.12.2003 թվականի պարտավորագրերը, ինչպես նաև Ալիսա Մարգարյանը Հրայր Ագանիկյանի սպառնալիքների ներքո կեղծել է վերոնշյալ գրավոր ապացույցները, իսկ հետագայում պարզվել է, որ Երանուհի և Տիգրան Մարգարյանների, Հասմիկ Աշոտի Մարգարյանի, Հասմիկ Բագրաթի Մարգարյանի անվամբ դատական ծանուցագրերը ստացել է նրանց ընտանիքի անդամ Ալիսա Մարգարյանը ու թաքցրել է այդ փաստը նրանցից: Վերոնշյալ գործողությունները հանգեցրել են ապօրինի և չհիմնավորված դատական ակտ կայացնելուն:

Տվյալ դեպքում թիվ ԵՔՐԴ/0059/01/08 դատավճռով հաստատված փաստերը սույն գործի վերանայման համար նոր երևան եկած հանգամանքներ են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է նոր երևան եկած հանգամանքի հիմքով բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոք բերող անձինք չեն ներկայացրել որևէ ապացույց, որը հիմնավորում է այն հանգամանքը, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 31.01.2011 թվականի թիվ ԵՔՐԴ/0059/01/08 օրինական ուժի մեջ մտած դատավճիռը հանդիսանում է նոր երևան եկած հանգամանք՝ թիվ 2-3/2004 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 06.06.2012 թվականի որոշումը վերանայելու համար:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 04.09.2003 թվականին կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ Հրայր Ագանիկյանն Ալիսա Մարգարյանին տրամադրում է 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամն Ալիսա Մարգարյանը պարտավորվել է վերադարձնել մինչև 31.12.2003 թվականը, իսկ մնացած գումարը՝ մինչև 04.09.2004 թվականը (հատոր 1, գ. թ. 187),

2. 17.09.2003 թվականին կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ Հրայր Ագանիկյանն Ալիսա Մարգարյանին տրամադրում է 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ

դրամ, որից 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամն Ալիսա Մարգարյանը պարտավորվել է վերադարձնել մինչև 01.11.2003 թվականը, իսկ մնացած գումարը՝ մինչև 17.03.2004 թվականը (հատոր 1, գ. թ. 188),

3. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 31.01.2011 թվականի թիվ ԵՔՐԴ/0059/01/08 դատավճռով հաստատվել է, որ Հրայր Ագանիկյանը շորթման եղանակով պահանջել և իրավունք է ձեռք բերել Ալիսա Մարգարյանի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 5.742.250 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ, Հրայր Ագանիկյանը տվյալ գործով որպես ապացույցներ դատարանում ներկայացրել է կեղծված 04.09.2003 թվականի փոխառության պայմանագիրը, 17.09.2003 թվականի, 18.09.2003 թվականի և 24.12.2003 թվականի պարտավորագրերը, Ալիսա Մարգարյանը Հրայր Ագանիկյանի սպառնալիքների ներքո կեղծել է վերոնշյալ գրավոր ապացույցները, ինչպես նաև վերոնշյալ դատավճռով հաստատվել է, որ Երանուհի և Տիգրան Մարգարյանների, Հասմիկ Աշոտի Մարգարյանի, Հասմիկ Բագրաթի Մարգարյանի անվամբ դատական ծանուցագրերը ստացել է նրանց ընտանիքի անդամ Ալիսա Մարգարյանը ու թաքցրել է այդ փաստը նրանցից (հատոր 1, գ. թ. 58-59, 64-66)։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն։

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայվում է, եթե՝

1. այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ

2. այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և

3. այդ հանգամանքները էական նշանակություն ունեն գործի լուծման համար։

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտել է այն դիրքորոշումը, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար նոր երևան եկած հանգամանքի էական լինելը յուրաքանչյուր գործով որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզեն՝ արդյոք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա, թե ոչ *(տե՛ս ըստ Սարինե Սանուկյանի դիմումի՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը վերանայելու պահանջի մասին գործով Վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵԿԴ/2397/02/09 որոշումը)։*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակ-

տի վերանայման համար, եթե՝

1) բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ **այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց**, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը**, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.**

3) **դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գործին մասնակցող անձինք** կամ նրանց ներկայացուցիչները կամ դատավորը, գործի քննության հետ կապված, **կատարել են հանցավոր արարք**:

Սույն գործով բողոք բերած անձը որպես նոր երևան եկած հանգամանքներ է վկայակոչել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 31.01.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են **որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:**

Վճռաբեկ դատարանն արդեն անդրադարձել է դատավճռի նախադատելիության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիահիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար հետևյալ շրջանակներում.

1. կատարվել են արդյոք որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),

2. արդյո՞ք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից *(տե՛ս ըստ Կարապետ Գրաչյանի հայցի ընդդեմ Ափում Ղազազյանի՝ գումարի պահանջի մասին և ըստ Ափում Ղազազյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Կարապետ Գրաչյանի՝ գումարի պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1091(ՎԴ) որոշումը)*:

Սույն գործով դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հրայր Ագանիկյանի կողմից ներկայացված 04.09.2003 թվականին և 17.09.2003 թվականին կնքված փոխառության պայմանագրերով ու 18.09.2003, 24.12.2003 թվականի պարտավորագրերով հիմնավորվում է Հրայր Ագանիկյանի կողմից Ալիսա Մարգարյանին 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար տրամադրելու փաստը, Ալիսա Մարգարյանը հայցի դեմ չի առարկել, իսկ Երանուհի և Տիգրան Մարգարյանները, Հասմիկ Աշոտի Մարգարյանը, Հասմիկ Բագրաթի Մարգարյանը, դատական նիստի օրվա և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված լինելով, չեն ներկայացել դատական նիստին:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, իր որոշման հիմքում դրել է այն հիմնավորումը, որ բողոքաբերները չեն ներկայացրել ապացույցներ այն մասին, որ Ալիսա Մարգարյանն իրենց երբևէ չի հայտնել դատավճռով հաստատված և իրենց կողմից վկայակոչված հանգամանքների մասին, ինչպես նաև բողոքաբերները չեն ներկայացրել բավարար ապացույցներ այն մասին, որ իրենց անվամբ ձևակերպված ծանուցագրերը ստացել է Ալիսա Մարգարյանը և թաքցրել իրենցից:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 31.01.2011 թվականի թիվ ԵՔՐԴ/0059/01/08 դատավճռով հաստատված վերոգրյալ հանգամանքները սույն գործով նոր երևան եկած հանգամանք են, քանի որ նշված դատավճռով հաստատվում է, որ Հրայր Ագանիկյանը շորթման եղանակով պահանջել և իրավունք է ձեռք բերել Ալիսա Մարգարյանի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 5.742.250 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ, Հրայր Ագանիկյանը տվյալ գործով որպես ապացույցներ դատարանում ներկայացրել է կեղծված 04.09.2003 թվականի փոխառության պայմանագիրը, 17.09.2003 թվականի, 18.09.2003 թվականի և 24.12.2003 թվականի պարտավորագրերը, Ալիսա Մարգարյանը Հրայր Ագանիկյանի սպառնալիքների ներքո կեղծել է վերոնշյալ գրավոր ապացույցները, ինչպես նաև վերոնշյալ դատավճռով հաստատվել է, որ Երանուհի և Տիգրան Մարգարյանների, Հասմիկ Աշոտի Մարգարյանի, Հասմիկ Բագրաթի Մարգարյանի անվամբ դատական ծանուցագրերը ստացել է նրանց ընտանիքի անդամ Ալիսա Մարգարյանը ու թաքցրել է այդ փաստը նրանցից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ, 204.32-րդ, 204.38-րդ և 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2012 թվականի որոշումը և այն փոփոխել հետևյալ կերպ՝ բեկանել ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 15.03.2004 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2228/02/10

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2228/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գալուստ Շիրինյանի վճռաբեկ բողոքը՝ ըստ հայցի Գալուստ Շիրինյանի ընդդեմ «ՍիրԿապ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես չվճարված աշխատավարձի գումարի, վերջնահաշվարկի գումարի, որը կազմել է 328.900 ՀՀ դրամ՝ որպես չօգտագործված ամենամյա արձակուրդի գումարի բռնագանձման, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների՝ աշխատավարձը վճարելու պարտավորության խախտման պահից մինչև 01.09.2010 թվականը՝ 212.996 ՀՀ դրամ գումարի, ինչպես նաև չվճարված աշխատավարձի՝ 2.000.000 ՀՀ դրամ գումարի վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ՝ 01.09.2010 թվականից մինչև պարտավորությունը կատարելու օրը հաշվարկելու և բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.08.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գալուստ Շիրինյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես չվճարված աշխատավարձի գումար, 328.900 ՀՀ դրամ՝ որպես չօգտագործված ամենամյա արձակուրդի վերջնահաշվարկի գումար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ՝ աշխատա-

վարձը վճարելու պարտավորության խախտման պահից մինչև 01.09.2010 թվականը՝ 212.996 ՀՀ դրամ, ինչպես նաև 2.000.000 ՀՀ դրամ գումարի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ 01.09.2010 թվականից մինչև պարտավորությունը կատարելու օրը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝Ռ.Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 24.03.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.06.2011 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել և փոփոխվել է Դատարանի 24.03.2011 թվականի վճիռը, և հայցը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.08.2011 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 08.06.2011 թվականի որոշման դեմ Գալուստ Շիրինյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գալուստ Շիրինյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա է նոր հանգամանք:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Դատարանի 24.03.2011 թվականի վճիռը, հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա, իսկ տվյալ դեպքում չի հիմնավորվել Գալուստ Շիրինյանի և Ընկերության միջև ծագած աշխատանքային հարաբերությունները, քանի որ գործում բացակայել է կողմերի միջև կնքված գրավոր աշխատանքային պայմանագիր, որը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև աշխատողի կողմից որոշակի աշխատանք կատարելու և դրա դիմաց գործատուի կողմից աշխատավարձ վճարելու, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային այլ պայմանների մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը, 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշմամբ գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, սակայն արձանագրել է աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում համապատասխան ապացույցների առկայության դեպքում փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու անձի իրավունքը:

Փաստորեն, ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն գտել է, որ այդ դրույթը Վերաքննիչ դատարանի կողմից կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է նոր հանգամանքի հիմ-

քով վերանայել Վճռաբեկ դատարանի 03.08.2011 թվականի որոշումը, բեկանել Վերաքննիչ դատարանի 08.06.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.03.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Գալուստ Շիրինյանի և Ընկերության միջև գրավոր աշխատանքային պայմանագիր չի կնքվել **(հատոր 2-րդ, գ.թ. 32-38)**:

2. Դատարանը, հաստատված համարելով կողմերի միջև աշխատանքային պայմանագրի բացակայության փաստը և միաժամանակ հիմք ընդունելով այլ գրավոր ապացույցներ, հաստատված է համարել կողմերի միջև աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը և 24.03.2011 թվականի վճռով Գալուստ Շիրինյանի հայցը բավարարել է **(հատոր 1-ին, գ.թ. 129-138)**:

3. Վերաքննիչ դատարանը, արձանագրելով կողմերի միջև գրավոր աշխատանքային պայմանագրի, հետևաբար՝ նաև աշխատանքային իրավահարաբերությունների բացակայության փաստը, 08.06.2011 թվականի որոշմամբ բեկանել և փոփոխել է Դատարանի 24.03.2011 թվականի վճիռը և հայցը մերժել է **(հատոր 2-րդ, գ.թ. 32-38)**:

4. Գալուստ Շիրինյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը, 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշմամբ որոշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, սակայն միաժամանակ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի, 298-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունից հանգել է այն եզրահանգման, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրական բովանդակությունը սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը (ներկայացված է վճռաբեկ բողոքին կից):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերություններն աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված

հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքային պայմաններ:

Համաձայն նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

Սույն գործով Դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ Գալուստ Շիրինյանը մինչև 25.08.2010 թվականը գտնվելով փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ Ընկերության հետ, չի ստացել 2009 թվականի հունվար ամսից մինչև 2010 թվականի օգոստոս ամիսը ներառյալ ընկած ժամանակահատվածում սահմանված աշխատավարձը, որն ամսական 100.000 ՀՀ դրամ գումարի չափով աշխատավարձի հաշվարկով ընդհանուր կազմել է 2.000.000 ՀՀ դրամ, 24.03.2011 թվականի վճռով հայցը բավարարել է:

Վերաքննիչ դատարանը 08.06.2011 թվականի որոշմամբ բեկանել և փոփոխել է Դատարանի 24.03.2011 թվականի վճիռը և հայցը մերժել, կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը և հանգել այն հետևության, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա, իսկ տվյալ դեպքում չի հիմնավորվել Գալուստ Շիրինյանի և Ընկերության միջև ծագած աշխատանքային հարաբերությունները, քանի որ գործում բացակայել է կողմերի միջև կնքված գրավոր աշխատանքային պայմանագիր, որը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև աշխատողի կողմից որոշակի աշխատանք կատարելու և դրա դիմաց գործատուի կողմից աշխատավարձ վճարելու, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային այլ պայմանների մասին:

Վճռաբեկ դատարանը 03.08.2011 թվականի որոշմամբ վերադարձրել է Վերաքննիչ դատարանի 08.06.2011 թվականի որոշման դեմ Գալուստ Շիրինյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը:

Գալուստ Շիրինյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի ՀՀ Սահմանադրության համապատասխանելիության հարցը, 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշմամբ որոշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ միաժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի, 298-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունից հանգելով այն եզրահանգման, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունքի դատա-

կան պաշտպանության հնարավորությունը:

ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերի վերաբերելի նորմերի համադրված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ***ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը*** և հանգել այն հետևության, որ տվյալ դեպքում առկա է իրավունքի պաշտպանության խնդիր, և հարցի նկատմամբ չի կարող ձևական մոտեցում դրսևորվել:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ***յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այդ թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար***՝ պատճառաբանելով, որ սույն իրավական դիրքորոշումից շեղումը կհանգեցնի գործատուի պատասխանատվության անտեսման և աշխատողի իրավունքների ոտնահարման, քանի որ կատարած ***փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում վճարելուց հրաժարվելը նաև անձի սեփականության իրավունքի ուրնահարում է:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշումը նոր հանգամանք է և Վճռաբեկ դատարանի 03.08.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման վերանայման հիմք:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով Վճռաբեկ դատարանի 03.08.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերանայելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ, 204.33-րդ, 204.38-րդ և 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.08.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԳԴ4/0092/02/11
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ4/0092/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Համբարձում Բեգլարյանի և Արմեն Գրիգորյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Համբարձում Բեգլարյանից և Արմեն Գրիգորյանից համապարտության կարգով բռնագանձել 919.278,2 ՀՀ դրամ, որից 876.253,20 ՀՀ դրամ՝ որպես վարկի ընդհանուր պարտքի, 25.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի և 18.025 ՀՀ դրամ՝ որպես նախապես մուծված պետական տուրքի գումար, վարկի մնացորդի՝ 357.000 ՀՀ դրամի նկատմամբ տոկոսների հաշվարկը 10.02.2011 թվականից մինչև դրա փաստացի մարումը շարունակել 54% տոկոսադրույքով՝ հիմք ընդունելով 27.04.2007 թվականին կնքված թիվ Գ-39 վարկային պայմանագրի 4.3 կետով նախատեսված տոկոսադրույքը, միաժամանակ ժամկետանց տոկոսի նկատմամբ տույժերի հաշվարկը 10.02.2011 թվականից մինչև դրա փաստացի մարումը շարունակել 0,2% (յուրաքանչյուր ուշացած օրվա համար)՝ հիմք ընդունելով վարկային պայմա-

նագրի 4.4 կետը՝ բռնագանձումը տարածելով Համբարձում Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղում գտնվող 72,15 քմ ընդհանուր մակերեսով գրավի առարկա բնակարանի վրա:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Գաբրիելյան) (այսուհետ՝ Դատարան) 06.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Համբարձում Բեգլարյանից և Արմեն Գրիգորյանից համապարտության կարգով բռնագանձել 876.253,20 ՀՀ դրամ, որից վարկի գումար՝ 357.000 ՀՀ դրամ, վարկի դիմաց հաշվարկված տոկոս՝ 428.314,30 ՀՀ դրամ (որից ժամկետանց տոկոս 53.750 ՀՀ դրամ), ժամկետանց տոկոսի դիմաց հաշվարկված տույժ՝ 90.938,90 ՀՀ դրամ, ինչպես նաև 17.525,05 ՀՀ դրամ՝ որպես հայցապահանջի բավարարված չափով հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար: Վարկի մնացորդի՝ 357.000 ՀՀ դրամի նկատմամբ տոկոսների հաշվարկը 10.02.2011 թվականից մինչև դրա փաստացի մարումը շարունակել 54% տոկոսադրույքով, միաժամանակ ժամկետանց տոկոսի նկատմամբ տույժերի հաշվարկը 10.02.2011 թվականից մինչև դրա փաստացի մարումը յուրաքանչյուր ուշացած օրվա համար շարունակել 0,2% տոկոսադրույքով: Միաժամանակ վճռվել է բռնագանձումը տարածել Համբարձում Բեգլարյանին համասեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղում գտնվող 72,15 քմ ընդհանուր մակերեսով գրավի առարկա բնակարանի վրա: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.09.2011 թվականի որոշմամբ Արմեն Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.06.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 219-րդ հոդվածի 2-րդ կետը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ, 382-րդ և 441-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Արմեն Գրիգորյանը դատաքննության ժամանակ հայտնել է, որ վարկային պարտավորությունը Համբարձում Բեգլարյանի կողմից մարված է, գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքը հանված է արգելանքից և գրավադրված է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում: Նշված փաստարկների հիմնավորումները չեն ներկայացվել Դատարան օբյեկտիվ պատճառներով: Այն է՝ Դատարանում գործը քննվել է մեկ նիստով՝ առանց նախնական դատական նիստ հրավիրելու, որից հետո հրապարակվել է Դատարանի վճիռը, որի արդյունքում Արմեն Գրիգորյանը հնարավորություն չի ունեցել ձեռք բերելու և Դատարանին ներկայացնելու իր փաստարկների հիմնավորումները: Վերաքննիչ դատարանը չի ընդունել Արմեն Գրիգորյանի կողմից ներկայացված Բանկի Սևանի մասնաճյուղի 12.06.2008 թվականի տեղեկանքը և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևան տարածքային ստորաբաժանման 07.09.2011 թվականի գրությունը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ՝ անտեսել է, որ դրանք ունեն էական ու ծանրակշիռ նշանակություն քաղաքացիական գործի ճիշտ լուծման համար:

Մասնավորապես, Բանկի Սևանի մասնաճյուղի կառավարչի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գ-39 վարկային պայմանագրով պարտավորությունները 12.06.2008 թվականի դրությամբ մարված են: Տեղեկանքը տրվել է ներկայացնելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի պետական կոմիտեի Սևանի տարածքային ստորաբաժանում՝ բնակարանը կալանքից հանելու համար: Նույն տարածքային ստորաբաժանման կողմից 07.09.2011 թվականի գրությամբ նշվել է, որ 27.04.2007 թվականի թիվ Գ-39 կնքված Բանկի գրավի իրավունքը դադարել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.09.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բանկի և Համբարձում Բեգլարյանի միջև 27.04.2007 թվականին կնքված թիվ Գ-39 վարկային պայմանագրով վերջինիս տրամադրվել է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով վարկ՝ մինչև 27.04.2009 թվականը մարման ժամկետով, տարեկան 20% տոկոսադրույքով, իսկ նախատեսված ժամկետում վարկը չմարելու դեպքում, ժամկետանց վարկի նկատմամբ մինչև դրա ամբողջական մարումը սահմանվել է տարեկան 54% տոկոսադրույք, հաշվարկված տոկոսը պայմանագրով սահմանված ժամկետում չմարելու համար սահմանվել է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար ժամկետանց տոկոսագումարի 0,2%-ի չափով **(գ.թ. 11-15):**

2. Համաձայն 27.04.2007 թվականին կնքված անշարժ գույքի բնակարանի հիփոթեքի թիվ Գ-39 պայմանագրի՝ որպես Համբարձում Բեգլարյանի վարկային պարտավորության կատարման ապահովման միջոց գրավադրվել է համասեփականության իրավունքով պատկանող Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղամավան հասցեում գտնվող 72,15 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը **(գ.թ. 7-10):**

3. Բանկի և Արմեն Գրիգորյանի միջև 27.04.2007 թվականին կնքված թիվ Գ-39 երաշխավորության պայմանագրի համաձայն՝ Արմեն Գրիգորյանը համապարտ պատասխանատվություն է ստանձնել Բանկի և Համբարձում Բեգլարյանի միջև 27.04.2007 թվականին կնքված թիվ Գ-39 վարկային պայմանագրով Բանկից Համբարձում Բեգլարյանի ստացած 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով ընդհանուր պարտքը չվերադարձնելու դեպքում **(գ.թ. 16-18):**

4. Դատարանը գործը քննել է Համբարձում Բեգլարյանի բացակայությամբ մեկ նիստով, առանց նախնական դատական նիստ հրավիրելու, որից հետո հրապարակվել է Դատարանի վճիռը: Դատաքննության ժամանակ Արմեն Գրիգորյանը Դատարանին հայտնել է, որ վարկային պարտավորությունը Համբարձում Բեգլարյանի կողմից մարված է, գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքը հանված է արգելանքից և գրավադրված է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում **(գ.թ. 57-59):**

5. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևան տարածքային ստորաբաժանման ղեկավարի 07.09.2011 թվականի թիվ Ե-828 գրության համաձայն՝ 27.04.2007 թվականի թիվ Գ-39 կնքված Բանկի գրավի իրավունքը դադարել է, որի մասին վկայում է 12.06.2008 թվականին Բանկի կողմից տրված տեղեկանքը այն մասին, որ Համբարձում Բեգլարյանի Գ-39 վարկային պայմանագրով պարտավորությունները 12.06.2008 թվականի դրությամբ մարված են:

Միաժամանակ նշվել է, որ 72,15 քմ մակերեսով անշարժ գույքը հանդիսանում է «Միջազգային Բիզնես Կենտրոն» Հ/Ձ ՓԲԸ-ի սեփականությունը **(գ.թ. 105):**

6. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Սևանի մասնաճյուղի կառավարիչ Ա. Առաքելյանի 12.06.2008 թվականի տեղեկանքի համաձայն՝ 12.06.2008 թվականի դրությամբ Համբարձում Բեգլարյանը թիվ Գ-39 վարկային պայմանագրով պարտավորությունները մարել է: Տեղեկանքը տրվել է ներկայացնելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևան տարածքային ստորաբաժանում՝ գրավադրված գույքը՝ բնակարանը, կալանքից հանելու համար **(գ.թ. 106):**

7. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Սևանի մասնաճյուղի կառավարիչ Ա. Առաքելյանի 12.06.2008 թվականի տեղեկանքի և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևան տարածքային ստորաբաժանման ղեկավարի 07.09.2011 թվականի թիվ Ե-828 գրության պատճենները Արմեն Գրիգորյանի կողմից Վերաքննիչ դատարան են ներկայացվել 13.09.2011 թվականին **(գ.թ. 104-106):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը պետք է վերանայի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայելիս պետք է պարտադիր անդրադառնա վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին և հիմնավորումներին *(տես՝ Տիգրան Կիրակոսյանն ընդդեմ Վիկտոր Խոլոդնիյի՝ նուրարական վաճառքում չափազանց անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու և գնած անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2010 թվականի որոշումը)*:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել **կողմերի կամքից անկախ հանգամանքներով**, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու չէ նոր ապացույց ընդունել, բացառությամբ այն դեպքի, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ կողմերի կողմից ներկայացված նոր ապացույցը չի ներկայացվել **նրանց կամքից անկախ հանգամանքներով:** Ընդ որում, ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ առա-

ջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով նոր ապացույցը պետք է օբյեկտիվորեն առկա լինի, սակայն կողմերի կամքից անկախ պատճառներով գործի քննության ընթացքում չներկայացվի *(տես՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Պապյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ՀՔԴ3/0049/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ եթե ապացույցը առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ներկայացնելու համար արգելքներ չեն եղել, ապա այն վերաքննիչ դատարանի կողմից ընդունվել և վճռի բեկանման հիմքում դրվել չի կարող: Կողմերի կամքից անկախ ապացույցը չներկայացնելը կարող է պայմանավորված լինել օբյեկտիվ հանգամանքներով, որի արդյունքում կողմը չի կարողացել ձեռք բերել և ներկայացնել այն առաջին ատյանի դատարանում կամ դատարանի այնպիսի գործողություններով, որոնցով վերջինս անհիմն մերժել է ապացույցի կցումը գործի նյութերին կամ այն ձեռք բերելու վերաբերյալ կողմի միջնորդությունը կամ դատավարական իրավունքների խախտման պայմաններում կողմը հնարավորություն չի ունեցել դատարան ներկայացնել այդ ապացույցը:

Սույն գործով վերաքննիչ բողոքին կից որպես ապացույց ներկայացվել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Սևանի մասնաճյուղի կառավարիչ Ա. Առաքելյանի 12.06.2008 թվականի տեղեկանքի և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևան տարածքային ստորաբաժանման ղեկավարի 07.09.2011 թվականի թիվ Ե-828 գրության պատճենները, որոնցով հաստատվում է, որ Համբարձում Բեգլարյանը թիվ Գ-39 վարկային պայմանագրով Բանկի հանդեպ ունեցած իր պարտավորություններն ամբողջությամբ մարել է, որի արդյունքում գրավադրված գույքը դուրս է եկել արգելանքից: Արմեն Գրիգորյանն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ հնարավորություն չի ունեցել իր կողմից վկայակոչված փաստերն ապացուցելու գրավոր փաստաթղթերով, քանի որ Համբարձում Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող ընակելի տան կադաստրային գործը ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևան տարածքային ստորաբաժանումից քրեական գործի շրջանակներում առգրավվել է, հետևաբար կադաստրային գործի տվյալները հանդիսացել են նախաքննական գաղտնիք: Նշված ապացույցը, ըստ բողոք բերած անձի, Դատարան չի ներկայացվել իր կամքից անկախ հանգամանքներով՝ պատճառաբանելով, որ այն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևան տարածքային ստորաբաժանման կողմից ստացվել է Դատարանի վճիռը հրապարակվելուց հետո:

Վերաքննիչ դատարանը չի ընդունել նոր ապացույցը՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձը չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցները չեն ներկայացվել Արմեն Գրիգորյանի կամքից անկախ պատճառներով, քանի որ վերջինս մեկ դատական նիստի պայմաններում հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր փաստարկները հիմնավորող ապացույցներ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը գործը պետք է քններ գործը դատաքննության նախապատրաստելու փուլով հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած

փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ **գործին մասնակցող անձանց** պահանջների և **առարկությունների հիման վրա**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149[8]-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները, կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելիս դատարանը պարտավոր է կողմերի հետ քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան: Ընդ որում, **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից**:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը **նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը**: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության սկզբունքի հիման վրա: Սակայն գործը դատաքննության նախապատրաստելու վերաբերյալ նորմերը սահմանում են մրցակցային դատավարությունում դատարանի պարտականությունները: Միաժամանակ դատարանը, ղեկավարելով գործը դատաքննության նախապատրաստելու գործընթացը, պահպանում է անկախություն, օբյեկտիվություն և անաչառություն, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողություններն ուղղված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 149[8]-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանը գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո **կողմերին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները** *(տես՝ Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի՝ հաշվառումից հանելու և առանց փոխհատուցման ապօրինի գրաղեցրած տարածքից վտարելու պահանջների մասին թիվ ԵԷԴ/1637/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը)*:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի դատաքննության նախապատրաստումը սույն գործով անհրաժեշտ էր Արմեն Գրիգորյանին իր առարկությունները հիմնավորող ապացույցներ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում ամրագրված իրավահավասարության սկզբունքը սերտորեն կապված է մրցակցության սկզբունքի հետ և միայն դրա իրացման պայմաններում է հնարավոր ապահովել մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումը: Քաղաքացիական դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև արդարացի հավասարակշռության իմաստով, հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ **ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույց ներկայացնելու,** որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (*տես՝ Անկերլը ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշման 38–րդ կետ, Դոմբո Բեհեր Բ.Վ. ընդդեմ Նիդեռլանդների գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.10.1993 թվականի որոշման 33-րդ կետ, **JURIČČv. CROATIA** գործով Եվրոպական դատարանի 26.07.2011 թվականի վճիռը, կետ 72*):

Ինչ վերաբերում է նյութական իրավունքի նորմերի խախտման մասին վճռաբեկ բողոք բերած անձի պատճառաբանություններին, ապա Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում՝ գործում առկա ապացույցները և վերաքննիչ բողոքի նյութական իրավունքի խախտման հիմքերը Վերաքննիչ դատարանում քննության առարկա չդարձվելու պատճառով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2082/02/08
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2082/02/08**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռաֆիկ Նիկողոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.03.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Ռաֆիկ Նիկողոսյանի հայցի ընդդեմ Լավուրիկ Ասլանյանի, Անդրանիկ, Նարինե, Քնքուշ, Կարեն Մանուկյանների, երրորդ անձ Ֆիրդուսի Սողոյանի՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումները վերացնելու պահանջի մասին, և հակընդդեմ հայցի Անդրանիկ, Նարինե Մանուկյանների ընդդեմ Ռաֆիկ Նիկողոսյանի և Ֆիրդուսի Սողոյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռաֆիկ Նիկողոսյանը պահանջել է Երևանի Ռոստոմի փողոցի թիվ 51 հասցեում գտնվող հողամասն ու շինություններն ազատել Լավուրիկ Ասլանյանի, Անդրանիկ, Նարինե, Քնքուշ և Կարեն Մանուկյանների ապօրինի տիրապետումից և նրանց վտարել:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Անդրանիկ և Նարինե Մանուկյանները պահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը Երևանի Ռոստոմի փողոցի թիվ 51 հասցեում գտնվող 16,5 քմ մակերեսով օրինական շինության, դրանով ծանրաբեռնված հողամասի, ինչպես նաև 61,3 քմ մակերեսով ինքնակամ շինությամբ ծանրաբեռնված 28,3 քմ մակերեսով օրինական հատկացված հողամասի նկատմամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2008 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.02.2009 թվականի որոշմամբ Ռաֆիկ Նիկողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2008 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.06.2009 թվականի որոշմամբ Անդրանիկ և Նարինե Մանուկյանների վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.11.2009 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 28,3 քմ մակերեսով ինքնակամ կառույցով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2010 թվականի որոշմամբ Ռաֆիկ Նիկողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է «Մասնակիորեն բեկանել և փոփոխել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.11.2009 թվականի վճիռը: Ռաֆիկ Նիկողոսյանի հայցն ընդդեմ Լավուրիկ Ասլանյանի, Անդրանիկ Մանուկյանի, Նարինե Մանուկյանի, Քնքուշ Մանուկյանի, Կարեն Մանուկյանի՝ բնակտարածությունից վտարելու պահանջի մասին բավարարել մասնակի: Պատասխանողներին վտարել Երևան քաղ. Ռոստոմի (Խմելնիցկու) փողոց 51 հասցեի՝ վերջիններիս կողմից տիրապետվող 16,5 քմ օրինական շինությունից: Վճիռը մնացած մասով թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.10.2010 թվականի որոշմամբ բեկանվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2010 թվականի որոշման՝ Երևանի Ռոստոմի փողոցի թիվ 51 հասցեում գտնվող 28,3 քմ մակերեսով ինքնակամ կառույցով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով Անդրանիկ և Նարինե Մանուկյանների սեփականության իրավունքը ճանաչելու մասը, և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2010 թվականի որոշման մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

Դիմելով դատարան՝ Ռաֆիկ Նիկողոսյանը պահանջել է պարտավորեցնել Լավուրիկ Ասլանյանին, Անդրանիկ, Նարինե, Քնքուշ և Կարեն Մանուկյաններին քանդել Երևանի Ռոստոմի փողոցի թիվ 51 հասցեում գտնվող հողամասում կառուցված 11,0 քմ և 28,3 քմ մակերեսներով ինքնակամ կառույցները:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.04.2011 թվականի որոշմամբ նշված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 29.11.2011 թվականի վճռով հայցերը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.03.2012 թվականի որոշմամբ Ռաֆիկ Նիկողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 29.11.2011 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռաֆիկ Նիկողոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի վճռի՝ իր հայցը մերժելու մասը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցը բավարարել: Այսինքն՝ վճռի մյուս մասը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, հետևաբար Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, պետք է բեկաներ միայն Դատարանի վճռի բողոքարկված մասը, մինչդեռ դուրս գալով վերաքննիչ բողոքի սահմաններից՝ վճիռը բեկանել է ամբողջությամբ:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը, 221-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերությունը, 277-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չպետք է գործը նոր քննության ուղարկեր, քանի որ բողոք բերած անձի հայցի բավարարման համար անհրաժեշտ բոլոր փաստական հանգամանքները հաստատված են, և դատական ակտի փոփոխումը կբխեր արդարադատության արդյունավետության շահերից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.03.2012 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սույն գործով ներկայացրած վերաքննիչ բողոքով Ռաֆիկ Նիկողոսյանը պահանջել է բեկանել Դատարանի 29.11.2011 թվականի վճռի՝ Ռաֆիկ Նիկողոսյանի հայցը մերժելու մասը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցն ամբողջությամբ բավարարել **(հատոր 6-րդ, գ.թ. 107-111)**:

2) Սույն գործով Դատարանի 29.11.2011 թվականի վճռի դեմ Անդրանիկ և Նարինե Մանուկյանները վերաքննիչ բողոք չեն ներկայացրել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերաքննիչ բողոքի «հիմքեր» և «հիմնավորումներ» հասկացությունների վերլուծությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որն ազդել է գործի ելքի վրա, վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերոնշյալից հետևում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերն են՝

1. վերաքննիչ բողոքում նշված դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը, **ըստ բողոք բերող անձի**, ազդել է գործի ելքի վրա,

2. նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Վերաքննիչ բողոքի հիմնավորումները վերաքննիչ բողոքի հիմքերի առկայության, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ փաստարկներն են, որոնց հիման վրա **բողոք բերող անձը** հիմնավորում է վերաքննիչ բողոքում ներկայացրած իր պահանջը:

Վերոգրյալից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **բողոք բերած անձի կողմից** վերաքննիչ բողոքում ներկայացված **հիմքերի և հիմնավորումների** սահմաններում և չի կարող քննության առարկա դարձնել և որոշում կայացնել ստորադաս դատական ատյանի վճռի այն մասի վերաբերյալ, որը չի բողոքարկվել:

Սույն գործով Դատարանի 29.11.2011 թվականի վճռով մերժվել է և՛ Ռաֆիկ Նիկողոսյանի, և՛ Անդրանիկ, Նարինե Մանուկյանների հայցը, ինչի դեմ վերջիններս վերաքննիչ բողոք չեն ներկայացրել, իսկ **Ռաֆիկ Նիկողոսյանը** վերաքննիչ բողոքով պահանջել է բեկանել Դատարանի վճռի՝ իր հայցը մերժելու մասը և հայցն ամբողջությամբ բավարարել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոք բերելը այդպիսի իրավունք ունեցող անձանց տնօրինչական գործողությունն է, որի հիման վրա վերջիններս իրացնում են օրենքով իրենց վերապահված՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անդրանիկ և Նարինե Մանուկյանների կողմից Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք չներկայացնելու, իսկ Ռաֆիկ Նիկողոսյանի կողմից վճիռն իր հայցի մասով բողոքարկելու պայմաններում դատական ակտն Անդրանիկ և Նարինե Մանուկյանների հայցը մերժելու մասով մտել է օրինական ուժի մեջ: Հետևաբար Վերաքննիչ դատարանը Ռաֆիկ Նիկողոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա պետք է վերանայեր և բեկաներ միայն վճռի՝ նրա կողմից բողոքարկված մասը:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ, իսկ նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Սույն գործով Դատարանը Ռաֆիկ Նիկողոսյանի հայցը մերժել է բացառապես հայցային վաղեմություն կիրառելու հիմքով՝ ըստ էության չանդրադառնալով պահանջի իրավական և փաստական հիմքերի գնահատմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ սեփականատիրոջ իրավունքի խախտումները վերացնելու պահանջի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով հայցային վաղեմություն չի տարածվում և արձանագրելով, որ վերաքննիչ բողոքում նշված մյուս փաստարկների ուղղությամբ Դատարանը քննություն չի իրականացրել, իրավացիորեն չի անդրադարձել այդ փաստարկների քննարկմանը և կիրառել է դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու իր լիազորությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատարանի վճռին մասնակիորեն օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, սույն գործով կայացված վճռի՝ Անդրանիկ և Նարինե Մանուկյանների հայցը մերժելու մասի դեմ գործին մասնակցող անձանց կողմից վերաքննիչ բողոք չներկայացնելու հանգամանքը, որպիսի

հիմքով և այդ մասով գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.03.2012 թվականի որոշման՝ Անդրանիկ և Նարինե Մանուկյանների հայցը մերժելու մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2011 թվականի վճիռը բեկանելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2011 թվականի վճռին: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.03.2012 թվականի որոշման՝ Ռաֆիկ Նիկողոսյանի հայցի մասով գործը նոր քննության ուղարկելու մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ1/0381/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ1/0381/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին
դռնբաց դատական նիստում, քննելով Գայանե Հովհաննյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.08.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գայանե Հովհաննյանի ընդդեմ Վադիմ Ավանեսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գայանե Հովհաննյանը պահանջել է Վադիմ Ավանեսյանից բռնագանձել 700.000 ՀՀ դրամ, այդ գումարի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները՝ մինչև պարտավորության փաստացի կատարումը, ինչպես նաև բռնագանձել 190.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն և վճռվել է. «Վադիմ Ավանեսյա-

նից հօգուտ Գայանե Հովհաննայանի բռնագանձել 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար: Վադիմ Ավանեսյանից հօգուտ Գայանե Հովհաննայանի հաշվարկել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոսի գումարը՝ սկսած կետանցի օրվանից՝ 01.06.2009թ.-ից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.08.2012 թվականի որոշմամբ Վադիմ Ավանեսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.05.2012 թվականի վճիռը բեկանվել, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գայանե Հովհաննյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն, սխալ է գնահատել և մեկնաբանել ապացույցները:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ Վադիմ Ավանեսյանը չի հիմնավորել այն հանգամանքը, որ իր կամքից անկախ պատճառներով չի կարողացել ներկայացնել փոխառության գումարը վճարված լինելու մասին հավաստող ապացույցներ:

Վերաքննիչ դատարանը, գործը նոր քննության ուղարկելու որոշման հիմքում դնելով քննիչի որոշումը, անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ ապացույցն էական նշանակություն չի կարող ունենալ գործի քննության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.08.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 16.05.2012 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վադիմ Ավանեսյանը 15.12.2008 թվականին տրված պարտավորագրով պարտավորվել է Գայանե Հովհաննյանից 15.12.2008 թվականին փոխառությամբ վերցրած 700.000 ՀՀ դրամ գումարը վերջինիս վերադարձնել 01.06.2009 թվականին **(հատոր 1-ին, գ.թ.19):**

2) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի կողմից 19.05.2012 թվականին կայացվել է «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշում, որի համաձայն՝ Գայանե Հովհաննյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրե-

ական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով **(հատոր 1-ին, գ.թ. 70-74)**:

3) Նշված որոշման համաձայն՝ Գայանե Հովհաննյանը 07.09.2007 թվականին Վաղիմ Ավանեսյանին պարտք տված 500.000 ՀՀ դրամին համարժեք 1.600 ԱՄՆ դոլարի համար մինչև 2010 թվականի ապրիլ ամիսը ներառյալ պահանջել և ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 12 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով՝ ամսական 10 տոկոս կամ 120 տոկոս հաշվարկով 1.405.000 ՀՀ դրամ: Նշված հանգամանքը հիմնավորվել է նախաքննության ընթացքում տուժողի և վկաների կողմից տրված ցուցմունքներով **(հատոր 1-ին, գ.թ. 72)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի ընդունելու նոր ապացույց և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ **ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով**, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է**, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:**

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու չէ նոր ապացույց ընդունել, բացառությամբ այն դեպքի, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ կողմերի կողմից ներկայացված նոր ապացույցը չի ներկայացվել **նրանց կամքից անկախ հանգամանքներով:** Ընդ որում, այդ **ապացույցը պետք է էական նշանակություն ունենա գործի լուծման համար**:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով **նոր ապացույցը պետք է օբյեկտիվորեն առկա լինի,** սակայն կողմերի կամքից անկախ պատճառներով գործի քննության ընթացքում չներկայացվի *(տես՝ ըստ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հայցը ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Պապյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ՀՔԴ3/0049/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Սույն գործով վերաքննիչ բողոքին կից որպես նոր ապացույց ներկայացվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ 19.05.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը: Նշված ապացույցը, ըստ Վաղիմ Ավանեսյանի, Դատարան չի ներկայացվել իր կամքից անկախ հանգամանքներով՝ պատճառաբանելով, որ այն նախաքննության մարմնի կողմից կայացվել է Դատարանի վճիռը հրապարակվելուց հետո:

Վերաքննիչ դատարանը, որոշման հիմքում դնելով այն հանգամանքը, որ Դատարանում գործի քննության ժամանակ վերը նշված ապացույցը չի ներկայացվել բողոքաբերի կամքից անկախ հանգամանքներով և պատճառաբանելով, որ այն կարող է էական նշանակություն ունենալ գործի լուծման համար, բեկանել է Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը կայացվել է 19.05.2012 թվականին, այսինքն՝ Դատարանի 16.05.2012 թվականի վճիռը հրապարակվելուց հետո: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով նոր ապացույց չէ, քանի որ այն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում օբյեկտիվորեն գոյություն չի ունեցել, որպիսի հիմքով և դրա չներկայացնելը պայմանավորված չի եղել Վադիմ Ավանեսյանի կամքից անկախ հանգամանքներով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը ոչ միայն պետք է անդրադառնար ապացույցը բողոքաբերի կամքից անկախ հանգամանքներում չներկայացնելու իրական հնարավորությանը, այլ պետք է պարզեր տվյալ գործի լուծման համար նոր ներկայացված ապացույցի **էական նշանակություն ունենալու հանգամանքը**:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

Նույն օրենսգրքի 880-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին: Եթե պարտապանն ի հավաստումն պարտավորության, պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը պարտատիրոջ (փոխատուի) վրա պարտականություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի (փոխառուի) պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին նրան ստացական տալ, իսկ պարտապանի կողմից պարտատիրոջը, ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ տրված լինելու դեպքում պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշել իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Ընդ որում, այլ բան ապացուց-

ված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը *(տես՝ ըստ Ֆերդինանդ Առաքելյանի հայցի ընդդեմ Հարություն Պետրոսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում սույն գործի լուծման համար **էական նշանակություն** կարող էին ունենալ փոխառուի (պարտապանի)՝ Վաղիմ Ավանեսյանի կողմից փոխատու (պարտատեր) Գայանե Հովհաննյանին փոխառությամբ ստացված գումարը վերադարձնելու պարտավորության ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարելու վերաբերյալ ապացույցները՝ պարտապանի մոտ գտնվող պարտքային փաստաթուղթը, պարտատիրոջ կողմից պարտքը լրիվ կամ մասնակիորեն ստանալու վերաբերյալ պարտապանին տված ստացականը կամ **պարտքն ամբողջությամբ կամ մասնակիորեն ստացած լինելու փաստը պարտատիրոջ կողմից ընդունելը:**

Ինչ վերաբերում է քրեական գործով նախաքննության մարմնի որոշմամբ հաստատված հանգամանքներին, ապա քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշմամբ, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը տվյալ գործի շրջանակներում պարտավոր է տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը *(տես՝ ըստ Վարթկես Հագոփյանի հայցի ընդդեմ Անահիտ Հակոբջանյանի, Ալեքսանդր Դուրգարյանի, Աջափնյակ նոտարական տարածքի նոտար Ռ. Առաքելյանի՝ Անահիտ Հակոբջանյանին և նրա ներկայացուցիչ Ալեքսանդր Դուրգարյանին 7-օրյա ժամկետում 25.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը վճարելուն պարտավորեցնելու, այլապես գումարը 7-օրյա ժամկետում չվճարելու դեպքում Պայմանագիրը լուծված համարելու, Անահիտ Հակոբջանյանի անվամբ գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին և ըստ հակընդդեմ հայցի Ալեքսանդր Դուրգարյանի ընդդեմ Վարթկես Հագոփյանի՝ դրամական պարտավորությունը մասնակի կատարած համարելու և պարտքի գումարի չափը նվազեցնելու պահանջի մասին թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հավաստումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից:

Տվյալ դեպքում ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ 19.05.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշմամբ հաստատված հանգամանքները հիմնվում են վկաների ցուցմունքների վրա: **Միևնույն նշված որոշմամբ որևէ ձևով չի հաստատվել այն հանգամանքը, որ Գայանե Հովհաննյանն ընդունել է Վաղիմ Ավանեսյանի կողմից իրեն վիճելի իրավահարաբերությունների շրջանակներում 1.405.000 ՀՀ դրամ վճարելու փաստը:**

Հետևաբար, հաշվի առնելով փոխառություն իրավահարաբերությունների վերոգրյալ առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն գործում առ-

կա չէ պարտապանի՝ Վադիմ Ավանեսյանի կողմից պարտքը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձնելու վերաբերյալ որևէ վերաբերելի ապացույց, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը նոր քննության ուղարկելու պարագայում ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Հ.Հովհաննիսյանի 19.05.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոց ստորագրությունը վերացնելու մասին» որոշումը չէր կարող էական նշանակություն ունենալ սույն քաղաքացիական գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.08.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/1086/02/10
Նախագահող դատավոր՝ Գ. Սատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/1086/02/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սվետլանա Թադևոսյանի և Սոնա Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Սվետլանա Թադևոսյանի, Սոնա Վարդանյանի հայցի ընդդեմ Գոհար և Գրիգոր Վարդանյանների, երրորդ անձ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի (այսուհետ՝ Ծառայություն)՝ գույքն արգելանքից հանելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանը պահանջել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի հիմքով հանել արգելանքից Սվետլանա Թադևոսյանին պատկանող մեկ հատ «LG» հեռուստացույցը, մեկ հավաքածու համակարգիչը, մեկ հատ «Gandi» լվացքի մեքենան և Սոնա Վարդանյանին պատկանող մեկ հատ «LG» սառնարանը:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա.Մխիթարյան) (այսուհետ՝ Դատարան) 01.07.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.11.2011 թվականի որոշմամբ Սվետլանա Թադևոսյանի և Սոնա Վարդանյանի վե-

րաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.07.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենագրքի 163-րդ հոդվածի 1-ին կետը, կիրառել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ կետը, 44-րդ հոդվածի 4-րդ կետը, 71-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, ինչպես նաև անտեսել է այն հանգամանքը, որ հայցի ապահովումը ենթակա է կիրառման սեփականատիրոջը պատկանող գույքի նկատմամբ, մինչդեռ տվյալ դեպքում արգելանք է դրվել սեփականատիրոջը չպատկանող գույքի վրա:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ տվյալ պարագայում ըստ էության վեճ է ծագել արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ, որպիսի իրավահարաբերությունների առկայության պայմաններում իրավունքի պաշտպանությունը և խախտված իրավունքի վերականգնումը նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 10.11.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 06.08.2002 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 583291 վկայականի համաձայն՝ Երևանի Արաբատյան 1-ին զանգվածի 10/6-րդ շենքի թիվ 48 բնակարանի սեփականատերը Սվետլանա Թադևոսյանն է (հատոր 1-ին, գ.թ.10-12):

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.06.2010 թվականի «Հայցի ապահովում ձեռնարկելու մասին» թիվ ԵԿԴ/1084/02/10 որոշմամբ ըստ Գրիգոր Վարդանյանի հայցի ընդդեմ «Ֆարմ Գոհար» ՍՊԸ-ի, Գոհար Վարդանյանի, երրորդ անձ ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական ռեգիստրի գործակալության Շենգավիթի տարածքային բաժնի՝ Գոհար Վարդանյանից գումար բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով կիրառվել է հայցի ապահովում, և որոշվել է «արգելել պատասխանողին ընդունել այնպիսի որոշումներ և «Ֆարմ Գոհար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից կնքել Ընկերության անշարժ կամ շարժական գույքի օտարման կամ գրավի այնպիսի գործարքներ, որոնք 10 տոկոսից ավելի չափով կնվազեցնեն Ընկերության զուտ ակտիվնե-

րը, արգելանք դնել Գոհար Վարդանյանին անձնական սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Ֆարմ Գոհար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դրամական միջոցների և այլ գույքի վրա, արգելել հայցվոր Գոհար Վարդանյանին անձնական սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Ֆարմ Գոհար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տրանսպորտային միջոցների շահագործումը» (հատոր 1-ին, գ.թ.13):

3. Ծառայության 02.06.2010 թվականի որոշմամբ հարուցվել է թիվ 01/02-187/10 կատարողական վարույթը (հատոր 1-ին, գ.թ.14):

4. Ծառայության 02.06.2010 թվականի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ որոշվել է արգելանք դնել Գոհար Վարդանյանին (Երևանի Կուրղինյան 3-48) անձնական սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Ֆարմ Գոհար» ՍՊԸ-ի դրամական միջոցների և այլ գույքի վրա, Գոհար Վարդանյանին արգելվել է նաև ընդունել այնպիսի որոշումներ և «Ֆարմ Գոհար» ՍՊԸ-ի անունից կնքել ընկերության անշարժ կամ շարժական գույքի օտարման կամ գրավի այնպիսի գործարքներ, որոնք 10 տոկոսից ավելի չափով կնվազեցնեն ընկերության զուտ ակտիվները: Միաժամանակ Գոհար Վարդանյանին արգելվել է անձնական սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Ֆարմ Գոհար» ՍՊԸ-ի տրանսպորտային միջոցների շահագործումը (հատոր 1-ին, գ.թ.15):

5. Ծառայության 07.06.2010 թվականի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» ակտի համաձայն՝ թիվ ԵԿԴ/1084/02/2010 կատարողական թերթի հիման վրա արգելանք է դրվել Գոհար Վարդանյանին անձնական սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցների և այլ գույքի վրա: Կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու համար գույքագրվել և արգելանքի է վերցվել պարտապանին պատկանող հետևյալ գույքը՝ 1. հեռուստացույց «LG», համակարգիչ 1 հավաքածու, սառնարան «LG», լվացքի մեքենա «Gandi» (հատոր 1-ին, գ.թ.18):

6. Ծառայության աշխատակիցների կողմից կազմված 07.06.2010 թվականի արձանագրության համաձայն՝ Գոհար Վարդանյանն այցելել է Երևանի Կուրղինյան 3-48-րդ հասցե և հայտնել, որ «նշված հասցեում ինքը գույք չունի և ոչ մի փաստաթղթի տակ չի ստորագրի»: Գույքագրվել է 4 անվանում գույք՝ «LG» հեռուստացույց, 1 հավաքածու համակարգիչ, «LG» սառնարան, «Gandi» լվացքի մեքենա և առգրավվել (հատոր 1-ին, գ.թ.17):

7. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 14.06.2010 թվականի թիվ 2091 գրության համաձայն՝ Սոնա Վարդանյանը «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի հետ 28.07.2003 թվականին կնքած պայմանագրով ապահիկ կարգով 334.035 ՀՀ դրամ արժողությամբ ձեռք է բերել «LG» սառնարան (հատոր 1-ին, գ.թ.20):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (*տե՛ս՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալնեա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի՝ 13.157.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին թիվ ՎԴ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը*): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը *(տե՛ս՝ «Բի լայն» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մրցավոր սեփականության գործակալության՝ պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին թիվ ՎԴ/0677/05/08 վարչական գործով 21.04.2008 թվականի ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.06.2010 թվականի «Հայցի ապահովում ձեռնարկելու մասին» թիվ ԵԿԴ/1084/02/10 որոշմամբ կիրառվել է հայցի ապահովում, և որոշվել է «արգելել պատասխանողին ընդունել այնպիսի որոշումներ և «Ֆարմ Գոհար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից կնքել Ընկերության անշարժ կամ շարժական գույքի օտարման կամ գրավի այնպիսի գործարքներ, որոնք 10 տոկոսից ավելի չափով կնվազեցնեն Ընկերության զուտ ակտիվները, արգելանք դնել Գոհար Վարդանյանին անձնական սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Ֆարմ Գոհար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դրամական միջոցների և այլ գույքի վրա, արգելել հայցվոր Գոհար Վարդանյանին անձնական սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Ֆարմ Գոհար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տրանսպորտային միջոցների շահագործումը»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են պահանջատերը և պարտապանը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացնել ինչպես այդ գույքի սեփականատերը, այնպես էլ դրա օրինական տիրապետողը: Գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը ներկայացվում է ընդդեմ պարտապանի և (կամ) պահանջատիրոջ:

Հիշատակված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի գործողությունների (որոշումների) բողոքարկման իրավունք նախատեսված է ինչպես կատարողական վարույթի կողմերի՝ պահանջատիրոջ և պարտապանի, այնպես էլ կատարողական վարույթի կողմ չհանդիսացող շահագրգիռ անձանց համար: Այդպիսիք են հանդիսանում արգելանքի տակ

գտնվող գույքի սեփականատերը կամ այլ օրինական տիրապետողը: Ի տարբերություն վարույթի կողմերի, ովքեր իրավունք ունեն բողոքարկելու հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով, կատարողական վարույթի կողմ չհանդիսացող շահագրգիռ անձինք արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում իրավունք ունեն դիմել դատարան: Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճի առկայության դեպքում շահագրգիռ անձը պետք է գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմի գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, որն իրենից ենթադրում է համապատասխան պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շահագրգիռ անձի կողմից գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի ծագումը պայմանավորված չէ արգելանքի վերցնելու վերաբերյալ հարկադիր կատարողի որոշումը վերադասության կամ դատական կարգով բողոքարկված կամ վիճարկված լինելու հանգամանքով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 02.06.2010 թվականի որոշմամբ հարուցված թիվ 01/02-187/10 կատարողական վարույթի կողմերն են պահանջատեր Գրիգոր Վարդանյանը և պարտապան Գոհար Վարդանյանը: Հետևաբար, թիվ 01/02-187/10 կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումները կարող են բողոքարկվել պահանջատեր Գրիգոր Վարդանյանի կամ պարտապան Գոհար Վարդանյանի կողմից:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ կետը, 44-րդ հոդվածի 4-րդ կետը, 71-րդ հոդվածը, վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «տվյալ դեպքում, գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հարկադիր կատարողի վերոնշյալ որոշումները ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում ոչ հայցվորների, ոչ էլ Գոհար Վարդանյանի կողմից չեն բողոքարկվել հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան կամ վերադասության կարգով»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, կիրառելով վերը նշված հոդվածների վերաբերյալ մեկնաբանությունները սույն գործի փաստերի նկատմամբ, արձանագրում է, որ Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանը, չլինելով Ծառայության 02.06.2010 թվականի որոշմամբ հարուցված թիվ 01/02-187/10 կատարողական վարույթի կողմեր, իրավունք չունեին բողոքարկելու հարկադիր կատարողի որոշումները (պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին 02.06.2010 թվականի որոշում, պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին 07.06.2010 թվականի ակտ): Հետևաբար Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանը օգտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված իրավունքից և հայց են ներկայացրել դատարան գույքն արգելանքից հանելու պահանջով՝ վիճարկելով Գոհար Վարդանյանին գույքի պատկանելիությունը:

Նշված հիմնավորումները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ «հարկադիր կատարողի վերոնշյալ որոշումները ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում ոչ հայցվորների, ոչ էլ Գոհար Վարդանյանի կողմից չեն բողոքարկվել հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան կամ վերադասության կարգով, հետևաբար Դատարանը իրավացիորեն մերժել է հայցը» անհիմն է:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանը Ծառայության 02.06.2010 թվականի որոշմամբ հարուցված թիվ 01/02-

187/10 կատարողական վարույթի կողմեր չեն: Տվյալ դեպքում վեճը վերաբերում է արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիությանը, այսինքն՝ Սվետլանա Թադևոսյանը և Սոնա Վարդանյանն իրավասու են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի հիմքով արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում դիմելու դատարան գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով: Ընդ որում, ստորադաս դատարանները պարտավոր են պարզելու՝ արդյոք արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելիության վերաբերյալ վեճ առկա է, թե ոչ:

Նշված հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են գույքն արգելանքից հանելու ինստիտուտը կարգավորող նորմերի պահանջները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված և հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2598/02/11
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան
Դատավորներ՝ Տ.Սահակյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2598/02/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25 –ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչներ Արա Զոհրաբյանի և Սմբատ Կարապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Կրոմվել Գրիգորյանի հայցի ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ)՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կրոմվել Գրիգորյանը պահանջել է անվավեր ճանաչել Պալատի խորհրդի 28.07.2011 թվականի թիվ 15/11 որոշումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա.Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 15.03.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.07.2012 թվականի որոշմամբ Պալատի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.03.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Պալատի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու գործողությունը ծառայության մատուցում է, իսկ օրենսդիրը ծառայության մատուցում է համարել պատվիրատուի օգտին որոշակի գործողություններ կատարելը, որի դեպքում փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի շրջանակներում վստահորդի օգտին իրականացվող ցանկացած գործողություն համարվում է ծառայության մատուցում, այն չի ավարտվում ծառայությունն սկսելու պահից, շարունակական գործընթաց է, վաղեմության հաշվարկի սկիզբ է համարել իրավաբանական օգնություն ցույց տալու սկզբնական պահը: Այսինքն՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի արգելքը գործում է իրավաբանական օգնություն ցույց տալու յուրաքանչյուր դրսևորման ժամանակ և ցանկացած դրսևորում ինքնին պետք է խախտման հիմք որակվի:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունից հետևում է, որ եթե փաստաբանը վստահորդից լիազորագիր ստանալու պահին և հետագայում հայցադիմում ներկայացնելու պահին ուներ տվյալ վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու իրավունք, սակայն հետագայում, օրինակ՝ լիազորագիրը ստանալուց մեկ տարի անց, նա այդ իրավունքից զրկվում է և շարունակում է իրավաբանական օգնությունը ցույց տալ օրենքի պահանջների խախտմամբ, ապա նրա նկատմամբ Պալատը որևէ սանկցիա կիրառել չի կարող, քանի որ անկախ իր կամքից բաց է թողել վաղեմության ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 04.07.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Էջմիածնի շրջանի ժողդատարանի 25.06.1997 թվականի թիվ 2-273 վճռի համաձայն՝ Գարեգին Շահվերդյանից հօգուտ Վաղարշակ Մանուկյանի պետք է բռնագանձվեր 16.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ հօգուտ ՀՀ պետական բյուջեի՝ 158.400 ՀՀ դրամ (հատոր 1, գ.թ. 88):

2) Կրոմվել Գրիգորյանը, հանդիսանալով ՀՀ Էջմիածնի շրջանի ժողդատարանի դատական տեսուչ, 06.10.1997 թվականին կազմել է ածուրդը չկայացած հայտարարելու վերաբերյալ ակտ՝ դրանում նշելով, որ վերը նշված վճռի հիման վրա բռնագանձվելիք «պարտքի դիմաց վերգրվել և կալանադրվել է պարտապանի Մերձավան գյուղի Այգեգործների փողոցում գտնվող թիվ 2 սեփական տունն իր տնամերձ հողամասով: Ս/թ-ի հոկտեմբերի 6-ին նշանակվել է հրապարակային ածուրդ: Ածուրդին ներկայացավ միայն մեկ գնորդ:...Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 386-րդ

հոդվածի 1-ին կետի՝ հրապարակային աճուրդը հայտարարեցի չկայացած: Սույն ակտը կազմեցի ներկայացնելով ժողդատավորի հաստատմանը» (հատոր 1, գ.թ. 28).

3) Պալատի խորհուրդը, քննության առնելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Գարեգին Շահվերդյանի դիմումը, 28.07.2011 թվականին կայացրել է թիվ 15/11 որոշումը՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջը խախտելու համար մեղավոր ճանաչելու և նրա նկատմամբ նկատողության ձևով տույժ նշանակելու մասին՝ նշված որոշման հիմքում դնելով նաև այն, որ Կրոմվել Գրիգորյանը, 1997 թվականին լինելով դատական տեսուչ, հանդիսացել է պաշտոնատար անձ, որն իրավասու է եղել վերը նշված վճիռը կատարելու ժամանակ ընդունելու ինչպես Գարեգին Շահվերդյանի, այնպես էլ Վաղարշակ Մանուկյանի շահերից բխող որոշումներ, մինչդեռ որպես փաստաբան հետագայում Վաղարշակ Մանուկյանին իրավաբանական օգնություն է ցույց տվել ինչպես ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան 13.12.2007 թվականին հարուցված հայցի, այնպես էլ **ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ4/0015/05/10 վարչական գործի** կապակցությամբ (հատոր 1, գ.թ. 8-10).

4) թիվ ՎԴ4/0015/05/10 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 12.10.2010 թվականին կայացված վճռի նկարագրական մասից հետևում է, որ նշված գործով Վաղարշակ Մանուկյանը հանդիսացել է երրորդ անձ, իսկ վերջինիս ներկայացուցիչն էր փաստաբան Կրոմվել Գրիգորյանը, ով 07.04.2010 թվականին միջնորդություն է հարուցել նույն դատարան՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին (հատոր 1, գ.թ. 31).

5) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի թիվ 11 նիստի 01.06.2011 թվականի թիվ 11/9-Ա որոշմամբ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ (հատոր 1, գ.թ 76):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը բողոքում բարձրացված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցերը՝

1. Փաստաբանական գործունեության բնույթը
2. Իրավաբանական օգնության արգելքը
3. Փաստաբանի կարգապահական պատասխանատվության առանձնահատկությունները

1. Փաստաբանական գործունեության բնույթը

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **փաստաբանական գործունեությունն** իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Նույն օրենքի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ **գործունեությունը**՝

1) **խորհրդատվություն**, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրա-

մադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն).

2) **ներկայացուցչություն**, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (այսուհետ՝ դատական ներկայացուցչություն).

3) քրեական գործերով **պաշտպանություն**.

4) օրենքով նախատեսված դեպքում և կարգով **վկային իրավաբանական օգնություն ցույց տալը**:

Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների (ընդունվել են հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրեսի կողմից, ուժի մեջ է մտել 07.09.1990 թվականին) 13-րդ կետի համաձայն՝ իրենց հաճախորդների նկատմամբ իրավաբանները կատարում են հետևյալ գործառույթները.

ա) խորհրդատվություն հաճախորդներին՝ նրանց իրավաբանական համակարգի աշխատանքի վերաբերյալ այն չափով, որքանով դա վերաբերում է հաճախորդների իրավաբանական իրավունքներին ու պարտականություններին.

բ) մատչելի բոլոր միջոցներով հաճախորդներին օգնություն ցույց տալը և նրանց շահերը պաշտպանելու համար օրենսդրական միջոցներ ձեռնարկելը.

գ) անհրաժեշտության դեպքում հաճախորդներին օգնություն ցույց տալը դատարաններում, տրիբունալներում կամ վարչական մարմիններում:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեություն է, դրսևորվում է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմամբ ու պաշտպանությամբ՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստաբանական գործունեությունը՝ որպես վստահորդի և փաստաբանի միջև ծագած իրավահարաբերություն, ներառում է տարբեր գործողություններ՝ սկսած խորհրդատվությունից, ներառյալ ներկայացուցչությունը, պաշտպանությունը քրեական գործերով, օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ իրավաբանական օգնության իրավահարաբերությունը ծագում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելու պահից, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Ընդ որում, կախված փաստաբանի և վստահորդի միջև առաջացած իրավահարաբերության բնույթից, իրավաբանական օգնությունը կարող է մի դեպքում սահմանափակվել օրենքում նշված գործողություններից մեկով կամ ներառել դրանցում նշված տարբեր գործողություններ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում իրավաբանական օգնության բնույթը և շրջանակները պարզելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փաստաբանի և վստահորդի միջև ծագած իրավահարաբերության քաղաքացիաիրավական հիմքին, քանի որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցուցաբերվում է համապատասխան պայմանագրի կամ այլ իրավաբանական փաստի հիման վրա: Ընդ որում, նշված դեպքերում նախատեսվում են իրավաբանական օգնության ձևերը և շրջանակները, որոնք փաստաբանը պետք է ցույց տա կոնկրետ անձին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու բնույթը, դրանում ներառվող գործողությունների շրջանակները և իրավաբանական օգնության ժամանակահատվածը կարող է պարզվել կողմերի միջև իրավահարաբերության առաջացման հիմք համարվող իրավաբանական փաստերի կամ կատարված փաստացի գործողությունների ուսումնասիրության արդյունքում (պայմանագիր, լիազորագիր և այլն):

2. Իրավաբանական օգնության արգելքը

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը, փաստաբանի համար նախատեսելով իրավաբանական օգնություն ցույց տալու համար համապատասխան երաշխիքներ, սահմանելով նրա հիմնական իրավունքները և պարտականությունները, նախատեսել է վերջինիս կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու և իր իրավունքների իրականացման որոշակի առանձնահատկություններ և սահմանափակումներ, որոնք ուղղված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված փաստաբանության սկզբունքների, մասնավորապես անկախության և օրինապահության սկզբունքների ապահովմանը:

Այդ նպատակով օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված է, որ փաստաբանն **իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու** այն դեպքում, երբ

1) առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև.

2) տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը.

3) ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ անձի գործի քննությանը.

4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը: Այս սկզբունքն ուղղակիորեն ամրագրված է նաև Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների 14-րդ կետում, որի համաձայն՝ իրենց հաճախորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության շահերը պահպանելիս իրավաբանները պետք է նպաստեն ազգային և միջազգային իրավունքներով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը և բոլոր պարագաներում **գործեն անկախ ու բարեխղճորեն՝ օրենքին և ընդունված նորմերին ու իրավաբանի մասնագիտական բարոյականությանը համապատասխան:**

3. Փաստաբանի կարգապահական պատասխանատվության առանձնահատկությունները

Վերը նշված օրենսդրական սահմանափակումների ապահովման նպատակով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլխով կարգավորել է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու կարգը:

«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության և կարգապահական վարույթի մասին» կանոնակարգի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել **կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց** հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան **հիմքը ծագելուց** մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների 26-29-րդ կետերում սահմանվում է կարգապահական միջոցների կիրառման կարգը: Մասնավորապես, իրավաբանները, իրենց համապատասխան մարմինների կամ օրենսդիր մարմինների միջոցով, իրավաբանների մասնագիտական վարվելակերպի կանոնագրքեր են մշակում՝ ազգային օրենսդրությանն ու սովորույթներին և ճանաչված ստանդարտներին համապատասխան: Իրենց մասնագիտական դերով հանդես եկող իրավաբանների հանդեպ մեղադրանքները կամ գանգատները ենթակա են շուտափույթ և օբյեկտիվ քննարկման՝ պատշաճ ընթացակարգին համապատասխան: Իրավաբաններն իրավունք ունեն գործի արդարացի քննության, ներառյալ իրենց ընտրությամբ իրավաբանի օգնության իրավունքը: Իրավաբանների նկատմամբ կարգապահական միջոցները քննարկվում են իրավաբանների կողմից ստեղծվող անաչառ կարգապահական կոմիտեի կողմից, օրենքով նախատեսված անկախ մարմնում կամ դատարանում, և ենթակա են անկախ վերահսկողության: Կարգապահական բոլոր միջոցները սահմանվում են իրավաբանի մասնագիտական վարվելակերպի կանոնագրքին և մյուս ճանաչված ստանդարտներին ու մասնագիտական բարոյականությանը համապատասխան և սույն սկզբունքների լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար օրենսդիրը նախատեսում է վաղեմության ժամկետ, որից հետո փաստաբանը չի կարող ենթարկվել պատասխանատվության:

Նշված վաղեմության ժամկետի հաշվարկի հարցը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելու և կարգապահական պատասխանատվության հիմքը ծագելու օրենսդրական եզրույթների մեկնաբանությանը:

Կարգապահական պատասխանատվության հիմք

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հասկացությունների մեկնաբանության համար պետք է հիմք ընդունվեն վերոնշյալ վերլուծությունները, ինչպես նաև ներկայումս գործող «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1-ին հոդվածի 4-րդ կետը, որի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը: Հետևաբար կարգապա-

հական պատասխանատվության հիմքը սույն դեպքում դրսևորվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված արգելքի խախտմամբ: Այսինքն՝ օրենսդիրը նշված դեպքում իրավաբանական օգնության ցուցաբերումը համարում է իրավախախտում, ինչն էլ իր հերթին փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **կարգապահական պատասխանատվության հիմք** հասկացությունը դրսևորվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերում իրավաբանական օգնություն ցույց տալով:

Կարգապահական պատասխանատվության հիմքի ծագում

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմքը իրավաբանական օգնության ցուցաբերումն է, այսինքն՝ փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելը, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Այդ գործողությունները սույն դեպքում դիտարկվում են որպես իրավախախտում, իսկ կարգապահական պատասխանատվության հիմքը ծագում է այդ իրավախախտումը կատարելու պահից: Այն դեպքում, երբ վստահորդի և փաստաբանի միջև իրավաբանական օգնության իրավահարաբերության բնույթից ելնելով այդ իրավախախտումը դրսևորվում է իրավաբանական օգնության մեջ ներառվող տարբեր գործողություններ կատարելով, այդ գործողությունները նույնպես դիտարկվում են որպես իրավախախտում, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի կատարման ժամանակ ծագում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ վերլուծությունները և օրենքի նման մեկնաբանությունը բխում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում սահմանված օրինապահության սկզբունքից, քանի որ հակառակ պարագայում, եթե որպես կարգապահական պատասխանատվության հիմքի ծագման պահ գնահատվի վստահորդի կողմից փաստաբանին լիազորագիր տալու պահը, կամ իրավաբանական օգնություն ցուցաբերելու սկիզբը, ապա նման մեկնաբանության դեպքում իրավախախտումը կարող է շարունակվել, սակայն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմությունն անցած լինելու հիմքով փաստաբանը ոչ միայն չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել, այլև կարող է շարունակել տվյալ իրավախախտումը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի նման մեկնաբանությունը բխում է Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներից:

4. Վերոնշյալ կանոնների կիրառումը սույն գործի նկատմամբ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գոր-

ծում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը (*տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Սյունիքի և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նուրարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Սյունիքի և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Պալատի ներկայացուցչի բողոքի այն հիմքին, որ ծառայության մատուցումը չի ավարտվում ծառայությունն սկսելու պահից, քանի որ այն շարունակական գործընթաց է, իսկ ծառայությունները համարվում են մատուցված՝ համապատասխան փուլի ավարտի պահից, նշել է, որ այն «հիմնավորված չէ, քանի որ ինչպես հենց ինքը՝ բողոք բերած անձն է փաստել, փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու գործողությունն արդեն իսկ ծառայության մատուցում է, որը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի տառացի մեկնաբանության ուժով կարող է սկսվել և ավարտվել ինչպես խորհրդատվություն մատուցելով, այնպես էլ դատական ներկայացուցչությամբ», «Տվյալ դեպքում թիվ 2-1132 քաղաքացիական գործով Վաղարշակ Մանուկյանը փաստաբան Կրոմվել Գրիգորյանին լիազորագիր է տվել 20.10.2007 թվականին: Տվյալ լիազորագրի հիման վրա Վաղարշակ Մանուկյանի անունից իրականացվող առաջին դատավարական գործողությունը, որի ժամկետը հստակ կարելի է արձանագրել, հանդիսացել է թիվ 2-1132 քաղաքացիական գործով հայցադիմումը ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելը, ինչն իրականացվել է 13.12.2007 թվականին: Ուստին որպես կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող գործողության ժամկետի կատարման սկիզբ պետք է ընդունել առնվազն 13.12.2007 թվականը, քանի որ փաս-

տաբանի՝ իրեն տրված լիազորագրի հիման վրա առաջին իսկ կատարած գործողությունն ինքնին բավարար է նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի ի հայտ գալու համար, որպիսի պարագայում կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսացող ժամկետների հաշվարկը պետք է կատարել այդպիսի հիմք հանդիսացող և ժամկետի հաշվարկման հստակ սկիզբ կանխորոշող գործողության կատարման (կամ դրա ի հայտ գալու) պահը: Տվյալ դեպքում նման գործողությունը դրսևորվել է 13.12.2007 թվականին Վաղարշակ Մանուկյանի անունից ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմումի ներկայացմամբ: ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի թիվ 11 նիստի 01.06.2011 թվականի թիվ 11/9-Ա որոշմամբ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ: Փաստաբան Կրոմվել Գրիգորյանին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջների խախտման համար մեղավոր ճանաչելու և նկատողության տեսքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 15/11 որոշումը կայացվել է 28.07.2011 թվականին: Նման պայմաններում կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող գործողության կատարման պահից, այն է՝ 13.12.2007 թվականից անցել է ավելի, քան մեկ տարի, որպիսի պարագայում «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության և կարգապահական վարույթի մասին» կանոնակարգի 20-րդ հոդվածի ուժով կարգապահական վարույթը ենթակա է կարճման»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած ապացույցները, մասնավորապես՝ Պալատի կարգապահական հանձնաժողովի 14.07.2011 թվականի եզրակացությունը և Պալատի խորհրդի 28.07.2011 թվականի թիվ 15/11 որոշումը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել, քանի որ անտեսել է այն հանգամանքը, որ Կրոմվել Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Պալատի խորհրդի 28.07.2011 թվականի թիվ 15/11 որոշման հիմքում դրվել է նաև այն, որ Կրոմվել Գրիգորյանը, 1997 թվականին լինելով դատական տեսուչ, հանդիսացել է պաշտոնատար անձ, որն իրավասու է եղել ՀՀ Էջմիածնի շրջանի ժողդատարանի կողմից 25.06.1997 թվականին թիվ 2-273 քաղաքացիական գործով կայացված վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարելու ժամանակ ընդունելու ինչպես Գարեգին Շահվերդյանի, այնպես էլ Վաղարշակ Մանուկյանի շահերից բխող որոշումներ, մինչդեռ որպես փաստաբան հետագայում Վաղարշակ Մանուկյանին իրավաբանական օգնություն է ցույց տվել նաև **ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ4/0015/05/10 վարչական գործի** կապակցությամբ: Այսինքն՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը եղել է ոչ միայն վերը նշված հանգամանքների հաշվառմամբ Վաղարշակ Մանուկյանին ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան 13.12.2007 թվականին հարուցված հայցի, այլ նաև **ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ4/0015/05/10 վարչական գործի** կապակցությամբ իրավաբանական օգնություն ցույց տալը, որի վերաբերյալ վճիռը կայացվել է **12.10.2010 թվականին**: Ընդ որում, երկրորդ դեպքում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքում դրված է եղել այն փաստը, որ նշված գործով Վաղարշակ Մանուկյանը հանդիսացել է երրորդ անձ, իսկ վերջինիս ներկայացուցիչն է հանդիսացել փաստաբան Կրոմվել Գրիգորյանը, ով 07.04.2010 թվականին միջնորդություն է հարուցել նույն դատարան՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին: Նշված փաստը Պալատը հաստատ-

ված է համարել թիվ ՎԴ4/0015/05/10 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 12.10.2010 թվականին կայացված վճռի նկարագրական մասի հետազոտման արդյունքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործի նկատմամբ վերոնշյալ վերլուծությունների կիրառման, ինչպես նաև սույն գործով Պալատի խորհրդի 28.07.2011 թվականի թիվ 15/11 որոշման իրավաչափությունը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք Կրոմվել Գրիգորյանը կարգապահական վարույթի հարուցման պահին նախորդող մեկ տարվա ընթացքում հանդես է եկել ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ4/0015/05/10 վարչական գործով որպես երրորդ անձ Վաղարշակ Մանուկյանի ներկայացուցիչ, թե՝ ոչ, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր է հաստատված համարել, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նախկին խմբագրությամբ 39-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության և կարգապահական վարույթի մասին» կանոնակարգի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական վարույթ հարուցելու համար սահմանված մեկամյա ժամկետում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4519/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Լ. Սոսյան
Հ. Բեղնյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4519/05/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.10.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վլադիմիր Սալիբեկյանի ընդդեմ Ոստիկանության՝ 11.11.2010 թվականի թիվ ԱՌ 988996 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վլադիմիր Սալիբեկյանը պահանջել է անվավեր ճանաչել Ոստիկանության 11.11.2010 թվականի թիվ ԱՌ 988996 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 27.07.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.10.2011 թվականի որոշմամբ Դատարանի 27.07.2011 թվականի վճռի դեմ Վլադիմիր Սալիբեկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, բեկանվել է Դատարանի 27.07.2011 թվականի վճիռը, և այն փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ոստիկանությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասը, կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասը, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 117.12-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարչական իրավախախտում կատարած անձին իր իրավունքներն ու պարտականությունները բացատրված լինելու պայմաններում արձանագրությունում նշում կատարելուց և ստորագրելուց, բացատրություն տալուց, ինչպես նաև որոշումը ստորագրել և ստանալուց հրաժարվելու հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ եզրահանգելու, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվել է անձի բացակայությամբ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ անձը վարչական պատասխանատվության ենթարկվում է ոչ թե տրանսպորտային միջոցը սահմանված ժամկետում տեխնիկական զննության չներկայացնելու համար, այլ սահմանված ժամկետում տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.10.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 11.11.2010 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ «… ուղիղ նշանի ազդման գոտուց կատարեց ձախ շրջադարձ, ստուգումից պարզվեց, որ վարորդ Վլադիմիր Սալիբեկյանն օրենքով սահմանված ժամկետում տրանսպորտային միջոցը չէր ներկայացրել 2010 թվականի տեխնիկական զննությանը և բացակայում էր տեխնիկական զննության կտրոնը»: Նույն արձանագրությունում նշվել է, որ «վարորդը հրաժարվեց բացատրություն տալուց և որոշումը ստանալուց» **(գ.թ. 20):**

2) 11.11.2010 թվականի թիվ ԱԲ 988996 որոշմամբ Վլադիմիր Սալիբեկյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ ենթարկվել է 50.000 ՀՀ դրամ տուգանքի **(գ.թ. 7):**

3) 11.11.2010 թվականի թիվ ԱԲ 988996 որոշումը Վլադիմիր Սալիբեկյանին փոստային ծառայության միջոցով հանձնվել է 15.11.2010 թվականին **(գ.թ. 20):**

4) Ոստիկանության հաշվառման-քննական և տրանսպորտային միջոցների տեխնիկական փորձաքննության բաժնի պետի 20.12.2010 թվականի տեղեկանքի համաձայն՝ ՎԱԶ-21063 մակնիշի 61 UU 786 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը համաձայն Ոստիկանությունում առկա, ինչպես նաև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից էլեկտրոնային կրիչով տրամադրված տեղեկատվության, տեխնիկական զննություն անցել է 26.10.2009 թվականին, որից հետո մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու օրը՝ 11.11.2010 թվականը, տեխնիկական զննություն չի անցել: Տեխնիկական զննություն անցել է 12.11.2010 թվականին **(գ.թ. 21):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով, ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունը վարչական իրավախախտումները կանխելիս և բացահայտելիս իրավունք ունի՝ 1) **կազմել վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ**. 2) իրականացնել վարչական ձերբակալում, **կիրառել վարչական իրավախախտումների մասին օրենքով նախատեսված այլ միջոցներ** ...:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգությանն սպառնալու կամ ճանապարհային երթևեկության կանոնները խախտվելու դեպքերում, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հետախուզման, տրանսպորտային միջոցներով ապօրինի բեռներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, առարկաներ, հանցագործության գործիքներ և հանցագործության հետքեր կրող այլ առարկաներ, ինչպես նաև հետախուզվող անձանց տեղափոխման մասին տեղեկություններ կամ հիմնավոր կասկածներ առկա լինելու դեպքերում ոստիկանությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝ 1) կանգնեցնել տրանսպորտային միջոցները, ստուգել **ճանապարհային երթևեկությանը մասնակցելու իրավունք վերապահող** և փոխադրվող բեռի **փաստաթղթերը** ...:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123^4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանված ժամկետում տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ **ներքին գործերի մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու** իրավունք ունեն՝ նույն օրենսգրքի 123, 123^1, 123^2, 123^3 հոդվածներով, 123^4 հոդվածի առաջին և երկրորդ մասերով, 123^5, 124 (բացառությամբ երեսունյոթերորդ և երեսունութերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 124^1, 124^2, 125, 128, 129, 129^1, 129^2, 131, 132, 133 և 140 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ ճանապարհապարեկային ծառայության տեսուչները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում. արդյոք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության. կան արդյոք պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ. պատճառվել է արդյոք գույքային վնաս, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված դեպքերում **վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունքը վերապահված է ճանապարհապարեկային ծառայության տեսուչներին**, ինչը ենթադրում է վարչական վարույթ իրականացնելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից իրականացվող վարչական վարույթի առանձնահատուկ բնույթը և դրա արդյունավետ իրականացումն ապահովելու համար որոշ պայմանների պարտադիր առկայության և վարչական վարույթի իրականացման հետ կապված համապատասխան գործողություններն արագ իրականացնելու և գործելու, **այսինքն՝ վարչական իրավախախտման տեղում վարչական իրավախախտման արձանագրություն կազմելու, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու, ինչպես նաև իրավախախտման տեղում վարչական տույժ նշանակելու** անհրաժեշտությունը:

Սույն գործով հայցը մերժելիս Դատարանը պատճառաբանել է, որ «հայցվորի նկատմամբ տուգանք նշանակելու իրավական հիմքը հանդիսացել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123[4]-րդ հոդվածի 2-րդ մասը», «…վարչական իրավախախտման վերաբերյալ 11.11.2010 թվականի արձանագրության, Ճանապարհային ոստիկանության ՏՄՏՓ բաժնի պետի 20.12.2010 թվականի տեղեկանքի հետազոտմամբ հաստատվեց, որ իրավախախտումն արձանագրելու պահին, այն է՝ 11.11.2010 թվականին հայցվորի վարած ՎԱԶ-21063 մակնիշի 61 UU 786 հաշվառման համարանիշի ավտոմեքենան տեխնիկական զննություն անցած չի եղել, ինչը նշանակում է, որ տվյալ պահին իրավախախտման փաստն առկա է եղել»:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս և Դատարանի վճիռը փոփոխելիս պատճառաբանել է, որ «արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում առկա է հետևյալ գրառումը. «Վարորդը հրաժարվեց բացատրություն տալուց, ստորագրելուց և որոշումը ստանալուց»: Սակայն, տվյալ գրառումը չի վկայում այն մասին, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ, և ապահովվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքները»:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելու և դատական ակտը փոփոխելու հիմքում դնելով այն հանգամանքը, որ արձանագրությունում առկա գրառումը չի վկայում, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ, և ապահովվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, հաշվի չի առել, որ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ արձանագրությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի կողմից ստորագրված չլինելու հանգամանքը բավարար չէ փաստելու, որ վարչական իրավախախտման գործը քննվել է վարչական պատասխանատվության են-

թարկվող անձի բացակայությամբ, և որ խախտվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործի ապացույցներով, մասնավորապես՝ Ոստիկանության հաշվառման-քննական և տրանսպորտային միջոցների տեխնիկական փորձաքննության բաժնի պետի 20.12.2010 թվականի տեղեկանքով հաստատվում է, որ ՎԱԶ-21063 մակնիշի 61 UU 786 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը տեխնիկական զննություն անցել է 26.10.2009 թվականին, որից հետո մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու օրը՝ 11.11.2010 թվականը, տեխնիկական զննություն չի անցել, այլ տեխնիկական զննություն անցել է 12.11.2010 թվականին: Այսինքն՝ իրավախախտումն արձանագրելու պահին իրավախախտման փաստն առկա է եղել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.10.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 27.07.2011 թվականի վճռին:

2. Վլադիմիր Սալիբեկյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ3/0161/05/11
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ3/0161/05/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.03.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն) հայցի ընդդեմ Հրանտ Վարձելյանի՝ 250.000 ՀՀ դրամի վճարման կարգադրություն արձակելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ոստիկանությունը պահանջել է Հրանտ Վարձելյանի կողմից Ոստիկանության համապատասխան հաշվին 250.000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ վճարման կարգադրություն արձակել:

ՀՀ վարչական դատարանը 22.04.2010 թվականին արձակել է Հրանտ Վարձելյանի կողմից Ոստիկանության համապատասխան հաշվին 250.000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանի 02.06.2011 թվականի որոշմամբ վերադարձվել է Հրանտ Վարձելյանի՝ 27.05.2011 թվականին ներկայացրած հակընդդեմ հայցադիմումը, և նույն օրվա մեկ այլ որոշմամբ վճարման կարգադրությունը վերացվել է, և անցում է կատարվել հայցային վարույթի:

ՀՀ վարչական դատարանի 23.06.2011 թվականի որոշմամբ մերժվել է Հրանտ Վարձելյանի՝ 22.06.2011 թվականին կրկին ներկայացրած հակընդդեմ հայցադիմումի ընդունումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան) 29.09.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 230.000 ՀՀ դրամի չափով, իսկ մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝Վերաքննիչ դատարան) 06.03.2012 թվականի որոշմամբ Հրանտ Վարձելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 29.09.2011 թվականի վճիռը 80.000 ՀՀ դրամի մասով բեկանվել է և այդ մասով հայցը մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ոստիկանությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածը և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Հրանտ Վարձելյանը Ոստիկանության 25.09.2009 թվականի թիվ ԱՔ 118399 որոշումը չի բողոքարկել, տուգանքը տարաժամկետելու դիմում չի ներկայացրել, հետևաբար տուգանքի գումարի չափը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով հնգապատկվել է և ենթակա է բռնագանձման: Այն, որ Հրանտ Վարձելյանը վճարել է տուգանքի մի մասը՝ 20.000 ՀՀ դրամ, չի կարող հիմք հանդիսանալ այդ չափով պակաս գումար հնգապատկելու համար, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը հստակ սահմանում է, որ տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափն է հնգապատկվում, այլ ոչ թե դրա մնացորդը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.03.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 29.09.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ոստիկանության 25.09.2009 թվականի թիվ ԱՔ 118399 որոշմամբ Հրանտ Վարձելյանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ենթարկվել է վարչական տույժի՝ տուգանքի՝ 50.000 ՀՀ դրամի չափով: Նշված որոշումը Հրանտ Վարձելյանին հանձնվել է 25.09.2009 թվականին (գ.թ. 4):

2) Ի կատարումն Ոստիկանության 25.09.2009 թվականի թիվ ԱՔ 118399 որոշման՝ Հրանտ Վարձելյանը 26.10.2009 թվականին վճարել է 20.000 ՀՀ դրամ (գ.թ. 2):

3) Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տուգանքի գումարը չի վճարվել, տուգանքի գումարը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով հնգապատկվել է:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պարտադիր է կատարման պետական և հասարակական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից:

Նույն օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 123-129[2]-րդ, 132-134[1]-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկվում է: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 123-129[2]-րդ, 131-133-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը հնգապատկվում է, որը ենթակա է դատական կարգով բռնագանձման:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: Վերոնշյալ նորմերից հետևում է, որ դրանցով սահմանված տուգանքի գումարի վճարման պարտականությունը, ինչպես նաև այն չվճարելու արդյունքում նախատեսված հետևանքները վերաբերում են տուգանքի գումարի ամբողջ չափին, այլ ոչ թե դրա մի մասին: Վերոգրյալ դրույթներում տառացիորեն նշված է, որ սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում եռապատկվում, ապա հնգապատկվում է տուգանքի չափը, այլ ոչ թե **տուգանքի չվճարված մասը**: Հետևաբար տուգանքի գումարի մի մասի վճարումը չի կարող համարվել տուգանքի վճարում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ոստիկանության 25.09.2009 թվականի թիվ ԱՌ 118399 որոշմամբ Հրանտ Վարձելյանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ենթարկվել է վարչական տույժի՝ տուգանքի՝ 50.000 ՀՀ դրամի չափով: Նշված որոշումը Հրանտ Վարձելյանին հանձնվել է 25.09.2009 թվականին: Վերջինս, ի կատարումն Ոստիկանության 25.09.2009 թվականի թիվ ԱՌ 118399 որոշման, 26.10.2009 թվականին վճարել է 20.000 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տուգանքի գումարը չի վճարվել, այն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով հնգապատկվել է:

Դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված տուգանքի գումարի հնգապատկման կարգը կիրառել է տուգանքի գումարի ողջ չափի նկատմամբ՝ ստացվածից հանելով արդեն իսկ վճարված 20.000 ՀՀ դրամը՝ պատճառաբանելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածը վերաբերում է ոչ թե տուգանքի գումարի մասնակի, այլ ամբողջական վճարմանը:

Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով Հրանտ Վարձելյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վերոնշյալ դրույթներում «տուգանքը չվճարելու» բառակապակցությունը չի կարող կիրառվել տուգանքի վճարված մասի նկատմամբ, ուստի տուժան-

քային հետևանքները կիրառման են ենթակա որոշակի ժամկետներում տուգանքի չվճարված մասի նկատմամբ:

Մինչդեռ վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Դատարանի դիրքորոշումն այն հարցում, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ «**տուգանքի** չափը հնգապատկվում է» արտահայտությունը վերաբերում է տուգանքի գումարի ողջ չափին՝ անկախ տուգանքի գումարի որևէ չափի վճարված լինելու հանգամանքից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուգանքի գումարի մի մասի վճարումը չի կարող համարվել տուգանքի վճարում, ուստի այն սահմանված ժամկետում ամբողջությամբ չվճարելը հանգեցնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված իրավական հետևանքներին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով վերաքննիչ բողոքը, հանգել է այն եզրակացության, որ վճարման կարգադրություն արձակելու վարույթից հակընդդեմ հայցի հիման վրա հայցային վարույթի անցնելուց հետո դադարել է գործել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետով սահմանված արտոնությունը, և դիմողի համար առաջ է եկել հայցադիմումի համար պետական տուրքի վճարման հետաձգված պարտավորություն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դիմողները՝ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Վճռաբեկ դատարանը նախկինում արդեն անդրադարձել է նշված հարցին: Մասնավորապես, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն *(տես՝ ըստ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հայցի ընդդեմ Գարեգին Գալոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ ՎԴ6/0035/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):*

Հետևաբար, սույն գործով Ոստիկանությունն ազատված է պետական տուրքի վճարումից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մա-

սին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.03.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 29.09.2011 թվականի վճռին:

2. Հրանտ Վարձելյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0282/05/11
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0282/05/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.02.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տեսչության ընդդեմ «Հասմիկ-Ա» ՍՊԸ-ի տնօրեն Սարուսյա Զալինյանի (այսուհետ՝ Ընկերության տնօրեն)՝ 300.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին և ըստ Ընկերության տնօրենի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ 12.11.2010 թվականի թիվ 9 որոշումը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է արձակել վճարման կարգադրություն Ընկերության տնօրենից 300.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Բաբայան) (այսուհետ՝ Դատարան) 14.01.2011 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերության տնօրենը պահանջել է վերացնել Տեսչության 12.11.2010 թվականի թիվ 9 որոշումը:

Դատարանի 31.01.2011 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

Դատարանի 11.07.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.02.2012 թվականի որոշմամբ Ընկերության տնօրենի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, բեկանվել և փոփոխվել է Դատարանի 11.07.2011 թվականի վճիռը, և հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն, այն է՝ անվավեր է ճանաչվել Տեսչության 12.11.2010 թվականի թիվ 9 որոշման 2-րդ կետը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետը, ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157[7]-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Ընկերության տնօրենը կառուցապատող է, որի իրականացրած շինարարական աշխատանքների համար պահանջվում է շինարարության թույլտվություն: Իսկ շինարարության թույլտվության համաձայն կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ շինարարական աշխատանքներն իրականացնողի մոտ առկա լինի համապատասխան լիցենզիա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 11.07.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի 13.10.2010 թվականի թիվ S1-301 ստուգման հանձնարարագրով քաղաքաշինական պետական տեսուչ Արտաշես Սարգսյանին հանձնարարվել է 13.10.2010 թվականից մինչև 26.10.2010 թվականը ստուգել Նոր Նորքի 5-րդ միկրոշրջան, Գալշոյան փողոցի թիվ 36 հասցեի թիվ 747/1 խանութի վերակառուցումը **(հատոր 1-ին, գ.թ. 6):**

2. 20.10.2010 թվականի թիվ S1-301/01/01 արձանագրության համաձայն՝ «Կառուցապատող Մ. Զալինյանն առանց համապատասխան լիցենզիայի իրականացրել է լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ», որպիսի խախտումները բնորոշվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157[7]-րդ և 154-րդ հոդվածներով **(հատոր 1-ին, գ.թ. 8):**

3. 20.10.2010 թվականի թիվ S1-301/01 ստուգման ակտով արձանագրվել է, որ «Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 17-րդ կետի՝ կառուցապատող Մ. Զալինյանի կողմից կատարված քանդման աշխատանքները համարվում են լիցենզավորման ենթակա գործունեություն: Կառուցապատող Մ. Զալինյանն առանց

համապատասխան լիցենզիայի իրականացրել է լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ: Վերոհիշյալ շինարարական աշխատանքները համարվում են ինքնակամ» **(հատոր 1-ին, գ.թ. 7):**

4. Տեսչության 12.11.2010 թվականի թիվ 9 որոշման 1-ին կետով Երևանի քաղաքապետին առաջարկվել է օրենքով սահմանված կարգով կազմակերպել Նոր Նորքի 5-րդ միկրոշրջանի Գալշոյան փողոցի թիվ 36 հասցեի թիվ 747/1 խանութի վերակառուցման ինքնակամ շինարարական աշխատանքների կասեցումը և հետևանքների վերացումը, իսկ 2-րդ կետով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157^{7}-րդ հոդվածի հիմքով Ընկերության տնօրենի նկատմամբ նշանակվել է 300.000 ՀՀ դրամ տուգանք **(հատոր 1-ին, գ.թ. 4-5):**

5. Երևանի քաղաքապետի 03.11.2010 թվականի թիվ Վ-39/7 որոշմամբ Ընկերության տնօրենի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի հիմքով նշանակվել է 200.000 ՀՀ դրամ տուգանք: Նույն որոշմամբ շինարարական աշխատանքներ իրականացրած Արտակ Ղազարյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճվել է՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի հիմքով իրավախախտող կարող է համարվել տարածքը սեփականության իրավունքով տիրապետող անձը, որպիսին Արտակ Ղազարյանը չի հանդիսացել **(հատոր 1-ին, գ.թ. 17-18):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող (այսուհետ՝ կառուցապատող): … Կառուցապատողները պարտավոր են՝ ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա ...:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: … Շինարարության թույլտվություն չի պահանջվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածի աղյուսակում: Նույն հոդվածի 2-րդ մասի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի՝ քաղաքաշինության բնագավառ, 17-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ շինարարության իրականացումը, բացառությամբ՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, ենթակա է լիցենզավորման:

ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում

շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» թիվ 91 որոշման 1.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) ցանկը, որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում՝ համաձայն թիվ 2 հավելվածի: Նշված հավելվածի 6-րդ և 7-րդ՝ «*Լուսամուտներ, դռներ ու դարպասներ*», «*Սանդուղքներ և սանդղամուղքեր*», *կեղերով դռների* և պատուհանների բացվածքների, ինչպես նաև հարթակի և աստիճանների իրականացման շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների ցանկում:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքաշինական գործունեություն իրականացնող սեփականատերը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ուժով հանդիսանում է կառուցապատող: Կառուցապատողի կողմից կառուցապատման աշխատանքները պետք է իրականացվեն շինարարության թույլտվության հիման վրա, բացառությամբ այն շինարարական աշխատանքների, որոնց իրականացման համար ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ շինարարության թույլտվություն չի պահանջվում: Ընդ որում, շինարարության թույլտվություն պահանջող կառուցապատման աշխատանքներն իրականացվում են բացառապես համապատասխան լիցենզիայի առկայությամբ, այսինքն՝ ենթակա են լիզենզավորման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157^{7}-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելն առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Դատարանը հայցը բավարարելիս և հակընդդեմ հայցը մերժելիս պատճառաբանել է, որ «Երևանի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Գալշոյան փողոցի թիվ 36 շենքի առաջին հարկում Ընկերությանը պատկանող թիվ 747/1 խանութի տարածքը պարփակող քարե պատերում իրականացվել են թվով մեկ դռան և հինգ պատուհանների բացվածքների, ինչպես նաև մուտքի կազմակերպման շինարարական աշխատանքներ: Տվյալ դեպքում տարածքի սեփականատեր Ընկերությունը հանդիսացել է որպես կառուցապատող, շինարարական աշխատանքներն իրականացվել են ինքնակամ՝ առանց նման աշխատանքներ կատարելու համար տրված շինարարության թույլտվության և առանց նման շինարարական աշխատանքներ իրականացնելու համար տրված լիցենզիայի՝ առանց նման լիցենզիա ունեցող կազմակերպության միջոցով»: Միաժամանակ Դատարանը նշել է, որ հակընդդեմ հայցով վիճարկվող որոշումն իր բովանդակությամբ համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, իսկ դրա ընդունմանն ուղղված վարչական վարույթն իրականացվել է նույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ, և բացակայում են վարչական ակտն անվավեր ճանաչելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելիս պատճառաբանել է, որ գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց՝ պայմանագիր կամ այլ փաստաթուղթ, որով կհաստատվեր, թե Ընկերության տնօրենի կողմից կատարված աշխատանքները նախ՝ լիցենզավորման ենթակա աշխատանքներ են, և երկրորդ՝ դրանք կատարվել են առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով:

Դրանից էլ կարելի է ենթադրել, որ Ընկերության տնօրենն ինքնուրույն է իրականացրել շինարարական աշխատանքները, որպիսի պայմաններում լիցենզիա հարկավոր չէ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 157[7]-րդ հոդվածն Ընկերության տնօրենի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ հոդվածով հստակ նշված է, որ կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելու դեպքում են ենթարկվում վարչական պատասխանատվության:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Ընկերությունը, որն իր գործառույթները «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն իրականացնում է գործադիր մարմնի (գլխավոր տնօրեն, նախագահ և այլք) միջոցով, որպես կառուցապատող Երևանի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Գալշոյան փողոցի թիվ 36 շենքի առաջին հարկում սեփականության իրավունքով իրեն պատկանող թիվ 747/1 խանութի տարածքը պարփակող քարե պատերում իրականացրել է թվով մեկ դռան և հինգ պատուհանների բացվածքների, ինչպես նաև մուտքի կազմակերպման ինքնակամ՝ առանց շինարարության թույլտվության, շինարարական աշխատանքներ: Նշված շինարարական աշխատանքներն իրականացրել է Արտակ Ղազարյանը, որպիսի հանգամանքն էլ հաստատված է Երևանի քաղաքապետի 03.11.2010 թվականի թիվ Վ-39/7 որոշմամբ: Այսինքն՝ **Ընկերության տնօրենն առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձի միջոցով իրականացրել է լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ, որպիսի արարքն առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ**:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հայցով վիճարկվող որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի պահանջներին հապատասխան, ուստի բացակայում են վարչական ակտն անվավեր ճանաչելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության հայցը ենթակա է բավարարման, իսկ Ընկերության տնօրենի հակընդդեմ հայցը՝ մերժման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավուն-

քի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 11.07.2011 թվականի վճռին:

2. «Հասմիկ-Ա» ՍՊԸ-ի տնօրեն Սարուսյա Զալինյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ1/0069/05/09
Նախագահող դատավոր՝ Հ. Բեղնյան
Դատավորներ՝ Լ. Սոսյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ1/0069/05/09**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Գարալե» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարության աոընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Գորիսի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտը:

ՀՀ վարչական դատարանի 27.04.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտն անվավեր ճանաչել ակտի 1-ին կետով առաջադրված 43.322.700 ՀՀ դրամ շահութահարկի և 2-րդ կետով առաջադրված 7.680.600 ՀՀ դրամ եկամտահարկի պարտավորությունների մասով: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2010 թվականի որոշմամբ Տեսչության և Ընկերության վճռաբեկ բողոքները բավարարվել են մասնակիորեն: Որոշվել է բեկանել ՀՀ վար-

չական դատարանի 27.04.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ք. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 16.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է անվավեր ճանաչել 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտի 17-րդ կետը: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.11.2011 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և հայցը բավարարելու մասով Դատարանի 16.06.2011 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ, իսկ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 16.06.2011 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը, և այդ մասով գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 113-րդ, 122-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը, գործի նոր քննությունը կատարելով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2010 թվականի որոշմամբ սահմանված ծավալի շրջանակներում, ակտով արձանագրված խախտման իրավաչափության հարցը պարզելու համար այն համադրել է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) 14.08.2009 թվականի թիվ 24910909 եզրակացության հետ, և գտել է, որ փորձաքննությանը ներկայացվել և եզրակացության հիմքում դրվել են այնպիսի փաստաթղթեր, որոնք ներկայացված չեն եղել և չեն հետազոտվել վարչական վարույթի ընթացքում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ ստուգման ընթացքում՝ 04.05.2009 թվականին, Ընկերության տնօրենը տվել է բացատրություն այն մասին, որ Ընկերությունը չունի ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչն էլ ակտը կազմելիս հաշվի է առնվել ստուգումն իրականացրած անձանց կողմից: Իսկ ստուգումն իրականացնելուց և ակտը կազմելուց հետո ներկայացված փաստաթղթերը չէին կարող հիմք հանդիսանալ ակտով առաջադրված պարտավորությունները վերահաշվարկելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.11.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 16.06.2011 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտել և գնահատել է գործով ձեռք բերված ապացույցները, ինչի արդյունքում եկել է ճիշտ եզրահանգման առ այն, որ վիճարկվող ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ, որի արդյունքում էլ խախտվել են Ընկերության իրավունքներն ու պարտականությունները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի 09.03.2009 թվականի թիվ 1000042 հանձնարարագրով Տեսչության վերահսկողության և գանձումների բաժնի գլխավոր հարկային տեսուչ Ծամավոն Հայրապետյանին, հարկային տեսուչ Արտակ Մալինցյանին և սոցիալական վճարների և եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ Նորայր Գրիգորյանին հանձնարարվել է Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման հանձնարարագրի օրինակը հանձնվել է 09.04.2009 թվականին, իսկ ստուգումը փաստացի սկսվել է 16.04.2009 թվականին: Հանձնարարագիրը ստանալու և ստուգումը սկսելու ամսաթվի մասին Ընկերության իրազեկվածությունը հաստատվել է Ընկերության տնօրենի ստորագրությամբ **(1-ին հատոր, գ.թ. 5-6):**

2) Կոմիտեի նախագահի 10.04.2009 թվականի թիվ 1/512 հրամանով Նորայր Գրիգորյանն ազատվել է հարկային ծառայությունից **(1-ին հատոր, գ.թ. 134):**

3) Կոմիտեի նախագահի 29.04.2009 թվականի «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի թվով 5 հանձնարարագրերով ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կազմում լրացում կատարելու մասին» թիվ 1-07/684-Ա հրամանով Ընկերությունում ստուգում իրականացնող անձանց կազմը լրացվել է: Որպես ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք ստուգմանը ներգրավվել են Կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչության 1-ին բաժնի օպերլիազորներ Պարույր Եպիսկոպոսյանը և Պարգև Գալոյանը **(1-ին հատոր, գ.թ. 60):**

4) Տեսչության պետի 29.04.2009 թվականի թիվ 428 զեկուցագրի հիման վրա՝ Ընկերությունում իրականացվող ստուգման ժամկետը Կոմիտեի նախագահի 30.04.2009 թվականի թիվ 1-07/698-Ա հրամանով երկարաձգվել է 10 անընդմեջ աշխատանքային օրով **(1-ին հատոր, գ.թ. 58-59):**

5) Ընկերության տնօրեն Գագիկ Բաբայանի՝ Կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչությունում 04.05.2009 թվականին տված բացատրության համաձայն՝ «…ապրանքները ձեռք եմ բերել շուկաներից, անհատ անձանցից առանց հիմնավորող փաստաթղթերի: … 2008 թվականի տարեկան հաշվետվություններում իրացումը ցույց եմ տվել փաստացի կատարված իրացմանը համաձայն, սակայն ծախսային մասը ցույց եմ տվել առանց հիմնավորող փաստաթղթերի…» **(2-րդ հատոր, գ.թ. 25):**

6) Ստուգման արդյունքներով 20.05.2009 թվականին կազմված թիվ 1000042 ակտով Ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն 89.382.000 ՀՀ դրամ, այդ թվում՝ շահութահարկի գծով՝ 43.322.700 ՀՀ դրամ /ակտի 1-ին կետ/, եկամտահարկի գծով՝ 7.860.600 ՀՀ դրամ /ակտի 2-րդ կետ/, ավելացված արժեքի հարկի գծով՝ 33.167.000 ՀՀ դրամ /ակտի 4-րդ կետ/ և «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի խախտման համար՝ 5.211.700 ՀՀ դրամ /ակտի 17-րդ կետ/՝ ներառյալ տույժերի և տուգանքների գումարները: Ակտի 4-րդ կետով արձանագրվել է, որ «2008 թվականի բոլոր չորս եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկների դեբետային շրջանառության տողերում ներկայացվել են ՀՀ տարածքում մատակարարներից ձեռք բերված ապրանքների համար վճարված հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներ, որոնց վերաբերյալ Ընկերությունը հարկային հաշիվներ չի ունեցել, բանկային փոխանցմամբ վճարումներ չի կատարել և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկություններ չի ներկայացրել հարկային տեսչություն, որի հետևանքով դրանք ենթակա չեն հաշվանցման» **(1-ին հատոր, գ.թ. 7-19)**:

7) Կազմակերպության 14.08.2009 թվականի Հմ 24910909 փորձագետի եզրակացության համաձայն՝ թիվ 1000042 ակտով արձանագրված խախտումների դրվագներով Ընկերության նկատմամբ առաջացող հարկային պարտավորությունները կազմում են

37.749.800 ՀՀ դրամ, այդ թվում՝ 17.436.200 ՀՀ դրամ հարկ (ավելացված արժեքի հարկ), 4.640.200 ՀՀ դրամ տույժ, 15.673.400 ՀՀ դրամ տուգանքներ: Ավելացված արժեքի հարկի գծով 17.436.200 ՀՀ դրամ հարկի գումարի գծով պարտավորությունն առաջացել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջի ոչ ճիշտ կիրառման հետևանքով, այլ ոչ թե հարկման համար հիմք համարվող փաստաթղթերում առանց ԱԱՀ-ի դեբետային շրջանառության իրականում չունենալու պայմաններում ԱԱՀ-ի դեբետի ցույց տրման պայմաններում: 20.05.2009 թվականի թիվ 1000042 ակտով Ընկերությանն առաջադրված հարկային պարտավորությունները հաշվարկվել են փաստաթղթային ստուգման մեթոդով, սակայն ամբողջ ծավալով հաշվի չեն առնվել Ընկերության հետազոտվող ժամանակաշրջանի հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերը: Միաժամանակ եզրակացությունում նշվել է, որ ակտի 1-ին և 2-րդ կետերում նշված փաստերը չեն բխում սույն փորձաքննությանը տրամադրված Ընկերության հաշվապահական փաստաթղթերի տվյալներից և գործող օրենսդրության պահանջներից, հետևաբար շահութահարկի գծով և եկամտահարկի գծով հարկային պարտավորություններ չեն առաջանում **(1-ին հատոր, գ.թ. 77-89):**

8) Կոմիտեի հետաքննության վարչության 26.08.2009 թվականի «նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման համաձայն՝ Ընկերության 2008 թվականի գործունեության արդյունքում առաջացել է լրացուցիչ գանձման ենթակա 17.436.200 ՀՀ դրամ ԱԱՀ, որը փորձագետի եզրակացության համաձայն՝ Ընկերության տնօրեն Գագիկ Բաբայանի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջների ոչ ճիշտ կիրառման արդյունք է, այլ ոչ թե հարկեր վճարելուց չարամտորեն խուսափելու նպատակով հարկային հաշվետվություններում կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերում խեղաթյուրված տվյալներ մտցնելու արդյունք: Որոշման հիմքում դրվել է Կազմակերպության 14.08.2009 թվականի Հմ 24910909 եզրակացությունը **(1-ին հատոր, գ.թ. 90-91):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարե-

լու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստորադաս դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վերադաս դատարանի որոշման հիման վրա՝ վերադաս դատարանի սահմանած ծավալով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր 27.12.2010 թվականի որոշմամբ մասնակիորեն բավարարելով Տեսչության և Ընկերության վճռաբեկ բողոքները, բեկանել է ՀՀ վարչական դատարանի 27.04.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վիճարկվող ակտի իրավաչափության հարցին, արձանագրել է, որ «Դատարանը նոր քննության ընթացքում պետք է պատշաճ գնահատման առարկա դարձնի ակտը, ինչպես նաև այն համադրելով Կազմակերպության 14.08.2009 թվականի Հմ 24910909 փորձագետի եզրակացության հետ՝ հիմնավորի այդ ակտով արձանագրված խախտման իրավաչափության հարցը»:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է Կազմակերպության 14.08.2009 թվականի Հմ 24910909 փորձագետի եզրակացությունը: Մինչդեռ, սույն գործով Դատարանը քննարկման առարկա չի դարձրել Ընկերության տնօրեն Գագիկ Բաբայանի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչությունում 04.05.2009 թվականին տված բացատրությունը, ըստ որի՝ **«...ապրանքները ձեռք եմ բերել շուկաներից, անհատ անձանցից առանց հիմնավորող փաստաթղթերի: ... 2008 թվականի տարեկան հաշվետվություններում իրացումը ցույց եմ տվել փաստացի կատարված իրացմանը համաձայն, սակայն ծախսային մասը ցույց եմ տվել առանց հիմնավորող փաստաթղթերի...»** և չի պատճառաբանել, թե ինչու է այդ ապացույցը մերժում»:

Սույն գործով Դատարանը, գնահատելով և համադրելով Կազմակերպության 14.08.2009 թվականի Հմ 24910909 փորձագետի եզրակացությունը և Ընկերության տնօրեն Գագիկ Բաբայանի՝ Կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչությունում 04.05.2009 թվականին տված բացատրությունը, հայցը մասնակիորեն՝ վիճարկվող ակտի 17-րդ կետն անվավեր ճանաչելու մասով, բավարարելիս պատճառաբանել է, որ «եզրակացությունից պարզ չէ, թե Ընկերության տնօրենի կողմից ինչ հաշվապահական փաստաթղթեր են ներկայացվել», «Ընկերության կողմից ստուգումն իրականացնող անձանց չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթեր, ինչի հետևանքով ստուգումն իրականացվել է հարկային գործում առկա փաստաթղթերի և Ընկերության անձնական հաշվի քարտերի հիման վրա», և գտել է, որ առկա չէ որևէ հիմք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով ակտը՝ բացի ակտի 17-րդ կետից, անվավեր ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը, Ընկերության վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելով և բեկանելով Դատարանի վճռի՝ հայցը մերժելու մասը, պատճառաբանել է, որ «Դատարանը չի պատճառաբանել, թե ինչու Կազմակերպության 14.08.2009 թվականի Հմ 24910909 փորձագետի եզրակացությունն ակտով արձանագրված խախտման իրավաչափության տեսանկյունից չի կարող համարվել պատշաճ ապացույց», «Դատարանը պետք է պարզեր արդյոք Ընկերության տնօրեն Գագիկ Բաբայանը, նշված բացատ-

րությունը տալով, օգտվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի գ) կետով սահմանված իրավունքից, արդյոք նշված բացատրությունը պահանջելը ստուգումն իրականացնող անձանց «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետով սահմանված իրավունքի իրականացումն է, և այն իրականացնելն ուղղված է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին»:

Հիմք ընդունելով վերը նշվածը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի վճիռը՝ հայցը մերժելու մասով, բեկանելու հիմքում դրված Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Ընկերության տնօրենի՝ Կոմիտեի օպերատիվ-հետախուզության վարչությունում 04.05.2009 թվականին տված բացատրությունը եղել է սպառիչ այն իմաստով, որ **ապրանքներն առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռք է բերել շուկաներից** և **2008 թվականի տարեկան հաշվետվություններում ծախսային մասը ցույց է տվել առանց հիմնավորող փաստաթղթերի:** Այսինքն՝ մինչ վիճարկվող ակտը կազմելու պահը ստուգող տեսուչներին չեն ներկայացվել կատարված ծախսերը հիմնավորող հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, ինչի հետևանքով ստուգումն իրականացվել է հարկային գործում առկա փաստաթղթերի և Ընկերության անձնական հաշվի քարտերի հիման վրա: Հետևաբար, վարչական մարմինը հիմք չի ունեցել կասկածելու դրանց հավաստիությանը, իսկ ակտը կազմելուց հետո ներկայացված հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, որոնք վարչական վարույթի ընթացքում չեն ներկայացվել և չեն հետազոտվել, չէին կարող քննարկվող պարագայում հիմք հանդիսանալ ակտով առաջադրված պարտավորությունները վերահաշվարկելու համար:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2011 թվականի որոշման՝ ՀՀ վարչական դատարանի 16.06.2011 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը բեկանելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու մասը, և այդ մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 16.06.2011 թվականի վճռին: Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

2. «Գարալե» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

«Գարալե» ՍՊԸ-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ1/0143/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Գ. Ղարիբյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ1/0143/05/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Կամո Պետրոսյանի, «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ բռնագանձելու, Ընկերությանը ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և Կամո Պետրոսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Կոմիտեի՝ 12.08.2010 թվականի որոշումն իրեն տուգանելու մասով առոչինչ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է բռնագանձել Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ և պարտավորեցնել Ընկերությանը կատարելու ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորությունը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կամո Պետրոսյանը պահանջել է իրեն տուգանելու մասով առոչինչ ճանաչել Կոմիտեի 12.08.2010 թվականի որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 09.07.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.11.2011 թվականի որոշմամբ Կամո Պետրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, բեկանվել և փոփոխվել է Դատարանի 09.07.2011 թվականի վճռի՝ հակընդդեմ հայցը մերժելու և Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ բռնագանձելու մասով հայցը բավարարելու մասերը, և Կամո Պետրոսյանի հակընդդեմ հայցը բավարարվել է, իսկ Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ բռնագանձելու մասով Կոմիտեի հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ, 42-րդ հոդվածները, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրական դատարանի 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշումը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ, 132-րդ, 203-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վարչական ակտի առոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ անձի վրա դրվող պարտականությունը կամ տրամադրվող իրավունքը լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Իսկ այն դեպքերում, երբ պարտականությունը դրվել է հիմք ընդունելով օրենքի դրույթները, ապա նման պարտականությունը չի կարող որպես ակնհայտ ոչ իրավաչափ գնահատվել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի կիրառման մասին իր դիրքորոշումն արտահայտել է վարչական տույժ նշանակելու մասին որոշումն ընդունելուց երկու ամիս անց, ուստի վարչական մարմինը չէր կարող նշված հոդվածը կիրառել ՀՀ Սահմանադրական դատարանի տվյալ մեկնաբանությանը համապատասխան:

Բացի այդ, ապրանքների և տրանսպորտային միջոցների ձշգրիտ տեղեկություններով հայտարարագրումն օրենքով անձի վրա դրված պարտականություն է, ինչը չկատարելու համար ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.11.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.07.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության ներկայացուցիչ Կամո Պետրոսյանը («ԱՍԲՍ» ՍՊԸ-ի տնօրեն) 12.05.2010 թվականի թիվ C-3754 ԲՄՀ-ով, 33.780.415 ՀՀ դրամ մաքսային արժեքով, ԱՏԳ ԱԱ 39173300 ծածկագրով հայտարարագրել է խողովակներ՝ կցամասերով **(1-ին հատոր, գ.թ. 47):**

2) Կոմիտեի 01.06.2010 թվականի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ «… C-3754 առ 12.05.2010 թվականի ԲՄՀ-ով հայ-

տարարագրված բեռի զննման ժամանակ պարզվեց, որ հայտարարագրված խողովակներ՝ կցամասերով, բեռի փոխարեն առկա է պոլիմերային թաղանթից գլանաձև արտադրանք՝ սև մետաղից ճոպաններով» **(1-ին հատոր, գ.թ. 39):**

3) Կոմիտեի 15.06.2010 թվականի թիվ 8-2/8054-10 գրության համաձայն՝ «… ԱՏԳ ԱԱ 391733 ենթադիրքում դասակարգելի են չամրանավորված, այլ նյութերի հետ չհամակցված պլաստմասայից խողովակները: Քանի որ դասակարգման ներկայացված խողովակները համակցված են այլ նյութերի հետ, ապա դրանք չեն կարող դասակարգվել հիշյալ ծածկագրով: Հետևաբար, առաջնորդվելով ԱՏԳ ԱԱ հիմնական կանոններով, վերոհիշյալ ապրանքն իր կցամասերով և ամրակային դետալներով հանդերձ պետք է դասակարգվի 392690 ապրանքային ենթադիրքում» **(1-ին հատոր, գ.թ. 42):**

4) «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 09.07.2010 թվականի թիվ ՀՄ 18911010 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «ՀՀ ներմուծված, փորձաքննության առարկա հանդիսացող մեծ բրիտանական «Flexadux Plastics» LTD կազմակերպության կողմից արտադրված ապրանքատեսակները հանդիսանում են օդափոխման համակարգի տարբեր նշանակության և չափերի խողովակներ՝ պոլիէթիլենտերեֆտալատի թելերից հյուսված գործվածքով, որը երկու կողմերից պատված է պոլիվինիլքլորիդի շերտերով, հանգույցներ, կցամասեր, մետաղալարերի ճոպաններ և այլն…» **(1-ին հատոր, գ.թ. 43-46):**

5) Կոմիտեի 12.08.2010 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման համաձայն՝ Կամո Պետրոսյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով ճանաչվել է զանցառու և հայտարարագրված ապրանքն անվանման ու ԱՏԳ ԱԱ ծածկագրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրելու հիմքով տուգանվել է այդ ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 33.780.415 ՀՀ դրամ **(1-ին հատոր, գ.թ. 36-38):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա է, մասնավորապես՝ հետևյալ անհաղթահարելի կոպիտ սխալը. ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն,** կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներով անդրադարձել է վարչական ակտի առ ոչինչ լինելու հարցին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա **ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն** դնելը, կամ անձին **ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք** տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը, կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի **ակնհայտ** ոչ իրավաչափ: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առ ոչինչ դիտելու համար: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունն **առերևույթ** ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչա-

կան ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առ ոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր *(տե՛ս, ՀՀ կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոռոսինվեստ» ՍՊԸ-ի՝ 1.269.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, վարչական գործ թիվ ՎԴ/0562/05/09):*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է

-օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով,

-կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ **օրենդիրը ոչ իրավաչափ է դիտում այն վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կամ եթե ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ ըստ էության տվյալ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում:** Այսինքն՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար պետք է առկա լինի հետևյալ հիմքերից որևէ մեկը, այն է՝

«ա» **վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ կիրառմամբ**, կամ

«բ» **վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանմամբ, կամ**

«գ» **ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում**: Ընդ որում, վարչական ակտի ոչ իրավաչափ՝ անվավեր լինելու հանգամանքը ճանաչվում է ինչպես այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, այնպես էլ դատական կարգով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտարարատուն սույն օրենսգրքի համաձայն կրում է պատասխանատվություն՝ հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը, ինչպես նաև հայտարարագրումը ոչ իրենց անվանմամբ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

Սույն գործով Դատարանը հակընդդեմ հայցը մերժելիս և Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ բռնագանձելու հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ «Կամո Պետրոսյանը հանդիսանում է ապրանքներ տեղափոխողի կողմից լիազորված անձ, որի պարտականությունն էր ապրանքներն իրենց անվամբ հայտարարագրելը: Նրա կողմից ապրանքները հայտարարագրվել են ոչ իրենց անվանմամբ, որպիսի արարքն առաջացնում է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն, հետևաբար նրա վրա դրված պարտականությունն ակնհայտ ոչ իրավաչափ դիտվել չի կարող: Կամո Պետրոսյանն իր վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը հիմավորում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ, 32-րդ և 279-րդ հոդվածների խախտման հիմքով (քանի որ բացակայում է դրանցով սահմանված մեղքի առկայության ստուգումը վարչական մարմնի կողմից): Օրենքի խախտման հիմքով վարչական ակտը կարող է վիճարկվել միայն վարչական ակտի անվավերության առումով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին կետի ա/ ենթակետով: Քանի որ Կամո Պետրոսյանի պահանջը հիմնվում է օրենքի խախտմամբ իր վրա ոչ իրավաչափ պարտականություն դնելու վրա, որը վարչական ակտի անվավերության հիմք է, հետևաբար վերը նշած հիմնավորումներով որոշումն առ ոչինչ ճանաչելու հիմքեր չկան: Իսկ որոշման իրավաչափության հարցի քննարկումն անվավերության հիմքերով, դուրս է սույն հայցի շրջանակներից: Կամո Պետրոսյանի կողմից վկայակոչած՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 12.10.2010 թվականի ՍԴՈ-920 որոշման մեկնաբանությունները վերաբերում են մեղքի առկայությանը, որը ենթակա է քննարկման ակտի անվավերության պահանջի դեպքում, որպիսի պահանջ սույն գործով չի ներկայացվել: Քանի որ Կամո Պետրոսյանը ստացել է տուգանքի որոշումը, սակայն նշանակված տուգանքի գումարը չի վճարել, բացակայում է որոշումն առ ոչինչ ճանաչելու հիմքերը, որոշումն օրենքով սահմանված կարգով անվավեր չի ճանաչված, հետևաբար տուգանքի գումարի բռնագանձման հայցը ենթակա է բավարարման»:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը՝ Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ բռնագանձելու և հակընդդեմ հայցը մերժելու մասերով բեկանելիս և փոփոխելիս պատճառաբանել է, որ «վեճի հիմքում ընկած է Ընկերության անվամբ ներմուծված բեռն անվանման և ԱՏԳ ԱԱ ծածկագրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրման փաստը, ինչը կողմերը չեն վիճարկում: Մյուս կողմից գործով հաստատված փաստ է, որ բեռի մաքսային արժեքի հայտարարագրված և վարչական ակտով հաստատված չափերը նույնական են, այսինքն՝ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրման տվյալ փաստը չի անդրադարձել բյուջետային մուտքերի չափի վրա: Այդ փաստերի պարագայում բողոքի լուծման առումով էական նշանակություն է ձեռք բերում ՀՀ Սահմանադրական դատարանի 12.10.2010 թվականի ՍԴՈ-920 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը», «ինչպես հետևում է ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումից, ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով Կամո Պետրոսյանին պատասխանատվության ենթարկելն ինքնանպատակ է և չի բխում վիճարկվող նորմի ընդհանուր իրավակարգավորման առարկայից: Այսինքն՝ ակնհայտ է նրա վրա ոչ իրավաչափ պարտականություն դնելու փաստը, որպիսի հանգամանքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն, վարչական ակտի առոչնչության հիմք է»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ «վիճարկվող որոշմամբ Կամո Պետրոսյանի վրա դրվող պարտականության ոչ իրավաչափության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ պետական բյուջեի մուտքերի նվազեցման չհանգեցնող արարքի համար նա չի կա-

րող պատասխանատվության ենթարկվել: Ընդ որում, այդ ոչ իրավաչափությունը հաստատելու համար անհրաժեշտ չէ պարզել վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը, կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, քանի որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի սխալ կիրառելիությունը տվյալ դեպքում ի սկզբանե ակնհայտ է լինում: Հետևաբար, վիճարկվող որոշումն առոչինչ է Կամո Պետրոսյանին ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով զանցառու ճանաչելու, ուրեմն և նրան տուգանելու մասերով»:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կամո Պետրոսյանի կողմից վարչական ակտն առոչինչ ճանաչելու պահանջի հիմքում դրված հիմնավորումները, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, ոչ **թե վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու, այլ անվավեր ճանաչելու հիմք են**, քանի որ տվյալ դեպքում վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա չեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերը, ուստի Կամո Պետրոսյանի հակընդդեմ հայցը ենթակա էր մերժման, և նկատի ունենալով, որ Կոմիտեի 12.08.2010 թվականի որոշումն առ ոչինչ չէ, օրենքով սահմանված կարգով անվավեր չի ճանաչվել, ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Կամո Պետրոսյանից 33.780.415 ՀՀ դրամ բռնագանձելու Կոմիտեի պահանջը ենթակա էր բավարարման, որպիսի դիրքորոշում և իրավացիորեն դրսևորել է Դատարանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 09.07.2011 թվականի վճռին:

2. Կամո Պետրոսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 1.023.412,45 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի, 1.020.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1896/05/10

Վարչական գործ թիվ **ՎԴ/1896/05/10**
2012թ.

Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Լ. Սոսյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.02.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյանների հայցի ընդդեմ Աբովյանի քաղաքապետարանի, երրորդ անձ Սյուզան Ստեփանյանի՝ Աբովյանի քաղաքապետարանին հայցվորների անվամբ տնտեսության թիվ 1 գրքից Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ քաղվածք տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մարինե Վարդանյանը, Ինգա և Վահե Կարապետյանները պահանջել են պարտավորեցնել Աբովյանի քաղաքապետարանին հայցվորների անվամբ տնտեսության թիվ 1 գրքից Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ քաղվածք տրամադրել:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 27.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.02.2012 թվականի որոշմամբ Սյուզան Ստեփանյանի և Աբովյանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքները բավարարվել են. Դատարանի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Մարինե Վարդանյանը, Ինգա և Վահե Կարապետյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, 27-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի թիվ ՎԴ/1483/05/09 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված է համարվել, որ 2003 թվականին Աբովյանի քաղաքապետարանի կողմից համայնքի տնտեսության թիվ 1 գրքից Գրիգոր Կարապետյանի անվամբ՝ ընտանիքի կազմի նշումով տրվել է թիվ 643 քաղվածքը, որի հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Աբովյանի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) կողմից Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյանների, Սյուզան և Վաչագան Ստեփանյանների սեփականության իրավունքը: Նույն վճռով հաստատվել է նաև, որ Մարինե Վարդանյանը, Ինգա և Վահե Կարապետյանները ևս վիճելի անշարժ գույքի օգտագործողներ էին, ուստի նրանց անունները նույնպես պետք է նշվեին համայնքի տնտեսության թիվ 1 գրքի՝ 2003 թվականի քաղվածքում: Մինչդեռ քաղվածքում Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյանների անուններն անհիմն կերպով չնշվելու արդյունքում վերջիններս զրկվել են անշարժ գույքի սեփականատեր դառնալու իրենց իրավունքից:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, գալով այն եզրահանգման, որ Աբովյանի քաղաքապետարանն իրավասու չէ տրամադրելու քաղվածք, որոշման մեջ չի պատճառաբանել նման համոզմունքի ձևավորումը: Ավելին, անտեսելով ՀՀ վարչական դատարանի 11.09.2009 թվականի թիվ ՎԴ/1483/05/09 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի և 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների ակնհայտ խախտում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 15.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.06.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի թիվ ՎԴ/1483/05/09 օրինական ուժի մեջ մտած վճռով, կայացված վարչական գործով ըստ հայցի Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյանների ընդդեմ Սյուզան Ստեփանյանի, Գրիգոր Կարապետյանի, Նադեժդա Կարապետյանի, Վաչագան Ստեփանյանի, Աբովյանի քաղաքապետարանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման՝ 14.08.2007 թվականին կատարված պետական գրանցումը, անշարժ գույքի նվիրատվության պայմանագի-

րը և 25.12.2007 թվականին կատարված պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և հայցվորների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, հաստատվել են հետևյալ փաստական հանգամանքները՝

2003 թվականին Աբովյանի քաղաքապետարանի կողմից համայնքի տնտեսության թիվ 1 գրքից Գրիգոր Կարապետյանի անվամբ, ընտանիքի կազմի նշումով տրվել է թիվ 643 քաղվածքը, որի հիման վրա Կադաստրի կողմից Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյանների, Սյուզան և Վաչագան Ստեփանյանների սեփականության իրավունքը: Մարինե Վարդանյանը, Ինգա և Վահե Կարապետյանները ևս հանդիսացել են Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի օգտագործողներ, և նրանց անունները նույնպես պետք է նշվեին ՀՀ Կոտայքի մարզի համայնքի տնտեսության համար 1 գրքի 2003 թվականի քաղվածքում /գրանցման համար 643/՝ «Ընտանիքի կազմը» բաժնում, ինչն անհիմն կերպով չի կատարվել, ինչի հետևանքով էլ նրանք զրկվել են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու հնարավորությունից **(հատոր 1-ին, գ.թ. 4-8)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված **քաղաքացիական** կամ վարչական **գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ** սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, միևնույն կողմերի մասնակցությամբ նախկինում քննված **քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերն ապացուցման կարիք չունեն (***տես՝ Դոնարա Սարգսյանն ընդդեմ Երևանի Կենտրոն թաղապետարանի, Հակոբ Կարապետյանի, երրորդ անձինք Իզաբել Փարսադանյանի, Բրաբիոն Շահինյանի՝ Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի գործկոմի 13.10.1994 թվականի թիվ 37/38 որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և բնակարանի ամբողջ տարածքի նկատմամբ նոր որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.10.2009 թվականի թիվ ՎԴ/4166/05/08 որոշումը***):**

«Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 31.12.1998 թվականի թիվ 867 որոշմամբ հաստատված Կա-

դաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներն իրականացվում են անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերի և կադաստրային քարտեզների հիման վրա: Նույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթեր են հանդիսանում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումները՝ կնքված համապատասխան համայնքների ղեկավարների կողմից, հողի սեփականության իրավունքի ժամանակավոր վկայականները, հողի սեփականության իրավունքի պետական ակտերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները, շենքերի սեփականության վկայագրերը, այգեգործների անդամատոմսերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասերի ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերը և հողամասերի հատակագծերը՝ տրված իրավասու պետական մարմինների կողմից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված օտարման, սեփականաշնորհման, վարձակալության մասին պայմանագրերը, անշարժ գույքի բռնագանձման վերաբերյալ վճիռներն ու դատավճիռները, կտակի, ըստ օրենքի իրավահաջորդության կամ ժառանգման վերաբերյալ փաստաթղթերը, **գյուղական բնակավայրերում տնտեսությունների գրքերից (ծխամատյաններից) քաղվածքները**, անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթեր:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված է համարվել, որ 2003 թվականին Աբովյանի քաղաքապետարանի կողմից համայնքի տնտեսության թիվ 1 գրքից Գրիգոր Կարապետյանի անվամբ, ընտանիքի կազմի նշումով տրվել է թիվ 643 քաղվածքը, որի հիման վրա Կադաստրի կողմից Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյանների, Սյուզան և Վաչագան Ստեփանյանների սեփականության իրավունքը:

Դատարանը բավարարել է հայցը՝ հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի թիվ ՎԴ/1483/05/09 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի 27.06.2011 թվականի վճիռը և մերժել հայցն այն պատճառաբանությամբ, որ թիվ 1 գիրքն իրենից իրոք ներկայացնում է ցուցակ, որում առկա գրառումներն արված են մատիտով և կան բազմաթիվ ջնջումներ և այն իրավահաստատող փաստաթուղթ չի կարող դիտարկվել: Պատճառաբանելով նաև, որ նշվածի բացակայության պայմաններում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ կիանդիսանա գյուղական բնակավայրերում տնտեսությունների գրքերից (ծխամատյաններից) քաղվածքը՝ Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Աբովյանի քաղաքապետարանն իրավասու չէ տալու քաղվածք, այն էլ այնպիսի փաստաթղթից, որն իրենից իրավահաստատող փաստաթուղթ չի ներկայացնում:

Մինչդեռ, հետազոտելով գործում առկա փաստերը և վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի վճիռը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով նախ հաստատվել է, որ 2003 թվականին Աբովյանի քաղաքապետարանի կողմից համայնքի տնտեսության թիվ 1 գրքից Գրիգոր Կարապետյանի անվամբ, ընտանիքի կազմի նշումով տրվել է թիվ 643 քաղվածքը, որի հիման վրա Կադաստրի կողմից Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյանների, Սյուզան և Վաչագան Ստեփանյանների սեփականության իրավունքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ վարչական մարմինը միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ պարտավոր է ցուցաբերել հավասար մոտեցում: Հետևաբար նշված հոդվածի՝ որպես վարչարարության կարևորագույն սկզբունքներից մեկի կիրառման համար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք երկու իրավիճակները միատեսակ են և արդյոք վարչական մարմինն անհավասար մոտեցում է ցուցաբերել:

Սույն գործով 2003 թվականին Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյանների, Սյուզան և Վաչագան Ստեփանյանների անունով տրվել է թիվ 643 քաղվածքը՝ հիմք ընդունելով ընտանիքի կազմը: Նշված քաղվածքը տրվել է Աբովյանի քաղաքապետարանի կողմից համայնքի տնտեսության թիվ 1 գրքից: Մարինե Վարդանյանը, Ինգա և Վահե Կարապետյանները պահանջել են պարտավորեցնել Աբովյանի քաղաքապետարանին հայցվորների անվամբ տնտեսության թիվ 1 գրքից Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ քաղվածք տրամադրել՝ հիմք ընդունելով նաև ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երկու իրավիճակներում առկա են միատեսակ փաստական հանգամանքներ, քանի որ Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյանների պահանջը նույնպես ուղղված է Աբովյանի քաղաքապետարանին, նույնպես վերաբերում է Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի նկատմամբ թիվ 1 գրքից քաղվածք տրամադրելուն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Աբովյանի քաղաքապետարանը՝ որպես վարչարարություն իրականացնող մարմին, չի կարող մի դեպքում այդ քաղվածքը տրամադրել, իսկ մեկ այլ՝ Մարինե Վարդանյանի, Ինգա և Վահե Կարապետյաննեի պահանջի դեպքում մերժել քաղվածքի տրամադրումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ թիվ 1 գիրքն իրենից իրավահաստատող փաստաթուղթ չի ներկայացնում, և վերջինս իրավասու չէ տրամադրել այդպիսի քաղվածք:

Վճռաբեկ դատարանը նման դիրքորոշման համար հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանի՝ 11.09.2009 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է նաև, որ Մարինե Վարդանյանը, Ինգա և Վահե Կարապետյանները ևս հանդիսացել են Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 67 հասցեի անշարժ գույքի օգտագործողներ, և նրանց անունները նույնպես պետք է նշվեին ՀՀ Կոտայքի մարզի համայնքի տնտեսության համար 1 գրքի 2003 թվականի քաղվածքում /գրանցման համար 643/՝ «Ընտանիքի կազմը» բաժնում և հիմք ընդունելով վերոգրյալը՝ դատարանը 3/8 մասով անվավեր է ճանաչել Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյան-

ների, Սյուզան և Վաչագան Ստեփանյանների անվամբ միասնական 4-53 մատյանի 0229 համարի տակ 14.08.2007 թվականին կատարված պետական գրանցումը, որպես անվավերության հետևանք 3/8 մասով անվավեր է ճանաչվել 19.12.2007 թվականին մի կողմից Գրիգոր, Նադեժդա, Յուրիկ Կարապետյանների և Վաչագան Ստեփանյանի, մյուս կողմից Սյուզան Ստեփանյանի միջև կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա Սյուզան Ստեփանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.02.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 27.06.2011 թվականի վճռին:

2. Աբովյանի քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0585/05/11
Նախագահող դատավոր՝ Լ. Սոսյան
Դատավորներ՝ Ա. Սարգսյան
Հ. Բեղնյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0585/05/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (այսուհետ՝ Վարչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ Վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, Վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հասմիկ Օհնիկյանը պահանջել է պարտավորեցնել Վարչությանն իրեն տրամադրել Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, անվավեր ճանաչել Վարչության թիվ 25/01-4725 գրությունը, ինչպես նաև դատական ծախսերին անդրադառնալիս ծախսերի մեջ ներառել նաև ներկայացուցչի ողջամիտ վարձատրության 170.000 ՀՀ դրամը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Բաբայան) (այսուհետ՝ Դատարան) 28.10.2011 թվականի վճռով Վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչե-

լու մասով գործի վարույթը Դատարանին ընդդատյա չլինելու հիմքով կարճվել է, իսկ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն Վարչությանը պարտավորեցնելու մասով բավարարվել է: Միաժամանակ վճռվել է Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարվող գումար:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.03.2012 թվականի որոշմամբ Վարչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.10.2011 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հասմիկ Օհնիկյանի ներկայացուցիչ Արամ Խաչատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 59-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի քննարկման» կարգի 6-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 297-րդ, 299-րդ, 300-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը կիրառելի է միայն վարչական վարույթի ընթացքում հասարակ գրավոր ձևի լիազորագրով հանդես գալու պարագայում, այլ ոչ թե վարչական վարույթից դուրս՝ վարչական մարմինների հետ փոխհարաբերություններում, այդ թվում՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտն ստանալու հետ կապված փոխհարաբերություններում: Այսինքն՝ որևէ իրավական ակտով նախատեսված չէ վարչական վարույթից դուրս, հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով, երրորդ անձի կողմից միայն օտարերկրացուն տրվող իրավաստեղծ պաշտոնական փաստաթուղթը ստանալու իրավունքը և այդ իրավունքն իրականացնելու կարգն ու պայմանները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանին հասցեագրված 31.01.2011 թվականի թիվ 25/01-3724 գրությամբ Վարչությունն իրազեկել է, որ 22.11.2010 թվականի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը 23.11.2010 թվականին եզրափակվել է բարենպաստ վարչական ակտի ընդունմամբ և հրավիրվել է այն առձեռն ստորագրությամբ հանձնելու համար, միաժամանակ նշելով՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու դեպքում տրամադրել տեղեկատվություն գտնվելու վայրի մասին: Սակայն Թագուհի Օհնիկյանը չի ներկայացել և որևէ կերպ չի արձագանքել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.03.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Բողոք բերած անձի մատնանշած իրավական ակտերից և ոչ մեկում չկա որևէ իրավական կարգավորում, որով օրինական ներկայացուցչի լիազորված անձի իրավասությունները հավաստող լիազորագրի համար պահանջվում է նոտարական վավերացում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 22.11.2010 թվականի դիմումով Թագուհի Օհնիկյանը Վարչությունից խնդրել է իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին՝ ծնված 19.02.2008 թվականին, տրամադրել Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ **(2-րդ հատոր, գ.թ. 26):**

2) 30.11.2010 թվականի հասարակ գրավոր ձևով կազմված լիազորագրի 1-ին կետով Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը լիազորել է Հասմիկ Օհնիկյանին հանդես գալու Վարչությունում, այդ թվում՝ ստանալու Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը **(1-ին հատոր, գ.թ. 15):**

3) 12.01.2011 թվականի դիմումով Հասմիկ Օհնիկյանը Վարչությունից խնդրել է տրամադրել Թագուհի Օհնիկյանի որդու՝ Նարեկ Լուիս Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը **(2-րդ հատոր, գ.թ. 31):**

4) Հասմիկ Օհնիկյանին հասցեագրված 31.01.2011 թվականի թիվ 25/01-4725 գրությամբ Վարչությունը հայտնել է, որ «22.11.2010 թվականին Թագուհի Օհնիկյանը դիմել է Վարչություն խնդրելով իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին՝ ծնված 19.02.2008 թվականին, տրամադրել Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ: Դուք 12.01.2011 թվականին դիմել եք վարչություն Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը ստանալու համար՝ ներկայացնելով 30.11.2010 թվականի լիազորագիրը: … Թագուհի Օհնիկյանը Վարչություն է դիմել 22.11.2010 թվականին, իսկ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին կացության ժամանակավոր կարգավիճակ տալու մասին Վարչությունում որոշում է կայացվել 23.11.2010 թվականին: Դուք դիմել եք Վարչություն 12.01.2011 թվականին, երբ վարչական վարույթը 23.11.2010 թվականին արդեն իսկ եզրափակված է եղել վարչական ակտի ընդունմամբ: … որպես կանոն գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին առձեռն հանձնելու միջոցով, սակայն Թագուհի Օհնիկյանը Վարչություն չի ներկայացել և չի ստացել համապատասխան փաստաթուղթը: ... Նշված դեպքում վարչական վարույթը եզրափակված է, Դուք վարույթի մասնակից չեք, ինչպես նաև վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ չեք հանդիսացել, հետևաբար Ձեր պահանջն իրավաչափ չէ, և Ձեզ ներկայացված լիազորագրով չի կարող տրամադրվել Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը» **(1-ին հատոր, գ.թ. 12-13):**

5) Թագուհի Օհնիկյանին հասցեագրված 31.01.2011 թվականի թիվ 25/01-3724 գրությամբ Վարչությունը հայտնել է, որ «… Ձեր դիմումը 23.11.2010 թվականին բավարարվել է, և Դուք պետք է անձամբ ներկայանաք Վարչություն Ձեր որդու ժամանակավոր կացության քարտը ստորագրությամբ առձեռն ստանալու համար: Հայաստանի Հանրա-

պետությունից Ձեր բացակայելու դեպքում խնդրում ենք տրամադրել արժանահավատ տեղեկատվություն՝ նշելով Ձեր հասցեն» **(2-րդ հատոր, գ.թ. 30):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցին, թե արդյո՞ք կարող է կացության կարգավիճակը հաստատող քարտը հանձնվել վարչական վարույթի մասնակցի օրինական ներկայացուցչի անունից հասարակ գրավոր ձևով ձևակերպված լիազորագիր ներկայացրած անձին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ներկայացուցչությանը վերաբերող դրույթները կիրառելի են բացառապես վարչական վարույթի շրջանակներում վարույթի մասնակիցների՝ ներկայացուցիչների միջոցով հանդես գալու հարաբերությունների նկատմամբ: Նույն օրենքը չի նախատեսում վարչական վարույթից դուրս վարչական մարմնի հետ ներկայացուցչի միջոցով հանդես գալու հարաբերությունների որևէ կանոնակարգում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումի քննարկման կարգը, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի քննարկման» կարգը:

Վերոնշյալ դրույթների համակարգային մեկնաբանությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումի քննարկումը վարչական վարույթի ինքնուրույն տեսակ է, և վերջինիս առանձնահատկությունները սահմանվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ ընդունված կարգով: Հետևաբար կացության կարգավիճակը հաստատող քարտի ստացման հետ կապված հարաբերությունների կարգավորումը անհրաժեշտ է դիտարկել նշված իրավական ակտերի լույսի ներքո:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Հայաստանի Հանրապետության ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը, որոնց ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ ընդունված կարգի 3-րդ հավելվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության և մշտական կացության քարտերը՝ 80x120մմ չափսի, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթղթեր են:

ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ ընդունված կարգի 2-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու կամ կարգավիճակ տալը մերժելու որոշման կրկնօրինակն անձնագրային և վիզաների վարչությունը որոշումն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 1-ին կետում նշված ժամկետում ուղարկում է կացության կարգավիճակ ստանալու համար դիմած օտարերկրացուն:

Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրվել է այն պատճառաբանությունը, որ գրավոր վարչական ակտն ընդունելուց հետո, այն եռօրյա ժամկետում պետք է հանձնվի (դրա ընդունման մասին պետք է իրազեկվի) վարույթի մասնակցին, ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վարչական ակտի իրազեկման, հանձնման և հրապարակման հարաբերությունները կարգավորող նորմերով և այդ հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված չէ որևէ սահմանափակում, որ անձը, որը մասնակցել է վարչական վարույթին, զրկված է վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտին իր ներկայացուցչի (նաև վարչական վարույթին չներգրավված ներկայացուցչի) միջոցով իրազեկվելու, ստանալու իրավունքից, հետաբար վարույթի անգործունակ մասնակից Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը, իրավաչափորեն իրացնելով իր՝ որպես իր փոքրահասակ որդու օրինական ներկայացուցչի իրավունքները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ հասարակ գրավոր ձևով 30.11.2010 թվականին Հասմիկ Օհնիկյանի անվամբ տվել է լիազորագիր իր անունից հանդես գալու Վարչությունում՝ այդ թվում իր փոխարեն իր որդու կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը ստանալու նպատակով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ իրավական ակտերում բացակայում է կացության կարգավիճակը հաստատող քարտի տրամադրման այնպիսի կանոնակարգում, որը կբացառեր որևէ այլ կերպ, քան կացության կարգավիճակ հայցող անձին քարտն ուղարկելու հնարավորություն: Հետևաբար հարկ է հաշվի առնել այն, որ այն դեպքերում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը վարչական վարույթին մասնակցել է իր ներկայացուցչի միջոցով, և վերջինս ներկա է գտնվել վարույթին, կացության քարտը կարող է հանձնվել ներկայացուցչին, անկախ այն հանգամանքից, լիազորագիրը վավերացված է նոտարի կողմից, թե ոչ:

Մյուս կողմից Վճռաբեկ դատարանը, կարևորելով կացության կարգավիճակը հավաստող քարտի տրամադրման առանձնահատկությունները, հաշվի առնելով այն, որ նշված քարտը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթուղթն է,

գտնում է, որ ներկայացուցչի միջոցով վարույթին մասնակցելու դեպքից էականորեն տարբերվում է կացության քարտը վարչական վարույթին չմասնակցած ներկայացուցչին հանձնելը, երբ վերջինս ներկայացնում է հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր: Վերջին դեպքում բացակայում է որևէ իրավահաստատող գործողություն, որը կվկայեր լիազորագիրը կոնկրետ իրավատիրոջ կողմից տալու հանգամանքը, ինչը ռիսկ է պարունակում այնքանով, որքանով կացության քարտը կարող է հանձնվել մի անձի, ով իրապես լիազորված չէ այն ստանալու: Մյուս կողմից կացության քարտը բացառապես հասցեատիրոջը հանձնելու պահանջն անձին անհարկի զրկում է իր իրավունքները ոչ անձամբ, ներկայացուցչի միջոցով իրացնելուց: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն իրողությունը, որ կացության կարագավիճակ հայցող անձինք միշտ չէ, որ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և հնարավորություն ունեն ներկայանալ և անձամբ ստանալ կացության քարտը:

Նշված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը վարչական վարույթին մասնակցել է իր ներկայացուցչի միջոցով, և վերջինս ներկա է գտնվել վարույթին, կացության քարտը կարող է հանձնվել ներկայացուցչին, անկախ այն հանգամանքից, լիազորագիրը վավերացված է նոտարի կողմից, թե ոչ, իսկ այն դեպքում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը չի մասնակցել վարչական վարույթին, չի ունեցել ներկայացուցիչ, ով մասնակցել է վարչական վարույթին, զրկված չէ կացության քարտը ներկայացուցչի միջոցով ստանալու իրավունքից, եթե վերջինիս լիազորությունները հավաստված են նոտարական կարգով վավերացված լիազորագրով:

Համադրելով վերը նշված մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կացության կարգավիճակ տրամադրելու որոշումը, ինչպես նաև կացության քարտը (այդ թվում՝ ժամանակավոր կացության քարտը) անձամբ տրվում է նման կարգավիճակ հայցող օտարերկրացուն, կամ նոտարական կարգով վավերացված լիազորագիր ունեցող ներկայացուցչին, ուստի **մասնակցի կամ վերջինիս օրինական ներկայացուցչի անունից հասարակ գրավոր ձևով ձևակերպված լիազորագիր ներկայացրած անձին չի կարող տրամադրվել կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը**:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը: Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի արդյունքում վարչական ակտն ընդունելուց, այսինքն՝ վարչական վարույթն ավարտվելուց հետո, Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին տրված Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը կարող էր տրամադրվել վերջինիս օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանին կամ Թագուհի Օհնիկյանի այն ներկայացուցչին, ով կներկայացներ իր լիազորությունները հավաստող նոտարական կարգով վավերացված լիազորագիր:

Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2012 թվականի որոշման՝ ՀՀ վարչական դատարանի 28.10.2011 թվականի վճռի հայցը բավարարելու մասն անփոփոխ թողնելու մասը և այդ մասով փոփոխել. Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին մերժել:

2. Հասմիկ Օհնիկյանից հօգուտ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հասմիկ Օհնիկյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի 23.05.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4585/05/10
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4585/05/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ալբերտ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.06.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Ալբերտ Խաչատրյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձինք Վանյա Խաչատրյանի, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Երևանի տարածքային ստորաբաժանման՝ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ Վանյա Խաչատրյանի անվամբ 05.08.2010 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը՝ 300քմ մակերեսով հողամասի մասով, անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ալբերտ Խաչատրյանը պահանջել է առ ոչինչ կամ անվավեր ճանաչել Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Վանյա Խաչատրյանի անվամբ 05.08.2010 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը՝ 300քմ մակերեսով հողամասի մասով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.01.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր

ճանաչել Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Վանյա Խաչատրյանի անվամբ նշված որոշման հիման վրա 05.08.2010 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ 300քմ մակերեսով հողամասի մասով: Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.06.2012 թվականի որոշմամբ Վանյա Խաչատրյանի և Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ որոշվել է բեկանել Դատարանի 30.01.2012 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը՝ բավարարված մասով, մերժել: Մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ալբերտ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վանյա Խաչատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (վերնագիրը փոփոխվել է 27.04.2010 թվականի թիվ ՀՕ-50-Ն օրենքով) 3-րդ հոդվածի 4-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 63-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ, 20-րդ, 53-րդ, 55-րդ, 57-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 70-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի կողմից Դատարանի օրինական վճիռը բեկանելու հիմքում դրված եզրահանգումներն անհիմն են և զուրկ են որևէ իրավական հիմնավորումից:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վիճարկվող որոշման կայացման համար հիմք է հանդիսացել Կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) 27.10.2008 թվականի թիվ Ել-1758 գրությունը, որի համաձայն՝ ըստ կադաստրային գործի տվյալների՝ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում Վանյա Խաչատրյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված է 94,7քմ մակերեսով շինություն, 272քմ մակերեսով հողամաս և 300քմ մակերեսով զավթած պետական սեփականություն հանդիսացող հողամաս:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, խեղաթյուրելով գործի փաստերը, հաշվի չի առել, որ Երևանի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարի տեղակալի 25.09.2008 թվականի թիվ 28/02-Խ-151/157 և Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 29.04.2011 թվականի թիվ 25/02-Խ-57 տեղեկանքներով հաստատվում և ապացուցվում է այն փաստը, որ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող անօրինական զբաղեցրած 300քմ մակերեսով հողամասը տնօրինվել է նշված տան բոլոր բնակիչների, այդ թվում՝ Ալբերտ Խաչատրյանի կողմից: Այսինքն՝ Քաղաքապետն իր որոշման հիմքում դրել է մի գրություն, որում նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

Նման պայմաններում Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշմամբ խախտվել են Ալբերտ Խաչատրյանի՝ անօրինական զբաղեցրած 300քմ մակերեսով հո-

ղամասի նկատմամբ Վանյա Խաչատրյանի հետ հավասար պայմաններով սեփականության իրավունք ձեռք բերելու օրենքով ամրագրված իրավունքները:

Մասնավորապես՝ մինչև 05.06.2010 թվականը գործող խմբագրությամբ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Երևանի վարչական տարածքում մինչև 15.05.2001 թվականը տիրապետվող և նույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա՝ քաղաքացիներին պատկանող՝ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող մինչև 300քմ մակերեսով սահմանազատված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը և (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տները և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինություններն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, որի (որոնց) սեփականությունը համարվող հողամասին կից է ավել օգտագործվող հողամասը և (կամ) շինությունները, և ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Տվյալ դեպքում սույն գործում առկա 13.03.1993 թվականի սեփականության թիվ 6792 վկայականով հաստատվում է, որ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեի գույքի 3/5 մասի նկատմամբ սեփականության իրավունքը նոտարի կողմից հաստատված 12.03.1993 թվականի բնակելի տան մասի նվիրատվության թիվ 1-1401 պայմանագրով փոխանցվել է Ալբերտ Խաչատրյանին:

Այսինքն՝ Ալբերտ Խաչատրյանը մինչև 15.05.2001 թվականը Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում ունեցել է սեփականության իրավունքով իրեն պատկանող օրինական հողամաս, որին էլ կից՝ որպես սեփական գույք, ընտանիքի մյուս անդամների հետ միասին տիրապետել է ավել օգտագործվող 300քմ մակերեսով հողամասը:

Այսպիսով, վիճելի 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով պետք է ճանաչվի նաև Ալբերտ Խաչատրյանի սեփականության իրավունքը, իսկ Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշմամբ այդ հողամասի նկատմամբ վերականգնվել է միայն Վանյա Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը՝ ճանաչելով դրա նկատմամբ միայն նրա սեփականության իրավունքը:

Վերոգրյալից հետևում է, որ Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումը կայացվել է «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 37-րդ հոդվածների պահանջների խախտմամբ, որի արդյունքում խախտվել է «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով ամրագրված Ալբերտ Խաչատրյանի՝ սեփականության իրավունքը վերականգնելու և (կամ) ձեռք բերելու իրավունքը:

Հետևաբար, վիճարկվող ակտն անվավեր՝ ոչ իրավաչափ վարչական ակտ է, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ տվյալ դեպքում «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միակ հիմքը Քաղաքապետի որոշումն է, որն

իրավաչափ չէ, իսկ դրա ոչ իրավաչափ՝ անվավեր լինելու պայմաններում անվավեր է նաև 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ Վանյա Խաչատրյանի սեփականության իրավունքի գրանցումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.06.2012 թվականի որոշման՝ հայցը բավարարելու մասով Դատարանի 30.01.2012 թվականի վճիռը բեկանելու և փոփոխելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ նշված վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

«Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ մինչև 15.05.2001 թվականը տիրապետվող և նշված օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա քաղաքացիներին պատկանող՝ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300քմ մակերեսով պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը նախ պետք է սահմանազատված լինի, ավել օգտագործվող հողամասը պետք է լինի քաղաքացու սեփականությունը համարվող հողամասին կից և նրա կողմից այդ գույքը պետք է տիրապետվի՝ որպես սեփական գույք:

Տվյալ դեպքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2007 թվականի թիվ 07-2985 վճռով Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեի ընդհանուր սեփականություն հանդիսացող 600քմ մակերեսով հողամասից 328քմ մակերեսով հողամասն առանձնացվել է և սեփականության իրավունքով թողնվել է Ալբերտ Խաչատրյանին, իսկ 272քմ մակերեսով հողամասը՝ Վանյա Խաչատրյանին: Ալբերտ Խաչատրյանին սեփականության իրավունքով թողնված հողամասին և բնակելի տան մասին տրվել է «Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6/1» հասցեն: Արդեն առանձնացված հողամասերը սահմանազատվել էին, և Վանյա Խաչատրյանի սեփական՝ 272քմ մակերեսով հողամասին կից 300քմ մակերեսով զավթված հողամասը նույնպես սահմանազատված է եղել վերջինիս կողմից, ինչի մասին է վկայում նաև 24.12.2008 թվականի հողամասի գլխավոր թիվ 197-2009 հատակագիծը և Կադաստրի 27.10.2008 թվականի թիվ Ել-1758 գրությունը:

Այսինքն՝ Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումը կայացնելու ժամանակ Վանյա Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող անօրինական զբաղեցված 300քմ մակերեսով հողամասը տնօրինվել է վերջինիս կողմից, ինչի վերաբերյալ ապացույցներն էլ այդ ժամանակ ներկայացվել էին Քաղաքապետարան:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշմամբ վերականգնվել է Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում Վանյա Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 272քմ մակերեսով հողամասին կից 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

Նույն որոշման համաձայն՝ հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վանյա Խաչատրյանի դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Երևա-

նի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 575քմ, որից Վանյա Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանում է 272քմ մակերեսով հողամաս: Օրինական հողամասին կից օգտագործվող 303քմ մակերեսով հողամասից օրենքի ուժով 300քմ մակերեսով հողամասը կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 3քմ մակերեսով հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքի միջոցով:

Նույն որոշումը կայացնելիս հաշվի է առնվել, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1956 թվականը, Կաղաստրի 27.10.2008 թվականի թիվ Ել-1758, Քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 02.12.2008 թվականի թիվ 20/2 Ե/355 գրությունները, Քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 18.11.2008 թվականի թիվ 20-Ել-1360 եզրակացությունը, որի համաձայն՝ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Նույն որոշման կայացման համար որպես իրավական հիմք է հանդիսացել «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 29.12.2005 թվականի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումը **(հատոր 1-ին, գ.թ. 17):**

2) Կաղաստրի 27.10.2008 թվականի թիվ Ել-1758 գրությամբ հայտնվել է, որ ըստ կաղաստրային գործի՝ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 տան սեփականատեր Վանյա Խաչատրյանի անվամբ հաշվառված է 94,7քմ մակերեսով շինություն, 272քմ մակերեսով օրինական հողամաս և 300քմ մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամաս **(հատոր 1-ին, գ.թ. 116):**

3) Քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 02.12.2008 թվականի թիվ 20/2 Ե/355 գրությամբ ներկայացվել է Երևանի վարչական տարածքում քաղաքացիների կողմից փաստացի զբաղեցված շենք-շինություններին և հողամասերին (անշարժ գույքին) տրամադրված թվով 9 հասցեների ցուցակը **(հատոր 1-ին, գ.թ. 118):**

4) «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 18.11.2008 թվականի թիվ 20-Ել-1360 գրությամբ Քաղաքապետարանին հասցեագրված Վանյա Խաչատրյանի դիմումի՝ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում վերջինիս պատկանող բնակելի տան կարգավիճակի վերաբերյալ հայտնվել է, որ հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Կաղաստրի 27.10.2008 թվականի թիվ Ել-1758 և 09.07.2008 թվականի թիվ 779 գրությունները: Տեղազրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ նշված հասցեում հողամասի մակերեսը փաստացի կազմում է 575քմ, որից 272քմ մակերեսը՝ ըստ փաստաթղթերի, 303քմ մակերեսը՝ առանց փաստաթղթերի **(հատոր 1-ին, գ.թ. 26):**

5) 13.03.1993 թվականի սեփականության թիվ 6792 վկայականի համաձայն՝ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6/1 հասցեում գտնվող գույքը՝ 26,2քմ բնակելի, 22,2քմ օժան-

դակ և 45,7քմ այլ մակերեսներով, 3/5 մասով պատկանում է Ալբերտ Խաչատրյանին:

Նույն վկայականում որպես հողամասի մակերես է նշված՝ 600քմ **(հատոր 1-ին, գ.թ. 18):**

6) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ 07-2985 գործով 15.10.2007 թվականին կայացրած վճռով Ալբերտ Խաչատրյանի հայցը բավարարվել է՝ վճռվել է Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 տան ընդհանուր սեփականություն հանդիսացող 600քմ հողամասից, ըստ Կադաստրի կողմից 08.05.2007 թվականին տրված տեխնիկական եզրակացության և կից հատակագծի «Ա» տարբերակի, առանձնացնել և Ալբերտ Խաչատրյանին սեփականության իրավունքով թողնել 328քմ մակերեսով հողամաս փաստացի օգտագործվող «Ա» մուտքով, իսկ Վանյա Խաչատրյանին՝ 272քմ մակերեսով հողամաս գոյություն ունեցող «Բ» մուտքով, և որպես հողամասերը առանձնացնող բաժանարար սահման ընդունել գոյություն ունեցող ցանկապատը՝ հատակագծում նշված «Գ» տառով **(հատոր 1-ին, գ.թ. 11-14):**

7) Երևանի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարի տեղակալի 25.09.2008 թվականի թիվ 28/02-Խ-151/157 տեղեկանքի համաձայն՝ Ալբերտ Խաչատրյանին Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6/1 հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից առկա ինքնակամ հողատարածքը զբաղեցվում է 1967 թվականից **(հատոր 1-ին, գ.թ. 19):**

8) Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 29.04.2011 թվականի թիվ 25/02-Խ-57 տեղեկանքի համաձայն՝ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6/1 տանը կից անօրինական զբաղեցված հողամասն օգտագործվում է նշված տան բոլոր բնակիչների, այդ թվում նաև Ալբերտ Խաչատրյանի կողմից **(հատոր 1-ին, գ.թ. 79):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վիճելի իրավահարաբերության ծագման՝ Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումը կայացնելու պահին գործող խմբագրությամբ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Երևան քաղաքի վարչական տարածքում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը տիրապետվող և սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում)՝ քաղաքացիներին պատկանող՝ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300 քառակուսի մետր սահմանազատված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տները և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունները, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, որի (որոնց) սեփականությունը համարվող հողամասին կից է ավել օգտագործվող հողամասը և (կամ) շինությունները, և ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հողամասերի նկատմամբ անձանց սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ

է որոշակի պայմանների միաժամանակյա առկայություն: Մասնավորապես՝ Երևանի վարչական տարածքում մինչև 15.05.2001 թվականը տիրապետվող և «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին՝ 19.07.2008 թվականի դրությամբ առկա, քաղաքացիներին պատկանող՝ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300քմ մակերեսով սահմանազատված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը համարվում են այն ֆիզիկական անձանց սեփականությունը, որոնց սեփականությունը համարվող հողամասին կից է ավել օգտագործվող հողամասը, և ովքեր տիրապետում են այդ գույքը՝ որպես սեփականը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Սույն գործով Դատարանը հայցը մասնակիորեն բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ալբերտ Խաչատրյանը մինչև 15.05.2001 թվականը Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում ունեցել է սեփականության իրավունքով պատկանող օրինական հողամաս, որին էլ կից որպես սեփական գույք տիրապետել է ավել օգտագործվող 300քմ մակերեսով հողամասը: Հետևաբար, առկա են բոլոր պայմանները «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով ավել օգտագործվող 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ալբերտ Խաչատրյանի սեփականության իրավունքը վերականգնելու համար: Այսպիսով, նշված օրենքի ուժով վիճելի 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ ծագում է նաև Ալբերտ Խաչատրյանի սեփականության իրավուն-

քը: Մինչդեռ, Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշմամբ այդ հողամասի նկատմամբ վերականգնվել է միայն Վանյա Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը՝ ճանաչելով դրա նկատմամբ միայն նրա սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքները բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Դատարանի եզրահանգումներն անհիմն են, քանի որ Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումը կայացվել է օրենքի դրույթներին համապատասխան, իսկ այդ որոշման հիմքում ընկած Կադաստրի 27.10.2008 թվականի թիվ Ել-1758 գրությունը հաստատում է, որ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6 հասցեում Վանյա Խաչատրյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված է 94,7քմ մակերեսով շինություն, 272քմ մակերեսով հողամաս և 300քմ մակերեսով զավթած պետական սեփականություն հանդիսացող հողամաս:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ 13.03.1993 թվականի սեփականության թիվ 6792 վկայականով հաստատվում է, որ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6/1 հասցեում գտնվող գույքը՝ 26,2քմ բնակելի, 22,2քմ օժանդակ և 45,7քմ այլ մակերեսներով, 3/5 մասով պատկանում է Ալբերտ Խաչատրյանին, միաժամանակ Երևանի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարի տեղակալի 25.09.2008 թվականի թիվ 28/02-Խ-151/157 տեղեկանքով հաստատվում է, որ Ալբերտ Խաչատրյանին Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6/1 հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից առկա ինքնակամ հողատարածքը զբաղեցվում է 1967 թվականից, իսկ Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 29.04.2011 թվականի թիվ 25/02-Խ-57 տեղեկանքով հաստատվում է, որ Երևանի Արաբկիրի 43-րդ փողոցի թիվ 6/1 տանը կից անօրինական զբաղեցված հողամասն օգտագործվում է նշված տան բոլոր բնակիչների, այդ թվում նաև Ալբերտ Խաչատրյանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված ապացույցներով հաստատվում է այն փաստը, որ վիճելի 300քմ մակերեսով հողամասն օգտագործվում է նաև Ալբերտ Խաչատրյանի կողմից, և նրա մասով այն համապատասխանում է «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին, այն է՝ Ալբերտ Խաչատրյանը վիճելի 300քմ մակերեսով հողամասը տիրապետում է 1967 թվականից, այդ հողամասը գտնվում է վերջինիս սեփականությունը համարվող հողամասին կից և նա տիրապետում է դա՝ որպես սեփականը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճելի 300քմ մակերեսով հողամասը «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով արդեն իսկ համարվում է նաև Ալբերտ Խաչատրյանի սեփականությունը:

Մինչդեռ, սույն գործով վիճարկվող Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշմամբ վիճելի 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչվել է միայն Վանյա Խաչատրյանի սեփականության իրավունքը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը վարչական մարմնին պարտավորեցնում է ապահովել փաստա-

կան հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետը, սույն գործով վիճարկվող 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշմամբ վիճելի 300քմ մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչելով միայն Վանյա Խաչատրյանի սեփականության իրավունքը և անտեսելով, որ այդ նույն հողամասը «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով համարվում է նաև Ալբերտ Խաչատրյանի սեփականությունը, չի ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի իմպերատիվ պահանջը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ Երևանի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարի տեղակալի 25.09.2008 թվականի թիվ 28/02-Խ-151/157 և Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 29.04.2011 թվականի թիվ 25/02-Խ-57 տեղեկանքները տրվել են մեկ վարչական մարմնի կողմից մյուս վարչական մարմին ներկայացնելու նպատակով, իսկ Քաղաքապետարանը, գնահատելով բոլոր ներկայացված փաստաթղթերն իր իրավասության սահմաններում, իրականացրել է համապատասխան վարչարարություն և կայացրել է վիճարկվող որոշումը, ապա այդ մասով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պատճառաբանությունն ամբողջությամբ անհիմն է, քանի որ վերոգրյալ տեղեկանքները մեկ վարչական մարմնի կողմից մյուս վարչական մարմին ներկայացնելու նպատակով տրված լինելու հանգամանքը որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ դրանց ապացուցողական ուժի վրա:

Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր ապացույցները և իրեղեն ապացույցները, իսկ նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի համար Երևանի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարի տեղակալի 25.09.2008 թվականի թիվ 28/02-Խ-151/157 և Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 29.04.2011 թվականի թիվ 25/02-Խ-57 տեղեկանքները վերոգրյալ նորմերի հիման վրա հանդիսանում են գրավոր և վերաբերելի ապացույցներ, քանի որ դրանցով ավելի հավանական է դառնում սույն վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստերի գոյությունը, քան դրանք կլինեին առանց այդ ապացույցների: Հետևաբար, նշված ապացույցների ապացուցողական ուժի մասով Վերաքննիչ դատարանի արած հետևությունն անհիմն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող Քաղաքապետի 24.12.2008 թվականի թիվ 6240-Ա որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոգրյալ հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.06.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 30.01.2012 թվականի վճռին:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ Ալբերտ Խաչատրյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2058/05/10
Նախագահող դատավոր՝ Հ. Բեղնյան
Դատավորներ՝ Ա. Սարգսյան
Լ. Սոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2058/05/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ավետիք Կարապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.10.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Ավետիք Կարապետյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձ Լեյլի Գասպարյանի՝ վարչական ակտի ընդունմանն ուղղված նախագծի համաձայնեցման գործողությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, համաձայնեցված նախագիծը և շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ավետիք Կարապետյանը պահանջել է անվավեր ճանաչել վարչական ակտի ընդունմանն ուղղված նախագծի համաձայնեցման գործողությունը, 12.03.2010 թվականի ճարտարապետահատակագծային թիվ 01/50-Գ-483-30 առաջադրանքը, համաձայնեցված նախագիծը և 15.04.2010 թվականի շինարարության թիվ 01/50-Գ-725-189 թույլտվությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 06.06.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.10.2011 թվականի որոշմամբ Ավետիք Կարապետյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.06.2011 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ավետիք Կարապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Լեյլի Գասպարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 8-րդ, 19-րդ, 31-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին կետը, 192-րդ հոդվածի 1-ին կետը, 224-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, 7-րդ հոդվածը, 8-րդ հոդվածի 6-րդ կետը, 11-րդ հոդվածի 1-ին կետը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի «ա» կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 21-րդ, 23-րդ, 35-րդ, 38-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածները, 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ» կետերը, 4-րդ մասի «գ» կետը, ՀՀ Կառավարության 28.10.1998 թվականի թիվ 660, 21.12.1998 թվականի թիվ 812, 02.02.2002 թվականի թիվ 91, 29.08.2002 թվականի թիվ 1473-Ն, 07.10.2004 թվականի թիվ 1616-Ն, 30.11.2006 թվականի թիվ 1855-Ն որոշումները, Երևանի քաղաքապետի 14.08.2007 թվականի թիվ 2876-Ա, 23.06.2008 թվականի թիվ 2798-Ա որոշումները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, ՀՀ քաղաքաշինության նախարարի և ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի 26.05.1998 թվականի թիվ 108-Կ հրամանը, խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ, 22-րդ, 24-րդ, 26-րդ, 113-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պայմանավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել և չի պարզել, թե արդյոք Քաղաքապետարանը կառուցապատող Լեյլի Գասպարյանին շինարարության թույլտվություն տրամադրելիս Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 բնակարանի գործառնական նշանակությունը փոփոխել է, թե՝ ոչ, կամ գործում կան տեղեկություններ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) որոշմամբ նշված հասցեի բնակելի տարածքը բնակարանային ֆոնդից հանելու վերաբերյալ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, քննության առարկա չդարձնելով և չպարզաբանելով վերոգրյալ հանգամանքները, չի ուսումնասիրել և օբյեկտիվ գնահատականի չի արժանացրել նաև գործում առկա ապացույցները, այն է՝ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արաբկիր տարածքային ստորաբաժանման ղեկավարի 05.04.2011 թվականի թիվ Յ/Հ Ել-1193ա և 13.06.2011 թվականի թիվ Յու/Հ Ել-2146ա գրությունները, որոնցով հայտնվել է, որ կադաստրային գործի տվյալների համաձայն՝ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 հասցեի սեփականատիրոջ կողմից մուտքի կազմակերպման համար կառուցված աստիճանավանդակի և հարթակի նկատմամբ 12.03.2010 թվականի ճարտարապետահատակագծային թիվ 01/50-Գ-483-30 առաջադրանքի, 15.04.2010 թվականի թիվ 01/50-05/1-Գ-726-208 նախագծի և շինարարության թիվ 01/50-Գ-725-189 թույլտվության հիման վրա կատարվել է իրավունքի պետական գրանցում, և 04.11.2010 թվականին տրվել է սեփականության իրավունքի

գրանցման վկայական, ինչպես նաև նույն հասցեում գրանցված է ոչ բնակելի (հասարակական) տարածք, վարձակալության են հանձնված 20,7քմ և 18,1քմ մակերեսներով տարածքներ, որոնցից 20,7քմ մակերեսով տարածքը մուտքի դուռ ունի հարթակի և շքամուտքի կողմից, իսկ 18,1քմ մակերեսով տարածքը՝ միայն հարթակի կողմից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 հասցեի վերակառուցման և մուտքի կազմակերպման շինարարական աշխատանքների իրականացման համար նույն բազմաբնակարան շենքի բոլոր համասեփականատերերի համաձայնության փաստը հավաստող որևէ ապացույց սույն գործում առկա չէ: Մասնավորապես՝ գործում առկա է ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) պետ, ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի 11.03.2011 թվականի թիվ 25/25/831-11 գրությունը, որով հայտնվել է, որ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի արտաքին պարփակող պատերը հանդիսանում են նաև կրող պատեր: Այսինքն՝ այդ շենքի թիվ 6 հասցեի գործառնական նշանակության փոփոխությունը և մուտքի կազմակերպման շինարարական աշխատանքներն իրականացվել են շենքը կրող կառուցվածքի (արտաքին կրող պատի) վրա առանց նշված բազմաբնակարան շենքի բաժնային սեփականատերերի համաձայնության: Բացի այդ, վերոգրյալ աշխատանքների իրականացման հարցը չի քննարկվել նաև բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր ժողովում, և վերջինս՝ որպես ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմին, դրա վերաբերյալ համապատասխան որոշում չի կայացրել:

Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ գործի քննությամբ չի հիմնավորվել այն հանգամանքը, որ վերակառուցումն իրականացվել է առևտրային նպատակով: Մինչդեռ, սույն գործում առկա են մի շարք ապացույցներ, որոնք հիմնավորում են վերակառուցված բնակարանի առևտրային լինելու թե՛ իրավական և թե՛ փաստական հանգամանքները, իսկ հակառակը հիմնավորող որևէ փաստ կամ ապացույց առկա չէ:

Վերոգրյալից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ կառուցապատող Լեյլի Գասպարյանը պարտավոր էր ստանալ բոլոր բաժնային սեփականատերերի, այդ թվում նաև՝ Ավետիք Կարապետյանի համաձայնությունը, իսկ Քաղաքապետարանը, իրականացնելով վարչական վարույթ, պարտավոր էր վերջինիս դարձնել վարույթի մասնակից:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Ավետիք Կարապետյանի վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ շինարարության արդյունքում նվազել է իր բնակարանի լույսի ճանապարհը, իսկ արևահարության աստիճանը վերացել է, գտել է, որ նշված փաստարկը ևս հայցը բավարարելու հիմք հանդիսանալ չէր կարող: Մինչդեռ, վերոգրյալ փաստի հիմնավորման նպատակով Ավետիք Կարապետյանը ներկայացրել էր Տեսչության պետի 19.05.2010 թվականի թիվ 02/25.1/1750-10 գրությունը, որով հայտնվել է, որ տվյալ դեպքում կառուցապատողին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով և դրա հիման վրա մշակված ու համաձայնեցված նախագծով խախտվել է Ավետիք Կարապետյանի՝ բնակարանի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը, և նախատեսված քաղաքաշինական գործունեությունն իրականացնելու դեպքում զգալիորեն կնվազի Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 9 կիսանկուղային բնակարանի բնական լուսավորությունն ու արևահարումը: Այդ փաստի ապացուցմանն էր ուղղված նաև ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արաբկիրի տարածքային կենտրոնի (այ-

սուհետ՝ Կենտրոն) պետի 07.07.2010 թվականի թիվ 04/12-Տ-02ա-1319 գրությունը, որով հայտնվել է, որ 28.06.2010 թվականին Ավետիք Կարապետյանի բնակարանում կատարվել է գործիքային չափում և պարզվել է, որ բնական լուսավորվածության գործակիցը սենյակներից մեկում եղել է 0,1 տոկոս, իսկ մյուս սենյակում՝ 0,03 տոկոս, սակայն թույլատրելի նորմը 0,5 տոկոս է, բացի այդ, բնական լուսավորության ներթափանցմանը խանգարում է նաև պատուհանների վերևում կառուցված հարթակը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 11.10.2011 թվականի որոշումը բեկանել և փոփոխել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել և չի պարզել, թե արդյոք Քաղաքապետարանը կառուցապատող Լեյլի Գասպարյանին շինարարության թույլտվություն տրամադրելիս Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 բնակարանի գործառնական նշանակությունը փոփոխել է, թե՝ ոչ, կամ գործում կան տեղեկություններ Քաղաքապետի որոշմամբ նշված հասցեի բնակելի տարածքը բնակարանային ֆոնդից հանելու վերաբերյալ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը սույն գործը քննելիս անմիջականորեն քննության առարկա է դարձրել Լեյլի Գասպարյանին պատկանող Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 բնակարանի գործառնական նշանակությանը վերաբերող հարցերը և արձանագրել, որ գործում բացակայում է համապատասխան պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը՝ նշված հասցեի բնակելի տարածքը բնակարանային ֆոնդից հանելու վերաբերյալ:

Լեյլի Գասպարյանը ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու հայտին կից Քաղաքապետարան է ներկայացրել իր անվամբ 04.11.2009 թվականին տրված սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2766347 վկայականը, որի «Շենքի տվյալները» բաժնի «Նպատակային նշանակությունը» տողում նշված է՝ բնակելի, իսկ «Օգտագործման նպատակը» տողում՝ բնակարան: Հետևաբար, Քաղաքապետարանը ճարտարապետահատակագծային առաջադրանքի և շինարարության թույլտվության տրամադրման ժամանակ Լեյլի Գասպարյանից չի պահանջել Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի սեփականատերերի համաձայնությունը, քանի որ այդ շենքի թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքի նպատակային նշանակությունը բնակելի է, այլ ոչ թե առևտրային:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն դիրքորոշմանը, որ վիճարկվող շինարարության թույլտվությամբ խախտվել են իր իրավունքները, մասնավորապես՝ նվազել է իր բնակարանի բնական լույսի ճանապարհը, վերացել է նաև արևահարության աստիճանը, ապա այդ մասով Վերաքննիչ դատարանը, համադրելով գործում առկա ապացույցները, գտել է, որ Տեսչության պետի 19.05.2010 թվականի թիվ 02/25.1/1750-10 գրությունը բավարար հիմք չէ՝ գալու այն եզրահանգման, որ իրականացված շինարարության հետևանքով լուսավորվածության և արևահարման մակարդակը նվազել է սահմանված և անհրաժեշտ նիշից այնքան, որ առաջացնի Ավետիք Կարապետյանի բնակարանը նպատակային նշանակությամբ օգտագործելու իրավունքի որևէ խախտում: Բացի այդ, Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 9 հասցեում գտնվող 58,4քմ մակերեսով տարածքը հանդիսանում է նկուղ, և այն որպես բնակելի տարածք օգտագործել չի թույլատրվում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 24.01.2007 թվականի անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2195525 վկայականի համաձայն՝ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 9 բնակարանի նկատմամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003 4-48 մատյանի 088 համարի տակ գրանցված է Ավետիք Կարապետյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 7-9):**

2) 04.11.2009 թվականի անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2766347 վկայականի համաձայն՝ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 բնակարանի նկատմամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003-4-48 մատյանի 104 համարի տակ գրանցված է Լեյլի Գասպարյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 156-157):**

3) Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 բնակարանի բնակելի տարածքը հասարակական սպասարկման տարածքի վերակառուցման և մուտքի կազմակերպման աշխատանքային նախագծային փաստաթղթերի մշակման համար Լեյլի Գասպարյանին 12.03.2010 թվականին տրվել է ճարտարապետահատակագծային թիվ 01/50-Գ-483-30 առաջադրանքը **(հատոր 1-ին, գ.թ. 64):**

4) Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 բնակարանի բնակելի տարածքի՝ հասարակական սպասարկման տարածքի վերակառուցման և մուտքի կազմակերպման աշխատանքների կատարման համար Լեյլի Գասպարյանին 15.04.2010 թվականին տրվել է շինարարության թիվ 01/50-Գ-725-189 թույլտվությունը **(հատոր 1-ին, գ.թ. 63):**

5) Տեսչության պետի 19.05.2010 թվականի թիվ 02/25.1/1750-10 գրության համաձայն՝ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 հասցեի բնակելի տարածքի՝ հասարակական սպասարկման տարածքի վերակառուցման և փողոցի կողմից մուտքի կազմակերպման նախագծի մշակման համար Քաղաքապետի կողմից 12.03.2010 թվականին տրվել է ճարտարապետահատակագծային թիվ 01/50-Գ-483-30 առաջադրանքը, որի հիման վրա մշակված նախագիծը համաձայնեցվել և 15.04.2010 թվականին տրվել է շինարարության թիվ 01/50-Գ-725-189 թույլտվությունը: Քաղաքապետի կողմից նշված նախագծի համաձայնեցումը կատարվել է՝ հաշվի չառնելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի «ա» կետի պահանջները, այն է՝ հասարակությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն իրենց կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին, ինչպես նաև չեն կատարվել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները, այսինքն՝ մինչև նախագծի համաձայնեցումը կառուցապատողը պետք է ստանար բազմաբնակարան շենքի այն բաժնային սեփականատերերի համաձայնությունը, որոնց սեփականությունը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներն այդ գործողությունների արդյունքում խախտվելու են: Վերոգրյալ համաձայնեցված նախագծով նախատեսված քաղաքաշինական գործունեությունն իրականացվելու դեպքում զգալիորեն կնվազի նույն շենքի թիվ 9 կիսանկուղային բնակարանի բնական լուսավորությունն ու արևահարումը **(հատոր 1-ին, գ.թ. 5):**

6) Կենտրոնի պետի 07.07.2010 թվականի թիվ 04/12-Տ-02ա-1319 գրության համաձայն՝ 28.06.2010 թվականին Ավետիք Կարապետյանի բնակարանում կատարված գործիքային չափման արդյունքում պարզվել է, որ բնական լուսավորվածության գործակիցը սենյակներից մեկում եղել է 0,1 տոկոս, իսկ մյուս սենյակում՝ 0,03 տոկոս (Համաձայն ՀՀ ՇՆ թիվ II-8.03-96-ի աղյուսակ Թ 1-ի, 61-րդ կետի՝ բնական լուսավորվածության գոր-

ծակցի թույլատրելի նորմը 0,5 տոկոս է)։ Բացի այն, որ բնակարանը գտնվում է կիսանկուղային հարկում, բնական լուսավորվածության ներթափանցմանը խանգարում է նաև պատուհանների վերևում կառուցված հարթակը **(հատոր 1-ին, գ.թ. 115)։**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը։

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը։ Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը։

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ շինության սեփականատերն իրավունք ունի առանց մյուս սեփականատերերի համաձայնության, **ոչ առևտրային նպատակներով,** իր շինության պատերից բացել կամ փակել պատուհաններ, դռներ, մուտքեր, ծխնելույզներ, պատերի այլ բացվածքներ, աստիճանավանդակներ, աստիճաններ, իր շինության ներքին կամ արտաքին պատերի վրա կամ դրանց կից իրականացնել այլ քաղաքաշինական գործունեություն (ներառյալ այն դեպքերը, երբ այդ պատերն ամբողջությամբ կամ մասնակիորեն հանդիսանում են ընդհանուր բաժնային սեփականություն)։

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-4-րդ կետերում նշված գործողությունները շինության սեփականատերն իրավունք ունի իրականացնել միայն օրենսդրությամբ սահմանված նորմերի ու կանոնների պահպանմամբ՝ նախօրոք տեղեկացնելով շենքի կառավարման մարմնին։

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե սույն հոդվածով նշված գործողություններն իրականացնելու հետևանքով խախտվելու են շինությունների սեփականատերերի՝ իրենց շինությունները տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև ընդհանուր բաժնային սեփականությունից օգտվելու իրավունքները, ապա համապատասխան գործողություններ իրականացնել ցանկացող շինության սեփականատերը կարող է այդ գործողություններն իրականացնել **վերջիններիս համաձայնությամբ՝** հատուցելով շինությունների սեփականատերերին պատճառվող վնասները։

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է խախտի այլ անձանց իրավունքները և օրինական շահերը։ Մասնավորապես՝ օրենքով շինության սեփականատիրոջը վերապահված՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության **ոչ առևտրային նպատակով** քաղաքաշինական գործունեության իրավունքը պետք է իրականացվի բացառապես օրենսդրությամբ սահմանված նորմերի և կանոնների պահպանմամբ՝ նախօրոք տեղեկացնելով շենքի կառավարման մարմնին։ Միաժամանակ, այն դեպքում, երբ նման քաղաքաշինական գործունեության հետևանքով խախտվելու են մյուս սեփականատերերի՝ իրենց շինությունները տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, ապա շինության սեփականատերը կարող է այդպիսի քաղաքաշինական գործունեություն իրականացնել միայն **մյուս սեփականատերերի համաձայնությամբ՝** հատուցելով նրանց պատճառվող վնասները։ Այսինքն՝ ոչ առևտրային նպատակով իրականացվող քաղա-

քաշինական գործունեության հետևանքով մյուս սեփականատերերի իրավունքների խախտումների, ինչպես նաև անկախ նման խախտումներից առևտրային նպատակով իրականացվող քաղաքաշինական գործունեության դեպքերում մյուս սեփականատերերի համաձայնությունը պարտադիր է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանը փաստի հաստատված լինելու հարցը պարտավոր է որոշել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, որը պետք է ձևավորվի բացառապես գործում եղած բոլոր ապացույցների անմիջականորեն գնահատման արդյունքում:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Տեսչության պետի 19.05.2010 թվականի թիվ 02/25.1/1750-10 գրությունը բավարար հիմք չէ՝ գալու այն եզրահանգման, որ իրականացված շինարարության հետևանքով լուսավորվածության և արևահարման մակարդակը նվազել է սահմանված և անհրաժեշտ նիշից այնքան, որ առաջացնի Ավետիք Կարապետյանի՝ իր բնակարանը նպատակային նշանակությամբ օգտագործելու իրավունքի որևէ խախտում: Ինչ վերաբերում է Կենտրոնի պետի 07.07.2010 թվականի թիվ 04/12-S-02ա-1319 գրությանը, ապա Ավետիք Կարապետյանին պատկանող անշարժ գույքի հարկի հատակի սիշը հողի հատակագծային նիշից ցածր է միջինը 1,9 մետրով, իսկ առաստաղի բարձրությունը կազմում է 2,97 մետր, և նշված բնակարանը հանդիսանում է նկուղ, իսկ տվյալ դեպքում բացակայում է մինչև շինարարությունը դրա լուսավորվածության գործակցի գործիքային չափում կատարված լինելու փաստը հավաստող ապացույցը: Հետևաբար, չի հիմնավորվում այն հանգամանքը, որ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 9 հասցեում գտնվող բնակարանում լուսավորության գործակիցը համապատասխանել է թույլատրելի նորմին և շինարարության պատճառով նվազել է:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչության պետի 19.05.2010 թվականի թիվ 02/25.1/1750-10 գրությամբ հաստատվում է, որ Երևանի Կիևյան փողոցի 14ա-րդ շենքի թիվ 6 հասցեի բնակելի տարածքը հասարակական սպասարկման տարածքի վերակառուցման և փողոցի կողմից մուտքի կազմակերպման նախագծի մշակման համար համաձայնեցված նախագծով նախատեսված քաղաքաշինական գործունեությունն իրականացվելու դեպքում զգալիորեն կնվազի նույն շենքի թիվ 9 կիսանկուղային բնակարանի բնական լուսավորությունն ու արևահարումը: Կենտրոնի պետի 07.07.2010 թվականի թիվ 04/12-S-02ա-1319 գրությամբ հաստատվում է, որ 28.06.2010 թվականին Ավետիք Կարապետյանի բնակարանում կատարված գործիքային չափման արդյունքում պարզվել է, որ բնական լուսավորվածության գործակիցը սենյակներից մեկում եղել է 0,1 տոկոս, իսկ մյուս սենյակում՝ 0,03 տոկոս (Համաձայն ՀՀ ՇՆ թիվ II-8.03-96-ի աղյուսակ Թ 1-ի, 61-րդ կետի՝ բնական լուսավորվածության գործակցի թույլատրելի նորմը 0,5 տոկոս է), և բացի այն, որ բնակարանը գտնվում է կիսանկուսային հարկում, բնական լուսավորվածության ներթափանցմանը խանգարում է նաև պատուհանների վերևում կառուցված հարթակը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված ապացույցներով անմիջականորեն հաստատվում է այն փաստական հանգամանքը, որ Լեյլի Գասպարյանի իրականացրած քաղաքաշինական գործունեության հետևանքով նվազել է Ավետիք Կարապետյանի բնակարանի բնական լուսավորությունը և արևահարումը, իսկ բնական լուսավորվածության ներթափանցմանը խանգարում է նաև պատուհանների վերևում կառուցված հարթակը, ինչից հետևում է, որ տվյալ դեպքում Լեյլի Գասպարյանը քաղաքաշինական գործունեություն կարող էր իրականացնել բացառապես Ավետիք Կարապետյանի համաձայնությամբ՝ դրա վերաբերյալ նախօրոք տեղեկացնելով նաև շենքի կառավարման մարմնին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Տեսչության պետի 19.05.2010 թվականի թիվ 02/25.1/1750-10 գրությունը բավարար հիմք չէ՝ գալու այն եզրահանգման, որ իրականացված շինարարության հետևանքով լուսավորվածության և արևահարման մակարդակը նվազել է սահմանված և անհրաժեշտ նիշից այնքան, որ առաջացնի Ավետիք Կարապետյանի՝ իր բնակարանը նպատակային նշանակությամբ օգտագործելու իրավունքի որևէ խախտում, անհիմն է, իսկ Ավետիք Կարապետյանին պատկանող անշարժ գույքի հարկի հատակի նիշը հողի հատակագծային նիշից ցածր լինելու հանգամանքը տվյալ դեպքում չունի որևէ նշանակություն, քանի որ Կենտրոնի պետի 07.07.2010 թվականի թիվ 04/12-S-02ա-1319 գրությամբ հաստատվում է այն փաստական հանգամանքը, որ բնական լուսավորվածության ներթափանցմանը խանգարում է նաև պատուհանների վերևում կառուցված հարթակը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ այն հանգամանքը, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվել է հասարակական սպասարկման տարածքի վերակառուցման և փողոցի կողմից մուտքի կազմակերպման նախագծի մշակման համար, չի կարող դիտարկվել որպես առևտրային նպատակ հետապնդող գործունեություն, քանի որ գործի քննությամբ չհիմնավորվեց, որ վերակառուցումն իրականացվել է առևտրային նպատակով, համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկե-

լու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից *(տե՛ս՝ ըստ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության հայցի ընդդեմ «Ջորջ ընդ Բրանդն» ՍՊԸ-ի՝ 131.200 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, ՎԴ/5525/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ գործի քննությամբ չհիմնավորվեց այն հանգամանքը, որ վերակառուցումն իրականացվել է առևտրային նպատակով, պարտավոր էր նշված հանգամանքը պարզելու համար ձեռնարկել ողջամիտ միջոցներ, այսինքն՝ Լեյլի Գասպարյանի իրականացրած քաղաքաշինական գործունեության նպատակների վերաբերյալ փաստերը պարզել ի պաշտոնե, ինչը սույն գործի լուծման համար ուներ էական նշանակություն, քանի որ առևտրային նպատակով իրականացվող քաղաքաշինական գործունեության դեպքում մյուս սեփականատերերի համաձայնությունը կլիներ պարտադիր:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալի մասով ապացույցներ պահանջելու և դրանց հիման վրա գործի փաստերն ի պաշտոնե պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների գնահատման և փաստերի ի պաշտոնե պարզման կանոնների խախտման պայմաններում դրանք սույն գործի լուծման համար չունեն որևէ իրավական նշանակություն:

Նշված պատճառաբանություններով հերքվում են նաև վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.10.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4677/05/09
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4677/05/09**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ելենա Թովմասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.09.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ելենա Թովմասյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշումը մասնակիորեն՝ 0,0055 հա մակերեսով հողամասի և 168,1 քմ մակերեսով շինության մասով անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք դրա հիման վրա (08.07.2008թ.) 21.07.2008 թվականին կնքված պայմանագիրը լուծելու համաձայնագիրն ու Կադաստրի գրանցման միասնական 1Կ-1 մատյանի թիվ 000048 համարի տակ 30.12.2008 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը մասնակիորեն՝ 0,0055 հա մակերեսով հողամասի և 168,1 քմ մակերեսով շինության մասով վերացնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ելենա Թովմասյանը պահանջել է 0,0055 հա մակերեսով հողամասի և 168,1 քմ մակերեսով շինության մասով անվավեր ճանաչել Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշումը, որպես անվավերության հետևանք վերաց-

նել (08.07.2008թ.) 21.07.2008 թվականին կնքված պայմանագիրը լուծելու համաձայնագիրն ու Կադաստրի գրանցման միասնական 1Կ-1 մատյանի թիվ 000048 համարի տակ 30.12.2008 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը՝ 0,0055 հա մակերեսով հողամասի և 168,1 քմ մակերեսով շինության մասով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 27.04.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.09.2011 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, բեկանվել և փոփոխվել է Դատարանի 27.04.2011 թվականի վճիռը, և Ելենա Թովմասյանի հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ելենա Թովմասյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետը, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 63-րդ հոդվածները, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 24-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ 0,0055 հա մակերեսով հողամասի նկատմամբ Ելենա Թովմասյանը սեփականության իրավունք ձեռք է բերել օրենքի ուժով՝ անկախ նման իրավունքի պետական գրանցումից: Արդյունքում 123,5 քմ մակերեսով հողամասը, որից 68,5 քմ մակերեսով հողամասն ինքնակամ զբաղեցված, համարելով պետական սեփականություն, դրա վրա գտնվող կառույցն ամբողջությամբ ճանաչվել է պետական սեփականություն՝ խախտելով Ելենա Թովմասյանի սեփականության իրավունքն առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված անշարժ գույքի նկատմամբ: Հետևաբար, Ելենա Թովմասյանի իրավունքի դադարեցումն իրավաչափ չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.09.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.04.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 04.05.2005 թվականին Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4Կ-9 մատյանի թիվ 000084 համարի տակ Երևանի Եր. Քոչար փողոցի թիվ 6/3 հասցեի 168,1 քմ մակերեսով առևտրի սրահի նկատմամբ գրանցվել է Թամարա Ղազարյանի սեփականության, իսկ 0,0055 հա մակերեսով հողի նկատմամբ՝ վարձակալության իրավունքը **(հատոր 2-րդ, գ.թ. 6-8):**

2. 17.05.2005 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Թամարա Ղազարյանը վաճառել, իսկ Ելենա Թովմասյանը գնել է Երևանի Եր. Քոչար փողոցի թիվ 6/3 հասցեի անշարժ գույքը՝ բաղկացած 168,1 քմ մակերեսով առևտրի սրահից և 0,0055 հա մակերեսով վարձակալած հողից **(հատոր 2-րդ, գ.թ. 9):**

3. 24.05.2005 թվականին Կադաստրի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4Կ-9 մատյանի թիվ 000084 համարի տակ Երևանի Եր. Քոչար փողոցի թիվ 6/3 հասցեի 168,1 քմ մակերեսով առևտրի սրահի նկատմամբ գրանցվել է Ելենա Թովմասյանի սեփականության, իսկ 0,0055 հա մակերեսով հողի նկատմամբ՝ վարձակալության իրավունքը **(հատոր 2-րդ, գ.թ. 10-12):**

4. Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշմամբ որոշվել է՝

ա. լուծել 29.08.2001 թվականի թիվ 751/ԳԱ հողի վարձակալության պայմանագիրը,

բ. Եր. Քոչար փողոցի թիվ 6/4 հասցեում Ելենա Թովմասյանի կողմից պետական սեփականություն հանդիսացող 123,5 քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունը ճանաչել պետական սեփականություն, հանձինս Քաղաքապետարանի,

գ. Քաղաքապետի անունից հողօգտագործողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասին համաձայնագիր **(հատոր 2-րդ, գ.թ. 14):**

5. Քաղաքապետի և Ելենա Թովմասյանի լիազորված անձ Ռիմիկ Հովակիմյանի միջև 08.08.2008 թվականի պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրով լուծվել է Քաղաքապետի և Թամարա Ղազարյանի միջև 29.08.2001 թվականին կնքված թիվ 751/ԳԱ հողի վարձակալության պայմանագիրը **(հատոր 1-ին, գ.թ. 34):**

6. Կադաստրի 21.08.2008 թվականի թիվ 0359317 միասնական տեղեկանքի «Լրացուցիչ տեղեկություններ» տողի նշումների համաձայն՝ «Չափագրումից պարզվել է, որ շինությունը քանդված է, և կառուցվել է 521,8 քմ ներքին մակերեսով շինություն, այն զբաղեցնում է 123,5 քմ հողամաս: Գործարքի դեպքում իրավունքների պետական գրանցում չի կատարվի, քանի որ սեփականության իրավունքով գրանցված գույքը գոյություն չունի» **(հատոր 2-րդ, գ.թ. 20):**

7. 30.12.2008 թվականին Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 1Կ-1 մատյանի թիվ 000048 համարի տակ Երևանի Եր. Քոչար փողոցի թիվ 6/4 հասցեի 604,5 քմ մակերեսով շինությունը և 0,01235 հա մակերեսով հողամասը, ի դեմս Քաղաքապետարանի գրանցվել է որպես պետական սեփականություն **(հատոր 2-րդ, գ.թ.23-25):**

8. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 09.07.2010 թվականի թիվ 10-1546 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ «Երևան քաղաքի Եր. Քոչարի 6/4 հասցեում գտնվող շինության 6,4x7,9մ և 7,9x7,9մ ներքին եզրաչափերով հատվածամասերի առաջին երեք հարկերի կոնստրուկտիվ լուծումները և ներքին եզրաչափերը հիմնականում համապատասխանում են «ԱԿՕ» ՍՊԸ-ի կողմից մշակված նախագծային լուծումներին և ԵրՃԾՊՀ-ի կողմից տրված եզրակացությունով բերված չափորոշիչներին, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից առ 04.05.2005 թվականին տրված թիվ 1224414 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականում արտացոլված հատակագծերի ներքին եզրաչափերին: Շահագործման ընթացքում, պահպանելով Ելենա Թովմասյանին պատկանող շինության ներքին լայնական չափը՝ 7,9մ, վերակառուցվել է դեպի շինության հետնամաս՝ բակի կողմ, մեծացել և վերակառուցվել է ևս մեկ հարկ և ձեղնահարկ» **(հատոր 1-ին, գ.թ. 147-155):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու

միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից**, բացառությամբ դատական կարգով՝ **օրենքով նախատեսված դեպքերի:**

Կոնվենցիային կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և **օրենքով** ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով **նախատեսված պայմաններով:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի 23.06.2009 թվականի թիվ 22651/05 վճռի 67 կետով նշել է, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «օրենքով նախատեսված պայմաններով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է մատչելի և բավականաչափ հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն, և երկրորդ՝ Պետության կողմից այդ իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի առկա ներպետական իրավական նորմին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքի պաշտպանության իրավական խնդրին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ Սահմանադրությունը, հռչակելով սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, երաշխավորում է յուրաքանչյուրի՝ սեփականություն ունենալու բացարձակ իրավունքը՝ միաժամանակ ամրագրելով **օրենքով նախատեսված դեպքերում** այդ իրավունքից զրկելու հնարավորությունը **միայն դատական կարգով** (*տես՝ Գևորգ Գևորգյանի հայցն ընդդեմ ՀՀ կառավարության աորնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի՝ Կադաստրի նախագահի 16.08.2006 թվականի թիվ 06-204-Ա հրամանը և Երևանի քաղաքապետի 25.08.2006 թվականի թիվ 1369-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 30.04.2009 թվականի թիվ ՎԴ/2434/05/08 որոշումը*):

Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ Երևանի Եր. Քոչար փողոցի 6/4 (6/3) հասցեում գտնվող շինությունն ամբողջությամբ ինքնակամ շինություն չէ, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Քաղաքապետը լիազորված չէ իր որոշմամբ Ելենա Թովմասյանին զրկելու 168,1 քմ մակերեսով առևտրի սրահի նկատմամբ սեփականության իրավունքից: Երևանի Եր. Քոչար փողոցի 6/4 (6/3) հասցեում գտնվող շինությունն ամբողջությամբ չի ոչնչացվել, այլ ենթարկվել է վերակառուցման դեպի ետնամաս և կառուցվել է ևս մեկ հարկ և ձեղնահարկ, ինչի արդյունքում պահպանվել է Ելենա Թովմասյանի սեփականության իրավունքը 168,1 քմ մակերեսով առևտրի սրահի նկատմամբ: Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշման 1-ին կետով խախտվել է Երևանի Եր. Քոչար փողոցի 6/4 (6/3) հասցեում գտնվող 0,0055 հա մակերեսով հողամասի նկատմամբ 17.05.2005 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով երաշխավորված օգտագործման իրավունքը: Միաժամանակ, Դատարանը նշել է, որ Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշումը 0,0055 հա մակերեսով հողամասի և 168,1 քմ մակերեսով շինության մասով անվավեր վարչական ակտ է, ուստի որպես անվավեր ճանաչված վարչական ակտի հետևանքների վերացման ածանցյալ պահանջ բավարարման են ենթակա նաև «Պայմանագիրը լուծելու մասին» 08.07.2008 թվականի համաձայնագիրը և 0,0055 հա մակերեսով հողամասի և 168,1 քմ մակերեսով

շինության մասով Կաղաստրի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 1Կ-1 մատյանի թիվ 000048 համարի տակ 30.12.2008 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ «Ելենա Թովմասյանը 55 քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունք չի գրանցել, հետևաբար այդ հողամասի նկատմամբ ձեռք չի բերել սեփականության իրավունք», «168,1 քմ մակերեսով շինության նկատմամբ Ելենա Թովմասյանի սեփականության իրավունքը դադարել է գույքի ոչնչացման հիմքով, ուստի առկա չէ ՀՀ Սահմանադրության 2-րդ մասով նախատեսված՝ առանց դատարանի որոշման սեփականության իրավունքից զրկելու փաստ: … վերակառուցման հետևանքով առաջացած կառույցն ամբողջությամբ պետք է դիտարկվի որպես ինքնակամ կառույց …»: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ Քաղաքապետի որոշման վերացումն ինքնաբերաբար չէր կարող հանգեցնել համաձայնագրի անվավերության, քանի որ վիճարկվող որոշումն ընդամենը պարունակում է առաջարկ պայմանագիրը լուծելու վերաբերյալ, որին Ելենա Թովմասյանը կարող էր համաձայնվել կամ չհամաձայնվել: Ինչ վերաբերում է Կաղաստրի 1Կ-1 մատյանի թիվ 000048 համարի տակ 30.12.2008 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը մասնակիորեն վերացնելու պահանջին, ապա հիմնական պահանջի մերժման պայմաններում այն ևս ենթակա է մերժման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

«ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ **վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած** իրավաբանական և ֆիզիկական անձանց, ներառյալ՝ օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով ձեռք բերված (բացառությամբ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի)՝ նույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են՝

1) տնամերձ, այգեգործական, ինչպես նաև բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասերը.

2) հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար նախատեսված և սահմանված կարգով կառուցված, այդ թվում՝ կիսակառույց շենքերով, շինություններով զբաղեցված հողամասերը՝ անկախ շենքերի, շինությունների ավարտվածության աստիճանից:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ մինչև «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնց օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց օգտագործման կամ վարձակալության իրավունքով հանձնվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողեր, այդ հողերի նկատմամբ ձեռք են բերում սեփականության իրավունք՝ օգտագործման կամ վարձակալության իրավունքն **օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված լինելու և այդ հողերը ըստ նպատակային նշանակության օգտագործելու (կառուցապատելու) դեպքում:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար **չհատկացված հողամասում** կամ առանց թույլտվու-

թյան կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: **Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել: Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:**

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական՝ համայնքների ղեկավարների (Երևանում՝ Երևանի քաղաքապետի), համայնքի վարչական տարածքներից դուրս՝ մարզպետների կողմից, կառավարության սահմանած կարգով: Ինքնակամ կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն այն անձի դիմումով, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվում է այդ կառույցը:

ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ **քաղաքացիներին** կամ իրավաբանական անձանց **սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող այն ինքնակամ կառույցները, որոնց մի մասը կառուցված է սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա,** օրինականացվում և տնօրինվում են նույն կարգի IV բաժնի պահանջներին համապատասխան, ընդ որում, **հողամասին կից ինքնակամ կառույցով զբաղեցված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օրինականացվում և տնօրինվում է ինքնակամ կառույցով զբաղեցված հողամասի մասով կամ կառույցի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասով**: Սույն կետով սահմանված՝ օրինական ճանաչված կառույցները կարող են օտարվել, իսկ դրանց նկատմամբ իրավունքները՝ գրանցվել, կառույցով զբաղեցված կամ կառույցի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասը կադաստրային արժեքով ձեռք բերելու դեպքում:

Նույն կարգի 33-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում **պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին**:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ կառուցապատման նպատակով չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ նախատեսված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի խախտումներով իրականացված կառույցը համարվում է ինքնակամ կառույց, որի նկատմամբ կարող է ճանաչվել միայն այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է հողամասը: Երևան քաղաքում ինքնակամ կառույցն օրինական կարող է ճանաչվել Երևանի քաղաքապետի որոշմամբ: Ընդ որում, **այն ինքնակամ կառույցները, որոնց մի մասը կառուցված է սեփականության իրավունքով ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող հողամասին կից՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա, օրինականացվում և տնօրինվում է ինքնակամ կառույցով զբաղեցված հողամասի մասով կամ կառույցի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասով**:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Եր. Քոչար փողոցի թիվ 6/3 (6/4) հասցեի 0,0055 հա մակե-

րեսով հողամասի նկատմամբ դեռևս 24.05.2005 թվականին Կադաստրի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4Կ-9 մատյանի թիվ 000084 համարի տակ կատարված գրանցման փաստով Ելենա Թովմասյանը ձեռք է բերել վարձակալության, իսկ «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի ուժով՝ սեփականության իրավունք, անկախ նման իրավունքի պետական գրանցումից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 0,0055 հա մակերեսով հողամասի մասով Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշումն ընդունվել է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի խախտմամբ, ուստի առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքը: Նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 0,0055 հա հողամասի մասով անվավեր է նաև 30.12.2008 թվականին Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 1Կ-1 մատյանի թիվ 000048 համարի տակ Երևանի Եր. Քոչար փողոցի թիվ 6/4 հասցեի 0,01235 հա մակերեսով հողամասի նկատմամբ Քաղաքապետարանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Ինչ վերաբերում է Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշումը 168,1 քմ մակերեսով շինության մասով անվավեր ճանաչելու պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի կարգավորումից հետևում է, որ ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը: Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի ուժով վեճի առարկա հողամասի նկատմամբ Ելենա Թովմասյանը ձեռք է բերել սեփականության իրավունք, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա վրա գտնվող կառույցների նկատմամբ (եթե դրանք ինքնակամ են) չէր կարող ճանաչվել Քաղաքապետարանի սեփականության իրավունքը, հետևաբար Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշումը 168,1 քմ մակերեսով շինության մասով անվավեր է:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Քաղաքապետի և Ելենա Թովմասյանի լիազորված անձ Ռիմիկ Հովակիմյանի միջև 08.08.2008 թվականին կնքված «Պայմանագիրը լուծելու մասին» համաձայնագիրը որպես Քաղաքապետի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշման անվավերության հետևանք վերացնելու պահանջին, գտնում է, որ «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի ուժով սեփականության իրավունքի ծագման հիմքով հողամասի նկատմամբ ծագած վարձակալության քաղաքացիաիրավական հարաբերությունները դադարել են, հետևաբար նման համաձայնագիրն առոչինչ լինելու հիմքով չէր կարող որևէ իրավական հետևանք առաջացնել, ուստիև նշված գործարքը վերացնելու վերաբերյալ հայցապահանջը ենթակա է մերժման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ

է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելու, ինչպես նաև մասնակիորեն առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելով և առաջին ատյանի դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.09.2011 թվականի որոշումը և մասնակիորեն՝ Երևանի քաղաքապետարանի 16.06.2008 թվականի թիվ 2741-Ա որոշումը մասնակիորեն՝ 0,0055 հա մակերեսով հողամասի և 168,1 քմ մակերեսով շինության մասով անվավեր ճանաչելու պահանջի, և նույն մասերով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման միասնական 1Կ-1 մատյանի թիվ 000048 համարի տակ 30.12.2008 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 27.04.2011 թվականի վճռին, իսկ (08.07.2008թ.) 21.07.2008 թվականին կնքված «Պայմանագիրը լուծելու մասին» համաձայնագիրը վերացնելու պահանջի մասով փոփոխել. Երևանի քաղաքապետարանի և Ելենա Թովմասյանի լիազորված անձ Ռիմիկ Հովակիմյանի միջև (08.07.2008թ.) 21.07.2008 թվականին կնքված «Պայմանագիրը լուծելու մասին» համաձայնագիրը վերացնելու մասին հայցապահանջը մերժել:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ Ելենա Թովմասյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ5/0716/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Գ. Ղարիբյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ5/0716/05/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով անհատ ձեռնարկատեր Միքայել Անտոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.06.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Միքայել Անտոնյանի հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ Տեսչության 07.09.2010 թվականի թիվ 2327157 ակտն անվավեր ճանաչելու, և ըստ Տեսչության հակընդդեմ հայցի ընդդեմ Միքայել Անտոնյանի ՝ Տեսչության 07.09.2010 թվականի թիվ 2327157 ստուգման ակտն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցադիմումը մերժելու և հօգուտ պետական բյուջեի 2.355.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Միքայել Անտոնյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 07.09.2010 թվականի թիվ 2327157 ակտը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Տեսչության 07.09.2010 թվականի թիվ 2327157 ստուգման ակտն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցը մերժել, Միքայել Անտոնյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 2.355.000 ՀՀ դրամ և նախապես վճարված պետական տուրքը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան) 21.02.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.06.2011 թվականի որոշմամբ Տեսչության բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 21.02.2011 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է. հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը հօգուտ պետական բյուջեի 2.355.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով բավարարվել է: Գործի վարույթը հակընդդեմ հայցի՝ Տեսչության 07.09.2010 թվականի թիվ 2327157 ստուգման ակտն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցադիմումը մերժելու պահանջի մասով կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Միքայել Անտոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հիմնավորված է համարել, որ վիճարկվող ակտով տուգանքի նշանակման համար հիմք ընդունված իրացման շրջանառության չափը հաշվարկվել է «Հաստատագրված վճարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 8-րդ հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտումներով, և որ հաստատագրված վճարի չափից հնարավոր չէ հաշվարկել իրացման շրջանառությունը, քանի որ հաստատագրված հարկի և իրացման շրջանառության միջև որևէ կապ չկա: Այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ իրացման շրջանառության հաշվարկված մեծությունը չի կարող գնահատվել որպես իրականը գերազանցող, այսինքն՝ այդ մեծությունը թեկուզև հաշվարկված է օրենքի խախտմամբ, այն որևէ կերպ չի կարող առաջ բերել Միքայել Անտոնյանի իրավունքների խախտում, հետևաբար այն բավարար հիմք չէ ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պատճառաբանությունն անհիմն է, քանի որ օրենքի խախտմամբ ընդունված լինելու՝ Վերաքննիչ դատարանի կողմից հաստատված հանգամանքներն արդեն պարտադիր հանգեցնում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմանը, այսինքն՝ ակտի անվավերությանը:

Ակտով հաշվարկված իրացման շրջանառությունն իրական շրջանառությունից գերազանցող չլինելու Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ ակտով հաշվարկված իրացման շրջանառությունը նշանակում է, որ մեկ ամսվա իրացման շրջանառությունը պայմանական մեկ ավտոմեքենայի հաշվով կազմում է 124.000 ՀՀ դրամ, որը համարժեք է միայն վարորդի ամսական աշխատավարձին, որն էլ Վերաքննիչ դատարանը համարել է հանրահայտ փաստ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի կիրառմամբ: Նշված փաստն ընդունելի չէ, քանի որ չկա որևէ տվյալ աշխատած օրերի քանակի, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ վարորդների աշխատավարձի չափի մասին: Այսինքն վարորդի աշխատավարձը 124.000 ՀՀ դրամ լինելու փաստը հանրահայտ չի կարող համարվել, քանի որ հայտնի չէ աշխատած օրերի քանակը և աշխատավարձի չափի վրա ազդող այլ հանգամանքներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.06.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 21.02.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության 20.07.2010 թվականի թիվ 2327157 հանձնարարագրի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Միքայել Անտոնյանի մոտ իրականացվել է առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգում: Ստուգմամբ պարզվել է, որ Միքայել Անտոնյանը Գյումրի քաղաքում 01.04.2009-01.09.2010 թվականներն ընկած ժամանակահատվածում զբաղվել է մարդատար (տաքսի) ավտոմեքենաներով ուղևորների փոխադրման գործունեությամբ, որը լիցենզավորման ենթակա գործունեություն է (գ.թ. 20, 21-22):

2) 07.09.2010 թվականի թիվ 2327157 ստուգման ակտով արձանագրվել է, որ 01.04.2009-01.09.2010 թվականներին Միքայել Անտոնյանի մոտ իրացման շրջանառությունը կազմել է 4.710.000 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների հիման վրա և համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի հաշվարկվել է տուգանք՝ 2.355.000 ՀՀ դրամի չափով, որից տուգանք 2.119.500 ՀՀ դրամ, հարկային մարմնի զարգացման և խրախուսման ֆոնդի գումար՝ 235.500 ՀՀ դրամ (գ.թ. 21-22):

3) Ստուգման ակտին կից 1-ին և 2-րդ հավելվածներում ներկայացված հաշվարկի և տեղեկանքի համաձայն՝ հաստատագրված վճարի գումարի հաշվարկը 2009 թվականի համար կազմել է 148.800 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 86.800 ՀՀ դրամ: Այդ տվյալների հիման վրա, հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը հաշվարկվել է հաշվարկային եկամտահարկը՝ 2009 թվականի համար՝ 59.500 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 34.700 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 94.200 ՀՀ դրամ: Նշված տվյալների հիման վրա, հիմք ընդունելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետը, հաշվարկվել է հաշվարկային եկամուտը՝ 2009 թվականի համար՝ 595.000 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 347.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 942.000 ՀՀ դրամ: Այնուհետ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված 25 տոկոս վերադիրի կիրառմամբ հաշվարկվել է հաշվարկային իրացման շրջանառությունը՝ 2009 թվականի համար՝ 2.975.000 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 1.735.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 4.710.000 ՀՀ դրամ, որի նկատմամբ էլ հաշվարկվել է տուգանքը (գ. թ. 23, 24):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը բողոքի հիմքում բարձրացված հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցերին.

* Արդյոք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված «հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի» կիրառման դեպքում իրացման շրջանառության չափը կարող է որոշվել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի հիման վրա.

* Ինչպիսի պայմանների առկայության դեպքում դատարանը կարող է փաստը ճանաչել հանրահայտ.

1. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 1-ին հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել հասույթ օրենսդրական եզրույթի բովանդակության դրսևորումները ՀՀ օրենսդրության մեջ:

Հասույթ հասկացությունն օգտագործվում է հարկային օրենսդրության տարբեր ակտերում:

Այսպես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝

ա) ապրանքների, արտադրանքի (այսուհետ՝ նաև ապրանքներ) **իրացումից ստացվող հասույթը**.

բ) **ծառայությունների իրացումից ստացվող հասույթը**.

գ) հիմնական միջոցների և այլ ակտիվների **իրացումից ստացվող հասույթը**.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև հասույթի հասկացությունը: Մասնավորապես, նշված օրենքի 3-րդ հոդվածի 9-րդ պարբերության համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝ **հասույթ է համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող անձանց տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեության ընդհանուր արդյունքը՝ առանց կատարված ծախսերի (այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման գծով ծախսերի) պակասեցման: Առևտրի ոլորտում այն հավասարեցվում է ապրանքաշրջանառությանը**:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17[1]-ին հոդվածի համաձայն՝ հարկ վճարողի մոտ հարկային մարմնի ներկայացուցիչ կարող է նշանակվել միայն հետևյալ հիմքերից առնվազն մեկի առկայության դեպքում՝

ա) հարկ վճարողի նախորդ տարվա ապրանքների, արտադրանքի, ծառայությունների, ինչպես նաև հարկ վճարողի ակտիվների իրացումից ստացվող **հասույթը (զուտ հասույթը՝ առանց անուղղակի հարկերի)** գերազանցել է 4 միլիարդ դրամը:

Վերոնշյալ նորմերի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրության մեջ օգտագործվում են հասույթ, եկամուտ, զուտ հասույթ, ապրանքաշրջանառություն եզրույթները: Ընդ որում, որոշ դեպքերում (եկամտահարկ) օրենսդիրը ապրանքի իրացումից ստացված եկամուտը նույնացնում է ապրանքի իրացումից ստացված հասույթի հետ: Օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ զուտ հասույթ հասկացությունն իր մեջ ներառում է հասույթն առանց անուղղակի հարկերի:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային օրենսդրությամբ հասույթ եզրույթն իր մեջ ներառում է տնտեսական գործունեության (ապրանքների իրացում, ծառայությունների իրացում, հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացում) ընդհանուր արդյունքը, որից դեռևս պակասեցված չեն կատարված ծախսերը (այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման գծով ծախսեր) և անուղղակի հարկերը:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հասույթի չափի որոշման համար էական նշանակություն ունեն տնտեսական գործունեության ծավալները՝ ապրանքների իրացման, ծառայությունների իրացման, հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացման ծավալները:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գործունեության որոշ տեսակների համար հաստատագրված վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է հաստատագրված վճարներ վճարողների շրջանակը, հաստատագրված վճարի հաշվարկման և վճարման կարգը, ինչպես նաև պատասխանատվությունը՝ սույն օրենքի խախտման համար:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հաստատագրված վճարը փո-

խարիսնող հարկ է, սակայն այն ունի հաշվարկման և վճարման ինքնուրույն կարգ, իսկ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է **հաստատագրված վճարողների կողմից** հաստատագրված վճարի հաշվարկման և վճարման կարգը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որի համաձայն՝ հաստատագրված վճարի համար հարկման բազա է համարվում սույն օրենքի 7 հոդվածով, բացառությամբ 7 հոդվածի «իա» ենթակետի նախատեսված գործունեության տեսակների համար սահմանված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալը՝ դրամական արտահայտությամբ, գտնում է, որ հաստատագրված վճարի չափի ձևավորման հիմքում օրենսդիրը դրել է այլ տրամաբանություն և հաշվարկման այլ կարգ: Մասնավորապես, հաստատագրված վճարների հաշվարկման համար տնտեսական գործունեության ծավալները, ինչպիսին է, օրինակ՝ ծառայությունների մատուցումից ստացված արդյունքը, էական նշանակություն չունեն, քանի որ հաստատագրված վճարների հաշվարկման հիմք են ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցները, որոնք սահմանված են նույն օրենքով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հասույթի չափը կամ իրացման շրջանառությունը հաստատագրված վճարների հաշվարկի համար էական նշանակություն չունի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հանգամանքը, որ հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով, նույնպես հիմք չէ եզրակացնելու, որ հաստատագրված վճարի ձևավորման համար էական է իրացման շրջանառությունը կամ ապրանքաշրջանառությունը հետևյալ պատճառաբանությամբ:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով ...:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ դրույթը նախատեսում է ավելացված արժեքի հարկի **հաշվարկային**, այլ ոչ թե իրական մեծությունը, իսկ նման նորմի նախատեսումն օրենսդրի կողմից ուղղված է նույն օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված հաշվանցի իրականացմանը: Նշված հոդվածի համաձայն՝ վճարողների կողմից նույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով, 25^1 հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, 33-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով, 53 հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանային չափերը գերազանցելու դեպքում վճարված (հաշվարկված) հաստատագրված վճարների գումարը հաշվանցվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով: Հաշվանցումն առաջին հերթին իրականացվում է համապատասխան հարկատեսակների մասին օրենքներով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկված փաստացի շահութահարկի (կամ եկամտահարկի) և ավելացված արժեքի հարկի գումարների դիմաց՝ նույն օրենքի 6-րդ հոդվածում նշված համամասնությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 07.09.2010 թվականի թիվ 2327157 ստուգման ակտով արձանագրվել է, որ 01.04.2009-01.09.2010 թվականներին Միքայել Անտոնյանի մոտ իրացման շրջանառությունը կազմել է 4.710.000 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների հիման վրա և համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի հաշվարկվել է տուգանք՝ 2.355.000 ՀՀ դրամի չափով, որից տուգանք՝ 2.119.500 ՀՀ դրամ, հարկային մարմնի զարգացման և խրախուսման ֆոնդի գումար՝ 235.500 ՀՀ դրամ: Տուգանքը հաշվարկվել է հետևյալ եղանակով. հաշվարկվել է հաստատագրված վճարի գումարը, որը 2009 թվականի համար կազմել է 148.800 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 86.800 ՀՀ

դրամ: Այդ տվյալների հիման վրա, հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը հաշվարկվել է հաշվարկային եկամտահարկը՝ 2009 թվականի համար՝ 59.500 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 34.700 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 94.200 ՀՀ դրամ: Նշված տվյալների հիման վրա, հիմք ընդունելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետը, հաշվարկվել է հաշվարկային եկամուտը՝ 2009 թվականի համար՝ 595.000 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 347.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 942.000 ՀՀ դրամ: Այնուհետ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված 25 տոկոս վերադիրի կիրառմամբ հաշվարկվել է հաշվարկային իրացման շրջանառությունը՝ 2009 թվականի համար՝ 2.975.000 ՀՀ դրամ, իսկ 2010 թվականի համար՝ 1.735.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 4.710.000 ՀՀ դրամ, որի նկատմամբ էլ հաշվարկվել է տուգանքը:

Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ ակնհայտ է նաև, որ հաշվարկների համար ելակետային մեծություն է համարվել թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորների փոխադրման գործունեության համար սահմանված հաստատագրված վճարի գումարը: Այսինքն՝ իրացման շրջանառությունը որոշվել է հարկվող եկամտից, հարկվող եկամուտը որոշվել է եկամտահարկի գումարից, իսկ եկամտահարկի գումարը՝ հաստատագրված վճարից: Նման մոտեցումն անընդունելի է հետևյալ պատճառաբանությամբ: «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ֆիզիկական անձանց համար հաստատագրված վճարը փոխարինում է ավելացված արժեքի հարկի և (կամ) եկամտահարկի գումարին: Իսկ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ են համարվում գործունեության որոշակի տեսակները: Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճարի հարկման բազա է համարվում գործունեության տվյալ տեսակի համար սահմանված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալը՝ ՀՀ դրամական արտահայտությամբ: Օրենքի սահմանումներից երևում է, որ հաստատագրված վճարի չափը պայմանավորված չէ սուբյեկտի տվյալ գործունեության իրացման շրջանառությամբ, տնտեսական ցուցանիշը որևէ նշանակություն չունի հաստատագրված վճարի չափը որոշելու համար, որպիսի հանգամանքը չի վիճարկել նաև հարկային մարմինը: Բացի այդ, տվյալ գործունեության մասով հաստատագրված վճարը փոխարինում է եկամտահարկին և ավելացված արժեքի հարկին: Իսկ եթե հաստատագրված վճարը փոխարինում է եկամտահարկին, ապա այն բացառում է եկամտահարկը, հաստատագրված վճարի մեջ չի ներառվում եկամտահարկի գումարը: Եթե «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է, որ հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոս, ապա դա չի նշանակում, որ հաստատագրված վճարը ներառում է 60 տոկոս ավելացված արժեքի հարկ և 40 տոկոս եկամտահարկ, դա ընդամենը հաշվարկային մեծություն է, որն օգտագործվում է հարկերի վերահաշվարկներ կատարելիս և չի կարող կիրառվել իրացման շրջանառությունը որոշելու համար: Եթե հաստատագրված վճարի մեծությունը որոշելու համար իրացման շրջանառությունը որևէ նշանակություն չունի, ապա հակառակ կապը նույնպես չի կարող լինել, այսինքն՝ հաստատագրված վճարի մեծությունը չի կարող հիմք հանդիսանալ իրացման շրջանառությունը որոշելու համար: Դատարանը գտել է, որ իրացման շրջանառությունն ակտով հաշվարկվել է «Հաստատագրված վճարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտումներով, ինչը նույնպես հանգեցրել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի սխալ կիրառմանը: Նշված խախտումն արձանագրվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի և Վերաքննիչ դա-

տարանի պատճառաբանություններն այդ մասով հիմնավոր են և քննարկվող պարագայում Տեսչությունը չէր կարող իրացման շրջանառությունը որոշել հարկվող եկամտից, հարկվող եկամուտը որոշել եկամտահարկի գումարից, իսկ եկամտահարկի գումարը՝ հաստատագրված վճարից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված կամ առանց լիցենզիայի կամ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն) գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված **իրացման շրջանառության (համախառն եկամտի)** 50 տոկոսի չափով:

Սույն հոդվածով նախատեսված ապօրինի գործունեության իրականացման դեպքում իրացման շրջանառությունը (համախառն եկամուտը) և ակտիվների արժեքները որոշվում են հարկային մարմինների կողմից՝ կիրառելով սույն օրենքի 22 հոդվածի դրույթները:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ **Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով**, մասնավորապես, հիմնվելով՝

հարկ վճարողի ակտիվների,

հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների,

հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի,

գույքագրման և չափագրման տվյալների,

օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների,

համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների,

հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի, օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելն ապօրինի գործունեություն է, որն առաջացնում է տուգանքի նշանակում: Նշված տուգանքի չափի հաշվարկումն իրականացվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանած կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, հարկային տեսչությունը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները (տես՝ անհատ ձեռնարկատեր Տիգրան Խոսրովյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետա-

կան եկամուտների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության՝ Տեսչության 11.11.2008 թվականի թիվ 2303487 ակտի 4-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/0054/05/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը): Տվյալ դեպքում օրենսդիրը, հղում անելով նույն օրենքի 22-րդ հոդվածին, ի նկատի է ունեցել այն դեպքը (ապօրինի գործունեության իրականացում), երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը: Հետևաբար, նման դեպքում հարկային տեսչության համար ծագում է պարտավորություն՝ հաշվարկելու հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, հիմնվելով օրենքով սահմանված չափանիշների վրա (տես՝ Անահիտ Թորոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 2006 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1303288 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-500(ՏԴ) գործով Վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը):

Սույն գործով Տեսչության կողմից իրացման շրջանառությունն ակտով հաշվարկվել է «Հաստատագրված վճարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտումներով, ինչը նույնպես հանգեցրել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի սխալ կիրառմանը: Այդ խախտումն արձանագրվել է Դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, արձանագրելով հանդերձ այն փաստը, որ իրացման շրջանառության մեծությունը օրենքի խախտմամբ է որոշվել, գտել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի կիրառման պայման է հանդիսանում իրացման շրջանառության մեծությունը հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված լինելը: Վերաքննիչ դատարանը, մեկնաբանելով այդ հոդվածի պահանջը, գտել է, որ նշված պայմանը, մասնավորապես, ուղղված է իրավախախտում թույլ տված անձի իրավունքների պաշտպանությանն այն հաշվով, որ հաշվարկված իրացման շրջանառությունն ավելի չլինի փաստացի իրացման շրջանառությունից: Այսինքն՝ իրացման շրջանառության մեծությունը օրենքի խախտմամբ որոշված լինելը կարող է հանգեցնել ստուգման ակտի անվավերությանը, եթե դա հանգեցրել կամ կարող է հանգեցնել Միքայել Անտոնյանի իրավունքների խախտմանը: Ըստ գործով ձեռք բերված տվյալների, իրացման շրջանառության հաշվարկված մեծությունն է 4.710.000 ՀՀ դրամ: Ձեռնարկատիրոջ գործունեության հետ կապված ավտոմեքենաները հինգն են: Դրանցից մեկը Ձեռնարկատիրոջ լիցենզավորման ենթակա գործունեության մեջ ներգրավված է եղել 5 ամիս, երկրորդը՝ 7 ամիս, երրորդը՝ 14 ամիս, չորրորդը և հինգերորդը՝ 6-ական ամիս: Այդ ամբողջն ընդամենը կազմում է 38 ամիս՝ պայմանական մեկ ավտոմեքենայի հաշվով: Այսինքն՝ մեկ ամսվա իրացման շրջանառությունը պայմանական մեկ ավտոմեքենայի հաշվով կազմում է՝ 4.710.000:38=124.000 ՀՀ դրամ (մոտավորապես): Այդ գումարը համարժեք է միայն վարորդի ամսական աշխատավարձին, որպես հանրահայտ փաստ (ՎԴ օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մաս): Մինչդեռ, իրական, օրինական գործունեության դեպքում դրա հաշվին պետք է կատարվեին հարկերի, տուրքերի, այլ պարտադիր վճարների վճարման պարտավորությունները, պետք է կատարվեին տարաբնույթ պարտադիր ծախսեր, որոնք էական մեծություն են կազմում, եթե նույնիսկ չապահովվեր Միքայել Անտոնյանի եկամուտը: Այսինքն՝ իրացման շրջանառության հաշվարկված մեծությունը որևէ կերպ չի կարող գնահատվել որպես իրականը գերազանցող, այսինքն՝ այդ մեծությունը, թեկուզև հաշվարկված է օրենքի խախտմամբ, որևէ կերպ չի կարող առաջ բերել Միքայել Անտոնյանի իրավունքների խախտում: Սույն եզրահանգման հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ իրացման շրջանառության մեծությունն օրենքի խախտմամբ հաշվարկված լինելը բավարար հիմք չի հանդի-

սանում ստուգման ակտն անվավեր ճանաչելու, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը կիրառելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ «ա» օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաստատագրված վճարի գումարի մեծությունից իրացման շրջանառություն որոշելը չի բխում օրենքի պահանջներից, և այս մասով Դատարանի վճիռը հիմնավորված է, ինչը բավարար է ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար: Բացի այդ, իրացման շրջանառությունն ակտով հաշվարկվել է «Հաստատագրված վճարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտումներով, ինչը նույնպես հանգեցրել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի սխալ կիրառմանը: Նշված իրավական ակտերի խախտումների պայմաններում առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ակտի անվավերության հիմքը:

Այսինքն՝ տվյալ դեպքում օրենքի խախտմամբ ընդունված ակտն արդեն իսկ հանգեցնում է դրա անվավերության՝ անկախ Վերաքննիչ դատարանի կատարած հաշվարկի հիմնավորվածությունից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրահայտ փաստերն ապացուցման կարիք չունեն:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հանրահայտ համարվում են այն փաստերը, որի վերաբերյալ տեղեկությունները հայտնի են հանրության լայն շրջանակների, այդ թվում կողմերին և դատարանին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ փաստերի հանրահայտության աստիճանը կարող է տարբեր լինել: Դրանք կարող են հայտնի լինել համաշխարհային մասշտաբով, Հայաստանի Հանրապետության, մարզի կամ համայնքի մասշտաբով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստի հանրահայտ լինելը որոշում է դատարանը յուրաքանչյուր գործով, քանի որ փաստի հանրահայտության աստիճանը կախված է որոշակի հանգամանքներից՝ ժամանակ, տարածություն և այլն: Հետևաբար նույն փաստը կարող է որոշակի ժամանակ անց կորցնել իր հանրահայտությունը կամ լայն տարածված լինելով որոշակի վայրում՝ այդպիսի լայն տարածում չունենալ այլ վայրերում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելիս պետք է դատական ակտում նշի, որ տվյալ փաստը հանրահայտ է և ապացուցման կարիք չունի:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով հայցը, որոշման եզրահանգման հիմքում դրել է նաև այն վերլուծությունը, որ ակտով հաշվարկված իրացման շրջանառությունը նշանակում է, որ մեկ ամսվա իրացման շրջանառությունը պայմանական մեկ ավտոմեքենայի հաշվով կազմում է 124.000 ՀՀ դրամ, որը համարժեք է միայն վարորդի ամսական աշխատավարձին, որն էլ Վերաքննիչ դատարանը համարել է հանրահայտ փաստ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով 124.000 ՀՀ դրամը վարորդի ամսական աշխատավարձի չափին հավասար լինելու փաստը չի կարող համարվել հանրահայտ, քանի որ հանրահայտ փաստերը կապված են որոշակի դեպքերի, իրադարձությունների հետ, որոնք հայտնի են հանրության լայն շրջանակների, իսկ աշխատավարձի չափը որոշվում է կողմերի միջև կնքված պայմանագրի հիման վրա և կարող է փոփոխվել տնտեսական տարբեր գործոնների ազդեցության տակ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.06.2011 թվականի որոշման՝ անհատ ձեռնարկատեր Միքայել Անտոնյանի հայցը մերժելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչության հակընդդեմ հայցը բավարարելու մասերը և այդ մասերով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 21.02.2011 թվականի վճռին: Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչությունից հօգուտ անհատ ձեռնարկատեր Միքայել Անտոնյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 90.650 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ4/0014/05/11
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Լ. Սոսյան
Հ. Բեղնյան

Վարչական գործ թիվ **ՎԴ4/0014/05/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.11.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Գյուղապետարանի հայցի ընդդեմ Նորիկ Այվազյանի՝ հօգուտ Գյուղապետարանի 1.127.208 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գյուղապետարանը պահանջել է Նորիկ Այվազյանից բռնագանձել 1.127.208 ՀՀ դրամ՝ որպես գույքահարկի գումար:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 07.07.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.11.2011 թվականի որոշմամբ Գյուղապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.07.2011 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գյուղապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասը, 10-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ խախտելով դատավարական իրավունքի նորմերը:

Վերաքննիչ դատարանը հակասություն է տեսել Նորիկ Այվազյանի սեփականության իրավունքի գրանցման 15.04.2008 թվականի թիվ 2536252 վկայականի և անշարժ գույքի կադաստրի կողմից Գյուղապետարանին տրամադրած տեղեկությունների միջև: Այնինչ վերը նշված վկայականում և տեղեկություններում կադաստրային գրանցման համարները նույնն են: Նշված փաստի անտեսումը հանգեցրել է գործի սխալ լուծմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.11.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, կամ բեկանել որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 15.04.2008 թվականի թիվ 2536252 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Նորիկ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանում է 2.162 հա արդյունաբերական նշանակության հողամաս: Նշված վկայականի «Շինության տվյալները» բաժնից հետևում է, որ հողամասի վրա առկա է պարիսպ, պոմպակայան, լիցքավորման կետ, հեղուկ վառելիքի տարաներ, ջրավազան և տարողություններ: «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարը նշված է 04-094-549 **(գ.թ. 35-36):**

2. Գյուղապետարանի կողմից կազմված տեղեկանքի համաձայն՝ Նորիկ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող Փարաքար համայնքում գտնվող շինությունների գույքահարկի գծով պարտավորությունները 2008 թվականին կազմել է 317.589 ՀՀ դրամ, որից ապառքը՝ 205.227 ՀՀ դրամ, տույժը՝ 112.362 ՀՀ դրամ, 2009 թվականին կազմել է 476.382 ՀՀ դրամ, որից ապառքը՝ 307.840 ՀՀ դրամ, տույժը՝ 168.542 ՀՀ դրամ, 2010 թվականին կազմել է 333.237 ՀՀ դրամ, որից ապառքը՝ 307.840 ՀՀ դրամ, տույժը՝ 25.397 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը 2008-2010 թվականների համար կազմել է 1.127.208 ՀՀ դրամ **(գ.թ. 5)**:

3. Գյուղապետարանի կողմից դատաքննության ընթացքում Դատարանին ներկայացված տեղեկանքի համաձայն՝ Գյուղապետարանին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված, քաղաքացի Նորիկ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող շինության տվյալներ են՝ պետական գրանցումը՝ 15.04.2008 թվական, կադաստրային ծածկագիրը՝ 04-094-549, կադաստրային գնահատումը 2008-2010 թվականների դրությամբ՝ 102.613.360 ՀՀ դրամ **(գ.թ. 51)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարկատեսակ է գույքահարկը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների համաձայն՝ սեփականության իրավունքով անձանց պատկանող գույքի համար գույքահարկ վճարողներն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջե պարտավոր են վճարել գույքահարկ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գույքահարկով **հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը** կամ այն բնութագրիչը, որի հիման վրա նույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը, ընդ որում շինությունների հարկման բազա է համարվում նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված **կադաստրային արժեքը**:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան **դրույքաչափերով**՝ նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերում նշված հասարակական և արտադրական նշանակության շինությունների համար՝ **հարկման բազայի 0.3 տոկոսը**:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները՝ հաշվառող մարմինները հաշվարկում են ֆիզիկական անձանց շինություննեի հետագա երեք տարիների և փոխադրամիջոցների ընթացիկ տարվա գույքահարկի գումարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մա-

սի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով վարչական դատարանի կողմից գործի փաստերի ի պաշտոնե պարզման դատավարական իրավունքին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Դատարանի իրավունքն է, սակայն Դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու Դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից *(տես ՀՀ կառավարությանն աղընթեր հարկային պետական ծառայության Աշտարակի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ Ժորա Դանիելովի՝ 5.670.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և Ժորա Դանիելովի հակընդդեմ հայցն ընդդեմ Տեսչության՝ 08.05.2008 թվականի թիվ 2326225 ակտը վերացնելու պահանջի մասին գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի թիվ ՎԴ3/0207/05/08 որոշումը):*

Սույն գործով Դատարանը Գյուղապետարանի հայցը մերժելու հիմքում դրել է այն փաստը, որ Նորիկ Այվազյանին 15.04.2008 թվականին տրված թիվ 2536252 սեփականության իրավունքի վկայականի ոչ «Շենքի տվյալները» և ոչ էլ «Շինության տվյալները» բաժիններում առևտրի սրահի մասին որևէ նշում չկա: Միաժամանակ նշելով, որ Նորիկ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում առկա են ոչ պիտանի, ավերված շինություններ, որոնց վիճակն այնպիսի է, որ հնարավոր չէ պարզել դրանց նախնական նպատակային նշանակությունը:

Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, որոշման հիմքում դրել է Նորիկ Այվազյանի սեփականության իրավունքի թիվ 2536252 վկայականը և Գյուղապետարանի կողմից կազմված տեղեկանքը, որոնց մեջ առևտրի սրահի մասին ոչինչ նշված չէ, և եզրակացրել է, որ գույքահարկով հարկման ենթակա օբյեկտի բացակայության պայմաններում Նորիկ Այվազյանը չի համարվում տվյալ գույքի համար գույքահարկ վճարող:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թե Դատարանը և թե Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն հետազոտել և չեն գնահատել գոր-

ծում եղած բոլոր ապացույցները, ինչի արդյունքում հանգել են չպատճառաբանված եզրահանգումների, որոնք էլ ազդել են գործի ելքի վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանները, հիմք ընդունելով Նորիկ Այվազյանին 15.04.2008 թվականին տրված թիվ 2536252 սեփականության իրավունքի վկայականում առևտրի սրահի նշված չլինելու հանգամանքը, չեն պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Մասնավորապես, Գյուղապետարանի կողմից 25.01.2011 թվականին կազմված թիվ 191 տեղեկանքով Նորիկ Այվազյանի գույքահարկի պարտավորությունները 2008-2010 թվականների դրությամբ կազմել է 1.127.208 ՀՀ դրամ: Գյուղապետարանը վերը նշված գումարները հաշվարկել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրված՝ Նորիկ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունների կադաստրային արժեքը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննության համար պարզման ենթակա էական նշանակություն ունեցող փաստերն են՝

Նորիկ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող 2.162 հա արդյունաբերական նշանակության հողամասի վրա գտնվող շինությունների կազմը՝ հիմք ընդունելով 15.04.2008 թվականի թիվ 2536252 սեփականության իրավունքի վկայականի «Շինության տվյալները»:

Նշված շինությունների կադաստրային արժեքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ փաստերը պարզելուց հետո միայն Դատարանը և Վերաքննիչ դատարանը կարող էին որոշել հայցը բավարարելու կամ մերժելու հար

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.11.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1314/05/10

Վարչական գործ թիվ **ՎԴ/1314/05/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու, Նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին հրամանը վերացնելու, 10.02.2010 թվականի թիվ Ե/2010-051 հարցումով փնտրվող տեղեկությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, վարչական գործով Վճռաբեկ դատարանի 18.05.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ Կազմակերպության ներկայացուցիչներ Արտակ Զեյնալյանի և Արայիկ Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը, վերացնել ՀՀ պաշտպանության նախարարի (այսուհետ՝ Նախարար) գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին հրամանը և պարտավորեցնել տրամադրել 10.02.2010 թվականի թիվ Ե/2010-051 հարցումով փնտրվող տեղեկությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 23.11.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան, դատավորներ՝ Գ. Ղարիբյան, Լ. Սոսյան) (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.03.2011 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.11.2010 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի 18.05.2011 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 16.03.2011 թվականի որոշման դեմ Կազմակերպության վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա է նոր հանգամանք:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վճռաբեկ դատարանը, 18.05.2011 թվականի որոշմամբ վերադարձնելով Կազմակերպության վճռաբեկ բողոքը, կիրառել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետը և 12-րդ հոդվածը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականի թիվ ՍԴՈ-1010 որոշման 2-րդ կետով ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր է ճանաչվել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթն այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականի թիվ ՍԴՈ-1010 որոշումը սույն գործով նոր հանգամանք է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են «բեկանել» Վճռաբեկ դատարանի 18.05.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և քննության առնել Վերաքննիչ դատարանի 16.03.2011 թվականի որոշման դեմ Կազմակերպության բերած վճռաբեկ բողոքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականի «Կազմակերպության դիմումի հիման վրա՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1010 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով որոշվել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետը և 12-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, իսկ նույն որոշման 2-րդ կետով ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր է ճանաչվել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթն այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության: Նույն որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով սահմանվել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, նաև նկատի ունենալով, որ ՀՀ վարչական

դատարանը թիվ ՎԴ/1314/05/10 դատական գործով 23.11.2010 թվականին կայացրած վճռում վերազանցել է իր լիազորությունները՝ հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջը, արձանագրել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը չի հակասում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին և 83.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերին:

2) Վճռաբեկ դատարանը, ինչպես նաև ստորադաս դատարանները կիրառել են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, իսկ նույն օրենքի 12-րդ հոդվածը, և մասնավորապես նույն հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը, չեն կիրառել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական կամ վերաքննիչ դատարանի՝ նոր երևան եկած կամ **նոր հանգամանքներով** դատական ակտերը վերանայվում են **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:**

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ **նոր հանգամանքներով** վարչական դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և **վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով **դատարանի կիրառած օրենքի դրույթը** ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածում նշված գործերով՝ դիմողի **նկատմամբ կիրառված օրենքի դրույթը** Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ **այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ**, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

Վերոնշյալ հոդվածների բովանդակության վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար անհրաժեշտ պայման է դատարանի կողմից կիրառված հոդվածի կամ հոդվածի դրույթի հակասահմանադրական ճանաչումը, կամ այլ մեկնաբանությամբ կիրառումը: Հետևաբար, եթե դատարանը չի կիրառել այն դրույթը, որը ՀՀ Սահմանադրական դատարանը ճանաչել է հակասահմանադրական կամ գտել է, որ այդ դրույթն անձի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դատական ակտը ենթակա չէ վերանայման նոր հանգամանքի հիմքով:

Սույն գործով Դատարանը, կիրառելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածները, եզրահանգել է, որ հայցվորի կողմից պահանջված տեղեկատվությունը՝ ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում մահացած զինծառայողների թվի վերաբերյալ, դասվում է զորքերում տեղի ունեցած ար-

տակարգ դեպքերի շարքին և հետևաբար պետք է որակվի որպես գաղտնի, հրապարկման ոչ ենթակա տեղեկատվություն:

Վերաքննիչ դատարանը, կիրառելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները, եզրահանգել է, որ հայցվորի պահանջած տեղեկատվությունը չի կարող գնահատվել որպես սովորական, առօրեական դեպք, և հիմնավոր է համարել պատասխանողի դիրքորոշումն այն մասին, որ այդ զինծառայողների մահացության դեպքերը դասվում են զորքերում արտակարգ դեպքերի շարքին և պետք է գնահատվեն որպես գաղտնի, հրապարկման ոչ ենթակա տեղեկատվություն:

Վճռաբեկ դատարանը, 18.05.2011 թվականի որոշմամբ վերադարձնելով Վերաքննիչ դատարանի 16.03.2011 թվականի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը, հիմնավոր է համարել Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պատճառաբանությունները:

ՀՀ Սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականի թիվ ՍԴՈ-1010 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր է ճանաչվել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթն այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության: Նույն որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով սահմանվել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

Համադրելով վերոնշյալ վերլուծությունը և սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վերջնական դատական ակտը կայացվել է Վճռաբեկ դատարանի կողմից, որպիսին հանդիսանում է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը: Ներկայացված բողոքով Հայցվորը խնդրել է նոր հանգամանքի հիմքով վերանայել Վճռաբեկ դատարանի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ որոշմամբ չի կիրառվել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածն ընդհանրապես և այդ հոդվածի 7-րդ մասի «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը, մասնավորապես:

Ավելին, Վճռաբեկ դատարանի 18.05.2011 թվականի որոշմամբ ի թիվս այլ դրույթների կիրառվել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որը ՀՀ Սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականի թիվ ՍԴՈ-1010 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես Վերաքննիչ դատարանը, այնպես էլ Դատարանը չեն կիրառել հակասահմանադրական ճանաչված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը: Այսպես՝ Դատարանը վճռում կիրառել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածները, Վերաքննիչ դատարանը որոշման մեջ կիրառել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները, իսկ Վճռաբեկ դատարանը, վերադարձնելով Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը, կիրառել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածները: Հետևաբար, սույն գործով կայացված դատական ակտերից որևէ մեկով չի կիրառվել հակասահմանադրական ճանաչված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը: Ավելին,

նշված հանգամանքը հիմնավորվում է ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու կապակցությամբ գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդության վերաբերյալ Դատարանի այն դիրքորոշմամբ, որ «Դատաքննության ավարտին հայցվոր կողմը միջնորդել էր սույն գործով՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերության **կիրառման պարագայում** կասեցնել գործի վարույթը և դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ նշված պարբերության՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին և 83.5 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ կետերին համապատասխանության հարցով: Դատարանը փաստում է, որ վերը նշված վերլուծությունները՝ անկախ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերության կիրառման, լիովին բավարար են հայցվորի կողմից ներկայացված պահանջի սահմաններում վերջնական և պատճառաբանված դատական ակտ կայացնելու համար»:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականի թիվ ՍԴՈ-1010 որոշումը սույն գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված նոր հանգամանք չէ և Վճռաբեկ դատարանի 18.05.2011 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերանայելու հիմք չէ:

Ինչ վերաբերում է Դատարան ներկայացված միջնորդության կապակցությամբ Դատարանի վճռում տեղ գտած դիրքորոշմանն այն մասին, որ «դատարանի կարծիքով, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը չի հակասում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին և 83.5 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ կետերին», ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե *այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում միջնորդություն է ստացվում գործի քննությունը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու՝ կիրառման ենթակա օրենքի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը պարզելու համար, արդյոք Դատարանն իրավասու է դիրքորոշում հայտնել օրենքի ՀՀ Սահմանադրությանը չհակասելու վերաբերյալ:*

ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը:

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե **դատարանը գտնում է**, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ նորմատիվ իրավական ակտը **հակասում է** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ապա դատարանն իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը և դիմելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ նույն հոդվածում նշված գործերով սահմանադրական դատարան դիմում են դատարանները, ինչպես նաև գլխավոր դատախազը, **եթե գտնում են**, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթը կամ դրույթները, **որոնք ենթակա են կիրառման** իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, **հակասում են** Սահմանադրությանը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը և գլխավոր դատախազը պետք է **հիմնավորեն իրենց դիրքորոշումը** նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը **հակասելու հանգամանքի առնչությամբ**, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը կարող է իրականացվել **միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ**:

Վերոնշյալ դրույթների մեկնաբանությունից հետևում է, որ վեճը լուծող դատարանները (ընդհանուր իրավասության և (կամ) մասնագիտացված) որոշակի հանգամանքների ի հայտ գալու ուժով լիազորված են կասեցնելու գործի վարույթը: Նման հանգամանքներից է կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ դատարանի կարծիքով ՀՀ Սահմանադրությանը հակասելը: Կոնկրետ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը ենթակա է գնահատման դատարանի (գործը քննող դատավոր կամ դատավորների կազմի) կողմից: Լիազորված լինելով գնահատել կիրառման ենթակա դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը՝ դատարանն այն իրականացնում է սուբյեկտիվ համոզմամբ, հենվելով օբյեկտիվ չափորոշիչների վրա, մասնավորապես՝ կոնկրետ դրույթի մեկնաբանումը, այդ դրույթի՝ իրավունքի սկզբունքներին հակասելը, սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքներին հակասելը և այլն: Հետևում է, որ դատարանը նախ և առաջ պետք է դիրքորոշում հայտնի կիրառման ենթակա դրույթի և ՀՀ Սահմանադրության կոնկրետ հոդվածներին դրա *հնարավոր (ենթադրյալ)* հակասության մասին և որպես հետևանք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով կասեցնի գործի վարույթը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի հիմքով դիմի ՀՀ Սահմանադրական դատարան: Հետևաբար, կիրառման ենթակա օրենքի հոդվածի կամ այլ իրավական ակտի դրույթի Սահմանադրությանը չհակասելու վերաբերյալ դատարանի դատողություններն ուղղված են բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված լիազորության իրականացմանը: Դրանք չեն կարող նույնացվել սահմանադրական արդարադատության հետ, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է որոշել օրենքների և ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսված այլ իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի պահանջների վերը շարադրվածից տարբերվող մեկնաբանության պարագայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ ցանկացած միջնորդություն ներկայացվելու դեպքում՝ անկախ միջնորդության բովանդակությունից և դրա վերաբերյալ դատարանի դիրքորոշումից, դատարանը պարտավորված կլինի կասեցնել գործի վարույթը և դիմել ՀՀ Սահմանադրական դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ, 134-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ, 204.33-րդ և 204.38-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2540/05/10
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2540/05/10**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Վիբրոգրաֆուս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սյասնիկյանի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 12.05.2010 թվականի թիվ 1010285 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, Տեսչության հայցի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին և հակընդդեմ հայցի՝ 12.05.2010 թվականի թիվ 1010285 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 12.05.2010 թվականի թիվ 1010285 ստուգման ակտը:

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է արձակել վճարման կարգադրություն նշված ստուգման ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորության գումարից չվճարված 3.052.015 ՀՀ դրամը բռնագանձելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանը 17.06.2010 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր

ճանաչել նշված ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի 10.08.2010 թվականի որոշմամբ վճռարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

ՀՀ վարչական դատարանի 26.11.2010 թվականի որոշմամբ նշված վարչական գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 14.07.2011 թվականի վճռով Ընկերության հայցը բավարարվել է, Տեսչության հայցը՝ մերժվել, իսկ Ընկերության հակընդդեմ հայցի մասով վարչական գործի վարույթը՝ կարճվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.12.2011 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 14.07.2011 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ Ընկերության հայցը մերժվել է, իսկ Տեսչության հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածը, 117.12-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սույն գործով վիճարկվող ստուգման ակտի հիմքում ընկած է երկու փաստ՝ երաժշտական տեխնիկայի վարձակալության հանձնելու գործունեությամբ զբաղվելը և գովազդային գործունեությամբ զբաղվելը, որոնք էլ Ընկերության կողմից վիճարկվել են ինչպես վարչական կարգով ներկայացված բողոքում, այնպես էլ հայցադիմումում: Ավելին, Տեսչությունն իր վերաքննիչ բողոքը բերել է այդ հիմքերով, սակայն Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով նշված հիմքերի իրավաչափությանը, արձանագրել է, որ Ընկերության գործունեությունը դուրս է պարզեցված հարկի ռեժիմից մեկ այլ հիմքով՝ որպես այդպիսին նշելով Բամբիո երաժշտական համույթի համերգների կազմակերպումն այլ վայրում իրականացնելը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, քանի որ բողոքը քննության է առել, իսկ դատական ակտը վերանայել է մի հիմքով, որը երբևէ կողմերը չեն վիճարկել և այն քննության առարկա չեն դարձրել:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Տեսչությունն է կրում ստուգման ակտի հիմքում ընկած փաստերի ապացուցման պարտականությունը, որը վերջինս չի կատարել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2011 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ընկերության հայցը բավարարել, Տեսչության հայցը՝մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագա-

հի 13.04.2010 թվականի թիվ 1010285 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում **(հատոր 2-րդ, գ.թ. 3):**

2) Ստուգման արդյունքում 12.05.2010 թվականին կազմվել է թիվ 1010285 ստուգման ակտը, որում արձանագրվել է, որ 2008 թվականին Ընկերությունը գործել է պարզեցված հարկի ռեժիմում: Ընկերությունն իրականացրել է համերգների կազմակերպման գործունեություն, ինչպես նաև գովազդային ծառայությունների մատուցման և երաժշտական տեխնիկայի վարձակալությամբ տրամադրման գործունեություն, որոնք, համաձայն «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի, չեն համապատասխանում 2008 թվականի պարզեցված հարկով հարկման ենթակա գործունեության այլ տեսակներին: Արդյունքում, Ընկերությանը շահութահարկի գծով առաջադրվել է 3.550.000 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն **(հատոր 2-րդ, գ.թ. 4-9)**:

3) Սույն գործով Տեսչության ներկայացրած վերաքննիչ բողոքի համաձայն՝ «ստուգման ակտից հստակ երևում է, որ ընկերությունը կատարել է մեկ խախտում, այն է՝ դիմել է հարկային տեսչություն, հաշվառվել է որպես համերգների կազմակերպման գործունեություն իրականացնող և ստացել իրավունք աշխատելու պարզեցված հարկի դաշտում, սակայն ստուգման ժամանակ հայտնաբերվել է, որ **բացի համերգների կազմակերպումից, ընկերությունն իր երաժշտական գործիքները վարձակալությամբ տվել է կազմակերպություններին և դրա դիմաց ստացել վարձավճար, ինչպես նաև համերգների ժամանակ տեղադրել է գովազդներ, որոնց դիմաց հատուցում է ստացել» (հատոր 3-րդ, գ.թ. 5-8)**:

4) 12.05.2010 թվականի թիվ 1010285 ստուգման ակտում, հայցադիմումի պատասխանում, Դատարանում գործի քննության ընթացքում, ինչպես նաև վերաքննիչ բողոքում որպես պարզեցված հարկի ռեժիմից դուրս գալու հիմք Ընկերության կողմից միայն մեկ վայրում գործունեություն չիրականացնելու հանգամանքը Տեսչությունը չի նշել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը, որպես վերաքննություն իրականացնող դատական ատյան, պարտավոր է **համապատասխան դատական ակտը** վերանայել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ըստ էության քննություն իրականացնելիս չպետք է դուրս գա **վարչական գործի հարուցման հիմք հանդիսացող հայցադիմումի շրջանակներից:**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելը պատճառաբանել է նրանով, որ «Բամբիո» երաժշտական համույթի և Ընկերության միջև 05.05.2008 թվականին կնքված համաձայնագրի համաձայն՝ կազմակերպիչ Ընկերությունը ՀՀ մշա-

կույթի նախարարության կողմից 04.05.2008 թվականի թիվ 105/1 պայմանագրի հիման վրա տրամադրվող գումարի (480.000 ՀՀ դրամ) շրջանակներում պարտավորվել է չսահմանափակվել միայն տեխնիկական սարքերի տրամադրմամբ և ապահովել 2008 թվականի մայիսի 5-ից հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածում Շիրակի, Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերում և ԼՂՀ-ում կայանալիք համերգների կազմակերպումը, ներառյալ՝ երաժշտական սարքավորումների տեղադրումը: Այսինքն՝ Ընկերությունն իր գործունեությունը միայն մեկ վայրում չի իրականացրել, հետևաբար Ընկերությունը 2008 թվականի ընթացքում վիճարկվող ստուգման ակտով արձանագրված գործունեությունն իրականացնելիս չէր կարող համարվել պարզեցված հարկ վճարող:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ ոչ 12.05.2010 թվականի թիվ 1010285 ստուգման ակտի հիմքում, ոչ հայցադիմումի պատասխանում, ոչ Դատարանում գործի քննության ընթացքում, և ոչ էլ վերաքննիչ բողոքում որպես պարզեցված հարկի ռեժիմից դուրս գալու հիմք Ընկերության կողմից միայն մեկ վայրում գործունեություն չիրականացնելու հանգամանքը Տեսչությունը չի փաստարկել: Ավելին, վերաքննիչ բողոքի հիմքում, որպես «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի խախտում, դրվել է միայն Ընկերության կողմից երաժշտական գործիքների վարձակալության հանձնելու գործունեությամբ զբաղվելու և գովազդային ծառայություններ մատուցելու հանգամանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

2) Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին չի անդրադառնում, քանի որ սույն գործով Վերաքննիչ դատարանը չի իրականացրել վերաքննիչ բողոքի ըստ էության քննություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ենթակա է Վերաքննիչ դատարանում նոր քննության, քանի որ բավարարելով վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը չի իրականացրել վերաքննիչ բողոքի ըստ էության քննություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.12.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0636/05/11
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0636/05/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Սուրեն, Մելինե և Գագիկ Մարգարյանների հայցի ընդդեմ Ծառայության՝ Ծառայության Սյունիքի մարզային բաժնի կողմից թիվ 09-271 կատարողական վարույթով իրականացված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սուրեն, Մելինե և Գագիկ Մարգարյանները պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել Կապան քաղաքի Շահումյան 13-րդ շենքի թիվ 33 բնակարանի պատին կից ապօրինի կառուցված 2x3 մետր չափով քարաշեն ձեղնահարկը (պատշգամբը) Գագիկ Մարգարյանին քանդել պարտավորեցնելուն ուղղված Ծառայության Սյունիքի մարզային բաժնի կողմից թիվ 09-271 կատարողական վարույթով իրականացված գործողությունները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան) 05.12.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.05.2012 թվականի որոշմամբ Սուրեն, Մելինե և Գագիկ Մարգարյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, չի կիրառել նույն օրենքի 38-րդ հոդվածը և 40-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ կատարողական վարույթը կարող է վերսկսվել կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո, մասնավորապես՝ սույն գործով՝ պարտապանին հայտնաբերելուց հետո: Ուստի Վերաքննիչ դատարանը գտել է, որ կատարողական վարույթը վերսկսելը ոչ իրավաչափ է, քանի որ Գագիկ Մարգարյանի գտնվելու վայրը չի պարզվել: Մինչդեռ պարտապանի հետախուզման հիմքով կատարողական վարույթը կասեցնելը հարկադիր կատարողի համար հայեցողական լիազորություն է, այսինքն՝ այն դեպքում, երբ պարտապանի բացակայությամբ հնարավոր է իրականացնել կատարողական գործողություններ, ապա պարտապանի հետախուզում չի իրականացվում, ուստիև կատարողական վարույթն այդ հիմքով չի կարող կասեցվել կամ կասեցված մնալ: Սույն դեպքում պահանջատերը պատրաստակամություն է հայտնել կատարողական գործողություններն իրականացնել իր հաշվին, քանդման աշխատանքները կատարել իր բնակարանի կողմից՝ հաշվի առնելով, որ պարտապանի բնակարանը փակ է, պարտավորվելով նաև ի պահ ընդունել բացակայող պարտապանի գույքը:

2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճռի բեկանման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ քանդման ենթակա կցակառույցը քանդումից 2 ամիս առաջ օրինականացվել էր, և դրա նկատմամբ գրանցվել էր պարտապանից բացի նաև այլ անձանց իրավունքները: Ուստի հարկադիր կատարողը պարտավոր էր այլ անձանց պատկանող անշարժ գույք մուտք գործելու համար դիմել դատարան՝ համապատասխան որոշում ստանալու նպատակով, ինչը, սակայն, չի արել: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կատարողական վարույթում առկա չէին պատշաճ ապացույցներ քանդման ենթակա կցակառույցի օրինականացման մասին, իսկ հարկադիր կատարողն էլ չէր կրում այդ հանգամանքի ապացուցման պարտականությունը, ուստիև նրա գործողությունները որպես ոչ իրավաչափ գնահատելն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.05.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 05.12.2011 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 10.05.2006 թվականի վճռով Նաիրա Խաչատրյանի հայցը բավարարվել է, Գագիկ Մարգարյանը պարտավորեցվել է քանդել Կապանի Շահումյան 13-րդ շենքի թիվ 33 բնակարանի պատին կից ապօրինի կառուցված 2x3 մետր չափերով քարաշեն ձեղնահարկը՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում **(հատոր 1-ին, գ.թ. 14)**:

2. 31.05.2006 թվականի 2-1-382 կատարողական թերթի հիման վրա Ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա. Ալեքսանյանի որոշմամբ հարուցվել է թիվ 09-271 կատարողական վարույթը **(հատոր 1-ին, գ.թ. 32)**:

3. Ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա. Ալեքսանյանի 16.11.2006 թվականի որոշմամբ կասեցվել է թիվ 09-271 կատարողական վարույթն այն պատճառաբանությամբ, որ թիվ 2-1-382 կատարողական թերթով պարտապան Գագիկ Մարգարյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվել **(հատոր 1-ին, գ.թ. 38, 39)**:

4. Ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա. Ալեքսանյանի 16.05.2007 թվականի որոշմամբ թիվ 09-271 կատարողական վարույթը վերսկսվել է այն հիմքով, որ Գագիկ Մարգարյանը վերադարձել է Ռուսաստանի Դաշնությունից **(հատոր 1-ին, գ.թ. 45)**:

5. Ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա. Ալեքսանյանի 18.09.2007 թվականի որոշմամբ Գագիկ Մարգարյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվել, և հաջորդ օրվա մեկ այլ որոշմամբ կասեցվել է թիվ 09-271 կատարողական վարույթը մինչև Գագիկ Մարգարյանի հայտնաբերումը **(հատոր 1-ին, գ.թ. 53, 55)**:

6. Ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա. Ալեքսանյանի կողմից 22.10.2007 թվականին կայացվել է որոշում 19.09.2007թվականին կասեցված թիվ 09-271 կատարողական վարույթը վերսկսելու մասին, քանի որ պահանջատերը դիմումով հայտնել է, որ համաձայն է, որպեսզի կատարողական գործողությունները կատարվեն իր բնակարանի պատշգամբը քանդելով վիճելի հասցե մուտք գործելու միջոցով և իր հաշվին: Այնուհետև 24.10.2007 թվականին ժամը 18:00-ին կազմված արձանագրության համաձայն՝ թիվ 09-271/06 թվականի կատարողական վարույթով քանդվել է Կապանի Շահումյան 13-րդ շենքի թիվ 33 բնակարանի պատին կառուցված 2x3մ չափով ապօրինի շինությունը: Ծառայության Սյունիքի մարզային բաժնի 26.10.2007թ որոշմամբ 01.05.2006 թվականին հարուցված թիվ 09-271 կատարողական վարույթը կարճվել է **(հատոր 1-ին, գ.թ. 127, 132, 134)**:

7. Անշարժ գույքի սեփականության իրավունքի 15.08.2007 թվականի թիվ 2270079 վկայականի համաձայն՝ Կապանի քաղաքապետի 10.08.2007 թվականի թիվ 438 որոշման հիման վրա Կապանի Շահումյան 13-րդ շենքի թիվ 33 բնակարանին կից ինքնակամ կառուցված 3,7x2,4 քմ պատշգամբի նկատմամբ ճանաչվել է նույն հասցեի սեփականատերեր Գագիկ, Սուրիկ, Մելինե Մարգարյանների սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 67-70)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողն **իրավունք ունի** կասեցնել կատարողական վարույթը, եթե պարտապանը կամ նրա գույքը հետախուզվում է:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:

Նույն օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պարտապան ֆիզիկական անձի հետախուզումն իրականացվում է միայն այն դեպքերում, երբ նրա բացակայությունն անհնար է դարձնում կատարողական գործողությունների իրականացումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա. Ալեքսանյանի 18.09.2007 թվականի որոշմամբ Գագիկ Մարգարյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվել և նույն օրվա մեկ այլ որոշմամբ կասեցվել է թիվ 09-271 կատարողական վարույթը մինչև Գագիկ Մարգարյանի հայտնաբերումը: Այնուհետև Ծառայության Սյունիքի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա. Ալեքսանյանի կողմից 22.10.2007 թվականին կայացվել է որոշում 19.09.2007 թվականին կասեցված թիվ 09-271 կատարողական վարույթը վերսկսելու մասին, քանի որ պահանջատերը դիմումով հայտնել է, որ համաձայն է, որպեսզի կատարողական գործողությունները կատարվեն իր հաշվին, ինչի արդյունքում թիվ 09-271/06թ. կատարողական վարույթով քանդվել է Կապանի Շահումյան 13 շենքի 33 բնակարանի պատին կառուցված 2x3մ չափով ապօրինի շինությունը:

Դատարանը հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ կատարողական վարույթը կարճվել է, քանի որ առանց Գագիկ Մարգարյանի անհնարին էր մուտք գործել նրա բնակարան, հետևաբար անհնարին էր դարձել նաև կատարել կատարողական թերթի պահանջները, ինչի համար էլ որոշում է կայացվել նրան հետախուզում հայտարարելու մասին: Սակայն հետագայում պահանջատերն իր համաձայնությունն է տվել, որպեսզի կատարողական գործողությունները կատարվեն իր բնակարանի պատշգամբը քանդելու միջոցով, իր հաշվին, ինչի շնորհիվ էլ վերացել էր կատարողական գործողությունների իրականացման անհնարինությունը:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ կատարողական վարույթը կարող է վերսկսվել կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո, մասնավորապես՝ սույն գործով՝ պարտապանին հայտնաբերելուց հետո: Ուստի Վերաքննիչ դատարանը գտել է, որ կատարողական վարույթը վերսկսելը ոչ իրավաչափ է, քանի որ Գագիկ Մարգարյանի գտնվելու վայրը չի պարզվել:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը պետք է մեկնաբանել նույն օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածների, ինչպես նաև 40-րդ հոդվածի 4-րդ մասի համակցությամբ: Օրենսդիրը համապատասխանաբար «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով սպառիչ սահմանել է կատարողական գործողությունների իրականացանը խոչընդոտող և՛ պարտադիր, և՛ լրացուցիչ այն բոլոր հանգամանքները, որոնց առկայության պարագայում հարկադիր կատարողը մի դեպքում պարտավոր է, իսկ մյուս դեպքում կարող է կասեցնել կատարողական վարույթը: Այսպես՝ եթե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով թվարկված պայմաններից մեկի առկայության դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, ապա նույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված դեպքերում վերջինս օժտված է **հայեցողական լիազորությամբ** և կասեցնում է կատարողական վարույթը միայն այն դեպքում, երբ գնահատելով ստեղծված իրավիճակը՝ գալիս է այն եզրահանգման, որ տվյալ պայմաններում անհնարին է դարձնել կատարողական գործողությունների իրականացումը: Նույն կանոնը կիրառվում է նաև կատարողական վարույթը վերսկսելու դեպքում: Այսպես՝ եթե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված հիմքով կատարողական

վարույթը կասեցված լինելու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է այն վերսկսել միայն նույն հոդվածով թվարկված պայմանները վերանալուց հետո, ապա նույն օրենքի 38-րդ հոդվածի հիմքով կատարողական վարույթը կասեցնելու դեպքում կարող է այն վերսկսել նաև այն դեպքում, երբ գտնում է, որ թեև նշված հոդվածով սահմանված պայմանները չեն վերացել, բայց և այնպես այս կամ այն հանգամանքի առաջացման կամ վերացման արդյունքում հնարավոր է դարձել շարունակել կատարողական գործողությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարտապանին հետախուզում հայտարարելու և կատարողական վարույթը կասեցնելու հիմքը, ըստ էության, կատարողական գործողությունները շարունակելու անհնարինությունն էր, որն էլ դրսևորվում էր հետևյալում. նախ՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.05.2006 թվականի վճռից բխում է, որ ապօրինի կառույցը քանդելու և դրա համար անհրաժեշտ ծախսերը հոգալու պարտականությունը կրում է Գագիկ Մարգարյանը, և ապա կառույցը քանդելու համար, այնուամենայնիվ, անհրաժեշտություն էր առաջանալու մուտք գործել վերջինիս բնակարան: Սակայն պահանջատիրոջ դիմումի հիման վրա, որով վերջինս իր համաձայնությունն էր տվել ապօրինի կառույցը քանդել իր բնակարանի պատշգամբը քանդելու միջոցով և իր հաշվին, ըստ էության վերանում են այն խոչընդոտող հանգամանքները, որոնք հիմք էին հանդիսացել պարտապանին հետախուզում հայտարարելու և ապա կատարողական վարույթը կարճելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ պահանջատիրոջ կողմից կատարողական գործողություններն իր հաշվին իրականացնելու վերաբերյալ դիմումով, ըստ էության, վերացել է այդ գործողություններն իրականացնելուն խոչընդոտող հանգամանքները, ինչպես նաև կատարողական վարույթը կասեցված պահելու անհրաժեշտությունը:

Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Սույն գործում առկա անշարժ գույքի սեփականության իրավունքի 15.08.2007 թվականի թիվ 2270079 վկայականի համաձայն՝ Կապանի քաղաքապետի 10.08.2007 թվականի թիվ 438 որոշման հիման վրա Կապանի Շահումյան 13-րդ շենքի թիվ 33 բնակարանին կից ինքնակամ կառուցված 3,7x2,4 քմ պատշգամբի նկատմամբ ճանաչվել է նույն հասցեի սեփականատերեր Գագիկ, Սուրիկ, Մելինե Մարգարյանների սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճռի բեկանման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ քանդման ենթակա կցակառույցը քանդումից 2 ամիս առաջ օրինականացվել էր, և դրա նկատմամբ գրանցվել էր պարտապանից բացի նաև այլ անձանց իրավունքները: Ուստի հարկադիր կատարողը պարտավոր էր այլ անձանց պատկանող անշարժ գույք մուտք գործելու համար դիմել դատարան՝ համապատասխան որոշում ստանալու նպատակով, ինչը, սակայն, չի արել:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբա-

նությունն անհիմն է, քանի որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհաստատեր կատարողական վարույթ հարուցելու պահից մինչև վարույթը կարճելու պահը հարկադիր կատարողի կողմից քանդման ենթակա կցակառույցն օրինականացնելու մասին իրազեկվելու փաստը: Այսինքն՝ հարկադիր կատարողը, ձեռնամուխ լինելով պահանջատիրոջ կողմից ներկայացրած 31.05.2006 թվականի 2-1-382 կատարողական թերթի պահանջի կատարմանը, որևէ պարտավորություն չէր կրում պարզելու, թե արդյոք այդ ընթացքում նշված կառույցը որևէ մեկի կողմից օրինականացվել է, թե ոչ: Ավելին, նման դեպքում կառույցն օրինականացնելու վերաբերյալ համապատասխան ապացույց ներկայացնելու պարտականություն, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի, կրում է շահագրգիռ կողմը, քանի որ նա է միայն տիրապետում այդ ապացույցին, ինչպես նաև այդ փաստի ապացուցումը հենց իր համար է կրում բարենպաստ բնույթ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.05.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 05.12.2011 թվականի վճռին:

2. Սուրեն, Մելինե և Գագիկ Մարգարյաններից հօգուտ ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/3448/05/11
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Հ. Բեղնյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ **ՎԴ/3448/05/11**
2012թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Վանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 31.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Արմեն Վանյանի հայցի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի 27.06.2011 թվականի որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) և նույն մարմնին 15.11.2010 թվականին Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված և օրինական ուժ ստացած թիվ ԵԱՔԴ/1370/02/10 գործով վճիռը (վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը) կատարելուն (ի կատար ածելուն) պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Վանյանը պահանջել է վերացնել (անվավեր ճանաչել) Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի 27.06.2011 թվականի որոշումը և նույն մարմնին պարտավորեցնել կատարելու Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.11.2010 թվականին կայացված և օրինական ուժ ստացած թիվ ԵԱՔԴ/1370/02/10 գործով վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 30.01.2012 թվականին վճռել է՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի 27.06.2011 թվականի որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) պահանջի մասով հայցը մերժել, իսկ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված և օրինական ուժ ստացած թիվ ԵԱՔԴ/1370/02/10 գործով վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով գործի վարույթը կարճել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.05.2012 թվականի որոշմամբ Արմեն Վանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.01.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Վանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պայմանավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պատասխանողը հայտնաբերել է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, որը պետք է հրապարակային սակարկությունների միջոցով իրացվեր և դրա հիմքով ի կատար ածվեր օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, օգտվելով ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքով տրված ծանուցման հնարավորություններից, կատարեր հրապարակային սակարկությունների անցկացման մասին պարտապանի ծանուցում: Հետևապես պատասխանողը չպետք է ավարտեր կատարողական վարույթը՝ պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարին լինելու հիմքով, այլ պետք է հայտնաբերված անշարժ գույքը սահմանված կարգով իրացներ, որը չի արվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.05.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, կամ բեկանել որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 15.11.2010 թվականի թիվ ԵԱՔԴ/1370/02/10 վճռով բավարարել է Արմեն Վանյանի հայցը և վճռել է Նիկոլայ Միրզոյանից հօգուտ Արմեն Վանյանի բռնագանձել 4.000.000 ՀՀ դրամ, վերջինիս կողմից վճարված պետական տուրքի գումարը՝ 80.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար **(գ.թ. 9-10):**

2. Նշված վճիռը ստացել է օրինական ուժ, և դրա հիման վրա Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 27.12.2010 թվականին տվել է կատարողական թերթ **(գ.թ. 11):**

3. Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի

27.06.2011 թվականի որոշմամբ ավարտվել է 08.02.2011 թվականին հարուցված թիվ 01/04-854/11 կատարողական վարույթը՝ պատճառաբանելով, որ կատարողական գործողությունների ընթացքում անհնար է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը, սակայն արգելանք է կիրառվել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող Ռոստոմյան փողոցի թիվ 26 տան նկատմամբ, իսկ որպես նշված որոշումը կայացնելու իրավական հիմք նշվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 41-րդ հոդվածի 2-րդ մասը **(գ.թ. 12-13):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

Բռնագանձման վերաբերյալ դատական ակտերի կատարողական վարույթի ընթացքում պարտապանի գույքի գտնվելու վայրի հայտնի լինելու դեպքում, արդյոք պարտապանի գտնվելու վայրի անհայտ լինելը կարող է խոչընդոտ հանդիսանալ այդ գույքի վրա բռնագանձում տարածելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել և հարկադիր կատարողի՝ նույն օրենքի 40-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով իրականացված հետախուզումը և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը և կատարողական ակտի կատարումը կապված է պարտապանի անձի հետ, իսկ եթե առկա է գույք, ապա հարկադիր կատարողը կարող է շարունակել կատարողական թերթի պահանջների կատարումը, հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի մեկնաբանությունը պետք է տրվի ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է սեփականության սուբյեկտիվ իրավունքի բովանդակությանը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Այս նորմն ամրագրում է սեփականությունից անարգել օգտվելու հնարավորությունը՝ սեփականատիրոջ հայեցողությամբ:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը գալիս է հաստատելու, որ սեփականության իրավունքն «անսահմանափակ» իրավունք չէ, որ սեփականատերը չի կարող սեփականության իրավունքն իրականացնել կամայականորեն: Այդ իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Սեփականության անարգել օգտագործմանն անդրադառնում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն ընդհանուր շահից ելնելով՝ վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում (*Տես Սպորրունգը և Լոնրոդն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 22.09.1982 թվականի վճիռը, կետ 61*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել Եվրոպական դատարանի վճռով սահմանված երրորդ կանոնը, որի պայմաններում պետության գլխավոր նպատակը գույքի օգտագործումը վերահսկելն է՝ լինի դա հանրային շահից ելնելով, թե հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ սեփականության իրավունքը բացարձակ չէ, ուստի Սահմանադրությամբ և արձանագրությամբ նախատեսվում է այն սահմանափակելու իրավական հնարավորություն: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նախատեսում է մի շարք չափանիշներ, որոնց պետք է բավարարի այդ սահմանափակումը, և որոնց առկայության դեպքում այն կարող է համարվել թույլատրելի սահմանափակում:

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1.նախատեսված է օրենքով

2.բխում է հանրային շահից

3.անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*Տես Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67*):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*Տես Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Մյուս կողմից, հետապնդվող նպատակի և միջամտության համարժեքության հարցը լուծելիս Եվրոպական դատարանն անպայմանորեն պետք է հաշվի առնի այլընտրանքային լուծումների առկայությունը: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*Տես Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 89, Սկոլլոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 28.09.1985 թվականի վճիռը, կետ 32*):

Ելնելով ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոնշյալ իրավական

կարգավորումներից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը թույլ է տալիս ավարտել կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վերոնշյալ նորմի կիրառման և մեկնաբանության հարցը պետք է պարզել՝ հաշվի առնելով պարտատիրոջ և պարտապանի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների հավասարակշռված պաշտպանությունը, իսկ պարտապանի կամ պարտատիրոջ սեփականության իրավունքի միջամտության հարցը պետք է գնահատել համաչափության սկզբունքի լույսի ներքո:

Նախատեսված է օրենքով.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Վերոնշյալը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված է հարկադիր կատարման վարույթի շրջանակներում կատարողական վարույթի ավարտման իրավական հնարավորություն, այսինքն՝ պարտատիրոջ պահանջը փաստացի չբավարարվելու պայմաններում նույնիսկ օրենսդիրը նախատեսել է հարկադիր կատարման վարույթն ավարտելու հնարավորություն: Հետևաբար պարտատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակման իրավական հնարավորությունը նախատեսված է օրենքով:

Բխում է հանրային շահից.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ կատարողական վարույթի նման ձևով ավարտի իրավական հնարավորությունը բխում է հանրային շահերից և կոչված է ապահովելու այլ անձանց՝ այդ թվում կատարողական վարույթում պարտապանի իրավունքների պաշտպանությունը: Այսինքն՝ նման ձևով կատարողական վարույթն ավարտվում է, քանի որ պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հետևանքով կատարողական հետագա գործողությունները չեն կարող իրականացվել օրենքով սահմանված կարգով՝ երաշխավորելով կատարողական վարույթի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաչափության մեջ անհրաժեշտության հանգամանքը քննարկելիս պետք է հաշվի առնել, որ դրա նպատակն է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել պարտապանի և պարտատիրոջ իրավունքների միջև և պետք է հաշվի առնել, որ նշված նորմի մեկնաբանության հետևանքով գույքի սեփականատերը չպետք է ստիպված լինի կրել «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ»:

Նշված նորմի և պարտատիրոջ սեփականության իրավունքի համաչափ միջամտության հարցը քննարկելիս Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը պետք է դիտարկել կատարողական գործողությունների կատարման իմաստի և կատարողական վարույթն ավարտելու ողջ իրավակարգավորման համատեքստում:

Մասնավորապես, բացի վերոնշյալ դեպքից, նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել **պարտապանի գույքի գտնվելու վայրը**, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Այսինքն՝ օրենսդիրը վերը նշված մասերով նախատեսել է կատարողական վարույթն ավարտելու երկու դեպք՝ երբ

- *անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը կամ*
- *երբ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը:*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ տարբերակումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, և օրենսդիրը նույն համաչափության սկզբունքի շրջանակներում տարբերակել է այն դեպքերը, երբ կատարողական վարույթը պետք է ավարտվի՝ կապված պարտապանի անձի և պարտապանի գույքի գտնվելու վայրի անհնարինության հետ: Նշված մեկնաբանությունը բխում է նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի այլ դրույթներից: Մասնավորապես, նշված օրենքի 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պարտապանի և (կամ) նրա գույքի գտնվելու վայրի մասին տեղեկություններ չլինելու դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում հայտարարելու մասին: Պարտապանի գույքի հետախուզումն իրականացնում է հարկադիր կատարման ծառայությունը՝ սույն օրենքով սահմանված կարգով: **Պարտապանի գույքի հետախուզում չի իրականացվում** մինչև 50.000 դրամ պահանջի բավարարմանն ուղղված գույքային բնույթի կատարողական վարույթներով և **ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով**, բացառությամբ քրեական գործերով տուգանքների բռնագանձման և գույքի բռնագրավման, ալիմենտային, աշխատավարձի բռնագանձման և կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների: Նույն հոդվածի 4-րդ մասը հստակ նշում է, որ **պարտապան ֆիզիկական անձի հետախուզումն իրականացվում է միայն այն դեպքերում, երբ նրա բացակայությունն անհնար է դարձնում կատարողական գործողությունների իրականացումը**:

Նշված նորմերը ցույց են տալիս, որ օրենսդիրը հստակ տարբերակում է այն դեպքերը, երբ կատարողական գործողությունների կատարումը կապված է պարտապանի հետ, և երբ կատարողական գործողությունները կապված են պարտապանի գույքի հետ: Նման տարբերակված իրավակարգավորումն էլ ուղղված է համաչափության սկզբունքի պահպանմանը՝ մի դեպքում կոչված լինելով ապահովել պարտապանի և պարտատիրոջ անձնական իրավունքների նկատմամբ համաչափ միջամտությունը, իսկ մյուս դեպքում կոչված լինելով ապահովել պարտապանի և պարտատիրոջ գույքային իրավունքների (սեփականության իրավունք) հավասարակշռված պաշտպանությունը և համաչափ միջամտությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ պարտապան ֆիզիկական անձի բացակայությունն անհնար չի դարձնում կատարողական գործողությունների իրականացումը, նրա անձի հետախուզում կարող է և չիրականացվել: Նշված տրամաբանությունից ելնելով՝ օրենսդիրը նախատեսում է կատարողական վարույթն ավարտելու երկու դեպք՝ կապված անձի և կապված անձի գույքի պարզման անհնարինության հետ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության դեպքում վարույթն ավարտվում է այն պատճառով, որ առանց տվյալ անձի ֆիզիկական ներկայության օբյեկտիվորեն հնարավոր չէ շարունակել կատարողական գործողությունները և փաստացի կատարել դատական ակտը: Իսկ այն դեպքում, երբ պարտապանը ֆիզիկապես ներկա է, սակայն նրա ֆիզիկական ներկայությամբ նույնպես օբյեկտիվորեն հնարավոր չէ փաստացի կատարել դատական ակտը, քանի որ այն գույքային բնույթ ունի և փաստացի կարող է կատարվել պարտապանի գույքի առկայության դեպքում, այդ դեպքի համար էլ օրենսդիրը պարտապանի ֆի-

զիկական ներկայության պարագայում հնարավոր է համարում ավարտել կատարողական վարույթը պարտապանի գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության դեպքում:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն անձի գույքի առկայության դեպքում նրա բացակայությամբ կատարողական գործողությունների իրականացումը, նրա գույքի նկատմամբ որոշակի կատարողական գործողությունների կատարումը, որն ուղղված է պարտատիրոջ իրավունքների ապահովմանը և դատական ակտի կատարմանը, չպետք է բացարձակ բնույթ կրի, քանի որ պարտապանի իրավունքների և շահերի անտեսմամբ նշված գործողությունների կատարումը կխախտի բարենպաստ հավասարակշռություն ստեղծելու պահանջը, ինչն իր հերթին կհանգեցնի համաչափության սկզբունքի խախտման: Հետևաբար նմանատիպ դեպքերում յուրաքանչյուր գործով պետք է պարզվի՝ արդյոք չեն անտեսվել կամ խախտվել պարտապանի այն հիմնարար նյութական և ընթացակարգային իրավունքները (երաշխիքները), որոնք ՀՀ Սահմանադրությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, ՀՀ օրենսդրությունը վերջինիս համար նախատեսել է որպես իր իրավունքների ապահովման երաշխիք:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրապական դատարանը, քննելով Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռով նշել է, որ «Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ, այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք) առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որը անհամատեղելի կլիներ օրինականության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (*տես Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի <u>գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի վճիռը, կետ 34</u>*)»: «Դատարանը, այնուհետև, կրկնում է իր նախադեպային իրավունքը այն առումով, որ Դիմումատուի օգտին կայացրած վճռի կատարմանը հասնելու անհնարինությունը բերում է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասության մեջ սահմանված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտության (*տես Յասիունիենեն ընդդեմ Լիտվայի գործով Եվրոպական դատարանի 06.03.2003 թվականի վճիռը, <u>կետ 45</u>*): Դատարանը նշում է, որ մինչ օրս, 2001թ. հուլիսի 2-ին Դիմումատուների օգտին կայացված վճիռը ընդհանուր առմամբ մնում է չկատարված: Հետևաբար, Դիմումատուների դեպքում պարտքերի վերադարձման ընթացքը մինչև այժմ տևել է ավելի քան ութ տարի և չորս ամիս, որից մոտավորապես յոթ ու կես տարին ընկնում է Դատարանի իրավասության տակ ratione temporis: Դատարանը գտնում է, որ Դիմումատուների օգտին կայացված վճռի կատարման համար անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով՝ հայաստանյան իշխանությունները սահմանափակել են Դիմումա-

տուների «դատարան դիմելու իրավունք»-ի իմաստը և զգալի ժամանակահատվածով խոչընդոտել են և դեռ խոչընդոտում են Դիմումատուների՝ գումարն ամբողջությամբ ստանալուն, որի իրավունքը նրանք ունեին, որն էլ հավասարեցվում է իրենց գույքից անարգել օգտվելու անհամաչափ միջամտության: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրան կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պարզում է այս կամ այն ապացույցի վերաբերելիության հարցը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Տվյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենդիրը ոչ իրավաչափ է դիտում նաև այն վարչական ակտը, եթե ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ ըստ էության տվյալ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում: Ընդ որում, տվյալ ակտի ոչ իրավաչափ՝ անվավեր լինելու հանգամանքը ճանաչվում է ինչպես այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, այնպես էլ դատական կարգով *(տե՛ս ըստ հայցի «Յուպիտեր» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ կառավարության աոընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության՝ 20.05.2009 թվականի թիվ 1000041 ապրւգման ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին վարչական գործով Վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի թիվ ՎԴ1/0073/05/09 որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԱՔԴ/1370/02/10 քաղաքացիական գործն ըստ հայցի Արմեն Վանյանի ընդդեմ Նիկոլայ Միրզոյանի՝ գումարի բռնագանձման մասին, 15.11.2010 թվականին վճռել է հայցը բավարարել: Նիկոլայ Միրզոյանից հօգուտ Արմեն Վանյանի բռնագանձել 4.000.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառությամբ վերցված գումար, 80.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրք, ինչպես նաև 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար: Նշված վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.12.2010 թվականին

տրվել է կատարողական թերթ: Հարկադիր կատարողի 27.06.2011 թվականի որոշմամբ ավարտվել է 08.02.2011 թվականին հարուցված թիվ 01/04-854/11 կատարողական վարույթն այն պատճառաբանությամբ, որ կատարողական գործողությունների ընթացքում անհնար է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը, սակայն արգելանք է կիրառվել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող Ռոստոմյան փողոցի թիվ 26 տան նկատմամբ, իսկ որպես նշված որոշումը կայացնելու իրավական հիմք է նշվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը: Այսինքն՝ հարկադիր կատարողի 27.06.2011 թվականի որոշմամբ 08.02.2011 թվականին հարուցված թիվ 01/04-854/11 կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի՝ Նիկոլայ Միրզոյանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ՝ Արմեն Վանյանի կողմից ձեռնարկված օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

Սույն գործով Դատարանն Արմեն Վանյանի հայցը մերժելու, իսկ Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն անփոփոխ թողնելու իր որոշման հիմքում դրել են այն փաստը, որ հայցվորը որևէ գործողություն չի ձեռնարկել պարտապան Նիկոլայ Միրզոյանի գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ: Այսինքն՝ չի աջակցել Ծառայությանը՝ վերջինիս վրա դրված պարտականությունը կատարելու համար: Իսկ հարկադիր կատարողի ձեռնարկած միջոցներն արդյունք չեն տվել, այն է՝ Նիկոլայ Միրզոյանի գտնվելու վայրը չի հայտնաբերվել:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը, վերը նշված պատճառաբանություններից ելնելով, հանգեց այն եզրակացության, որ հարկադիր կատարողը, ավարտելով գումարի բռնագանձման վերաբերյալ դատական ակտի կատարողական վարույթն այն հիմքով, որ թեև հայտնի է պարտապանի գույքի գտնվելու վայրը, բայց անհայտ է պարտապանի գտնվելու վայրը՝ զգալի ժամանակահատվածով խոչընդոտել է և դեռ շարունակում է խոչընդոտել իր գումարն ամբողջությամբ ստանալու պարտատիրոջ իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել նոր քննության, վերոշարադրյալ կանոններով՝ համաչափության սկզբունքի պահպանմամբ քննություն իրականացնելու համար:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 31.05.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 36 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 700 օրինակ:

ԷՋԱԴՐՈՒՄԸ և ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Printinfo
www.printinfo.am

ՀՀ, Երևան, Շարուրի 37/1
հեռ.՝ (374 10) 465 382, 465 385
էլ.փոստ՝ info@printinfo.am